




Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



An  
die Bibliothek der  
Universität in  
Erivan

von

Fridolf Hansen

Lysaker  
Juni 1928

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ  
ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

STAATLICHE UNIVERSITÄT YEREWAN

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

FRIDTJOF NANSEN

ՖՐԻՏՅՈՅ ՆԱՆՍԵՆ

## BETROGENES VOLK

EINE STUDIENREISE DURCH GEORGIEN UND  
ARMENIEN ALS OBERKOMMISSAR  
DES VÖLKERBUNDES

*Übersetzung aus dem Deutschen von  
Evelina Makarjan*

VERLAG DES UNIVERSITÄT YEREWAN  
YEREWAN — 2000

## ԽԱԲՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԱԶԳԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

*Գերմաներենից թարգմանեց՝  
Էվելինա Մակարյան*

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ — 2000



Խմբագիր՝ Բանաս. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Գ. ՄԱԿՈՅԱՆ

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե ՊԵՏՊԱՏՎԵՐՈՎ**

**ՖՐԻՏՅՈՑ ՆԱՆՍԵՆ**

Ն 307 *Խաբված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի գիտական ճանապարհորդությունը Վրաստան և Հայաստան. Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս. հրատ., 2000 թ., 288 էջ:*

Նորվեգացի մեծ մարդասեր, գիտնական-բևեռախոյզ, հանրային նշանավոր գործիչ և հայ ժողովրդի իսկական բարեկամ Ֆ. Նանսենի այս գիրքը ներկայացնում է նրա տպավորություններն ու խոհերը Հունաստան, Վրաստան և Հայաստան ճանապարհորդելիս: Առավելապես արժեքավոր են նրա գնահատականները մեր ազգի պատմական ճակատագրի, 20-ական թթ. Հայաստանի, թուրքական անմարդկային բռնությունների ու դիվանագիտական խարդավանքների, եվրոպական բազմադիմի ու շահադիտական քաղաքականության վերաբերյալ:

Նախատեսված է ընթերցող լայն խավերի համար:

Ն 0503020900  
704(02)—2000

ԳՄԴ 63.3

ISBN 5-8084-0324-3

© Թաովմանության համար, 2000թ.

**ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ**

Համաշխարհային պատմությանը հայտնի չեն գործիչների շատ անուններ, որ ինքնամոռաց նվիրվել են գիտությանն ու մարդկային առաջընթացին: Այդպիսին է Ֆրիտյոֆ Նանսենը, որ հայ ժողովրդի ամենասիրելի անուններից է: Նա ծնվել է 1861 թ. հոկտեմբերի 10-ին Նորվեգիայի մայրաքաղաք Զրիստիանիայի Ստուրե-Ֆրոյնե արվարձանում: 1880 թ., իբրև ռեալական դպրոցի շրջանավարտ, ընդունվում է Զրիստիանիայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը, ուսումնասիրում է կենդանաբանություն: 1882 թ. առաջարկություն է ստանում մասնակցելու կենդանաբանների «Վիկինգ» արշավախմբին և չորս ամիս լինում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, ճաշակում գիտական ճամփորդության բերկրանքն ու դժվարությունները: Անդրանիկ ուղևորության օրագրի նյութերը, երիտասարդական տարիների տպավորություններն ու հուշերը իրենց արտացոլումը գտան նրա վերջին գործերից մեկում՝ «Ծովաշների ու սպիտակ արջերի մեջ» (1927 թ.) գրքում:

Գիտահետազոտական առաջին մկրտությունը, սակայն, Նանսենը ստացավ Բերգենի բնագիտական թանգարանում աշխատելու տարիներին: Նրա անդրանիկ աշխատությունը, որը պսակվեց ոսկե մեդալով, հրատարակվում է 1885 թ.՝ «Նյութեր միզոստոմների անատոմիայի և հիստոլոգիայի վերաբերյալ» խորագրով: Այնուհետև 1886-ին նա մեկնում է Իտալիա, երկու տարի անց պաշտպանում դիսերտացիա և ստանում դոկտորի գիտական աստիճան՝ կարևոր ներդրում կատարելով կենդանաբանության բնագավառում: 1897 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Լինելով բազմակողմանի հետաքրքրությունների տեր ու պրպտող երիտասարդ՝ նա հավասարապես տարվում է գրականությանը, արվեստով, հետաքրքրվում հասարակական կյանքի հիմնահարցերով:

1888 թ. մայիսի 2-ին Նանսենը ձեռնարկեց իր առաջին ինքնուրույն արշավը դահուկներով դեպի Գրենլանդիա՝ ուսումնասիրելու կղզու բնակչիմայական պայմանները, կենդանական աշխարհը: Արշավախումբը վերադարձավ հաջորդ տարվա մայիսին, և, ինչպես նկատել է ժամանակակից գիտնականներից մեկը, «Նանսենին բախտ վիճակվեց ցույց տալու այն ժողովրդի արիությունն ու անձնուրացությունը, որի զավակներից շատերը անհետ կորել են բևեռի ծովերում»: Բացառիկ հաջողության համար մեծ ճանապարհորդն ու

գիտնականը բազմաթիվ բարձր պարգևների արժանացավ: Այս արշավանքի արդյունքներից մեկն էր նրա «Էսկիմոսների կյանքը» գիրքը:

1893-ին Նանսենի առասպելյալ «Ֆրամը» ուղևորվեց դեպի հյուսիսային բևեռ և հայրենիք վերադարձավ 1896-ին: Այդ երկարատև արշավի արդյունքը եղավ անձնուրագ հետազոտողի հերթական աշխատությունը: 1913 թ. «Կոռեկտ» նավով անխոնջ հետազոտողը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի փերով հասավ Հեռավոր Արևելք:

Գիտական մեծ հայտնագործություններն ու սխրանքները հաջորդում էին իրար, նա կազմակերպում էր նորանոր գիտական արշավներ, որոնք պանծացնում էին նրան, և գնալով ավելի ու ավելի էր մեծանում Նանսենի համաշխարհային հռչակը:

Իր բոլոր աշխատանքների մեջ լինելով խոշորագույն հետազոտող-գիտնական՝ Նանսենը հավասարապես մեծ էր նաև իբրև հումանիստ, փոքր ազգերի իրավունքների պաշտպան: Բնորոշ է, որ առաջին աշխարհամարտի օրերին (1914 թ. հոկտեմբերին) նա Քրիստիանիայի համալսարանում հանդես է եկել հենց «Փոքր ազգերի իրավունքների մասին» դասախոսությամբ, նշավակել մեծ տերությունների եսասիրական քաղաքականությունը: Այնուհետև մարդասիրական ոգին ու գթասրտությունը շատ անգամ կտրելու էին Նանսենին իր սիրելի գիտական զբաղմունքից՝ հանուն երկրագնդի այս կամ այն հատվածում մարդու զազանություններից կամ տարերային աղետից տուժած ժողովուրդների: Եվ Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայի մեծ զավակը, բոլոր այն բնագավառներում, ուր գործել է ճակատագրի բերումով, մշտապես գերազանցել է ինքն իրեն: Թևակոր խոսք է դարձել Սվերդրուպի դիտումը. «Նանսենը մեծ էր որպես բևեռախույզ, ավելի մեծ էր որպես գիտնական և առավել մեծ՝ որպես մարդ»: Բնավ պատահական չէ ժամանակակիցների տպավորությունը. երբ Նանսենն անցնում էր Ազգերի ընկերակցության (լիգա) նստավայր Ժնևի փողոցներով, «եկեղեցիների աշտարակներն անգամ խոնարհվում էին նրան... Նա ամենահետաքրքիր երևույթն էր Մոմբլանից հետո»:

Եթե բևեռախույզի և գիտնականի նրա համբավը ապահովել են խիզախ ճանապարհորդություններն ու պրպտումները, ապա Մեծ մարդու պատվանդանին Նանսենը բարձրացավ նաև հայանպաստ գործունեությամբ: «Հայրս մեռավ Հայ բառը շուրթերին, այնքան նա սիրում ու սքանչանում էր հայ ժողովրդով» — հետագայում խոստովանելու էր Նանսենի դուստրը:

Նանսենը վաղ է ծանոթացել հայ ժողովրդի պատմական ու մոտիկ անցյալին, աշխատել է իր նպաստը բերել Հայոց հարցի լուծման որոնումներին: Առաջին աշխարհամարտից Հայաստանը դարձյալ տուժած դուրս եկավ, թեպետ պատերազմը շահող խմբակցության անդամ էր: Քաղաքական ասպարեզում նրան լույս խոստումներ էին տալիս՝ ամեն կերպ ոտնահարելով հայ ժողովրդի շահերը, անդամատելով ու բաժան-բաժան անելով նրա հայրենիքը: Ի

պաշտպանություն հայոց ազգային շահերի հանդես էին գալիս մեծ սրտի ու մտքի տեր մտավորականներ, որոնք, սակայն, քաղաքական թատերաբեմում դերակատարներ չէին:

1925 թ. հունիսին Ազգերի ընկերակցությունը Նանսենին հանձնարարում է ուսումնասիրել հայ գաղթականների բնակեցման հնարավորությունները, և նա, թողնելով գիտական աշխատանքը, որի մեջ էր տեսնում իր կյանքի իմաստը, ամբողջովին նվիրվում է հայ ժողովրդին օգնելու գործին: Երկար ժամանակ չպահանջվեց, որ մեծ մարդասերը հիասթափությամբ նկատեր եվրոպական քաղաքագետների գործելակերպի կեղծությունը: Հիասթափվելով Ազգերի ընկերակցությունից՝ Նանսենը հայերին խորհուրդ էր տալիս հույսը դնել միայն սեփական կարողությունների վրա, իսկ ինքը մտածում էր այլ միջոցներով ծառայել հայ ժողովրդին<sup>1</sup>: Չանագան ճանապարհներով նա դրամ էր հայթայթում գաղթականներին օգնելու համար, գրավոր ու բանավոր ելույթներ ունենում ի պաշտպանություն հայության իրավունքների: Այդ ելույթների, պարբերականներում տպագրված հոդվածների մեջ Նանսենն անողորքաբար ձաղկում էր մեծ տերություններին, որոնք խաբել են իրենց դաշնակից հայ ժողովրդին և այժմ մոռանում են թե՛ իրենց պարտավորությունները, թե նույնիսկ մարդկայնության տարրական պահանջները: Հերթական խաբեությունից հետո նա անգլիացի իր բարեկամին՝ Ռոբերտ Մեսիլին ասում է. «Մատանան տանի ձեր անբարո կառավարությանը»: Մեսիլը պատասխանում է. «Բոլոր կառավարություններն են անբարո»<sup>2</sup>:

Բուռն, իրոք ինքնամոռաց գործունեության բովում ծնվում է Նանսենի՝ Հայաստանին նվիրված ստվար աշխատությունը, որը Հայ դատի հենասյուններից է, Հայ. . . տանին և հայ ժողովրդին նվիրված լավագույն գրքերից մեկը և որը գերազանահատելն անկարելի է: 1927 թ. Նորվեգիայում հրատարակվեց այդ աշխատությունը «Հայաստանում» խորագրով, այնուհետև՝ Հոլանդիայում: 1928-ին լույս տեսան անգլերեն (Լոնդոնում և Նյու-Յորքում), ֆրանսերեն (Փարիզում) թարգմանությունները՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները» դիվանագիտական խորագրով: Իսկ գերմաներեն հրատարակությունը վերնագրված էր՝ «Խաբված ժողովուրդ» (Լայպցիգ)՝ լիովին համապատասխան Նանսենի հայացքներին ու գնահատականներին, ճիշտ արտացոլելով գրքի հանկերգը: Որ դա այդպես է՝ ավելորդ անգամ մեզ համոզում է Լիվ Նանսեն-Հեյերի հուշագիրքը: «Եվրոպայի կառավարություններին ճանճրացրել է հայոց հավերժական հարցը, — ասել է Նանսենը: — Հասկանալի է: Այդ հարցում նրանք երբեք պատշաճ բարձրության չեն եղել: Իսկ այս խոսքերը նրանց նիրհող խղճին հիշեցնում էին խոստումներ, որոնք կատարելու համար

<sup>1</sup> Տե՛ս Лив Хансен-Хейер, Книга об отце, Ленинград, 1986, էջ 426—467:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 459:

նրանք մատր-մատի չխփեցին: Քանի որ խոսքը փոքր, տանջահար, բայց տա-  
ղանդավոր ժողովրդի մասին էր, որը չուներ ո՛չ նավթի, ո՛չ ոսկու հանքավայ-  
րեր»<sup>3</sup>:

Իսկապես, որքան ճշմարտացի են Ֆրիտլոֆ Նանսենի նկատողություն-  
ները պատմական հեռավատկերում, նույնքան արդիական են նաև այսօր:  
Ինչքան էլ ակնհայտ լինի հարցի իրավական ու պատմական արդարացիու-  
թյունը, միևնույն է, վճռողը մեծ տերությունների համար ոչ թե արդարությունն  
ու իրավունքն են, այլ իրենց սեփական տնտեսական կամ քաղաքական շահե-  
րը: Հակառակ դեպքում նրանք չէին ընթանա խղճի, բարոյականության և ար-  
դարության դեմ և, Նանսենի ըմբռնմամբ, «քաղաքակիրթ երկրների» անտար-  
բերությունը նույնքան զայրացուցիչ է, որքան և «թուրքերի արնախում նողկա-  
լիությունը»<sup>4</sup>:

Ամբողջ գրքում լավագույն կողմերով է բնութագրվում հեղինակը, որ ոչ  
միայն խղճի սնոք է կատարում հասարակական պարտականությունը, այլև  
ճշտորեն, հաճախ արվեստագետի նրբամտությամբ ու դիտողականությամբ  
վերարտադրում է իրականությունը, կենդանի պատկերներով ցուցադրում  
բնակչության բարքերը, կենցաղը: Սրան գումարվում են նաև համաշխարհա-  
յին պատմության ու մշակույթի լավ իմացությունը, մարդկային հոգեբանու-  
թյան սուր ընկալումը: Նանսենը հանդես է բերում պատմության փիլիսոփա-  
յության խոր ըմբռնում, և այստեղ ուշագրավ է երկու հանգամանք. ա) ինչպե՞ս  
է գնահատում բյուզանդական քաղաքակրթությունը, բ) ի՞նչ հայացքներ ունի  
հեղինակը այդ քաղաքակրթությունը ոչնչացնելու եկած թուրքերի վերաբե-  
րյալ: Վերջինների՝ «այդ թափառական վայրի հորդաների», միակ նպատակը  
կողոպուտն էր, ռազմական ծրագիրը՝ «հողագործ ժողովուրդներին բնաջնջելը  
և մշակված հողատարածքներն ամայացնելը ի նպաստ քոչվոր անասնապահ  
վայրի ամբոխի»:

Նանսենը համեմատում է տարբեր դարերում Հայաստանը նվաճած ժո-  
ղովուրդներին. եթե պարսիկները դեռ մշակույթ կրողներ էին, իսկ արաբները,  
այնուամենայնիվ, քաղաքակիրթ էին, ապա «ահավոր էին հետո եկողները»,  
թափառող վայրի հորդաները՝ «սելջուկ և օտոմանյան թուրքերը»: Այսպիսի  
գուզահեռների կարելի է հանդիպել նաև հայ մամուլում: Օսմանցին, կարդում  
ենք, օրինակ, «Մուրճ» ամսագրում, «չունի իր հոր՝ հազարացու հառաջադի-  
մական ձգտումները: Նորա պատմության արյունաներկ էջերը միայն հրեշա-  
յին ոճիրների բարտեզներ են, միայն աշխարհակալական վայրենի անցքեր,  
միայն բարբարոսական անօրինակ ֆակտեր են: Նա չունի յուր հոր հառաջա-  
դիմական, գեղարվեստական ոգին, չունի ճարտար ձեռքերն ու բանաստեղծի

հանճարը, բացի կրոնական նեղսքոլաստիկ աշխարհավարական արեմավառ  
հայացքներից»<sup>5</sup>: Քաղաքակիրթ ժողովուրդներին ու նրանց հակոտնյաններին  
բնութագրող էջերը հակադարձ կերպով բնութագրում են նաև հեղինակին՝ մեկ  
անգամ ևս ընդգծելով նրա հարգանքը մշակույթին, մարդկային առաջընթա-  
ցին ծառայող ժողովուրդների հանդեպ, հատկանիշ, որը դժբախտաբար այ-  
սօր հազվագյուտ է քաղաքական աշխարհում:

Ֆրիտլոֆ Նանսենի մեծ գիրքն այսօր ևս հայ կյանքի և պայքարի առա-  
ջին շարքերում է, որովհետև այնտեղ արծարծվող բոլոր հարցերը արդիական  
են: Անգլիացի գիտնականների համոզմամբ՝ «Դարիս սկզբի պատմական  
շրջանը կարելի է դիտել որպես համաշխարհային դավադրություն նրա (հայ  
ժողովրդի— է. Մ.) հանդեպ»<sup>6</sup>: Մի՞թե այսօրվա արցախյան իրադարձություն-  
ներն իրենց նախապատմությամբ համաշխարհային դավադրություն չեն հա-  
յության դեմ: Եթե դարասկզբին թուրքերին շարժման մեջ դնող ուժը պանթուր-  
քիզմն էր, այսօր ևս նրանք չեն թաքցնում իրենց նպատակը՝ իրենց այթայան  
հայրենիքը միացնել զավթած հողերին և ստեղծել համաթուրքական կայսրու-  
թյուն, իբրև ուղեղի սնորմը. միշտ արթուն է եղել այս ծրագիր-գառանգանքը,  
որ դատապիտակվել է մարդկության մեծագույն զավակների կողմից, բայց և  
միշտ, որքան զարմանալի է, ուղղակի կամ անուղղակի աջակցություն է գտել  
«մեծ տերություններից», մի բան, որ մտավոր կուրություն է, և չի կարելի ար-  
դարացնել ոչ մի տնտեսական շահով:

Մասնավորապես արդիական հնչողություն ունեն հեղինակի դիտողու-  
թյուններն ու խոհերը հայկական եղեռնի, 1922 թ. հույն-թուրքական պատե-  
րազմի հետևանքով Փոքր Ասիայից Հուրաստան գաղթած մեկուկես միլիոն  
գաղթականության, Հուրաստանում բնակվող 400000 մահմեդականների  
հույն փախստականների հետ փոխանակելու համաձայնության վերաբերյալ:  
Պատկերը կարծես նույնությամբ կրկնվեց մեր օրերում. Հայաստանից թուրքե-  
րին տեղահանեցին նույն այդ «մտահոգությամբ»: Բնորոշ է, որ այն ժամա-  
նակ և մեր օրերում «փոխանակությունից» օգտվող թուրքերն էին: Նանսենի  
վկայությամբ՝ հույների թողածի արժեքն անհամեմատ մեծ էր, քան նրանք  
ստացան դրա դիմաց, «իսկ թուրքերը շատ ավելի շահավետ փոխանակում ա-  
րեցին»: Պատմությունը կրկնվում է ապշեցուցիչ նույնությամբ, և դա պատա-  
հականությամբ բացատրել չի կարելի: Իսկ թուրքերը չեն մոռանում իրենց ոճ-  
րապարտ նախնիների ծրագրերը: «Ապագայում,— գրել է «Թյուրքիյե» թերթը  
մեր օրերում,— Կովկասի մեջ հայերի թիվը, ինչպես այսօր Անատոլիայի մեջ,  
թանգարանային պիտի լինի»<sup>7</sup>:

<sup>3</sup> Տե՛ս անդ, էջ 461: Հմմտ. 456 և հաջորդ էջերը:

<sup>4</sup> Տե՛ս Wolfgang Somnig, Fridtjof Nansen. Ein Held des Friedens, Weimar, 1957, էջ 471:

<sup>5</sup> Մէլլան, Տանկա-Հայաստանի ազգաբնակչությունը, «Մուրճ», 1895, ք. 7, էջ 950:

<sup>6</sup> Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Չեյնս Ուոքլը, Հայերը, Երևան, 1992, էջ 56:

<sup>7</sup> «Երկիր» օրաթերթ, 1993, ք. 94 (24 մայիս):

Ձաղաքական կյանքի ներկայիս իրողությունները ցույց են տալիս, որ բնավ չի հնազել Նանսենի մեծ գիրքը և այսօր նույնպես հայ կյանքի պայքարի առաջին գծում է, որովհետև այնտեղ արժարժվող հարցերն արդիական են: Հայոց հարցը՝ «համաշխարհային պատմության ամենամարտի էջերից մեկը» (Լ. Չորջ Բերգոն), մեր օրերի քաղաքագետներն ու պետական գործիչները չարչրկում են իրենց անբարո նախորդներից ոչ պակաս ցինիկորեն: Այս անհավասար պայքարում Նանսենի աշխատությունը բարոյական մեծ ուժ է արդարության հաստատման ճանապարհին<sup>8</sup>:

Ինչպես ասվեց, 20-ական թվականներին «Խաբված ժողովուրդ» աշխատությունը արագորեն քարգմանվեց ու հրատարակվեց եվրոպական լեզուներով: Դժբախտաբար քաղաքական նկատառումներով անհնարին էր գրքի հայերեն (նաև ռուսերեն) հրատարակությունը: Այդ պակասը մասնակիորեն լրացվեց 1958 թ., երբ լույս տեսավ Հրաչ Բաջարեցիի «քիչ մը շատ ազատ քարգմանությունը»<sup>9</sup>: Սրան հետևեց Սարգիս Ալեմյանի արևելահայերեն համառոտ քարգմանությունը<sup>10</sup>: Ուսումնասիրողը իրավամբ նկատում է, թե «մինչև այսօր մեր ժողովուրդը իր տրամադրության տակ չունի անոր գիտական և կատարյալ քարգմանությունը հայերենի»<sup>11</sup>:

Ընթերցողին ներկայացվող սույն ամբողջական քարգմանությունը, որ կատարված է գերմաներենից<sup>12</sup>, 1990—1996 թթ. հատվածաբար տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի», «Երևանի համալսարան» («Հանդես Երևանի համալսարանի»), «Դպրություն», «Ջավախք», «Նոր-դար» պարբերականներում:

<sup>8</sup> Պետք է խոստովանել, որ «Խաբված ժողովուրդ» աշխատության հայոց պատմությանը վերաբերող որոշ էջեր (հայ ժողովրդի ծագումը և այլն) այսօր հնացած են:

<sup>9</sup> Ա. Եսփունճյան, Նանսեն և հայ գաղթականության հայրենաստործության հարցը ըստ անտիպ փաստաթուղթերու, Գահիրե, 1983, էջ 5: Հմմտ. Մ. Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, Երևան, 1977, էջ 301—302:

<sup>10</sup> Ֆրիտյոֆ Նանսեն, Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 1993:

<sup>11</sup> Ա. Եսփունճյան, նույն տեղը:

<sup>12</sup> Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928.

## ՆԱԽԱԲԸ

Ազգերի ընկերակցության խորհուրդը, տարբեր երկրներում կարիքավոր հայ գաղթականներին օգնելու հարցը բազմիցս քննարկելուց հետո, առաջարկեց գրքիս հեղինակին, որպես Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի, զբաղվելու նաև այս հարցով: Գիտակցելով, որ խնդրի ստանձնումով մեծ պատասխանատվություն եմ վերցնում, նախ հրաժարվեցի, սակայն ի վերջո համաձայնեցի փորձել ուժերս համագործակցելով միջազգային աշխատանքային բորսայի հետ: Ազգերի ընկերակցության ժողովը գումար տրամադրեց նախապատրաստական և հետագոտական աշխատանքների կատարման անհրաժեշտ ծախսերի համար:

Հայ փախստականների ներկայացուցչությունը Ազգերի ընկերակցության խորհրդին տրամադրել էր մի ծրագիր, որի իրականացմամբ կարելի կլիներ 50000 փախստական տեղավորել Հայաստանի Հանրապետությունում այսպես կոչված Սարդարապատի անապատում: Հաշվի առնելով, որ այնտեղ հողի մշակումը հնարավոր է միայն արհեստական ոռոգման շնորհիվ, Ազգերի ընկերակցությունից ակնկալվում էր անհրաժեշտ նյութական միջոցների հայթայթում, մոտավոր գնահատմամբ՝ 20 միլիոն մարկ: Ծրագրի արդյունավետության և ընդհանրապես Հայաստան փախստականներ տանելու և բնակեցնելու այլ հնարավորությունների մասին ստույգ կարծիք կազմելու համար պետք էր, անշուշտ, որ հատուկ փորձագետներ տեղում հետազոտական աշխատանք կատարեին: Հույժ ցանկալի էր այդպիսի հնարավորության իրականացումը՝ հուսալով այն ծառայեցնել «ազգային հայրենիքի» կերտման գործընթացին, որն Արևմտյան Եվրոպայի պետություններն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները խոստացել էին հայ փախստականներին և որը շարունակ խրախուսում էր Ազգերի ընկերակցությունը:

Վճռվեց Հայաստան հանձնախումբ ուղարկելու հարցը: Հանձնախմբի անդամներն էին Եգիպտոսում աշխատանքի նախարարության նախկին խորհրդակցական, հիդրոտեխնիկական կառույցների հմուտ մասնագետ անգլիացի ինժեներ Չ. Է. Դափյուսը, մերձարևադարձային երկրների երկրագործության բնագավառի փորձառու մասնագետ ֆրանսիացի Ժ. Կարլը, որին հանձնարարել էր Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարարությունը, իտալացի ինժեներ Պիո Լո Սավիոն, որը հիդրոտեխնիկական կառույցների փորձագետ էր և



հանձնարարված Իտալիայի արտագաղթի կոմիտեի կողմից: Հանձնախմբի քարտուղարն ու պատասխանատուն նորվեգացի կապիտան Վ. Քվիսլինգն էր: Օգտվելով ընծեռված առիթից՝ ցանկանում են երախտագիտությունն հայտնել հարգարժան ու անխոնջ իմ գործընկերներին ճանապարհորդության ամբողջ ընթացքում նրանց արժեքավոր ու անձնվեր աշխատանքի և հրաշալի համագործակցության համար:


Մոսկվա, խորհրդային կառավարության արտաքին գործերի ժողկոմ Չիչերինին հղած գրությամբ մենք թույլտվություն հայցեցինք հանձնախմբի՝ դեպի Երևան կատարելիք ճանապարհորդության և Հայաստանում անհրաժեշտ հետազոտությունների համար: Պատասխանն ավելի քան ընդառաջող էր, սակայն կար երկու պայման. մենք չպետք է հանդես գայինք Ազգերի ընկերակցության անունից, որին խորհրդային կառավարությունը չէր ճանաչում, այնուհետև՝ հետազոտական աշխատանքները պետք է ընթանային հայկական կառավարության ստեղծած հանձնախմբի հետ միասին: Մենք ընդունեցինք պայմանները: Երևանում կառավարությունը մեզ արժանացրեց ջերմ և հյուրընկալ ընդունելության: Կառավարական հանձնախումբը՝ իր հմուտ ինժեներներով, ամեն կերպ նպաստում էր մեր աշխատանքներին՝ առավել արդյունավետ դարձնելով Հայաստան կատարած մեր հետաքրքիր այցելությունը: Հայկական կառավարությանը և Հայաստանում գտած մեր բազմաթիվ բարեկամներից հայտնում են իմ երախտագիտությունը նրանց սիրալիկ վերաբերմունքի համար:

Մեր հանձնախմբի կատարած հետազոտությունների նկարագրություններն ու այդտեղից բխած առաջարկները տեղ են գտել Ազգերի ընկերակցության տարբեր հաղորդագրություններում: Դրանք հավաքված են ժնևում՝ քարտուղարության հրատարակած փոքր գրքում. «Հայ գաղթականների բնակեցման ծրագիր: Ընդհանուր ակնարկ և հիմնական փաստաթղթեր» (1927 թ.):

Գրքում փորձել են տալ մեր ճանապարհորդության, կատարած աշխատանքի, երկրից և ժողովրդից ստացած տպավորության ու մեր առաջարկների նկարագրությունը: Հանդգված են, այդ առաջարկների իրականացմամբ երկրում կբացահայտվեն զարգացման նոր հնարավորություններ, որոնք ի սպաս կդրվեն ժողովրդի և նրա բազմաթիվ փախստականների լուսավոր գալիքի կերտման գործին:

Վերջին երկու գլուխներում սեղմ ակնարկով ամփոփված է հայ ժողովրդի պատմությունը: Չեն կարծում, թե որևէ մեկը, ծանոթանալով այս զարմանահրաշ ժողովրդի պատմությանը, խորապես չցնցվի նրա մեծ ողբերգությունից: Ընդունելով աշխատությանս հնարավոր թերությունները՝ հուսով եմ, որ նրա էջերից կհնչեն Եվրոպայի և Ամերիկայի խղճին ծանրացած փաստեր:

**ՉՐԻՏՅՈՆ ՆԱՆՍԵՆ**  
Լյուսակեր, 1927 թ., հուլիս



I

## ԴԵՊԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Դեպի հարավ: Ալպերի խորխտ ժայռապատնեշը, որ նախկինում հունական և հռոմեական աշխարհների սահմանն էր հյուսիսում, մնացել էր հետևում, մեր առջև Պոյի հովիտն էր՝ ամառային և արևոտ, խաղաղ, ինչպես կնոջ ժպտացող դեմք: Եզիպտացորենի, ցորենի, բրնձի անձայրածիր դաշտեր, խաղողի թփեր, թեմնիներ, դաշտում վառ կարմիր շապիկներով աշխատող մարդիկ: Ինչպես հին օրերի բանաստեղծություն, գետափին փռված էր Վերոնան իր հիշարժան ամֆիթատրոնով: Այնուհետև՝ ծովափով դեպի Վենետիկ և կրկին ետ՝ դեպի դաշտավայր: Վենետիկը, ինչպես նիբոռ ծովային թռչուն՝ ջարդված թևերով, օրորվելով Լիդոյի վրա՝ մտորում էր Արևելքի մուռացված երազների մասին:

Կեսօրին իտալական «Շամիրան» շոգենավով Տրիեստից Ադրիատիկ ծովով ուղղություն վերցրինք դեպի հարավ:

Հաջորդ օրվա կեսօրին (ուրբաթ, հունիսի 5) մենք Բրինդիզիում էինք՝ հին հռոմեական Բրունդիզիում նավահանգստում, որ գտնվում էր Արևելք տանող Վիա Ափիա կոչվող ճանապարհի՝ աշխարհակալ մեծ կայսրության զարկերակի վերջում: Այստեղ Ք. ծ. ա. 19 թ. հռոմեացի մեծ բանաստեղծը՝ հագիվ 50 տարեկան, վերադառնալով Հունաստանից, կնքեց իր մահկանացուն: Այստեղ

մահվան մահճում, իբրև ճշմարիտ արվեստագետ, դժգոհ իր ստեղծածից, ցանկացավ այրել իր ողջ կյանքի անավարտ ստեղծագործության, հռոմեական մշակույթի մեծագույն պոեմի՝ «Էնեականի» ձեռագիրը: Ավելի ուշ խաչակիրներն այստեղ էին հավաքում իրենց նավատորմը Արևելք ճանապարհվելուց առաջ: Հետագայում (1458 թ.) քաղաքը կործանվեց երկրաշարժից, բնակչության մեծ մասը մնաց փլատակների տակ, նավահանգիստը ծածկվեց ավազով: Այնուհետև ավազը մաքրվեց, և քաղաքը կրկին ծաղկեց: Այսպես փոփոխական է աշխարհի ընթացքը:

Մենք շարունակում ենք նավարկել: Խաղաղ երեկո է: Բարձր անծայրածիր տարածություն, առկայծող աստղերի բազմություն, իսկ լուսինը իր մեղմ փայլով ողողել է Միջերկրական ծովը: Հազարամյակներ շարունակ հին աշխարհի ժողովուրդների համար այն եղել է «ծով»՝ շրջապատված բնակեցված աշխարհով: Նրա ավերին ստեղծվել և անհետացել են մշակույթներ ու աշխարհակալ տերություններ: Իսկ մե՞նք: Նույն այդ ծովով գնում ենք դեպի արևելք՝ ժամանակների հարափոփոխ ընթացքում մեծ տերությունների երկպառակություններից ամենից շատ տուժած փոքր մի ժողովրդի ինչ-որ բանով օգնելու գոյության իր պայքարում:

Ինչո՞վ է գեղեցիկ գիշերը: Հեռավոր երկնային լուսատուներով լեցուն անասանուն երկինք, շողացող պղնձե մի սկավառակ, ջրի սև մակերևույթ, փայփրլող լուսասյուներ և առկայծող գծեր, հեռուներ փնտրող ու թափանցող մարդկային բոցկլուտն աչքեր: Մա՞ է բոլորը, իսկ ծո՞վը: Երկրակեղևի մի ընդարձակ իջվածք՝ լցված ջրով, որը կարում-անցնում է «Շամիրամը»՝ շարժվելով մխոցի համաչափ հարվածներով, թռչում գիշերվա միջով:

Ժամանակների հորձանուտն այն աշխարհից, որին ձգտում ենք, մեզ է հասցրել մի անուն: Նրա ճշգրիտ իմաստը հայտնի չէ, սակայն գեղեցիկ հնչեղություն ունի, Արևելքի հեքիաթների հնչեղությունը, որոնք վաղուց անհետացել են հազարամյակների անելության մեջ: Մեմփրամիս, Շամուրամատ: Բաբելոնի դուստրը, Նինվեի գեղեցիկ, խելամիտ թագուհին՝ Մամսի-Ադադ թագավորի սիրելի կինը: Նա կառավարում էր հզոր պետությունը իր Ադադնիրարի որդու համար: Եվ երբ, ըստ առասպելի, որդին, լինելով միակը, որ կարող էր դիմադրել նրա կախարդանքին, փորձեց ներքինի միջոցով վերացնել մորն իր ճանապարհից, Շամիրամը ներեց որդուն, զիջեց նրան իշխանությունը՝ փոխարքաներին հրամայելով հնազանդվել, ապա ինքնասպան եղավ, աղավոտ կերպարանքով բարձրացավ երկինք և դասվեց աստվածների շարքը: Իսկ ըստ հայկական ժողովրդական առասպելի՝ տարփոտ այդ կինն այնքան է տարվում Հայաստանի գեղեցիկ ու ազնվագարն թագավորով՝ Արայով, որ հակառակ դիմադրության՝ ցանկանում է նվաճել նրան ու նրա երկիրը: Շամիրամը Հայաստան է արշավում մեծ բանակով: Քաջ Արան ընկնում է մարտում, իսկ Շամիրամը վշտից հուսահատ, կրքոտ համբույրներով կենդանացնում է

նրան: Այս բոլորը տեղի է ունեցել Արալեզքի՝ մոտ, Հայաստանի կամ Ուրարտուի Վան մայրաքաղաքի մոտակայքում, որն ըստ առասպելի կառուցել է Շամիրամը՝ ծաղկեցնելով գեղեցիկ ջրանցքներով ու պարտեզներով, որի համար էլ կոչվել է «Շամիրամակերտ» (այսինքն Շամիրամի կառուցածը), թեպետ թագուհին անձամբ այնտեղ երբեք չի եղել: Այսպիսով, առասպելը մի դեպքում փառաբանում է ցեղասիրությունը, մյուս դեպքում՝ մայրական սերը, որոնք կենդանի բնությունը պահպանող երկու ուժերն են: Նման բազմաթիվ առասպելներ են հառնում ժամանակների խորքերից. չէ՞ որ Միջերկրական ծովի ու Արևելքի երկրները հարուստ են ամեն տեսակ զարմանալի դեպքերով լեցուն ժողովրդական ասքերով ու առասպելներով, ժողովուրդներ, որ գալիս, ապրում են իրենց ժամանակն ու հեռանում: Մա է կյանքի ընթացքը:

Երբ հաջորդ առավոտյան (հունիսի 6) արթնացա, մեր առջև փռված էր դարչնագույն, չոր, ժայռոտ մի ցամաք: Մա՞ է Իթաքեն: Այս մերկ, լեռնոտ կղզի՞ն (94 քառ. կմ), որ տարիներ շարունակ երազում էր Ռիֆեսը և ուր ջանում էր վերադառնալ: Այս, չէ՞ որ դա նրա հայրենիքն էր: Մյուս կողմում երևում էր մի մեծ, բարձրադիր կղզի: Դա Կեփալենիան էր, որ նույնպես լերկ էր: Այստեղ ավերին ու սարալանջերը առանձնապես չոր էին ու այրված. դա բուսածածկի աղքատությունից էր՝ հարավի կիզիչ արևի տակ: Սրա՞նք են ուրեմն Հոնիական գեղեցիկ կղզիները՝ բարձր ու լեռնոտ: Իթաքեն վեր է խոյանում մինչև 600—800 մ, Կեփալենիան ունի կրկնակի բարձրություն: Այս կղզիները չէին կարող միշտ այսպես մերկ եղած լինել, ինչպես այսօր են: Մովորական դարձած մարդկային կարճատեսությունը դրանում իր մեղքն ունի: Այն ժամանակ, երբ մարդիկ ոչնչացնում էին լեռները ստվերող անտառները, կիսաստվածները թավուտանալի մեջ հետապնդում էին ծիծաղադեմ հավերժահարսներին: Կղզու խորքերում, սակայն, դեռ կան ստվերոտ վայրեր, ուր անօթևան մարդը կարող է հանգիստ առնել:

Արևելյան կողմում Կորնթոսի դարպասներն են: Մեր առջև՝ նավամուտքից հյուսիս, Օրիա կղզիներն են, ուր 1572 թ. հոկտեմբերի 6-ին Լեպանտոյի մոտ տեղի է ունեցել ծովամարտ, որի ժամանակ 250 թիավարներից բաղկացած թուրքական նավատորմը ջախջախվել է վենետիկցիների և իսպանացիների արմադայի կողմից: Այդտեղ ոչնչացնում է 200 թուրքական նավ, իսկ ճակատամարտի մասնակից Դոն Բիշոսի հեղինակը կորցնում է իր ձախ ձեռքը: Քիչ խորքում՝ ծովածոցի հարևանությամբ, Մետլոնգիոն քաղաքն է, որի հետ հիշողություններ են կապված 1822—26 թթ. հունական ազատագրական պայքարի հերոսական պաշտպանության և Դոն Ժուանի հեղինակի մասին և որի

<sup>1</sup> Առասպելը անշուշտ իր հիմքում ունի այս տեղանունը, որն ըստ ժողովրդական ստուգաբանության Արա անձնանվան և լեզել (լիզել) բառի միացությունն է: Հմտ. Lehmann-Haupt: Armenien einst und jetzt, h. 2-րդ, էջ 185 և ծանոթ. (1926 թ.):

սիրտը թաղված է այստեղ: Ահա 1826 թ. ապրիլի 22-ի եղեռական վերջին գիշերը, երբ 9000 մարտիկներ, կանայք ու երեխաներ նետվեցին թուրքական դիրքերի վրա: Նրանցից միայն 1500-ը կարողացավ դուրս պրծնել, մնացածը մասամբ սպանվեց, մասամբ իրենք իրենց պայթեցրին վառողի պահեստների հետ: Հունաստանի, հունական կղզիների մասին այսպես է գրել Բայրոնը.

*Eternal summer gilds them yet,  
But all, except their sun is set*<sup>2</sup>:

Այսպես էր այն ժամանակ: Սակայն ժամանակները փոխվել են: Թոթափված է թուրքական բռնապետության լուծը: Եկել են նոր սերունդներ՝ նոր հնարավորություններով, նոր հուսախաբություններով, նոր հույսերով: Թե ինչ կլինի հետո, ոչ ոք չգիտե. աշխարհի ընթացքն է այդպես:

Մենք նավարկում ենք դեպի հարավ՝ Չակիներո (Չանթե) կղզու կողքով: Հոմերոսը իր ժամանակ կղզին անվանել է «անտառաշատ», սակայն այսօր դա իրականությանը չի համապատասխանում: Արևելքում փռված է ծովափնյա Արկադիա երկիրը, ուր հնում երջանկությունն իր տեղն ուներ, բայց դա այնքան հեռու է: Շարունակ գնում ենք դեպի հարավ, ժայռոտ ափերի երկայնքով: Ահա Նավարինո ծոցը, հին Պիլոսը, որի հետ կապված են հիշողություններ 1827 թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած համաշխարհային պատմության արյունահեղ ծովամարտերից մեկի մասին, որը վճռեց հույների ազատագրական պայքարի ելքը: Մի քանի ժամվա ընթացքում անգլիական, ֆրանսիական ու ռուսական նավատորմը՝ ծովակալ Քողրինգտոնի գլխավորությամբ, ոչնչացրեց 120 ռազմանավերից և փոխադրամիջոցներից բաղկացած թուրքական ամբողջ նավատորմը:

Երեկոյան շրջանցեցինք հարավային հրվանդանը: Հեռվում՝ Մենենիա ընդարձակ ծովածոցի երկարությամբ, տարածվում էին Պամփոսի լայնատարած հարթությունները, Հունաստանի երբեմնի ամենապտղաբեր երկրամասը, որի հետ էր հնագույն Մակարիան՝ «Ավետյաց երկիրը», իսկ հյուսիս-արևելքում հսկա ժայռազանգվածի տեսքով ձգվում էր Տայգետոս լեռնաշղթան: Այն Սպարտայի հարթության սահմանն է, ամենաբարձր գագաթը ծովի մակերևույթից բարձր է 2420 մ: Մենք շրջանցեցինք Մատապաս հրվանդանը, որի՝ բավական տարածությամբ ծովը մխրճված գառիթափ լեռնալանջին կար մի փարոս: Խաղաղ, լիալուսին մի երեկո կտրեցինք-անցանք Լակոնիկոս ծոցը և մտեցանք Կյուֆերային: Հնում փյունիկեցիներն այստեղ ծիրանագույն խխունջներ էին որսում, որոնք մեծապես տարածված էին Ափրոդիտեի այս սուրբ կղզու ափերի երկայնքով: Այստեղ է աստվածուհին իր գայթակղիչ գեղեցկությամբ առաջին անգամ երկիր իջել՝ տղամարդկանց խելահան անելու

համար: Այնուհետև շրջանցեցինք փոթորկաշատ ու սարսափազոր Մալես հրվանդանը և Էգեյան ծովով ուղղություն վերցրինք դեպի հյուսիս:

## ԱԹԵՆԸ

Առավոտյան (հունիսի 7) մենք մտանք Սարոնիկոս ծոցը: Ատտիկա՝ երկրագնդի հիշարժան թերակղզիներից մեկը, լեռնաշխարհ, որ մեղմ թեքությամբ բարձրանում է կապույտ ծովից: Հույն ծովագնացները ճանապարհորդությունից վերադառնալիս այստեղ էին հանգրվանում իրենց տրիբեմաներով: Հեռվից տեսանելի էին Աթենքի ոսկյա սաղավարտն ու ոսկյա նիզակների ծայրերը Ակրոպոլիսից ցած, ծովեզրին՝ արևի տակ փայլելիս:

Չախ կողմում ծովից դուրս ցցված երկարավուն բուրգը Էգինա կղզին է, իսկ նրանից քիչ հեռու գառիթափ ափերով Սալամին է: Ատտիկայի լեռնաստորոտներից ցած տարածված տափարակ դեղնավուն ցամաքը պետք է որ Աթենքի մերձակա Կեփիսոսի հովիտը լինի: Հարթությունից բարձրացած, սպիտակ բծերով մթամած գագաթը Լյուկարետոս լեռն է՝ իր վանքով: Այնտեղ՝ հեռվում, գառիթափ լանջերով լեռը, որի հարթ գագաթին շինություններ կան, հավանաբար Ակրոպոլիսն է՝ Պարթենոնով, աշխարհի սուրբ լեռը: Թվում է, թե դեռ թևածում է այն ժամանակների շունչը, երբ մարդկային ոգին ծաղկուն վերելք էր ապրում, և մինչև հայացքս կապույտ ջրերի մակերևույթով սահում էր դեպի Մալամիս, հնչում էր դեռ Արևելքի ու Արևմուտքի երկու մեծ մշակույթների բախման արձագանքը, այն ժամանակների, երբ համաշխարհային մշակույթի ապագան վճռվում էր հույների սրբի սայրով:

Վաղ առավոտյան Պիրեա նավահանգստում խաբիսխ գեցցինք: Նավ բարձրացան Հունաստանի արտգործնախարարության մի պատվիրակ և Ազգերի ընկերակցության փախստականների ընկերային ապահովության հանձնաժողովի ներկայացուցիչ պարոն Զվերները: Մենք ափ դուրս եկանք զինվորական պատվով, ծովային գերատեսչության մի մտորանավակով: Դանապարիչը շարունակեցինք երկու ավտոմեքենաներով՝ անցնելով Փալերոն ծովածոցի ավազոտ ափերով, ժամանակակից առողջարանային հյուրանոցներով կառուցապատված հին նավահանգստի մոտով, ապա Ատտիկայի դաշտավայրով մեկնեցինք Աթենք: Դանապարիչը սարսափելի էր, ընթացքի ժամանակ կտրատվում էին մարդու աղիքները: Ակամա հարգանքով ես հիշում հին ստոյիկներին, որոնք կյանքի իմաստությունը սովորեցնում էին ճեմելիս:

Հարթության վրա վեր էր խոյանում Ակրոպոլիսը՝ հույն ժողովրդի թռիչքի, մեծության ու անկման հիասքանչ խորհրդանիշը: Նախապես՝ հավանաբար հինգ հազար տարի առաջ, ժայռի գառիթափ լանջերն ապաստան էին տվել քարի դարի քարանձավաբնակ մի տոհմի: Ոսկեդարում այդ ժայռը դարձավ

<sup>2</sup> Մայրամուտ է ամենուր, մթապատ է ամեն բան, Հավերժական արևն է ոսկեգոծում սուկ նրան:

համաշխարհային մշակույթի կենտրոն, կառուցվեց տաճար հույների Աթենաս աստվածուհու պատվին: Ութ հարյուր տարի հետո Պարթենոնը դարձավ քրիստոնյաների սրբուհու՝ Մարիամի եկեղեցին, իսկ ավելի քան 1000 տարի անց այն վերածվեց թուրքերի աստծո՝ ալլահի մզկիթի: Եվս մի քանի հարյուրամյակ անց թուրքերի համար վառողի պահեստ էր և պայթեցվեց վենետիկցիների պաշարման ժամանակ (1687 թ.): Ավերակներն են միայն վկայում անցած փառքի մասին:

Աթենքում մեր տրամադրության տակ ունեինք ընդամենը մի քանի ժամ, սակայն պետք է բարձրանայինք լեռը և այնտեղից մի հայացք ձգեինք անմահ քաղաքի վրա: Պրոպիլեյների և Պարթենոնի կարմրադեղնավուն մարմարե զանգվածը փայլում էր մուգ կապույտ երկնքում: Մեզնից ցած՝ հարթավայրում, փոված էր մարդկային ոգու հնագույն վեհասքանչ ձեռակերտներից մեկը. որ դեղնաշագանակագույն և կարմրավուն տաք երանգներով ձգվում է Փալերոն ծովածոցով մինչև ծով: Արևմուտքում՝ Չունդի մյուս կողմում, Սալամիսն է, հարավ-արևմուտքում Սարոնիկոս ծոցը եզերում են Արգոլի լեռնաշղթան և Էգի-նայի գագաթները, իսկ հարավում ու հարավ-արևելքում ծովի բաց հորիզոնն է: Արևելքում բարձրանում է Հյուսիսային լեռնաշղթան իր լեռկ դեղնաշագանակագույն լանջերով, այնտեղ, որտեղ դեռ այրում էր արևը, երբ Սոկրատեսը թույլ-նով լի բաժակը մոտեցրեց շուրթերին: Հյուսիս-արևելքում Լյուկաբետոս լեռնաշղթայի կոնաձև գագաթներն են, իսկ վանքի հետևում Պենտելիկոն գագաթն է՝ մարմարի հնագույն հանքավայրերով: Հյուսիսում հարթությունից բարձրանում են մեղմ ալիքավոր բլրաշարքեր, որոնք միանում են Պառնասի ատամնաձև գագաթին: Դեպի արևմուտք ձգվում է «սրբազան ճանապարհը»: Այն անցնում է ձիթենիների հին պուրակի միջով, Դափնի լեռան և Սկարամանգա լեռնաշղթայի հյուսիսով, ցածր բլրաշարքերի միջով, Ափրոդիտեի տաճարի կողքով դեպի ձիթապտղի դաշտերը: Մոտակայքում են գտնվում Նյունփեն կոչվող բլուրները, որտեղ աստղադիտարան կա: Հրաշալի տեսարան է. ինչը կարող է համեմատվել սրա հետ:

Սա է հույների Աթենքը: Որքա՞ն բնակիչ կարող էր ունեցած լինել Ատտիկայի փոքրիկ հանրապետությունը՝ ստրուկներին չհաշված: Հավանաբար մի գյուղի չափ, եթե համեմատենք ժամանակակից մեծ քաղաքների հետ: Սակայն որքա՞ն հանճարեղ մարդկանց է օթևան տվել այս փոքրիկ քաղաքը միանգամից կամ կարճ ժամանակամիջոցում: Կա՞ մարդկության պատմության մեջ մեկ այլ ժողովուրդ, որ հասած լինի մնացած բարձրության: Շուտե՞նք, հին եգիպտացիներ՞ը մենք չգիտենք: Բոլոր դեպքերում մեզ ավելի մոտ է Ատտիկայի այս հեթաբային վերելքը: Գրեթե երկու հազարամյակ սպիտակ ցեղի մշակույթը զարգանում է այս հիմքի վրա՝ շարունակ օգտվելով այդ գանձարանի հարստությունից: Սակայն այդ վերելքը անհետացավ մույսքան հանելուկային ձևով, ինչպես և զարգացել էր, իսկ հետո՞...

*Gone— glimmering through the dream of things that were:  
First in the race that led to Glory's goal,  
They won, and pass'd away— is this the whole?*<sup>3</sup>

Ավերակներ, պատերազմի միակ հավաստի պտուղներ, միմյանց հոշոտող մարդիկ:

Որքան դիտում ես այս երկիրը, գնալով այն աչքի է զարնում զարմանալի չորություն, կանաչի կատարյալ բացակայությամբ: Ամենուրեք անհավանական անբերրիություն, որտեղից էլ այս յուրօրինակ տաք ու փոփոխական գույները՝ դեղին, բաց շագանակագույն և կարմիր: Այն կարծիքն է իշխում, որ կլիման, հին հույների ժամանակների համեմատությամբ, դարձել է ավելի չոր ու շոգ: Սակայն դրան համամիտ լինելու որոշակի հիմք չկա: Կենփխոս գետը այն ժամանակ հազիվ թե ավելի ջրառատ լիներ, քան այժմ, և հին վկայություններից էլ գիտենք, որ գետն այն ժամանակ ևս ցամաքում էր: Մարաթոնյան վազքի մասնակիցները Աթենք էին հասնում փոշու մեջ կորած. կարծես թե մեծ տարբերություն չկա ժամանակների մեջ: Անշուշտ, մարդիկ մույնպես փոփոխությունների պատճառ են հանդիսացել՝ ոչնչացնելով անտառները կացնով ու կրակով: Նաև քաջ գիտենք, թե ինչպես պատերազմը ինքնին կարող է բերրի երկրամասերն անապատի վերածել: Այս է պատճառը, որ հույները, հատկապես աստիկացիները, զբաղվում էին ոչ միայն երկրագործությամբ, այլ հավասարապես նաև առևտրով, որը պայմանավորված էր բազմաթիվ բարեկարգ նավահանգիստներով, նավագնացությամբ, հանքերի շահագործմամբ ու արհեստներով: Հունական մեծ մշակույթի արագ անկումը ճիշտ չէ բացատրել կլիմայական փոփոխություններով. նրա վայրէջքը նախ և առաջ պետք է վերագրել ներքին կռիվներին՝ սկսած Ալեքսանդրի լայնածավալ տիրապետությունից և նրանից հետո: Ի վերջո ժողովուրդները և ազգերն ինքնին փոփոխություններ են կրում արտաքին ազդեցություններից, ինչպես նաև առաջատար ուժերի անընդհատ կորստից, որոնք հեռանում են և խառնվելով օտար տարրերին՝ մասամբ ուժանում:

## ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ. ԱՇԽԱՏԱՆԷ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Մենք պետք է հանդիպում ունենայինք արտագործնախարարությունում: Ցավոք, այդ ժամանակ արտագործնախարարն Աթենքում չէր: Հանդիպեցինք Ազգերի ընկերակցության վերոհիշյալ հանձնաժողովի հույն փախստական-

<sup>3</sup> Կորած հույսն է առկայծում երազի միջով անցյալի, Փառքի գագաթները տանող հորձանքն էր այն առաջին, Հաղթանակները նրանց անցան գնացին, սա՞ էր ամբողջը:



ների տեղավորման հանձնախմբի նախագահ ամերիկացի պարոն Հաուլենդին: 1922 թ. աշնանը Փոքր Ասիայում թուրքերի դեմ պատերազմում հույների պարտությունից հետո Փոքր Ասիայից և Արևելյան Թրակիայից Հունաստան էր գաղթել ավելի քան մեկ միլիոն հույն: Քանի որ նրանց վերադարձը անհնար էր, ուրիշ ելք չէր մնում, քան գյուղաբնակ բոլոր փախստականներին գյուղերում ապրելու հնարավորություններ ստեղծել: Բարեբախտաբար Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում կային անմշակ կամ վատ օգտագործված հողեր, որոնք ոռոգելի դարձնելով՝ կարելի էր փախստականների մի մեծ խումբ այնտեղ բնակեցնել: Բացի այդ, հնարավոր էր նաև նրանց համար նոր գործարաններ հիմնել, զարկ տալ գորգագործությանը, շերամապահությանը և այլն:

Ազգերի ընկերակցության փախստականների հանձնաժողովի գլխավոր հանձնախմբի նախաձեռնությամբ փորձ արվեց 10000 փախստական տեղավորել Արևմտյան Թրակիայի գյուղերում ու ձեռնարկություններում: Գնդապետ Փրոքթերի եռանդուն և բանիմաց ղեկավարության շնորհիվ փորձը հաջողություն ունեցավ՝ տալով սպասածից առավել արդյունք, և մեկ տարվա ընթացքում 10000 մարդ դարձան հասարակության ինքնուրույն և օգտակար անդամներ: Այդ փորձի հիման վրա մենք մշակել էինք մի առաջարկ, ըստ որի բոլոր փախստականները, որոնց թիվն անցնում էր մեկ միլիոնից, պետք է տեղավորվեին Հունաստանում: Մակայն դրա համար հարկավոր էին միջոցներ, որ չունեն Հունաստանի կառավարությունը: Որպես Ազգերի ընկերակցության փախստականների հանձնաժողովի գլխավոր հանձնակատար, դիմեցի Ազգերի ընկերակցությանը՝ օժանդակելու Հունաստանի կառավարությանը այդ նպատակի համար փոխառություն վերցնելու գործում: Մի քանի դեմով առաջարկը ընդունվեց. Հունաստանի կառավարությունը ստացավ փոխառությունը, իսկ Ազգերի ընկերակցությունը որոշում ընդունեց կազմել երեք անձից բաղկացած մի հանձնախումբ, որի վրա դրվելու էր ձեռք բերված միջոցների օգտագործման պատասխանատվությունը: Հանձնախմբի նախագահը սկզբում Կոստանդնուպոլսի ամերիկյան նախկին դեսպանորդ պարոն Մորգենթաուն էր, իսկ հետագայում՝ պարոն Հաուլենդը:

Նրա հաղորդմամբ փախստականների տեղավորման գործը անխափան առաջ էր գնում: Փոխառությունը կազմում էր 240 միլիոն մարկ, այսինքն մի փոքր ավելի, քան մենք նախապես առաջարկել էինք (200 միլիոն), իսկ գործին լավատեղյակ ֆինանսիստներն անհրաժեշտ էին համարում դրա կրկնակին: Հույն ունեիք, թե զումարը ավելին կլիներ:

Հույն փախստականների թիվը հասել էր մեկ ու կես միլիոնի, սակայն շատերին արդեն տրված էր ապրելու հնարավորություն: Կարևոր միջոցառում էր Հունաստանի 400000 թուրք մահմեդականների փոխանակումը հույն փախստականների հետ՝ նախօրոք համաձայնության գալով Թուրքիայի հետ, որով

երկու երկրներն էլ ազատվում էին հույն և թուրք փոքրամասնությունից: Հույն փախստականների մի մեծ խումբ կարողացավ անմիջապես տեղավորվել թուրքերի թողած տներում և շարունակել նրանց զբաղմունքը՝ մեծ մասամբ շահութաբեր ծխախոտագործություն:

Փախստականների տեղավորման հարցի շուրջ առաջարկների մշակման ընթացքում ես մեծ հույսեր էի կապում փոքրասիական գորգի գործարանները (որտեղ հիմնականում հույներ էին աշխատում) Հունաստան տեղավորելու հետ: Գտնում էի, որ դրանով կապահովվեր կանանց զբաղվածությունը, քանի որ փախստականների գերակշռող մասը կանայք էին: Հաուլենդի կարծիքով արդյունաբերության այդ ճյուղի ապագան անհեռանկար է, որովհետև եկամտատար է. ավելի լավ վարձատրվող աշխատանքի դեպքում նրանք կհեռանային:

Այնուամենայնիվ, Հաուլենդը գտնում էր, որ Հունաստանին փոխառություն հատկացնելու պայքարում ճիշտ էր մեր այն պնդումը, թե փախստականների այս մեծ հոսքը ժամանակի ընթացքում կարող է շոշափելի օգուտներ բերել երկրին և զարգացման նոր դարաշրջան բացել, եթե միայն նրանց կարողություններն ու աշխատանքը ճիշտ օգտագործվեն: Աշխուժացել էր հետաքրքրությունը արհեստների նկատմամբ, նոր հողեր էին յուրացվել, ճահճոտ հողերը չորացվել, նոր վերելք և նոր կյանք էր սպասվում ամբողջ ժողովրդին: Մակայն դեռ առկա էր մի դժվար և ծավալուն խնդիր: Հույն ժողովուրդը, որ հաշվվում էր չորս ու կես միլիոն, պետք է մեկ ու կես միլիոն փախստականների համար ապահովվեր ապրուստ, տուն և աշխատանք, այսինքն՝ յուրաքանչյուր երրորդ բնակչի համար: Մեծամասշտաբ վերաբնակեցում: Կարո՞ղ ենք մենք պատկերացնել, որ հանկարծ հարկադրված լինենք նորվեգական ժողովրդի կեսին տեղափոխել մի այլ երկիր:

Կարձ ժամանակում երկու ստակալի իրադարձությունների ակնառու եղանք. այստեղ մի ամբողջ ժողովրդի գաղթ ու արտաքսում, իսկ Անատոլիայում հայ ժողովրդի տեղահանում և մեկ միլիոն մարդկանց կոտորած թուրքերի կողմից: Ահա ժողովուրդների գաղթի և փոփոխությունների մի օրինակ, որ ժամանակների ընթացքում տեղի են ունեցել այս երկրամասում:

Հունական ծագում ունեցող և հունախոս փախստականների հետ նաև շատ հայեր էին եկել: Նրանք փախել էին թուրքական կոտորածների ահից: Հունաստանում հայերը ազգակիցներ չունեին, որոնց դիմեին, չկար մեկը, որ սատար կանգներ նրանց: Հունաստանի կառավարությունը իր երկրի սահմանները բացել էր նրանց առաջ և փաստորեն տարբերություն չէր դնում նրանց և հույն փախստականների միջև: Մակայն փախստականներին տեղավորելու որևէ հնարավորության դեպքում կառավարությունը, անշուշտ, առաջին հերթին բավարարում էր հույներին: Այդ ընթացքում հայերը ճարահատյալ ստիպված պիտի լինեին թողնել այն երկիրը, որտեղ իրենք տեղ չունեին:

Մեր խնդիրն այդ հարցի լուծման փնտրտուքն էր: Ուրախությամբ տեղեկացանք, որ հայ փախստականների թիվը Հունաստանում կազմում էր ընդամենը 45000 մարդ: Եթե հաջողվեր նրանցից մոտ 9000-ին անմիջապես տեղավորել երկրից դուրս, ապա Հունաստանի կառավարությունն առժամանակ կրավարարվեր դրանով: Իսկ 11000 հայեր էլ Ռուսահայաստան գնալու ցանկություն էին հայտնել:

Հունաստանի և Թուրքիայի միջև հույն և թուրք փոքրամասնության փոխանակման վերաբերյալ վերը նշված համաձայնագիրը, հակառակ առաջին հայացքից բռնության տարրերի, լայն թափով գործառության մեջ էր մտել: Քանի որ այն մասամբ կազմվել էր հեղինակիս նախնական առաջարկների հիման վրա, արժե մի քանի խոսքով անդրադառնալ դրան: Երբ 1922 թ. աշմանը հունական բանակը Փոքր Ասիայում պարտություն կրեց, թուրքերը հույներին և նրանց հետ նաև հայերին հարյուր հազարներով բռնագաղթեցրին Անատոլիայից, ընդ որում հույն տղամարդկանց պահում և քշում էին «աշխատանքային գումարտակներ»: Այն ժամանակ ես, որպես Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատար, մեկնեցի Կոստանդնուպոլիս՝ հնարավորին չափ օգնելու բռնագաղթվածներին: Այնտեղ ես Վենիցելոսից նամակ ստացա, ուր ասված էր՝ եթե թուրքերը շարունակեն հույների բարբարոս արտաքսումը թուրքական շրջաններից, ապա հույները, իրենց կամքին հակառակ, ստիպված կլինեն որպես հատուցում արտաքսել թուրքերին Հունաստանից: Կառավարությունը բաժանում է այս տեսակետը և լիազորում հանդես գալ իր անունից: Եթե ընդհանրապես հնարավոր եղավ փրկել «աշխատանքային գումարտակներում» հավաքագրված հույն տղամարդկանց, որոնց թիվը մոտավոր հաշվումներով կազմում էր հարյուր հազար, իսկ հետագայում նաև՝ հույն փախստականների թողած անշարժ ու շարժական գույքի մի մասը, ապա դրան իմ կարծիքով մեծապես նպաստեց ժողովուրդների փոխանակման այս համաձայնագիրը: Այն ժամանակ ես Մուստաֆա Քեմալ փաշային ու նրա կառավարությանը առաջարկեցի, որ եթե թուրքական կառավարությունը իրեն իրավունք է վերապահում Անատոլիայի և Արևելյան Թրակիայի հույներին Հունաստան ուղարկել, ապա հունական կառավարությունը դրան համապատասխան կարող է Թուրքիա ուղարկել հունական պետության բոլոր շրջաններում բնակվող թուրքերին: Գաղթողների ունեցվածքը պետք է ճշգրտորեն հաշվառվի տեղական իշխանությունների կողմից, որպեսզի թողած ունեցվածքի լրիվ արժեքը համապատասխան ձևով փոխհատուցի այն երկիրը, ուր նրանք գնում են: Փոքր Ասիայից և Արևելյան Թրակիայից արդեն փախած հույների թողած ունեցվածքը նույնպես պետք է անմիջապես մանրամասնորեն և ճշգրտորեն ցուցակագրվի, որպեսզի նրանք ևս փոխհատուցում ստանան:

Քեմալ փաշան հեռագրով պատասխանեց, որ սկզբունքորեն համաձայն է առաջարկին, սակայն մանրամասները պետք է քննարկի իր կառավարու-

թյան հետ Անկարայում: Բանակցությունների ընթացքում անմիջապես պարզ դարձավ, որ Թուրքիայի առաջնահերթ պայմանն է համաձայնության մեջ բացառել Արևմտյան Թրակիան, սակայն ներգրավել Կոստանդնուպոլիսը: Նպատակը ակնհայտ էր: Ամենայն հավանականությամբ հաշտության պայմանագրով Արևմտյան Թրակիան կմնար հույներին, այստեղից էլ թուրքերի նպատակը՝ այնտեղ պահպանել թուրք բնակչությունը: Ո՞վ գիտե, կարող է այն մի օր նորից թուրքական դառնալ: Մյուս կողմից՝ նրանք առիթ էին փնտրում ազատվել Կոստանդնուպոլիսի մեծաթիվ հույն բնակչությունից, որը գերազանցում էր թուրքերին: Կասկածից վեր էր, որ այս վերջին պայմանի հետ մեծ տերությունները համաձայնել չէին կարող: Հանել Կոստանդնուպոլիսից գործարար ամբողջ հույն բնակչությանը, կնշանակեր այդ կարևոր հանգուցակետի տնտեսության կատարյալ կաթված. բանկերը մեծ մասամբ հույների ձեռքին էին կամ այնտեղ հույն անձնակազմ էր աշխատում: Դա չէր համապատասխանում Թուրքիայում արևմտաեվրոպական պետությունների տնտեսական շահերին: Կոստանդնուպոլիսում այդ հարցի շուրջ շտապ հրավիրված մեծ տերությունների գլխավոր հանձնակատարների խորհրդաժողովը նույնպես արտահայտեց իր կատարյալ անհամաձայնությունն այդ կետի վերաբերյալ:

Կոստանդնուպոլիսում Անկարայի կառավարությունը ներկայացնող թուրք միջնորդի հետ չկարողանալով համաձայնության գալ՝ ես իմ առաջարկը ներկայացրի Լոզանի հաշտության վեհաժողով, որը 1922 թ. նոյեմբերին նստաշրջան էր գումարել: Ես կարևորում էի այն շտապ ընդունելու և գործողության մեջ դնելու հանգամանքը՝ չսպասելով հաշտության պայմանագրի կնքմանը: Հուսով էի՝ համաձայնագիրն արագ գործածության մեջ դնելով՝ առաջին հերթին պահանջել «աշխատանքային գումարտակներում» կենդանի մնացած հույն տղամարդկանց և փրկել նրանց կյանքը և, երկրորդ՝ Անատոլիայում ու Արևելյան Թրակիայում մնացած ունեցվածքի արժեքի գոնե որոշ մասի պահպանումը հույն փախստականների համար: Կարող էին առարկել, որ Հունաստանում ապրող թուրք բնակչության համար դժվար կլինեք թողնել իրենց խաղաղ բնակավայրերը, որտեղ նրանց չէին անհանգստացնում: Անշուշտ, պետք է խոստովանել, որ չնայած նրանք տուժում էին Թուրքիայում իրենց ցեղակիցների կատարած ոճրագործությունների դիմաց, սակայն կատանային իրենց թողած գույքի լրիվ փոխհատուցումը, բացի դրանից Արևելյան Թրակիայում կամ Փոքր Ասիայում կային բավականին լքված բերրի հողեր, ուր նրանք կապրեին նույն հավատն ունեցող իրենց ցեղակիցների հետ: Անկասկած հարցի մասն լուծումը հետագայում կունենար իր առավելությունները, քանի որ ստեղծվում էր բնակչության համասեռություն: Մյուսով կվերանար «Մերձավոր Արևելքում» մշտապես կոտորածներով ուղեկցվող գժտությունների հիմնական պատճառը:

Թուրքական կողմը հավաստիացրեց, որ թուրք բնակչությունը Հունաս-

տանում իր տունն ու ունեցվածքը բարվոք վիճակում կթողնի հույն փախստականներին: Թուրքերը, սակայն, գալով Փոքր Ասիա՝ օթևան չունեցան. հունական գյուղերը վերածվել էին ավերակների: Թուրքերին շատ ավելի ծանր բաժին էր հասել, քան հույն վտարանդիներին: Մակայն մոռանում էին, որ այդ ավերածությունը մասամբ հենց իրենց՝ թուրքերի արածն էր: Այնուամենայնիվ, նրանք բաժին էր ընկել բարեբեր երկիր, որը շատ ավելի էր այլ փոխհատուցում պահանջելու համար. չէ՞ որ դա մնայուն հարստություն էր, իսկ անհրաժեշտ քանակի տների կառուցումը աշխարհի այդ մասում հազիվ թե շատ ծամանակ պահանջեր: Արևելյան Թրակիայում, ի դեպ, հունական բնակավայրերն անվթար էին մնացել: Ընդհանուր առմամբ հույների թողածի արժեքն անհամեմատ ավելի մեծ էր, քան նրանք ստացան դրա դիմաց, իսկ թուրքերը շատ ավելի շահավետ փոխանակում արեցին:

Ընչտ չէր այն պնդումը, թե հարցի նման լուծումը ծանր կացության մեջ կդնեք Փոքր Ասիայի քրիստոնյաներին: Առաջարկը վերաբերում էր միայն հույն բնակչությանը, որի մեծ մասն արդեն արտաքսված էր, և կասկած չկար, որ թուրքերը մտադիր էին մնացածներին մույնպես արտաքսել: Համաձայնագրի արժանիքն այն էր, որ դրանով բռնագաղթը ընդունում էր օրինական և կանոնավոր ձև, որտեղ հաշվի էին առնված նաև տնտեսական շահերը:

Լոգանի վեհաժողովը հիմնականում առաջարկությունը ընդունեց մի լրացումով, որ արդեն փախած հույները կորցնում են Փոքր Ասիայում ու Արևելյան Թրակիայում թողած իրենց ունեցվածքի իրավունքը: Ինչպես պնդում էին թուրքերը, դրանք ըստ «թուրքական օրենքների» արդեն անցել են պետությանը, քանի որ սեփականատերերը երկրից հեռացել են առանց թույլտվության (խուսափել են կոտորածից): Բացի դրանից, առաջարկությունն ընդունվեց այնպիսի ձգձգումներով, որ փրկել հնարավոր եղավ «աշխատանքային գումարտակների» տղամարդկանց միայն մի մասին:

Այս համաձայնագրով Անատոլիայից հայերի արտաքսումը մույնպես առնչվում էր հույն և թուրք բնակչության փոխանակման հետ, սակայն այստեղ կար մի թյուրիմացություն: Հայերը չէին կարող ներգրավվել, որովհետև նրանք հույները չէին, բացի այդ հայերի դիմաց փոխանակվող անձեր չկային: Նրանք չէին կարող դիմել հայկական պետությանը. այն Ռուսահայաստան էր:

Այնուամենայնիվ, ես խոսեցի թուրքերի հետ ասիական Թուրքիայի սահմաններում հայերին մի երկրամաս տրամադրելու հնարավորության մասին, որտեղ կկարողանային հավաքվել ոչ միայն փախստականները, այլև Անատոլիայում դեռևս բնակվողները, որով և կկանխվեին հետագա գտությունները հայ և թուրք բնակչության միջև:

Առաջարկության և նրա մոտակա իրականացման մասին թուրքերը լսեցին բարեկիրք քաղաքավարությամբ և ասացին, որ այդ մտքերը շատ հետաքրքիր են: Բանակցությունները, սակայն, միշտ հանգում էին այն մտքին,

որ ավելի լավ է հայերը հեռանան, իսկ եթե ցանկանում են, թող մնան իրենց տեղում, նաև Անատոլիայում: Չկա տարակարծությունների վտանգ թուրքերի և հայերի միջև. նրանք իրար հետ շատ լավ են համակերպվում, քանի դեռ հայերը սաղրանքի չեն ենթարկվել եվրոպացիների կողմից:

## ԱԹԵՆՔԻՑ ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Կեսօրին մենք «Շամիրամ» նավով թողեցինք Պիրեա նավահանգիստը և ուղղություն վերցնելով դեպի հարավ՝ շրջանցեցինք Ատտիկա թերակղզին և արևոտ երկնքի ուղեկցությամբ դուրս եկանք բաց ծով: Հեռվում դեռ փայլվում էին Կոլոնա (հին Սունիոն) հրվանդանի լեռների կատարները, Աթենքի փառահեղ տաճարի մարմարյա բարձրաբերձ սյուները: Հունական մայր ցամաքի արևելյան այս ելուստն իր փոփոխական հոսանքներով ու քամիներով միշտ վախեցրել է ծովագնացներին, և հնում եղել է ծովերի աստված Պոսեյդոնի, իսկ ավելի ուշ՝ երկրի պահապան աստվածուհու գոհատեղին:

Մեր ճանապարհը անցնում էր Եվբեա կղզու հարավային ծայրակետի և Անդրոս կղզու միջով դեպի Դարդանել: Սկիբոս կղզին մնաց հյուսիսում. այնտեղ Թետիսը իր որդուն Ափիլեսին, աղջկա շորեր հագցնելով՝ քաքցրել էր Լյուկոնեդոսի աղջիկների մեջ:

Հունաստանը և Փոքր Ասիան իրենց հովիտներով ու լեռներով, բազմաթիվ ծովածոցերով ու լեռնաշղթաներով, անհամար կղզիներով շատ մման են Նորվեգիային: Բայց ոչ թե սառցադաշտերն են երկրի մակերևույթն այսպես ճեղքել, այլ այստեղ գործել են բնության այլ ուժեր՝ ջուրը և սառուրեկրյա կրակը, գետերը և հրաբուխները, այստեղից էլ երկրի մակերևույթի ձևերի այլազանությունը Նորվեգիայի համեմատությամբ: Երկար, կտրտված ավերը՝ բազմաթիվ նավահանգիստներով և կղզիներով, օգնել են հույներին դառնալու խիզախ ծովագնացներ և հմուտ վաճառականներ: Նրանք բոլոր պայմաններն ունեին հիմնելու ծաղկող գաղութներ և զարգացնելու բարձր մշակույթ:

Ճաշից հետո նավի վրա ծանոթացա շվեյցարացի երկու վաճառականների հետ, որոնք Կոստանդնուպոլիս էին մեկնում՝ արևելյան գորգեր գնելու: Նրանց ուղեկցում էր կոստանդնուպոլսեցի մի գործարար հրեա, որին հանդիպել էին Յյուրիխում: Շվեյցարացիները սկսել էին անվստահությամբ վերաբերվել հրեային, որովհետև պարզվել էր, որ նա Կոստանդնուպոլսից հեռացել էր դաշնակիցների կողմից քաղաքը գրավելուց հետո և ուներ նրանցից ստացած անձնագիր: Թուրքերը չէին ընդունում այդ անձնագրերը, իսկ այն թրքահպատակները, որոնք երկրից դուրս էին եկել ոչ թուրքական անձնագրերով, կրկին ետ չէին ընդունվում: Թուրքերը, իհարկե, բացառություն էին կազմում: Դանապարհորդությունից առաջ հրեան այդ մասին չէր ակնարկել: Գնալով

ավելի դյուրագրգիռ էր դառնում. որքան մոտենում էինք նպատակակետին, այնքան լաց լինել էր ուզում: Ի վերջո տիրապետեց իրեն. չէ՞ որ Կոստանդնուպոլսում էին ապրում ծնողները, քույրերն ու եղբայրները. թուրքական իշխանություններն այդքան դաժան չեն գտնվի՝ իրեն ծնողների մոտ չթողնելու, ուրոնց նա երկար ժամանակ չէր տեսել:

Հրեայի գեղեցիկ կինը՝ ծագումով իսպանական հրեոտի Կոստանդնուպոլսից, տախտակամածի վրա վայելում էր գեղեցիկ երեկոն՝ բաց ծովի վրա, լիալուսնի լույսի տակ սիրահետելով մի ֆրանսիացու: Հրեան կծկված նստած էր մի անկյունում՝ տարված մտայն խոհերով: Ի՞նչ կար այդքան տրամելու: Եթե Կոստանդնուպոլսում ափ իջնելու իրավունք չստանար, ապա արկածը կավարտվեր, հենց որ ֆրանսիացին թողներ նավը, իսկ եթե ստանար մուտքի թույլտվություն, դարձյալ լավ գործարք կլիներ: Երկու տարբերակներն էլ ունեին իրենց լավ կողմերը:

Մեր առջև գիշերային մթության մեջ Լեմնոս կղզին էր: Այստեղ էին հավաքվել հույն իշխանները Տրոյա կատարած արշավանքից առաջ, այն ժամանակներում, երբ բարձրաշխարհիկ մի տիկնոջ՝ օտար տղամարդու հետ փախչելը դիտվում էր պետական գործ: Տեղի բնակիչները պատերազմում չեզոքություն էին պահպանել. նրանց մասնակցությունը դրսև որվել էր ռազմագերիների փոխանակման ժամանակ. նրանք ստրուկներ էին գնել և հետո վաճառել: Վերջին աշխարհամարտի տարիներին այստեղ էր կենտրոնացել արևմտյան տերությունների նավատորմը, իսկ կղզին վերածվել էր հենակետի՝ նեղուցները գրավելու համար:

Երրորդ օրվա առավոտյան (երկուշաբթի, 8-ը հունիսի) մտանք Դարդանել: Նեղուցի երկու ափերի ցածր լեռնադաշտերն ամայի և լուռ փոված էին բացվող օրվա լույսերի մեջ: Մարդկային շնչի ու երթևեկության միջոցների կատարյալ բացակայություն. չէր զգացվում, որ գտնվում ես երկու աշխարհամասերն իրար կապող ճանապարհի վրա: Մուտքի հարավային ափին Տրոյան էր՝ նախկինում նեղուցների պահապանը, այնտեղով երթևեկող հարուստ առևտրականների տիրույթին: Հետագայում այդ դերը ստանձնեցին Բյուզանդիան ու Կոստանդնուպոլիսը: Այստեղ՝ «քամիներով առատ» Տրոյայի առջև տարածված դաշտում, Հոմերոսի հերոսները աստվածների ներկայությամբ ճակատամարտեր էին մղում:

Երեկոն շառագունել էր Արևելքի երկինքը, երբ մենք կտրեցինք-անցանք ոլորապտույտ Հելլեսպոնտոսի ջրերը: Բնության ի՞նչ հրաշալի պատկեր է այդ նեղուցը՝ Գալլիպոլի երկարավուն թերակղզով, որի հյուսիսային ծայրը հասնում է մինչև Եվրոպա, իսկ ինքը ձգվում է ասիական ափերի երկայնքով՝ կազմելով երկար ու նեղ ջրային այս ուղին, որն ամենակարճ ճանապարհով կարելի է կտրել-անցնել թերակղզու հյուսիսային մասում:

Ահա այնտեղ՝ նեղուցի ափին, Լեանդրի Աբիդոսն է, իսկ մյուս՝ հյուսիսա-

յին ափին Մեստոսը՝ Ափրոդիտեի տաճարով, որտեղ Հերա քրմուհին սպասում էր իր աշտարակում: Բայց երբ այսօրվա պես առավոտը շառագունեց, նրա ուրոնող աչքերն ափին գտան սիրեցյալ լողորդի դին՝ ցողված ծովի ջրերով: Այդ ժամանակ քրմուհին իրեն նետեց ալիքների մեջ.

*That tale is old, but love anew*

*May nerve young hearts to prove as true<sup>4</sup>.*

Այս նույն Հելլեսպոնտոսում լողացել է նաև Բայրոնը, բայց քրմուհի չի սպասել նրան: Այս ափերին փշրվեց նրա գեղեցիկ Ջուլեյկայի սիրտը, որ հարսնացուն էր Աբիդոսի.

*Soft as the memory of buried love<sup>5</sup>.*

Հենց այս նույն ափին կանգ է առել Պարսից արքան՝ Էլլադային տիրելու անհամբերությամբ տոգորված: Այստեղ հրամայեց նա 300 ճիպոտահարված հասցնել և շղթայել ծովը, երբ փոթորիկը քանդեց տարավ Աբիդոսից Մեստոս ձգվող կամուրջը:

Օրը կիսվել էր, երբ Մարմարա ծովի կապույտ հարթությունից բարձրացան Ստամբուլ թերակղզու բարակ մինարեներն ու լայնամիստ գմբեթները: Նեղուցի հարավային կողմում սպիտակին էին տալիս Սկյուտարի տները՝ գորանոցների երկար շարքերի նման: Տեսարանը պակաս գրավիչ էր, սակայն ասիական էր: Մենք մտանք Բոսֆոր և ընթացանք Ոսկեղջյուրից դուրս նավահանգստում կանգնած նավերի միջով: Չախ կողմում մուգ կապույտ երկնքի ֆոնին բարձրանում էին Ստամբուլի մեծ մզկիթներն ու մինարեները, իսկ մեր առջև և աջ կողմի զառիվայրին հունական ու հայկական Ղալաթիա և Բերա թաղամասերն էին: Նավահանգստում և Ոսկեղջյուրում նավերի ու կայմերի մի խառնաշփոթ էր:

Մինչ ափին էինք մոտենում, մեզ ընդառաջ էին գալիս բազմաթիվ մակույկներ: Հանկարծ մեր հրեա բարեկամը աշխուժացավ: Նա ձեռքերը թափահարում էր օդում, մի մակույկի ուղղությամբ նշաններ էր անում և բացականչում. «Ահ, ահա հայրս: Եղբայրս էլ է այնտեղ»: Նա ուրախությունից փայլում էր և մի պահ մոռացել էր բոլոր դժվարությունները:

Նավ բարձրացան թուրք ծառայողները, և սկսվեց անճնագրերի ստուգումը: Ծատերն անմիջապես ափ դուրս գալու թույլտվություն ստացան:

Միայն հրեան իր կնոջ հետ մնաց նավում: Նրան թույլ չտվեցին անգամ ողջագուրվելու հոր հետ, որը մակույկով կանգնած էր նավի մոտ. տախտակամածից միայն կարող էր խոսել նրա հետ: Տեսարանը տխուր էր. հրեան և իր կինը նստած էին լքված տախտակամածին, իսկ մենք ափ էինք դուրս գալիս:

<sup>4</sup> Այս պատմությունը հին է, բայց նորից Մերը կարող է ուժ տալ ջահել սրտերին:

<sup>5</sup> Միտ աղոտ հիշողություն մոռացված:



Թեև նրանք դեռ հույս ունեին գործն արագ կարգավորել և ափ դուրս գալ, բայց հրեալուս գեղեցիկ աչքերից կախված էին արցունքի խոշոր կաթիլներ: Ինչո՞ւ այդ ամենայն հավանականությամբ անմեղ մարդկանց թույլ չտվեցին ափ դուրս գալ, դժվար է հասկանալ, բայց պարզ էր, որ թուրքերն առիթը բաց չէին թողնում ոչ թուրք բնակիչներին հեռացնելու թուրքական հողերից:

## ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍԸ ԵՎ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԸ

Նույն օրվա կեսօրին ինձ մոտ հյուրանոց եկավ հայկական մի պատգամավորություն: Բացի Կոստանդնուպոլսում բնակվող հայերից, որոնք 1922 թ. թուրքերի կողմից քաղաքը գրավելուց հետո չէին փախել, ժամանակի ընթացքում այստեղ էին հավաքվել նաև 5000 փախստական հայեր: Նրանք ապրում էին քաղաքից դուրս՝ ճամբարներում, մեծ մասը աշխատանք ուներ: Նախ և առաջ պետք էր նրանցից մոտ 800-ին Հայաստան ուղարկել: Հայ-ռուսական կառավարությունը խոստացել էր մուտքի անձնագրեր: 350 հոգի պատրաստ էին մեկնելու առաջին փոխադրամիջոցով, խոստացված մուտքի թույլատրությունը ստանալուն պես: Ամերիկյան կողմը 11000 դոլար էր տրամադրել 800 փախստականների փոխադրման և նպաստի համար: Այժմ բանն այն էր, թե ինձ կհաջողվե՞ր գործը մինչև վերջ հասցնել: Բացի այդ ցանկալի էր նաև 5000 փախստականների մնացած մասին և ս հնարավորին չափ շուտ Հայաստան ուղարկել:

Երեքշաբթի, հունիսի 9: Ֆրանսիական նավը, որով պետք է շարունակեինք մեր ճանապարհորդությունը, մեկնելու էր հաջորդ օրը, ուստի որոշեցինք մեր ժամանակը տրամադրել Բուլղարիայի Վառնա քաղաքից եկած ռուս փախստականների հարցին: Սա մի տխուր պատմություն էր: Բուլղարիայում ռուս փախստականներ շատ կային, որոնց մեծ մասը Վրանգելի ջախջախված բանակից էր: Նախապես նրանք եկել էին Կոստանդնուպոլիս, մի մասին մենք ուղարկեցինք Բուլղարիա, քանի որ այնտեղ հեշտ էր աշխատանք գտնել. շատերն այնտեղից Ռուսաստան վերադարձան: Այդ մարդկանց օգնելը մտնում էր իմ պարտականությունների շրջանակների մեջ որպես Ազգերի ընկերակցության ռուս փախստականների հարցերով զբաղվող հանձնաժողովի գլխավոր հանձնակատար:

Բուլղարիայի կառավարությունը ռուս փախստականների մեջ կոմունիստներ ենթադրելով՝ վախենում էր քաղաքական վարակից: Նա ցանկանում էր օր առաջ ազատվել այդ մարդկանցից: Կասկածելիներին հավաքել էր Վառնայի մոտ մի ճամբարում, իսկ այս գարնանը, մարտի սկզբին, 250 ռուս փախստական լցրել «Տրիտոն» կոչվող մի խարխուլ բեռնանավ, որ հագիվ 50 հոգի կարող էր վերցնել: Մի քանի օրվա պարենով և ջրով նավը Սև ծովով ուղ-

ղություն էր վերցրել դեպի Օդեսա: Սակայն ռուսական կառավարությունը տեղյակ չէր այդ մարդկանց փոխադրման մասին, քանի որ Բուլղարիայի կառավարությունը նրանց ընդունման հարցը նախօրոք չէր համաձայնեցրել ռուսական իշխանությունների հետ: Այդ պատճառով էլ Օդեսայում մերժվեց փախստականներին ափ հանելը: Խախուտ «Տրիտոնը» նորից բաց ծով դուրս եկավ, բայց ո՞ր: Գնալ ռուսական մեկ այլ նավահանգիստ, իմաստ չունեի, աննպատակահարմար էր նաև Բուլղարիա վերադառնալ: Կար մի ելք՝ Թուրքիա գնալ, իսկ դա ծովային մի երկար ճանապարհ էր: Անհնար է պատկերացնել այդ մարդկանց կրած տառապանքները՝ փակված հագիվ ջրի վրա երերացող փոքրիկ, հնամաշ, բազմաթիվ ճեղքերով այս բեռնանավում առանց պարենի և ջրի պաշարի: Երբ այն ապրիլին 26 օրվա ծովային ճանապարհորդությունից հետո վերջապես Կոստանդնուպոլիս հասավ, հիշեցնում էր ճանապարհորդական ճմրթված մի պարկ: Նավի վրա ցնծություն էր, եկել էր փրկության ժամը: Բայց ոչ, թուրքական իշխանությունները նույնպես այդ թշվառներին ափ դուրս գալու իրավունք չտվին: Նրանք մնացին նավի վրա:

Հանձնարարվեց «Տրիտոնը» շոգեմակով քարշակել Բոսֆորով դեպի ետ՝ Սև ծով: Երբ սկսվում է քարշակելը, նավի վրա հուսահատությունը հասնում է կատաղության: «Տրիտոնը» խորտակման եզրին էր, այն կիսով չափ լցված էր ջրով, ռուսները ճշում էին, օգնություն կանչում, սպառնում թոչել նավից: Բարեբախտաբար մոտակայքում կանգնած անգլիական մի շոգեմակի պատը լսում է օգնության կանչերը: Նա դիմում է թուրքական ոստիկանությանը՝ սպառնալով նրա վրա դնել կատարվածի և մարդկային զոհերի պատասխանատվությունը, եթե շարունակվի այդ անմարդկային արարքը: Դադարեցվում է նավի քարշակումը, իսկ ռուսներին թույլատրվում է թողնել խորտակվող նավը: Ափին նրանց հատկացվում է ցանկապատված մի փոքրիկ վայր՝ սուզվող «Տրիտոնի» ճիշտ դիմացը: Ուտելիք չունեին. դրանից էլ հյուծված էին նրանք:

Դեպքից անմիջապես հետո մայիսի 2-ին հեռագրով տեղեկացա իրավիճակի մասին և հեռագրեցի Մոսկվա՝ կառավարությունից խնդրելով փախստականների համար հայրենիք՝ Ռուսաստան, վերադառնալու թույլատվություն: Սակայն Մոսկվայի կառավարությունը պատասխանեց, որ ինքը չի ճանաչում փախստականներին, չգիտե ովքեր են նրանք, ուստի հարկադրված է մերժել: Կառավարության կարծիքով այս խնդրի իրավասուն Բուլղարիայի կառավարությունն է, որ զլացել է դիմել Մոսկվա:

Այդ ընթացքում խեղճ փախստականները իրենց օրն անց էին կացնում բացօթյա, կիսամերկ և առանց սննդի: Թշվառ մի գոյություն: Մահացությունը մեծ կլինեի, եթե չլիներ օրիորդ Աննա Միխելը, որ աշխատում էր Ազգերի ընկերակցության փախստականների հարցերով զբաղվող հանձնաժողովի՝ Կոստանդնուպոլսի գրասենյակում: Նա քաղաքի ամերիկաեվրոպական համայնքի պատրաստական անդամներից և այլ հիմնարկություններից փող էր հա-

վաքում և դրանով ծայրը ծայրին հասցնում այդ մարդկանց օրվա ապրուստը: Նրա հավաքած միջոցները սպառվելու վրա էին, և զգիտեր ում դիմեր: Նրա առաջարկությամբ այցելեցինք ռուս փախստականներին:

Ինչպիսի բշխություն: Փախստականներին հատկացված էր ավաներձ մի նեղ տարածք: Որոշ տարածության վրա տանիքի պես ինչ-որ բան կար: Մի ժամանակ հավանաբար նավակների հավաքակայան է եղել: Գիշերը փախըստականները քնում էին մերկ գետնին՝ տղամարդ և կին սեղո կպած իրար: Յուրաքանչյուրին հասնում էր 6 ոտնաչափ երկարությամբ և 2 ոտնաչափ լայնությամբ մի քանի քարերով միմյանցից առանձնացված ուղղանկյունի, որը ծառայում էր որպես մահճակալ: Մի թուփ հող կամ մի քանի քարն էլ գլխատակի բարձն էր, մի քանի քուրջ էլ փոված էր գետնին որպես ներքնակ իրանի վերին մասի համար: Այս էր բոլորը: Այստեղ երեխաներ էին ծնվել, մահացել մի քանի մարդ: Չարմանալի էր, որ մահացությունը ավելի մեծ չէր: Տանիքի տակ բոլորը չէ, որ կարող էին պատսպարվել, մյուսները առանց ծածկի պառկում էին գետնին: Գիշերները ցուրտ էին, իսկ անձրևները թրջում էին նրանց: Օրվա կերակուրը մի կտոր հաց և մի ավսե ջրալի ապուր էր: Սակայն, ինչպես ասացի, հավաքված փողն էլ վերջանալու վրա էր: Փախստականները իրենց մոտ մի քիչ փող են ունեցել, ընդամենը 700 թուրքական ֆունտ (մոտ 13000 մարկ), սակայն թուրք ոստիկանները վերցրել էին այդ փողը և այժմ հրաժարվում էին վերադարձնել: Նրանք պնդում էին, որ այդ փողը ծախսելու են փախստականներին մի այլ վայր տեղափոխելու համար, հավանաբար որևէ եկեղեցու բակ: Սակայն փողը չէր բավարարում նոր ապաստարանի վարձը վճարելու:

Այնուամենայնիվ վտարանդիներից շատերը, չնայած կրած զրկանքներին, լավ տեսք ունեին: Կանանց մի զգալի մասը առողջ և առույգ էր, մյուսները ճիշտ հակառակը՝ հյուծված և ուժասպառ: Տղամարդկանցից շատերն էլ ուժեղ և աշխատունակ էին: Թարգմանչի՝ Քվիսինգի միջնորդությամբ շատերի հետ խոսեցի: Նրանց միակ ցանկությունն էր գնալ այնտեղ, ուր կկարողանային աշխատանք գտնել և իրենք իրենց ապրուստը հոգալ: Նրանք պատրաստ էին նաև Ռուսաստան մեկնել, բայց ոչ երբեք Բուլղարիա: Նրանց մեջ շատ կային կրթվածներ, որ խոսում էին նաև ֆրանսերեն, նրանք և ս պատրաստ էին ցանկացած աշխատանք կատարելու:

Ի՞նչ կարող էինք անել: Բանն այն էր, որ այս մարդիկ հայրենիք՝ Ռուսաստան, մեկնելու ցանկություն էին հայտնել՝ ազատվելու համար Բուլղարիայի համակենտրոնացման ճամբարներից: Այդ քայլի համար նրանք համարվում էին բռնաբերված, և ուրիշ ոչ մի երկիր չէր ցանկանում ընդունել նրանց: Ես խոսեցի Կոստանդնուպոլսում Բուլղարիայի դեսպանորդ պարոն Ռադևի հետ: Նա ինձ հավաստիացրեց, որ իր կառավարությունը ոչ մի պայմանով այս մարդկանց այլևս չի ընդունի. թուրքական կառավարությունը նույնպես հաս-

տատ վճել էր մերժել նրանց Կոստանդնուպոլսում ապաստան տալու թույլտվությունը: Իսկպաես հարցը շատ բարդ էր, սակայն նման պատմությունների, նույնիսկ ավելի դժվարամատչ, բազմիցս հանդիպել ենք Եվրոպայում փախստականների հետ տարվող աշխատանքների ընթացքում:

Ի վերջո խնդիրը հետևյալ լուծումն ունեցավ. նախ և առաջ միջոցներ հայթայթեցինք և լուծեցինք փախստականների սննդի հարցը: Այն սկզբում մեզ տրամադրեց կոպենհագենցի հրատարակիչ Քր. Էրիքսենը, ապա «Near East Relief»<sup>6</sup> ամերիկյան այդ մեծ կազմակերպությունը իր վրա վերցրեց մի քանի ամսվա ծախսերը՝ պայմանով, որ այդ ընթացքում վերջնական լուծում ստանա փախստականների տեղափոխման հարցը: Ես ստանձնեցի հարցի լուծման պատասխանատվությունը: Վերջապես Ֆրանսիան ընդունեց աշխատունակ մի փոքրիկ խումբ: Իմ պնդմամբ Մոսկվայի խորհրդային կառավարությունը որոշեց ընդունել մյուսներին այն պայմանով, որ Բուլղարիայի կառավարությունը այլևս առանց Մոսկվայի հետ նախնական համաձայնության փախստական չուղարկի Ռուսաստան:

«Շամիրամ» նավի մեր երկու խեղճ թուրք-երես «փախստականների» մասին լուրերը տխուր էին: Հակառակ նրանց գործադրած բոլոր ջանքերին, հաջորդ իսկ նավով նրանք պետք է վերադառնային առանց այդպես էլ ավի դուրս գալու: Հրեայի ծնողները ավիանման կամրջակին նստած՝ նայում էին իրենց որդուն և հարսին, որոնք նավի վրա լաց էին լինում: Հրեան հասցրել էր ասել շվեյցարիացիներին, որ չի հասկանում ինչի համար են իրեն պահում նավի վրա: Գուցե եղբայրն է ինչ-որ բան սարքել իր դեմ՝ նրա շահութաբեր առևտրի ողջ հասույթը յուրացնելու համար:

Ճաշից հետո գնացի սուրբ Մոֆիա՝ այդ հրաշալի գմբեթակիր կառույցը կրկին տեսնելու: Ամրակուտ ձվածկ սրահի վերևում, որ այնքան կատարյալ ու միասնական է իր ձևի մեջ, թեթևորեն վեր է խոյանում հզոր գմբեթը՝ մարդկային ոգու հաղթանակը ծանր նյութի նկատմամբ: Այն ճարտարապետական արվեստի նշանակալի գործերից է, և եթե բյուզանդական մշակույթն այս տաճարից բացի որևէ այլ բան ստեղծած չլիներ, միևնույն է, նրան կպատշաճեր բարձր աստիճան: Հեքիաթային այս կառույցը հիմնադրվել է Հուստինիանոս կայսրի օրոք՝ 532—537 թթ., ակնհայտորեն առանց մոտավոր նույն չափերն ունեցող նախատիպի: Այստեղ բացառվում է կապն արևմտյան ճարտարապետության հետ, քանի որ այդ ժամանակ այն ավելի ցածր մակարդակ ուներ: Իսկ այն արվեստը, որ ժամանակին կամարակապել էր Հռոմի պանթեոնի զըմբեթը, վաղուց մոռացված էր:

Սա Արևելքի ստեղծագործություն է: Ճարտարապետներ Անթեմիոս Տրալացին և Իսիդորոս Մրիեթցին հավանաբար փոքրասիացի հույներ էին, որոնք

<sup>6</sup> «Մերձարևելյան նպաստամատույց»

ոչ սովորական հզոր կառույցների մեխանիկական խնդիրները լուծելիս հիմնը-վում էին հունական գիտության, ամենից առաջ Արքիմեդի վրա: Իսկ կառույցի մտահղացումը: Ուղղանկյուն սրահն իր չորս փառահեղ կամրջասյուներով թեթևորեն կրելով միջնագմբեթը՝ երկու կողմերից միանում է կիսագմբեթին, որը սրահին տալիս է յուրօրինակ կորավուն ներփակություն: Այստեղ արդեն բացակայում է կապը Հունաստանի հետ:

Ինչքան մտածում եմ այս հանելուկի մասին, այնքան հակվում եմ կարծե-լու, որ նրա հիմքում ընկած է հայկական և վրացական եկեղեցաշինությունը, և իրավացի է Ստրժիգովսկին<sup>7</sup>, որ Սոֆիայի տաճարի հիմնական մտահղա-ցումը բխեցնում է Հայաստանից կամ Վրաստանից: Հայկական եկեղեցիների մախատիպը հիմնականում ուղղանկյուն է, չորս անկյուններում ծանր կամր-ջասյուներով, որոնք փոքրիկ օժանդակ որմնախորշերով կրում են ներքին զըմ-բեթը, վերջինս էլ կիսաշրջանաձև ելուստներով միանում է կիսագմբեթին: Ինչ-պես Լեոնարդոն և Բրամանտեն գմբեթաշինության մասին իրենց պատկերա-ցումներով պարտական են հայերին, այնպես էլ Անթեմիոսն իր հսկա կառույ-ցի հիմնական մտահղացումը վերցրել է նույն աղբյուրից: Այն ժամանակ Բյու-զանդիան Հայաստանի հետ բազմազան կապերի մեջ էր: Եթե սա ճիշտ է, ա-պա Արևելքի և Արևմուտքի երկու առաջնակարգ եկեղեցիների (Սոֆիայի տա-ճարը Բյուզանդիայում և Պետրոսի եկեղեցին Հռոմում) ճարտարապետական հիմնական մտահղացումը վերցված է հայկական եկեղեցաշինությունից, հայ-կական երկու ոգի, ուրեմն և հերետիկոս Գրիգորյան եկեղեցին է իր միաբնակ ուսմունքով, ըստ որի Քրիստոսն ունի մեկ, այսինքն աստվածային բնություն՝ մարդկային կերպարանքով:

Մահմեդականներին չի հուզել քրիստոնեական այդ խորհուրդը, նրանք ե-կեղեցին վերափոխել են ալլահի մզկիթի՝ ընդորում խճանկարները և որմնա-նկարները ծածկելով սառը սվաղով, իսկ հատակի գորգն ուղղելով դեպի Մեք-քա: Եթե քրիստոնյաները ցանկանում են մտնել իրենց հին եկեղեցին, նրանք պետք է իրենց կեղտոտ ոտքերին հազնեն ուղղահավատի մուճակներ, իսկ ան-հավատի իրենց գլուխը ծածկեն գլխարկով:

Ալլահին ճշմարիտ փառաբանելու համար Կոստանդնուպոլիսը նվաճող Մուհամեդ 2-րդը Քրիստոնոսիսին՝ դարձյալ մի հույնի, պատվիրում է կառուցել մի նոր մեծ մզկիթ (1471—1473): Այն Սոֆիայի տաճարի ընդօրինակությամբն է՝ տեղ-տեղ ավելի մոտենալով հայկական ուղղանկյուն եկեղեցու հիմնաձևե-րին: Ի դեպ, զարմանալի է, թե ալլահի մոլեռանդ որդիներն ինչքան տեղ են տրվել քրիստոնեական, այսինքն հեթանոսական տարրերին: Կիսալուսինը և աստղը նույնպես նրանցը չէ, այլ եղել է Բյուզանդիայի վաղ շրջանի խորհրդա-նիշը, որ պահպանվել է բյուզանդական հին դրամների և Հեկատե լուսնի աստ-

վածուհու արձանների վրա, որ Թրակիայի կիսաբարբարոս ժողովուրդների կողմից պաշտված աստղագարդ գիշերների դուստրն էր:

Արևը թեքվել էր արևմուտք: Մենք շրջում էինք սուլթանի՝ սովերախիստ ծառերով և խաղող ճեմասրահներով գեղեցիկ պարտեզում, քաղաքի աղմու-կից հեռու՝ բարձունքից մի հայացք ձգելով դեպի Ոսկեղջյուր և Բոսֆոր: Չկա սուլթանը, և Կոստանդնուպոլիսն էլ՝ իսլամական աշխարհի երբեմնի հզոր կենտրոնը, այլևս խալիֆաների նստավայրը չէ: Մի նոր սերունդ տարված է ա-սիական Թուրքիան եվրոպական պետություն դարձնելու մարմաջով՝ առանց իհարկե նվաճող ժողովրդի իրենց հին սովորությունը թողնելու: Ժամանակնե-րը փոխվել են:

Իսկ երեկոյան ես այս աշխարհի ճիշտ մի այլ ժամանակակից մասում էի: «Մաքսիմ» ռեստորանում էինք, որի տերը մի նեգր էր Մոսկվայից: Այստեղ հնչում էր երգ ու երաժշտություն, այստեղ պարում էին, բայց ամենից առաջ այստեղ կային շատ ռուս կանայք, որ ծառայում էին հյուրերին: Նրանք ընդու-նում էին ընթրիքի հրավերներ, ընկերակցում էին հյուրերին, այդ պատճառով էլ աղմկոտ ու կայտառ էին: Նրանցից շատերը լավ ընտանիքներից էին, և ու-սաստանից փախել էին 1921 թ. Վրանգելի բանակի հետ: Երեք տարի առաջ շատերին հանդիպել էի Կոստանդնուպոլսում: Այն ժամանակ նրանք շտա-պում էին թողնել քաղաքը թուրքերի վերադարձից առաջ: Ինչպես երևում էր, այժմ արդեն երկար ժամանակով էին հաստատվել քաղաքում:

## II.

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ ԴԵՊԻ ԲԱԹՈՒՄ

Չորեքշաբթի օրը՝ հունիսի 10-ին ճաշից հետո, ֆրանսիական մի շոգենա-վով Սև ծովով պետք է շարունակեիք ճանապարհը: Հայերի մի պատգամա-վորություն հրաժեշտի համար հիասքանչ մի ծաղկեզամբյուղ էր նավ բերել: Ե-րախտագիտության ինչպիսի հուզիչ արտահայտություն այն դեպքում, երբ դա վաստակելու համար դեռ ոչինչ չես հասցրել անել: Պատասխանի փոխարեն կարող եմ միայն բարի կամք դրսևորել՝ չիմանալով սակայն, թե ինչի կարող եմ հասնել դրանով:

Վերջապես պարանները արձակեցին, և մենք պոկվեցինք ցամաքից: Մեր առջև արևելյան մի մեծ շոգենավ էր՝ շրջապատված մակույկների պարսով. նա նույնպես ճանապարհվում էր դեպի Արևելք: Ափի երկայնքով՝ Ղալաթիա-յի բարձունքին, շարված էին տները մեկը մյուսի վրա մինչև ջենովական հին ամրոցը, այժմյան հրշեջ պահակակետը: Մյուս կողմում Սուամբուլի գույնգ-գույն տների շարքերն էին և դրանց վերևում մզկիթների լայնանիստ գմբեթնե-

<sup>7</sup> Stiu Joseph Strzygowski: Die Baukunst der Armenier und Europa, h. II, էջ 777, Wien 1918:

րը: Քաղաքի երկու մասերի միջև ծխնելույզների և կայմերի մի խառնաշփոթ էր մինչև Ռսկեղջուր: Մեր առջև առկայծում էին նեղուցի ջրերը, իսկ հեռվում ձգվում էր Մարմարա ծովի լայն ժայռավեներ: Մենք շրջանցեցինք փոքր տարածության մեջ խարխախ գցած նավերը և Բոսֆորով ուղղությամբ վերցրինք դեպի հյուսիս-արևելք: Ստամբուլի մզկիթների գմբեթները և միմարների բարակ կայմերը դեռ երկար լուսավորված էին մայր մտնող արևի թանձր լույսով, ապա Կոստանդնուպոլիսն աստիճանաբար սուղվեց մեր թիկունքում:

Ինչ տարօրինակ, անհավասար պատկեր է ներկայացնում Բոսֆորի այս աղմկուտ մրջնանոցը՝ բարեկամներ և թշնամիներ նույն բազմության մեջ, մեծ մասամբ, սակայն, թշնամիներ: Կարևորագույն մի կենտրոն, երկու ծովերի միջև ջրային մի նեղ ճանապարհով միմյանց հետ կապված երկու աշխարհներ: Թախծոտ մի երգ անցած օրերի՝ օտար լծր տակ:

Այստեղ Բյուզանդական կայսրությունն իր հազարամյա պատմության ընթացքում, չհաշված բազմաթիվ թերություններն ու թերացումները, ստեղծեց Արևմուտքի և Արևելքի հոսանքներով համեմված մշակութային յուրօրինակ մի կենտրոն: Մինչև 15-րդ դարը՝ իր վերջին մահու կոիվը, այն պատվար էր մշակույթի թշնամի բարբարոս հորդանների անընդհատ հարձակումների դեմ: Անհնար է այսօր պատկերացնել դրա կարևոր նշանակությունը մարդկության սպիտակ ցեղի համար:

Սկզբում եկան պարսիկները, սակայն նրանք նույնպես մշակույթ կորոզներ էին: Այնուհետև չորս հարյուր տարի շարունակ այս պատմեշին մոլեզնորեն զարմվում և նրա պարիսպներին փշրվում էր արաբական փոթորիկը: Յոթ տարի (672—679) արաբները ցամաքից և ջրից պաշարեցին Կոստանդնուպոլիսը: Նրանց նավերը վխտում էին Բոսֆորի վրա, սակայն նրանք չկարողացան «հունական կրակի» դեմն առնել և նրանց ռազմական ուժի մեծագույն մասը ոչնչացավ: Նոր մոլեռանդ բազմությամբ արաբները կրկին եկան (718 թ.) և կրկին ետ շարսվեցին ու ոչնչացան:

Պատկերացրեք՝ ինչ կլինեք մեր մշակույթը, եթե այն ժամանակ խորտակվեր այդ պատմեշը, և արաբները, որ գտնվում էին իրենց հզորության ու ծաղկման գագաթնակետին և տարածված էին Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս, անարգել հեղեղեղին Եվրոպան: Անշուշտ, արաբներն Արևելքի քաղաքակիրթ ժողովուրդներից էին, և կլինեն մարդիկ, որ կասեն, թե Եվրոպայի համար կորստաբեր է եղել նրանց արշավանքի կասեցումը, քանի որ այն ժամանակ նրանց մշակույթն ավելի բարձր մակարդակ ուներ, քան Եվրոպացիներին: Բայց այդ դեպքում զարգացման հետագա ընթացքը բոլորովին այլ կլինեք, և այսօրվա Եվրոպան այլ տեսք կունենար:

Ահավոր էին հետո եկողները՝ սելջուկ և օսմանյան թուրքերը, այդ թափառական վայրի հորդանները, որոնց միակ նպատակը թալանն էր, ռազմական ծրագիրը՝ հողագործ ժողովուրդներին քնաջնջելը և մշակված հուրատարածք-

ները ամայացնելը ի նպաստ քոչվոր անասնապահ վայրի ամբոխի:

Իսկ ինչ էր տեղի ունենում այդ ընթացքում Կոստանդնուպոլիսի անհաղթահարելի պարիսպների ներսում: Քաղաքական հարափոփոխ խարդավանքների ինչպիսի խաղահրապարակ էր այն իր բոլոր հրեշավորություններով ու նենգություններով, և այս ամենն այն ժամանակ, երբ դրսում գիշատիչ թռչունների նորանոր երամներ էին հայտնվում արևելյան, հարավային և հյուսիսային սահմաններին, իսկ ժամանակ առ ժամանակ նաև քաղաքի դարպասների առաջ:

Այստեղ Միքելեգարդում մեր նախնիները՝ վերինգերները, հայերի հետ միասին կազմում էին կայսրի թիկնապահ գունդը և բանակը, կռվում երկրի սահմանների վրա, դիմագրավում թուրքերի, սարակինոսների, արևմտյան հռոմեացիների և բուլղարների բալանչիական արշավանքներին: Այստեղ է կռվել հյուսիսի ժողովուրդների խելոք, խորամանկ և ուժեղ առաջնորդ, բազմաթիվ ճակատամարտերի հերոս Հերալդ Հերդերյոլը:

Վայրագություններն ու բռնությունները հատկանշական են ոչ միայն մշակույթ չունեցող թշնամիներին: Անհնար է պատկերացնել մի ավելի նողկալի տեսարան, քան ջերմեռանդ քրիստոնյա Վասիլ 2-րդ կայսրի արարքը, որը 1014 թ. բուլղարներին հաղթելուց հետո 15000 գերի կուրացնում և տուն է ուղարկում: Մի քանիսին թույլատրվում է պահել մի աչքը՝ մյուսներին առաջնորդելու համար: Բարբարոս իշխանն ավելի մարդկային է գտնվում, քան քրիստոնյա հաղթողը, նա մահանում է սրտի կաթվածից՝ իր մարդկանց տեսնելով այդ վիճակում:

Հիշենք պատմական այլ դեմքեր և ս. քաջարի կայսր Ռոմանոս 4-րդը դավաճանության պատճառով տանուլ տվեց Հայաստանում Մանազկերտի մոտ մղվող ճակատամարտը (1071 թ.), կայսրը գերի ընկավ սելջուկներին, և արյունոտ սուլթան Ալի Արսլանը ոտքով ձգմեց գերի կայսրի ծոծրակը, ապա շնորհելով նրան կյանք և ազատություն՝ պատվեց որպես հյուրի: Սակայն տունդարձի ճանապարհին կայսրի վրա հարձակվեցին նրան դավաճանած պալատականները, ըստ սովորության կուրացրեցին նրան և ապա սպանեցին: Այդուհետ Բյուզանդիան աստիճանաբար կորցրեց իր հզորությունը:

15-րդ դարում Բյուզանդական երթմնի հզոր կայսրությունը նշանակությունը կորցրած մի փոքրիկ պետություն էր: Թուրքերն այն բաժան-բաժան էին արել և Կոստանդնուպոլիսից Բոսֆորի թերակղզու հետ և մի քանի այլ ցրված երկրաբաններից զատ, ուրիշ ոչինչ չէր մնացել. Թեսալիա, Միսիթրա գավառ՝ Պելոպոնեսում, Լեմնոս և Թասոս կղզիներ, Վառնա և Մեսսեթրիա քաղաքներ՝ Բուլղարիայում: Այդուհանդերձ Կոստանդնուպոլիսը դեռ երկար պահպանեց իր հզորությունը, և 1422 թ. սուլթան Մուրադ 2-րդն իզուր էր փորձում քաղաքը վերցնել գրոհով: Այստեղ առաջին անգամ Արևելքում օգտագործվեցին թնդանոթներ, և զարմանալի էր, որ օգտագործողները թուրքերն

էին, որ օգտվում էին Արևմուտքի այդ հայտնագործությունից: Ի տարբերություն դրսի պարտությունների, քաղաքի պարիսպներից ներս կյանքը ընթանում էր անհոգ իր հունով: Չզգալով վտանգը և մոտալուտ անկումը՝ անցկացնում էին բազմամարդ ուրախ տոնախմբություններ, Սոֆիայի տաճարում բեմադրում դրամատիկական ներկայացումներ, իշխանական շքեղությամբ օտար պատվիրակների ընդունելություններ կազմակերպում:

1453 թ. ապրիլին սուլթան Մուհամեդ 2-րդը 165000 հոգով եկավ քաղաքի վրա և պաշարեց այն: Քաջ կայսր Կոստանդին 2-րդն այդ ուժի դեմ կարողացավ հանել ընդամենը 7000 հոգի: Բացի այդ, թուրքերն ունեին նաև թնդանոթներ, 14 մարտկոցներ, իսկ 12 ծանր հրետանի օր ու գիշեր գնդակոծում էր քաղաքը քարե գնդակներով, որոնք կշռում էին մինչև 500 ֆունտ: Դժվար էր անմիջապես վերականգնել պարիսպների փլվածքները: Հուսահատ պայքարում ամենաքաջը և ամենաանխոնջը կայսրն էր ամենից առաջ:

Այսպես մոտենում էր 1453 թ. մայիսի 29-ի երեքշաբթի օրվա պայքարի վերջին ողբերգական ավարտը: Բյուզանդիայի վերջին կայսրը թուրքերի երկոյան հարձակումից առաջ վերջին անգամ ձիով շրջում է իր գործի պաշտպանական դիրքերը և քաջալերում մարտիկներին: Մուրք Սոֆիայի տաճարում ժամերգությունից հետո հրաժեշտ է տալիս իր պալատականներին, յուրաքանչյուրից ներողություն խնդրում երբևէ թույլ տված իր անիրավ արարքների համար և պարսպի մի մեծ բացվածքում, որտեղից սպասվում էր զլխավոր հարձակումը, ընդունում է պահակակետը:

Հարձակումը սկսվում է գիշերվա 2-ին, և երբ հաջորդ առավոտ երիտասարդ Մուհամեդ 2-րդը որպես հաղթող քաղաք է մտնում, անցնում է կայսրի դիակի մոտով, որ ծածկված էր իր հավատարիմ մարտիկների մարմիններով: Նա կռվել էր մինչև վերջ: Մի թուրք գտնում է արյունոտ դին, կտրում է զլուխը և քերում Մուհամեդ 2-րդին. վերջինս հաղթության ցնծության մեջ ցուցադրության է դնում այն Հուստինիանոսի սյան ծայրին: Հետո կայսրի գլուխը ցուցադրության է ուղարկվում ասիական նահանգների փոխարքային: Այսպիսով, դադարեց գոյություն ունենալ Բյուզանդական կայսրությունը:

Մենք շարունակում էինք նավարկել զարմանալիորեն նեղ ծովային ճանապարհով: Նրա հունական Բոսֆորոս<sup>1</sup> անունը նշանակում է «անասուններ անցկացնելու փշար» (ցուլի անցահուն): Չնայած որևէ կոնկրետ բան հայտնի չէ, բայց հնարավոր է, որ հնում մարդիկ այստեղով են անցկացրել իրենց անասունների հոտերը: Նեղուցը մնան է ոլորապտույտ մի մեծ գետի, որն իր գառիթափ ավերով հունը փորել է Ասիան Եվրոպայի հետ կապող քարքարոտ հողաշերտի մեջ: Ինչպե՞ս է ձևավորվել այս փողոսակը: Շատ տեղերում հանդի-

<sup>1</sup> Դոցենտ Էմիլ Սմիթը իմ ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ այդ նշանակության համար հունարեն ձևը պետք է լինի Buporos կամ Boosporos:

պում են ժայռոտ դարավանդներ, այսինքն ծովը նախկինում ունեցել է ավելի բարձր մակարդակ, քան այժմ է: Նման երևույթներ առկա են նաև Դարդանեղում և հունական ափերի երկարությամբ բազմաթիվ հրվանդաններում ու կղզիներում: Այն ժամանակ, երբ ծովի մակարդակն ավելի բարձր էր, այս բարձրավանդակը պատնեշ է ծառայել Սև ծովի համար և բաժանարար ներքին ջրերի ու Միջերկրական ծովի միջև, և աստիճանաբար մաշվելով՝ հավասարվել է ծովի մակերևույթին: Վերջինիս իջման հետևանքով Սև ծովը կրկին դառնում է ներքին ծով, իսկ մի մեծ սրընթաց գետ անընդհատ հեղեղում է բարձրավանդակը և փորում իր հունը ավելի խոր ու խոր: Այսպես գետի ջրերը իջնում են մինչև ծովի այսօրվա մակարդակը: Դրա հետևանքով գետը դառնում է ավելի սրընթաց և արդեն փորում է դրան համապատասխան մի ավելի խոր փողոսակ, մինչև որ հիմքը մոտավորապես հավասարվում է ծովի մակարդակին: Հետագայում ծովը կրկին բարձրանում է, իջնում և այսպես բազմաթիվ անգամներ մինչև ներկայիս մակարդակը, իսկ գետի հունը դառնում է այն նեղուցը, որով մենք այժմ նավարկում ենք:

Մոտավորապես այսպես է ընթացել ծովի մակարդակների փոփոխությունները սառցաշրջանում: Այն ժամանակ, երբ երկրագնդի կլիման տաք էր և մեծ սառցադաշտեր չկային ոչ միայն Գրեյանդիայում, այլև հարավային բևեռում, ծովերի մակարդակն ավելի բարձր էր, քան այժմ է, մոտ 20 մ ավելի: Իսկ սառցաշրջանում, երբ մեծ սառցաշերտեր առաջացան Եվրոպայում, Միքիդի մի մասում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, այնքան ջուր կուտակվեց այդ սառցադաշտերում, որ ծովերն իջան այսօրվա մակարդակից էլ ցած: Երբ սառցադաշտերը հալվեցին, և ջուրը սկսեց հոսել, ծովերի մակարդակը նորից բարձրացավ: Ծովերի մակարդակի իջման շրջանում, որ շատ էլ վաղուց չի եղել, Սև ծովը ներքին ծով էր, իսկ Բոսֆորով հոսում էր մի մեծ գետ: Այդ ժամանակ մարդիկ ապրում էին մեծ անտառներում:

Մենք շարունակում ենք նավարկել գեղատեսիլ ափերի հնագույն պալատական կառույցների միջով, որոնք խաղաղ արտացոլված են ջրում՝ դույզն ինչ չնատնելով արյունոտ անցյալը: Ավելի վեր կանաչապատ լեռնալանջեր են՝ փարթամ սաղարթախիտ ծառերով: Երջանիկ բնություն, որ սուլթանի հզոր հրամանով մինչև վերջերս գերծ է մնացել ֆաբրիկաների, ծուխ ժայթքող ծղիսնելույզների, բենզինի բաքերի, աղմկոտ ամբարձիչների և նոր ժամանակների այլ աղտոտություններից: Սուլթանները սիրում էին առանձնության մեջ վայելել իրենց դրախտը, պարտեզները և հարեմը՝ Եվայի գեղեցիկ դուստրերին՝ պաշտպանելով այդ բոլորը ժամանակների բիրտ պրոզայի ոտնձգություններից: Նույն ինքը՝ արյունոտ հրեշ Արդուլ Համիդը, որ բավականություն էր ստանում սպանելով հարյուրավոր հայերի, ուներ իր բարձրաշխարհիկ թուլությունները. նա ապահով ապաստարան էր փնտրում բնության գրկում: Բայց արդեն թուրքերի համար և ս հասել է ժամը, և շուտով Բոսֆորի գեղեցիկ ափերը մուտք

կոորդեն ֆարքիկաների ծխնելույզներ ու նավթարեոներ:

Պետք է ասել, որ ներդրում կլինան այնքան էլ տաք չէր, որքան այն կարելի էր ենթադրել ըստ լայնության աստիճանի: Նախնադարում դեռ հայտնի էր ցրտաբեր Բորեսաը, որ գալիս էր Սև ծովից ու անհայտ Սկյութիայից և կտրում անցնում էր Բոսֆորը:

Մենք անցնում էինք Կոստանդնուպոլսի նորմանդական աշտարակներ ու պարիսպներ ունեցող հին ամրությունների մոտով, որոնք այնքան երկար դիմադրեցին թուրքերին:

Երեկոյան արդեն ներուցի ելքի մոտ էինք, արևը իջել էր արևմուտք, ուր փարոսն էր հրվանդանի վրա, իսկ մեր առջև Սև ծովն էր: Կարծես մի նոր աշխարհ էինք դուրս եկել: Այս ներուցով նավարկել էին առասպելական արգոնավորդները բարեբեր Կողքիս մեկնելիս, և այստեղ նրանք հանդիպեցին կույր ծերունուն՝ Փինևս քազավորին, որ գիտեր ճանապարհը և պատրաստ էր օգնել նրանց, եթե ազատեին իրեն հրեշավոր հարպիսաներից, որոնք ապակառնում էին ծերունու կերակուրը, և նա հանգիստ չէր կարողանում ճաշել: Բորեսասի թևավոր որդիներն ազատում են իրենց տիրուջը, և Փինևսը արգոնավորդներին բարի խորհուրդներ է տալիս ճանապարհի համար: Մենք չհանդիպեցինք կույր ծերունուն և հարպիսաներին, սակայն ժամանակակից ինքնաթիռներն իրենց գնդացիներով շատ ավելի կարող էին օգնել ծերունուն, քան Բորեսասի որդիները:

Մենք մտանք Սև ծով և ուղղություն վերցրինք դեպի արևելք՝ Փոքր Ասիայի հյուսիսային ասիերի երկայնքով: Հաջորդ առավոտ (21-ը հունիսի) հասանք Չանգուղյակ, որտեղ նավը ածուխ էր վերցնելու: Զաղաքը գտնվում էր հին հունական Հերակլեա (այժմ Էրեզլի) գաղութից փոքր-իչև հյուսիս-արևելք, արգոնավորդների վերջին նավահանգիստը Կողքիս հասնելուց առաջ, որտեղ մահացավ նրանց դեկակալ Թիֆուսը:

Նավ ածուխ բառնալը առհասարակ ձանձրալի է, մանավանդ այստեղ՝ Փոքր Ասիայում: Մինչ զբաղված էին դրանով, մի քանիսս ասի դուրս եկանք: Այստեղ կային ընդարձակ, մասամբ բաց ածխաշերտեր, որ մեծ չափով հանդիպում է կրաքարի շերտերի միջև: Արդյունահանվում էր միջին որակի ածուխ: Հորատանցքերի մեծ մասը բանեցնում էին ֆրանսիացիները: Ափ դուրս գալիս մեզանից վերցրին մեր անձնագրերը և վերադարձրին նավ վերադառնալուց հետո միայն: Դրանով կանխարգելվում էր Անատոլիայի խորքերը թափանցելու հնարավորությունը: Թուրքերն օտարերկրացիներին վերաբերվում էին անվստահությամբ. չնայած բոլոր վերափոխումներին՝ իշխանությունները՝ հավատարիմ իրենց հին սովորություններին, անում էին ամեն բան, որպեսզի օտարերկրացիներին արգելեն թափանցել երկրի խորքերը, իսկ մյուս ժողովուրդներին, ինչպես հայերն ու հույներն էին, արտաքսեն երկրից. միայն հրեաներն ու մասամբ ֆրանսիացիներն էին ինչ-որ չափով հանդուրժելի:

Ես շրջեցի քաղաքի բարձունքներում: Անտառի ոչ մի հետք. ամենուրեք տարածված էին ճարխտոտի և մասամբ նաև մրտավարդի թփեր, այս ու այնտեղ հանդիպում էին կաղնիներ, սաղարթավոր, ցածր, մի քանի մրգատու ծառեր: Այլի էին ընկնում եգիպտացորենի ու վարսակի փոքր դաշտերն ու անմշակ հողերի առատությունը: Ափի երկայնքով մեջք-մեջքի տված ձգվում էին բարձր լեռնաշարեր, դրանց միջև փարթամ բուսածածկով հովիտներ էին, որոնք զարմանալիորեն քիչ էին բնակեցված: Այս ամենը թողնում էր գեղեցիկ, բարեբեր երկրի տպավորություն՝ բաց թողնված մեծ հնարավորություններով: Անշուշտ, ամայությունը նաև պատերազմի հետևանք էր:

Բնակիչները մահմեդականներ էին: Կանայք դեռ կրում էին ծածկոցներ և նման էին գիշերաշրջիկ սև սովերների, չնայած այստեղ ևս պետք է որ ուժի մեջ լինեին նոր բարքերը: Բավական շատ է արմատացած այն սովորույթը, որ կինը իր գեղեցիկ դեմքը չպետք է ցույց տա օտար տղամարդու, հատկապես անհավատի՝ թեկուզ լինի ծեր կամ զառամյալ: Մի փոքրիկ արտում աշխատում էին մի քանի դեռատի երեխաներ ու մի կին, հավանաբար նրանց մայրը: Մենք կանգ առանք բարձրում, ճանապարհի վրա՝ աշխատանքը դիտելու: Նոր էինք մոտեցել, երբ կինը, որ առանց ծածկոցի էր, վեր կացավ տեղից, մեջքը շրջեց մեզ և այսպես մեր ընթացքին համապատասխան անընդհատ մեջքով շրջվում էր դեպի մեզ՝ չնայած մոտակայքում ականատեսներ չկային: Երբ բավականին հեռացել էինք, հետ մայեցինք և տեսանք նրան կրկին ժրաջան աշխատելիս: Նման մի դեպք հանդիպեց մեզ նաև ներքևում՝ քաղաքում: Մի նրբանցք թեքվելիս հանկարծակի հանդիպեցինք մի ծեր կնոջ, որ խոսում էր երեխայի հետ: Կայծակի արագությամբ նա սև քողը քաշեց կնճռոտ դեմքին, այնինչ մեր ուշադրությո՜ւնը երեխայի կողմն էր, որ մարմնացած գեղեցկություն էր:

Այստեղ բեռները նավերից փոխադրում էին մարդիկ: Ափին կանգնած երկար դիտում էինք բեռնակիրների ամուր կազմվածքները: Նրանք վերև էին տանում ալյուրով ծանր պարկեր՝ ամերիկյան ցորենով՝ աղացված Կոստանդնուպոլսում: Միտք ես անում՝ եթե այս բերրի երկիրը, որ իր բնակչության թվի համեմատ բազմապատիկ ավելի հող ունի, մշակվի, ապա Ամերիկայից չի ներմուծի հացահատիկ և ալյուր, դրա դիմաց այնտեղ ուղարկելով ծխախոտ՝ ամերիկյան բույսի տերևներ: Իսկապես զարմանալի է աշխարհը:

Տրապիզոն մեկնելու համար նավ բարձրացան ուղևորներ, հիմնականում տղամարդիկ: Մեծ մասը քրդեր էին: Հուզիչ էր նրանց հրաժեշտի տեսարանը մինչև նավ ուղեկցող հարազատների հետ: Հրաժեշտի համար տղամարդիկ համբուրվում էին: Պատահիներից շատերը ուժեղ և ամուր կազմվածք ունեին: Նրանք մարդաբանական նույն տեսակին էին պատկանում, ինչ նավահանգրատի բեռնակիրները: Զրդերը ինքնատիպ ժողովուրդ են. ենթադրվում է, որ արիական ծագում ունեն, այն էլ՝ հյուսիսային: Նրանց լեզուն ցեղակից է իրանականին: Չեմ կարող պնդել, որ տեղի բնակչությունը մեծամասնությամբ



բնիկ էր: Իհարկե կային թուխ մազերով ու կապույտ աչքերով դեմքեր, սակայն մեծ մասամբ դեմքերի տեսակները օտար էին, արևելյան, շատերինը նույնիսկ սեմական՝ երկար, կեռ քթերով ու մուգ աչքերով: Մի մասը՝ արտահայտված այտուկներով և ալեխառն կամ սպիտակ մորուքներով, նման էր ռուսական թաթարներին, կային նաև շատ մուգ դեմքեր, ինչպես հնդիկներինը:

Տախտակամածի վրա մարդկային տարբեր ցեղերի խառնիճադանջ մի իրարանցում էր: Առջևում շրջան կազմած, ծանրախոհ նստած էին թուրքեր, հավանաբար վաճառականներ էին, խոսում էին իրենց առևտրական գործարքների մասին: Նավի միջնամասում տարբեր ցեղերի մի խսկական հավաքածու էր. սպիտակ, շապիկի ծայրերի նման ծածանվող փեշերով վերարկուներ հագած պարսիկներ, իրենց իրերի վրա անշարժ նստած երկարամորուս հաղթանդան քրդեր, մարգարեների երկար, ալեխառն մորուքներով, ծուռ քթերով և սպիտակ գլխափաթոցներով սեմական ծագում ունեցող երկու անձնավորություն, կարծես Աբրահամ և Իսահակ նախահայրերն էին իջել մեր նավի տախտակամածին: Սև ծածկոցով կանացի կերպարանքների ուրվականները, սակայն, չէին հիշեցնում վրանի դռան հետևում ծիծաղող Սառային: Այս բոլորի մեջ, ինչպես ամենուրեք, աշխույժ, անզուսպ կենսուրախությամբ խայտացող երեխաներ:

Մայրամուտին երկու ջերմեռանդ մահմեդական մեծ դիտանցքի մոտ կատարում էին իրենց աղոթքը և ծիսական արարողությունը: Ծալապատիկ, դեմքները դեպի Մեքքա, որ մոտավորապես պետք է մեզանից հարավ լիներ, յուրաքանչյուրը նստած իր գորգին, կատարում էր յուրատեսակ մի մարմնամարզություն: Մերք թքները կայցնում էին գետնին՝ ձեռքի ափերը առաջ պարզած, մերք ուղղվում, նորից կռանում անընդմեջ, ապա վեր կենում և կանգնած՝ զլուխը խոնարհում մինչև տախտակամած (ուշագրավ նվաճում ծեր մարդու համար). այս խոնարհումը կրկնվում էր երեք անգամ: Ապա կրկին նստում էին ծալապատիկ և շարունակում նույն երկրպագությունները: Չեմ կարող ասել ինչքան, բայց այս ամենը տևեց երկար: Հիացմունքի արժանի էին ծերերի ծայրանդամների ճկունությունն ու տոկունությունը. նման վարժությունները պետք է որ շատ օգտակար լինեն, և իմաստուն Մուհամեդը նախատեսել է դրանք, ինչպես նաև այն բոլոր լվացումները, որ պատվիրել է՝ իր ժողովրդին երկար առողջ պահելու նպատակով:

Հաջորդ օրը (ուրբաթ, հունիսի 12-ին) կեսօրից առաջ հասանք Սամսուն և խարխիս գեցեցինք նավակայանում: Քաղաքից երկաթուղի էր գնում դեպի Սվազ: Ծովի կողմից քաղաքը որևէ բանով աչքի չէր ընկնում, կարելի էր կարծել «10000-ից ոչ ավելի բնակիչ ունեցող մի քաղաք է»: Սակայն, ինչպես հետո իմացա, քաղաքն ուներ 35000 բնակիչ և շրջանի զարգացած ծխախոտագործության կարևորագույն կենտրոնն էր: Իմացա նաև, որ վայրը հայտնի է ամերիկացիներին, և ծխախոտագործությամբ զբաղվող ամերիկյան մի տրեստ

արդեն գնել է ծխախոտի ամբողջ հումքը: Այն կրկին վերադառնում է, արդեն որպես «Վիրջինիայի ծխախոտ»:

Քիչ անց ճանապարհ ընկանք: Դաշից հետո հանկարծ տեղատարակ անձրև տեղաց, և զվարճալի էր տեսնել, թե ինչպես բոլորը՝ լրջախոս քրդերն ու թուրքերը, ծերունի սեմիտ պատրիարքները և շապիկի ծածանվող ծայրերով պարսիկները վազում էին դեպի նավամբար տանող տախտակամածի մեծ լյուկը, և թե ինչպես բռեզեմտով ծածկեցին լյուկը, որ չթրջվեց: Ինչ-որ մեկը նվազարկիչ ուներ, սակայն միայն մեկ ձայնապնակով, որն անընդմեջ հնչեցնում էր պարսկական միատոն մի մեղեդի: Երաժշտական զարմանալի չափավորություն:

Երեկոյան ականատես եղա, թե ինչպես էր ամեն ընտանիք մեծ նավամբարում իր անկողինը պատրաստում: Քողածածկ կանայք ևս այստեղ էին, բայց արդեն առանց քողի: Ինձ հանելուկ մնաց, թե ինչպես դա հանդուրժեցին: Յուրաքանչյուր ընտանիք միջնահարկի տախտակամածին մի փոքրիկ տարածություն էր զբաղեցնում, որտեղ նրանք վերմակներից ու լաթերից իրենց համար բույն սարքեցին: Այստեղ տաք էր ու հարմար, և շուտով մարդիկ արդար քուն մտան: Երկու փոքրիկ աղջնակ՝ մեկը պարսիկ, մյուսը քուրդ, խաղում էին միասին: Պարսկուհու հաստիկ հայրը, հեզահամբույր ու տաքուկ նստած, գրուցում էր մի քանի այլ պարսիկների հետ՝ մերթընդմեք քաջալերող մի քանի բառ նետելով խաղացող երեխաներին: Եկավ քնելու ժամը, և պարսիկը կարգադրեց իր դատրիկին բարի գիշեր մաղթել քուրդ աղջկան, որ շվարած կանգնած էր իր ջրավորության ու չնչիության գիտակցությամբ: Փոքրիկ պարսկուհին վազեց դեպի խաղընկերուհին և համարեց նրան: Ապա կատակելով հոր հետ և թոշկոտելով այդ գեր, բարեհոգի մարդու առջև՝ մոտեցավ անկողնուն, մինչ այդ փոքրիկ քրդուհին լուռ անհետացել էր:

Հաջորդ առավոտ, հունիսի 13-ին, շաբաթ օրը խարխիս գեցեցինք հին հունական գաղութ Տրապիզոնի նավակայանում, որ հնում եղել էր Պարսկաստանի ու Արևելքի համար քարավանային ճանապարհի կարևորագույն վերջնակայան ու նավահանգիստ, իսկ վերջին շրջանում, հույների ու հայերի փախուստից հետո, կորցրել էր իր երբեմնի նշանակությունը: Այստեղ կորուստներն ավելի շատ էին, քան արևմտյան ափերին: Քաղաքը հարուստ էր բուսականությամբ, շրջակա բլուրների մեծ մասը անտառապատ էր: Խորքում ձրգվում էին բարձր լեռներ, որոնցից հարավ և հարավ-արևելք սկիզբ էր առնում Էրզրում և Հայկական բարձրավանդակ տանող ճանապարհը: Հնուց ի վեր անանցանելի լեռնաշխարհով ձգվող այդ ճանապարհը միշտ էլ դժվարամատչելի է եղել, դրա համար էլ Հայաստանի դերը, որպես կարևորագույն կապող օղակ, դեպի արևելք և հարավ շատ ավելի էր, քան դեպի Սև ծով:

Տրապիզոնում ուղևորների մեծ մասը դուրս եկավ: Քրդերն իրենց իրերը ծանր կողովներով ու սնդուկներով տանում էին մեջքներին, պարսիկները առաջ

էին շարժվում ծածանելով իրենց սպիտակ շապիկների ծայրերը, լրջմիտ սեմիտները արժանապատվության կեցվածք ընդունած: Մեղմ շարքով շտապում էին նրանք ճոպանե սանդուղքով դեպի արիքների վրա ճոճվող մակույկը, շատերը ջուրն ընկան: Մի մարդ շալկած տանում էր ծեր, հիվանդ մի կնոջ. ցավալի էր, եթե վայրէջքը բարեհաջող չավարտվեր, սակայն մարդը կարողացավ վերջին վայրկյանին՝ խոյս տալով գահավիժելուց, ոտքը հասցնել մակույկին:

Այստեղ մենք հարկադրված մնացինք մի ամբողջ օր՝ մինչև երեկո, որպեսզի գիշերով չհասնեինք Բաթում, որ 10 ժամվա ճանապարհ էր: Մակույկով ափ դուրս եկանք: Նավը խարխիս է գցել քաղաքի արևելյան նորակառույց մասի դիմաց, արևմտյան քամիներից ամբողջուններով պաշտպանված մի փոքրիկ ծովախորշում: Դուրս ցցված փոքրիկ հրվանդանի վրա մաքսատուն էր, որ թիկունքից պաշտպանված էր փոքրիկ ամբոյթամբ: Հարավում քաղաքի այս մասը եզերում էր 250 մ բարձրության մի բլուր, որին թուրքերը Բոզ քեփե՝ «Գորշ սար» էին անվանում, որի հարթ գագաթից դեպի քաղաք էին իջնում գառիթափ լանջերը: Հույներն անվանում էին Միթրիոս, որովհետև գագաթին գտնվում էր Միթրա աստծու արձանը՝ հնդկական և իրանական արևի աստված, որի պաշտամունքը լայնորեն տարածված էր Ք. ծ. ա. 1-ին դարում:

Մենք ափ դուրս ելանք մաքսատան մոտ: Թուրք ծառայողները մեզնից վերցրին մեր անձնագրերը, ինչպես նաև լուսանկարչական ապարատները, իբրև թե մոտակայքում ամբողջուններ կային, որ չէր կարելի լուսանկարել: Քաղաքը փոված էր ծովածոցը եզերող բարձունքների գեղատեսիլ լանջերին: Ամենուրեք տների միջև փոքրիկ պարտեզներ էին՝ բանջարեղենով, թթենիներով, մշտադալար նոճիներով, դափնու, թզի, ընկույզի ծառերով, խաղողի թփերով և այլն: Այստեղից արտահանվում է առավելապես կաղնու փայտ, հայտնի է նաև Տրապիզոնի թուզը:

Վերևում՝ նեղ գառիվեր նրբանցքներից մեկում, հանդիպեցինք մի երիտասարդի, որ կանգ առավ և անզերեմով դիմելով մեզ, հարցրեց, թե արդյոք ես դոկտոր Նանսե՞նն եմ: Երբ ես հաստատեցի իմ ով լինելը, նա մեզ փոխանցեց Բրիտանիայի հյուպատոսի ողջույնը և ասաց, որ հյուպատոսը պատրաստ է հարկ եղած դեպքում մեզ օգնելու: Ընդհակառակությամբ հայտնելով՝ պատասխանեցի, որ ես սիրով կայցելեի նրան:

Դեպի վեր քայլելիս անցնում էինք մեծակառույց տների մոտով, որոնք դատարկ էին երևում: Դրանցից մեկի վրա կար հունարեն մակագրություն: Հետո իմացանք, որ դա հունական դպրոց է եղել: Բարձրում պարիսպներով շրջապատված մի այլ մեծ շինություն կար, որ հունական լքված վանք էր: Փողոցների անկյուններին փակցված էին ռուսերեն գրված փողոցի անունները: Դրանք հիշեցնում էին պատերազմի երկու տարիների (1916 թ. մարտից մինչև 1918 թ. փետրվար) քաղաքում ռուսների տիրապետության մասին: Այդ ընթացքում ռուսներն այստեղ մտցրել էին լրիվ ռուսական կառավարում, կառուցել

էին ծովափը թիկունքի հետ կապող բարեկարգ ճանապարհներ, այդ թվում նաև՝ Կարս տանող մի ճանապարհ: Թուրքերն ի վիճակի չէին այդպիսի շինարարություն կատարելու: Թուրք բնակչությունը կուզենար, որ ռուսները քաղաքը կամ մի տարի ավելի շուտ վերցրած լինեին, կամ էլ մի տարի ավել պահեին, արդյունքում նրանք ավելի շատ ճանապարհներ կունենային:

Հասնելով բարձունքներից մեկին՝ քաղաքը տեսանք մեր ոտքերի տակ: Նրա հնագույն և մեծ մասը ձգվում էր մեր խարխիս գցած ծովածոցից արևմուտք, որը հունական գաղութ էր եղել: Մեզնից մի փոքր ցած, լեռան լանջին, մի հին բերդի ավերակներ էին և քանդված քարե աստամնավոր պարիսպներ՝ աշտարակներով: Դրանք Տրապիզոնի հին ավերակներն էին, իսկ բերդը՝ կայսերական պալատով, քաղաքի երբեմնի մեծության վկան էր: Քաղաքի մեջ բարձունքին շարված էր գեղեցիկ առանձնատների մի շարք՝ շրջապատված ծաղկած պարտեզներով: Դրանք պատկանում էին հարուստ հույներին, որոնք, բացառությամբ մի քանի ռուսահպատակների, ստիպված են եղել հեռանալ թուրքերի վերադարձից առաջ: Թուրքերն իրենց ձեռնառու պայմաններով (այդ մասին խոսել ենք վերում (էջ 24) բռնագրավել են փախած հույների առանձնատները: Բայց նրանք անկարող են դրանք բարկոք վիճակում պահել, ուստի նրանց սպասում է կործանում: Առանձնատներից լավագույնը զբաղեցնում էր Ռուսաստանի հյուպատոսը: Երբ քաղաքը անցավ ռուսների ձեռքը, հույները, մասամբ նաև հայերը, ի պատասխան թուրքերի կատարած ոճրագործությունների, կողոպտեցին նրանց տները: Իսկ երբ թուրքերը վերադարձան և տեսան իրենց կողոպտված տները, վրեժխնդրությամբ լցվեցին հույների ու հայերի նկատմամբ, և վերջիններս քանի դեռ գոհ չէին դարձել այդ վրեժխնդրությանը, փախան Տրապիզոնից, Մամսունից և ծովափնյա մյուս քաղաքներից: Եվ դա բացասական ազդեցություն ունեցավ այդ քաղաքների տնտեսական կյանքի վրա, քանի որ առևտուրն ու արտահանումը գերազանցապես հույների և հայերի ձեռքին էր:

Պարոն Դափյուսը և ես ողջունեցինք Բրիտանիայի հյուպատոս պարոն Նայթին, որը մեզ ընդունեց շատ սիրալիք: Նա բնակվում էր լեռնալանջի վրա՝ փոքրիկ գեղեցիկ տանը, դեպի քաղաք բացվող լայն տեսարանով և մի փոքրիկ կանաչապատ նախապարտեզով, որտեղ թռչուններ էին երգում. ես այնտեղ լսեցի սերիմոսի ծանոթ ձայնը:

Միասին շրջեցինք քաղաքի հին մասում, դիտեցինք հիշարժան պարիսպները, որ շրջապատում էին հնագույն բնակավայրը: Այն գտնվում էր լեռան հարթ լանջին, զբաղեցնում էր մի քանի հարյուր մետր տարածություն, արևելյան և արևմտյան կողմերը գառիթափ լանջերով խոր ձորեր էին, իսկ հյուսիսում ծովն էր: Հարավում լեռնալանջի լայնքով կառուցված պարիսպներն այն դարձրել էին անմատչելի: Հավանաբար լեռնալանջի այս ձևն էր հունական նախկին քաղաքին տվել Տրապիզոն անունը: Երկու կողմերի ձորերի վրա կա-

նուցված էին կամուրջներ:

Հին պարիսպների ներսում թուրքական թաղամասն էր, որտեղ ապրում էին բացառապես մահմեդականներ: Այն բնակեցվել էր 1461 թ., երբ թուրքերը վերցրել էին քաղաքը՝ Կոստանդնուպոլսի անկումից ութ տարի հետո: Անշուշտ թուրքերն անմիջապես արտաքսել կամ բնաջնջել էին քրիստոնյա հույներին և տեղավորվել նրանց տներում: Ամբողջ բնակչության միայն մեկ երրորդն էր կարողացել մնալ տեղում, այն էլ գերազանցապես ցածր խավը:

Ի դեպ այս շրջանում մահմեդականները որոշակի ցեղային խտրականություն չէին ճանաչում: Լինչի վկայությամբ այս ավերին կային ամբողջական գյուղեր, որոնց մահմեդական բնակիչները բողոքում էին, որ իրենց օսմաններ են կոչում: Իհարկե, կասկածից վեր է նրանց հունական և քրիստոնեական ծագումը<sup>2</sup>: Հույները մինչև օրս հայտնի են իրենց աչքի զարնող աստվածաբանական ընդունակություններով, ինչպես Հունական կայսրության ժամանակաշրջանում, երբ նրանք եկեղեցիներին տալիս էին եպիսկոպոսներ, իսկ այսօր իսլամին՝ մոլլաներ: Սակայն հակառակ իրենց մահմեդական մոլեռանդության և քրիստոնեատյացության, դեռևս պահպանել էին քրիստոնեական որոշ սովորույթներ և սնահավատություններ: Երբ հիվանդանում էին, հայտընվում էր Աստվածամոր պատկերը, որ կախվում էր մահճակալի վերևում: Նրանք խմում էին արգելված գինին տոնական ճաշկերույթի զավաթից, որը պահպանվել էր և ամբողջ համայնքի կողմից դիտվում էր որպես սրբազան մասունք, առանց գիտակցելու, թե ինչու: Սա նման է երդման հին խոսքերին, հմայիլներին և կախարհամքներին, որոնք քրիստոնյա շատ ժողովուրդների մոտ մնացել են որպես վերապրուկ հին կրոնի և հին սնոտիապաշտության:

Մենք դիտեցինք հին բերդի արևմտյան կողմը և կայսերական պալատը: Այն ատամնավոր բարձրաբերձ պարիսպներով ու աշտարակներով վեր էր խոյանում արևմտյան ձորեզրից, որն իր փարթամ բուսականությամբ մեր ոտքերի տակ էր, իսկ մենք կանգնած էինք կամուրջի վրա: Հեքիաթային խորհրդավորություն կար ստվերախիտ թավուտներում և մացառուտներում, որ հարուստ էին հարավի ծառատեսակներով՝ դափնու և մրտենու, դեպի վեր, ժայռապատերը ձգվող խաղողի և բաղեղի ընձյուղներով: Միջնադարյան բերդի համար ընտրված էր կատարյալ տեղանք, և հասկանալի էր, թե ինչպես քաղաքն այդքան ժամանակ կարողացավ դիմադրել թուրքերի հարձակումներին: 1204 թ. Կոստանդնուպոլիսը խաչակիրների չորրորդ ահարկու արշավանքի ժամանակ ընկնում է, և տեղում ստեղծվում է լատինական մի թույլ կայսրություն, Ալեքսիոսը՝ Կոնստանդնուպոլսի կայսերական տան հետնորդը և ազգականը Վրաստանի Թամար թագուհու, Տրապիզոնում հիմնադրում է կայսրություն: Նույնիսկ այն ժամանակ, երբ 60 տարի անց Կոստանդնուպոլսում կրկին

ստեղծվում է Հունական կայսրություն, Տրապիզոնի կայսրությունը պահպանում է իր անկախությունը, մինչև քաղաքի նվաճումը թուրքերի կողմից Մուհամեդ 2-րդի ժամանակ: Վերջին կայսրը, որպես գերի, տարվում է Եվրոպա, և քանի որ նա հրաժարվել էր ուրանալ քրիստոնեական հավատը, սպանվում է արքայազնի հետ միասին, որ հետևել էր հորը: Նրանց դիակները Կոստանդնուպոլսի դարպասների առջև նետում են շներին:

Ներքևում՝ ծովափին, պարիսպները զարմանալիորեն լավ էին պահպանվել: Քաղաքի այդ մասում կանգուն էր ամուր պատերով սնդուկաձև մի հին իջևանատուն, որ ժամանակին կառուցել էին ջենովացիները, որոնք, մախքան այս երկիրը թուրքերի կողմից նվաճվելը, իշխում էին Սև ծովի այս ավերի առևտրին և նույնիսկ սպառնում Տրապիզոնի անկախությանը: Այն փաստը, որ նրանք կարողացել էին քաղաքի կենտրոնում այսպիսի մի ամբողջ կառուցել, պարզորոշ վկայում է նրանց ունեցած իշխանության մասին: Այդ ժամանակ Սև ծովի ավերը ծովափերի եռանդուն գործունեության ասպարեզն էին, ուստի առևտուրը կատարվում էր զինված պաշտպանությամբ:

Երեկոյան խարիսխ բարձրացրինք և ճանապարհը շարունակեցինք դեպի Բաթում: Ափից երկրի խորքերն էին ձգվում լեռնաշղթաների շարքերը: Արևելքում կապույտ լեռներն ավելի բարձր էին, ձյունե սպիտակ զազաթներն անընդհատ փայլվում էին արևելքի մուգ երկնքում, ուր երկրի սովերների կապտամանուշակագույն սեզմենտներն ավելի ու ավելի էին բարձրանում, և մութը թանձրանում էր մեր շուրջը: Առկայծող բազմաթիվ աշխարհներով լեցուն մուգ կապույտ երկնքի ներքո ճողվում էր մեր նավը Սև ծովի ջրերում և ճանապարհի հարթում գիշերվա միջով դեպի Այիա, դեպի մառախլապատ արշալույսների... ոկիրը, դեպի Կողքիս:

### III.

#### ԲԱԹՈՒՄԻՑ ԴԵՊԻ ԹԻՖԼԻՍ

Առավոտյան ժամը 8.30-ին մոտեցանք Բաթումի նավակայանին: Քաղաքը մեզ էր ժպտում արևի առկայծող շողերի միջից՝ շրջապատված կանաչ անտառապատ բլուրներով ու լեռներով: Մենք կանգնած էինք Խորհրդային Հանրապետությունների Միության դարպասների առջև:

Նախ անցկացվեց նավի անձնակազմի բժշկական քննություն: Նավ բարձրացավ մի ռուս բժիշկ՝ սանիտարական սպիտակ հագուստով, ռուսական բարձրաճիտ կոշիկներով, խորհրդային սպիտակ վերնաշապիկով ու գոտիով: Նա շարունակ շապիկը ձգում էր գոտու տակ՝ ուղղելով մեջքը և դուրս ցցելով կուրծքը: Նավի անձնակազմը շարվեց տախտակամածին, իսկ բժիշկը ետ ու

<sup>2</sup> H. T. B. Lynch. Armenien. London, 1901, h. II, էջ 11:

առաջ քայլելով ու շապկիր ձգելով հաշվում էր մարդկանց: Երկու հոգի բացա-  
կայում էին. մեկը եկավ մեքենայական բաժնից, ի վերջո հայտնվեց նաև մյու-  
սը, և շարքն ամբողջացավ: Բծիչը մոտենում էր յուրաքանչյուրին, դիտում  
համոզվելու համար՝ չկա՞ն վարակիչ հիվանդությունների նշաններ: Ամեն ինչ  
կարգին էր, և մարդիկ կարող էին հեռանալ: Նավի անձնակազմն այդ նույն  
նավով պետք է անմիջապես վերադառնար, ուստի ժամանակ խող այդ արա-  
բությունը բոլորովին աննպատակ էր: Իսկ մենք՝ ուղևորներս, որ այժ էինք  
դուրս գալու և կարող էինք վարակ տարածել, քննության չենք արկվեցինք: Փո-  
խարենը մեզ բաժին ընկավ անձնագրերի ծանձրալի ստուգումը: Վերջապես  
այդ ձևակառույցում էլ հաղթահարվեց: Նավ բարձրացավ բազմամարդ մի  
պատգամավորություն՝ մեր հանձնախմբին տարբեր կառավարությունների ան-  
ունից ողջունելու: Այստեղ էին տեղի՝ Աջարիայի Հանրապետության կառա-  
վարությունը, Վրաստանի Հանրապետության կառավարությունը, որին պատ-  
կանում էր այս ինքնավար հանրապետությունը, այստեղ էր Անդրկովկասի  
Դաշնակցային Հանրապետությունների կառավարությունը, որին պատկա-  
նում էր Վրաստանը և վերջապես այստեղ էր Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների Միության Մոսկվայի կառավարությունը, որին պատ-  
կանում էր Դաշնությունը: Մենք գտնվում էինք այդ բոլոր կառավարություննե-  
րի բարեհաճ ուշադրության կենտրոնում, իսկ դա վստահություն էր ներշնչում:  
Բացի այդ մեզ ողջունեց նաև ամերիկյան «Մերձարևելյան նպաստամա-  
տույց» կազմակերպության մի ներկայացուցիչ և հյուրընկալորեն բնակարան  
առաջարկեց այդ կազմակերպության տանը: Մեզ հայտնեցին նաև, որ Անդր-  
կովկասյան հանրապետությունների կառավարությունը ուղարկել է երկաթու-  
ղային մի վագոն, որը մեր տրամադրության տակ կլինի Վրաստանում և Հա-  
յաստանում մեր ճանապարհորդության ողջ ընթացքում: Մենք ընտրեցինք վա-  
գոն-բնակարանը, որոշեցինք իրերով անմիջապես այնտեղ գնալ և տեղավոր-  
վելուց հետո դուրս գալ քաղաքը դիտելու: Գնացքը Թիֆլիս էր մեկնելու կեսօ-  
րից հետո, ժամը 6-ին: Մենք ափ դուրս եկանք, ուր հավաքված բազմությունը  
ցանկանում էր տեսնել նշանավոր եկվորներին: Այնտեղ կային լուսանկարիչ-  
ներ և նույնիսկ մի կինեմատոգրաֆիստ, որ անընդհատ նկարահանում էր՝  
մինչև մակույկից դուրս գալը և ավտոմեքենաներ նստելը: Մինչ այս պահը ար-  
տառոց ոչինչ չկար, որ զգացներ մեր՝ աշխարհի մի նոր մասում գտնվելը:

Երկաթուղային կայարանի հրապարակում մեզ դիմավորեց Անդրկովկա-  
սի կառավարության պատվիրակ հայազգի Նարինան Տեր-Ղազարյանը, որը  
մեր ուղեկիցն ու օգնականն էր լինելու կովկասյան հանրապետություններում  
մեր ճանապարհորդության ընթացքում: Նապոլեոն Երրորդի հետ ունեցած  
նմանության համար հետագայում նրան անվանեցինք Նապոլեոն: Այդպես  
դուրսին էր հիշել:

Նարինան Տեր-Ղազարյանը մեր վագոնի մեծ սրահում ռուսերենով ար-

տասանեց մի բարեկիրթ, կարճ ճառ՝ իր և Անդրկովկասյան հանրապետու-  
թյունների կառավարությունների անունից սրտանյ ողջունելով մեզ: Շատ ճա-  
ռեր հնչեցին, որտեղ մենք, հատկապես նվաստ, ջերմ բառերով դրվատվե-  
ցինք որպես խորհրդային հանրապետությունների բարեկամ ու բարերար: Բո-  
լոր ելույթներում արժանավոր էր այն միտքը, որ մեզանից շատ բան էր ակնկալ-  
վում: Սարսափելի էր լսել այդքան սպասելիքների մասին: Ես անզերեմ մի  
քանի բառով պատասխանեցի (կապիտան Զվիալինգը թարգմանեց ռուսերեն),  
որ մենք եկել ենք բարի կամքով՝ հայ փախստականների և հայ ժողովրդի հա-  
մար անելու ինչ հնարավոր է, սակայն մեզ սպասում են շատ դժվարություն-  
ներ, և դեռ հայտնի չէ՝ կկարողանա՞նք ինչ-որ բան անել:

Վագոնը հարմարավետ էր ու ընդարձակ և ըստ ռուսական շինարարա-  
կան ոճի ուներ մի մեծ սրահ և ննջարանային մաս: Մենք տեղավորվեցինք  
այնտեղ, ինչպես մեր սեփական տանը: Անհրաժեշտ էր կարգավորել քաղաքը  
դիտելու համար մեր ունեցած կարճ ժամանակը, քանի որ ժամը 1-ին Բաթումի  
կառավարությունը մեզ ճաշի էր հրավիրել: Ընկերներս մեր եռանդուն բուսա-  
բան Ժ. Կարլի առաջնորդությամբ մեկնեցին քաղաքից դուրս՝ բուսաբանական  
այգի: Այն հայտնի է իր հարստությամբ ու մերձարևադարձային բույսերի ու  
ծառերի առատությամբ, որ աճում են խոնավ, տաք կլիմայի պայմաններում:  
Իսկ ես այցելեցի տեղի կառավարության ներկայացուցիչին: Կար մի բան, որ  
անպայման ուզում էի տեսնել Բաթումում. դա նավթամուղն էր, որով նավթ էր  
հոսում Բաքվից Սև ծով՝ ցամաքով անցնելով բավականին տարածություն:  
Ավտոմեքենայով մեկնեցինք նավթամուղի վերջին կայանը: Դանապարհն  
անցնում էր տնկարաններով շրջապատված թեյի մի մեծ գործարանի մոտով,  
որ կառուցել էր ցարը, իսկ այժմ շահագործվում էր պետության կողմից: Բացի  
այդ, տնկարաններից շրջակայքում կային թեյի բազմաթիվ մասնավոր տնկա-  
րաններ: Բլուրների ստորոտները, որ աննպաստ էին եզիպտացորենի և հա-  
ցահատիկի մշակման համար, նույնպես պատած էին թեյի տնկիներով: Թեյի  
մշակումը ձեռնառու է, սակայն այստեղի թեյն այնքան էլ լավ չէ և պակաս բու-  
րավետ է, բայց 10 տոկոս Ցեյլոնի թեյ խառնելուց հետո դառնում է վերջինիս  
նման գնայուն: Այստեղ աճեցնում են նաև մարինը, մանդարին, մեծ քանակու-  
թյամբ ծխախոտ, հնդեղեգ, եզիպտացորեն, կորեկ, կարծեմ նաև բրնձի մի տե-  
սակ, որի ցանքը ջրի մեջ չի կատարվում, և նրա մշակումը չի խանգարում դո-  
ղերոցքի դեմ պայքարին:

Մեր առջև գետնին շարված էին բազմաթիվ մեծ տակառներ: Մենք կանգ  
առանք: Գրասենյակում ողջունեցինք գլխավոր ինժեներին և նրա ուղեկցու-  
թյամբ անցնելով շենքերի և բաքերի միջով, երկաթուղային ռելսերի վրայով  
դուրս եկանք բաց դաշտ:

Ահա և նավթամուղը, այն յուրօրինակ զարկերակը, որ 1906 թվականից՝  
իր ավարտից ի վեր, էներգիա և լույս է տալիս Եվրոպային: Նա նման է սովո-

րական մի ջրմուղի: Գալիս է երկրի հեռավոր լեռնային շրջաններից, անցնում հարթավայրով բարդիների ծառուղու ուղեկցությամբ: Երկաթյա խողովակի տրամագիծը մոտ 20 սմ էր: Ինժեների տվյալներով նավթամուղը տարեկան բերում է 10 միլիոն փուք (164 միլիոն կգ կամ 164000 տոննա) նավթ. նա ասաց նաև, որ խողովակաշարը տարեկան կարող է տալ 30 միլիոն փուք (492 միլիոն կգ) նավթ: Ըստ Բեդեքերի ուղեցույցի պատերազմից առաջ նավթամուղի միջով հոսել է տարեկան 70 միլիոն փուք նավթ: Անշուշտ կողմերից մեկում պետք է փնտրել թյուրիմացությունը:

Նավթամուղն իր ամբողջ ճանապարհն անցնում է երկաթուղուն զուգահեռ, ունի մոտ 900 կմ երկարություն: Սկիզբ առնելով Կասպից ծովից, որի մակերեսը 26 կմ ցածր է ծովի մակերևույթից, բարձրանում է մինչև 950 մ, որպեսզի հետո իջնի Սև ծով: Նավթն առաջ է մղվում խողովակաշարի մոտ տեղակայված մի շարք պոմպակայանների միջոցով: Խողովակներով հոսում է միայն մաքուր նավթ: Չգտված նավթը հոսում է շատ դանդաղ և կարող է շատ արագ կեղտոտել և խցանել խողովակները: Այստեղ՝ նավթամուղի վերջնամասում, նավթը լցվում է մեծ բաքերի մեջ: Բացի այդ, ամեն օր Բաթում են ժամանում մեծ ցիստեռներից կազմված գնացքներ՝ բեռնված անմշակ և այլ կարգի նավթով, որը այստեղ վերամշակելուց և գտելուց հետո լցնում են տարաները: Նավթի տարբեր տեսակներ, որոնց ընդհանուր թիվը 20 է, հատուկ խողովակաշարով մղվում է նավահանգիստ, այնտեղից էլ կաշեփողրակներով հասցվում է շոգենավի վրա տեղակայված բաքերը, որոնք շատ արագ լցվում են:

Ինժեներն ասաց, որ այժմ Բաքվից ավելի շատ նավթ են ստանում, քան պատերազմից առաջ: Իմ այն առարկությանը, թե անցյալ տարվա արտադրանքը հազիվ է հասել նախորդի կեսին, նա պատասխանեց, որ նավթի քանակությունը անցյալ տարվանից սկսած կրկնապատկվել է նոր հորատանցքերի շնորհիվ: Այլ տեղերից ևս ինձ հավաստիացրին, որ իսկապես նավթի արդյունահանումը որոշակի միտում ունի հասնելու նախապատերազմյան միջինին: Այնինչ վիճակագրական վերջին տվյալները ցույց են տալիս, որ ներկայիս ընդհանուր արտադրանքը կազմում է նախապատերազմյան արտադրանքի 90 տոկոսը:

Անցած անտվոր ցուրտ ձմռանը այս խոնավ կլիմայի պայմաններում այնքան ձյուն էր տեղացել, որ նավթի մեծ բաքերի ծածկերը ծովել էին ձյան ծանրության տակ: Չվերանորոգված՝ դրանք մնան էին ծռնված թիթեղյա տակառների:

Ժամը 1-ին, ավելի ճիշտ՝ փոքր-ինչ ուշ, երջանիկ երկրի, ուր ժամանակը չի շտապում, հին ու բարի սովորությամբ սկսվեց տոնական ճաշկերույթը՝ իսկական ռուսական սպաքով: Սկզբում մատուցվեց սառը խորտիկ անմահական ձկնկիթի առատությամբ, ծխացրած թափառածկով և այլ համեղ ուտեստներով, ինչպես նաև վողկա, ապա՝ եփած թափառ, թռչնեղեն ու շատ այլ

կերակուրներ, կովկասյան արևահամ գինի: Չնայած խորհրդային հանրապետություններում ոգելից խմիչքների արգելքին՝ Անդրկովկասում և նույնիսկ այստեղ մահմեդականների շրջանում սովորաբար գինի են խմում: Մոսկվայի խորհրդային կառավարությունը այլևս վերացրել էր օղու արտադրության և վաճառքի արգելքը՝ դարձնելով այն պետական մենաշնորհ, ինչպես պատերազմից առաջ էր: Այժմ ամեն տեղ վաճառվում էր օղի, որից պետական դրամարկը մշտական եկամուտ էր ստանում, իսկ ժողովրդի օգուտը չնչին էր:

Տեղի հանրապետության բարեհամբույր նախագահն ինձ սեղանի մոտ հրավիրեց: Նա սահուն խոսում էր ֆրանսերեն ու լավ գրուցակից էր: Ինչպես տեղացիներից շատերը, նա նույնպես մահմեդական էր: Նախագահը բացման խոսք ասաց՝ նոր բարեմադրություններով և ջերմ բառերով ներկայացնելով այն ամենը, ինչ ակնկալվում էր մեր այցից անդրկովկասյան հանրապետություններում: Այնուհետև ճառերի տարափ տեղաց՝ մեծ մասամբ ռուսերեն: Ափսոսում էի, որ ծավալված այս պերճախոսությանը հաղորդակցվել կարող եմ միայն թարգմանության միջոցով: Հանրահայտ կովկասյան հյուրասիրության մեր առաջին փորձառությունն էր:

Նախաճաշից հետո վերադարձանք երկաթուղային մեր վագոնը: Իմ կուպեում նստած աշխատում էի, երբ ներս մտավ ծառայողը և մի տիկնոջ անունից ինձ հանձնեց հիասքանչ վարդերի մի ծաղկեփունջ: Ուզում էի դուրս գալ շնորհակալություն հայտնելու: Ծառայողն ասաց, որ տիկինը անմիջապես հենացել է, և ես չեմ կարող հասնել նրան: Դրսում ես տեսա կապույտ հագուստով վայելչակազմ մի տիկնոջ՝ թիկունքից, որ հեռանում էր ընդարձակ հրապարակով՝ առանց շրջվելու: Նրա անունն այդպես էլ չիմացա: Տիկինը, փոխանցելով ծաղիկները, խնդրել էր ողջունել ինձ և ասել, որ կարդացել է իմ գիրքը: Հրաշալի վարդերը բավականին ժամանակ զարդարեցին իմ աշխատանքային անկյունը: Թող ինձ թույլ տրվի այս տողերով արտահայտել իմ ամենախորհին շնորհակալությունը գեղեցիկ անժանոթուհուն:

Բաթումը և ամբողջ այս երկիրը հարյուրամյակներ շարունակ եղել է քրիստոնեական և հպատակվել է Վրաստանին, երբ այն թագավորություն էր: Ամենուրեք պահպանվել են այդ ժամանակները հիշեցնող շինությունների ավերակներ: Բաղաքից մի քանի կմ հեռավորության վրա գտնվում է ավերակների մի կույտ, որ կոչվում է «Չամրկ Տամարի», այսինքն՝ «Թամարի բերդ», որի կառուցումը վերագրվում է Վրաստանի մեծ թագուհուն: Շատ են հին եկեղեցիների ավերակները: 16-րդ դ. երկիրը նվաճեցին թուրքերը և պահեցին մինչև 1873 թ., երբ ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի ամբողջ մարզի հետ այն ևս անցավ Ռուսաստանին: Թուրքական տիրապետության 300 տարիների ընթացքում քրիստոնյա բնակիչները, մասամբ բռնի, ընդունել են մահմեդականություն, իսկ քրիստոնեական եկեղեցիները վերածվել են մրգկիթների: Մի այդպիսի մրգկիթ մեր դիմացն էր, կայարանամերձ հրապարա-

կում: Մեզ՝ անհավատներին, թույլատրվում էր մտնել այնտեղ միայն մեր կեղ-  
տոտ ոտքերին մուճակներ հագած: Հրապարակի՝ դեպի ծովը նայող մասում  
կային պատվարներով ու խրամատներով ամրություններ, ուր չէր թույլատր-  
վում մտնել ո՛չ մուճակներով, ո՛չ էլ առանց մուճակների:

Քրիստոնեական եկեղեցիները մզկիթների վերածելու գործում կա միայն  
մի դժվարություն: Եկեղեցիները ուղղված են դեպի ծագող և մայր մտնող  
արևը, իսկ մզկիթները դեպի Մեքքա, որ գտնվում է այստեղից հարավ: Հարցը  
լուծվել է հատակի քանկարժեք գորգերը լայնությամբ՝ հյուսիսից-հարավ փռե-  
լով: Տեղացիներն այնքան էին մոռացել իրենց հին սովորությունները, որ երբ  
1878 թ. կրկին քրիստոնյա իշխանության տիրապետության տակ անցան,  
չհաշտվեցին քրիստոնյաների հետ: Բաթումը, կրելով թուրքական հարյուրա-  
մյակների տիրապետության կործանարար դրոշմը, ռուսական իշխանության  
40 տարիների ընթացքում դարձել էր եվրոպական տիպի նավահանգստային  
քաղաք: 1906 թ. կառուցվում է ռուսական մի եկեղեցի: Փողոցներում շատ բան  
այլևս չէր հիշեցնում Արևելքի կամ իսլամի մասին, չկային սև քողերի մեջ կա-  
նացի կերպարանք հիշեցնող ուրվականներ: Դրսում նրանք հիշեցնում էին  
ռուս կանանց՝ կիրակնօրյա նրբագեղ արդուզարդով: Աչք էր շոյում տղամարդ-  
կանց հետ նրանց ազատ ու անբռնազրոս վարվելակերպը, ի հակադրություն  
այն բոլոր գաղտնածածուկ արարքների, որ հանդիպեցինք մեր անցած թուր-  
քական նավահանգիստներում:

Քաղաքում շրջելուց հետո նրա մասին հիշարժան շատ բան չեն կարող ա-  
սել: Սուկ այն, որ նագելիորեն փռված է ծովի ափին, մի բարեբեր հարթավայ-  
րում, ունի նավթային նավահանգիստ՝ պաշտպանված երկար ծովապատնե-  
շով: Ցամաքից հարթավայրը եզերված է միմյանց հաջորդող կանաչապատ  
բարձրություններով, իսկ ավելի հեռվում կապույտ լեռներ են: Բուսածածկը  
տարվա բոլոր եղանակներին բացառիկ հարուստ է: Բաթումում տարեկան տե-  
ղումների քանակը մոտ 2,37 մ է, այսինքն այնքան, որքան Նորվեգիայի լեռնա-  
յին շրջաններում: Օգոստոսի միջին ջերմաստիճանը 23,3<sup>0</sup> C, ձմեռը համեմա-  
տաբար տաք է, հունվարի միջին ջերմաստիճանը 6<sup>0</sup> C, այսինքն մի քանի աս-  
տիճան ավելի տաք, քան ապրիլին Օսլոյում:

Խոնավ, մեղմ կլիմայի պայմաններում փարթամորեն աճում է մեր-  
ձարևադարձային բուսականությունը: Կաղնու և հաճարի հարուստ անտառ-  
ներ, կեռու, դափնու, ազնիվ շագանակենու, ընկուզենու, մոշենու, տոսախի,  
կղբու ծառեր, արանքում՝ խաղողի, բադեղի, ցախկեռասի թփեր: Անտառի հո-  
ղաշերտը նույնպես ծածկված է խիտ բուսականությամբ՝ մրտավարդի, լեռնա-  
վարդի, փշարմավի, ընկուզենու, կամելիայի, բարձրաբուն ձարխտտի և շատ  
այլ բույսերի թփերով, իսկ բացատներում, ուր մայր է մտնում արևը, աճում են  
հիասքանչ ծաղիկներ:

Հարթավայրերում կաղամախիների, թթենիների, ակացիաների, սոսինե-

րի ու այլ սաղարթախիտ ծառերի հետ աճում են նաև մշտադալար նոճիներ,  
կղբիներ, վիշապածառեր, նշենիներ, կամելիաներ, մայրիներ, դրախտանոճի-  
ներ ու արմավենիներ: Ճահճուտներում աչքի են զարնում էվկալիպտների դե-  
ղին բները: Այստեղ քեզ զգում են կարծեցյալ այն երկրում, ուր եղել է դրախտի  
հրաշագեղ պարտեզն ու մարդկության օրրանը: Այստեղ ևս առկա է չար օձը.  
այս ճահճոտ երկիրը, որ կարիք ունի չորացման, հաճախ է մուտք գործում դո-  
ղերոցքը:

Երկաթուղային կայարանից վեր, պուրակի երկու կողմում, կանգնած էին  
բարձրաբուն, հովհարաձև սաղարթապսակով արմավենիներ: Նրանք  
զգզզված տեսք ունեին՝ զագաթներին մի քանի շագանակազույն չոր տերևներ:  
Անցած ձմեռ, որ մեզ մոտ՝ հյուսիս-արևմտյան Եվրոպայում, անսովոր մեղմ էր,  
այստեղ այնքան ուժեղ ցրտեր են եղել, որոնց նմանը չեն հիշում տեղացիները:  
Դրանց հետևանքով անողորքաբար ոչնչացել են արմավենու տերևները, և  
ընդհանրապես ցրտերը մեծ վնաս են պատճառել բուսականությանը, հատկա-  
պես տուժել են էվկալիպտները և փշատերև ծառերը, որ ահա գորշ տեսքով  
կանգնած են այնտեղ: Ինչպես ասացինք վերևում, տեղացել է նաև մեծ քա-  
նակությամբ ձյուն:

Քայլում էի դեպի արմավենիների ծառուղին և մտածում, որ վերջիններս  
որպես դեկորատիվ ծառեր, անշուշտ, շատ ավելի դիմացկուն են, քան սաղար-  
թախիտ կանաչ ծառերը: Բայց այն տեսքով, ինչպես տեսա նրանց, կարելի է  
կարծել, որ ոչ: Բարձր բնի վերևում զգզզված զագաթներով նրանք նման էին  
երկար կոթերով հին ավելների: Նույնիսկ առողջ վիճակում՝ հովհարաձև  
տերևներով կատարները կապույտ երկինք մխրճած, հիշեցնում էին օազիս-  
ներ անապատներում, պապակ հողի վրա, արևադարձային բարկ արևի տակ՝  
անպաշտպան նրա այրող ճառագայթներից: Որքա՞ն ավտորժելի ու թարմա-  
շունչ է սոսիների, թխկիների կամ լորենիների ծառուղին՝ կենսունակ սաղարթ-  
ների զովացուցիչ ստվերով:

Ճարտարապետության և ոճի տեսակետից, սակայն, իրավիճակն այլ է:  
Սաղարթախիտ ծառերն իրենց անորոշ, կլորավուն ձևերով ճարտարապետա-  
կան չեն ու չեն համապատասխանում քարե կառույցների ուղղահայաց ու հո-  
րիզոնական գծերին: Սաղարթավոր ծառերի մեջ առավել ճարտարապետա-  
կան են բարդիները՝ իրենց անստվեր սլացիկությամբ, իսկ դրանցից առավել  
չոր, ճյուղազուրկ արմավենիներն են: Նրանք հիշեցնում են Արևելքի բնորոշ  
խոյակներով սյունաշարեր, չնայած իրենք ի վիճակի չեն որևէ բան կրել: Հի-  
շենք արևելյան և հունական մարմարյա տաճարները բոլորող արմավենինե-  
րը՝ փոքր-ինչ խիստ ու անհաճո ոճ: Նավթային այս նավահանգստում, սա-  
կայն, չկային տաճարներ:

«Ներեցեք, դուք դուրսդ Ն. ե՞ք»: Իմ առաջ կանգնած էին արևախոր,  
խարտյաշ երկու երիտասարդ, տիպիկ գերմանական դիմագծերով ու ծայրա-



հեղ տարօրինակ հագուստներով՝ քիռոյան տարագի ու լողագգեստի մի համադրություն՝ բայց կրծքերով, լայն, գույնզգույն օձիքներով վերնաշապիկներ ու անհավանական կարճ, լայն տաքատներ, որոնք ծածկում էին միայն ազդրերի կեսը, մերկ ծնկներով, երկար գուլպաներով և մարգակոշիկներով: Ուսներից կախված էին մի հեռադիտակ՝ իր փոկով, ու մի լուսանկարչական ապարատ:

«Հրաշալի է: Կարելի՞ է ինքնագիր խնդրել»: Նրանք ինձ մեկնեցին իրենց ծոցատետրերը: Ես ստորագրեցի: Երիտասարդները Սիրիայից եկել էին ուրբով և մտադիր էին շարունակել ճանապարհը դեպի արևելք՝ Միջին Ասիա: Ինչքան հասկացա, նրանց հանդերձանքն այն էր, ինչ կար վրաները, փող չունեին և, որ ամենակարևորն էր, առանց անհրաժեշտ անձնագրերի ու անցաթղթերի էին: Առեղծված էր. ինչպե՞ս էին նրանք հաղթահարելու ճանապարհը, բայց և փաստ էր, որ դա նրանց հաջողվել էր մինչև այստեղ, իսկ տղաները առողջ տեսք ունեին:

Ես շարունակեցի ճանապարհս: Փողոցի վերջում ծովի ափին կար մի գեղեցիկ զբոսայգի՝ հարուստ բուսականությամբ, իսկ մեջտեղում՝ մի գողտրիկ լճակ: Վերադարձին մեր երկու գերմանացիները կրնկակոխ հետևում էին մեզ՝ խնդրելով թույլ տալ լուսանկարել: Նրանք հավաստիացնում էին, որ մեզ այս օտար երկրում այսպես անսպասելի հանդիպելը կարևոր իրադարձություն է իրենց համար: Նրանք նոր էին Բաթում հասել, փողոցում տեսել և անմիջապես ճանաչել էին ինձ: Լուսանկարելուց հետո տղաները ուրախ հրաժեշտ տվեցին՝ իրենց հետ տանելով մեր լավագույն բարեմադրությունները: Իսկ թե ինչ եղան հետո, անհայտ է:

Հետմիջօրեին թեյի էինք հրավիրված «Մերձարևելյան նպաստամատույց» ամերիկյան այդ մեծ կազմակերպությունում, որ երկար տարիներ շարունակ ծավալում է ակնառու գործունեություն ի նպաստ Փոքր Ասիայի ու Ռուսահայաստանի հայերի: Նրա մանկատներում ապաստանել ու խնամվում են հազարավոր ծնողազուրկ հայ երեխաներ: Այն բոլոր քաղաքներում՝ Թիֆլիս, Լենինական (Ալեքսանդրապոլ), Երևան, ուր ժամանելու էինք, կազմակերպությունն իր տները դնում էր մեր տրամադրության տակ, իսկ նրա անդամները պատրաստ էին ցանկացած ժամանակ կոնկրետ գործով, խորհրդով, լուսաբանությամբ, ավտոմեքենայով, ամեն կերպ օգտակար լինել մեզ: Այստեղ հանդիպեցինք անգլոտի օրիորդ Քոյին, որ վաղուց մեզ էր սպասում: Նա Հայաստան էր մեկնել լորդ Մայրս Ֆունդի հանձնարարությամբ և այժմ պատրաստվում էր Անգլիայում ու Ամերիկայում դասախոսություններ կարդալ ի նպաստ հայ փախստականների համար ստանձնած մեր աշխատանքի: Նա ոգևորված էր խոսում Հայաստանի մասին և խոր համակրանքով էր լցված բարեխիղճ ու աշխատասեր հայ ժողովրդի հանդեպ, որ անասելի դաժան ժամանակ էր անցկացրել:

Ժամը 6-ին մեր գնացքը շարժվեց: Կայարանում հրաժեշտի համար մեծ

բազմություն էր հավաքվել՝ Բաթումի բարեհամբույր մախագահի գլխավորությամբ:

## ՎՐԱՏԱՆՈՒՄ

Երկաթուղին ձգվում էր ծովափով դեպի հյուսիս: Բնաշխարհի մի գեղեցիկ օրինակ: Երկնքի լուսավոր կամարով պարուրված կապույտ ծով, որի եզերքին իջնում էր արևը: Ափամերձ հարթությունից դեպի երկնքի խոր կապույտն էին ձգվում կանաչ անտառապատ լեռնալանջեր: Ծառերի սաղարթաշատ կատարները ցած էին խոնարհված, իսկ թավուտներում մթին էին տալիս թանձր սովերներ: Անտառի հյութալի կանաչով պատած հողաշերտ, թփերով և այլ տեսակի բույսերով անանցանելի դարձած մի վայրիություն, բարձրաբերձ ծառերն՝ մինչև սաղարթածածկը փաթաթված բույսերով, որ կախված էին ճյուղերի ծաղկաշղթաներից:

Մակայն մահվան մոռյալ շունչն այս ու այնտեղ խախտել էր հովվերգությունը, դրանք սլացիկ էվկալիպտներն ու փշատերև ծառերն էին, որ վնասվել էին անցած ձմռան ավերիչ սառնամանիքից:

Մերթնդները երևում էին թեյի տնկարաններ, որոնք տարածված էին դարավանդներում, իսկ ներքևում՝ հարթավայրում, հնդեղեգի բարձր մացառուտներ էին: Ճահճոտ եղեգնուտներից մեզ էր հասնում եղեգնահավի զրնգուն երգը, իսկ անտառի խորքից՝ սոխակի: Ճահճուտներից երբեմն-երբեմն լսվում էր պնդերես գորտերի կոկոռը:

Կայարաններում, որտեղով անցնում էինք, հավաքված էին բաթումցիների զվարթ խմբեր, որ վերադառնում էին իրենց կիրակնօրյա զբոսանքից: Ամառային թեթև հագուստներով գեղեցիկ կանայք վետովտում էին կանաչախիտ տերևների հովանու տակ՝ բարի ճանապարհ մաղթելով ուղևորներին: Մաղթն մահմեդական կանանց մեկուսացված կյանքը չէր: Ամառն ու կայտառ կենսասիրությունը գեղվել էին մեր մեջ բնության ճոխ առատության եղջյուրից:

Հեռանալով ափից՝ դուրս եկանք մի ընդարձակ հարթավայր, ուր անտառը տեղի էր տվել, իսկ հողը ծածկված էր ճարխտոտով ու ցածր թփերով: Մարդու ոչ մի հետք, հողի մշակման ոչ մի փորձ: Մակայն ինչքան երևում էր գնացքի պատուհանից, պետք է որ այս ամբողջ հարթավայրը մշակովի լիներ, և հազարավոր փախստականներ տեղ կխնդրեին այստեղ, եթե նույնիսկ հողը մի քիչ ավագոտ և ուժասպառ լիներ: Պատկերացրեք, հազարավոր երջանիկներ տներ կունենային այստեղ, եթե հնարավորություն ընձեռվեր նրանց՝ հողը խաղող մշակելու:

Սև ծովի վրա մայր էր մտնում արևը, իսկ հեռու հյուսիսում կապույտ լեռների շարք էր՝ սալիտակ գագաթները երկինք մխրճած: Ահա Կովկասը, ուր շղդ-

թայված է մարդկային ոգու հսկան, որ աստվածներից գողացավ կրակը: Արծիվները պոկոտում են նրա փոքրտիքը. ոգու մշտնջենական պայքար ընդդեմ երկրային կապանքների:

Մտնում ենք Ռիոն գետի ընդարձակ հովիտը, որ հնում կոչվում էր Փասիս և հոսում էր բարեբեր Կողքիսով՝ արշալույսների երկրով, ուր վախճավ առասպելական խոյը ու ավին զոհ դարձավ արևածագի կրակներից: Նրա ոսկյա գեղը կախված էր գիշերային երկնքի ծառից ու պահպանվում էր նախասնձախնդրության վիշապի կողմից: Արգոնավորդները, կատարելով անվեհեր մի ճանապարհորդություն, հասան այստեղ ու նավարկեցին Փասիս գետն ի վեր դեպի Կողքիսի արևի աստված Էյեթոսը: Այնտեղ անտառում արևի հերոս Յատնը հանդիպում է թագավորի գեղեցիկ դստերը՝ կախարդուհի Մեդեային: Նրա օգնությամբ Յատնը սանձահարում է կրակ ժայթքող պղնձե ցուլին, ցանում է վիշապի սերմը, սպանում վիշապին, ցրում խավարը ու վերցնում գեղը:

Բերրի, կանաչ երկիր՝ փարթամ բուսականությամբ, անձրևներով առատ: Մակայն դաշտավայրը ճահճոտ է ու քիչ դրենաժված, որն էլ անբարենպաստ է առողջության համար, դողերոցքի բուն է: Հիպոկրատը իր ժամանակին նկարագրել է այս կողմերի խոնավությունն ու շոգը: Ծարունակում ենք մեր ճանապարհը: Մենք նույնպես մեր առաջ նպատակ ենք դրել սպանել նախանձ վիշապին, ձեռք բերել ոսկե գեղը՝ ժողովուրդների բարեկամությունը: Մակայն մեզ այստեղ չի սպասում կախարդուհի, որ օգնի սանձահարելու կրակ ժայթքող ցուլին: Մութ գիշեր էր: Դանապարհը անտառի ու մշակված հարթավայրի միջով, Ռիոնի ընդարձակ հովտով տանում էր Իմերեթ: Վերջինս հայտնի էր իր փարթամ գեղեցկությամբ, վարդերով ու սև աշյա գեղեցկուհիներով: Այդ բոլոր գեղեցկությունները, սակայն, սուզված էին գիշերվա մեջ, լեռների ուրվագծերն էին միայն նշմարվում աստղազարդ երկնակամարի ներքո: Այստեղ, Իմերեթի սահմաններից ներս, Քութայիս հին մայրաքաղաքն էր:

Առավոտյան (15-ը հունիսի) բացեցի պատուհանիս վարագույրը: Ինչպիսի՜ տեսարան: Հյուսիսում կապույտ լեռների հուժկու պատնեջ էր՝ սպիտակ գագաթներին արևով լուսավորված ամպերի դեզեր: Թվում էր՝ այստեղ՝ երկու աշխարհամասերի սահմանում, հսկաները երկրակեղևից մի կտոր են պոկել՝ Օլիմպիոս արշավելու համար: Այս հսկա լեռները Ասիայի դարպասներն են մասնատված Եվրոպայի առաջ: Այս պատնեջին փշրվել են ժողովուրդների գաղթեր՝ իրենց հետքը թողնելով պատմության հարափոփոխ ժամանակներում:

Մենք անցանք երկաթուղու ամենաբարձր կետով՝ Սուրամի լեռնաշղթայով, որ ջրբաժան է Ռիոն և Կուր գետերի, արևմուտքում՝ Իմերեթի, իսկ արևելքում՝ Քարթլիի միջև:

Այժմ արդեն երկաթուղին ձգվում էր Կուրի ընդարձակ հովտով, որը հյուսիսից եզերված է Կովկասյան հզոր լեռնաշղթայով: Ամենաբարձրում, ամպե-

րի մեջ կուրացուցիչ սպիտակությամբ փայլում էր Մոլինվարի կամ Կազրեկ հրաբխային լեռան սառցադաշտը, ավելի քան 5000 մ բարձրության վրա: Իսկ դեպի հարավ, մինչև Հայկական լեռնաշխարհ, ձգվում էին Փոքր Կովկասի լեռնաշղթաները: Գետի դեղնաշագանակագույն ջրերը ժապավենաձև հոսում էին նեղ, երկար, տափարակ հովտով, գետ, որին, ինչպես վկայում է առասպելը, միշտ կծգտես, եթե խմես նրա ջրից: Հլու-հնազանդ հոսում է բարեբար փերով, իսկ ձնհալի ժամանակ դուրս է գալիս ավերից, քանդում կամուրջներ ու կանգնեցնում երթևեկությունը:

Կուրը Կովկասի չորս գետերից ամենամեծն է, ունի ավելի քան 1000 կմ երկարություն: Ի տարբերություն մյուսների, Կուրը սկիզբ է առնում ոչ թե Մեծ Կովկասից, այլ հարավ-արևմուտքից, Կարսից մոտ 25 կմ արևմուտք գտնվող մի բարձրավանդակից, որ ծովի մակերևույթից բարձր է ավելի քան 2500 մ: Հաստատուն մի աղեղով նա իր հունը փոքր է լեռների միջով, նախ դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք՝ մինչև այստեղ, այնուհետև հարթ, նեղ հովտով դեպի արևելք՝ հարավ-արևելքում հոսելով Թիֆլիսի միջով: Կասպից ծով հասնելուց առաջ Կուրը հոսում է Ադրբեջանի ընդարձակ հարթավայրով, աջից իր մեջ ընդունելով Հայաստանից եկող Արաքս մեծ գետը: Հույներն անվանում էին Կյուրոս (լատիներեն cyrus) կապելով Պարսից արքայի անվան հետ: Հետագա ուսումնասիրողները գետի անունը կապում են Մտկվարի աշխարհագրական դժվարահունչ տեղանվան կամ հին վրացական Մտկուարի հետ, որ նշանակում է «քաղցր համեղ ջուր»:

Կուրը հոսում է երեք մեծ երկրների միջով՝ ներկայիս թուրքական Կարսի մարզով, Վրաստանով և Ադրբեջանով: Իր վերին հոսանքի շրջանում արագընթաց ցած է հոսում մի նեղ, վայրի անդունդով, ապա դուրս գալիս խաղաղ, հրաշալի լեռնահովիտ՝ շրջապատված կաղնու, հաճարի ու սոճու անտառներով և բարձրաբերձ լեռներով: Հետո նորից փրփրում է խոր ձորերի հեղեղատով դեպի ցած՝ մինչև այս ընդարձակ հովիտը:

Այն կարծիքը կա, որ վրացիները Կուրի ակունքների շրջանից են Վրաստան եկել: Մակայն դա անհավանական է: Բայցևայնպես գետի վերին հոսանքի շրջանում պահպանվել են հնագույն պատմության հետքեր: Ընդարձակ գետահովտից ավելի քան 80 կմ վեր, Խերթվիսի ձորի նեղ խորխորատում գտնվում է քարանձավային հնագույն բնակատեղի Վարձիան, որի անձավները փորված են ժայռի մեջ: Հավանաբար վաղ շրջանում այստեղ ապաստանել է քարանձավաբնակ մի ժողովուրդ: Միջին դարերում այստեղ կառուցվում է նշանավոր վանք, որի բազմաթիվ խուցերը, ինչպես նաև մեծ եկեղեցին փորված են ժայռի մեջ: Ըստ ժողովրդական ավանդության այս մենավոր անկյունը եղել է Թամար թագուհու սիրելի առանձնավայրը: Նա ընդարձակել է ժայռափոր վանքը և կառուցել Աստվածամորը նվիրված մի մեծ եկեղեցի, ուր մինչ օրս պահպանվել են բազմաթիվ որմնակարներ, որոնցից մեկը ըստ ավանդու-

թյան պատկերում է մեծաշնորհ թագուհուն: 14-րդ դ. Լենկթեմուրի հորդաները հասան այս անմատչելի վայրը, կողոպտեցին ու քարուքանդ արեցին այն: Նրանք անձավներ ներխուժեցին ժայռի կատարից դեպի ժայռապատերն իջեցված աստիճաններով: Երկու հարյուրամյակ անց վանքը կրկին աղետի ենթարկվեց, այս անգամ պարսիկների կողմից:

Վրաստանը փոքր երկիր է, որ բռնում է Կուրի ընդարձակ հովտի մեծ մասը: Նրան բաժին են հասել բնության բոլոր գեղեցկությունները՝ բերքառատ դաշտավայրեր, ընդարձակ, խիտ անտառներ, վայրի, բերրի լեռնահովիտներ, կտրտված, բարձր ժայռեր, սպիտակ սառցադաշտեր, գեղեցիկ նավահանգիստներ: Այստեղ չկա մի կարևոր բան՝ լիճ: Չարմանալի է, որ Վրաստանը, ի տարբերություն կովկասյան մյուս երկրների, չի ունեցել երկարատև սառցաշրջան՝ ծածկված ընդարձակ, համասեռ սառցաշերտով: Սառցադաշտերի ուժեղ ճնշման բացակայության պատճառով հովիտները չեն գոգավորվել և ընդունել Մ ձևը, այլ որպես կանոն ստացել են ջրի ազդեցությամբ առաջացած V ձևը: Բազմաթիվ են խոր իջվածքները և ուղղահայաց պատերով կիրճերը: Այստեղ լճերի համար չեն գոյացել փոքր ու մեծ ավազաններ, ինչպես Նորվեգիայում կամ Շվեյցարիայում: Ահա թե ինչու Վրաստանում չկան կապույտ լճեր, ուր կարտացոլվեր լեռների վեհությունը: Փոքր Կովկաս լեռնահամակարգի մի հատվածում միայն կա լճերի խումբ:

Այնուամենայնիվ Կուրը ճանապարհին իր մեջ առած պետք է լինի մի շարք ներքին լճեր: Նրա ավազանը բերրի հարթավայր է, որ վերջանում է նեղ, ժապավենաձև հովտով, որտեղ գետն աստիճանաբար փորել է մի խոր կիրճ, ուր և դատարկվել են լճերը: Այդպիսի մի ճեղքվածք կա Մցխեթի, իսկ մեկ ուրիշը՝ Թիֆլիսի մոտ: Մեր առաջ տարածված այս ընդարձակ հարթությունը, անշուշտ, մի այդպիսի լճի նախկին հատակ է եղել: Այս ու այնտեղ երևում են բարակկրան, սլացիկ բարդիների խմբեր, իսկ ընդհանրապես ծառագուրկ, կանաչ դաշտ է: Շրջակա լեռների լանջերը մեծ մասամբ չոր են, տեղ-տեղ շագանակագույնը խախտվում է կանաչ հետքերով: Սրանք նույնպես ծառագուրկ են: Վրաստանի սրտում ենք՝ հին Քարթլիում, քարթվեղների (այսինքն՝ վրացիների) երկրում: Այստեղ մշակում են եգիպտացորեն, հացահատիկ, նաև՝ խաղող ու մրգեր: Վերջին տարիներին ավելացել է որոշ քանակությամբ ծխախոտ, չհաշված բամբակը, որ հնագույն ժամանակներից մշակում էին Կուրի հովտում:

Ժամանակ առ ժամանակ երևում էր մի գյուղ՝ ցածր, քարե հյուղերով ու տափարակ կաուրներով: Հյուղերն ավելի շուտ նման էին անտանիք ավերակների՝ կիսով չափ թաղված հողի մեջ, որով պաշտպանվում էին կովկասյան ցուրտ ձմեռներից: Գյուղերը շրջապատված էին փարթթան, սաղարթախիտ մրգատու և խաղողի այգիներով, որ հաճելիորեն շոյում էր ծառագուրկ դաշտավայրով թափառող այժը:

Գնացքը կանգ առավ Գորի չհասած մի կայարանում, որ գտնվում էր Կուրի մյուս կողմում, իսկ զառիթափ լեռան վրա կար մի հին բերդ: Բնակիչների մեծ մասը հայեր էին, հետնորդներն այն շինարարների, որոնց 12-րդ դ. այստեղ էր բերել վրաց Դավիթ թագավորը: Նրանք արդեն վրացախոս են: Սակայն հայի համատությանը պահպանել են իրենց լուսավորչական դավանանքը: Քաղաքն անընդհատ կողոպտել ու ավերել են պարսիկներն ու թուրքերը: Ինչպես ամենուր, այստեղ էլ կային անցյալն հիշեցնող ավերակներ:

Գորիից փոքր-ինչ արևելք, Կուրի հյուսիսային կողմում Ուփլիսցիխե (այսինքն՝ տիրոջ բերդ) քարանձավային հին բնակատեղին կամ ամրոցն է: Ժայռակողի վերին մասում գետին զուգահեռ փորված են մեծ ու փոքր բնակատեղիներ, որոնք տարբեր բարձրությամբ զետեղված են միմյանց վրա՝ ներսից մասամբ կապված լինելով իրար հետ: Դրանց մի մասը կոպիտ աշխատանք է, որ խոսում է վաղեմության մասին: Սակայն կան նաև բարձր մակարդակի ճարտարապետական գեղումներ՝ կամարակապ տանիքներ ու նախշազարդ կամարներ:

Լեման-Հաուփթը<sup>1</sup> ենթադրում է, որ վերջիններս կառուցվել են Ք. ծ. հ. 4-րդ դարում: Այդ սենյակները հավանաբար պատկանել են մի հին ամրոցի: Ժողովրդի մեջ ապրում է այն գրույցը, թե Ալեքսանդր Մեծն անձամբ պաշարել է բերդը, սակայն ապարդյուն:

Այս շրջանում ժայռերի վրա կան բազմաթիվ քարանձավային նման բնակատեղիների ավերակներ: Վարձիան հիշատակել ենք արդեն: Փաստը խոսում է այն մասին, որ այստեղ հնում գոյություն է ունեցել պարզունակ քարանձավային բնակություն, որպիսին հանդիպում ենք այլ երկրներում ևս: Հին անձավային բնակարանների մնացորդներ կան Ակրոպոլի ժայռազանգվածի ու Աթենքի մոտ գտնվող Արեոպագի վրա (հմտ. էջ 18): Քարի դարում Կրետե կղզու հնագույն բնակիչներն անձավաբնակ էին: Տիգրիս գետի ակունքների շրջանում նույնպես կան բազմաթիվ քարայրներ, որոնք իրենց վաղեմությամբ հավասար են Վարձիային և Ուփլիսցիխեին: Խաղերը՝ Վանա լճի շրջանի նախահայերը, ևս բնակվել են անձավներում, որոնց շինարարական արվեստն ավելի բարձր մակարդակ է ունեցել: Հնագույն ժամանակներում, անշուշտ, մարդիկ քարանձավներն օգտագործել են որպես բնակարաններ: Հետագայում դրանք վերափոխել են պաշտամունքային վայրերի ի պատիվ երկրի, բերրիության մեծ աստվածուհու, մայր հողի կամ մայր լեռնաշխարհի, որոնց հետ հաղորդակցվելու ամենաճիշտ տեղը նրանց իրենց տանը՝ ժայռերի մեջ փնտրելն էր:

Ավելի ուշ անձավները դարձան քրիստոնեական աստծու մեծարման վայ-

<sup>1</sup> C. F. Lehman-Haupt, Armenien einst und jetzt, h. I, էջ 101, 1910:

րեր<sup>2</sup>: Ուփլիսցիսիսեի ժայռի ստորոտին կա մի փոքրիկ գյուղ: Մարդիկ այլևս չեն ապրում ժայռերի մեջ: Դրա փոխարեն, ինչպես արդեն ասել ենք, նրանք իրենց տները կիսով չափ թաղում են հողի մեջ՝ ձմռանը ցրտից պաշտպանվելու համար: Գյուղն ուներ նաև որձաքարով կառուցված մի հին եկեղեցի:

Հարթավայրը, որով անցնում էինք, մեծ մասամբ չոր էր, չնայած ուներ արհեստական ոռոգման ցանց: Հողը անկասկած բերրի էր, և կարելի էր ընդարձակել մշակովի տարածությունները: Երկրագործությանը զբաղվում էին ամենուր: Մենք տեսանք, թե ինչպես էին հերկ անում մինչև 12 լծկան ունեցող արորով: Հավանաբար այստեղ հողը վարելը դժվար է, քանի որ այն կավային է, որը արևոտ եղանակին ավելի է ամրանում:

Ահա այնտեղ, վերևում, գառիթափ լեռան բարձր գագաթին, պրծվաքնի մեծ թառել է մի հին բերդ: Ի՞նչ բերդ է: Թամար թագուհու ամրոցը! Այդ անուրը կախարդական բառ է կարծես: Մենք հանդիպեցինք նրան Բաթումում, Քուրսայիսի մոտ գտնվող նրա ապարանքի ավերակներում, Վարձիայում, ամենուրեք, ուր պահպանվել են գեղեցկության, հեքիաթային ու անցած փառքի հետքեր: Թամար, Վրաստանի թագուհի: Անվան հնչեղությունն իսկ արդեն ընդգրկում է Արևելքի հեքիաթային աշխարհը, Վրաստանի հզորության ողջ ժամանակաշրջանը: Զո բոցկլտուն աչքերի փայլով ծաղկում էր երկիրը, և դու ասպետներիդ հետ ընդարձակում էիր քո թագավորության սահմաններն ու կառուցապատում այն: Այս ուժեղ անհատականությունը վրացիների համար անցյալի փառքի մարմնացումն է:<sup>3</sup>

Այնտեղ, Կուրի մյուս կողմում, ուր գետին է միանում Արագվան, զսմվում է Մցխեթը՝ վրաց թագավորների մայրաքաղաքն ու մտավայրը մինչև Զ. ծ. հ. 5-րդ դ. վերջը: Քաղաքն այլևս աչքի չի ընկնում որևէ բանով: Խղճուկ տնակների բազմությամբ, առանց մրգատու այգիների, առանց ծառերի ու կանաչի տարածվում է երկու գետերի միջև ընկած ցամաքալեզվակի վրա: Քաղաքի վրա քաղված է Վրաստանի մոտ մեկ ու կես հազարամյա եկեղեցական ու հոգևոր կենտրոն Մցխեթի մայր տաճարի գմբեթը: Եկեղեցին նաև Արևելյան Վրաստանի թագավորների դամբարանն է:

Արագվայի հովտով, գառիթափ լեռների միջով մի հայացք ձգելով դեպի հյուսիս՝ կարելի է տեսնել մի այլ աշխարհ՝ ծառաշատ Սագուրամո հովիտը՝ խորքում Կովկասի ձյունածածկ, կապույտ լեռներով: Մցխեթի դիմաց, Արագվայի մյուս կողմում, քարքարոտ, բարձր ժայռի կատարին կանգնած է մի հին եկեղեցի: Այն կոչվում է «Մուրթ խաչ»՝ ավերակներով ու պարիսպներով շրջապատված մի անտիկ բերդ, որ վաղ ժամանակների ու միջնադարի կնիքն է բնաշխարհի վրա: Կուրի հարթությունում այս ժայռի ստորոտին մեծ աշխատանքներ են ընթանում: Նոր էլեկտրակայանի համար, որ Թիֆլիսին տալու է

մոտ 20000 ձիաուժ էլեկտրականություն, գետի վրա կառուցվում է մի հզոր սլաավար: Այստեղ հանդիպում են անցյալն ու ապագան:

## ԹԻՖԼԻՍ

Գնացքը մոտենում էր Թիֆլիսին: Քաղաքը տեղադրված էր մի մերկ, ծառազուրկ հովտում՝ երկու կողմերից քարքարոտ լեռնալանջերով: Գեղեցիկ բնապատկերներով այնքան հարուստ Վրաստանում մայրաքաղաքի տեղանքի ոչ ճիշտ ընտրություն: Մեզանից բավական հեռու, լեռնալանջի ստորոտի հարթության ձախ կողմում երևում էին սպիտակ նշաններ, որ նման էին վրանների: Դա վրացական Կարմիր բանակի՝ քաղաքից դուրս գտնվող վարժադաշտն էր: Ժամը 10-ին մտանք կայարան: Մեզ դիմավորելու էին եկել Իտալիայի, Պարսկաստանի, Թուրքիայի, Գերմանիայի և այլ երկրների կուրյատուներ, ինչպես նաև ամերիկացի պարոն Յարովը՝ «Մերձարևելյան նպաստամատույց» կազմակերպության ներկայացուցիչը: Նա մեզ Թիֆլիսում անցկացնելիք մեր ամբողջ ժամանակվա համար բնակարան առաջարկեց կազմակերպության տանը: Կայարանում էր նաև Մոսկվայում միջազգային Կարմիր խաչի ներկայացուցիչ պարոն Ֆ. Վերլինը: Նա եկել էր Ռուսաստանից՝ Անդրկովկասում ծանոթանալու առողջապահական գործին:

Նստեցինք ավտոմեքենաներ: Ինչպես ընդունված է ամենուրեք, կայարանը գտնվում էր քաղաքի ծայրին: Այդ պատճառով մեր ճանապարհը մի քանի կմ անցնում էր քաղաքամերձ մշակված հողատարածությունների միջով, այսպես կոչված Գերմանական թաղամասով, ուր ավելի քան հարյուր տարի առաջ (1818 թ.) բնակություն էին հաստատել Վյուրթեմբերգից եկած գաղթականներ: Անցանք Կուրի կամուրջներից մեկով, Մադաթովի կղզով, էլի մի կամրջով և գետի մյուս կողմում գտնվող մի բարձրության վրայով: Ահա ժամանակակից քաղաքի կենտրոնական փողոցը՝ լայն, վայելչատես զբոսավայր հանդիսացող Գոլովիցի պողոտան: Չախ կողմում օպերայի շենքն է, աջում, ամենաաչքի ընկնող տեղում, ռուսական մեծ եկեղեցին՝ իր կլոր գմբեթով: Նախկինում կոչվում էր Կայագորի կաթողիկե, այսինքն՝ եկեղեցի քաղաքի կայագորի ռուսական գործառնների համար: Աջ կողմում, փոքր-ինչ հեռու կար մի մեծ, վեհաշուք շենք, որ Ռուսաստանի փոխարքայի ապարանքն էր, այժմ՝ կառավարական տունը: Քիչ այն կողմ մի մեծ, անավարտ կառույց էր՝ ապագա թանգարանի շենքը: Կային այլ շենքեր և ս, բայց մեր տեսածը հեռու էր արտասովորից: Այստեղ տիրապետող սովորական, անգույն եվրոպական ճարտարապետությունն էր, բացառությամբ ռուսական եկեղեցու և մի քանի այլ եկեղեցիների, որոնց աշտարակները վեր էին խոյացած տների շարքերից: Դրանք կառուցված էին հին վրացական կամ հայկական ճարտարապետա-

<sup>2</sup> Հմմտ. Լեման-Հաուսթ, հ. II, էջ 617, 1927:

կան ոճով: Ընդհանրապես արևելյան քիչ բան կար այստեղ, որ կարող էր երևակայությանդ հագուրդ տալ: Ջրոսավայրի անցուղարձը նույնպես չուներ Արևելքի խայտաբղետ գույների առատությունը: Տղամարդիկ մեծ մասամբ խորհրդային ոճի գուսպ շապիկներով ու փափուկ գլխարկներով էին, կանայք թեև իրենց գեղեցկությամբ հայտնի վրացուհիներ էին, ամեն դեպքում ոչնչով չէին տարբերվում Եվրոպայի կանանցից, գոնե հանդերձանքով: Փողոցում աշխույժ երթևեկ էր ու կյանք:

Ամերիկացիների ընդարձակ տանը մենք հյուրընկալ ընդունելություն գտանք: Մեծ, լուսավոր սրահները զով էին, որ առավել հաճելի էր ցերեկվա տապի ժամանակ:

Առաջինն այցելեցինք Անդրկովկասի Դաշնակցային Հանրապետության նախագահին: Վերջինս բնակվում էր կառավարական տանը: Նա բարետես անձնավորություն էր, ամբակազմ, թխահեր մի վրացի՝ արտահայտիչ, խելացի դիմագծերով: Նախագահը ողջունեց մեզ՝ մարթերով լավագույն ցանկություններ, խոսեց մեզինքն ակնկալվող օժանդակության մասին և հույս հայտնեց, որ մենք մեր իմացությամբ ևս կօգնենք կառավարությանը երկրի զարգացման ու նրա հնարավորությունների առավել օգտագործման հարցում: Ես պատասխանեցի, որ մենք ուրախ ենք այս հրաշալի երկրում շրջագայելու համար և հուսով ենք անել ամեն հնարավորը, լինի դա շատ կամ քիչ, Անդրկովկասն ավելի սերտորեն կապելու Եվրոպայի հետ:

Մի մեծ, փառահեղ քարտեզի առաջ կանգնած՝ քննարկում էինք, թե ուր կարելի էր տեղավորել հայ փախստականներին, եթե Սարդարապատի ծրագիրը մերժվեր որպես ոչ գործնական: Նախագահն Աղբրեջանում ցույց տվեց մի մեծ հարթավայր, որը ոռոգելի դարձնելով՝ կարող էր ապաստանել մի քանի հազար մարդ: Այդտեղ արդեն բնակվում էին շատ հայեր: Մի քանի հազար էլ կարելի էր տեղավորել Աբխազիայում՝ Վրաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան ինքնավարությունում, Սև ծովի ափերին, ուր արդեն բնակություն էին հաստատել մի քանի հազար հայ փախստական: Վերջապես փախստականների մի փոքր թվի համար էլ տեղ կգտնվի Վրաստանի լեռնահովիտներում:

Այնուհետև շրջեցինք երբեմնի փոխարքայի գրասյգում, որ շրջապատում էր ապարանքը: Ամենուրեք հիասքանչ, փարթամ բուսականություն, մերձարևադարձային ծառեր, կանաչ հարթության վրա վառվում ծաղիկների մարգերի միջև փոցիված կարմիր արահետներ, և այս ամենը լավագույնս խնամված: Դա հնարավոր էր ցարական իշխանության երկգլխանի, սև արծիվ զինանշանի ներքո՝ իր սպասավորների ու խոնարի ստրուկների բանակի առկայության պայմաններում, բայց ոչ երբեք պրոլետարիատի կարմիր աստղի: Այգում շրջագայելուց հետո զնացի վրացական կառավարություն՝ ընդունելության, և հանդիպում ունեցա փոխնախագահի հետ: Դաշից հետո մեքե-

նայով գրոսանքի դուրս եկանք մեծ խճուղի, որ գալարվում էր քաղաքից հարավ-արևմուտք, մի բարձր, զառիթափ լեռան լանջով: Ծանապարհի ձախ կողմում գրեթե ուղղահայաց գառիվեր էր՝ խոր, մեղ վիհով կամ կանյոնով, որտեղով հոսում էր մի փոքրիկ, համարյա ցամաքած գետակ: Չառիթափ պատերով այսպիսի մեղ, խոր հեղեղատները խոսում են համեմատաբար չոր կլիմայի մասին: Ամենայն հավանականությամբ սրանք հորդառատ անձրևների ժամանակ փակվում են, որի հետևանքով գետը վարարում է, և սրընթաց հոսող ջրերն ավելի են խորացնում քարե փխրուն հունը:

Հասնելով բարձունքին՝ մեր առջև տարածվեց քաղաքի և հովտի ընդարձակ համայնապատկերը: Երկար ու մեղ հովիտը ձգվում էր Կուրի երկու ափերով, իսկ գետը հանդարտ ոլորաններով շարունակում էր հոսել հովտով: Քաղաքի դիրքը զբավիչ էր, եթե միայն երկու կողմերի լեռնալանջերն այդքան մերկ ու ծառագուրկ չլինեին, որ թողնում էին չոր ու քարքարոտ տապալորություն: Պատկերացրեք՝ ինչ գեղեցիկ կլինեին լեռնալանջերը, եթե ծածկված լինեին սովերախիտ անտառներով, խաղողի ու մրգատու այգիներով: Քաղաքը հիմնադրվել է Ք. ծ. հ. 4-րդ դարում կամ նույնիսկ ավելի վաղ: Անունը վրացերեն՝ Թբիլիս, պայմանավորված է տաք ծծմբային աղբյուրների առկայությամբ (թբիլի—տաք), որոնք մինչև օրս օգտագործվում են բուժիչ նպատակներով: Հյուսիսում Պոսկայա լեռն է (1000 մ): Քաղաքից ճոպանուղի է բարձրանում դեպի լեռան գագաթը, ուր կա ռեստորան, և որտեղից ընդարձակ տեսարան է բացվում: Դոպանուղու կես ճանապարհին գտնվում է վրացական Ս. Դավիթ վանքը:

Վերջին մարդահամարի տվյալներով Թբիլիսն ունի մոտ 275000 բնակիչ: Այն գրեթե մեծ քաղաք է, սակայն զարմանալիորեն սահմանափակ են նրա ընդարձակման հնարավորությունները: Սրանով պետք է բացատրել, որ քաղաքի հին մասում տներն այդքան սեղմ են իրար, փողոցներն ու նրբանցքներն այդքան մեղ: Այդ է պատճառը, որ այստեղ, ինչպես բոլոր մեծ քաղաքներում, բնակարանի խիստ պակաս է զգացվում, իսկ մարդիկ զբաղեցնում են համեմատաբար փոքր բնակատարություններ: Չնայած տներն առանց բացառության ցածրահարկ են, սակայն յուրաքանչյուրում բնակվում են մեծ թվով մարդիկ:

Փողոցում, որով ընթանում էինք, մեծ էր երթևեկությունը. մեծ մասամբ գյուղացիներ՝ սայլերին եզներ, երբեմն նաև ձիեր լծած: Հավանաբար նրանք քաղաքի շուկաներում վաճառել էին իրենց ապրանքը և այժմ վերադառնում էին արևմտյան քաղաքաներձ ավաններն ու գյուղերը: Այնտեղ բազմաթիվ թիֆլիսցիներ ամառանոցներ ունեն, ուր մեկնում են ամռան շոգերին: Ծանապարհի եզրին կանգնած էին մի քանի գոմեշ՝ սև, հաստ, հետ շրջված կոտոշներով: Այս մասերում գոմեշները սովորական երևույթ են: Ես լուսանկարեցի նրանց: Գոմեշներին արածեցնող երկու երիտասարդները մոտեցան ավտոմեքենային և զլուխները խցկելով ապարատի մեջ՝ ուզում էին իրենց գոմեշների

նկարները տեսնել: Ապարատը մի անգամ ևս չիկացրի նրանց աչքի առաջ: Նրանք ծիծաղեցին, սակայն հիասթափված էին՝ նկար չտեսնելով: Կրկին քաղաք իջնելու համար մենք մի պտույտ արեցինք հարավային հին թաղերում՝ Կուրի ձախ ափի վրացական թաղամասում և այդ ափի հայկական ու պարսկական շուկաներում: Տները ցածր էին, մեկ կամ երկու հարկանի, տիպիկ վրացական ոճի պատշգամբներով կամ երկրորդ հարկում բացօթյա վերնասրահներով, ուր ընտանիքն իր օրվա մեծ մասն էր անցկացնում, եթե իհարկե նրատաժ չէր տան առաջ, փողոցում: Տների մեծ մասի ճակատները զարդարված էին գեղեցիկ, մախազարդ փայտաքանդակներով:

Նեղ նրբանցքներում մինչև ուշ երեկո աշխույժ եռուզեռ էր: Իշայանները վաճառում էին մրգեր և այլ ապրանքներ, մերթընդմեք լսվում էր եզ կամ ձի լծած սայլի ճոռք քարե սալահատակի վրա: Բայց ամենաաշխույժ եռուզեռը շուկաներում ու շուկայամերձ հրապարակներում էր, ուր վաճառվում էին ամենատարբեր ապրանքներ և ուր կարելի էր տեսնել մարդկային գրեթե բոլոր ցեղերը՝ վրացի, հայ, հրեա, ռուս, պարսիկ, թուրք, թաթար: Բոլորը վաճառում էին կամ գնում: Տների առաջ, գետնին մատած՝ ընտանիքով աշխատում էին: Արհեստավորների մեծ մասը փողոցում ուներ իր արհեստանոցը: Երկու սենյակից բաղկացած այդ արհեստանոցները ներքին հարդարման խիստ կարիք ունեին: Սովորաբար դրանք չորս պատերից ու հատակից զատ որևէ այլ բան չունեին: Սակայն ամենուր կային գույնզգույն թանկարժեք գորգեր, որոնց վրա նստում էին, և որոնք փոխարինում էին կահույքին:

Հայացքով ուղեկցում էի այս նեղ փողոցներում շարժվող անհոգ մարդկանց խմբերին ու ակամա մտածում, որ այս նույն նրբանցքները ժամանակների ընթացքում բազմիցս դարձել են ողբերգությունների թատերաբեմ, ուր տեղի են ունեցել այնքան անմարդկային ավարառություններ ու սահմոկեցուցիչ սպանություններ պարսիկների, արաբների, թուրքերի, մահմեդականների, թաթարների, վերջերս նաև վրացիների կողմից: Սակայն կյանքի հորձանուտը նորից լցրել է բաց տեղերը ու շարունակում է իր անհոգ ընթացքը: Կուրի դեղնաշագանակագույն ջրերն անձուկ հովտի ոլորապտույտ ճանապարհներով գալարվում են քաղաքի միջով: Քաղաքի վերին մասում գետը բավականին լայնանում է, իսկ հարավ-արևելքում կրկին նեղանում և իր հունը փորում գառիթափ պատերով մի նեղ ձորի միջով, ուր տների վերնասրահները կախված են սրընթաց հոսող ջրերի վրա: Արևելքում, տներից վեր, բարձրանում է վրաց թագավորների հին բերդը: Եկեղեցու աշտարակը, որ վկան է անցած փառքի, պարզորոշ գծագրված է արևակեզ օդում: Ներկայումս ամրոցը վերածվել է բանտի: Թագավորական ամրոցը զնդա՞ն, իսկ հետո՞...

Քաղաքի հին թաղամասերից վեր, գետի արևմտյան կողմում, բարձր լեռան վրա պահպանվել են միջնադարյան «պարսկական» մի ամրոցի ավերակներ՝ պարիսպներով ու աշտարակներով: Դրանից հարավ, լեռան նեղ ձո-

րակողին, տարածվում է բուսաբանական հարուստ այգին: Գեղեցիկ մի երկիր: Այսպես է երգել Բողենշտեդի<sup>3</sup> Միրզա Շաֆին.

*Թավալվում է ոտքերիս տակ աղմկոտ Կուրը դեղին,  
Խայտում են ալիքներն անկանգ,  
Պայծառ ժպտում են արևը, իմ սիրտը, հովիտը,  
Օ՛, եթե պահն այս հավերժանար:*

Երեկոյան մեր բարեկամ Նապոլեոնը հյուրասիրեց մեզ Կուրի ձկներով ու կովկասյան կարմիր ու հրաշք ոսկեգույն գինիներով: Խաղաղ գիշեր է: Հանդարտ խոխոջում են Կուրի ջրերը երկու ափերի միջև: Սևին տվող լեռնալանջերը ձգվում են մինչև մութ երկինք, ուր աստղերի բույլը՝ բռնկված հարավի շողքով՝ իր աղոտ արտացոլումն է գտնում Կուրի ալիքների մեջ: Բարձր լեռան վրա աստղերին ի ցույց թագավորական հին ամրոցն է: Այնտեղ բանտարկյալներ են՝ փակված իրենց խուցերում: Սակայն գիշերվա մեջ մեր աչքի առջև հառնում է իրար հաջորդող պատկերների մի շար. ձիերի սմբակների դրփյուն, ծածանվող սաղավարտներ, ալեկոծվող նիզակների անտառ, ըմբոստ հովատակներ, հնչող փողեր, ամրոց աշխարհին մարտահրավեր նետած արկած ուրոնողների հաղթական տունդարձ: Այս գետի ափին աստղազարդ մի գիշեր երազանքների գիրկն ընկած Շոթա Ռուսթավելին երգել է իր թագուհուն: Իսկ ամրոցում վառվում էին տոնական ջահերը: Այնտեղ իշխում էին գեներալ զրահի փայլը, մետաքսի ու մարգարիտների շողքը, պալատական ասպետների ու ամրոցի գեղեցիկ օրիորդների խմբերը: Նայի՛ր, ահա այնտեղ հպարտ կանգնած է նա՝ թագուհին, գեղեցիկ զլուխն ազատ պահած հպարտ ուսերին, ջահերի լույսի ներքո խորաթափանց աչքերի խորհրդավոր փայլով: Իսկ գիշերի մեջ շեփորվում է մի անուն՝ Թամար:

## ԴԵՊԻ ՄՅԵՆԹ

Նախատեսված էր երեքշաբթի (հունիսի 16-ին) կեսօրից առաջ այցելել Կուրի ափին կառուցվող էլեկտրակայան, որ գտնվում էր Թիֆլիսից մոտ 15 կմ հյուսիս: Պայմանավորվել էինք, որ ավտոմեքենաները մեր հետևից գան ուղիղ ժամը 9-ին, բայց արևելյան ճշտապահությամբ նրանք տեղ հասան ժամը 11-ին: Կիզիչ արևի տակ Կուրի արևմտյան հովտով ձգվող մի լայն, բարեկարգ խճուղով, որ Կովկասից Վլադիկավկազ տանող ռազմավիթական մեծ ճանա-

<sup>3</sup> Գերմանացի բանաստեղծ Ֆ. Բողենշտեդը Արևելքի բանաստեղծների երկերը թարգմանել և իրատարակել է «Միրզա Շաֆու երգերը» խորագրով (1851) (ծան. թարգմ.):



պարհի առաջին հատվածն էր, ընթանում էինք դեպի հյուսիս:

Մենք դիտեցինք էլեկտրակայանի մեծ ջրամբարի շինարարական աշխատանքները: Ինչպես արդեն ասել ենք, այստեղ, Մցխեթ հին քաղաքի մոտ Կուրի հովիտը նեղանում է, ուր երկու կողմի լեռները մոտենում են իրար, և ուր նախկինում Կուրից առաջացած մի մեծ լիճ իր հոսքը պետք է ունեցած լիներ: Ասօհճանաբար գետն իր հունը խորացրել է քարերի մեջ, մեծ լիճը չորացել է, իսկ նրա հատակը, ուր գետի տիղմը ժամանակի ընթացքում վերածվել է հաստ հողաշերտի, այժմ ընդարձակ, բերրի հարթություն է, որ տարածվում է Գորիից արևմուտք մինչև Մուրամ: Սակայն Կուրը Արագվան ընդունելուց հետո էլ շարունակում է հոսել զառիվայր պատերով մի նեղ հունի միջով: Ահա այստեղ կառուցվում է ամբարտակը:

Ամբարտակը կառուցելու առաջին փորձը ցույց տվեց, որ ջրամբարը շատ արագ լցվում է մեծ քանակությամբ ավազով ու տիղմով, որ իրենց հետ բերում են Կուրի պղտոր ջրերը: Մրանք նստում են հատակին՝ առաջացնելով ծանծաղուտներ, որ կասեցնում էր ջրի ազատ հոսքն ավազանում: Անհրաժեշտ էր կառուցել նաև տիղմը մաքրող ջրամբար, որը մաքրվելու էր երկրորդական մի այլ ջրանցքով: Վերջինս կրկին Կուրին միանալու էր ջրվեժից ցած, իսկ ջրի ամբողջ ծավալը ժամանակ առ ժամանակ մեծ ճնշումով դուրս էր մղվելու մաքրող ավազանից:

Պետք է հուսալ, որ խնդրի նման լուծումը կարդարացնի իրեն: Մեր փորձագետ պարոն Դավիյուսի կարծիքով դժվարություններ միշտ կլինեն, քանի որ գետը շարունակ իր հետ բերում է մեծ քանակությամբ տիղմ:

Կովկասի գետերը իրենց ճանապարհին չեն անցնում լճերով, ուր թողնելով նստվածքը, կմաքրեին ջրերը: Այդ պատճառով գետերը միայն վերին հոսանքներում ունեն որոշ թեթություն և ցած են հոսում նեղ հովիտներով ու կիրճերով: Իսկ եթե քարե հատակը փխրուն է, նրանք իրենց հետ բերում են մեծ քանակությամբ տիղմ ու խիճ: Այստեղ նշանակություն ունի նաև այն, որ առանց լճերի արագահոս այդ գետերը հորդառատ անձրևների ժամանակ հեշտությամբ հեղեղվում են ու քանդում բնահողը: Եթե գետն արդեն բերում է տիղմ ու խիճ, ապա ջրի հոսքի արագության մեծացման հետևանքով այն կրկնապատկվում է, ինչպես, օրինակ, հեղեղների ժամանակ գետի ջրերի բերած քարերը մեծությամբ 64 անգամ գերազանցում են սովորականին:

Հասկանալի է արդեն, թե ինչու այդ գետերը հաճախ իրենց հետ բերում են մեծ քանակությամբ ավազ ու տիղմ: Հասկանալի է նաև նրանց գույնը՝ շագանակագույն, դեղին, սպիտակավուն, մուգ մոխրագույն, հաճախ հողախառն, այսինքն ըստ վայրի, որտեղով հոսում են:

Տիղմի քանակությունը, իհարկե, տարբեր է գետերում, օրինակ՝ Արագվան ավելի պակաս տղմոտ է, քան Կուրը:

Ամբարտակի շինարարության առաջին փորձերը ձախողվելուց հետո



Մեծ քանակությամբ տիղմով հոսող Կուրի գետի վերին հոսանքներում կառուցվող ամբարտակի շինարարության ժամանակ:







Դափյուս, Լո Սավիո, Նանսեն, Քվիլինգ, Կարլ  
Չանձնախմբի անդամները Երևանում



Չայկական գյուղ Արագի հովտում՝ ոռոգման ջրանցքով (էջ 115)




Թիֆլիս. Մետեխի թագավորական ամրոցը Կուրի ափին,  
այժմ՝ բանտ (էջ 62)




Նավի տեսակ Սև ծովում (Սամսուն), որ նման է  
հյուսիսում վիկինգների նավերին






Նավի վրա հաց են վաճառում (էջ 39)



Բարձր գնացող նավթամուղը (էջ 47)



Սցխեթի ս. Խաչ եկեղեցին (էջ 65)



Սցխեթ. տեսարան եկեղեցու բարձունքից (էջ 68)






Արագ գետը Սարդարապատի փոքր ջրանցքի մի ճյուղով (էջ 117)




Զրադաց Արագի հովտում (էջ 115)



Ամրոցի ավերակներ Սարդարապատում (էջ 116)





Արդարապատի անապատը (էջ 118)



ԽՆՈՑԻ. Մոլլա-Բայազետ գյուղը (էջ 119)



Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)

Եզներով լծված սայլ՝ բարձած հնդեղեգով Էջմիածին տանող ճանապարհին (էջ 119)






Պարսկական մզկիթի ավերակները Երևանի բերդում (էջ 128)



Երևանը Մեծ և Փոքր Արարատներով (էջ 163)




Արփաչայի կիրճը (էջ 131): Ըստ նախագծի այստեղ կառուցվելու է ամբարտակ



Արփաչայի կիրճը Լենինականի մոտ (էջ 135): Առջևում՝ գյուղժողկոմ Ա. Երզնկյանը (ձախից) և ինժեներ Յակիմովը






Տեսարան Ալաջազ կայարանից (էջ 132)



Բամբակի դաշտ Արագի հովտում. քաղիան անող կանայք




Փողոց Լեմինականում (էջ 148)



Հանձնախմբի անդամները (էջ 130)






Նոր ջրանցքի բացումը (էջ 137)



Ջուրը հոսում է նոր ջրանցքով (էջ 138)




Երեխաները «Մերծարևելյան նպաստամատույցի» Լենինականի մասնաճյուղում (էջ 143)





Իլիկ մամուռ արջիկներ (էջ 133)  
Ալազյազ կայարան



Տղաների ամառային ճամբարի պետը (տե՛ս էջ 147): Տիպիկ հայկական դեմք (հմմտ. էջ 196)

գերմանական մի ընկերություն ստանձնել է այդ աշխատանքը: Նախնական հաշվարկը 18000 ձիաուժ հզորության համար է: Լրիվ շահագործումից հետո հզորությունը պետք է հասնի 30000-ի:

Լուռ ճանապարհ ընկա դեպի Ս. Խաչ եկեղեցին, որ մեկուսի կանգնած էր հովտից վեր, մի գառիթափ լեռան վրա: Դափյուռը և Զվիլիմզը հետևեցին ինձ, շուտով միացավ նաև գիրուկ լրագրողը, որ Թիֆլիսից ուղեկցում էր մեզ, և էլի ինչ-որ մեկը, որը, ինչպես ասում էին, քաջատեղյակ էր եկեղեցու պատմությանը: Վերելքը դժվարին էր, օրը՝ շոգ: Եկեղեցուց փոքր-ինչ ցած մի բարձրություն հաղթահարելով՝ մենք անակնկալի եկանք մեր առջև փռված փոքրիկ լճակի տեսքից, որի ափերը բոլոր կողմերից պատած էին սպիտակափայլ նստվածքով: Այն սառցաշերտի տպավորություն էր թողնում, սակայն հավանաբար աղային գոյացություն էր: Լիճը գտնվում էր հոսք չունեցող մի գոգահովտում: Եվ շրջապատի լեռնալանջերի անձրևաջրերի քանակն ավելին չէր, քան լճի ջրի ծավալը, որ չոր կլիմայի պայմաններում գոլորշիանում էր փոքրիկ, բաց ջրամակերեսից՝ առաջացնելով ափաշերտի աղային գոյացությունը:

Շարունակում ենք ճանապարհը դեպի վեր, դեպի եկեղեցին: Մեր բարեկամ բարեհամբույր, գիրուկ լրագրողը թաշկինակը կապել էր ճաղատ գլխին ու թվում էր, ուր որ է կհավի շոգից: Սակայն ոչինչ հաշվի չառնելով՝ աննկուն ու քաջաբար դոփում էր գառիվեր ճանապարհով մեր հետևից:

Եկեղեցին կանգնած էր մի գահավեժ անդունդի եզրին, որ հասնում էր մինչև Արագվայի ու Կուրի ափերը: Լեռնալանջի մատչելի հատվածը նախկինում պաշտպանված էր փոքրիկ պահակային աշտարակներ ունեցող բարձր պարսպով, որ բնորոշ է այստեղի եկեղեցական համալիրներին: Ժամանակին զգացվել է դրա կարիքը, քանի որ ավազակախմբերը հողմերի պես բարձրանում էին լեռները, հարձակվում, թալանում ու դաժան հաշվեհարդար տեսնում ամենուր: Ներկայումս պարիսպները քանդված են, միայն ավերակներն են մնացել: Եկեղեցին բավականին լավ է պահպանվել, զմբեթի փայտածածկը խնամքի վկայություն է: Ավերակված պարիսպների ներքին մի քանի սենյակներում քնակվում է մի վանական, որը պահպանում է եկեղեցին և ժամանակ առ ժամանակ հնչեցնում մեծ զանգերը, որ կախված են բակում մի սև, կամարակապ, փայտաշեն պատվանդանից:


Ըստ վրաց հետազոտողների եկեղեցու կառուցումը սկսվել է 590 թ. հետո մթավար (այսինքն՝ իշխանավոր) Ստեփան Առաջինի օրոք, ավարտվել է մթավար Ադրնեբտեհ Առաջինի օրոք (604/7—620): Վերջինիս որդին՝ մթավար Ստեփան Երկրորդը, կառուցել է պարիսպներն ու օթևանները (620 թ. հետո)<sup>4</sup>: Ըստ առասպելի եկեղեցին կառուցվել է այն վայրում, ուր սուրբ Նինոն, որ 4-րդ

<sup>4</sup> Տե՛ս J. Strzygowsky: Die Baukunst der Armenier und Europa, h. I, էջ 84, h. II, էջ 765, Վիեննա 1918: Հմմտ. նաև O. G. von Wesendonk: Archeologische Anzeige 1925, սյունակ 70:

դ. սկզբին Միրիան քազավորի օրոք քրիստոնեություն էր տարածում Վրաստանում, առաջին անգամ կանգնեցրեց խաչի՝ խաղողի մատերից պատրաստված խորհրդանիշը: Եկեղեցու ներսում կա քարե մի բարձր կառույց, որը վանականի վկայությամբ նախկինում եղել է կրակապաշտական գոհասեղան: Եթե դա ճիշտ է, ուրեմն այս լեռը հնուց ի վեր սրբավայր է: Դրանով էլ պայմանավորված է խաչը հենց այստեղ կանգնեցնելը: Սրբավայրը անցել է քրիստոնյաներին, հետագայում կառուցվել է նաև եկեղեցի: Սա ճշմարտանման է, և առասպելն ինքը վկայում է, որ այս կողմերում շատ բնական է համարվել նախկին կրոնի սրբավայրի փոխակերպումը նորի: Այժմ գոհասեղանը ծածկված է սրբերի ու խաչելության նկարներով:

Եկեղեցու հիմնական ձևը քառակուսի է՝ յուրաքանչյուր կողմում կիսաշրջանաձև ելուստներով կամ արսիդներով: Արևմտյան ու արևելյան արսիդները ավելի ցցուն են, այսինքն կրկնակի խորն են, քան հյուսիսայինն ու հարավայինը: Այդ պատճառով եկեղեցին ներսից առավել ձգված է արևելքից արևմուտք ուղղությամբ, քան հյուսիսից հարավ: Մեծ քառակուսու անկյուններում կան գլանաձև փոքր խոռոչներ: Քառակուսու վերևում հանգչում է գմբեթի աշտարակի կամարը, որ դրսից ութանկյուն է և կրում է սրածայր տանիք: Եկեղեցու հիմնական սրահը դրսից յուրաքանչյուր անկյունում ունի փոքրիկ, ուղղանկյունի կից կառույցներ, որոնք լրացնելով ուրվագիծը՝ եկեղեցուն տալիս են ուղղանկյան ձև: Արսիդները 3 կամ 5 քարաչափով դուրս են ցցված ուղղանկյան կողմերից (հմնտ. հատակագծի հետևյալ գծագիրը):

Այսպիսի գմբեթակիր կառույցներ՝ ներսից քառակուսի, արսիդներով կամ



Մցխեթի Ս.հաչ եկեղեցին

Արևմտյան կողմը (հատակագծի ներքևում) բարձրանում է անդունդի եզրից (ըստ Յ. Ստրժիգովսկու. նույն տեղը):

շեղամույթերով, բնորոշ են Վրաստանին ու Հայաստանին, ուր կան մնաց բազմաթիվ եկեղեցիներ: Այդ մասին արդեն խոսել ենք՝ կապված Ս. Սոֆիա եկեղեցու հետ: Սա վրացական և հայկական եկեղեցաշինության հիմնաձևն է, որ ձևավորվել է 4—5-րդ դդ.:

Թմբուկի կողերին կա չորս նեղ պատուհան, որոնք աղոտ լուսավորում են: Մի քիչ էլ լույս քափանցում է արսիդների նեղ պատուհաններից, որ սակայն չի կարող ցրել եկեղեցու մեծ սրահի դարերով առասպելացած կիսախավարը: Եկեղեցու ներսը շատ հասարակ է՝ մերկ, անզարդ քարե պատերով: Միայն արևելյան կիսաշրջանաձև ելուստի վրա կան որմնանկարների հետքեր, որոնք քաղված են մթության մեջ: Դրսից արսիդների պատուհանների վերևում, քարի վրա կան մի քանի բարձրաքանդակներ, վերջիններս վկայում են որոշակի դեկորատիվ արվեստի գոյության: Այդ բարձրաքանդակներից մեկն իր բովանդակությամբ ու ֆիգուրների դասավորությամբ զգալիորեն նման է Նորթումբերլանդի հայտնի Ռոսվել խաչի բարձրաքանդակներին<sup>5</sup>:

Ինչպես առհասարակ հայկական եկեղեցիների, այնպես էլ Սուրբ Խաչ եկեղեցու առանձնահատկությունը գեոմետրիային է, որ մի քանի աստիճանով դրսից շրջապատում է եկեղեցու պատերը: Այն, ինչպես ավելի ուշ կխոսենք այդ մասին, գալիս է հեթանոսական տաճարներից: Եկեղեցին իր ձևով ու չափերով նկատելի նմանություն ունի Էջմիածնի մոտ գտնվող Հոփսիսի մեծ եկեղեցուն, որի մասին կխոսենք հետո (տե՛ս գլուխ IX):

Եկեղեցու ներսի մերկությունը այն տպավորությունն է բողոմում, որ եկեղեցին կամ քիչ է օգտագործվել, կամ անավարտ է: Այնինչ դա պայմանավորված է նրանով, որ Վրաստանում եկեղեցիները մեծ մասամբ կառուցված են բարձր, անմատչելի լեռների վրա և հավատացյալ ժողովրդի ու Տեր Աստծու համար հեռվից են տեսանելի, ուր այցելելը, անշուշտ, այնքան էլ դյուրին չէ: Այստեղ տեղին է հիշել ֆրանսիացի Շարդենի խոսքը, որ 1672 թ. ճանապարհորդել է Վրաստանով.

«Վրացիները... ունեն մի շատ զարմանալի սովորություն: Նրանք իրենց եկեղեցիների մեծ մասը կառուցել են բարձր լեռների վրա... Դրանք երևում ու ողջունում են մեզ երեք կամ չորս մղոն հեռավորությունից, սակայն անհնար է այնտեղ գնալը: Կարելի է ենթադրել, որ դրանց մեծ մասը տասը տարին մեկ է բացվում: Չեմ կարողանում գտնել այդ տարօրինակության պատճառը, կարծում եմ՝ անմատչելի վայրերում եկեղեցիներ կառուցելու սովորությունը զարդարանքի ու դրանք բարվոք վիճակում պահելու խնայողությունից է»:

Այդ սովորությունը կարող է նաև կապված լինել պարսիկների Աստծո պաշտամունքի հետ: Այդ մասին Հերոդոտը (I, 121) գրում է. «Նրանք սովորու-

<sup>5</sup> Մտրժիգովսկի, հ. II, էջ 719 և հաջորդները:



թյուն ունեն բարձրանալ բարձր լեռներ ու այնտեղ զոհեր մատուցել Ջևսին՝ նրա անունով կոչելով ամբողջ երկիրը»։ Սա հաստատում է այն ենթադրությունը, որ լեռան վրա եղել է հին գոհարան։

Մեծ եկեղեցու կողքին կանգնած է երկարավուն, նավանման, բավականին փոքր գմբեթակիր մի այլ եկեղեցի (տես 66 էջի գծագիրը), որի կառուցումը վերագրում են մթավար Գուրամ Առաջինին 545-ից 586 թթ. միջև։ Մենք մտանք աբսիդով փոքրիկ մի սրահ, ուր կար քարե նստարան, որը, ինչպես ասացին, հին թագավորների գահաթոռն էր։ Ահա ակնածանքով կանգնած են ես այն նույն սրահում, այն քարի առաջ, որի վրա ժամանակին նստել է նա՝ Թամարը, իր ճառագայթող գեղեցկությամբ։ Ողջամիտ դատելով, սակայն, սա քիչ հավանական է։ Վրաց տիրակալներն արդեն 6-րդ դ., այս եկեղեցու կառուցումից առաջ թողել էին Մցխեթը։ Իսկ Թիֆլիսից գալ այս քարե նստարանին նստելու համար՝ անհավանական է բլում։

Կառույցի արևմտյան պատի ուղղությամբ դեպի Արագվա գահավիժող անդունդի եզրին մի ներքնատան մեջ կար գրեթե ամբողջովին քարապատ մութ խուց, ուր երկար տարիներ ապրել էր մի բարեպաշտ ճգնավոր։ Մինչև մահանալը ամեն օր նրան կերակուր են բերել իր խուցը։ Մահից հետո խուցը որմնափակել են, իսկ նրա սուրբ ոսկորները պետք է որ դեռ այնտեղ լինեն։

Հնում մարդիկ տարօրինակ ձևով իրենց սրբության աստիճանը բարձրացնում էին անգործունյա, մեկուսի կյանք վարելով՝ առանց մարդկությանը օգտակար լինելու, մի հակուժ, որն ի դեպ միջնադարյան քրիստոնեությունը մոտեցնում է հնդուական բարեպաշտությանը։ Բարեպաշտ կյանք վարելու համար որքան խիստ էր մեկուսացումը մարդկանցից, ինչքան չնչին էր բարեպաշտության պտուղների օգտակարության հնարավորությունը, այնքան սուրբ էր համարվում ճգնավորը։ Այսինքն՝ բարեպաշտության բարձրագույն կետը կյանքի ավարտն էր ու նման մի խցում բարապատված մնալը։ Ինչո՞ւ։ Ոչ մի օգուտ այս բոլորից, բացի այն աշխարհում քո բնակարանը պատրաստելուց։ Եսակենտրոն կյանքի հայեցողության յուրատեսակ խղճուկ մի ձև։

Դուրս եկա եկեղեցուց և անդունդի եզրին կանգնած դիտում էի բավականին ցած տարածված Արագվայի ու Կուրի հովիտները, երկու գետերի միջև ցամաքալեզվակի վրա տեղադրված Մցխեթ քաղաքը՝ իր Մայր տաճարով, ու հեռվում Կովկասի սպիտակ գագաթներով կապույտ լեռնաշղթաները։ Ինձ մոտեցավ մեր բարեխամբույր լրագրող բարեկամը՝ զինված թղթով ու մատիտով։ Նա խնդրեց, որ ես գրի առնեմ իմ տպավորությունները պատմական այս վայրերի մասին՝ իմ մաղթանքները հղելով վրաց ժողովրդին։ Նրա համար դժվար էր հաշտվել այն մտքի հետ, որ ես կարող էի բաց թողնել առիթը՝ վրաց ժողովրդին հայտնելու իմ մեծարժեք տպավորությունները։

Մեր եկած ճանապարհով ցած իջանք ու մեքենաներով ճանապարհիվեցինք դեպի Մցխեթ։ Երբեմնի մայրաքաղաքն այսօր գյուղ է՝ իրար սեղմ կպած

խղճուկ տնակներով, առանց մրգատու այգիների կամ կանաչ ծառերի։ Այնուամենայնիվ մենք այստեղ Վրաստանի սուրբ հորի վրա ենք, սուրբ՝ դեռևս հեթանոսության ու կրակապաշտության ժամանակներից, մենք երևի վաղնջական բնօրրանում ենք։ Ուրիշ ոչ մի երկրամաս այդչափ հիշողություններ չի պահպանել վրաց հնագույն պատմությունից։ Այստեղ միանում են Կուրի ու Արագվայի հովիտները, իրար են հանդիպում հարավ-արևելքից՝ Կասպից ծովից ու Պարսկաստանից, հյուսիսից՝ Կովկասի լեռնանցքով ու Մագուրամոյի հովտով, արևմուտքից՝ Սև ծովից, Կողքիսից ու Իմերեթից եկող տարանցիկ ճանապարհները։ Բնական է, որ այս վայրը արդեն հնագույն շրջանում եղել է տարանցիկ առևտրի ու մշակույթի կարևորագույն կենտրոն։ Երջակայքի բազմաթիվ քարանձավներ, որ հնում երկար ժամանակ բնակեցված են եղել, հետագայում ձեռք են բերել կրոնական նշանակություն։ Սրբազան լեռների վրա ու սրբազան պուրակներում հազարամյակներ առաջ կային հեթանոսական զոհարաններ ու սրբավայրեր։ Այս երկիրն եղել է Վրաստանի առաջին թագավորների բնակավայրը, այստեղ է առաջինը քարոզվել քրիստոնեություն, այստեղ է կառուցվել քրիստոնեական ազգային սրբավայրը՝ Մցխեթի Մայր տաճարը։ Վերջապես հարյուրամյակներ շարունակ այստեղ է եղել վրաց եկեղեցու կաթողիկոսի նստավայրը։ Ցածր տների շարքերից վեր է խոյանում Մայր տաճարի գեղեցիկ շենքը։ Մենք կանգ առանք մի դարպասի առաջ, որ նման էր ամրոցի մուտքի։ Եկեղեցին շրջապատված էր բարձր պարբապով՝ հրակնատներով, կլոր կամ քառանկյունի ամուր բաստիոններով։ Այն կարծես միջնադարյան լավ ամրացված ասպետական բերդ լիներ։ Դա հավանաբար, ինչպես հետո իմացա, հարկադրված անհրաժեշտություն էր ավազակային հաճախակի հարձակումների ու մշտական պատերազմների դեմ։ Վրաց ժողովրդի պատմությանը բնորոշ մի հատկանիշ։ Երկրի հոգևոր խաղաղ կենտրոնը միշտ պետք է պաշտպանվեր ամուր բերդապարիսպներով, և այստեղ, ինչպես ոչ այլուր, բոլոր ժամանակներում խաղաղությունը ձեռք է բերվել սուրը կողքից կախած։ Երկպառակությունների ժամանակ պարիսպների ներսում ապաստան են գտել նաև քաղաքի բնակիչները։

Դարպասը բացվեց մեր առաջ, մենք մտանք մի ընդարձակ հրապարակ, որի կենտրոնում եկեղեցին էր՝ իր կամարներով ու ճակտոններով, վեր խոյացող բարձր գմբեթով։ Աջ կողմում պարիսպների հարևանությամբ կանգնած շենքը եպիսկոպոսի բնակարանն էր։ Վերջինս հարգալից մեզ ընդառաջ եկավ։ Նա մի բարեկամ, ավելի քան վեց ոտնաչափ հասակով, գեղեցիկ, կանոնավոր դիմագծերով անձնավորություն էր, ուներ սև, փայլուն մորուք, հագել էր մինչև կոճերը հասնող սև պարեգոտ, գլխին ուներ սև, եպիսկոպոսական բարձր խույր։ Նրան ուղեկցում էին սքեմով մի վանական ու մի այլ սպասավոր կղերական։ Եպիսկոպոսը մեզ ողջունեց ու առաջնորդեց եկեղեցի։ Պարզ, վրացական ոճի կիսաշրջանաձև կամարներով, բարձր գմբեթով ու ամուր պա-

տերով եկեղեցին թողնում էր վայելուչ տպավորություն: Մեծ եկեղեցու կողքի փոքր եկեղեցին, եպիսկոպոսի ասելով, նախնականն է: Կառուցվել է Զ. Ծ. Կ. 5-րդ դ. վերջին. որտեղ ամփոփված են Քրիստոսի խաչելության վկա դարձած մարդու ոսկորները: Մի այլ ավանդության համաձայն եկեղեցին կառուցվել է Քրիստոսի վարչամակի գտնված վայրում, որ Գողգոթայից վերցրել էր Հուդան: Պատմվում է նաև, որ սրբուհի Նինոն է Քրիստոսի վարչամակը բերել Երուսաղեմից:

Մայր տաճարը բազմիցս դարձել է թշնամիների ավարառությունների զոհ, ու նրա ճակատագիրն արտացոլում է Վրաստանի ճակատագիրը: 1318 թ. ավերվել է երկրաշարժից: Գեորգ Չորրորդ թագավորը կրկին կառուցում է եկեղեցին, սակայն շատ չանցած այն բաժին է դառնում մահմեդականների վայրագություններից: Ալեքսանդր թագավորն ավերակներից նորից կանգնեցնում է տաճարը, այնուհետև մի քանի անգամ ավերվելով լեզգի ավազակախմբերի հարձակումներից՝ երկու անգամ վերանորոգվում է:

Վրաց շատ թագավորներ են թաղված այս եկեղեցում: Քարե սալիկներով ծածկված են նրանց հանգստարանները, սակայն այդ հին գերեզմաններն ևս մասամբ ավերվել են թշնամիների հարձակումներից: Եկեղեցին կառուցող թագավորը թաղված է սրահի մեջտեղում: Հարթ գերեզմանաքարին ոչինչ չկար գրված: Դրանով կամխվել էր գերեզմանի բացվելն ու ավերվելը պարսիկների կամ թուրքերի հերթական հարձակումների ժամանակ: Նախավերջին թագավոր Հերակլ Երկրորդը թաղված է գոհասեղանի առջև, աջ կողմում: Նա, ինչպես իմացանք, մահացել է 1798 թ. 89 տարեկան հասակում, վարել է 60 տարբեր պատերազմներ: Հերակլ Երկրորդի ու նրա մարտիկների մասին է ասել Ֆրիդրիխ Մեծը՝ հորպրելով իր զինվորներին, որ կռվում քաջությամբ նմանվեն վրացիներին: Այս պատմելիս եպիսկոպոսի աչքերը փայլում էին հպարտությունից: Հերակլ թագավորի կողքին հանգում է նրա դուստրը՝ Թեքլեն, որ մահացել է անցյալ դարի առաջին կեսին: Չոհասեղանի առջև, ձախ կողմում, վերջին թագավոր Գեորգ Երրորդի գերեզմանն է: Նրա մահից հետո, 1801 թ., երկիրը հանձնվեց ռուսներին՝ պարսիկներից փրկվելու համար:

Հետաքրքիր են Մցխեթի եկեղեցու տարբեր գույնի քարերից համակցված ղեկորատիվ նախշերը: Սա հատուկ է հայկական եկեղեցիներին, որ հետագայում տարածում է գտել Իտալիայում, հատկապես Ճեմովայում ու Ֆլորենցիայում: Ըստ Լեման-Հաուֆթի ու Բելքի՝ այս ձևը հայերից առաջ Վանա լճի շրջանում օգտագործվել է խալդեերի ճարտարապետության մեջ:

Մցխեթ գյուղից հյուսիս գտնվում է Սամբավոր միանձնուհիների վանքը՝ մի մեծ եկեղեցով, ուր թաղված են քրիստոնյա առաջին թագավոր Միրիանն ու իր կինը: Եկեղեցու բակում՝ այս երկրում քրիստոնեության քարոզիչ սրբուհի Նինոյի բնակված խցի տեղում կանգնած է մի բարդի: Սակավ են թագավորական ամրոցների ու այլ շինությունների հետքերը, քանի որ դրանց ավերակները

ըր ծածկված են հողի տակ: Որևէ այլ բան չկար այս գյուղում, որ կարողանար ներկայացնել հին փառքի ու ասպետական կյանքի հեռավոր պատկերները, եկեղեցական ամենամյա տոները: Այսօր էլ տարին մեկ անգամ Վրաստանի բոլոր ծայրերից այստեղ են գալիս շինականներ՝ նշելու իրենց ազգային եկեղեցական տոնը: Մարդկանց այդ հավաքներն, անշուշտ, յուրատեսակ հետաքրքիր իրադարձություններ են:

#### IV

### ՀԱՄԱՈՑ ԱՎՆԱՐԿ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ<sup>1</sup>

Վրացիների երկիրը տարածվում է Մեծ Կովկաս լեռնահամակարգից հարավ, հյուսիսային սահմանն անցնում է լեռնաշղթաների բարձր գագաթներով: Արևելքից Վրաստանը սահմանակից է Դաղստանի լեռնաշխարհին և Ադրբեջանի հարթություններին, հարավից՝ Հայաստանին և ներկայիս թուրքական Կարսի մարզին, արևմուտքից՝ Սև ծովին: Ընդհանուր առմամբ այն ընդգրկում է Կուրի և Ռիոնի ընդարձակ ու բերրի գոգահովիտները, հյուսիսում Կովկասից, իսկ հարավում Փոքր Կովկասից և Հայկական բարձրավանդակից դեպի այդ երկու գետերն իջնող լեռնալանջերը՝ իրենց բազմաթիվ անձուկ հովիտներով: Հանրապետությունն ունի մոտ 73000 քառ. կմ տարածք և երեք միլիոն բնակիչ:

Երկիրը, ուր բնակվում էին վրացական ցեղերը, հնում մասնատված էր բազմաթիվ արարածաշրջանների: Դրանցից կարևորներն էին Կախեթը, որ տարածվում էր Կովկասի հարավահայաց լանջերից արևելք և հայտնի էր իր գինիներով, Քարթլին՝ երկրի սիրտը, որ ընդգրկում էր Կուրի հովիտը՝ Թիֆլիսով, և Արագվան, որ բռնում էր Արագվայի հովտի հյուսիսային մասը: Մուրամի լեռնաշղթայից արևմուտք տարածվում էր Իմերեթը՝ Քութայիս մայրաքաղաքով Ռիոն գետի վրա. Ռիոնից հյուսիս, Իմերեթի և Սև ծովի միջև, Մեգրելիան էր, հյուսիսում, Կովկասյան լեռներում՝ Սվանեթը, իսկ ծայր արևմուտքում, Սև ծովի ափին՝ Աբխազիան: Ռիոնից հարավ ծովագրին տարածվում էր Գուրիան, իսկ երկրի ներսում, լեռների մեջ, Մեսխեթն ու Սամցխեն էին:

Երկրի տարածքը միավորում էր ծայրահեղ հակադրություններ՝ ընդարձակ, բերրի գետահովիտներ, սքանչելի լեռնահովիտներում աճած փարթաւ

<sup>1</sup> Վրաստանի պատմության լավագույն ակնարկներից է Արթուր Լալայի գիրքը՝ Das georgische Volk, Dresden, 1903 թ.: Տե՛ս նաև W. E. D. Allen, The Caucasus: In the Nation of To-day, edited by John Buchan. Bind: Baltic and caucasian states. London 1923 թ.: Հմնն. նաև «Georgia» հոդվածը Բրիտանական հանրագիտարանում, 2-րդ հրատ., 1910 թ.: M. F. Brosset: Histoire de la Georgie. St. Peterburg 1849—1852: D. G. von Wesendonk: Über georgische Heldentum. Leipzig 1924 թ.:



անտառներ, կիրճեր ու երկինք խոյացող լեռներ: Մենք գտնվում ենք Արևելքի ասպետական աշխարհի հեքիաթային մի երկրում՝ հռչակված իր քաջարի մարտիկներով, պալատական այրերով, գեղեցիկ, վայելչատես կանանցով: Երկրի նման արտասովոր է նաև վրաց ժողովրդի պատմությունը: Նա պատկանում է այն սակավաթիվ ժողովուրդների թվին, որ չնայած իր հզոր հարևանների դեմ ինքնուրույնության ու ազատության համար մղած անվերջ կռիվներին, 2000 տարի շարունակաբար տվել է տիրակալների հաջորդական կամ շատ թե քիչ ընդմիջված մի ամբողջ շարք: Ռազմասեր մի ժողովուրդ, որի գոյատևման տարրերից մեկը պայքարելու ունակությունն է, իրար հանդիպելիս որպես բարեմաղթության խոսք հնչում է՝ Հաղթանակ քեզ, պատասխանը՝ Նաև քեզ:

Որտեղից են եկել վրացիները<sup>2</sup> և երբ են հաստատվել այս երկրում, հայտնի չէ: Հույները նրանց իբրևներ են կոչել, առաջին հիշատակությունը գտնում ենք Ստրաբոնի<sup>3</sup> մոտ (ծն. 63 թ. Ք. ծ. ա.), իսկ Հերոդոտը<sup>4</sup> այս երկրում հիշատակում է բազմաթիվ ցեղեր՝ կոլխեր, տիբերներ, մոսխեր, ավելի հեռու, հարավում բնակվում էին ասապեյրներ և ալարոդներ, հարավ-արևմուտքում՝ մակրոներներ, մոսյունոքերներ և մարեր: Անշուշտ, այս ցեղերից շատերն են մասնակցել վրաց ժողովրդի կազմավորմանը: Մոսխերը նախկինում բնակվում էին Փոքր Ասիայում, հավանաբար Փռուզիայում և հանդիսացել են փռուզիացիների նախորդները: Շարունակ ետ մղվելով վերջիններիս և հայերի կողմից՝ նրանք տիբերների հետ միասին շարժվում են դեպի հյուսիս-արևելք և բնակություն հաստատում այսօրվա Վրաստանի մեծագույն մասում: Դարեհ Վրչտասայանի ժամանակ մոսխերը հսկում էին Կովկասի լեռնանցքների հարավային ելքերը, այսինքն նրանց բնակության վայրերն էին Կուրի և Արագվայի ավազանները: Նրանց անունը պահպանվել է Մեսխեթ երկրանվան և Մեսխեթի լեռնաշղթայի (Սուրամի լեռնաշղթայի հետ), գուցե նաև Մցխեթ քաղաքի անվան մեջ: Այստեղ կամ որևէ այլ տեղ կանգնած է եղել նրանց տաճարը՝ նվիրված «Լոյկոթեա» (Կուրելի կամ Անահիտի? նմանությամբ) սպիտակ աստվածուհուն. նրանք ունեցել են և մի պատգամախոս (հմմտ. Ստրաբոն 11-րդ, 2, 17): Վրացիները, ըստ հույների՝ իբրևները կարող էին եկած լինել հարավից, և մոսխերը մասամբ դուրս մղվել կամ ձուլվել են նրանց հետ:

Վրացիներն իրենց կոչում են քարթվելի կամ քարթուլի (քարթու-ից), որից

<sup>2</sup> Վրաստան (բնագրում՝ Georgien) անունն ավելի ուշ շրջանի ծագում ունի: Հնարավոր է, որ այն առաջացած լինի Գուրջիանից՝ Կուրի հովտի վերի շրջանում բնակվող ցեղերից մեկի անունից: Կարծես առաջինը արարներն են այս անունով կոչել ամբողջ երկիրը: Ըստ մեկ այլ ենթադրության Վրաստան անունը ծագում է հին իրանական Կարկահից, որ դարձել է Գորգա և այլն:

<sup>3</sup> Strabo, XI, 3, 1—6.

<sup>4</sup> III, 94; I, 104; II, 104; VII, 78—79.

էլ երկրի անվանումը՝ Քարթլի (Քարթուլիա): Ինչպես նշում է Լեման-Հաուսիթը<sup>5</sup> Քարթու-ն նման է Կարդուք-ին. դա այն ժողովրդի անունն է, որին հիշատակում է Քսենոփոնը<sup>6</sup> (401 թ. Ք. ծ. ա.) որպես Վանա լճից հարավ, Տիգրիսի արևելյան ակունքների շրջանում տարածված երկրի բնակիչներ: Կարդուքը կարող է Կարդու-ի (ինչպես Հայքը հայ-ից) հայերեն հոգնակերտը լինել, որ հավանորեն նույն բառն է, ինչ քարթու-ն, քանի որ այստեղ վրացերեն թ հնչյունը մոտ է դ-ին: Կարծիք կա սակայն, որ կարդուքները հետագա քրդերն են. դա հիմքից զուրկ տեսակետ է, քանի որ քրդերն այս կողմերն են եկել Պարսկաստանից շատ ավելի ուշ շրջանում:

Վրացական հետագա ցեղերի՝ քարթվելների, իմերելների, մեգրելների, սվանների, լազերի և ուրիշների նախնիներ կարելի է ենթադրել քարթուլներին, մոսխերին, տիբերներին, կոլխերին, ճաներին (լազեր), իսկ կախեթցիների համար՝ մասամբ աղվանական ցեղերին:

Վրացերենը և հարավ կովկասյան լեզուները հնդեվրոպական չեն, ինչպես հայերենն է: Լեզվաբաններին մինչ օրս չի հաջողվել ցույց տալ դրանց պատկանելությունը որոշակի լեզվախմբի: Լեման-Հաուսիթը (նույն տեղ, հ. 2, էջ 467—497) ենթադրում է, որ ինչպես լեզուն, այնպես էլ ժողովրդական ավանդույթները պարունակում են հատկանիշներ, որոնք վկայում են վաղեմի ազգակցության մասին՝ Հայաստանում<sup>7</sup> ապրած նախահայկական խալդ ժողովրդի հետ: Վերջինիս լեզուն հավանական ազգակցություն ունի նաև միտանականի կամ նախախեթականի հետ:

Դամբարանների պեղումները ցույց են տալիս, որ երկիրը նախապատմական շրջանում բնակեցված է եղել երկայնագանգ ժողովուրդներով՝ բոլորովին տարբեր նոր ժամանակների վրացիներից, որոնք գերազանցապես ցայտուն կարճազանգ են:

Ֆ. Բայրնը Սցխեթի մոտ Սամբավոր վանքի շրջակայքում բրոնզեդարյան բազմաթիվ քարե դամբարաններից հայտնաբերել է միայն երկայնագանգեր: Կարճազանգ ցեղերն են ավելի ուշ եկել այս կողմերը, թե՞ երկայնագանգերն ավելի շատ են եղել, հայտնի չէ: Նույնքան քիչ բան գիտենք նաև վրաց լեզուն նախնական կրողների մասին: Արմենոլոյ տեսակի կարճազանգների գերակշռող մեծամասնությունը խառնված է կարճազանգ լեռնային ցեղի հետ. ցածրադիր գլուխ, խոշոր կառուցվածք և լայն դեմք: Հետո, հավանաբար ավելի ուշ շրջանում, այդ ցեղերին հատկանիշներ են անցել շեկ երկայնագանգ-

<sup>5</sup> E. F. Lehman-Haupt, Armenien einst und jetzt, h. II, էջ 104, 1910 թ.:

<sup>6</sup> Anabasis, IV, 1—3.

<sup>7</sup> Հարց է ծագում. կա՞ մոտավոր կապ այդ երկու անունների միջև՝ մի կողմից Խալդի կամ Խալդու, մյուս կողմից վերը նշված Կարդու կամ Քարթու: Դա կախված է այն բանից, թե այդ լեզվում հնչյունափոխությունը թույլ տալիս է լ-ի անցումը դ-ի: Եթե իրոք անունները նույնն են, ապա կարելի է ենթադրել, որ այդ երեք ցեղերը ծագել են մեկ արմատից:

գերից: Բացի դրանից, առկա են նաև տարբեր մուգ երկայնագանգերից, հավանաբար երկրի հնագույն բնակիչներից մնացած: Ժամանակի ընթացքում երկիրը բնակեցվել է նաև բազմաթիվ հայերով, մասամբ նաև՝ հրեաներով:

Տիպիկ վրացին բարձրահասակ է և բարեկազմ: Գլուխը կարճազանգ է, դեմքը՝ միջին նեղության, քթամեջք՝ բարձր, քիթը՝ միջին երկարության ու մուտ՝ արմենոիդ տեսակի փոքր-ինչ ցած թեքված քթածայրով: Մազերը սև են, բեղերը՝ թավ, աչքերը՝ մուգ: Տղամարդկանց, ինչպես նաև կանանց մեծ մասը գեղեցիկ է:

Ժողովուրդն ունի հոգևոր բարձր ձիրքեր: Ազնիվ է, գվարթ, սրտաբաց, անհոգ, հաճախ փոքր-ինչ թեթևամիտ ու անգործունյա, սակայն օժտված է ասպետական վայելչությանը ու քաջությանը, ջերմ հյուրասիրությանը: Երկարատև, դաժան կռիվներից մի քիչ կտրված, նախաձեռնությունը որոշ չափով կորցրած՝ ապրում է նա ավելի շատ փառապանք անցյալի հիշողությամբ, քան ձգտում առաջընթացի և զարգացման: Հատկանշական է, որ ժողովուրդը մինչև օրս մասամբ ապրում է միջնադարում, և վրացական լեռնային շատ ցեղեր, ինչպես խեզուրները, պահպանել են խաչակրաց արշավանքներից մնացած հին օրագրահները, վահաններն ու թրերը և դրանք գործածում են տոնական հանդիսությունների ժամանակ:

Վրացիները հենց սկզբից բաժանվում էին տարբեր ցեղերի՝ իրենց առաջնորդներով (թավալի), իսկ ցեղերն էլ իրենց հերթին բաղկացած էին տարբեր էթնիկական խմբերից: Արևելյան Վրաստանում ամենաազդեցիկ ցեղապետը Մցխեթի առաջնորդն էր: Քաղաքը գտնվում էր երկու կարևոր առևտրական ճանապարհների խաչմերուկում. մեկը գալիս էր Հնդկաստանից և Պարսկաստանից Կասպից ծովի հարավով, այնուհետև Կուր գետով, ապա Ռիոնի գետահովտով դեպի Սև ծով: Մյուսը գալիս էր Հայաստանից, անցնում Արագվայի հովտով, ապա Կովկասով դեպի Ազովի ծով ու այնտեղից էլ ավելի հեռուներ:

Երկիրը Դարեհի և Քսերքսեսի ժամանակներում արդեն գտնվում էր Պարսկաստանի գերիշխանության ու ազդեցության տակ: Պատմում են, որ իբր Ալեքսանդր Մեծը զրավել է այն, Մցխեթում նշանակել փոխարքա՝ Արևելյան Վրաստանն ապահովելով Փառնավազի տիրապետությունից, որը Ք. ծ. ա. 302 թ. դարձել էր երկրի առաջին բազավորը, սակայն այս բոլորը ստույգ չէ: Ք. ծ. ա. 1 ր. երկիրը գրավում է Միհրդատը՝ Պոնտոսի հզոր արքան, 72 թ. հարձակվում է Լուկուլոսը, իսկ 65 թ. Պոմպեոսը, որոնք սկզբնավորում են ժողովրդի շփումները հուսական աշխարհի հետ: Մակայն երկիրը, հատկապես Արևելյան Վրաստանը, մշակութապես հետագայում ևս մնաց Պարսկաստանի ազդեցության տակ՝ մեծ մասամբ այնտեղից սերած իր թագավորներով:

Քիչ քան գիտենք նաև վրացիների կրոնի մասին: Հնագույն շրջանում նրանք պաշտում էին արևը, լուսինը և հինգ մոլորակ (այդ ժամանակ հայտնի մոլորակները): Իբերների արևելյան հարևան աղվանները, որոնց երկիրն ընդգրկում էր հետագա Վրաստանի արևելյան մասը (Կախեթը), ինչպես վկա-

յում է Ստրաբոնը (11-րդ, 4, 7), երկրպագում էին արևին, լուսնին և Ջևսին, ամենից առաջ լուսնին, որի տաճարը գտնվում էր Իբերիայի մոտակայքում: Դա, հավանաբար, Անահիտ<sup>8</sup> աստվածուհուն նվիրված տաճար է եղել, որն իրեն համագոր Կապադովկիայի Մա աստվածուհու մման ավելի շուտ կապված էր լուսնի հետ. հույները նույնացնում են Արտեմիսի հետ: Անշուշտ, խոսքը նույն աստվածուհու մասին է, որ Լոկյոթեա անունով հիշատակում է Ստրաբոնը մոսխեթի մոտ Կուրի հովտում: Հետաքրքիր է, որ վերջինից ոչ հեռու Կողքի-սում, Փասիս գետի մոտ գտնվում էր տաճար՝ նվիրված Ռա<sup>9</sup> աստվածուհուն, որը համապահասխանում է Աստծու մասին ունեցած նախնական պատկերացումներին: Նա պտղաբերության աստվածուհին էր, հայտնի էր նաև Մեծ մայր, Աստվածների մայր, հաճախ նաև՝ Ճառագայթարձակ, Ոսկե կամ Մաքրամաքուր (հմմտ. Լոկյոթեա) անուններով: Նրա պաշտամունքը տարածված էր Փոքր Ասիայում, Հայաստանում (համեմատաբար ավելի ուշ) և Սև ծովի երկրներում (հմմտ. թրակիացիների Հեկատայի հետ): Վերջինս պետք է որ իր ազդեցությունը թողած լինի վրացական ցեղերի վաղ շրջանի կրոնի վրա:

Հետագայում, սակայն, վրացիների գլխավոր աստվածն ուներ իրանական Արմազ անունը. դա Անուրա=Մագդան (ինաստության տեր) կամ պարսիկների Ռամիզն էր: Նրա սրբավայրը գտնվում էր Մցխեթի մոտ, ուր կանգնած էր նրա պղնձե արձանը՝ զրահազգեստով, սաղավարտն ու ուսազրահը ոսկուց, աչքերը՝ բերիլից ու գնդուխտից: Աստծու երկրպագության մեջ մտնում էր նաև մարդկանց զոհաբերություն: Գլխավոր այս Աստծու երկու կողմերում կանգնած էին հին աստվածություններ Գաի և Գասիի արձանները: Արևելքի ժողովուրդների մոտ հաճախ է հանդիպում եռյակ աստվածություն (հմմտ. նաև քրիստոնեական երրորդությունը):

Մրանից բացի հիշատակված են այլ աստվածություններ (Յադեն, Այնին-նա [Անահիտ], Դանանա [Նանե<sup>9</sup>] և Ափրոդիտե), որոնք իրենց սրբավայրերն են ունեցել այստեղ: Աստվածությունները կազմում են սուրբ յոթ թիվը, որը համապատասխանում է վերը նշված երկնային մարմիններին՝ արևին, լուսնին և հինգ մոլորակներին:

Բացի տաճարներում և աստվածների նկարների առաջ կատարվող երկրպագությունից, բուն պետական կրոնից, հետագայում ևս լայնորեն տարածված էր կրակի պաշտամունքը՝ նախ և առաջ վերին խավերում: Մասամբ տարածված էր նաև Եհովայի պաշտամունքը, որ իրենց հետ բերել էին իրեաները:

Հետագայում վրաց ժողովուրդը զարգացրեց և որոշակի մակարդակի հասցրեց իր սեփական հասարակությունը, որը պահպանվեց ժամանակների

<sup>8</sup> Strabo, XII, 2, 3.

<sup>9</sup> Հմմտ. *Arian*, *Periplus* II:

ընթացքում: Պետությունը հենվում էր ավատատիրության վրա, որն ընդգրկում էր առաջատար ցեղապետներին ու թագավորին՝ որպես գերագույն ավատատեր: Ամբողջ երկիրն ազդեցիկ ազնվականների ու թագավորի կալվածքն էր, բացառությամբ հոգևորականությանը պատկանող մասից: Ստրաբոնը (9-րդ, 3, 6 և 4, 7) վկայում է, որ հեթանոսական շրջանում արդեն ինչպես Իբերիայում, այնպես էլ Աղվանքում կար հզոր ու հարուստ քրմապետություն: Ազնվականների ու հոգևորականների հպատակության տակ էին գյուղացիներն ու աշխատավորները, որոնց մեծ մասը ճորտեր էին և միայն մի փոքր մասն ուներ որոշ ինքնուրույնություն, կային նաև ստրուկներ: Հետագայում քաղաքներում ձևավորվում է առևտրականների ու արհեստավորների դասը:

Ստրաբոնը (11-րդ, 3, 6) վկայում է, որ իբերների ունեցվածքը ընտանիքի ընդհանուր սեփականությունն էր, ավագի իրավունքը՝ վճիռներ կայացնելն ու կառավարելը: Անշուշտ խոսքը «մեծ ընտանիքների» մասին է, որ մինչև օրս պահպանվել են լեռնային հեռու շրջաններում, մասնավորապես Կախետում և Քարթլիում: Դրանք բաղկացած են ազգակցական կապերով առնչվող բազմաթիվ առանձին ընտանիքներից, ուր հաշվվում է մինչև 50, հնում՝ նույնիսկ մինչև 100 անդամ: Յուրաքանչյուր «մեծ ընտանիքի» գլուխ կանգնած էին ընտանիքի հայրն ու մայրը՝ ընտրված ցմահ. հաճախ նրանք ընտանիքի ամենատարեցներն էին: Մեծ ընտանիքը մահապետական հասարակական հնագույն կառուցվածք է, որ ունեցել են հնդեվրոպացիները, մանավորապես՝ հարավային սլավոնները, ինչպես նաև՝ ասիական ժողովուրդները:

Ինքնատիպ այս ժողովուրդն ապրել է անդադար պայքարելով հանուն իր ինքնության, իսկ նրա հարավ-արևելյան, հարավ-արևմտյան, հարավային և նաև հյուսիսային հզոր հարևանները շարունակ կռիվներ են մղել միմյանց դեմ՝ այս գեղեցիկ երկրին տիրանալու համար: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Վրաստանը գտնվում է Կասպից և Սև ծովերը կապող կամրջի վրա: Կովկասն այդ կամրջի լայնությամբ անցնող մի հզոր լեռնապատնեշ է, որի ստորոտներին փշրվել են հարավից, հարավ-արևելքից և արևմուտքից եկած ժողովուրդների գաղթերի հորձանքներ: Հյուսիսը հնում քոչվոր սկյութական ցեղերի, անհայտ տափաստանների երկիր էր, հարավ-արևելյան հարևանը պարսկական հզոր պետությունն էր, հարավում նախ Հայաստանն էր, ապա Եփրատի ու Տիգրիսի յլխամությունները, հետագայում՝ արաբներն ու թուրքերը, հարավ-արևմուտքում՝ փոքրասիական ժողովուրդները, հունական և հռոմեական համաշխարհային կայսրությունները, հետագայում՝ թուրքերը:

Կովկասյան լեռնապատնեշով անցնող ճանապարհներն այնքան էլ բարենպաստ չէին հյուսիսի քոչվոր հրոսակախմբերի հարձակումների համար: Ծանապարհներից մեկն անցնում էր Կասպից ծովի երկարությամբ, ծովեզրյա մի անձուկ, ճահճոտ հովտով, մյուսը՝ Դարիալի նեղ կիրճով (Ալանաց դուռ

կամ հնում «Իբերական դարպաս»), Մոլինվարի կամ Կազբեկ հրաբխային սառցադաշտի ստորոտով: Մի երրորդ ճանապարհ անցնում էր փոքր-ինչ արևմուտքով, գալիս էր հյուսիսից, Արդոնի հովտով, Խազարի կիրճով դեպի Ռիոնի հովիտ և Քութայիս կամ Ռոքի լեռնանցքով, Լյախվայի հովտով դեպի Գորի՝ Կուրի ափերը, իսկ չորրորդ ճանապարհը գալիս էր հյուսիսից, անցնում Սև ծովի ափամերձ շրջանով:

Այդ ճանապարհներին տիրանալը կարևոր նշանակություն ուներ հարավի երկրների համար: Կուրի հովիտը՝ լեռնաշղթաների հարավից լանջերի երկարությամբ, հանդիսանում էր արևմուտքից դեպի Սև ծով գնացող ռազմական ճանապարհ, նաև մեծ կարևորություն ուներ որպես սահմանային տարածաշրջան, որի համար շարունակ կռիվներ էին մղում Պարսկաստանը և Սև ծովի երկրները: Բացի այդ, այս շրջանը բոլոր ժամանակներում տուժել է լեռներում ապրող ավազակախմբերի հանկարծահաս հարձակումներից՝ մեծ մասամբ ավարների և լեզգիական այլ ցեղերի, չխոսելով չեչենների, չերքեզների, կարարդիների և օսերի մասին: Դրան ավելացրած նաև առանձին տարածքների ցեղապետների ներքին երկպառակություններն ու նեղ անձնական շահերի բախումը:

Այսբանից հետո միայն կարելի է զարմանալ, թե ինչպես այս ժողովուրդը, հակառակ բոլոր այդ վտանգներին, կարողացել է երկու հազարամյակ շարունակ պահպանել և մինչև մեր օրերը հասցնել իր ինքնությունն ու մշակույթը. ապահովելով շատ թե քիչ ինքնուրույնություն՝ չի ձուլվել կամ ոչնչացվել ավելի մեծ ժողովուրդների կողմից, որոնք մեծ հոսքերով եկել ու գնացել են երկու ծովերն իրար հետ կապող ցամաքե այս կամրջով: Պետք էր սպասել, որ պատերազմներ, հաճախակի դարձած ավերածություններն ու խռովությունները կասեցրել են մշակույթի զարգացումը, այնուամենայնիվ վրացիները կարողացան պատմության ընթացքում հասնել մշակույթի բարձր մակարդակի, որի վկայությունը նրանց բարձրարժեք գրականությունն է:

Երկրի մայրաքաղաքը դարեր շարունակ Սցխեթն էր. Ք. ծ. հ. 500 թ. մայրաքաղաք դարձավ Թիֆլիսը, որը 469 թ. Վախթանգ Գորգասալան (գայլառյուծ) թագավորի նստավայրն էր: Թիֆլիսն ավելի հեռու էր Կովկասի լեռնա-հովիտներից, ուրեմն և ավելի քիչ ենթակա լեռնային ցեղերի ավազակախմբերի հանկարծահաս հարձակումներին:

Քրիստոնեությունը Արևելյան Վրաստան ներմուծվեց սուրբ օրիորդ Նիկոյի և նրա շնորհիվ դարձի եկած Միրիան (կամ Միհրան) թագավորի կողմից Ք. ծ. հ. 317, 332 թթ., այսինքն Հայաստանում քրիստոնեության ընդունումից կարճ ժամանակ անց: Մակայն երկար ժամանակ պահանջվեց, մինչև որ Վրաստանում հանգան Սուրբ կրակի զոհասեղանի վերջին կայծերը՝ սովորություններում ու առասպելներում պահպանելով կրակի պաշտամունքի մնացորդներ: Սկզբնական շրջանում հայ եկեղեցու մասն վրաց եկեղեցին նույն-

պես միաբնակ ուսմունքի կողմնակից էր, սակայն 6-րդ դարում ընդունելով քաղցրեղունական դավանանք՝ մոտենում է բյուզանդական եկեղեցուն: Ժողովրդի շրջանում քրիստոնեական ուսմունքի տարածման գործում մեծ նշանակություն ունեցավ վանքերի կառուցումը 6-րդ դարում:

Եկեղեցու պարագլուխը՝ կաթողիկոսը, նստում էր Մցխեթում, որի Մայր տաճարի հիմնադրումը վերագրում են Վախթանգ Գորգասյան (446—499 թթ. Թ. ծ. հ.) թագավորին: Կաթողիկոսը պետության ներսում ուներ իր պատվավոր տեղը և գրեթե նույն հեղինակությունն ու իրավունքները, ինչ թագավորը: Հավանաբար նա իր իշխանությունը ժառանգել էր հեթանոսական պետության գերագույն քուրմից, ինչպես նկարագրում է Ստրաբոնը (11-րդ, 4, 7) աղվանների մասին: Այնտեղ նա «ամենահարգարժան մարդն էր թագավորից հետո, որն իշխում էր ինչպես սուրբ տարածքների, որ ընդարձակ ու մարդաշատ էին, այնպես էլ տաճարների ու սպասավորների վրա»: Նա կարող էր իր քուրմերից որևէ մեկին շրթայել «սուրբ շրթաներով» և մեկ տարի լավ կերակրելուց հետո «մատաղացու այլ կենդանիների հետ միասին» գոհաբերել աստվածներին:

Կաթողիկոսի իշխանությունն ամսահմանափակ էր ոչ միայն եկեղեցու, այլև իրեն և եկեղեցուն պատկանող ընդարձակ կալվածքների վրա՝ բազմաթիվ գյուղերով (մոտ 237), գյուղացիներով, կառավարիչներով, ծառայողներով, զինվորներով, հետագայում նաև ազնվական վասալներով, չհաշված հազարավոր քահանաներն ու վանականները: Նա իր ձեռքի տակ ուներ մի քանի ջոկատ՝ իր կողմից նշանակված զորավարներով: Կաթողիկոսն ու նրա եպիսկոպոսները տեր էին բազմաթիվ ստրուկների: Եկեղեցին իրականում պետություն էր պետության ներսում: Սակայն վրաց եկեղեցին և կաթողիկոսը, չնայած ունեցած մեծ իշխանությանը, երբեք չեն անցել սահմանը, բոլոր ժամանակներում եկեղեցու առաջնորդները մնացել են ազգային պետության հավատարիմ պահապանն ու դաշնակիցը: Միշտ եղել է օտար կրոնների ներթափանցման սպառնալիքը դրսից, նախ և առաջ իսլամի, որ լայնորեն տարածված էր հարևան երկրներում:

6-րդ դ. կեսերին Արևելյան Վրաստանում իշխանության գլուխ է անցնում Գուարամը: Նա առաջին իշխանն էր հայկական Բագրատունի նախարարական տան, որը հետագայում երկրին տվեց բազմաթիվ իմաստուն թագավորներ: Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որի տիրապետության տակ էր Արևմտյան Վրաստանը, շարունակ կռիվներ էին մղվում Արևելյան Վրաստանի վրա ազդեցություն ունենալու համար, մինչև Հերակլ կայսրը 627 թ. Նինվեի ավերակների մոտ տապալում է պարսից Սասանյանների տիրապետությունը: Այդ հաղթանակով, սակայն, ճանապարհ է հարթվում մեկ այլ վտանգավոր քջանմու՝ արաբների համար, որ 15 տարի անց հարավից ներխուժեցին Արևելյան Վրաստան և հասան մինչև Կովկասի լեռնաձորները, սակայն երբեք չկարողացան հաստատվել Արևմտյան Վրաստանում:

Արաբների տիրապետությունն Արևելյան Վրաստանում ընդմիջումներով

տևել է 400 տարի, սակայն միշտ չէ, որ ընդգրկել է ամբողջ երկիրը: Վրաց թագավորներն արաբների յուրօրինակ վասալներն էին՝ երբեմն ավել, երբեմն պակաս կախվածությամբ: Չնայած կրոնի տարբերությանը, արաբները շատ բանով նպաստեցին վրաց մշակույթի զարգացմանը:

Աբխազիայի թագավոր Բագրատ Երրորդը (985—1014) ժառանգության իրավունքով միացնում է Արևելյան Վրաստանն Աբխազիային ու Մեսխեթին, որոշ չափով նաև՝ Իմերեթն ու Մեգրելիան: Մելչուկ թուրքերի հարձակումները 1048 թ. ի վերջո կասեցվում է քաջարի զորավար Լիպարիտ Օրբուլքի (Օրբելիանի) կողմից: 1064 թ. նրանք կրկին գալիս են, այս անգամ արդեն Ալի Արսլանի գլխավորությամբ: Թուրքերը հեղեղում են Վրաստանը, ավերում Թիֆլիսը, կոտորում բնակչությանը: 1072 թ. Թիֆլիսը կրկին ավերվում է սելջուկ թուրքերի կողմից. երկիրը ամայանում է, բնակիչների մեծ մասը՝ սպանվում:

1089 թ. իշխանության գլուխ է անցնում Դավիթ Երրորդը (1089—1125)՝ Վրաստանի հզոր և երևելի տիրակալներից մեկը, որ հայտնի է «Շինարար» մականունով: Նա միավորում է արաբների, թուրքերի և Բյուզանդիայի կողմից ծվատված ու քայքայված երկիրը և 36 տարի անց՝ իրենից հետո, թողնում ծաղկած մի պետություն: Խաչակիրների կողմից Երուսաղեմը գրավվելուց հետո նա 1100 թ. Թիֆլիսից քշում է արաբների վերջին կայազորը: Գահին բազմած ասկետ այդ իմաստասերը կրոնի բնագավառում ևս հասել էր մեծ հաջողությունների, միևնույն ժամանակ լինելով ականավոր զորավար՝ հաղթականորեն վարում էր նվաճողական պատերազմներ: Նա ստեղծեց կարգ ու կանոն, պատվարժան բարբեր՝ անձնական օրինակով ոգեշնչելով բոլորին: Նա շրջահայաց տնտեսվար էր, պետության խելացի ղեկավար. փափկանկատ հանդուրժու, ականությամբ վերաբերվելով այլ հավատների՝ օգնում էր ինչպես մահմեդականներին, այնպես էլ հայերին: Նրա տիրապետության օրոք աճեց ու զորացավ վրաց պետությունն ինչպես երբեք, երկիրը շարունակ հարստանում էր պատերազմական ավարով և օժանդակ աշխատուժով, որն ի սպաս էր դրվում արհեստագործության զարգացմանը: Ծաղկում էր հոգևոր մշակույթը: Բացվում էին բարձրագույն դպրոցներ՝ հմուտ և բարձրորակ ուսուցիչներով: Նա Քութայիսի մոտ Գելաթիում կառուցում է փառահեղ Մայր տաճար և հիմնում վանք, որը կարճ ժամանակում դառնում է հոգևոր խոշոր կենտրոն:

Այդ շրջանում սերտանում են կապերը Բյուզանդիայի հետ: Վրաց թագավորներից շատերը, ինչպես Բագրատ Չորրորդը (1027—1072) և Դավիթ Շինարարը, ամուսնանում են բյուզանդական արքայադստրերի հետ, իսկ իրենց դստերին կնության տալիս բյուզանդական կայսրերին կամ արքայազներին: Պատմության մեջ իր գեղեցկությամբ հայտնի է Բագրատ Չորրորդի դուստր Մարթան, որը որպես կայսրուհի կրում էր Մարիա անունը:

Դավիթ թագավորը սկիզբ դրեց երկրի առաջընթացին, Թամար թագուհին (1184—1212)՝ պետության ու մշակույթի վերելքին: Ստանձնելով Բագրատու-

մյաց գահը՝ նա ընդարձակեց երկիրը՝ իր մեջ առնելով վրացախոս նորանոր շրջաններ: Պետության ներսում ստեղծված կարգ ու կանոնի շնորհիվ աճում էր ժողովրդի բարեկեցությունը:

Խորամիտ թագուհին անձնական հմայքով բարերար ազդեցություն էր թողնում ժողովրդի վրա: Նա գեղեցիկ էր ու քնքուշ, օժտված կանացի անդիմադրելի թովչանքով: Ժամանակակիցները մեծարում էին նրան ներքողներով, դրվատում եռանդը, մղած մարտերը՝ ձիու վրա և հետիոտն, հանգստությամբ, մեղմությամբ ու չափավորությամբ շնչող ճառերը, նրա իմաստուն խոսքը: Առանց խստության ու զայրույթի, ներքին տատանման ու դժվարության նա կարողանում էր հնազանդեցնել ամենահամառ ու կամապաշտ տղամարդկանց: Թագուհին իր ժողովրդին ղեկավարում էր ժամանակի համար անսովոր մեղմությամբ ու զբարտություն: Ոչ ոք չէր գանակոծվում նրա հրամանով: Խրատագույն պատիժներին վերաբերվում էր մեծագույն զարշանքով, նա ներում շնորհեց նույնիսկ այն խռովարարներին, որ իր դեմ էին դուրս եկել՝ հրահրված մերժված ամուսնու կողմից: Ինչպես ազնվականները, այնպես էլ գյուղացիները նվիրված էին նրան հավատարմորեն, բանակը՝ նրա հրամանով ոգեշնչված, մարտի էր նետվում և որպես կանոն տուն դառնում հաղթանակով: Նրա բոլոր արշավանքներն ավարտվում էին հաջողությամբ. թագավորության սահմաններն ընդարձակվեցին արևելքում մինչև Կասպից ծով, արևմուտքում՝ մինչև Սև ծով. նշանակալիորեն ուժեղացավ պետության քաղաքական ազդեցությունը: Կովկասի լեռնահովիտների ժողովուրդները ճանաչում էին թագուհու գերիշխանությունը և հարկատու էին նրան: Նրա տիրապետության տակ էին անցել Հայաստանից որոշ շրջաններ՝ Կարսը և Էրզրումը: 1204 թ. նա օգնում է իր ազգական Ալեքսիոս Կոմնենոսին Տրապիզոնի կայսրության ստեղծման գործում՝ դրանով իսկ միաժամանակ ամրապնդելով իր սեփական թագավորությունն արևմուտքից թուրքերի հարձակման դեմ:

Թամարի թագավորության օրոք Վրաստանում ինչպես եկեղեցու, այնպես էլ պետության կառավարման մեջ աչքի ընկան մի շարք ականավոր անձնավորություններ՝ մեծ մասը հայեր: Չորքի գլխավոր հրամանատարը հայ էր՝ Մարգիս Երկայնաբազուկ, նրա կողքին իր երեք ազգականներն էին, որոնց թվում և թագուհու երկրորդ ամուսինը՝ Գավիթ Սոսլանին:

Վերնախավն ու ազնվականների մի մասը համեմատաբար լավ դաստիարակություն էին ստանում, իսկ արշավանքներից հարուստ ավար բերող ազնվականների մեծ մասը ապրում էր շքեղության մեջ՝ շարունակ բարձրացնելով իր կենսամակարդակը: Կիզակետում, սակայն, Թամարի շքեղ արքունիքն էր՝ իշխանների ու երևելի այրերի այցելության մշտական վայրը: Գեղանի թագուհին ժլատ չէր գանձարանում դիզված իր հարստության նկատմամբ: Նա անասանան առատաձեռն էր և շրջապատում էր իրեն զվարճություններով ու վայելքներով: Կազմակերպվում էին ճոխ խնջույքներ ու հավաքույթներ, սս-

պետական զինախաղեր, պարուհիների ու լարախաղացների հանդիսություններ: Սակայն նախապատվությունը տրվում էր որսորդությանը, ինքը՝ թագուհին անձամբ որսի սիրահար էր: Հիասքանչ տեսարան. նա՝ գեղեցկության մարմնացում, իր ասպետների գլուխ անցած, կրակոտ ձիու վրա, փայլուն ձիասարքերով, բազեներով ու շներով արշավում է անտառով ու դաշտով: Տանը նրանց սպասում էր մեծ զինարքուք՝ երգեցողությամբ ու երաժշտությամբ, զավաթների զնգոցով և որսորդական անվերջանալի պատմություններով: Դարեր շարունակ որսորդությունն եղել է վրաց ասպետների ու թագավորների սիրելի զբաղմունքը, եթե իհարկե պատերազմներ չէին մղում: Որսաշները հետապնդում էին շնագայլերի, աղվեսների, վարազների ու եղջերուների, առավել ընդունված էր բազեներով որսորդությունը: Որսի հիմնական կենդանիներն էին կռունկները, ձկնկույներն ու փասիանները, վերջիններիս Վրաստանում պահում էին նաև տներում, անունն էլ կապում են Փասիս գետանվան հետ: Մարկո Պոլոն (1275 թ.) վկայում է, որ Վրաստանում «բազմացնում էին աշխարհի լավագույն սակունքը»:

Որսորդությունից բացի վրացիները զվարճանում էին կազմակերպելով տարբեր տեսակի մրցություններ ու խաղեր, հատկապես այնպիսիք, ուր ցուցադրվում էին մարմնի ճարպկությունն ու ուժը՝ մեծ զնդակախաղեր, նշանակետին կրակելը, ձիարշավ, զնդակախաղ ձիու վրա և ըմբշամարտ, որը մինչև օրս լայն տարածում ունի եկեղեցական տոների և այլ հանդիսությունների ժամանակ: Կայտառ ու անհոգ ժողովուրդ, որ կյանքի լիարժեք վայելքը փնտրում էր արկածախնդրության մեջ:

Վրաստանում հոգևոր մշակույթի հիմքերը դրեց քրիստոնեությունը: Սեփական գրի ստեղծումը նույն ժամանակաշրջանի արդյունք է, ինչ հայերի մոտ, այսինքն Զ. Ժ. 5-րդ դարի սկզբին: Այբուբենում մեծ չափով օգտագործված է հունական գիրը: Սկզբնական շրջանում գրականությունը բացառապես եկեղեցական էր՝ սիրիականի և հունա-բյուզանդականի մի կցորդը: Հետագայում, սակայն, դուրս գալով վանքերից՝ համընդհանուր կրթության ձևով տարածում է գտնում վերին խավերում: Մեծ դեր է խաղացել նաև արաբների ազդեցությունը. շատ բաների հետ նրանք իրենց հետ բերեցին նաև բանաստեղծական արվեստը: Ավելի ուշ շրջանում կրոնականի կողքին ծնունդ է առնում կենսախիղ, աշխարհիկ պոեզիան: Թամարի տիրապետության օրոք այն ծաղկում է ապրում հանձինս մի շարք անվանի քնարերգուների: Խրախճանքներում հնչում էին ջնարի նվագն ու զավաթների զնգոցը, փառաբանվում էին սերն ու երջանկությունը, ասպետի տառապանքներն ու արկածները:

Ամենահայտնի բանաստեղծը Շոթա Ռուսթավելին է, Թամարի ժամանակակիցը: «Ընձենավորը» հայտնի էպոսով նա իր ժողովրդին նվիրեց ազգային հազվագյուտ բարձրարժեք մի պոեմ: Հերոսուհիներից մեկը ինքը՝ մեծահամբավ թագուհին է, որ պոեմում Թինաթին է կոչվում:

*Որ աշխարհին լույս էր սփռում արևի պես՝ ծագման ժամին,  
Ով տեսնում էր, նույնն էր ասում՝ հոգի ու միտք, ուշք կտանի<sup>10</sup>:*

Հերոսն անվեհեր ու կատարյալ ասպետի մարմնացում է, որ կյանքում առաջնորդվում է վստահությամբ լեցուն՝ ամենուրեք սերմանելով բարեկամություն, սեր մերձավորի հանդեպ և բարերարություն: Պետեմ կյանքի բարոյական բարձր ըմբռնման վկայությունն է: Թախծով լեցուն են հետևյալ տողերը.

*Ավարտվում է դյուցազնագրույցն այս,*

*Տավիղը դողում է դեռ, բայց էլ չի հնչում:*

*Չար է բախտն աշխարհի, ապրելու ժամանակը մեր՝ կարճ,*

*Որ երկար է քվում, քանի որ չկա ուրախ օր<sup>11</sup>:*

Տավիղն այդ օրվանից շարունակում է դեռ դողալ, յոթ դար այս բանաստեղծությամբ հնչած տազնապը վրաց ժողովրդի շուրթերին է՝ միշտ բարձր պահելով արյուն թափած ժողովրդի ոգին:

Ք. ծ. հ. 4—5-րդ դդ. սկսած կառուցվում են եկեղեցիներ՝ մեծ մասամբ հին տաճարների օրինակով, հետագա դարերում ևս աշխուժորեն շարունակում է զարգանալ շինարարական արվեստը: Եկեղեցիներն իրենց ոճով նման են հայկականին, հնարավոր է ճարտարապետների մեծ մասը Հայաստանից եղած լինեն, քանի որ այն հայտնի էր հմուտ շինարարներով: Եկեղեցական հետաքրքիր կառույց է Հուրայիսի Մայր տաճարը, որի շինարարությունը սկսվել է Ք. ծ. հ. 1003 թ. Բագրատ Երրորդի կողմից, պահպանվել են ավերակները: ճարտարապետի անունն է Մաիսա: Եկեղեցին իր հատակագծով նման է Հայաստանում հայտնի Գ-վիճի Ս. Գրիգոր եկեղեցուն, որն ավերվել է 9-րդ դարում, պահպանվել են հիմնապատերը: Հուրայիսի Մայր տաճարը իր երկարավուն երեք նավերով, լայնակի, աստիճանաբար վեր խոյացող ոճով նման է ավելի ուշ շրջանի եվրոպական գոթական եկեղեցիներին: Որոշ տեղերում պահպանվել են սրածայր կամարներ. կարելի է ենթադրել, որ զմբեթը կրող հիմնական կամարները նույնպես սրածայր են եղել: Սյունաշարերում կան գոթական ոճի հավելվածներ, որոնք ցայտուն արտահայտված են Անիի Մայր տաճարում, որի շինարարությունն ավարտվել է մի քանի տարի ավելի շուտ, քան սկսվել է Հուրայիսի եկեղեցու կառուցումը: 11—12-րդ դդ. Վրաստանում կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր ու ամրոցներ: Յուրաքանչյուր ավատատեր ուներ իր ամրոցը: Հիմնադրվեցին նաև նոր քաղաքներ, ինչպես Ախալցխան ու Ախալքալաքը: Հոգևոր վերելքը թափ էր առել Թամարի տիրապետության շրջանից, և, ինչպես վերը նշել ենք, ժողովուրդն այսօր ամեն ինչ վերագրում է նրան՝ լինի դա շքեղ շինություն թե ամրոցի մնացորդներ, մինչև անգամ առասպելներում հին շրջանի բոլոր մեծագործությունները հյուսվում

<sup>10</sup> Թարգմ. Հովհ. Կարայանի:

<sup>11</sup> Տողացի թարգմանությունը ըստ Արթուր Լայսթի:

են նրա անվան շուրջ:

Այս ժողովրդին բնորոշ երևույթ է սա. նրա պատմության մեջ առավել աչքի ընկած երկու անհատականությունն էլ կին են՝ քրիստոնեության գաղափարախոս Սուրբ Նինոն և մեծահամբավ թագուհին: Սրան հակադիր է իսլամական աշխարհայացքը, ըստ որի կինը հոգի չունեցող էակ է: Պարսիկների մոտ, որոնք հնում երկար ժամանակ իշխել են Վրաստանում, կինը նույնպես չունի իր արժանի տեղը:

Թամարի մահից հետո արագ մարում է Մեծ Վրաստանի փառքը: Ուր տարի անց, 1220 և 1222 թթ., Պարսկաստանից մտնողների վայրի հորդաները հարձակվում են երկրի վրա: 1223 թ. նրանք կրկին գալիս և ամայացնում են թագավորության հարավային շրջանները: Սրան հաջորդում է պարսիկների ներխուժումը, որի ընթացքում գրավում և ավերում են Թիֆլիսը. մի քանի տարի անց կրկին գալիս են մտնողները և գրավում ամբողջ երկիրը: 1247 թ. նրանք արդեն երկրի տերն էին, որի վրա դրեցին ծանր հարկեր, իսկ տղամարդկանցով համալրեցին իրենց զորախմբերը:

Ամայացած երկրում անկում ապրեցին մշակույթը, հոգևոր կյանքն ու բարքերը: Թամարի գեղանի դուստր Ռուսուդան թագուհին, լինելով իր մոր հակապատկերը, ցույց կյանք էր վարում: 1318 թ. գահ բարձրացավ խելամիտ Գեորգ Հինգերորդ «Պայծառափայլ» թագավորը (1318—1346) և կրկին ամրապնդեց պետության դիրքերը: Բայց դա երկար չտևեց: 14-րդ դ. կեսերին սև ցավը հազարավոր կյանքեր խլեց, իսկ առավել սուսկալի հյուրը կաղ մոնղոլ Լենկթեմուրն էր (Թամերլան): 1387-ից մինչև 1403 թթ. նրա կատաղի հորդաները վեց անգամ ավերեցին ու սրբեցին երկիրը, իսկ երբ վերջապես քաշվեցին Թուրքեստան, իրենցից հետո թողեցին սոսկ թշվառություն: Թիֆլիսը, մյուս քաղաքներն ու գյուղերը վերածվել էին ավերակների կույտերի, քանդված էին եկեղեցիներն ու ամրոցները, բնակչության մեծ մասը սպանված էր, մի մասը գերեվարված:

Սրան հաջորդում է երեք խավար դար: 1453 թ. կործանվում է Բյուզանդական կայսրությունը, մի քանի տարի անց նրան հետևում է Տրապիզոնի կայսրությունը, որով Վրաստանը կորցնում է մշակութային իր միակ հենակետը: Հայաստանի հետ միասին նա մի կողմ քաշված՝ մնում է որպես քրիստոնեական հասարակության փոքրիկ մի կառույց՝ շրջապատված թշնամի մահմեդական ժողովուրդներով:

15-րդ դ. կեսերին, երբ Վրաստանին այնքան անհրաժեշտ էր միավորվելը, Ալեքսանդր Առաջին թագավորի երեք որդիները Բագրատունիների երկիրը բաժանեցին իրենց միջև. ստեղծվեցին Ջարթլի, Կախեթի, Իմերեթի թագավորություններ և հինգ իշխանություններ՝ Մեգրելիա, Գուրիա, Աբխազիա, Սվանեթիա, Սամցխե (Մեսխիա): Սրանով վերջնականապես մասնատվում է երկրի հզորությունը, սաղորանքն ու ներքին երկպառակությունները պարարտ հող



են ստեղծում արտաքին թշնամու համար, առաջին հերթին՝ թուրքերի ու պարսիկների, որոնք հաջողությամբ դավեր են լարում:

Ահավոր ճնշող է այդ դարերի պատմությունը. անընդհատ կռիվներ՝ միակերպ արյունոտ նկարագրություններով, ճակատամարտերով ու ավերումներով, ներքին գծություններով ու դավաճանություններով, սպանությունների ու կողոպուտների, թուրքերի, պարսիկների, թաթարների ու լեռնային ցեղերի հարձակումների, սահմակեցուցիչ կոտորածների մասին հաղորդումներով: Բացի այդ, ժողովուրդը հեծում էր նաև ավատատերերի ու թագավորների հարկերի ծանրությունից, որը կասեցնում էր ամեն տեսակի գործունեություն: Այս բոլորը հող էր նախապատրաստում, որ երկիր խուժած օտար բանակները անխնա կեղեքեն ժողովրդին:

Արտաքին թշնամիները հիմնականում երեքն էին՝ թուրքերը հարավարևմուտքից, պարսիկները հարավ-արևելքից և լեռնային ցեղերը հյուսիսից: Թուրքերը պինդ նստած էին Ղորոխի հովտում, 16-րդ դ. նրանք գրավում են Ախալցխա, Արդահան և Արտանուջ քաղաքները: Այդ տարածաշրջանում բնակվող լեռնային հնագույն ցեղերը՝ մեսխերը (մոսխեր), հարկադրված ընդունում են իսլամ, որը գործածության մեջ է դնում թուրքերենը: Գուրիայում, Մեգրելիայում և Իմերեթում գնալով մեծանում է թուրքական ազդեցությունը: Պարսիկների գերիշխանությունը շարունակում է տարածվել Քարթլիի ու Կախեթի վրա, որոնց թագավորները շահի կողմից նշանակված փոխարքաներ էին: Թագավորներից շատերը վերին իշխանավորների բարեհաճությունը շահելու համար նույնիսկ իսլամ էին ընդունում վրացերենի հետ գործածելով նաև պարսկերենը:

Երկրի հյուսիսային շրջանները՝ Արագվան, Սվանեթն ու Աբխազիան, պահպանեցին իրենց անկախությունը: Հյուսիսի լեռնային ցեղերը չէին ճանաչում որևէ գերիշխանություն, չերքեզները, կաբարդիները, օսերը, չեչեններն ու լեզգիները (ավարներ) պարբերաբար ավազակային հարձակումներ էին ձեռնարկում դեպի Բագրատունի երեք թագավորությունները, ժամանակ առ ժամանակ նաև դաշնակցում նրանց հետ: Բոլոր ժամանակներում լեռնային այդ ցեղերի հարևանությունը մշտական սպառնալիք էր կյանքի ապահովությանը, հատկապես Կախեթում և Քարթլիում: Այդ պատճառով էլ գրեթե յուրաքանչյուր գյուղ ուներ մեկ կամ մի քանի ամրոց՝ աշտարակներով ու պարիսպներով: Սակայն հաճախ էր պատահում, որ բնակիչներն իրենց ունեցած-չունեցածով ու անասուններով հարկադրված փախչում էին լեռները՝ տունն ու տեղը թողնելով բախտի քմահաճությին:

Այսքանից հետո զարմանալի է, թե վրաց ժողովուրդն ինչպես է կարողացել առանց վերջնականապես ծուլվելու անցնել բռնությունների այդ երկար շրթայով: Ինքնըստիներքյան հասկանալի է, որ երկրում տիրում էր հոգեկան ու բարոյական ծանր վիճակ: Որոշ չափով կրոնասիրություն՝ լի ու լի խառնված

սնահավատության հետ, ու բարոյականություն պահպանվել էին հիմնականում գյուղացիների, արհեստավորների և աշխատավորների շրջանում: Հոգևորականությունը թաղված էր տգիտության ու անբարոյականության մեջ: Ազնվականները բարոյագրկված քաղաքական նվաստացուցիչ հարաբերություններից՝ հաճախ ստիպված էին լինում իրենց որդիներին պատանդ տալ, որոնց Սպահանում դաստիարակում էին իբրև մուլաներ, կամ դուստրերին ուղարկել պարսկական կամ թուրքական հարեմ: Նրանք անտարբեր էին իրենց կրոնի հանդեպ, սիրով համատեղում էին մահմեդականների բազմակնությունը քրիստոնյաների գինեմուլության հետ: Նրանց կրոնական հետաքրքրությունը սահմանափակվում էր երկու կրոնների տոներին սուկ իրենց անկողմնակալ մասնակցությամբ:

Չնայած եկեղեցու կողմից խստիվ արգելված էր քրիստոնյաների վաճառքն անհավատներին, այնուամենայնիվ երկրում ծաղկում էր ստրկավաճառությունը: Ազնվականները, հատկապես Մեգրելիայում և Գուրիայում, իրենց երկու սեռերի ճորտերին խմբերով տանում էին Թավրիզի, Ախալցխայի և Տրապիզոնի շուկաները՝ վաճառելու թուրքերին կամ պարսիկներին: Ֆրանսիացի ճանապարհորդ ակնավաճառ Շարդենը հաղորդում է, որ 17-րդ դ. կեսերին Թուրքիայում վաճառվում էր տարեկան 12000 երկու սեռի գյուղացիներ, և պատմում է աղքատ, սակայն ձեռներեց մի ազնվականի մասին, որը Տրապիզոնում վաճառում է 12 քահանա և իր սեփական կնոջը:

Սակայն ասել, որ Վրաստանում բարբերն ավելի ցածր էին, քան այդ նույն ժամանակ Եվրոպայում, օրինակ՝ ֆրանսիական կամ անգլիական արքունիքում և Ռուսաստանում, ճիշտ չէր լինի: Ղորտերի վիճակը Ռուսաստանում և Եվրոպայում անշուշտ ավելի լավ չէր:

Արևելյան Վրաստանի մասին Շարդենն ավելի լավ է խոսում՝ նշելով, որ այն ուներ ընտիր կենսամթերք՝ աշխարհի ամենահրաշալի հացն ու միրգը, ձկնեղենի ու մսեղենի հարուստ տեսականի, որսի անթիվ կենդանիներ, սքանչելի գինի, սակայն առավել սքանչելի էին կանայք. «Անհնար էր տեսնել և չսիրահարվել նրանց. հմայիչ դիմագծեր, գեղեցիկ մարմնաձևեր, այլ կերպ չի կարելի պատկերացնել վրացուհիներին: Նրանք բարձրահասակ են, բարեկազմ և ոչ ճարպոտ: Նրանց տզեղացնում է միայն շապրը»:

Շատ վրացիներ, ամենից առաջ դիրք ունեցող անձնավորություններ, դժվար ժամանակներում ստիպված հեռանում էին երկրից, սիրով գնում Ռուսաստան: Սակայն վրացիներն երբեք թափառական ազգ չդարձան: Այդ տեսակետով նրանք կտրականապես տարբերվում են իրենց հարևան հայերից: Վրացիների կապվածությունը իրենց հայրենի հովիտներին ու լեռներին այնքան ջերմ է, որ նրանց համար անհանդուրժելի է դրանցից երկար ժամանակով հեռանալը: Հայրենի հողին նվիրվածության զգացողությունը՝ երկրի բնական գեղեցկությունների նկարագրությամբ, իր արտահայտությունն է գտել վրաց

պոեզիայում: Վրացիները մեծ մասամբ հողագործ են, նրանք առևտրի և արհեստների մեջ չունեն հայերի ձեռներեցությունը, որը օգնում է նրանց օտարության մեջ:

17-րդ դ. Կախեթում և Քարթլիում իշխանության գլուխ անցան մի շարք նշանավոր ու հայրենամուտ թագավորներ, որոնք ձգտում էին աշխուժացնել ազգային մտածողությունն ու ապրելակերպը, բարձրացնել քրիստոնեական եկեղեցու հեղինակությունը և պայքարել պարսկական ազդեցության դեմ: Կախեթի թագավոր Թեյմուրազ Առաջինը (1605—1663) արկածախնդիր ու բանաստեղծական մի անձնավորություն էր, միևնույն ժամանակ շնորհալի մարդ ու քաջարի զորավար, որ մարմնավորում էր վրաց ասպետականության լավագույն առանձնահատկությունները: Նա կովի է դուրս գալիս պարսից հզոր ու սարսափազորու Շահ Աբասի դեմ, որ շատ անգամներ էր ավերել երկիրը և փորձել վրացիներին լծի տակ դնել՝ ճգնելով ահավոր հարկերի տակ: Թեյմուրազն առաջինն է Բագրատունի թագավորական տան այր ու կին գրողների թվում, ովքեր գրեթե 200 տարի շարունակ գործուն մասնակցություն են ունեցել Վրաստանում հոգևոր կյանքի զարթոնքին: Չևավորվում է յուրատիպ ու բարձրարժեք ազգային գրականություն՝ բազմաթիվ ակնամար բանաստեղծներով: 18-րդ դարի նշանավոր բանաստեղծներից է Դավիթ Գուրամիշվիլին (ծն. 1705 թ.), որը 19 տարեկան հասակում իր կալվածքում գերվում է լեզգի ավազակների կողմից և չորս տարի ստակալի գերության մեջ անցկացնելուց հետո փախչում է Ռուսաստան: Այնուհետև, ապրելով այնտեղ, նա մասնակցում է բազմաթիվ արշավանքների և գերի ընկնում նաև պրուսացիներին: Բանաստեղծը մտալ գույներով է նկարագրում իր հայրենիքի անելանելի վիճակը: Սակայն այդ հոռետեսության մեջ անգամ բոցկլտում է ջերմ սերն իր ժողովրդի ու երկրի հանդեպ: Վրաց մեծ բանաստեղծների քնարերգությունն ամենից առաջ ներշնչված է ազնվագույն հնչերանգներով:

Արևելյան Վրաստանում բազմաթիվ նշանավոր մարդկանց թվում, ովքեր ջանում էին համախմբել ժողովրդի ուժերը, խթանել մշակույթի ու ազգային կյանքի զարգացումը, պայքարել պարսկական, թաթարական ու թուրքական ազդեցությունների դեմ, նախ և առաջ արժանի է հիշատակել Անտոն կաթողիկոսի (1744—1788) անունը: Նրան հաջողվում է միավորել Կախեթի և Քարթլիի թագավորությունները, շարունակ պայքարելով ավատատերերի դեմ՝ ջանում է ամրապնդել թագավորական իշխանությունը: Նա փորձում է մտցնել քաղաքացիական կանոնադրություն, բարձրացնել եկեղեցու հեղինակությունը, բարելավել կրթական գործն ու հոգևոր կյանքը, ծավալում է բազմակողմանի գործունեություն՝ հանդես գալով որպես դասագրքերի, իմաստասիրական ու պատմական գրվածքների հեղինակ: Նրա ողջ կյանքն անխոնջ ու կրքոտ սեր էր դեպի իր հայրենիքն ու ժողովուրդը:

17—18-րդ դդ. կամաց-կամաց, սակայն առավել վստահորեն սկսում է

կարևորվել քրիստոնյա Ռուսաստանի ազդեցությունը, որ գալիս էր Կովկասյան լեռներից հյուսիս տարածված հարթավայրերի հարավային շրջաններից: Բնական էր, որ Արևելյան Վրաստանի թագավորները մահմեդական թըշնամու անողոր ճնշման դեմն առնելու համար պետք է փնտրեին քրիստոնյա ցարերի օգնությունը: Երկար ժամանակ օգնություն խնդրելու փորձերը պսակվում էին անհաջողությամբ, քանի որ կովկասյան երկրները տակավին դուրս էին ռուսական «հետաքրքրության շրջանակներից», սակայն ժամանակն անպայման բերելու էր դրան:

Քսան տարի պարսից փոխարքայի տիրապետությունից հետո, 1744 թ., Քարթլիում իշխանության գլուխ անցավ և ս մեկ ազգամուտ թագավոր՝ Թեյմուրազ Երկրորդը (1744—1762): Նա քաջ զորավար էր, իր որդու՝ Կախեթի թագավոր Հերակլի (կամ Էրեկլի) հետ արիաբար պաշտպանում էր երկիրը հարևան ժողովուրդներից: Թեյմուրազի մահից հետո նրա որդին Անտոն կաթողիկոսի աջակցությամբ դառնում է նաև Քարթլիի թագավոր (1762—1798): Այսպիսով վերամիավորվում է Արևելյան Վրաստանը:

Այնուհետև սկսվում է վրաց ժողովրդի երկարատև ու հերոսական ազատագրական պայքարի վերջին ողբերգական, սակայն փայլուն ժամանակահատվածը: Այդ նշանավոր ռեգենտը, ունենալով Անտոն կաթողիկոսի հավատարիմ աջակցությունը, ամբողջ ուժով փորձում է ոտքի կանգնեցնել իր թշվառ երկիրը: Նա ղեկավարում է օրենքներով, զարկ է տալիս տնտեսությանը, մշակում և բնակեցնում երկրի ամայացած շրջանները, նպաստում հանքագործության և արդյունաբերության զարգացմանը, խրախուսում կրթությունն ու մշակույթը: Ամենից առաջ, սակայն, նա երկիրն ազատագրեց արտաքին թշնամիներից:

Հերակլը փայլուն զորավար էր, անշուշտ իր դարաշրջանի մեծերից մեկը: Արևմուտքից արևելք սլանում էր առյուծի պես և ջախջախում թշնամու բանակները փոթորիկի նման: Նրա տարած հաղթանակները թուրքերի, պարսիկների ու լեզգիների դեմ հաճախ կայծակի արագություն էին ունենում: Սակայն նորից ու նորից գալիս էին թշնամու անթիվ, անհամար հորդաները, նրա հավատարիմ զինակիցների փոքրիկ բանակը գնալով հալվում էր, մինչև որ ուժերի գերակշռությունը չափազանց մեծացավ: Բազմամբոխ թշնամիների դեմ մղած անդադար պատերազմներում ընկած բազմաթիվ զոհերը և մշտական գժտությունները որպես ճնշող բեռ ծանրացած էին աշխատավոր ժողովրդի վրա: Ազնվականների շահագործումն ու ներքին կոիվները և սթուլացնում էին ժողովրդի տոկոսությունը: Ճակատագրի այլ հարվածներ նույնպես իրենց դերն ունեցան, ինչպես 1779 թ. հրեշավոր ժանտախտը, որը միայն Թիֆլիսում խլեց 5000 մարդու կյանք:

Թագավորն օգնություն էր փնտրում Ռուսաստանում: 1769 թ. ռուս զենեուրալ Տոտլեբեները 400 հոգով և չորս բնդանոթով Դարիալի կիրճով գալիս է Թիֆ-

լիս և վրացիների հետ կովում թուրքերի դեմ: 1783 թ. Հերակլը պայմանագիր է կնքում Ռուսաստանի Եկատերինա թագուհու հետ, որով ընդունում է նրա գերիշխանությունը՝ երկրի պաշտպանությանը ռուսական զորքերի մասնակցության պայմանով: Ռուսները սկսում են Դարիալի կիրճով անցնող ռազմական ճանապարհի կառուցումը: 1783 թ. աշնանը Թիֆլիս է ժամանում ռուսական երկու զումարտակ՝ չորս թնդանոթով: Մակայն նրանք շուտով ետ են քաշվում, աննկուն թագավորը դարձյալ մնում է ինքն իր հետ՝ ապավինվելով իր սեփական ժողովրդին:

1795 թ. Վրաստանի վրա է հարձակվում պարսից նոր շահը, գաբիուրելի մի ներքինի՝ Աղա-Մուհամեդ խանը: Ներքին երկպառակությունների անբարենպաստ պայմաններում 80-ամյա Հերակլը մի կերպ կարողանում է 1000 մարդ դուրս բերել թշնամու դեմ, որով անհնար էր կասեցնել Թիֆլիսի գրավումն ու վեցօրյա սուկալի թալանը: Արիասիրտ ծերունին, լքված իր բազմաթիվ որդիներից, փախչում է Արագվալի Անանուր բնակավայրը: Չնայած տարիքին, նա այնտեղ ժողովում է մի փոքրիկ բանակ և հաջորդ տարին և եթ գրավում Թիֆլիսը: Մակայն քաղաքն ու երկիրը դեռ երկար մնացին ամայի ու ավերակ վիճակում: Ծերունի թագավորը իր երկրի տառապանքներից ու հոգսերից ընկճված՝ մահանում է 1798 թ. Կախեթի Թելավ ավանում: Հանգչում է նշանավոր ու բազում գործերով հայտնի մի կյանք՝ մեծ վիշտ պատճառելով իր ժողովրդին: Վրացիները կորցնում են իրենց վերջին հովանավորին ու ասպետին:

Մակայն վիշտն էլ ի գոյու չէր վերջ դնելու ներքին կռիվներին: Թագավորի նենգամիտ այրին՝ Դարիան, ու երեք ամուսնություններից ունեցած բազմաթիվ որդիները ժառանգությունը բաժան-բաժան անելու մասին էին մտածում միայն: Որդիներից մեկը՝ Գեորգ Տասներեքերորդը դառնում է թագավոր, և պատերազմներում մեծ դժվարությունների հանդիպելով՝ գնում է Ռուսաստան՝ օգնություն խնդրելու: Այդ ընթացքում նրա եղբայր Ալեքսանդրը հավասարի իրավունքով գահ է բարձրանում և շրջվում դեպի պարսիկները: Վերջիններս լեզգիական մի հրոսակախմբով երկիր են ներխուժում և ետ քաշվում միայն ռուսների առաջխաղացման հետ: Ժամանակավորապես կանխվում է երկրի գլխին կախված վտանգը: Շատ չանցած՝ Գեորգ թագավորը, Թիֆլիսում մահվան մահճում պառկած, ուղերձով դիմում է ռուսաց Պավել ցարին և խնդրում ընդունել վրաց գահը: 1801 թ. Վրաստանը միանում է Ռուսաստանին: Մի քանի տարի անց Իմերեթը նույնպես դառնում է ռուսական մարզ, գնալով վրացական մյուս տարածքները և ս միավորվում են ռուսական կայսրությանը:

Այս կերպ Վրաստանը փրկվում է մահմեդական վտանգից: Ռուսաստանի տիրապետության տակ բազմաչարչար ժողովուրդը նախ և առաջ ձեռք է բերում ռազմական ապահովություն, որն էլ իր հերթին տանում է տնտեսության վերելքին: Մյուս կողմից սակայն ի հայտ են գալիս ռուսական տիրապետությանը բնորոշ թերի կողմերը. կայսրության ներքին կառավարումը չափից

ավելի կենտրոնաձիգ էր. անխնա ճնշվում էր ազգային ամեն տեսակի ինքնուրույնություն, բացառությամբ տեղական համայնքների չափազանց սահմանափակ ինքնավարության: Ընդհանուր առմամբ տիրում էր քաղաքական ճնշող անազատություն: Պարզապես տարվում էր նախ և առաջ ռուսականացման քաղաքականություն, որը շատ արագ իր արտահայտությունը գտավ՝ չրաց եկեղեցին, որ մինչ այդ ինքնուրույն էր, սուրբ Սինդոդի ենթակայության տակ դնելով (1811 թ.), ապա հետևեցին բռնություններն ազգային դաստիարակության ու լեզվի բնագավառներում:

1884 թ. վրացական բանակը, որ դեռ պահպանել էր իր ինքնուրույն գոյությունը, ներգրավվում է ռուսական կայսրության ընդհանուր զինվորական կառույցների մեջ, որով և ոչնչացվում է վրաց թագավորության անկախության վերջին մնացորդը: Այս ամենը հատկապես ազնվականություն ներսում և վերին խավերում առաջացնում է աճող դժգոհություններ և տեղիք տալիս բազմաթիվ խռովությունների: Անցյալ դարի երկրորդ կեսին ազգային պոեզիան զարթոնք է ապրում, հանդես են գալիս բազմաթիվ շնորհալի բանաստեղծներ ու գրողներ: Ռուսական կառավարության ու գոյություն ունեցող հասարակական կարգերի դեմ վերին խավի ներսում ձևավորված ազգային ռոմանտիկ այս շարժումից շատ ավելի վտանգավոր էր ընկերվարական հեղափոխական քարոզչությունը, որն անցյալ դարի վերջերին և այս դարի սկզբին թափանցել էր եվրոպական Ռուսաստանից և տարածում գտել անդրկովկասյան երկրների աշխատավորների շրջանում: Այստեղ կար համեմատաբար զարգացած արդյունաբերություն, ամենից առաջ նավթարդյունաբերություն՝ կենտրոններ ունենալով Բաքուն, Մայկոպը և Գրոզնին: Աշխուժություն կար նաև մանգանի, պղնձի, մետաքսի, բամբակի, շինարարական և զինեգործության բնագավառում:

Արդյունաբերության արագ զարգացման հետ միաժամանակ հանդես են գալիս ծանրակշիռ ու խճողված խնդիրներ: Դասակարգային, մշակութային ու կրոնական հակասությունները գլուխ են բարձրացնում հատկապես այն երկրներում, ուր տեղի չէ ավորված աշխատուժե ենթարկվում էր արտասահմանյան կապիտալի անխնա շահագործմանը: Ավատատիրությունից անմիջապես արդյունաբերության անցնելու ընթացքում ձևավորվում է բանվոր դասակարգը, որն առավել վտանգավոր է դառնում, երբ անմշակ ու չմարսված ընդունելով օտարածին արևմտաեվրոպական նորագույն ուսմունքները տանում և տարածում է գյուղերում: Կայսերապաշտական կառավարության կիրառած հակազգային տարբեր պատժամիջոցները նույնպես նպաստում են ընկերվարականների բանակի ստվարացմանը: 1904—1906 թթ. Անդրկովկասի տարբեր շրջաններում բռնկվում են լուրջ խռովություններ: Չնայած դրանք ճնշվեցին արյունոտ ընդհարումներով, սակայն ապագայի համար մնացին որպես լուրջ նախազգուշացում:

Այնուհետև սկսվեց 1914 թ. համաշխարհային պատերազմը: 1917 թ. մարտին ռուսական Դոմա-հեղափոխությունը Անդրկովկասում ընդունվեց ոգևորությամբ: Փոխարքային փոխարինեց Կերենսկու չորս հոգիանոց հանձնախումբը՝ մի վրացի, մի հայ, մի թաթար և մի ռուս, որոնք ներկայացնում էին Անդրկովկասի ներքին կառավարությունը: Իշխանության ֆունկցիան սակայն գերակշիռ մասով ընկած էր նորաստեղծ, մասամբ ընկերվարականացված բանվորների ու զինվորների խորհուրդների վրա: Շուտով ծայր առավ նաև իր տեսակի մեջ դաժան ազգային հակամարտությունը՝ ուժեղ բախումներով, հատկապես քրիստոնյա հայերի ու մահմեդական թաթարների միջև, որոնք մեծ մասամբ հանդես էին գալիս թուրքերի հետ:

1917 թ. Սամկու Պետերբուրգում տեղի ունեցավ բուլշևիկյան հեղափոխություն, որն էլ ավելի խճճեց հարաբերությունները: Չորսի խորհրդին Թիֆլիսում փոխարինում է անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական մի «Կոմիսարիատ», որի կազմում էին երեք վրացի, երեք հայ, երեք թաթար և երեք ռուս, նախագահը վրացի Գեգեչկորին էր: Կոմիսարիատը հենվում էր «Անդրկովկասյան ժողովի» կամ Սեյմի վրա, որը 1918 թ. փետրվարի 23-ին գումարվեց Թիֆլիսում: Կոմիսարիատը և Սեյմը ձեռք-ձեռքի աշխատում էին բանվորների, զինվորների, գյուղացիական համայնքների խորհուրդների ու վրացիների, հայերի, թաթարների «Ազգային կոմիտեների» հետ: Նրանք չէին միանում ռուս կոմունիստներին, սակայն պատրաստ էին համագործակցել Ռուսաստանի ոչ բուլշևիկյան կուսակցություններին՝ պահպանելով իրենց միասնությունը ռուսական կայսրության հետ:

1917 թ. դեկտեմբերի 18-ին անդրկովկասյան գործերի հրամանատար ռուս գեներալը զինադադար կնքեց թուրքերի հետ: Այնուհետև զորամիավորումները կոմունիստական քարոզչության ազդեցության տակ քայքայվում և տուն էին վերադառնում: Անդրկովկասյան ժողովուրդները դարձյալ մնում են մենակ և պետք է փորձեին իրենց սահմանները պաշտպանել արևմուտքից առաջխաղացող և զնալով ավելի պնդերես դարձած թուրքերից: 1918 թ. ապրիլի 14-ին թուրքերը գրավում են Բաթումը: Ապրիլի 22-ին Սեյմը Անդրկովկասյան հանրապետությունն անկախ է հայտարարում: 1918 թ. մայիսի 26-ին, հինգ շաբաթ գոյատևելուց հետո, որոշումով լուծարվում է այդ հանրապետությունը: Վրաստանն իրեն հռչակում է անկախ և դաշինք կնքում գերմանացիների հետ: Երկիր ժամանած գերմանական զորքը վրացիներին պետք է պաշտպաներ թուրքերից: Այնուհետև տեղի է ունենում փլուզում նախ Թուրքիայում, ապա Գերմանիայում: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիան զինադադար է կնքում: Անդրկովկասում հիմնովին փոխվում է իրադրությունը, քանի որ գերմանացիներն ու թուրքերը ստիպված հետ են քաշվում Վրաստանից, Բաթումից, Ռուսահայաստանից և Ադրբեջանից: Չնայած անդրկովկասյան անկախ հանրապետությունները դիմադրություն էին ցույց տալիս Ռուսաս-

տանի բուլշևիկյան կառավարությանը, այնուամենայնիվ նրանք Եկատերինոդարի հակահեղափոխական առաջնորդների համար մնում էին թշնամի, քանի որ նպաստում էին ռուսական կայսրության քայքայմանը: 1919 թ. մարտին Դեմիկինը հարձակվում է Վրաստանի վրա: Հարձակումը կասեցնում են դաշնակիցները, որոնք պատրաստ կանգնած էին անկախ պետությունների սահմաններին:

Երբ վրացական կառավարությունը, նորից իր վրա վերցնելով պատասխանատվությունը, փորձում էր ստեղծել Անդրկովկասյան հանրապետությունների դաշինք, Դեմիկինի բանակը 1920 թ. սկզբին ջախջախվում է: Ծրագիրը ձախողվում է հայ-թաթարական հարաբերությունների ծայրահեղ լարման հետևանքով: Վրաց կառավարության և Մոսկվայի միջև բազմաթիվ բանակցություններից հետո, 1920 թ., շնորհիվ լեհական պատերազմի, որ մեծ ջանքեր էր խլում խորհրդային կառավարությունից, ի վերջո կնքվում է համաձայնագիր, որով խորհրդային կառավարությունը ճանաչում է Վրաստանի անկախությունը և հրաժարվում նրա ներքին գործերին ամեն տեսակի միջամտությունից: Վրաստանին էր մնում նաև Բաթումը, հենց որ քրիտանացիները, որ մտել էին գերմանացիներից հետո, հուլիսի 9-ին հեռանալիս քաղաքից:

Այսուհանդերձ վիճակը Վրաստանում, ինչպես նաև Հայաստանում, ճրգնաժամային էր: Բնակչությունը բարոյալքված էր շարունակ անհուսալի հարաբերությունների, բազմաթիվ հեղաշրջումների, առևտրական կապերի խրզման հետևանքով: Վրաստանում համատարած թշվառություն էր, որ հանգեցնում էր բուլշևիկյան հուզումների: Լեհաստանի հետ պատերազմը ավարտելուց (1920 թ. նոյեմբեր) և Ղրիմում սպիտակ բանակը ջախջախելուց հետո բուլշևիկները 1921 թ. փետրվարին հարձակման անցան Վրաստանի վրա: Այդ նախաձեռնությանը նպաստեց Թիֆլիսում բուլշևիկյան մի ապստամբություն, որին մասնակցում էին հիմնականում հրեաներ, ռուսներ ու հայեր: Արդյունքում վրացական կառավարությունը՝ Ժողդանիայի ղեկավարությամբ, փախուստի դիմեց:

Վրաստանում ստեղծվում է խորհրդային հանրապետություն՝ վրաց բուլշևիկների ղեկավարությամբ: Կարսի համաժողովում ( 1921 թ. հոկտեմբերից մինչև նոյեմբեր) կարգավորվում են հարաբերությունները Անկարայի կառավարության հետ: Անդրկովկասյան խորհրդային երեք հանրապետությունները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, միավորվում են մի դաշնության մեջ, որն իր հերթին մտնում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ռուսական մեծ միության մեջ՝ կենտրոնական կառավարության նստավայր ունենալով Մոսկվան: Դեպքերի բազմաթիվ հետևանքներով հանդերձ, մնան ելքը, անշուշտ, անխուսափելի ու անհրաժեշտ էր՝ խաղաղություն ձեռք բերելու համար: Այդ հանրապետությունները միայնակ ի վիճակի չէին զսպել իրենց զորեղ հարևանին:



Թե ինչ ընթացք են ստացել հարաբերությունները, երևում է ինչպես վրացիների, այնպես էլ հայերի ապագայից, որի ապահովությունը լավագույնս երաշխավորված է ռուսական պետությանը միանալու շնորհիվ: Սակայն այս ժողովուրդներին միշտ անհրաժեշտ է եղել, ինչպես նրանք այսօր ունեն, ազատ և ինքնուրույն կառավարություն, որը հասու էր կարգավորել իրենց ներքին գործերը, հոգավ և նպաստել իրենց ինքնատիպ մշակույթի զարգացմանը և սատարել ազգային ապրելակերպը: Նրանք խոսում են իրենց մայրենի լեզվով, պահպանում ազգային կառուցվածքները և գերե՛ են այնպիսի ճնշումից, որ վարում էր նախկին ցարական կառավարությունը՝ կիրառելով նրանց վրա ռուսականացման իր անմիտ փորձերը:

## V.

### ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեկոյան ժամը 7-ին (հունիսի 16) գնացքը Թիֆլիսից շարժվեց դեպի Հայաստան: Կայարանում մարդկանց հոծ բազմություն էր հավաքված, որ ջանում էր մահվան գնով գնացք նստել: Անմխիթարական էր վագոնների առաջ խռնված, ծանր ճամպուրկներով, արկղերով ու զամբյուղներով բեռնված կանանց ու տղամարդկանց վիճակը: Գոռգոռոցներն ու կշտամբանքներն առաջացնում էին ականջ խլացնող աղմուկ: Սակայն զարմանալի էր, թե ինչպես երկաթուղային այդ վագոնները կարողացան այդքանը կուլ տալ՝ աստիճանաբար ներս խցկելով մարդկանց: Ինչպես էին նրանք ներսում տեղավորվել, չգիտեմ, այնուամենայնիվ դրսում մարդ չէր մնացել, իսկ գնացքը հանդարտ շարժվեց կայարանից:

Մենք ուղղություն վերցրինք Թիֆլիսից փոքր-ինչ հարավ, անցանք Կուրի վրայով և մի հարթավայրով, ուր Կոթիի մոտ գտնվում էր մի փոքրիկ արդի լճակ՝ ծովից մոտ 500 մ բարձրությամբ: Այնուհետև սկսվեց վերելքը Դեբեդ կամ Բորչալուչայ գետի նեղ հովտով ու վայրի լեռնաձորերով: Սակայն գիշերը վրա հասավ, և մենք ոչինչ չտեսանք գեղեցիկ այդ լեռնաշխարհից:

Առավոտյան կողմ կարել անցել էինք Կուրի և Արագի ավազանների ջրբաժանը՝ ծովից 1952 մ բարձրության վրա: Երբ ետ քաշեցի վարագույրը, իմ առաջ մի բնապատկեր էր Հայկական բարձրավանդակից՝ խորքում Ալագյազի հզոր զանգվածը, որի սպիտակ գագաթը փայլփայլում էր առավոտյան արևի տակ: Մերկ, ծառագուրկ երկիր, կանաչի ոչ մի հետք չըջակայքում, անտառածածկ ոչ մի լեռնաշղթա: Այս չոր, դեղնաշագանակագույն հողն է, որ գաղթա-

կանների համար դարձնելու ենք մշակելի: Գնացքի պատուհանից դիտելով այն՝ չէի ոգևորվում:

Մենք մոտենում էինք Ալեքսանդրապոլին՝ հին Գյումրիին, այժմ Լենինական է կոչվում: Չէր զգացվում, որ մեծ քաղաքի ենք մոտենում: Ժամը 8 անց 30-ին (հինգշաբթի, հունիսի 17) մտանք կայարան: Չնայած վաղ առավոտ էր, կայարանում մեզ սպասում էր մի սովոր բազմություն: Հայաստանի կառավարության անունից մեզ ողջունեց գյուղատնտեսության ժողկոմ Երզնկյանը: Նա բարձրահասակ, նրբակզամ, վայելչատես անձնավորություն էր, տիպիկ հայ՝ ցայտուն, խելացի դիմագծերով, մեկը՝ գեղատես Աբրահամ Լինքուլի և հրապուրիչ Մեֆիստոֆելի միջև: Բարձր կարճագանգ գլխի ձևը՝ ականջներից մինչև գլխի գագաթը թեթևակի կորուսյամբ, երկար նեղ դեմքով, բարձր ուռուցիկ ճակատով, սուր քթամեջքով և փոքր ինչ դեպի ցած թեքված քթով ու բարակ, սեղմ շուրթերով բերանը թողնում էին ազնիվ ցեղի տպավորություն: Ժողկոմը մեզ ուղեկցելու էր Երևան: Այնտեղ ամբողջ ժամանակ միասին էինք աշխատելու:

Դիմավորողների թվում էր նաև քաղաքի կողմից մի պատգամավորություն՝ իրենց պետի գլխավորությամբ: Մեզ, որպես քաղաքի պատվավոր հյուրերի, հրավիրեցին ռոռզման նոր ջրանցքի բացման արարողությանը, որ տեղի էր ունենալու հաջորդ կիրակի: Իսկ ամերիկացի պարոն Բիչը, որ տնօրենն էր «Մերձարևելյան նպաստամատույցի» քաղաքամերձ որբանոցների, հրավիրեց մեզ (ջրանցքի բացման հանդիսություններից հետո) մի քանի օր անցկացնել կազմակերպության այդ մեծ բաժանմունքում: Երկու հրավերն էլ ուրախությամբ ընդունեցինք: Ջրանցքի բացմանը ներկա գտնվելը հարմար առիթ էր ուսումնասիրելու արհեստական ռոռզման այդ նոր կառույցը, չէ որ դա մտնում էր մեր հանձնարարությունների շրջանակի մեջ: Այնուհետև կարող էինք ամերիկյան այդ մեծ հաստատությունում ծանոթանալ հազարավոր հայ երեխաների դաստիարակությանն ու խնամքին:

Այստեղ պետք է բաժանվեինք ամերիկացի հարգարժան լրագրողից, որ ուներ Ամերիկա ինքնատիպ ազգանունը: Նա մեզ հետ եկել էր Կոստանդնուպոլսից, որպեսզի գրեր «Մերձարևելյան նպաստամատույցի» աշխատանքների մասին: Գնացքով նա շարունակեց իր ճանապարհը:

Նույն մերկ տեղանքը՝ ալիքավոր, դեղնաշագանակագույն տափաստան, առանց աչքի զարնող բուսականության: Չէ որ ջրբաժանը թողել էինք հետևում և այժմ արդեն պետք է որ ցած իջնեինք, սակայն դարձյալ վերելք, որ փնչացող շոգեքարշը հազիվ էր հաղթահարում: Գնացքն այնքան դանդաղ էր առաջ շարժվում, որ հետիոտները կարող էին մեր կողքով համաչափ քայլել: Ի վերջո կանգ առանք: Մարդիկ կարծելով որ արգելակներն են խափանվել, վազում էին գնացքի երկարությամբ և պտտում դրանք:

Այդ ընթացքում թեյը պատրաստ էր, և սրահում նախաճաշ մատուցվեց:

Գնացքը շչալով կրկին շարժվեց, բայց արդեն ցած էր իջնում և շուտով վերցրեց լրիվ արագություն: Գնում ենք դեպի հարավ, Արփաչայ գետի արևելյան ափի երկարությամբ, որ հոսելով խոր հունով, կտրում անցնում է ալիքաձև հարթությունը: Գետահունն ունի բարձր, զանազան լանջեր, լավայի ու բազալտի հորիզոնական շերտերով, որոնք առաջացել էին շրջակայքի հրաբուխների ժայթքումից: Մեզնից ձախ, դեպի արևելք, Ալազյազի հսկա զանգվածն է, ծովից 4095 մ, իսկ շրջակայքից 2500 մ բարձր: Մյուս կողմում Ալազյա լեռնաշղթան է՝ հրաբխային կոներով մխրճված կապույտ երկնքում:

Արփաչայը գտն է այժմ բավարար ջուր ունի մեծ տարածություն ոռոգելու համար: Ահա այնտեղ, հյուսիս-արևմուտքից հարթավայրով, փոքրիկ հունով մի վտակ է հոսում: Ավելի հեռվում դեպի հարավ մի մեծ գետ է հոսում, ճիշտ այնքան, որքան Արփաչայը, որ անցնում է Կարսի բերդի արևմտյան կողմով՝ իր մեջ առնելով Չրլորգյուլից (ծովից 1988 մ բարձր) սկիզբ առնող մի գետակ: Այս լիճը գտնվում է հյուսիս-արևմտյան լեռների մեջ, Ղարդաղի (ծովից 3192 մ բարձր) մոտ: Կարսի գետի ակունքները գտնվում են այն նույն լեռներում, ինչ Կուրի ակունքները: Արփաչայի այս կողմը քարոտ է և ոչ այնքան բերրի: Մյուս կողմն ավելի կանաչապատ է, սակայն այնտեղ Թուրքիան է: Պատերազմից հետո սահմանն անցնում է գետով: Այն կողմում կան բազմաթիվ լքված գյուղեր: Դրանք հայկական գյուղեր են եղել, որոնց բնակչությունը պատերազմի ժամանակ, թուրքերի առաջխաղացման հետ, փախել է գետի այս կողմը: Ափսոս, որ գետի այդ կողմի հողերը քիչ են մշակված:

Արևմուտքում, գետի այն ափին, լեռան փեշերին նկատեցինք ավերակներ: Դա Անին է, «հազար եկեղեցիներ ունեցող քաղաքը», Հայաստանի 10—11-րդ դդ. հիասքանչ մայրաքաղաքը, միջնադարյան Հայաստանի պատմության ծաղկուն ժամանակաշրջանում հայոց Բագրատունի թագավորների նստավայրը: Չնայած անդադար պատերազմներին մի կողմից մահմեդական արաբների, թուրքերի, թաթարների ու քրդերի գերազանցող ուժերի, մյուս կողմից՝ քրիստոնյա Բյուզանդիայի դեմ՝ այստեղ հասել էին արտակարգ շքեղության, կառուցել եկեղեցիներ, վանքեր, դղյակներ ու ամրոցներ, որոնք այսօր էլ վկայում են բարձրարժեք մշակույթի մասին և անցյալի ճարտարապետական հուշարձանների գլուխգործոցներից են:

Թալանված ու ամայացված սելջուկ թուրքերի, մոնղոլների ու այլ ժողովուրդների կողմից, ավերված երկրաշարժից՝ Անին այժմ մեռած քաղաք է մեկուսի, ամայի մի վայրում: Դեռ կանգուն են քաղաքի հին պարիսպները՝ 30-ից ավելի աշտարակներով: Դարպասով կարելի է մտնել քաղաքի ամայի փողոցները: Այնտեղ թագավորական ապարանքի ավերակներն են, հիշարժան Մայր տաճարը և այլ հույակապ եկեղեցիներ, որոնց կառուցումը թվագրվում է Ջ. Ժ. հ. 1000-ական թթ.: Չնայած քաղաքը լքված ժամանակից ի վեր անբնակ է եղել, այնուամենայնիվ նրա պարիսպները չեն քանդվել և քարերը չեն օգտա-

գործվել այլ շինությունների համար: Անապատում մնացել է այնպես, ինչպես ամայացել է ավելի քան կես հազարամյակ առաջ:

Քաղաքը գտնվում է մի փոքր բարձրադիր հարթության կամ լեռնալեզվակի վրա, երկու՝ 30—60 մ խորություն ունեցող ձորերի միջև, որ առաջացրել են այստեղ իրար հանդիպած երկու գետեր, մի կողմից՝ Արփաչայը, մյուս կողմից՝ սրա վտակ Ալազյաչայը: Մի ժամանակ ավերակներում բնակվում էին մի հայ վանական և մի հայ գյուղացու ընտանիք: Հավանաբար նրանք նույնպես գաղթել են՝ երկիրը թուրքական դառնալուց ի վեր, և այժմ լքված ավերակները մեկուսի մտորում են գորշ ամայության մեջ:

*Այն պալատում, ուր Բահրամ ձեռքին գավաթ էր բռնած,  
Հիմա այժյանն է ծնել, հանգիստ աղվեսն է բնած...  
Բահրամ, դու, որ «գոռ» էիր որսում ամբողջ քո կյանքում,  
Տեսա՞ր ինչպես մի անգամ ինքը «գոռը» թե՛ գ որսաց...<sup>1</sup>*

Այնքան շատ ավերակներ կան արևելյան այս երկրում: Յածր մշակույթ ունեցող ժողովուրդները, որոնք ի վիճակի են միայն թալանել ու ավերել, բայց ոչ երբեք կառուցել, այստեղ կործանել են մարդկային կյանքեր ու մարդկային ստեղծագործություններ:

Շարունակ ընթանալով դեպի հարավ՝ մեր առաջ փոփեց Սարդարապատի ընդարձակ անապատը, որն առանձնահատուկ կարևորություն ուներ մեզ համար: Այստեղ պետք է փախստականներ տեղավորենք, եթե միայն կարողանանք Արփաչայից ոռոգման ջուր հանել: Ծովի մակերևույթից 1500 մ բարձր այս քարքարոտ, ալիքաձև հարթությունը ծածկված է Ալազյազից արտավիժած լավաներով: Դեպի հարավ այն աստիճանաբար ցածրանում է մինչև խորքում փոփած հարթավայրը, որը տարածվում է դեպի արևելք, պատմական Արազ գետի հյուսիսային ափով: Իսկ գետի մյուս կողմում դեպի հարավ-արևելք է ձգվում մի հսկա լեռնազանգված՝ ամպերի մեջ կորած ձյունն սպիտակ փայլփյուռ գազաթով: Դա Արարատն է, այս տեղանքի տիրակալը, որ երևում է ամեն տեղից: Ծովի մակերևույթից 5156 մ բարձրություն ունեցող այդ հրաբուխն անմիջապես վեր է խոյանում հարթավայրից (ծովից մոտ 900 մ բարձր): Համեմատության համար պատկերացնենք Մոմբլանը՝ իր ամբողջ բարձրությամբ կանգնած հարթավայրում: Ազդեցիկ տեսարան: Այստեղ ես հասկանում այս լեռան խաղացած դերն Աստվածաշնչի առասպելում և հայ ժողովրդի պատմության մեջ: Միանգամայն բնական է, որ հայերն այս լեռը որպես ազգային խորհրդանիշ կրում են իրենց զինանշանի վրա՝ չնայած վերջին պատերազմից հետո այն գտնվում է թուրքական կողմում: Պատմում են, որ թուրքերը դրա համար բողոքել են արտագործ կոմիսար Չիչերինին, իսկ վերջինս որպես պատասխան հարց է տվել, թե թուրքերը կիսալուսինը դնելով ի-

<sup>1</sup> Օմար Խայամ, քարզմ. Ա. Աբայանի:

րենց զինանշանին՝ արդյո՞ք այն թուրքական տիրապետության տակ են համարում: Հարավում ձյունադաշտերով այլ լեռներ էլ կային, իսկ հյուսիս-արևելքում բարձրանում է Ալազյազի լայնահիստ կոնը՝ ձյունածածկ գագաթով:

Երկաթուղին թեքվեց դեպի հարավ: Հարթավայրը, որով անցնում էինք, դեղնաշագանակագույն էր, անհուսալիորեն չոր, այս ու այնտեղ մի քանի տատակափշերից բացի այլ բուսականություն չկար: Այն իրապես թողնում էր անապատի տպավորություն: Մի՞թե իսկապես հնարավոր է, որ միայն ջրով ապահովելու դեպքում այս հողը ծածկվի հարուստ բուսականությամբ, մեզնից հյուսիս, Ալազյազի դենդիմսգ գտնվող այս մերկ, չոր բլրաշարքերը ծաղկեն խաղողի և պտղատու այգիներով, ուր կաճեն խաղողի հրաշալի տնկիներ ու դեղձի ծառեր:

Գյուղատնտեսության նախարար, մեր բարեկամ Երզնկյանը հավաստիացնում էր, որ այս հրաբխային հողն արտակարգ բերք կտա, եթե միայն ոռոգվի: Այն հարյուրամյակներ անմշակ մնալով՝ ուժ է հավաքել, որն էլ անսպասելի դարձնում բերքատվության հնարավորությունը: Ժամանակը ցույց կտա, թե ոռոգման շնորհիվ ինչի կարող է վերածվել այս երկիրը: Մեր փորձագետը նույնպես հաստատեց, որ, անշուշտ, մնան հրաբխային հողերն արտակարգ բերրի են, միայն ջուր է հարկավոր:

Մենք անցնում էինք կայարան կայարանի ետևից: Դրանք ավերված էին, քանդված թուրքերի կամ նաև գաղթականների կողմից, որոնք պատերազմի ժամանակ հազարներով երկիր ներխուժեցին և սարսափելի տառապելով խիստ ձմռան ցրտերից՝ շենքերի տանիքների փայտյա մասերն ու հատակն օգտագործեցին որպես վառելանյութ: Չարմանալի էր, որ այս անապատում, ուր կյանք չկար, կային կայարաններ, ուրեմն այստեղից ոչ շատ հեռու ինչ-որ տեղ պետք է որ մարդիկ բնակվեն: Հասանք Արագ կայարան, որի շրջակայքը մասամբ բնակեցված էր: Հարթավայրն այստեղ դարձյալ չոր է, չնայած հարավում կանաչ մի շերտ է երևում: Ահա և Սարդարապատ կայարանը: Այստեղ կա կանաչ խոտածածկ: Նոր ջրանցք է փորված, որ Արագից ջուր է բերում ու ոռոգում հարթավայրը: Աներևակայելի փոփոխություն միանգամից՝ մշակված դաշտեր, բամբակի տնկարաններ: Կայարանի մոտ ֆաբրիկայի շենքեր էին՝ բամբակագտիչ մի մեծ գործարան: Այս տարի այստեղ մաքրվել է 80000 փուք (1310000 կգ) բամբակ, հեռանկարում ծրագրված էր հզորության անընդհատ աճ: Այսուհետ մեր անցած ճանապարհի երկու կողմերում տեսնում էինք կանաչ, բերրի դաշտեր, մեծ մասամբ բամբակի, ուր կանայք քաղհան էին անում: Անապատը նահանջել էր, ջրանցքն իր ճյուղերով ամենուրեք ոռոգման ջուր էր հասցնում: Արագի պղտոր ջրերն անմահանում էին՝ բերրի դարձնելով հողը:

Առանձին վայրերում կային նաև բրնձի դաշտեր, ցածր հողապատնեշով շրջապատված ուղղանկյունիներ, որոնք մասամբ ջրի տակ էին: Տղամարդիկ

կիսամերկ կանգնած ջրի մեջ՝ զբաղված էին բույսի մշակմամբ և քաղհանով: Երզնկյանը պատմում էր, որ կառավարությունն արդեն արգելել է բրնձի մշակումն այս շրջանում, քանի որ այն նպաստում է դողերոցքի տարածմանը, որն այս կողմերում մշտապես առկա է:

Անցնում էինք գյուղերի մոտով, ուր տների փլատակներ էին միայն, որ վերջերս էին ավերվել թուրքերի կողմից: Չարմանալի է, որ մարդիկ այստեղ սովորություն չունեն ավերակները կարգի բերելու և այն կրկին որպես բնակավայր օգտագործելու: Նրանք լքում են ավերակները և մի այլ տեղում կառուցում իրենց տները: Հավանաբար դա գալիս է այն բանից, որ այստեղ տները կառուցում են կավից կամ կավածեփ աղյուսից, որն արևի տակ ավելի է չորանում, և այդ ձևով ավելի հեշտ է նորերը կառուցել, քան հին նյութը կրկին օգտագործել: Այդ է պատճառը, որ երկիրը պատած է տների ավերակներով:

Գնալով դեպի արևելք՝ անսպասելիորեն նվազեցին մշակված հողատարածությունները, ի հայտ եկան ընդարձակ ճահճուտներ՝ մասամբ բարձր եղեգներով, որ ակնհայտ հակադրությունն էր արևմուտքի չոր անապատի: Այս խոնավ հողը նույնպես ոչ պակաս անբերրի է: Չարմանալի չէ, որ ամեն ինչի շատը և ամեն ինչի քիչը վնասակար է, դա վերաբերում է նաև ջրին: Հողը բերրիացնելու համար ամենից առաջ ի՞նչ է հարկավոր. չորացնել ճահճուտները և կարգավորել ջրի հոսքն ու կուտակումը: Երզնկյանը պատմում էր, որ կառավարությունը ծրագրեր է մշակում նաև այդ ուղղությամբ:

Մտնենում ենք Երևանին: Երկաթգծի երկու կողմերում մույն չոր անապատն է, որ անշուշտ կարելի է մշակել, եթե ջուր հասցվի այստեղ: Իսկ հյուսիս-արևելյան կողմում հովտին մայրը լեռնալանջերը ծածկված են տերևախիտ ծառերով, դրանք Երևանի հայտնի խաղողի և պտղատու այգիներն են:

Յերեկվա ժամը 1-ին մտանք կայարան, ինչպես որ ընդունված է ամենուր, այն գտնվում էր քաղաքից դուրս: Մեզ դիմավորելու էին եկել կառավարության ներկայացուցիչներ և բազմաթիվ այլ մարդիկ, որոնց թվում նաև օրիորդ Ֆլորա Մարդանյանը, հրաշալի մի կին, որ Հայաստանում մեծ նվիրվածությամբ աշխատում էր փախստականների հետ:

Ավտոմեքենաներով մեզ հասցրին քաղաք: Երևանը իր ցածր, խղճուկ տներով մեծ քաղաքի տպավորություն չէր թողնում: Մակայն այն վայելչորեն տարածվում էր Չանգու գետի խոր կիրճին հարող հարթավայրում, որ հյուսիսում եզերված է գաղիթափ ժայռերով: Մեր հյույանոցը գտնվում էր քաղաքի զբոսայգու մոտ: Ամեն մեկս ստացանք մի ընդարձակ սենյակ: Սաստիկ շոգին ցնցոտով լողանալու հնարավորությունը ողջունեցինք կրկնակի շնորհակալությամբ:

Ժամը 2-ին այցելեցինք Հայաստանի կառավարություն: Բարեմաղթանքներից հետո անմիջապես հաստատվեց աշխատանքային ծրագիր, և պայմանավորվեցինք մույն օրը, ճաշից հետո, ժամը 6-ին հանդիպել մեծ հանձնախմբին, որ կազմվել էր կառավարության կողմից՝ մեզ հետ աշխատելու համար:

Կիզիչ արևի տակ քայլում էինք քաղաքի կենտրոնական փողոցով: Մայթերը լիքն էին աշխույժ անցուդարձ անող հետիոտներով, և մենք շարունակ հայտնվում էինք բազմության մեջ, որի մեծ մասը մուրացիկ պատանիներ էին: Նրանք ցնցոտիներով էին, սակայն լավ սնված և ոչ թշվառ տեսքով: Փողոցում հանդիպեցինք գեղեցկադեմ շատ մարդկանց, հատկապես մի դեռատի, կայտառ աղջկա, որ իսկական գեղեցկուհի էր:

Մենք նկատեցինք, որ ցերեկը փողոցներում անցուդարձ անող բազմությունը տղամարդիկ էին: Գրեթե բոլորի հագին կային շագանակագույն, մոխրագույն կամ սպիտակ խորհրդային վերնաշապիկներ՝ գոտիով, իսկ գլխներին՝ փափուկ, գուսպ բուշևիկյան գլխարկներ: Փողոցային կյանքը հեռու էր արևելյան գունագեղությունից ու եռուզեռից: Շատերը բավականին լավ էին հագնված, չէր զգացվում, որ մարդիկ շատ մեծ կարիքի մեջ են:

Փողոցների երկու կողմերում փոքր ծառերի շարքեր էին: Տները մեծ մասամբ ցածր էին, շատերը՝ միհարկանի, մի քանիսը միայն ունեին երկրորդ հարկ: Բոլոր տներն ունեին հարթ տանիք: Դրանց մեծ մասը շրջապատված էր պտղատու այգիներով, որոնք ռոռովում էին ջրանցքից հանված առուներով: Չէ որ Երևանը հայտնի է որպես այգեշատ քաղաք: Այգիները շրջապատված էին քարե բարձր պարիսպներով, փողոցից ոչինչ չէր երևում, եթե նոր բացված դարպասից մի հայացք չձգեիր ներս: Հասարակական շենքերից քչերն էին շրջապատված քարե պարսպով: Մայթերը ծածկված էին մեծ, հարթ սալաքարերով, իսկ փողոցներն ունեին կոպիտ, անմշակ քարե սալախատակ: Հազվադեպ էր երթևեկում ձի լծված կառք, ժամանակ առ ժամանակ վարգու էր ծանր բեռնավորված մի ավանակ, ավելի հաճախ երևում էին բարձր բարձած սայլեր՝ եզներով լծված: Փողոցներով երբեմն անցնում էր նաև ավտոմեքենա՝ պաշտոնատար որևէ անձնավորություն մեջը:

Կենտրոնական փողոցի վերջում, մի գեղեցիկ այգու մեջ, գտնվում էր համալսարանը, իսկ դրանից քիչ վեր մի այլ մեծ այգու մեջ՝ հիվանդանոցը: Այստեղ հանկարծակի վերջանում են քաղաքն ու այգիները, իսկ ճանապարհը մերկ ժայռերի միջով մեծ դժվարությամբ բարձրանում է դեպի քաղաքից հյուսիս, Չանգու գետի խոր կիրճի արևելյան կողմում գտնվող լեռները: Այս ճանապարհը տանում է մինչև Թիֆլիս:

Կենտրոնական փողոցը սկիզբ է առնում քաղաքի զբոսայգուց, որն ունի բարձր սաղարթախիտ ծառեր, արահետներ ու թեյի մի տաղավար, որտեղից երեկոները երաժշտություն էր հնչում: Չբոսայգու մյուս կողմում ռուսական մի մեծ եկեղեցի էր՝ ընդարձակ հրապարակով: Եկեղեցին, անշուշտ, կառուցվել է նախկինում քաղաքում տեղավորված ռուսական կայազորի համար: Տեղացիներից քչերն են հաճախել եկեղեցի, որովհետև երևանցիները, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը, ամուր կառչած են իրենց հայկական լուսավորչական եկեղեցու: Այժմ զմբեթին ոսկե խաչի փոխարեն շողշողում է խորհրդային մի մեծ կարմիր

աստղ: Կարմիր գույնն այնքան էլ ներդաշնակ չէ երկնքի կապույտ ֆոնին:

Երևանը, լինելով Հայկական Հանրապետության մայրաքաղաքը, բազմաթիվ փախստականներ ընդունեց և արագ գերբնակեցվեց: Նախկինում այստեղ հաշվվում էր 30000 բնակիչ, ըստ Լինչի 1898 թ. նույնիսկ 15000, այժմ արդեն 60—70000: Մի կողմից՝ շատ տներ ավերվել ու նորերը չեն կառուցվել, իսկ մյուս կողմից՝ շատ բնակարաններ բեռնագրավվել են իշխանությունների կողմից: Զաղաքում բնակարանի խիստ կարիք է զգացվում, և մարդիկ ստիպված սեղո տեղավորվել են եղած տներում: Ըստ կառավարության պաշտոնական որոշման յուրաքանչյուր անձի հասնում է երկու քառակուսի մետր բնակտարածություն, դա, ինչպես ասվել է մի խորհրդի կամ համայնքի ժողովում, ճիշտ այնքան է, որքան տալիս են գերեզմանոցում:

Ամռանը Երևանում քիչ են անձրևները, և եղանակը բավականին համաչափ է: Օրվա առաջին կեսը քամի չկա, ճնշող տոթ է, կեսօրից սկսվում է քամին. այն կարող էր զովացնել, եթե այդքան փոշոտ չլիներ: Հարավային կողմից՝ Արարատից կամ էլ հյուսիսային լեռներից հաճախ սև ամպեր են գալիս: Ամպերը ճայթում են, սակայն անձրև հազվադեպ է քաղաք հասնում:

Երեկոյան խորհրդակցությունը կառավարական հանձնախմբի հետ տևեց երկուս ու կես ժամ: Այն վարում էր կառավարության փոխնախագահ Մավյանը: Ինժեներ քիմիկ, դոկտոր Կուրդիյանը, որ լավ խոսում էր անգլերեն ու գերմաներեն, մեր թարգմանիչն էր, քանի որ հանձնախմբի հայ անդամները չգիտեին արևմտավրոպական որևէ լեզու:

Սկզբում քննարկվեցին ընդհանուր հարցեր: Ապա տեղի տալով հանձնախմբի անդամների ցանկությանը, ես հաղորդումով հանդես եկա մեր պատգամավորական խմբի անելիքների ու ճանապարհորդության նպատակների մասին: Իմ այն հարցին, թե Հայաստանի կառավարությունը համաձայն է շարունակել փախստականների ընդունումը և թե կարո՞ղ է նրանց տեղավորել, փոխնախագահը պատասխանեց, որ 400000 փախստական ընդունելուց հետո թեև այնքան էլ շատ տեղ չկա այս փոքրիկ երկրում, այնուամենայնիվ կառավարությունը որոշել է գերագույն ճիգերի լարումով օգնել իր եղբայրներին Հայաստան գալու՝ առանց հաշվի առնելու դրանից բխող ծախսերը, սակայն նոր հողերի ռոռզման ու մշակման համար օժանդակության կարիք ունի:

Մենք պատասխանեցինք, որ այդ դեպքում մեր այստեղ գտնված կարճ ժամանակի ընթացքում պետք է անհապաղ ծանոթանալ հողի ռոռզման նախագծերին: Կառավարությունը և հանձնախմբի ինժեներները խոստացան ցույց տալ մեզ ամեն կարգի օժանդակություն՝ տրամադրելով բոլոր նախագծերը, քարտեզներն ու նախահաշիվները: Մենք պայմանավորվեցինք հենց հաջորդ առավոտյան սկսել ուսումնասիրել Մարդարապատի դաշտի ռոռզման մեծ նախագիծը, որի իրականացումն ամենից առաջ ցանկալի էր մեզ: Այն հարցին, թե ե՞րբ կցանկանանք ճանապարհ ընկնել, պատասխանեցինք.



«Ինչքան կարելի է շուտ»՝ հաշվի առնելով արևելյան ճշտապահությունը: Հայերն առաջարկեցին առավոտյան ժամը 5-ը: Բարի:

Երեկոյան մեզ ճոխ ընթրիք մատուցեցին՝ սառը խորտիկով ու ձկնկիթով, հայկական կոնյակով ու շատ այլ ճաշատեսակներով, հայկական ընտիր կարմիր ու սպիտակ գինիով, որի հայրենիքն է այս երկիրը: Ուշ գիշեր էր, երբ վերադարձանք մեր հյուրանոցը:

Անկյունի իմ սենյակի առաջ կար պատշգամբ: Ամբողջ օրը կիզիչ արևն այնպես էր տաքացրել հարավային պատը, որ սենյակում հեղձուցիչ շոգ էր: Ես լայն բացեցի պատշգամբի դուռը: Դրսում գիշերը թարմ էր ու զով: Ինձ համար լիովին ընկալելի դարձավ արևի մայր մտնելու հետ տների տանիքները բարձրանալու և բաց երկնքի տակ քնելու արևելյան սովորության բնական լինելը. այնտեղ նաև ընթրում և մախաճաշում էին:

Օդը մաքուր էր, անսահման խոր, գրեթե սև, հարավային երկինք՝ թրթռացող աստղերի առկայծող բազմությամբ, որ հյուսիսում երբեք չենք տեսնում: Հյուրանոցի դիմաց գրոսայգին էր, իր բարձրաբուն, հինավուրց ծառերով, և դրանց ծածկի տակ՝ թեյի տաղավարը: Այնտեղից հնչում էր լարային երաժշտություն և երգեցողություն, որը ժամանակ առ ժամանակ ավարտվում էր բարձր ծափահարություններով: Ծառերի մուգ սաղարթների միջից առկայծում էին լույսեր: Հյուրանոցին կից սրճարանից նույնպես լսվում էր երաժշտություն: Դա միապաղաղ պարային եղանակ էր:

Հյուրանոցի առջևի ընդարձակ հրապարակի աջ կողմում ուրվագծվում էին անորոշ, տարօրինակ կերպարանքներ: Մանրամասների մեջ խորանալով՝ թվում էր, թե մի ամբողջ քարավան էր դա՝ փողոցում լուռ անշարժացած ուղտեր՝ ճակատագրին ենթակա, հարցական բարձրացրած գլուխներով: Արևելյան հնազանդության տիպիկ օրինակ:

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԱՋԻ ՀՈՎԻՏԸ

Հայաստան հասկացությունը ժամանակի ընթացքում փոփոխություններ է կրել: Հին աշխարհում այն հզոր մի պետություն էր, որ հարավ-արևելքում և հարավում իր մեջ էր առնում Ուրմիա, Վանա լճերի, Տավրոս լեռնաշղթայի և Տիգրիսի ակունքների շրջանում տարածված բարեբեր երկիրը, հյուսիսում հասնում էր մինչև Սևանա լիճ և Վրաստան, արևմուտքում՝ մինչև Երզնկա և Եփրատ: Այնուհետև այն կտրատվեց, մասնատվեց և բաժան-բաժան եղավ, մինչև վերջիվերջ սեղմվելով՝ դարձավ Հայկական այս փոքրիկ հանրապետությունը, որ ունի մոտ 30000 քառակուսի կմ տարածք և հազիվ մեկ միլիոն բնակիչ, որի քանակը շարունակում է ուժեղ աճել: Փոքր այս երկիրը, սակայն, ունի հակոտնյա բնություն՝ անտառապատ, բերրի հովիտներ, այրված, ամայի

անապատներ, բարձր հրաբուխներ, կտրտված լեռնաշղթաներ, ընդարձակ հարթություններ: Այժմ նրա սահմաններն են. հարավում՝ Արագ գետը, արևմուտքում՝ մասամբ Արփաչայը, հյուսիսում, լեռնաշղթայի մյուս կողմում, Վրաստանն է, հյուսիս-արևելքում և արևելքում սահմանն Ադրբեջանի հետ անցնում է Սևանա լճի մյուս կողմով դեպի հարավ-արևելք, մինչև Արագ: Այդ գետի երկայնքով երկրի հարավ-արևելքում տարածվում է Թաթարական Ինքնավար Հանրապետությունը (Նախիջևան մայրաքաղաքով), որ ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի մի մասը<sup>2</sup>:

Բարձրաբերձ լեռնաշղթաների մի շարք, ձգվելով երկրի հյուսիս-արևմտյան անկյունից, անցնելով Լեռնակամից հյուսիս-արևելք, արևելքում և հարավ-արևելքում մոտենում է Սևանա կամ Գոյկչա մեծ լճին՝ արևմուտքում թեքվելով դեպի հարավ: Այդ լեռնաշարից հյուսիս տարածվում է մի լեռնաշխարհ՝ առատ տեղումներով, կանաչ ու բերրի հովիտներով, անտառածածկ լեռներով և հյութեղ արոտավայրերով: Սևանա լիճը գտնվում է բոլոր կողմերից բարձր լեռնաշղթաներով շրջապատված մի փոքրիկ գոգավորությունում: Լճից հարավ և հարավ-արևելք տարածվում է մի լեռնաշխարհ, որի մի մասը կոչվում է Ղարաբաղ՝ բերրի հովիտներով, ալպյան արոտավայրերով հարուստ բարձր, վայրի լեռներով: Եվ վերջապես երկրի հարավ-արևմտյան մասը կազմում է Արագի հովտի ընդարձակ հարթությունը:

Այս հարթության արևելյան եզրին գտնվում է Երևանը: Ինքնատիպ բնաշխարհ, կատարյալ տարբեր այն բանից, ինչը մենք՝ հյուսիսսիսիներս, ընկալում ենք որպես բնության գեղեցկություն: Մեր հասկացությունները պայմանավորված են մախ և առաջ մեր լեռներով, հովիտներով, խութածոցներով, անտառներով ու լճերով: Այստեղ գործել են այլ աշխարհի հսկաներ: Այստեղ ծավալները, վեր խոյացած զանգվածներն ու իջվածքները ունեն չափման բոլորովին այլ համակարգ:

Ահա այնտեղ, հարավում Արարատն է, որ հարթավայրից, Արագի ափերից, 4300 մ դեպի երկինք է մխրճվում իր ձյունե, հզոր գագաթով: Նրան հավասար լեռ չկա ամբողջ երկրագնդում: Նույն այդ հարթավայրի հյուսիսային կողմում բարձրանում է մի այլ հսկա լեռ՝ Ալազյազ հրաբուխը, որ ունի ծովից մինչև 4095 մ, իսկ հարթավայրից մոտ՝ 3000 մ բարձրություն: Երկու հսկաների գագաթների միջև տարածությունը 87 կմ է: Մարդու գիտակցության մեջ դրժվար են տեղավորվում այդ հզոր բարձունքներն իրենց համաչափ ու աստիճանական զառիվերներով, տրամաբանական չափերով, ընդարձակ տարածություններ բացող ջինջ օդով:

Այս երկիրն ինքնին մի յուրատեսակ աշխարհ է: Այն եղել է մարդկության վաղ պատմության շրջանի հին առասպելների գործողության վայր: Այստեղ

<sup>2</sup> Բնագրում այսպես է. Թարգմ.:

կամ համեմայնդեալ մտակայքում ինչ-որ տեղ պետք է որ գտնվելիս լինի դրախտը՝ չորս գետերի ակունքներով, որոնցից երկուսը Եփրատն ու Տիգրիսն են, որ հենց սկիզբ են առնում հին Հայկական բարձրավանդակից: Մյուս երկուսը հավանաբար Արագն ու Կուրն են: Սա եղել է նաև մարդկային ցեղի երկրորդ հայրենիքը, ուր Նոյն իջավ լեռից, տնկեց խաղողի այգիներ և մարդկանց ընտելացրեց զինու ուրախությանը: Գուցե մի սրամիտ ճանապարհորդ է նկատել ձիթենու ճյուղով վերադարձող աղավնու պատմության մեջ այդ մութ կետը, քանի որ այս կողմերում ձիթենի չի աճում: Բայց կարելի է կարծել, որ կամ Նոյը բուսաբանությունից ուժեղ չի եղել, և կամ աղավնին է շատ հեռու գնացել, քանի որ նա վերադարձել է միայն «խրիկվան դեմ»: Չէ որ այստեղից ոչ շատ հեռու է գտնվում նաև այն դաշտը Մենասար երկրում, ուր կառուցվել է Բաբելոնի աշտարակը:

Արագի հովտով էր անցնում Արևելքից Արևմուտք տանող բնական ճանապարհը, որի մի ծայրին Կասպից ծովն ու Պարսկաստանն էր, մյուսին՝ Փոքր Ասիան: Այն ձգվում էր մի շարք հովիտներով ու հարթավայրերով՝ Արագի երկարությամբ Երևանի և Բասենի հարթություններով դեպի Էրզրում և այնտեղից էլ ավելի հեռու՝ կամ դեպի հյուսիս-արևմուտք, Տրապիզոն, կամ դեպի արևմուտք Եփրատի վերին հոսանքով, Երզնկայի վրայով՝ Փոքր Ասիա: Արագի հովտի ընդարձակ հարթությունը բոլոր կողմերից շրջապատված է բարձր լեռնաշղթաներով և հանդիսանում է մի մեծ գոգավորության հարթ հատակը: Հարավում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք է ձգվում Ադրիդաղի բարձր լեռնապատնեշը, որի հարավ-արևելյան հզոր բաստիոն Արարատը՝ Փոքր Արարատ բուրգով, ամբողջանում է որպես ծայրանկյան աշտարակ:

Լեռնանցքներն այստեղ գտնվում են 2097 և 2543 մ բարձրության վրա: Արարատի գագաթներից արևմուտք լեռնապարի երկարությամբ բարձրանում են մինչև 3243 մ (Չընգլոյաղ), 3358 մ (Խանադաղ) և 3245 մ (Փերլիդաղ) բարձրություն ունեցող գագաթներ: Լեռնաշղթայի արևմտյան այդ հատվածը ջրբաժան է հյուսիսում Արագի և հարավում Եփրատի ակունքների միջև: Փերլիդաղից սկիզբ առնում և հյուսիս-արևելյան ուղղությամբ մինչև հարթավայր է հասնում մի ավելի ցածր լեռնաշղթա, որ ավարտվում է Արփաչայի՝ Արագի մեջ թափվելու գետաբերանի դեմոնիաց Թախթալու (Թաքյաթուդաղ) կոչվող աչքի ընկնող սրածայր մի գագաթով՝ 2563 մ բարձրությամբ:

Երևանի արևելյան և հյուսիս-արևելյան կողմում փոքր հարթավայրը եզերված է բարձր լեռնազանգվածներով, որոնք սկսվելով Արագի ափերից, Արարատից արևելք՝ աղեղնաձև ձգվում են դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք: Երևանի և Սևանա լճի միջև ընկած տարածքում լեռները բարձրանում են կազմելով Ախմանջան բարձր սարահարթը՝ մինչև 3600 մ (Աղդաղ) բարձրության մի շարք գագաթներով, որոնք Երևանից հյուսիս-արևելք իջնում են դեպի Չանգու գետը, որ գալիս է Սևանա լճից, ավելի քան 2000 մ բարձրությու-

նից: Լինք գտնվում է 1925 մ բարձրության վրա: Գետահովտի մյուս կողմում սակայն նրանք նորից բարձրանում են դեպի ալիքաձև լեռնահովիտը՝ կազմելով Դարաչիչազի ու Փամբակի լեռնաշղթաները՝ մինչև 3100 մ (Մայմեխաղ) և 3109 մ (Շեյխ-Ահմեդդաղ) գագաթներով: Այս լեռնաշարը ձգվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ անցնելով Լենինականի արևելյան կողմով դեպի հյուսիս:

Այս քիչ թե շատ իրար կցված լեռնախմբերից դուրս, դրանցից լրիվ առանձնացած, վեր է խոյանում Ալազյազ հրաբուխն իր լավային զանգվածով՝ թիկունքում գտնվող լեռներից բարձր, բոլոր կողմերի վրա համաչափ իջնող լայնատարած լանջերով իշխելով Արագի հարթության հյուսիսային եզրերին: Վերջինս արևմուտքում սահմանակից է Արփաչայի մյուս կողմում գտնվող Շորազյալի սարահարթին: Այնտեղ բարձրանում են մինչև 2961 մ (Յաղուջադաղ) և 2691 մ (Ալաջադաղ, Անիից արևմուտք) հրաբխային գագաթները:

Չյան սահմանը Արարատի հարավային լանջին հասնում է ծովից մոտ 3700 մ բարձրության: Արարատն ու Ալազյազը տարածաշրջանի միակ լեռներն են, որոնց գագաթներն ամբողջ ամռան ընթացքում մշտապես ծածկված են ձյունով:

Արագի հարթությունն արևմուտքից արևելք ունի մոտ 100 կմ երկարություն, լայնությունը հյուսիսից հարավ 40—50 կմ է: Դժվար է որոշել հարթության և նրա երկու կողմերում սկզբում դանդաղ, ապա աստիճանաբար բարձրացող հրաբխային լեռնալանջերի սահմանները:

Երկրաբանական տեսակետից հարթության ամենացածր մասում ոչ շատ վաղ անցյալում եղել է մի ընդարձակ լիճ, որը ժամանակին առաջացրել է Արագը: Սա, այն երբ գետն իր համար ավելի խոր հուն է փորում լճից հարավ-արևելք գտնվող լեռների կիրճերում, լիճը ցամաքում է: Հատակում մնացել է բերրի, փխրուն հողաշերտ, որ առաջացել է Արագի կեղտոտ ջրերի մատվածքներից, և որն այժմ ծածկված է լավային շերտով: Հետաքրքիր է Ստրաբոնի (XI, 14, 13) հաղորդած այն առասպելը, ըստ որի գետը նախկինում, ելք չունենալու պատճառով, ողողել է հարթությունը: Յասոնը ժայռերի միջով ճանապարհ է բացում, և գետը հոսում է դեպի Կասպից ծով:

Հարթության բարձրադիր մասերը մասամբ ծածկված են լավային բարակ շերտով, որ արտավիժել են Ալազյազը կամ շրջակայքի ավելի փոքր խառնարանները: Այս ու այնտեղ երևում են լավային գոյակցության հավասարաչափ գառիթափեր: Առվակները, որ գարնանը դառնում են արագահոս գետեր, իսկ ամռանը ցամաքում են, բազմաթիվ խոր հուներ ու ճեղքվածքներ են փորել լավային շերտերի մեջ:

Հարթավայրը տարածվում է Արագի երկարությամբ, ծովի մակերևույթից մոտ 800—880 մ բարձրության վրա: Դեպի հյուսիս այն աստիճանաբար բարձրանում է մինչև 1000 մ՝ Երևանի մոտ, և 1200 մ այնտեղ, ուր վերելքն

ակնհայտորեն տանում է դեպի Ալազյազի լանջերը:

Վիճման հարթավայրում, անշուշտ, մեծ չափով պայմանավորված է նկարագրված բարձունքների հարաբերակցությամբ: Չմեղը երկար, ճնառատ է ու ցուրտ, ամառը՝ այրող շոգ ու չոր: Երևանում հունվարի միջին ջերմաստիճանը մոտ 6,4° է, հուլիսին՝ մոտ 25°, իսկ տարեկան միջին ջերմաստիճանը՝ մոտ 11°: Էջմիածնում, շրջակա հարթավայրում ջերմաստիճանը ինչպես ձմռանը, նույնպես և ամռանը փոքր-ինչ ավելի բարձր է:

Ինչպես նշեցինք, Հայաստանի հյուսիս-արևելքում գտնվող լեռնաշխարհում առատ են տեղումները, որի շնորհիվ այստեղ չի զգացվում արհեստական ռոտզման անհրաժեշտություն: Հովիտները բերրի են, իսկ ընդարձակ անտառները երկրի հարավն ապահովում են փայտով:

Արագի հովտի օդի խոնավությունը մեծ մասամբ խտացվում է լեռներում և հաճախ սաստիկ տարափով անձրևի (կամ ձյան) տեսքով թափվում է ցած: Սակայն տեղումների համեմատաբար մի չնչին մասն է հասնում հարթավայր: Երբ հյուսիսում լեռների բարձր գագաթները ծածկվում են մռայլ, սարսափազդու ամպերով, մթնոլորտին փոխանցվում է հատուկ գրգիռ:

Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է Էջմիածնում մոտ 280 մմ, Երևանում, որը 18 կմ ավելի մոտ է արևելյան լեռներին, 315 մմ<sup>3</sup>: Անձրևներ գալիս են ամենաշատը զարմանը՝ ապրիլին և մայիսին, այնինչ ուշ ամռան ամիսներին՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր, որպես կանոն, քիչ են տեղումները:

	Ամ- բողջ տարի	Հունվ.	Փետ.	Մարտ	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգոս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.
Ջերմաս- տիճան	11,0	-6,4	-3,3	4,7	12,2	17,5	22,3	25,3	25,2	20,1	14,1	6,0	0,2
Տեղումներ մմ-ով	315	22	25	28	47	54	21	16	8	12	23	30	29

Հետևյալ համեմատությունը ցույց է տալիս Երևանում միջին ջերմաստիճանը ըստ Ֆեյսիուսի և անձրևների քանակը միլիմետրերով.

Էջմիածնում ամռանը քիչ են անձրևները, իսկ շրջակա հարթավայրում ավելի սակավ: Ջգալի են տարիների միջև եղած տատանումները: Օրինակ՝ 1922 թ. ամբողջ ամռան ընթացքում տեղացել են հորդ անձրևներ: 1922 թ. հունիսին անձրևների քանակը Երևանում կազմել է 68 մմ, հուլիսին՝ 35 մմ, օգոստոսին՝ 58 մմ, սեպտեմբերին՝ 25 մմ: Այնուամենայնիվ անձրևների քանակը

<sup>3</sup> Տեղումների տարեկան քանակը Նոր Բայազետում, Սևանի ափին 451 մմ է, Դիլիջանում, լեռներից հարավ՝ 521, իսկ Լենինականում՝ 408 մմ:

այնքան չնչին է այս երկրում, որ առանց արհեստական ռոտզման անկարելի է հողը մշակել: Բացառություն չէ նույնիսկ հացահատիկի այնպիսի տեսակ, ինչպիսին ցորենն է, որ հասունանում է վաղ ամռանը, երբ տեղում են զգալի քանակությամբ անձրևներ: Տարօրինակ է, որ ոչ միայն հարթավայրը, այլև շրջապատի բոլոր սարավանջերը բոլորովին մերկ են ու ծառազուրկ: Այնտեղ, ուր չեն հասել ջրանցքի զարկերակները, չկան ծառեր:

Այս երևույթը չի կարող բացատրվել միայն տեղումների անբավարարությամբ, մանավանդ որ լեռնալանջերում դրանց քանակը համեմատաբար ավելի է, քան հարթավայրում, որը բավարար է որոշ ծառատեսակների աճման համար:

Լեռնալանջերի հողը հիմնականում կազմված է լավայից, տուֆից և հրաբխային մոխրից, որի հետևանքով ջրանցիկ է. ջուրը անմիջապես ներծծվում է և մակերևույթից չքանում: Դրա ապացույցն Արարատն է, որի գագաթն ամբողջ ամռան ընթացքում ծածկված է ձյունով, սակայն ոչ մի գետ սկիզբ չի առնում այդ հսկա լեռից: Չյունածածկ Ալազյազից ամռանն ընդամենը մի քանի փոքրիկ առվակ է ցած հոսում. այստեղ նույնպես ջուրն առավելապես ներծծվում է լեռան զանգվածի մեջ: Լեռան փեշերին մի քանի տեղ բխում են մաքուր, պարզ ջրի աղբյուրներ, առանձին գետեր, ինչպես Կարասուն, որ հոսում է հարթավայրով, Էջմիածնի հարավ-արևելյան և հարավային կողմով: Այն, անշուշտ, սկիզբ է առնում մնացած աղբյուրներից և բերում է զգալի քանակության մաքուր, պարզ ջուր, որը ռոտզման համար նվազ արժեքավոր է, քան Արագի տղմոտ ջուրը: Կարասու (Սև գետ) անունն առաջացել է այն բանից, որ ջուրը թափանցիկ է և դրանից էլ սև ին է տալիս:

Մարալանջերում անձրևը չի կարող անտառ կամ որևէ մշտական բուսածածկ ապահովել, որովհետև այն թափվում է հանկարծակի, մասամբ կարճ, ուժեղ տարափների ձևով: Դրա ապացույցը լեռնալանջերի առուների խոր հուներն են: Մրանք լցված են խիճ ու քարով, որ իրենց հետ բերում են ջրերը: Նման երկու հորդ անձրևների միջև կարող է ընկած լինել չորության մի երկար շրջան:

Սակայն սա նույնպես ծառազրկության վերջնական բացատրություն չէ: Արդյո՞ք հնում ևս այս երկրամասն եղել է անտառազուրկ և նվազ բուսականությամբ: Մենք քիչ քան գիտենք այդ մասին: Արարատի լանջերի մի քանի խեղանդամ կեչիներն ու թփերը գուցե երբեմնի անտառների մնացորդներն են, կամ այլ լեռներ նույնպես հնում անտառապատ են եղել, որոնք հատվել են մարդկանց կողմից և կրկին չեն վերականգնվել: Շատ բույսերի ոչնչացման պատճառ է դարձել փարթամ արոտավայրեր ունենալու նպատակով ամեն զարման դաշտերն այրելու սովորությունը: Երևում է, որ այս երկրամասում թափառող քոչվորները նույնպես ունեցել են այդ սովորությունը: Այդ պարագայում, իհարկե, անտառը չէր կարող գոյատևել. վերապրել կարող էին միայն

հողի մեջ կաչուն արմատներ ունեցող բույսերը:

Եթե պեղումներ կատարենք ամառի այս տարածությունում, ուր հողը լրիվ այրված է արևից և ուր աճում են միայն անապատային ուղտափշեր, գուցե գտնենք հին բնակավայրի մնացորդներ: Ամառադաբնակ այս վայրերում այսօր էլ կան մեծ եկեղեցիների ու տների ավերակներ, որոնք հիշեցնում են հնագույն ժամանակներից եկող վկայությունները Արագի բարեբեր հովտում վերելք ապրած մեծ քաղաքների մասին, այդ թվում և Արմավիրի, որ կառուցվել է Զ. ծ. ա. 8-րդ դարում:

Ակամա հարց է առաջանում. արդյո՞ք այն ժամանակների համեմատությամբ ավելի է չորացել կլիման: Վերջին շրջանում աշխարհագետները մնան երևույթները թյուրիմացաբար բացատրում են երկրագնդի մի հատվածում, նաև Միջագետքում և հրեաների երկրում, հատկապես Ասիայում կլիմայի փոփոխությամբ՝ դեպի առավել չորայինը: Խոսվում է երկրագնդի համընդհանուր և երբեմնի ծովերի ցամաքելու մասին: Այդ տեսակետի կրթող ջատագովը նախ և առաջ ամերիկացի էլտուրոք Հանթինգթոնն է: Նա նույնիսկ կլիմայական այդ փոփոխություններով է բացատրում ժողովուրդների մեծ գաղթերի, մոնղոլական արշավանքների պատճառը: Եթե նույնիսկ մնան ենթադրությունները որոշ չափով ընդունելի են մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած շատ գաղթերի համար, այնուամենայնիվ կլիմայափոխության այդ տեսություններն մեծ մասը սնանկ են և ունեն երեքում հիմք: Այդ տեսակետը չի տարածվում Արագի հովտի վրա: Միտում կա մոռացության տալու հենց իր՝ մարդու հնարավոր ազդեցությունը բնության վրա՝ օգտակար գործունեությամբ և վնասարարությամբ հանդերձ:

Չափն անցած մեր ինքնագոհությունը հարկադրում է թերագնահատել անցած սերունդների աշխատունակությունը՝ ենթադրելով, որ նրանք լինելով հետամնաց՝ հագիվ թե կարողանային իշխել բնության վրա և շահագործել այն, հատկապես նրանք, որոնք գիր չունենալով՝ գրավոր տեղեկություն չեն թողել իրենցից հետո: Մենք վարժված ենք մշակույթի արժեքը չափել գրքերի իմաստնության մեծությամբ: Սակայն դեռ հարց է, թե նրանք, ազատ լինելով ամեն տեսակի ընթերցանությունից, իրենց ժամանակը չէին օգտագործում այլ բաներում անցնելով մեզմից: Անշուշտ, ժամանակակից սերունդը չի կարող բուրգեր կառուցել այն միջոցներով, որ ունեցել են մարդիկ հեռավոր ժամանակներում իրենց արամադրության տակ: Արհեստական ոռոգման բնագավառում ևս հենց այստեղ՝ Եփրատի և Տիգրիսի շրջանում, հնում հասել էին բարձր զարգացման: Հետագայում, երբ երկիրն ավերեցին բարբարոսների հորդաները, այն անկում ապրեց:

Արդեն քարի դարում, Քրիստոսից հազարավոր տարիներ առաջ, Արագի հարթությունում արհեստական ոռոգման շնորհիվ զբաղվում էին երկրագործությամբ: Սարդարապատից արևմուտք, ուր այսօր կատարյալ անապատ է,

գտնվել է ավելի ուշ շրջանի մի հին սեպագիր արձանագրություն, որով տիրակալներից մեկը հայտնում է, որ ինքն է կառուցել «այս ջրանցքը», և աստվածների ամենակարող գայրության կարժամանա նա, ով քանդի այն: Ավելի ուշ երկիրն ամայանում է ռազմատենչ բանակների ասպատակություններից, իսկ ջրանցքը ավերվում և անհայտանում է:

Այստեղ ես հասկանում, թե պատերազմն ինչ արմատական փոփոխություններ կարող է առաջացնել տեղանքի ողջ բնույթի մեջ, հատկապես եթե այդ չափի կործանարար է եղել, որը բնորոշ է աշխարհի այս մասի համար: Մոնղոլների, թուրքերի և մշակութապես ամուլ այլ ցեղերի հորդաները հարձակվում էին քաղաքների ու գյուղերի վրա, սրախողխող անում արական բնակչությանը, մոխրակույտի վերածում տները և կրկին հեռանում՝ իրենց հետ տանելով ունեցվածք, անասուններ ու կանանց: Նրանցից հետո մնում էին քաղաքների ու գյուղերի սոսկ ավերակները: Արհավիրքից զերծ մնացածները չէին կարողանում միավորվել, ուժեր հավաքել ջրանցքները վերականգնելու և որոշ չափով պահպանելու համար, քանի որ շարունակ գտնվում էին հաղթողների ճնշման տակ և կեղծվում էին նրանց կողմից՝ իրենք իսկ հասու չլինելով որևէ աշխատանք ձեռնարկելու: Հաղթողների գոյությանը շարունակ սպառնում էին նաև լեռնային քոչվոր ցեղերի ավազակաբարո հարձակումները, որոնց անընդհատ դիմադրելը թուլացնում էր նրանց: Ի վերջո երկիրը լրիվ ամայանում էր՝ աստիճանաբար վերածվելով անապատի: Անշուշտ սա երկրագնդի այս մասի շատ երկրների համար եղել է ճակատագրական: Ոչ թե կլիմայական փոփոխությունները, այլ պատերազմներն են այստեղ հեղաշրջումներ առաջացրել ու ամայացրել երկիրը:

Բացի այդ, մենք հավաստի ապացույցներ ունենք, որ պատմության ընթացքում տեղումների քանակն այստեղ ընդհանուր առմամբ չի նվազել: Եթե հնում տեղումներն ավելի եղած լինեին, քան այսօր է, ապա պետք է ենթադրել, որ առանց հոսքի աղի լճերը, ինչպիսիք Վանա և Ուրմիա լճերն են Արագից հարավ, պետք է ունեցած լինեին ջրի որոշակիորեն ավելի բարձր մակարդակ, քան այժմ է: Ընդ որում պայմանով, որ լճերը զերծ լինեին ստորերկրյա հոսքերից, որոնք կնպաստեին փոփոխությանը:

Նման լճերի ջրի մակարդակը պայմանավորված է լճի շրջակա տեղումներից ջրի ներհոսքի և լճի մակերեսի ջրագոլորշիացման համապատասխանությունից: Եթե առկա է այդ հավասարակշիռ վիճակը, իսկ հորդառատ տեղումները շատացնում են ջրի ներհոսքը դեպի լիճ՝ առանց գոլորշիացման համապատասխան բարձրացման, ապա ջրի մակարդակը բարձրանում է լճում, մակերեսը մեծանում է, և լիճը դուրս է գալիս իր ավերից: Ջուրը կարող է այնքան ժամանակ բարձրանալ, մինչև ընդարձակված լճի մակերեսի մեծացված գոլորշիացումը հավասարվի ջրի ավելացված ներհոսքին: Մյուս կողմից՝ եթե կլիման չորային է, նվազում է տեղումների քանակը և անշուշտ մեծանում է գոլոր-



շիացումը, ապա լճում իջնում է ջրի մակարդակը, և փոքրանում է մակերեսը:

Ինչ վերաբերում է Վանա և Ուրմիա լճերին, մենք ունենք վճռորոշ ապացույցներ, որ այդ լճերում ջրի մակարդակը պատմության ընթացքում ընդհանուր առմամբ չի բարձրացել և ավելի չի եղել, քան այժմ է: Վանա լճի ափերին կան բազմաթիվ բերդեր (Ախլաթ, Աղեջրվազ, Արճեշ), որոնց պարիսպներն այժմ էլ լիզում են ջրերը: Անհնար է, որ այդ բերդերի կառուցման ժամանակ ջուրն ավելի բարձր եղած լիներ: Ընդհակառակը, հավանականությունը խոսում է ջրի զգալիորեն ավելի ցածր մակարդակի օգտին: Այստեղ արդեն մի քաղաք ջրի տակ է անցել: Մի քանի հին գյուղեր այնքան են մոտեցել ափին, որ նրանց նույնպես սպառնում է ջուրը: 1898 թ. Վանա լճի ափին (Շայխօրա խառնարանի մոտ) կանգնած էր մի հսկա, հավանաբար 500 տարեկան թթենի՝ արմատները կիսով ջրի մեջ. նա նույնպես դատապարտված էր մահվան: Ախլաթում մի հին ընկուզենու արմատների տակ հողը մասամբ ողողված էր ջրով<sup>4</sup>: Այս ու այլ փաստեր վկայում են, որ այդ լճի ջրի մակարդակն անցյալում երբևէ ավելի բարձր չի եղել, ավելի շուտ պարզվում է, որ վերջին շրջանում ջուրը բարձրացել է:

Ջրի բարձրացման պատճառը, ինչպես ենթադրում է Լինչը, կարող է լինել տիղմի անընդհատ կուտակումը լճի հատակին, որն էլ աստիճանաբար բարձրացնում է ջրի մակարդակը: Բայց այն, որ անցած հարյուրամյակներում ջրի մակարդակը մի քանի անգամ փոփոխություն է կրել՝ մերթ փոքր բարձրանալով, մերթ իջնելով, և որ այդ փոփոխությունները տեղի են ունեցել և՛ Վանա, և՛ Ուրմիա լճերում միաժամանակ, նշանակում է, որ այստեղ ջրի մակարդակի փոփոխությունների համար բերված այլ փաստարկներ ավելի են կարևորվում, քան հատակում նստվածքների գոյացումները: Ամենայն հավանականությամբ այստեղ մեծ դեր ունեն տեղումների ու գոլորշիացման հարաբերակցությունը:

Այս պարագայում կարևորություն չենք տալիս նաև այն հնարավորությանը, որ ջուրը ներծծվելով լճի հատակի քարե զանգվածի միջով, կարող է առաջացնել մակարդակի փոփոխություն, քանի որ դա քիչ հավանական է: Եթե լճերի քարե հատակները նախապես ջրանցիկ էլ եղած լինեին, ապա կարճ ժամանակամիջոցում քարե ծակոտիները փակվում են ջրի մեջ եղած տիղմով: Նույնը վերաբերում է նաև փոքր ճեղքվածքներին: Պետք է ենթադրել, որ ջրի կորուստը ներծծման ճանապարհով բավականին համաչափ է: Ուրեմն երկու լճերի ջրերի մակարդակների միաժամանակյա փոփոխությունները ենթադրում են բնորոշվին այլ պատճառների գոյություն:

Առկա բոլոր փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ այդ լճերի ջրերի միջին մակարդակը պատմության ընթացքում երբևէ ավելի բարձր չի եղել, քան

<sup>4</sup> Հմնտ. H. F. B. Lynch: Armenia, h. 2-րդ, էջ 53, Լոնդոն, 1901: Լինչը հիշատակում է նաև Սևանա լճի ջրի մակարդակի փոփոխությունները, սակայն դրանք քննարկվող հարցի առումով հետաքրքիր չեն, քանի որ լիճը հոսք ունի:

այսօր է, ուրեմն և՛ վերջին շրջանում կլիման ավելի չորային չի դարձել: Մրան չի հակասում ջրի մակարդակի փոքրիկ տատանումը դեպի վեր կամ դեպի ցած, քանի որ այս երևույթը կապված է տեղումների քանակի կանոնավոր և ոչ կանոնավոր տատանումների հետ: Մրա հետևանքով ընդարձակ տարածություններում տեղի ունեցող նման տատանումները կարող են ազդել նաև Կասպից ծովի ջրի մակարդակի վրա, որն ընդունում է Արագ և Կուր գետերի ջրերը: Այսպես, բավականին ճշգրտությամբ գրանցված են Կասպից ծովի ջրի մակարդակի տատանումները, որոնց ընթացքում վերին (1306—1307 թթ.) և ներքին (12-րդ դ.) սահմանների միջև բարձրությունը կազմել է 16 մ: Այս տատանումներն անշուշտ հետևանք են կլիմայի խոնավության փոփոխությունների: Տվյալ ժամանակաշրջանի համար կլիման ունեցել է հետևյալ հավանական բնութագիրը.

915—921 — համեմատաբար խոնավ ու ցուրտ

12-րդ դ. — չոր և հավանաբար տաք

1306—1307 — շատ խոնավ և հավանաբար ցուրտ

1638 թ. — ավելի խոնավ և հավանաբար ցուրտ, քան այժմ

1715-ից — մոտավորապես այնքան, որքան այժմ՝ չհաշված փոքրիկ տատանումները<sup>5</sup>:

Որևէ այլ ապացույց չունենք, որ այս երկրամասում վերջին հազար տարվա ընթացքում կլիման ընդհանրապես ավելի չորային է դարձել: Այստեղից էլ այն անհավանականությունը, որ կլիմայի փոփոխություններն են բնակավայրերի տեղաշարժերի պատճառը:

Անապատի վերածված տարածքներում բնակություն հաստատած անասնապահ քոչվոր ցեղերի լքված բնակավայրերի ու գյուղերի ավերակները տարվա խոնավ եղանակներին, հատկապես գարնանը, շրջակայքի փարթամ արոտավայրերով իրենց էին ձգում մախկին բնակիչներին, որոնք տարվա չոր եղանակներին իրենց անասունը սարերն էին տանում:

Ինչպես արդեն ասել ենք, ձմռանն այստեղ նույնքան ցուրտ է, որքան ամռանը տաք: Քանի որ ապրիլին հաճախ են գիշերային ցրտերը, ապա բույսերի աճի ժամանակը չի անցնում հինգ ու կես ամսից՝ ապրիլի կեսից մինչև հոկտեմբերի սկիզբը: Հոկտեմբերին հազվադեպ են ցուրտ գիշերները: Բույսերի աճի ամբողջ ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը Երևանում 21,4° C է, իսկ ամենատաք ժամանակ հուլիսին և օգոստոսին 25,3°:

Հայաստանը երկրագործական երկիր է, բնակչության ավելի քան 90 տո-

<sup>5</sup> Հմնտ. Ed. Bruckner: Klimaschwankungen seit 1700. Geographische Abhandlungen, herausgegeben von A. Penc, Wien, Bd. IV. Heft 2, 1899: F. Nansen: Klima-vekslinger i historisk og postglacial tid. Avhandlingar utgitt av Det Norske Videnskaps — Akademi i Oslo. J Matem-Naturvid. Klasse, 1926, Nr. 3, S. 19. Veranderingen in geschiedtlicher und nacheiszeitlicher Zeit. Abhandlungen, herausgegeben von der norwegischen Akademie der Wissenschaften in Oslo. Mathematisch-naturwissenschaftliche Klasse. 1926, Nr. 2. S. 19:

կոսը զբաղված է գյուղատնտեսությամբ: Անշուշտ կա նաև արդյունաբերություն, սակայն քիչ զարգացած:

Փոքր մի երկիր, որ ավերված է պատերազմից ու հեղափոխությունից, տեղի բնակչությունը համարված մի քանի հարյուր հազար փախստականներով: Չկա մեկ այլ երկիր, որ աշխարհի տուժած լինի պատերազմից: Սակայն բարեխիղճ ու ժրագան աշխատանքի շնորհիվ հինգ տարիների ընթացքում ձեռք է բերվել որոշակի բարվոք վիճակ, նույնիսկ տեղեր կան, ուր ավելի լավ է, քան պատերազմից առաջ:

1925 թ. մշակվել է շուրջ 800000 հա հողատարածություն, 1700000 հա խոտհարքեր դարձել են արոտավայրեր և 350000 հա անտառներից, որ հարուստ են հաճարի (50 տոկոս) և կաղնու (20 տոկոս) ծառատեսակներով, արդյունահանվել է արծեքավոր փայտանյութ: Մշակված հողատարածության մոտ 100000 հա արհեստական ռոտզման վարելահողերն են: Չնայած վերջին տարիների ներդրումներին, ռոտզման համակարգը հետամնաց է: Պատերազմի ժամանակ ավերված ջրուղիները կարգի են բերված: Փաստորեն ներկա վիճակում բնակչության քվի համեմատությամբ չափազանց քիչ են մշակելի հողերը, որի հետևանքով երկիրը հարաբերականորեն գերբնակեցված է: Վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է ընդարձակել արհեստական ռոտզման ցանցը և անցնել հողի մշակման արդյունավետ ձևերի: Մոտ 100000 հա հող, որ հնարավոր է ռոտզման շնորհիվ մշակելի դարձնել, մնում է չօգտագործված: Կարելի է բարելավել նաև հողամշակման եղանակները: Սովորաբար դեռ գործածության մեջ է փայտե արորը, հողը չի պարարտացվում, աղբը վերացվում է այրման միջոցով: Բացի այդ, բարձր լեռնային շրջանները կարելի է ավելի լավ օգտագործել՝ աճեցնելով այնտեղ արմատավոր բույսեր, զարկ տալ անասնապահությանն ու կաթի արտադրության բարձրացմանը: Արդյունաբերությունը նույնպես ունի զարգացման մեծ հնարավորություններ:

Չնայած ամառը, ինչպես նշվեց, կարճ է, սակայն տաք, և արևն այնքան ջերմություն է պարզևում, որ լիովին բավարարում է բամբակի աճին այնտեղ, որտեղ իհարկե կա ռոտզում: Ստացված բամբակը թեև կարճ է, սակայն ունի առաջնակարգ որակ: 1924 թ. հայկական բամբակի (մաքրված վիճակում) 1 կգ արժեք 1,37 ռուբլի, 1925 թ.՝ 1,24 ռուբլի, մինչդեռ ամերիկյան բամբակը, որ մշակվում է Մոսկվայում, արժե 1,18 ռուբլի:

1925 թ. 18000 հա հող է տրամադրվել բամբակի ցանքերին, որից ստացվել է շուրջ 15000 տոննա անմշակ բամբակ՝ 12 տոկոսով ավելի անցած տարվա համեմատությամբ և 50 տոկոսով՝ քան մինչև պատերազմը: Արտադրանքի համեմատաբար փոքր ծավալը պայմանավորված է նախ անբավարար ռոտզման ցանցով, ապա լծկանների ու գործիքների սակավությամբ և մշակման հետամնաց եղանակով: Հակառակ դեպքում ռոտզվող հողերից կարելի էր ստանալ հեկտարից միջին հաշվով 1040 կգ անմշակ բամբակ: Եթե արտադր-

րանքի արժեքը հեկտարից 1 կգ համար կազմում է 0,31 ռուբլի, ապա կստացվի հեկտարից շուրջ 320 ռուբլի զուտ եկամուտ:

Թուրքիայից գաղթած հայերը 1921 թ. հաջողությամբ ձեռնարկեցին ծխախոտի մշակություն: 1925 թ. ծխախոտին հատկացվեց 150 հա հողատարածություն, հաջորդ տարի օգտակար մակերեսը հասնելու է 500 հա:

Շերամապահությունը նույնպես ձեռնառու և զարգացող ճյուղ է: Ստեղծվել է տնկարան, ուր մեկ կամ երկու տարվա ընթացքում աճեցվելու է տարեկան հինգ միլիոն թթենի:

Խաղողագործությունն ունի զարգացման մեծ հնարավորություններ: Խաղողը հազվագյուտ արժեք ու տարածվածություն ունի, իսկ հայկական գինին հայտնի է իր որակով, հատկապես «Արարատ» պետական ընկերության արտադրանքը, որ խաղողը գնում է գյուղացիներից: Խաղողի մշակումը կատարվում է հետամնաց եղանակով, սակայն այժմ աշխատանք է տարվում այն կատարելագործելու: Խաղողի այգիները բռնում են շուրջ 10000 հա հողատարածություն, որ ապահովված է արհեստական ռոտզմամբ: Աշնանը հեկտարից կստացվի 5000—6000 կգ խաղող, գինեգործական պետական ընկերությունը կցնի այն կլիտրամը 0,17 ռուբլով: Սա նշանակում է հեկտարից 900—1000 ռուբլի զուտ եկամուտ: Մինչև այժմ Հայաստանում չի հանդիպել որթնալվիճ: Ընորհիվ այն խիստ ձմեռների, երբ ոչնչանում է լվիճը: Անշուշտ, խիստ ձմեռը կարող է վնասել նաև խաղողի որթը: 1924—25 թթ. ցուրտ ձմեռը խաղողի շատ այգիներ վնասեց:

Մրգատու այգիները տալիս են հրաշալի պտուղներ, հատկապես՝ ծիրանի, դեղձի, սալորի ու բալի հարուստ բերք: Մրգից պատրաստում են պովիդը կամ մարմելադ և ուղարկում Ռուսաստան: Արդյունաբերության այս ճյուղն ունի զարգացման մեծ հնարավորություններ:

Բացի վերը նշվածից, ռոտզվող հողերում մեծ հաջողությամբ կարելի է աճեցնել բանջարեղեն, արևածաղիկ, առվույտ և այլ բուսատեսակներ: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս սովորական ձևով ռոտզվող հողից գյուղատնտեսական տարբեր բուսատեսակների՝ հեկտարից միջին հաշվով ստացվող բերքը.

Բուսատեսակ	Միջին արտ.		Արտադրանքի բրտտ արժ. հա-ից ռուբ.	Արտադրանքի նետո արժեքը հա-ից ռուբ.՝ աշխատավարձը և այլ ծախսեր հանելուց հետո
	հա-ից կգ-ով	1 կգ-ի գինը ռուբլով		
Աշնանացան	1340	0,17	228	80
Բամբակ	1040	0,31	322	209
Բանջարեղեն	17900	0,05	895	537
Պտղատու այգ.	9700	0,18	1746	786
Խաղողի այգ.	5200	0,15	780	351
Առվույտ	6000	0,12	720	360



Ամբողջ հողը պետության սեփականությունն է, սակայն վերջինս պարտավոր է յուրաքանչյուր աշխատունակ գյուղացու հող տրամադրել: Հողն ինքնին ոչ գնման և ոչ էլ վաճառման ենթակա չէ: Սակայն տները, այգիները և հողի վրա եղած շինություններն ու կառույցները կարող են գնվել և վաճառվել: Կալվածքը կից հողերով (դաշտ, արտ), ժառանգության միջոցով կարող է անցնել մեկ այլ անձի կամ որոշ պայմանով վարձակալության տրվել:

Հաշվվում է մոտ 160000 գյուղացիական կալվածք՝ յուրաքանչյուրը 3—6 հա մշակված հողատարածությամբ: Հողաբաժանումը կատարվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի հատկացնելով որոշակի չափի հող: Մարդաբաժին հողի չափը տարբեր է շրջաններում. միջին հաշվով այն կազմում է մեկ դեսյատին (1,1 հա): Որոշ տեղերում, ինչպես Արագի հարթությունն է, չափաբաժինը կազմում է կես կամ մույնիսկ քառորդ դեսյատին: Դրա փոխարեն հողն այստեղ ապահովված է ոռոգմամբ և բերքառատ է:

Գյուղում հողը ընտանիքների միջև վերաբաժանվում է ժամանակ առ ժամանակ, սակայն ինը տարուց ոչ շուտ: Պտղատու և խաղողի այգիներն ընդհանրապես չեն ենթարկվում վերաբաժանման, եթե տերը չի ցանկանում: Նոր որոշում է կայացվել, ըստ որի մեկ կալվածքի հողաբաժինները պետք է հնարավորին չափ իրար մոտ լինեն, իսկ բաժինները վեցից ավելի չպետք է լինեն: Մինչ այդ ստացվում էր այնպես, որ մի կալվածք ունենում էր իրարից հեռու ընկած 25 փոքրիկ արտեր: Այժմ գյուղացիներին իրավունք է վերապահված վճարովի աշխատուժ պահել: Պետական ձեռնարկությունները պետք է գյուղացիներից արտադրանքն ընդունեն սահմանված գներով. նրանք իրավունք ունեն նաև իրենց ապրանքը վաճառել շուկայում՝ պայմանավորված գներով: Հողի օգտագործման համար գյուղացիները վճարում են հողային հարկ, այլ հարկեր չունեն:

VI.

ԱՐԱՋԻ ՀՈՎՏՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հաջորդ առավոտյան (հինգշաբթի, հունիսի 18) մենք անշտապ պատրաստվում էինք, քանի որ արդեն մեկ անգամ գործ ունենալով արևելյան ճրջտապահության հետ, ավտոմեքենաներին սպասում էինք ոչ շուտ: Սակայն մեծ եղավ զարմանքս, երբ ժամը 5-ին դուրս գալով պատշգամբ՝ ներքևում դռան առաջ երկու ավտոմեքենա տեսա կանգնած: Այ քեզ շտապողականություն, և դեռ ժամը 6-ը չեղած՝ ճանապարհ ընկանք հայ ինժեներների հետ չորս ավտոմեքենաներով: Սկզբում ընթանում էինք քաղաքի, ապա Չանգվի ձորի գաղիթափ ապառաժների միջով, որոնց գլխին քառած է քաղաքն իր ամբողջություններով: Գետի վրայով ճանապարհն անցնում էր մի հին քարե կամրջով, որից հետո շարունակ գալարվում էր դեպի վեր՝ անցնելով փարթամորեն աճած պտղատու և խաղողի կանաչ այգիների միջով, որոնք շրջապատված էին քա-



Բզովդալի լեռնանցք տանող հովիտը (էջ 150)



Բզովդալի լեռնաշղթայի հյուսիսային կողմի անտառապատ հովիտը (էջ 151)






Հռիփսիմեի եկեղեցին (էջ 178)



Էջմիածնի Սայր տաճարը (էջ 173)



Ամայի և մշակված հողեր (էջ 164)





Գյուղատնտեսության ժողկոմ Ա. Երզնկյան



Գևորգ Կաթողիկոս (եջ 174)




Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը Հռիփսիմների եկեղեցում մուտքի առջև (եջ 180)

Արտիստի ֆոտոգրաֆիա




Նոր ջրանցքի բացմանը մասնակցած հայեր (եջ 134)






Արարատը և Արագի հովիտը (էջ 187)



Ջյուսիսային շեկ տեսակը (մեջտեղում), հայկականը՝ աջից (էջ 118)



Ջայկական տեսակը (մեջտեղում) և կլոր կարճագանգ  
ալպիականը՝ աջից (էջ 118)



Ջայ պատանիներ: Ալագյազ կայարան (էջ 137)





Կովկասը և Մրանից հարավ ընկած երկրները

րե բարձր պարիսպներով, և բավականին դժվար էր դրսից ներսը դիտելը: Ուրեմն սրանք են Երևանի հայտնի այգիները՝ արհեստական ոռոգման պայմաններում հրաբխային քարքարոտ հողից ծնված կախարդական հրաշքը: Գանապարհին անընդհատ հանդիպում էին հոտող ջրով լի ջրանցքներ:

Գնալով արևմուտք՝ դուրս եկանք հարթավայր: Առավոտը ջինջ էր, արևով ողողված օդում ստեպ-ստեպ ուրախ հնչում էին դայալյոդ արտույտների հուսադրող ճիչերը: Գանապարհի ձախ կողմում հողը մեծ մասամբ մշակված ու ոռոգված էր, դրան հակառակ աջ կողմում՝ դեպի հյուսիս ալիքաձև սարավանջերը չոր էին՝ այրված անապատ: Ապա մայրաքաղաքի մերձակայքի բնապատկերը: Գանապարհը տանում էր Էջմիածին, քաղաք, որ ուներ բազմաթիվ եկեղեցիներ: Նա դարեր շարունակ եղել է Հայաստանի հոգևոր կենտրոնը, կաթողիկոսի՝ եկեղեցապետի նստավայրը: Դրան կանոնադառնանք ավելի ուշ:

Այստեղից դեպի հարավ մինչև Արագ տարածվում էր տափարակ մի հարթավայր, որից բարձրանում էր Արարատ հսկան. դեպի արևելք Փոքր Արարատի համեստ գագաթն էր: Ինչքան մոտենում էինք, այնքան ավելի ու ավելի էր մեծանում լեռ-հսկայի գերիշխող դիրքը բնաշխարհի վրա: Սպիտակ, ընդարձակ սառցադաշտով ծածկված գագաթը սովորականի պես թաղված էր ամպերի փափուկ դեզի տակ, որի միջից առկայծում էին հեռավոր ձյան շերտերը: Հողն այստեղ տեղ-տեղ մշակված էր, կանաչածածկ ու ոռոգված, կային նաև չոր, անապատի վերածված հողաշերտեր, որոնք դեռ ենթակա չէին մշակման:

Գնալով ավելի հարավ՝ անցանք գերխոնավ, ճահճոտ հողատարածություններով, որ նկատելի էինք դեռ գնացքի պատուհանից: Վերջիններս մշակելու համար անհրաժեշտ էր նախ չորացնել: Այս մասին կխոսենք ստորև:

Մոտենում էինք Արագին, այնտեղ, ուր նրա վրա ժամանակավոր երկաթե մի կամուրջ կար: Վերջին պատերազմից հետո գետը Հայաստանի և Թուրքիայի սահմանն էր. այն լայն էր, սակայն բավականին ծանծաղ, գլորելով իր դեղնաշագանակագույն ջրերը՝ ծուլորեն հոսում էր հարթավայրով իր փորած հունի ցածրադիր ափերի միջով: Այն ափին՝ թուրքական կողմում, երևում էին ծառերի երկար շարքեր, որ վկայում էր հողի բերրիության մասին:

Մարգարա գյուղի մոտ մարդկանց մի բազմություն վազելով գալիս էր դեպի Գանապարհը, ինչպես միշտ՝ միայն տղամարդիկ, որ հետաքրքրությամբ զննելով մեզ և ավտոմեքենաները՝ բնականաբար փորձում էին տեղեկանալ մեր այցելության նպատակների մասին: Այստեղ Հայաստանում, և ընդհանրապես Արևելքում, ընդունված է, որ տղամարդիկ են ամեն պատեհ առիթով հավաքվում՝ իմանալու նորությունների մասին, այնինչ դա մեզանում թողնված է կանանց: Հագիվ թե հայ կանայք պակաս հետաքրքրասեր են, քան նրանց արևմտյան թույրերը, պարզապես այստեղ տղամարդիկ ավելի շատ ազատ



ժամանակ ունեն և շրջում են գյուղի փողոցներում, իսկ կանայք աշխատում են տանը, այգում կամ դաշտում:

Հավաքված բազմության մեջ կային դեմքերի բավականին տարբեր տեսակներ: Շատ էր երկար, նեղ հայկական տիպը՝ բարձր քթարմատով, թեթևակի ցած թեքված քթով, հարթ այտուկներով և փոքր-ինչ հետ ընկած կզակով: Կային նաև ավելի կլորավուն, լայն դեմքեր՝ ցցուն այտուկներով և ամուր կզակով: Մի փոքր մաս հիշեցնում էր արևելառուսական կամ թաթարական տիպը:

Հանդերձանքը րույնպես բազմազան էր, չնայած շատերը ցնցոտիների մեջ էին: Արևելյան տարազի ոչ մի հետք, բացի այս ու այնտեղ երևացող ոչխարների փափախներից, որ այս կիզիչ արևի տակ բավականին տարօրինակ էին, նաև մի երկվեցյակ բոլշևիկյան տաղտուկ գլխարկներից՝ հասարակ, գունավոր, փափուկ կտորից կարված: Մեկ-մեկ երևում էին սպիտակ բամբակե բլուզներ. բաճկոնները սակայն բացառապես եվրոպական էին՝ երկար տաբատներով: Չգացվում էր կոշիկներն ու մեծ պակաս:

Արագ ու նրա ավերը դիտելուց հետո կրկին ճանապարհ ընկանք, փոքր-ինչ ետ գալով՝ շրջվեցինք արև մուտք: Այստեղ ևս ոռոգման եղանակով կարելի է հող մշակել: Որոշ հողատարածություններ արդեն ոռոգվում էին Արագից հանված հին ջրանցքներով: Ինժեների կարծիքով ոռոգման ցանցը կարգի բերելու համար անհրաժեշտ են մեքդրումներ: Ճանապարհը, որով ընթանում էինք, բավականին անհարթ ու վատն էր: Մեր վարորդն էլ չափազանց անուշադիր էր, դար ու փոսերն անցնում էր արագորեն՝ վեր-վեր թոցներով մեզ, խառնելով աղիքներն իրար: Մի քանի անգամ մեր մեքենան ընդհուպ մոտենում էր ճանապարհի վտանգավոր եզրին, և ամեն անգամ մեծ ճիգ գործադրելով՝ ետ էինք քաշվում, այլապես վաղուց գերեզմանում կլինեինք: Ի վերջո փոխեցինք մեքենաները, և մեզ լավ վարորդ բաժին ընկավ:

Ճանապարհն անցնում էր գյուղերի մոտով: Տները շատ հասարակ էին՝ տափակ տանիքներով: Կառուցված էին կավե բլուկներից, որ նախօրոք չորացվում էր արևի տակ: Կառուցման այս եղանակը հեշտ էր, սակայն անխնամ թողնելու դեպքում նույն հեշտությամբ էլ քանդվում էր: Անցանք նույն ձևով կառուցված մի եկեղեցու մոտով: Այն կարծես մի մեծ, քառակուսի, շագանակագույն սնդուկ լինե՞ր՝ հարթ կափարիչով: Պատուհանի փոխարեն կողքերից մի քանի անցքեր էին բացված: Մի փոքրիկ փայտե խաչ տանիքի ծայրին ցույց էր տալիս, որ սնդուկն եկեղեցի է:

Տների հարդարանքը չափազանց համեստ էր. հիմնականում բաղկացած էր չորս պատերից ու հատակից, կահույք համարյա չկար, մարդիկ բնում էին հատակին, գորգերի վրա: Աշխատում էին դրսում, տների առաջ: Մի մարդ իր հացահատիկն էր մաքրում, նա մի կտոր էր փռել գետնին, ցորենը թափ էր տալիս վրան, ապա ծնկում ու հավաքում էր:

Գյուղերի միջով անցնում էին ոռոգման առուներ: Սև գոմեշներն այնպես էին ընկղմվել ջրի մեջ, որ միայն գլուխներն էին երևում: Այսպես նրանք գովանում էին շոգից և պաշտպանվում միջատներից: Մեր կերխառնող լողանում էին գոմեշների հետ:

Ճանապարհին տեսանք նաև գյուղերի փլատակներ, որ ավերել էին թուրքերը 1920 թ. վերջին կռիվների ժամանակ: Ցավալի է՝ որքա՞ն հին ու նոր ավերակներով է եղծված այս երկիրը: Պատերազմի, ամենօրեք միմիայն պատերազմի հետքեր: Ինչպես նշել ենք, ավերակների միայն չնչին մասն է վերականգնված, որովհետև ավելի ձեռնտու է նորը կառուցել:

Ջրանցքի վրա, որ փոքր-ինչ թեքություն ուներ, մի քարե ջրաղաց կար: Այստեղ էին բերում գյուղացիներն իրենց հացահատիկն աղալու:

Թափադիր գյուղի մոտ՝ Արագից 5 կամ 6 կմ հյուսիս, հարթությունից մի փոքրիկ սար էր բարձրանում՝ կլոր գագաթով: Այնտեղ մի հին բերդի ավերակներ կային, ստորոտին՝ երբեմնի բնակավայրի մնացորդներ: Այստեղ գտնված սեպածև վիմազիր արձանագրությունը հայտնում է, որ Հայաստանի հնագույն քաղաքներից Արմավիրը, որ քանիցս հիշատակվում է Վանի մոտ գտնվող լեռան վրայի սեպագրերում, եղել է այստեղ: Ըստ այդ վավերագրի քաղաքը հիմնադրել է Տուշպայի կամ Վանի խալդ թագավոր Արգիշտի Առաջինը (Ք. ծ. ա. 785—760 թթ.): Նրա որդին՝ Սարդուր Երրորդը (Ք. ծ. ա. 760—733 թթ.) արձանագրություններից մեկում հպարտությամբ է խոսում Արմավիր քաղաքը ոտքի կանգնեցնելու մասին: Դա համընկնում է Նինվեի ծաղկման ժամանակաշրջանին:

Ինչպես երևում է, մեկուսի կանգնած այս բարձրությունը դժվար չէր պաշտպանել: Հնում այսպիսի ամրացված բնակավայրեր էին կառուցում բերդի հարթավայրում, որոնք այն ժամանակներում արդեն մշակվում էին արհեստական ոռոգման շնորհիվ: Ցավոք, մեր ժամանակը սուղ էր, և չկարողացանք կանգ առնել ավերակներն այցելելու համար:

Փոքր-ինչ այն կողմ՝ բամբակի դաշտում, կանայք զբաղված էին քաղահանով: Ընդառաջելով իմ ցանկությանը՝ կանգ առանք և մոտեցանք նրանց՝ աշխատանքը դիտելու: Մեզ սպասում էր արտասովոր միջադեպ. երիտասարդ, գեղեցիկ, խոհուն դեմքով մի կին ընդառաջ դուրս եկավ մեզ և ինձ մեկնեց բամբակի փոքրիկ մի տունկ: Ապա հանգիստ, առանց շուրջը նայելու վերադարձավ իր աշխատատեղը, կրկին կոացավ և շարունակեց քաղահանել՝ այլևս շուրջը չնայելով: Դա երկրի սովորության համաձայն բայի գալուստի մաղթանք էր՝ հուզիչ իր անբռնազբոս պարզությամբ: Ես խնամքով պահել եմ այդ փոքրիկ, նուրբ թերթիկները:

Բամբակի տունկերը դեռևս փոքր էին: Դաշտերը պետք է մաքրվեին մոլախոտից, տունկերը՝ նոսրացվեին: Չնայած ամառն այստեղ համեմատաբար կարճ է (հինգ ու կես ամիս), սակայն, ինչպես վերը նշել ենք, հարթավայրն այս



քարենպաստ է բամբակի մշակման համար, որի տնկատնայինները տարեց տարի ընդարձակվում են: Բամբակագործության ծախսերը՝ ցանքսերի ու դաշտային աշխատանքների համար, ինչպես նաև գյուղացու և նրա ընտանիքի աշխատավարձը, կազմում են հեկտարին 120 ռուբլի ոսկով: Արտադրված բամբակի հումքն ընդունվում է համապատասխանաբար մինչև 230—330 ռուբլով (ոսկի), ստացվում է հեկտարից 110—210 ռուբլի ոսկով (230—440 մարկ) գուտ եկամուտ:

Ահա Սարդարապատ հին քաղաքի մնացորդները, ուր աչքի են ընկնում մի մեծ ամրոցի ավերակներ, որ սկսվելով Սարդարապատի անապատի եզրից՝ տարածվում է դեպի արևմուտք: Հասանք մոտակա երկաթուղային կայարանը, որի հարևանությամբ գտնվում է «Մերձարևելյան նպաստամատույցի» մի հաստատությունը՝ ավելի քան հազար որբ տղաներով, որ արդեն երիտասարդներ էին: Այստեղ նրանք զբաղված էին պետության կողմից հատկացված նոր հողերի մշակմամբ, որոնց համար նորակառույց, այսպես կոչված, Սարդարապատի փոքր ջրանցքը ջուր էր բերում Արագից:

Այցելեցինք բամբակագործ գործարան: Ինչպես արդեն նշել են, այն տարեկան մաքրում է 80000 փուխ (1300000 կգ) բամբակ: Գործարանի հզորությունը տարեց տարի ավելանում է:

Նախաճաշեցինք ամերիկյան այդ հաստատությունում: Ամենալավն այն էր, որ այրող արևի տակ անցած երկար, փոշոտ ճանապարհից հետո խմեցինք հայկական հրաշալի գինի:

Այստեղ հավաքված տղամարդիկ տիպաբանական առումով ներկայացնում էին հայերի տարբեր տեսակներ, գտարյուն մուգ արմենոդից՝ երկար, կոր քթով, դեմքի՝ դեպի ցած նեղացող մասով և մուգ, ուժեղ գունավորված մաշկով, մինչև ավելի հյուսիսային տիպերը: Չարմանալի մի երիտասարդ տեսա՝ խարտյաշ մազերով ու բեղերով, բաց գույնի մաշկով, սկանդինավիացու դիմագծերով: Ավելի շուտ նա մնան էր շվեդ երկաթուղայինի կամ գրանիտագործի, որ հաճախ հանդիպում են Նորվեգիայում: Այս տեսակը հանդիպում է նաև հյուսիսային Ռուսաստանում: Ինձ հավաստիացրին, որ նա գտարյուն հայ է, և որ Հայաստանում բավականին շատ կան խարտիշահեր հայեր: Դժվար է ասել, թե ինչ դեր է խաղացել այստեղ ռուսական ազդեցությունը: Հավաստի է, որ դեռևս Զ. Ժ. ա. 8—7-րդ դդ. հյուսիսից այս երկիրն են ներխուժել կիմերներ, սկյութներ և այլ հնդեվրոպական ցեղեր, որոնք իրենց հետ կարող էին բերած լինել ցեղային այնպիսի տարրեր, որ բնորոշ են շիկահեր գերմանացիներին: Հայերը Եվրոպայից իրենց գաղթման շրջանում արդեն հնդեվրոպական ցեղեր էին, որ կարող էին այնտեղ խառնված լինել ժողովուրդների խարտյաշ տեսակների հետ: Ասածիս ապացույցը շիկահեր քրդերն են: Նման բազմաթիվ հնարավորություններ նպաստել են խարտյաշ ցեղատեսակի տարբեր տարրերի ներթափանցմանն այն ցեղերի մեջ, որոնցից կազմավորվել է հայ ժողովուրդը:

Կայարանից ուղղվեցինք հարավ-արևմուտք, ճանապարհն անցնում էր ոռոգման կարտո Սարդարապատի անապատով: Այն իսկապես անապատ էր, անծայրածիր, չոր, խանձված մի հարթություն, ուր այս ու այնտեղ կային միայն մի քանի ուղտափշեր՝ ամուր ցողուններով, սուր փշերով: Դրանց մոտենալն այնքան էլ հաճելի չէր, առավել և ս մերկ ձեռքերով դիպչելը, պատիժն այնքան մեծ էր, որ երկրորդ անգամ հաստատ չէիր փորձի մոտենալ:

Ճանապարհն իջնում էր դեպի Արագ: Գետի վրա դարձյալ մի երկաթյա կամուրջ կար, որ միացնում էր թուրքական ափը: Այն, իհարկե, ռուսներն էին կառուցել, երբ երկու ափերն էլ դեռ ռուսական էին: Կամրջագլխին՝ ճանապարհի երկու կողմում, պահակության էին կանգնած մեկական կարմիր գվարդիական. նրանք արգելեցին մեզ մոտենալ կամրջին: Կամրջից հյուսիս՝ մի բարձրունքի տափարակի վրա, կանգնած էր լքված մի տուն, ուր տեղավորված էր զինվորական փոքրիկ մի պահակախումբ:

Գետի մոտով՝ նրան զուգահեռ, մի ջրանցք էր անցնում, որի վրա նույնպես կամուրջ կար՝ նախքան Արագի մեծ կամրջին հասնելը: Այն Սարդարապատի փոքր ջրանցքն էր, որ սկիզբ առնելով Արագից՝ ջուր էր հասցնում Սարդարապատի հարթության խորքերը:

Գետի մյուս կողմում՝ ամայի, տափարակ անապատում, ավերակներ կային: Դրանք հին Կարակալա ամրոցի մնացորդներն էին՝ մեծ մասամբ քարաշար պարիսպների, որոնք քարերը վերցված էին ավելի հին ավերակներից՝ Արագի հովտի հնագույն բնակավայրերի մնացորդներից: Այս երկրում մարդու գործունեությունն ու մշակույթն այս ձևով շերտերի է վերածվել:

Կամրջից արևմուտք ճանապարհը տանում էր Կողբ: Այնտեղ կան աղի մեծ հանքեր, որտեղից հայերն աղ էին հանում, քանի դեռ երկիրն իրենցն էր: Նախատեսված էր երկաթգիծ անցկացնել, սակայն ծրագիրը չիրականացավ:

Կամրջի մոտ, ուր կանգնած էինք մենք, հարթավայրի այդ հատվածը կազմավորվել էր Ալազյազից արտավիժած հրահեղուկի շերտերից: Դրանց մեջ գետն իր հունն էր փորել՝ երկու կողմում առաջացնելով լավայի ուղղահայաց պատեր:

Մենք գետի երկարությամբ գնում էինք դեպի այն խոր կիրճը կամ կանյոնը, որ նա փորել էր լավայի կամ բազալտի շերտերի մեջ: Ամենավերին շերտը գետի երկու կողմում ուներ աչքի ընկնող հորիզոնական դիրք: Ահա այստեղից էր սկիզբ առնում Սարդարապատի փոքր ջրանցքը, որ տեսանք ներքևում՝ կամրջի մոտ: Նախքան հարթավայր մտնելը նա հովտով մի փոքր ուղեկցում է գետին:

Դուրս գալով ճանապարհից՝ գնացինք լավայով պատած հարթավայրով գետն ի վեր, քիչ հետո հասանք կանյոնի բերանին, որտեղ գետի հունը լայնանում էր հովտի ընդարձակ մի իջվածքում: Այդտեղ լավային ծածկույթը պետք է որ պատվար հանդիսացած լիներ մի մեծ լճի համար, նախքան գետն իր հա-

մար այս խոր կիրճը փորելը: Նախագծեր են մշակվում ամբարտակ կառուցելու ձորի վերևում, որով ընդարձակ գոգահովիտը կրկին լճի կվերածվի և կստեղծվի ջրի մեծ պահեստարան՝ Մարդարապատի դաշտը ոռոգելու համար: Մակայն դրա թերի կողմն այն է, որ ջրատարի սկզբնամասը շատ ցածր է, որպեսզի կարողանա ապահովել Մարդարապատի դաշտի բարձրադիր շրջանների ոռոգումը: Այսինքն օգուտը կարող է չծածկել կառույցի մեծ ծախսերը: Պետք է հաշվի առնել նաև, որ Արսզն այժմ Թուրքիայի հետ սահման է կազմում, և եթե գետից շատ ջուր հանվի, անկա կարող են դժվարություններ առաջանալ թուրքական կողմի հետ, չնայած ներկա դրությամբ թուրքական ափին այնքան բնակչություն չկա, որի համար շատ ջուր պահանջվի:

Չորագլխին կանգնած դիտում էինք գետի մյուս կողմը, ուր կային գյուղեր՝ փարթամ, կանաչ հողատարածություններով: Հայերի փախուստից հետո դրանց մեծ մասը բնակեցված չէր:

Վերադառնում ենք նույն անապատով, որով անցել ենք: Հողը շատ անմխիթար չոր ու անբերրի է, բայց իրապանում, ինչպես նշել ենք, երկար ժամանակ անմշակ մնալով, ուժ էր հավաքել: Միայն ջուր ու սերմ էր հարկավոր, որ հրաշալի բուսածածկով պատվի: Հարթավայրի բարձրադիր շրջանների քարքարոտ հողն էլ բարենպաստ է պտղաբուծության և խաղողագործության համար:

Մենք նորից անցնում ենք մշակված դաշտերի մոտով: Դուրս գալով բարկ արևից խանձված անապատից՝ հայտնվեցինք մի բնակավայրի շուրջ աճած սոսիների, թթենիների ու ընկուզենիների գով ստվերում: Դա Մուլա-Բայագետն էր: Փարթամ, սաղարթախիտ պտղատու այգիներ, կանաչ դաշտեր, ջրանցքներ, բարձրաբուն բարդիների շարքեր: Ջրանցքում լողանում էին արևավառ պատանիներ, իսկ սև գոմեշները՝ գլուխները վեր ցցած, խաղաղ պառկած էին ջրում:

Կանգ առանք: Բնակիչները՝ մեծ մասը տղամարդիկ, ելնելով իրենց կավե խրճիթներից, արևելյան հյուրասիրության համաձայն մեզ հրամցնում էին ջուր կամ մածուն՝ ծարավը հագեցնելու համար, նաև միզ՝ գովատուն ծիրան և թութ: Դենքերը, նույն անցյալ անգամվա պես, փոքր-ինչ խառնարյուն, հայկականը հիշեցնող տեսակներ էին: Տարազը ևս նույն գորշ և եվրոպականացված հագուստն էր, առանց ուրախ գույների: Մի քանի կին էին հագնված գեղեցիկ, խնամքով ու մաքուր: Մարդիկ սիրալիր էին, սակայն մտազբաղ ու լուրջ: Մենք հարցրինք, թե որքան բնակիչ ունի գյուղը: Նրանք պատասխանեցին, որ հիմա մեկ ու կես հազար, իսկ առաջ՝ երեք ու կես հազար, որից երկու հազարը վերջին պատերազմում սպանվել կամ գերեզմանվել են թուրքերի կողմից: Այս բոլորն այնպես էին ասում, կարծես խոսում էին վերջին բերքի կամ հասարակ, առօրյա միջադեպի մասին, իսկ որ խոշոր ու մանր եղջերավոր անասունները կողոպտված, բնակավայրը մասամբ ավերված էր, այդ մասին

անգամ չակնարկեցին: Այսպիսին է հայ ժողովրդի պատմությունը: Կա՞ մեկ այլ ժողովուրդ այս հողագնդի վրա, որ անցած լինի անմարդկային տառապանքների այս անվերջամալի բովով: Եղե՞լ է մեկ այլ ժողովուրդ, որ այսպիսի համար կենսունակությամբ դիմակայի պատմության դաժան հարվածներին:

Կանգ առանք մի խրճիթի մոտ, որի բակում տանիքից կախված էր դարչնագույն կավից պատրաստված մի տարօրինակ տակառ: Երկարավուն էր, ուռուցիկ, ամենալայն տեղը միջնամասն էր, ամենանեղը՝ երկու ծայրերը: Միակ բացվածքը վերևում էր, ճիշտ մեջտեղը: Իմ խնդրանքով բարեհամբույր տանտիկիցը պատրաստակամորեն ցույց տվեց, թե ինչպես են դրանով կարագ հարում: Վերևից լցնում են սերուցքը, և լիքը տակառը, ինչպես օրորոց, ետ ու առաջ են ճռճում:

Կրկին ճանապարհ ընկանք: Ամենուր երևում էին հոսող ջրով ջրանցքներ, ուր գոմեշներ ու լողացող պատանիներ կային, որոնց թվում երբեմն նաև հատուն տղամարդիկ, սակայն լողացող կանանց ոչ մի տեղ չհանդիպեցինք:


Մենք հասանք ոռոգվող հողերի հյուսիսային սահմանին, այնտեղից դարձյալ անապատ էր, որ ձգվում էր հյուսիս, դեպի Ալագյազ, այս ու այնտեղ լավայի կամ տուֆ քարերի փոքրիկ կույտերով, որոնք հեռվից խառնարանի տպավորություն էին թողնում: Էջմիածին տանող կենտրոնական ճանապարհի վրա տեսանք եզներով լծված սայլերի մի շարան՝ հնդեղեգով բարձած, որ քաղաք էր գնում: Հնդեղեգն այնտեղ նախ և առաջ օգտագործվում էր որպես տանիքածածկ:

## ԶՎԱՐԹՆՈՑ

Մենք շեղվեցինք Երևան տանող կենտրոնական ճանապարհից և ուղղություն վերցրինք դեպի հարավ, Էջմիածնից փոքր-ինչ հեռու այն վայրը, ուր վերջին տարիներին մեծամասշտաբ պեղումներ ու հետազոտություններ էին կատարվում՝ վարդապետ Խաչիկ Դադյանի, եպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանի և Թորոս Թորոսյանի գլխավորությամբ: Հայտնաբերվել են հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի Չվարթնոց եկեղեցու ավերակները: Չվարթնոց անունը նույն իմաստն ունի, ինչ Չվարթունքը և նշանակում է «Հրեշտակների աճող իշխանություն», այսինքն՝ «Երկնային գործեր»: Ավերակներով ծածկված մի ընդարձակ դաշտում տեսանք մեծ կառույցի հիմնապետերն ու մնացորդները: Շուրջ բոլորը սփռված էին խոյակների, բարձրաքանդակների և փառահեղ այլ կոթողների բեկորներ, որ մի ժամանակ զարդարել են կամարներ ու սյուներ: Բոլորը քարի, լավայի, տուֆի, մի մասն էլ, ինչքան կարողացա տեսնել, բազալտի հղկված կտորներ էին:

Նախ հայացքը կանգ է առնում հզոր սյուների մնացորդների վրա, որ

բարձրանում են մնացած ավերակներից: Դրանք երեք կամ չորսն են, որոնց վրա նախկինում հանգչում էր եկեղեցու բարձր միջնագմբեթը: Պահպանվել են



Չվարթնոց եկեղեցու  
հատակագիծը

եկեղեցու բոլորածև արտաքին պատերի ամենաստորին մասերը: Չնայած այն դրսից կտրավուն է, սակայն հիմնական ձևով, ինչպես Մցխեթի դիմացի լեռան վրայի եկեղեցին, քառակուսի է՝ արտահայտված չորս հզոր կամրջասյուներով, որոնց ամեն երկուսի միջև, քառանկյան յուրաքանչյուր կողմին կա կիսաշրջանաձև արսիդ: Այդ արսիդներից երեքի կամարները կրում են ոչ թե պատերը, այլ կիսաշրջանում երկու կամրջասյուների միջև կանգնած վեց սյուների շարքը: Միայն չորրորդ՝ արևմտյան կողմի արսիդը պատի հետ միասին ձևավորում է վերնասրահը: Այս ամենը շրջապատված էր հաստ պատերով (1,04 մ) բոլորածև մի միջանցքով: Այս ձևով սահմանափակված սրահի ներքին տրամագիծը 33,73 մ է, քառակուսու կամրջասյուներ ունեցող կողմերից յուրաքանչյուրը՝ 13 մ:

Ըստ պատմական աղբյուրների եկեղեցին կառուցել է շնորհաշատ կաթողիկոս Ներսես Երրորդը (641—661 թթ. Ք. ծ. հ.)՝ Շինող (այսինքն՝ կառուցող) մականունով: Նա եկեղեցուն կից իր համար կառուցել է նաև ապարանք: Եկեղեցին ավերվել է Ք. ծ. հ. 930—1000 թթ. արանքում: Հայաստանում կամ հայե-

րով բնակեցված երկրներում հայտնի են նման շատ եկեղեցիներ, որոնք կառուցվել են մոտավորապես նույն ժամանակներում կամ մի քանի դար ավելի ուշ: Պետք է ենթադրել, որ Հայաստանում զարգացած էր ճարտարապետական ինքնատիպ ոճ, որի ազգակիցներին Եվրոպայում հանդիպում ենք Ռավենայում և Ախենի Մայր տաճարում:

Այստեղ հայկական կառուցողական արվեստն ուսումնասիրելու լավ հնարավորություն է ընձեռված: Ամենից առաջ հետաքրքրություն են ներկայացնում երեք կամրջասյուների մնացորդները: Դրանք կառուցված են ամուր շաղախով՝ յուրատեսակ մի բետոնով, իրար հետ սերտ ագուցված քառանկյուն բլոկներով կամ քարե հաստ սալերով՝ մեծ մասամբ լավային կազմությամբ: Հայաստանում քրիստոնեական բոլոր շինությունները կառուցված են նույնակերպ՝ միաձույլ պատեր, բնական քարով երեսպատված: Քարերն այնքան սերտ են ագուցված իրար, որ կապակցող նյութի կարիք այլևս չի զգացվել: Դրա շնորհիվ է, որ հայկական եկեղեցիները թողնում են ամբողջական քարից պատրաստված լինելու տպավորություն:

Դատելով ավերակներից՝ կարելի է եզրակացնել, որ 7-րդ դարում՝ եկեղեցու կառուցման ժամանակներում, հայ ճարտարապետներն ունեին միաձույլ պատի կառուցման բարձր զարգացած տեխնիկա: Որպես շաղախ նրանք օգտագործել են ցեմենտ պարունակող մի տեսակ կիր, որ արդյունահանել են եկեղեցուց արևմուտք և հարավ-արևմուտք գտնվող լեռներից: Այդ շաղախին խառնում էին հրաբխային խիճ կամ ավազ, որ վերածվում էր յուրատեսակ բետոնի: Եկեղեցու ավերումից ի վեր (10-րդ դ.) այս փլատակները մոտ 1000 տարի ենթարկվել են քամու, անձրևի, Հայաստանի խիստ ծանր սառնամանիքների քայքայիչ ազդեցությանը: Սակայն զարմանալի է, որ մինչև օրս պահպանվել է բետոնի այդ զանգվածը և դեռ ամուր կպած է երեսպատման սալերին: Եկեղեցու գմբեթը կառուցված է նույն նյութից, ներսից երեսպատված է քարով: Եկեղեցիների այսօրինակ գմբեթներն այնքան դիմացկուն են, որ ցած ընկնելու դեպքում էլ պահպանում են երեսպատման սալերը:

Շինարարական այս եղանակը, սակայն, բնորոշ չէ հայկական հնագույն ճարտարապետությանը, տնաշինության մեջ այն երբեք չի կիրառվել: Քսենոփոնի ժամանակ (401 թ. Ք. ծ. ա.) հայերն իրենց տները կառուցում էին քարից ու կավից՝ ծղոտի շաղախով, իսկ նախաքրիստոնեական շրջանի այն մի քանի մեծ շինությունները, որոնց ավերակները պահպանվել են, լրիվ քարից են: Որտեղից կարող էին հայերը վերցրած լինել շինարարական այս նոր եղանակը, հայտնի չէ: Քարե պատերի՝ շաղախանյութով կառուցման այս ձևը գուցե Հռոմից է եկել Փոքր Ասիա: Սակայն դրանից առաջ, անհիշելի ժամանակներից այն կիրառվել է նաև Միջագետքում, ուր որպես երեսպատման սալեր օգտագործվել է աղյուս: Պարսկաստանում ևս կիրառվել է միաձույլ պատեր կառուցելու եղանակը: Ամենահավանականն այն է, որ հայերը շինարարական այս

ձևը վերցրել են Պարսկաստանից և Հյուսիսային Միջագետքից<sup>1</sup>, իսկ պատերը երեսպատել են բնական քարով: Այնուհետև շինարարական այս ձևը հայերի մոտ զարգացել է ինքնուրույն, բոլորովին տարբեր պարսիկներից, և օգտագործվելով շատ դարեր, հասել է կատարելության այնպիսի աստիճանի, որին հանդիպում ենք 7-րդ դարում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ շինարարական տեխնիկայի և տիպիկ հայկական ճարտարապետական ոճի ծաղկման փուլին նախորդել է մի երկար ժամանակաշրջան, երբ շաղախով լցոնված և քարով երեսպատված պատեր օգտագործվել են միայն եկեղեցիների ու ապարանքների կառուցման ժամանակ: Այլապես պետք է ենթադրել, որ այս շինությունները երկիր հրավիրված օտար շինարարների ձեռքի գործ են, որ սակայն հիմքից գուրկ է:

Ավերակներում հայտնաբերված զարդաքանդակների, կամարների, քիվերի, խոյակների և սյուների բազմաթիվ բեկորներ եկեղեցու զարդապատկերների ոճի խոստուն վկայներն են: Առանձին գծեր կրում են բյուզանդական ու սիրիական ազդեցություն, նույնքան էլ հիշեցնում են Արևելքը՝ Պարսկաստանը:

Եկեղեցու հատակը և եկեղեցին շրջապատող հրապարակը ծածկված է եղել աղյուսի սալիկներով, որոնք պահպանվել են: Եկեղեցին գտնվում է մի ընդարձակ դարավանդի վրա, որ շրջապատից բարձր է երկու աստիճան, նույնքան ընդարձակ մի հրապարակ էլ տարածվում է եկեղեցու շուրջը: Բացի այդ, բուն եկեղեցին կանգնած է գետնախարիսխի կամ հիմքի վրա, որը երեք աստիճանով կամ հարթակով առանձնանում է հրապարակից: Հայկական բոլոր եկեղեցիները կանգնած են նման գետնախարիսխների վրա: Այդ ոճը, ինչպես վերը նշել ենք (էջ 67), յուր ծագումով արևելյան է, ավելի ստույգ՝ պարսկական. դրա արևմտյան ծագման վարկածը բացառվում է:

Նայում են բոլորածև, ամուր կամրջասյուներով ավերակ այս շինությանը և պատկերացնում ամբողջական կառույցը՝ իր բազմաթիվ սյուներով ու կամարներով, վերում բազմած բարձր գմբեթով, որտեղից լույս էր թափանցում, լրիվ հասակով վեր խոյացած. ահա այս կառույցի երբեմնի շքեղությունը: Ի՞նչ մեծ համբավ է ունեցել եկեղեցին հայերի շրջանում, որ նրա անկումից հետո, 1001 թ., Գագիկ թագավորը ճիշտ նույնի պատճենը կառուցում է նոր մայրաքաղաք Անիում: Այդ եկեղեցին նույնպես կործանվում է, երբ 1064 թ. քույրերը Ալի - Արսլանի գլխավորությամբ ներխուժում են քաղաք և ավերում այն<sup>2</sup>:

Հին հայկական մշակույթում մեծ տեղ է գրավում նպատակասլացությունը, որը ցայտուն արտահայտված է 7-րդ դարի ճարտարապետության մեջ, մի ժամանակաշրջան, երբ Եվրոպայում քրիստոնեական ճարտարապետությունն իր առաջին քայլերն էր անում: Ըստ ավանդության Չվարթնոցը կա-

ռուցվել է հայոց սրբերից մեկի՝ Գրիգոր Լուսավորչի պատվին այն վայրում, որտեղ Տրդատ թագավորը, գալով Վաղարշապատ մայրաքաղաքից, հանդիպում է սրբին: Մեզ պատմեցին մեկ այլ ավանդություն, որի համաձայն եկեղեցու տեղում հնում եղել է կրակապաշտական սրբավայր:

Եկեղեցու տակ հողի մեջ կային փոքրիկ քառակուսի սնցքեր կամ խուցեր, որոնք ինչ-որ չափով նման էին հին հռոմեական դամբարանների՝ աճյունասափորների համար որոնախորշերով: Ինչ նպատակի են դրանք ծառայել, հայտնի չէ: Հատակը սնամեջ հնչողություն ուներ. եթե ավելի խոր փորվեր, անշուշտ նորերը կհայտնաբերվեին:

Ավերակների միջից գտնվել է մի մեծ քար՝ նախահայկական խալդերի ժամանակներից մնացած ընդարձակ սեպագիր արձանագրությամբ: Այն անշուշտ եկեղեցում որևէ նպատակի է ծառայել, ինչպես հեթանոսական շրջանի արձանագրություններով հին քարերը: Հավանաբար դրանց վերագրվել է կրոնական նշանակություն:

Հարավից, մասամբ նաև արևմուտքից, եկեղեցին շրջապատող հրապարակին կից եղել է մի մեծ շինություն, որի հիմնապատերն են մնացել այսօր: Պահպանվել են մի մեծ սյունազարդ սրահի, այլ դահլիճների ու բնակելի սենյակների մնացորդներ: Եկեղեցու հրապարակի երկարությամբ կամրջասյուների վրա կանգնած է եղել կամարակապ մի վերնասրահ: Այդ շենքերը մասն են կազմել կաթողիկոսի ապարանքի, ուր իջևանել է նա իր շքախմբով այս կողմերում շրջագայելիս: Շքախմբի մեջ մտնում էին 12 եպիսկոպոս, վանականներ, քահանաներ ու սպասավորներ: Էջմիածնում և Հայաստանի շատ այլ վայրերում սովորական երևույթ էր, որ պատրիարքը (կամ եպիսկոպոս) իր ապարանքն ունենար եկեղեցուն կից, թեմի Մայր տաճարի պարիսպների ներսում: Նույնը կարելի է ասել Վատիկանի և Պետրոսի եկեղեցու մասին: Կաթողիկոսն ուներ մեկ այլ՝ երկրորդ ապարանք Աշտիշատում (Մուշի մոտ):

Հայ պատմիչ Սեբեոսը, որ ժամանակակիցն էր Ներսես Երրորդ Շինող կաթողիկոսի, իր «Հերակլի պատմության» մեջ գրում է. «Այն ժամանակ (652 թ. Ջ. ծ. հ.— Ֆ. Ն.) Հայոց կաթողիկոս Ներսեսը մտադրվեց իրեն բնակատեղ կառուցել Վաղարշապատ քաղաքում գտնվող սուրբ եկեղեցիների մոտ, ճանապարհի վրա, ուր, ասում են, Տրդատ թագավորը դիմավորել է սուրբ Գրիգորին: Այնտեղ կառուցեց նաև մի եկեղեցի երկնային Չվարթունների անունով, որ երևացել էին սուրբ Գրիգորի երազում երկնային գործերի բազմությամբ: Եվ եկեղեցին կառուցեց շինվածքով ու զարմանալի գեղեկությամբ՝ արժանի աստվածային պատվին, որին նվիրեց: Եվ գետից ջուր բերեց և մշակեց բոլոր քարքարուտները, այգիներ տնկեց ու ծառեր և բնակատեղը շրջապատեց գեղեցիկ հորինվածքներով բարձր պարիսպներով՝ ի փառս Աստծո»:

Ինչպես վկայված է, կաթողիկոսը մեծ համակրանք է տածել դեսպի Բյուզանդիան, և այն բանից հետո, երբ Կոստանդ Նյկորոդ կայսրը (641—668) 652

<sup>1</sup> Հմմտ. Սարժգոզակի, նույն տեղը, հ. 1, էջ 354 և հաջորդները:

<sup>2</sup> Նույնը, հ. 2, էջ 119:



թ. Գվինի (Հայաստանի այն ժամանակվա մայրաքաղաքը) Մայր տաճարում հայերին հորդորում էր ընդունել Քաղկեդոնի եկեղեցական ժողովի դավանանքը, կաթողիկոսը ընթրում էր նրա հետ: Հայերը Ներսեսին հերետիկոս են հռչակում: Կայսրին Կոստանդնուպոլիս ուղեկցելուց հետո նա վերադառնում է իր ծննդավայր Տայք, ուր մնում է մինչև իր ամենակատաղի հակառակորդ Թեոդորոս Ռշտունու մահը (654 թ.): Հետապնդման վեց տարիներից հետո Ներսեսը վերադառնում է կաթողիկոսարան, ամրապնդում իր իշխանությունը և փութաջանորեն ձեռնամուխ լինում եկեղեցու շինարարության ավարտին:

Այս փաստը պետք է ենթադրել տար, որ եկեղեցու ճարտարապետության մեջ մեծ չափով օգտագործված են բյուզանդական տարրեր, սակայն դա այդպես չէ: Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեւր ազգային, հակահունական ուժեղ շարժում: Եկեղեցու ճարտարապետը անտարակույս կանգնած է եղել ազգային ճարտարապետական նվաճումների հողի վրա, և նրա վիթխարի կառույցը հանդիսանում է տիպիկ հայկական՝ արսիդներով քառանկյուն եկեղեցու, ճարտարապետական ոճի զարգացման բնական շարունակություն: Մյուս չի հակասում բյուզանդական որոշ ազդեցությունը զարդանախշերում: Ինչպես նշել ենք, այստեղ առկա են նաև արևելյան ազդեցության բազմաթիվ հետքեր, հատկապես ապարանքի շենքերն իրենց շատ գծերով հիշեցնում են պարսկական ճարտարապետություն: Օրինակ, ինչպես նշել է Ստրժիգովսկին<sup>3</sup>, սյունազարդ սրահը բացառապես պարսկական է: Ստորև կանոնադրամանք նաև այն հարցին, թե ինչպես իրենց հերթին Բյուզանդիան ու Եվրոպան շատ ավելի են ազդվել հայկական ճարտարապետությունից, քան հակառակը:

Չվարթնոց բոլորաձև եկեղեցին գործել է երեք հարյուրամյակ շարունակ. այստեղ գումարվել են նաև ազգային մեծ ժողովներ: Ինչպես գիտենք, 661 թ. Ներսես Երրորդի նախաձեռնությամբ հրավիրվում է ազգային մեծ ժողով, որտեղ հայ իշխանները որոշում են ընդունել արար Մոսավիայի գերիշխանությունը (661—680):

Եկեղեցին ավերվել է Ք. ծ. հ. 930—1000 թթ. միջև ընկած շրջանում, բայց ինչպես՝ հայտնի չէ: Ըստ հայ մի պատմիչի այն կործանել են արաբները, սակայն դա հավաստի չէ: Ավերման պատճառ կարող էր լինել նաև երկրաշարժը, ինչպես Գվինի Գրիգորի եկեղեցին, որ կործանվել է երկրաշարժից 9-րդ դարի վերջին:

Մենք այստեղ պատմական հիշարժան հողի վրա ենք գտնվում: Մի քանի կմ մինչև Էջմիածին (Վաղարշապատ) ձգվում են բլուրներ, որոնք անկասկած ծածկում են հնամյա ավերակներ: Պեղումների շնորհիվ, անշուշտ, կարևոր

<sup>3</sup> Նույն տեղը, հ. 1, էջ 267:

հայտնագործություններ կարվեն: Հողն այստեղ հնուց ի վեր բերրի է եղել: Անհիշելի ժամանակներից արհեստական ոռոգման շնորհիվ այն պիտանի է դարձել երկրագործության համար: Հետագայում աստիճանաբար ամայացել է պատերազմների, մարդու ավերիչ գործունեության, մասամբ նաև երկրաշարժերի հետևանքով, չնայած երկրաշարժն այդքան հիմնավոր ազդեցություն չէր կարող թողնել: Եթե պեղումների միջոցով հնարավոր լինեւր բանալ ծաղկում ապրած փուլի ավերակների տակ եղած հնագույն մշակութային շերտը, ապա կհանդիպեինք ավելի վաղ շրջանի մշակույթների ու մարդկային ցեղերի մնացորդների, որոնք շարունակ դուրս են մղվել եկող սերունդների կողմից:

Հարթավայրում սփռված են բազմաթիվ հողաբլուրներ, որոնց մեծ մասը ծածկում են նախկին բնակավայրեր: Դրանց գոյացման պատճառն այն է, որ մարդիկ դարեր շարունակ նույն տեղում են կառուցել իրենց բնակավայրը, և ամեն մի նոր եկող սերունդ տեղավորվել է անցյալի ավերակների վրա, որի հետևանքով տեղանքն աստիճանաբար բարձրացել է շրջակա հարթությունից՝ առաջացնելով այդ հողաբլուրները: Պեղումներն այստեղ կհայտնաբերեն մշակութային տարրեր շերտեր, ընդհուպ մինչև վաղմջական շրջան: Հայաստանում բաիը կարող է դառնալ բազմաթիվ հայտնագործությունների բանալի: Սակայն ժամանակն է, որ վերադառնանք Երևան:

## ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեկոյան ընթրեցինք «Կլուբում»: Այն ներկայացնում էր ցանկապատված մի հրապարակ՝ մի կողմի վրա, տանիքի տակ բաց վերնասրահով: Մարդիկ նստած մեծ ու փոքր սեղանների շուրջ՝ ընթրում էին, իսկ ընդարձակ հրապարակի ասֆալտապատ մի քառանկյան վրա պատանհներն ու երիտասարդները անիվներով չմուշկ էին քշում: «Կլուբ» ռեստորանը բազմամարդ էր ոչ միայն երեկոյան ու կեսօրին, այլ բոլոր ժամերին, այնպես որ երբեմն դժվար էր ազատ տեղ գտնել: Այստեղ հաճախում էին երկու սեռն էլ, սակայն տղամարդիկ մեծամասնություն էին կազմում: Հագնված էին մաքուր ու լավ, ինչպես եվրոպական գործարանային քաղաքների միջին խավը: Կանայք նրբագեղ էին, սակայն հասարակ հագնված:

Ընտիր էր և՛ ճաշը, և՛ հայկական գինին, էլ չենք խոսում մրգի մասին: Ծիրանը հասնելու ժամանակներն էր: Չէ որ Հայաստանը ծիրանի հայրենիքն է, և ծիրանն այստեղ մեծ է ու հյութեղ, ինչպես որևէ այլ տեղ:

Ցանկապատի մյուս կողմում փոքրիկ տղաների մի խումբ՝ ծայրահեղ ցընցոտիների մեջ, մուրում էր: Ժամանակ առ ժամանակ մատուցողներից մեկը քշում էր նրանց, կամ հրապարակում մի իսկական շուրջկալ էր կազմակերպվում, շատ շանցած՝ նրանք կրկին խմբվում էին ու ցանկապատը զարդարում

փողոցայինի ժպտուն դեմքերով: Նրանք անհոգ կյանք էին վարում, և քաղցի հետքեր չկային նրանց կողմ, չաղիկ թշերին: Թիկունքը շուտ տալուն պես ձեռքերը երկարում էին դեպի հերթական սեղանը ու փախցնում հաց, կոտլետ կամ ինչ պատահեր: Երբեմն նրանցից մեկը կապկի պես մագլցում էր ցանկապատն ի վեր և այնտեղից բոցնում մի լավ պատառ: Մի անգամ, երբ սեղանից նոր էինք վեր կացել և պատրաստվում էինք հեռանալ, մի ամբողջ խումբ ցանկապատից ներս ցատկեց: Քանի դեռ չէին նկատվել, հասցրին դատարկել մի մեծ թաս ծիրան, ամաններում մնացած ուտելիքն ու փախան: Երբ մատուցողները եկան, նրանք արդեն ցանկապատի մյուս կողմում էին: Ուրախ աղաղակով քաշվեցին հրապարակի մի անկյուն՝ ավարը խժեռելու:

Այս պատանիներին տանում են մանկատուն, բայց նրանք այնտեղ երկար չեն մնում, փախչում են՝ իրենց հետ տանելով մի քանիսին ևս: Նրանք վերադառնում են փողոց՝ իրենց ազատ, թափառաշրջիկ կյանքին: Քանի դեռ ամառ է, ապրում են, ինչպես Աստված՝ Ֆրանսիայում, ձմռան մոտենալու հետ գործերը վատանում են: Սակայն ինչպես ասում են. «Նրանք թռչումներ են բաց երկնքի տակ»: Այնինչ դեռ ամառ է և շատ ավելի տաք, քան պետք է:

Ուշ երեկոյան այստեղ հնչում էր նաև երաժշտություն՝ հայկական մի փոքրիկ նվագախմբի կատարմամբ, որի մեջ մտնում էին հայկական հինգ կիթառ («քառ» են ասում), հայկական երկու ջութակ, որ նվագում են ուղղահայաց հենելով ծնկանը, մի հայկական ցիտրա, մի դափ և մի տեսակ խուլ ձայնով կրկնակի թմբուկ: Նվագում էին հայկական երաժշտություն՝ ժողովրդական երգեր ու պարեր: Գերիշխում էր լարված, արագ ռիթմը, պարեղանակի կամ արագ քայլերգի նմանությամբ: Սակայն լսվում էր նաև մի տեսակ թախծոտ հնչերանգ:

Հաջորդ օրը կեսօրից առաջ (ուրբաթ, հունիսի 19) մենք կրկին հանդիպում ունեցանք կառավարական հանձնախմբի հետ՝ քննարկելու հարթավայրի առավելագույն հնարավորությունները՝ ձեռքի տակ ունենալով հայ ինժեներների քարտեզագրական նյութը և գետից հանվող ջրի ծավալի վերաբերյալ հաշվարկները: Պայմանավորվեցինք երեկոյան զննաքննվել մեկնել, որպեսզի հաջորդ օրն իսկ սկսենք Սարդարապատի դաշտի հյուսիսային շրջանների հետազոտությունը:

Նիստին ներկա էր Երևանում գումարված ուսուցիչների համագումարից մի պատգամավորություն: Ելույթ ունեցող գերմաներեն ողջունելով ինձ՝ հայտարարեց, որ ես ընտրվել եմ համագումարի պատվավոր նախագահ:

Մենք այցելեցինք Երևանի պատմության քանդաքան, որ գտնվում էր կենտրոնական փողոցի վրա: Այն ուներ բարձրարժեք հավաքածու, որ կարևոր նշանակություն ուներ հայոց պատմությունն ուսումնասիրելու համար: Ինձ հատկապես հետաքրքրեցին քարի ու բրոնզի դարերի մի քանի գտածոներ և զանգեր, որոնք, ինչպես Հայաստանում պեղված բոլոր կմախք-

ները, բացահայտ երկայնագանգ էին: Սա ավելի քան տարօրինակ է, քանի որ նոր շրջանում հայերը բացառապես կարճագանգ են (ինդեքս 86—88): Նշանակում է այստեղ, ինչպես և Վրաստանում, հնում ապրել է երկայնագանգ ժողովուրդ, և որ այս երկիրը չի կարող կարճ ու բարձր գանգ ունեցող հայ ցեղի նախահայրենիքը լինել:

Նույն օրը ճաշից առաջ այցելեցինք նաև համալսարան: Այն մի գեղեցիկ շենք էր կենտրոնական փողոցի վերջում՝ հրաշալի այգով շրջապատված: Հանդիպում ունեցանք ռեկտորի և պրոֆեսորների հետ, որ մեզ ուղեկցեցին տարբեր ինստիտուտներ: Համալսարանը նոր էր հիմնադրվել և նոր պետք է զարգանար, բայց նյութական քիչ միջոցներ ուներ: Սակայն զարմանալի էր, որ հակառակ մեծ դժվարությունների՝ շատ բան էր արված: Ինձ համար մեծ անակնկալ էր, որ պրոֆեսորներից մեկը նորվեգերեն գիտեր, նա լավ ծանոթ էր նաև Նորվեգիային: Նա բուսաբան, դոկտոր, պրոֆեսոր Հ. Բեդելյանն էր, որ բուսաբանություն ուսումնասիրել էր Կոպենհագենում և բազմիցս ճանապարհորդելով Նորվեգիայով՝ երկու անգամ հասել մինչև Հյուսիսային հրվանդան: Չափազանց համակրելի մի անձնավորություն էր նա:

Ենթադրեցիք հետո շրջեցինք պարտեզում, ուր գյուղատնտեսական տարբեր փորձեր էին դրված: Համալսարանին կից էր նաև գյուղատնտեսական մի բարձրագույն դպրոց: Այստեղ կառուցվում էր նոր շենք լաբորատորիաների համար: Ստվերախիտ ծառերի տակ սեղան էր զգված՝ հրաշալի ծիրանով ու կեռասով, նաև զինի կար այնտեղ, որն ամռան այս շոգին առանձնապես հաճելի էր: Պրոֆեսորներից շատերը գերմաներեն ու անգլերեն լեզուներով ճառեր արտասանեցին, իսկ ռեկտորը, ողջունի խոսք ասելով, հրապարակեց՝ ինձ համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան շնորհելու մասին որոշումը:

Կեսօրից հետո միայնակ շրջեցի քաղաքում: Այցելեցի այս երկրի հարավ-փոփոխ պատմության վկաներին, թեև դրանք այնքան էլ շատ չէին, սակայն որոշ հետաքրքրություն էին ներկայացնում: Ահա Չանգվի գառիթափ ձորագլխի հին բերդը՝ բարձր պատերով, սեպածև քարակների վերևում դուրս ցցված ամրություններով ու ատամնավոր պարիսպներով: Պարսպապատի թեք տանիքների շուրջը շարված էին ապակու մեծ, սուր բեկորներ, որ պատրաստ սպասում էին ճղելու այն դժբախտի ձեռքերը, որ կփորձեր բարձրանալ այստեղ: Անցյալի պատերազմական իրավիճակների մի փոքրիկ պատկեր էր սա:

Այս կողմից բերդը պետք է որ անառիկ եղած լիներ՝ մինչև հեռահար հրետանու մուտքը, իսկ մյուս երեք կողմից համեմատաբար հեշտ խոցելի էր, քանի որ քարից ու արևի տակ չորացրած կավե բլուկներից կառուցված պարիսպները հազիվ թե մեծ դիմացկունություն ունենային: Այդուհանդերձ, 1804 թ. Ռուսաստանը ապարդյուն պաշարեց բերդը: Այդ ժամանակ բերդը պարսիկներիցն էր: Սարդարը՝ Երևանի նահանգապետը, 1814 թ. Բրիտանիայի դիվա-

նագիտական ներկայացուցչության քարտուղարին ասաց. «Եթե նույնիսկ երեք կամ չորս եվրոպական թագավորներ միանան բերդը գրավելու, դարձյալ զուր կանցնեն նրանց ջանքերը, նրանք էլ նույն կերպ ստիպված կլինեն անմիջապես հեռանալ»:

Այնինչ 1827 թ. ռուսները՝ Պասկևիչի գլխավորությամբ, հեշտությամբ վերցրին բերդը: Ռուսական ռուբերը սարսափելի ավերածություն առաջացրին այդքան դյուրին նյութից կառուցված բերդաքաղաքում: Ռուսներից մեկը դիպել էր բերդի մզկիթի գմբեթին, որի տակ ռուսների սարսափելի տարափից պատասպարվել էին հազարավոր բնակիչներ:

Շրջում էի հին բերդի տարածքում, հանկարծ հանդիպեցի պարսկական մի մզկիթի ավերակների՝ հախճապակե խճանկարներով, կապտականաչավուն սքանչելի գմբեթով: Սա՞ է այն գմբեթը, որին հարվածել է ռուսը: Հետքեր չկային, գմբեթն անվնաս էր: Այս միջավայրում այսքա՞ն գեղեցիկ բազմազուն ճարտարապետություն: Այն, իհարկե, իսլամական է, այսինքն օտար մշակույթ, որ Հայաստանում երբեք չընդունվեց:

Ըստ մահմեդական աղբյուրների բերդը կառուցվել է 16-րդ դարի սկզբին պարսիկների կողմից, սակայն դա հավաստի չէ: Հետագա դարերում շարունակ պայքար է մղվել պարսկական շահերի և թուրքական սուլթանների միջև՝ այդ կարևոր հենակետը գրավելու համար: 1635 թ. շահ Սաֆին գրավում է քաղաքը, 1724 թ. թուրքերը կրկին նվաճում են այն, 10 տարի անց Նադիր շահը ետ է վերցնում: 1827 թ. քաղաքն անցնում է ռուսների տիրապետության տակ: Քանի որ պարսիկները շիաներ են, իսկ թուրքերը՝ սուննիներ, ապա նրանց միջև և ս կա կրոնական ատելություն, որն իր ուժգնությամբ չի զիջում քրիստոնեատյացությանը: Երբ պարսիկները 1635 թ. գրավեցին քաղաքը, այնպես հիմնովին ավերեցին թուրքական բոլոր մզկիթները, կարծես դրանք քրիստոնեական եկեղեցիներ լինեին:

Չանգվի կամրջից ցած, բարձունք տանող ճանապարհին, հանդիպեցի քսան ուղտերով մի քարավանի, որ գալիս էր հարավից: Եվրոպան իր աղմկաբար շարժիչներով մեր դարը ինչքան է հեռացրել մեզ անապատային, լռակյաց այս կենդանիներից, որ ծուռ պարանոցներով ու անսահման թախծոտ ժպիտով քայլում են մեղմ ու անձայն, երկար շարքերով:

Պտույտից տուն էի դառնում, երբ մի կառք՝ երկու գեղեցիկ ձիեր լծած, աշխույժ վարճով անցավ իմ կողքով ու կանգ առավ: Մի տղամարդ՝ հավանաբար բարձր պաշտոնյա, իջավ կառքից ու սկսեց խոսել ինձ անձանոթ լեզվով: Ժեստերից կռահեցի, որ նա առաջարկում է իր հետ մեկնել: Մենք կառք նստեցինք: Մինչ կրակոտ, արագավազ ձիերը մեզ հյուրանոց հասցրին, գրուցեցինք բացառապես սիրալիք ժպիտներով: Իջնելիս շնորհակալության համար սեղմեցի ձեռքը, նա մեկնեց, և ես չիմացա նրա ով լինելը:

Երևան անունը անշուշտ հին է և գալիս է խալդյան ժամանակներից: Սա-

կայն քաղաքը ներկայացնում է հայոց պատմության համեմատաբար նոր շրջանը: 16-րդ դարից մեծանում է նրա կարևորությունը ամենից առաջ, իհարկե, ամուր բերդի շնորհիվ: Այդ պատճառով էլ քաղաքն առանձնապես հին շինություններ չունեւ: Եկեղեցիները, բացի ռուսական եկեղեցուց, փոքր էին և հետաքրքրություն չէին ներկայացնում: Կային մզկիթներ, որ լավ էին պահպանվել, սակայն դրանք էլ 17-րդ դարից այն կողմ չէին անցնում: Ամենամեծը Գյուկ-ջամի մզկիթն է, որ գտնվում էր քաղաքի հարավ-արևմտյան մասում՝ շրջապատված վիթխարի ծփնիներով, ստվերոտ մի հրապարակով, լճակով և կարկաչող ջրով: Երևանի հետաքրքիր շինություններից էր պարսից սարդարների ապարանքը՝ Չանգվի ձորի գլխին, բերդի պարիսպների ներսում: Սակայն բերդաքաղաքի բազմաթիվ շենքերից ու հարեմից բան չէր մնացել. որքան գիտեմ, կանգուն էր միայն սրահներից մեկը, որ ցավոք չկարողացա տեսնել: Այդտեղից պետք է որ գեղեցիկ տեսարան բացվելու դեպի գետը, հարթավայրը և Արարատ լեռը: Սրահը ներսից հարդարված է եղել գույնզգույն նախշազարդերով ու գեղանկարներով, որ պատկերել են պարսից սարդարներին, շահերին, հերոսներին ու պարսիկ ամազոնտիներին: Սարդարը կարող էր իր հրաձիգի հմնությունը փորձել պատուհանից՝ դժբախտ գյուղացիների ավանակների փորը գնդակներ լցնելով, որոնք գետի մյուս կողմում ուղրապտույտ ճանապարհով դեպի կամուրջն էին իջնում: Այստեղ նա կարող էր նաև աչք պահել հարավից եկող քարավաններին, որ նրա գանձարանը լցնում էին հնչեղ մետաղադրամներով, իսկ հարեմում նրան էին սպասում Վրաստանի և Կովկասի ամենագեղեցիկ կանայք: Պարզվում է, որ պարսից սարդարը գուց էլ է ունեցել: Երևանի վերջին սարդարի մասին պատմում են հետևյալը: Մի անգամ մի վրացի Չանգվի ձորով բերդն է մագլցում՝ սարդարի հարեմում իր հարսնացուին տեսնելու: Հարսնացուն նկատելով իր սիրեցյալին՝ պատուհանից նետվում է ցած, անդունդ: Ստույգ մահից նրան փրկում է ուռնու ճյուղը, որից կախվում է ընկնելու ընթացքում: Չույզը բռնվում է, սակայն խանդոտ տիրակալն ազատ է արձակում նրանց՝ ասելով. «Այսքան հավատարմորեն կապված սրտերը թող որ ոչ ոք չբաժանի»: Երևանի այդ վերջին սարդարը մեռավ լքված ու միայնակ, մի խղճուկ ախոռում: Նրա սեփականությունը ոչ այլ ինչ էր, քան կեղտոտ շորերը, որոնք ծածկում էին ծերունու մարմինը:



## VII.

### ԴԵՊԻ ԱՐՓԱՉԱՅ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆ

Երեկոյան ժամը 10-ին մեզ հատկացված հատուկ վագոնով մեկնեցինք և հաջորդ առավոտ (ուրբաթ, հունիսի 20) ժամը չորսի մոտ հասանք Սարդարապատի դաշտի վերջին՝ Ալազյազ կայարանը: Մեզ հետ գնացքում էին նաև բանակի ձիեր ու զինվորներ: Չիով մեզ ընդառաջ էր եկել Արագի կամրջի զինվորական պահակախմբի պարետը, ուր եղել էինք երկու օր առաջ: Այս ամենը թողնում էր հարձակումներից մեզ պաշտպանելու անհրաժեշտության տպավորություն: Իրոք, եղել էին դեպքեր, երբ թուրքական կողմից քողերը ավազակախմբերով անցել էին այս կողմ՝ ամասուն գողանալու: Վերջին անգամ դա պատահել էր այս գարնանը: Ներկա դրությամբ նմանօրինակ վտանգի որևէ նշան չկար, մեզ կողոպտել չէր պատրաստվում ոչ ոք:

Առավոտ վաղ արդեն պատրաստ էինք մեկնելու: Մնում էր քամբած ձիերից ընտրել մի լավ կենդանի՝ հարմար քամբով: Աշխույժ ձիեր էին, հեծնելն այնքան էլ դյուրին չէր, և մերոնցից մի քանիսը դաշտում մի լավ պարելուց հետո միայն կարողացան հաղթահարել ու նստել քամբին: Չինվորական մի ջրկատի ուղեկցությամբ ու պաշտպանությամբ մենք ձիերով ճանապարհ ընկանք դեպի արևմուտք. անցնելով ընդարձակ, անհարթ տարածությամբ՝ ուղղվեցինք դեպի Արփաշայ, որի մյուս ափին՝ հեռվում, բարձրանում էին լեռնաշղթայի հրաբխային գագաթներ: Ալիքածև սարահարթն այստեղ ուներ հրաբխային քարքարոտ հող, որ ծածկված էր հողմնահարված մուգ շերտով: Բուսականությունն աղքատիկ էր՝ կոշտ, կոպիտ խոտաբույսերի մի քանի գոյշ, չոր խուրձեր և ցաքուցրիվ աճած ուղտափշի թփեր: Սակայն եթե հնարավոր լիներ ջուր հասցնել այստեղ, ապա այն կվերածվեր գեղեցիկ այգիներով հրաշալի հողատարածության:

Կարծրացած քնահողը նպաստավոր էր ձիավարելու համար, և ձիերը վազում էին քառատրոփ: Նրանք համեմատաբար փոքր կենդանիներ էին, ոչ շատ մեծ, քան պոլո-պոնիները: Մեծ մասը բավականին նիհարվում ու ոսկրոտ էր, սակայն տոկուն ու ժիր՝ հեծնելուն հարմար կազմվածքով: Ի դեպ, նրանք էժան էլ չէին: Այսպիսի մի լավ ձիև արժեք 200-300 ուրլի: Սահմանապահ պարետի ձին անրակազմ ու գեղեցիկ հովատակ էր, որն արժեք 2000 ուրլի: Առավոտյան նա ձիով պահակակետից մինչև կայարան եկել էր 40 կմ և դեռ ճաշից հետո էլ, երբ բաժանվեցինք, ուզում էր վերադառնալ:

Հասանք գետին: Այն այստեղ սեղմված էր մոտ 500 մ լայնությամբ և 60 մ խորությամբ ունեցող մի նեղ կիրճում, որ փորել էր լավայի ու բազալտի շերտերի մեջ: Մենք կանգնած էինք կիրճի ամենամեղ հատվածում, իսկ մեզնից վեր, զառիթափ բարձրությունների միջև, գետի հունը լայնանալով վերածվում էր

ընդարձակ հովտի: Ըստ սկզբնապես մշակված նախագծի՝ այստեղ կիրճի լայնությամբ կառուցվելու էր 53 մ բարձրության մի ամբարտակ, որը վերևում փոված հովիտը վերածելու էր մեծ լճի, վերջինս էլ ծառայելու էր որպես ջրամբար: Այնուհետև ջուրն այստեղից ջրանցքով Սարդարապատի դաշտ հասցնելու համար անհրաժեշտ էր լեռան միջով թունել փորել, որի սկիզբը լինելու էր ամբարտակի վերին եզրից մոտ 20 մ ցած: Թունելի երկարությունը կազմելու էր 2 կմ:

Նախագիծը, հմուտ փորձագետ Դափյուսի կարծիքով, հիմնականում իրագործելի էր, սակայն բարդությունը բարենհաջող ավարտին հասցնելն էր, քանի որ նախ 50 մ բարձրություն ունեցող ամբարտակի կառուցումն ինքնին արդեն մեծ ծախսեր պահանջող ձեռնարկ է, երկրորդ, կիրճի երկու կողմերի ապարը՝ բազալտի ու լավայի շերտերը, ճաքճաք ու ծակոտկեն է, և մեծ աշխատանք է պահանջվում, որպեսզի այն դիմանա նաև ջրի բարձր ճնշմանը: Ջրի այդքան մեծ ծավալի կուտակումը կարող է ճակատագրական լինել ամբարտակի համար. եթե այն ճեղքվածք ստանա կամ պայթեցվի (լինի դա մարդու կողմից պատերազմի ժամանակ կամ երկրաշարժից), ապա ջուրը ցած կհոսի, և ջրամբարը կդատարկվի: Այդ բոլորից հետո ջրամբարի վերականգնումը, որպեսզի ջուրը կրկին թունելի բարձրության հասնի, տարիներ կտևի: Իսկ մինչ այդ Սարդարապատի դաշտի ողջ բնակչությունը կընկնի սոսկալի նեղ վիճակի մեջ, և նա այլընտրանք չի ունենա, քան հեռանալ կամ ոչնչանալ:

Դափյուսը գտնում էր, որ առավել նպատակահարմար է գնալ գետն ի վեր և փնտրել ջրանցքի համար անհրաժեշտ բարձրություն, կառուցել այնտեղ ավելի փոքր, մոտ 10 մ բարձրության ամբարտակ, որի վերականգնելը, որևէ բան պատահելու դեպքում, ավելի հեշտ կլիներ: Այնտեղից էլ հնարավոր էր լեռան միջով թունել փորել դեպի հարթավայր: Թունելն ինչքան էլ որ երկար լիներ, չորս կմ չէր անցնի: Այսբանով հանդերձ ամբողջ կառույցն ավելի քիչ ծախս կպահանջեր, քան ձեռքի տակ եղած նախագիծը՝ իր բարձր ամբարտակով:

Այս կերպ, իհարկե, կունենանք ոչ այնքան մեծ մի ջրամբար, ուր կկուտակվեն ռոռզմանը շժառայող ճնռան ու գարնան ջրերը՝ ամռան չոր եղանակին օգտագործելու համար, երբ Արփաշայն ինքը բավականին սակավաջուր է դառնում: Դափյուսը գտնում էր նաև, որ եթե անհրաժեշտ է ջրահավաք ջրամբարներ կառուցել, ապա դրանք պետք է լինեն պատվարից վեր, որպեսզի ամբարտակի վնասվածքի դեպքում ջրի ամբողջ ծավալն անմիջապես ջրանցքով չարտահոսի:

Այս առաջարկները լիովին հավանության արժանացան մեր հանճանախմբի մյուս անդամների կողմից. հայ ինժեներները նույնպես ընդունեցին, որ ծրագիրն ունի դրական շատ կողմեր:

Վերադառնալով մասամբ վերածվեց ձիարշավի: Չիերը տուն էին շտապում, և մենք հագիվ էինք կարողանում զսպել նրանց: Հատկապես Կարի ձին, նրան

սանձահարել այլևս անհնար էր, նա քառատրոփ պլանում էր իր հեծյալի հետ, մինչև որ անհետացավ մեր տեսադաշտից: Ծանր քար ընկավ սրտներիցս, երբ կայարանում Կարլին տեսանք ողջ և առողջ. նա կարողացել էր ձին կանգնեցնել միայն այստեղ:

Մեզ հետ էր նաև Թիֆլիսից և Մցխեթից մեզ հետ եկած լրագրողը՝ մեր բարեհամբույր ու գիրուկ բարեկամը: Ցավոք, ձիարշավը նրան շատ տհաճություններ էր պատճառել, որից հետո նա հիվանդ պառկեց, և մենք այլևս չհանդիպեցինք:

Ինչպես արդեն ասել ենք, Ալազյազ կայարանը գտնվում էր Սարդարապատի դաշտի բարձրադիր մասում: Կայարանից փոքր-ինչ արևելք սկսվում են Ալազյազի փեշերը, սակայն հսկա հրաբուխն այստեղ ծածկված է իրենից առաջ ձգվող բլրաշարքերով, որոնց կոնաձև գագաթները մնան են հրաբխային հին խառնարանների: Հողն այստեղ անջուր է: Չարմանալի է, որ ոչ միայն Ալազյազից, այլև նրանից առաջ ձգվող այս բարձունքներից ոչ մի առվակ սկիզբ չի առնում, կամ գետնից չի բխում որևէ աղբյուր: Երկաթուղային կայարանի ջուրը խողովակաշարով բերված է հյուսիսից, որի համար մեծ ծախս է պահանջվել: Կայարանի մոտ կար քարե պարսպով շրջապատված մի փոքրիկ այգի, որտեղ եղած մի քանի ծառ ջրվում էր խողովակով բերված ջրով: Մնացած հողատարածքը կատարյալ մերկ էր:

Արփաչայից վերադառնալիս անցանք ավերակ տների մոտով: Անհնար է պատկերացնել, թե առանց ջրի մարդիկ ինչպես են ապրել այդտեղ: Արհեստական ռոտզման հետք չկա այս շրջանում: Հնում եղած մի քանի առվակներն էլ հետագայում փոխել են իրենց հունը: Առավել հավանական է, որ այստեղ բնակվել են անասնապահներ տարվա այն եղանակներին, երբ տեղումներն առատ են եղել, և շրջակայքը վերածվել է հարուստ արոտավայրի:

Գիշերը գնացք նստեցինք Լենինական մեկնելու համար, իսկ մինչ այդ կեսօրից հետո ամբողջ ժամանակն անցկացրինք կայարանում: Պետությունն այնտեղ մի ազարակ ուներ, ուր հաշվվում էր 500 կով և 1500 ոչխար: Կառավարիչի օգնականը ռուս էր՝ Դոնից, և կապիտան Քվիլինգը նրա հետ կարող էր ռուսերեն խոսել: Նա պատմեց, որ մտադիր են արտադրությունը մեծացնել՝ հասցնելով 5000 կովի և 15000 ոչխարի, դժվարությունն այն է լույ, որ ջուր չկա: Առայժմ օգտագործում են կայարանի խողովակով բերված ջուրը, որ շատ քանակ է նստում:

Մեզ հարց էին տալիս, թե հնարավոր չէ՞ արտեզյան ջրհորներ փորել: Խելացի միտք է. եթե փոքր-ինչ խոր փորվի, ապա կարելի է հասնել քարի հաստ շերտի, որով հոսում են Ալազյազի լանջելից սկիզբ առնող ջրերը: Սակայն բարդությունն այն է, որ ջուրը մինչև խիտ շերտերին հասնելը, որպեսզի հոսք կազմի, անցնելով այս ջրանցիկ լավայի ու տուֆի շերտերով՝ էլ ավելի խոր է ներծծվում: Սա է պատճառը, որ հրաբխային այս շրջանները հարուստ են հանքային աղբյուրներով, քանի որ ջուրը թափանցելով շատ խոր շերտեր՝

այնտեղ իր մեջ լուծում է հանքային բաղադրություններ:

Շագանակագույն հարթավայրին ու հանդիպակաց լեռնալանջերին մայելով՝ ակամա մտածում ես, թե ինչպես կարելի է այստեղ ամասուն պահել, բավարար կեր հայթայթել նրա համար, որ կաթ տա: Սակայն հեռվում, սարերի վրա, մեզ երևացող բարձրությունների մյուս կողմում տեղումներն առատ են, և պետք է որ այնտեղ որոշ չափով խոտ լինի: Բայց զարմանալի է, որ անասնագետներն այնտեղ չեն կառուցված, որ կովերը վեր ու վար չանեն այդ երկար ճանապարհը, որը հանգեցնում է կաթի զուր կորստի: Բանն այն է, որ այնտեղ վերևում ջուր՝ առվակ կամ աղբյուր չկա: Մնում է, որ անփոխարինելի այդ ջրի պատճառով նրանք այստեղ, ներքևում, թանկ խողովակաշարով բերված ջրի մոտ տեղավորվեն: Եթե գտնվի ջուր բերելու մեկ այլ ճանապարհ, ապա բողոքովին նոր հնարավորություններ կբացվեն:

Օրական 16—18 լիտր կաթ տվող լավ կովն այստեղ արժե մի քանի հարյուր ռուբլի, 3—5 լիտր կաթ տվող սովորական կովը՝ 100—120 ռուբլի (230—260 մարկ): Կթվորուհին ստանում է ամիսը 20 ռուբլի, տղամարդ անասնապահը՝ 30 ռուբլի՝ ինքնապարենավորման դեպքում:

Արտադրվում է շվեյցարական պանիր և մեկ այլ տեսակի համեղ, յուղալի պանիր, որ հայտնի է Ալազյազի պանիր անունով: Ռուսական մեկ ֆունտ պանիրն արժե 35, իսկ կարագը՝ 75 կոպեկ, ուրեմն կիլոգրամը մոտ 87 կոպեկ (1,90 մարկ) և 1,83 ռուբլի (3,90 մարկ):

Ռուսը նախկինում Դոնի մարզում հարուստ գյուղացի է եղել, իսկ նրա ունեցած մեկ միլիոն ռուբլին՝ դժվարությամբ վաստակած փող: Սակայն նրանից խել են ամեն ինչ, և նա այժմ այստեղ պահում է այս ազարակը: Նրա կարծիքով հայերը, չիշտ պատկերացում չունեն այս վայրերի հնարավորությունների մասին: Նա պնդում էր, որ այս հարթավայրից և լեռնալանջերից շատ քան կարելի է ստանալ: Այժմ մտադիր են ազարակում մեծամասշտաբ խոզաբուծություն կազմակերպել:

Երկաթգծի ուղղությամբ զբոսնում էին երկու գեղեցիկ աղջիկ: Նրանք ունեին հայկական երկարավուն դեմք և բարձր, թեթևակի կոր քիթ: Քայլում էին ու ընթացքի մեջ ձեռքի պարզ իլիկով թել էին մանում՝ մի ձեռքով պահելով իլիկը, մյուսով՝ պտտելով թելը: Այս շրջանում թել մանելու տարածված եղանակ է սա, իսկ ճախարակ ոչ մի տեղ չտեսա: Կարելի էր հաճախ հանդիպել գյուղացի կանանց, որ ճանապարհով գնալիս՝ ժրջան մանում էին ձեռքի այսպիսի իլիկներով: Նրանց շուրջը թռչկոտում էին երեխաներ, որոնցից շատերն էին գեղեցիկ: Նրանց աշխույժ, չարածճի դեմքերին թշվառության հետք չկար:

Հարթավայրում, կայարանից հյուսիս, կային մի քանի քառակուսի հյուղեր՝ հարթ տանիքներով, ուր բնակվում էին անասնապահները: Դիտելով դրանք՝ կարելի էր պատկերացում կազմել տեղի բնակչության ապրելակերպի մասին: Քարե չորս պատ և մերկ հատակ, ներսում մի կաթսայից բացի այլ

կահկարասի չկար: Որպես վառելանյութ օգտագործում էին չորացրած գոմաղբ, որ ձեռք էին բերում ագարակից: Մայրու բնակարանի ավելի պարզագույն ձև անհնար է պատկերացնել: Մյուսներից առանձնացված մի հյուրի առաջ կանգնած էր սպիտակ, պայծառ հագուստով մի կին, հավանաբար դա նրա տոնական շքեղ զգեստն էր, որ հագել էր օտարերկրյա հյուրերի այցելության առիթով: Բայց թե ինչպես էր այդ ցածր, մութ անցքում ինչ-որ բան սպիտակ մնացել, ինձ համար հանելուկ մնաց:

Այդ ընթացքում երկինքը հետզհետե ծածկվում էր հյուսիսից եկած մռայլ ամպերով, որ գնալով դառնում էին մթանած ու սպառնալի, մինչդեռ հյուսիսարևմուտքում և արևմուտքում երկինքը ողողված էր մայր մտնող արևի ցուլքերով: Հանկարծ սևակնած ամպերի մեջ շլացուցիչ լույսով փայլատակեց կայծակը, որոտաց շանթը, ապա հետևեցին նորերը, իսկ ավելի մոտիկ ճայթեց ոռոտը: Երևում էր՝ հյուսիսում սարերի վրա տեղատարափ անձրև էր գալիս: Մեզ մոտ էլ անձրև եկավ, սակայն նրանից բան չէր մնացել, այնքան որ ճանապարհին գոլորշիացել էր: Կարճ ժամանակ անց ամեն ինչ խաղաղվեց, և երկինքը պարզվեց:

Կլիմայի առանձնահատկությունից է, որ ինչքան էլ անձրևաբեր ամպեր են գալիս, հողը դարձյալ մնում է չոր: Շուտով ամպերը խմբվեցին Ալազյազի գագաթների շուրջ, հյուսիսում և հյուսիս-արևելքում քաշվեցին լեռների վրայից և հեռանալով դեպի հարավ ու հարավ-արևելք՝ նախ հավաքվեցին Արարատի գագաթների շուրջը, ապա ցրվեցին հարթավայրով մեկ: Ամպերն այստեղ որքան էլ սպառնալից են կուտակվում, միևնույն է, անձրև հազվադեպ է հասնում ծարավ հողին:

Երեկոն արագ իջավ լեռների ու երկրի վրա: Ուշ գիշերին եկավ գնացքը, մեր վագոնը կցեցին նրան, և մենք շարժվեցինք դեպի Լենինական կամ Գյումրի:

## ՆՈՐ ԶՐԱՆՑԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄՈՏ

Միս և եկավ կիրակին, 21-ը հունիսի՝ Շիրակի ջրանցքի բացման նշանավոր օրը: Զրանցքը ոռոգելու ու բերրի էր դարձնելու մոտ 8000 հեկտար նոր անջրոյի հողեր:

Առավոտյան, երբ դուրս նայեցինք գնացքի մեր կուպեի պատուհանից, կայարանը լեփ-լեցուն էր զինվորներով, որ եկել էին տոնակատարությանը մասնակցելու: Նախաճաշից անմիջապես հետո ավտոմեքենաներով մեկնեցինք: Անցնելով Լենինականի փողոցներով՝ դուրս եկանք սարահարթ և ուղղություն վերցրինք դեպի հյուսիս-արևմուտք՝ տեսնելու ջրանցքի թունելը մինչև ջուր բաց թողնելը: Մի իսկական ժողովրդական զբոսանք էր սա. բոլոր

ճանապարհները լցված էին տղամարդկանց, կանանց ու տարբեր տարիքի պատանիների հետիոտն խմբերով, ուղևորներով ծանրաբեռնված տարբեր տեսակի կառքերով՝ եզներ կամ ձիեր լծված, զարդարված գույնզգույն ժապավեններով ու տարբեր գույնի դրոշմներով, վառ գույնի զգեստներ հագած կանանցով, ձիավոր ու հետիոտն զինվորներով. բոլորը զվարթ ու տոնական տրամադրությամբ:

Մեզնից ձախ, ցածում, Արփաչայի հովիտն էր: Այնտեղ պահպանվել էին անցյալի մարդկային քաղաքակրթության հետքեր՝ մի ամբողջ քաղաքի ավերակներ, մի վանք ու կլոր գմբեթով մի եկեղեցի: Բոլորը լքված, պատերազմներից ավերված, և վերականգնման ոչ մի փորձ: Լենինականը դեռևս լիքն է թուրքերի վերջին արշավանքից մնացած ավերակներով: Շատ բան, իհարկե, արդեն վերականգնվում է: Սակայն պետք է առավել մտածել ներկայի ու ապագայի մասին, անցյալը թող մոռացվի:

Ինչքան մոտենում էինք, այնքան սովաբանում էին զբոսնողների խմբերը: Մրանից բացի, մեկ անգամ էլ են տեսել մարդկային նման զանգվածների հոծ բազմություն: Դա 1922 թ. Թրակիայում էր, երբ հույներն ու հայերը թուրքերի ահից թողեցին իրենց տներն ու փախան: Այսօր սակայն վախը չէր, որ իշխում էր, այլ ժպտացող կյանքն ու տոնական տրամադրությունը:

Մենք հասանք թունելի վերջնամասում ծվարած մի գյուղի, ուր կառուցված էր մի մեծ հաղթական կամար, որ երփներանգ գույներով պայծառ փայլում էր կապույտ երկնքում: Մարդկային բազմությունն այստեղ հիշեցնում էր Դերբիի օրն Անգլիայում, երբ մարդիկ լեփ-լեցուն կառքերով պիկնիկի էին գնում դեպի բլուրները, մի տարբերությամբ, որ կառքերին այստեղ մեծ մասամբ լծվաւ են եզներ:

Ինչ-որ մեկն ընթացքի պահին թռավ մեր ավտոմեքենայի ոտնատեղին: Նա ճանապարհ էր ցույց տալու: Խաչված մուրճով գլխարկից կոսահեցի, որ ոռու ինժեներ է: Նայեցի նրան: Դենքը ծանոթ էր: Նա ժպտաց, այո, իհարկե, 12 տարի առաջ ենք հանդիպել և միասին ճանապարհորդել Արևելյան Սիբիրի ամայի տարածություններով և Ամուրի մարզով: Նա այն ժամանակ Ամուրի երկաթուղու շինարարությունում բաժնի պետ էր: Նրա ազգանունը Յակիմով է, այստեղ ջրանցքի ու թունելի շինարարության երկրորդ ինժեներն է:

Ճիշտ են ասում, որ աշխարհը փոքր է: Առավոտյան կայարանում ինձ ողջունեց մեկ այլ ինժեներ, նրան չճանաչեցի: Հետո իմացա, որ նա էլ է այն ժամանակ աշխատել Ամուրի երկաթգծի շինարարությունում: Յակիմովի հրահանգներով վարորդը մեքենան վարում էր մարդկային բազմության միջով՝ մասամբ ճանապարհով, մասամբ էլ դաշտով՝ անցնելով բավականին խոր փոսերի ու խորդուրդոր բմբերի վրայով: Վերջապես կանգ առանք ձորագլխին, որից ցած, խորքում, հուսում էր Արփաչայը: Ուղղահայաց ժայռերի կողքով, մի դժվարանցանելի ճանապարհով իջանք ձորը, ուր կառուցված էր ամբարտակը:



Անմոռաց տեսարան էր. մարդկանց բազմությամբ լեցուն վայրի ու խոր ձոր, որի երկու կողմերում ուղղահայաց ժայռեր էին: Ուր էլ որ նայում էիր, միայն քար էր: Ցածուն փրփրում էր գետը, իսկ կիրճի ժայռապատերից վեր փայլում էր կապույտ երկինքը: Մի պատկեր Divina Commedia-ից («Աստվածային կատակերգությունից» — թարգմ.): Մարդկանց բազմության միջով ճանապարհ բանալով՝ անցանք ջրարգելակի մոտով, որը դեռ բաց էր, և գետը ազատ հոսում էր, ապա կախտվի կամրջով մարդկանց հոծ խմբերի հետ դուրս եկանք մյուս ափ: Ափով ցած իջնելով՝ կրկին անցանք գետը և կանգնեցինք թունելի մուտքի առջև:

Ինժեներն առաջ անցավ, մենք հետևեցինք նրան և շուտով սուզվեցինք անհայտ խավարի մեջ: Անվերջանալի երկար թվացին մեր թափառումները մթության մեջ, որ լուսավորվում էր իրարից բավականին հեռու տեղադրված մի քանի էլեկտրական լամպերի խղճուկ լույսով: Թունելի բարձրությունն այնքան էր, որ ես կարողանում էի ուղիղ քայլել, իսկ լայնությունը՝ երկու ձեռքերս տարածած չէին հասնում աջ և ձախ պատերին: Մի խումբ, որի մեծ մասը պատահինք էին, քառատրոփ այնպես էր սլանում թունելով, որ ցեխ ու ջուր էր թոցնում շուրջը, իսկ գոռոցներն ու միջերը մի ահավոր աղմուկ էին առաջացնում: Ինչքան որ կարողացա զանազանել լամպերի աղոտ լույսով, բազմության մեջ կային նաև կանայք ու աղջիկներ: Ակամա մտածեցի, եթե հանկարծ ջուրը բաց թողնեն, կամ որևէ խուճապ առաջանա, ի՞նչ կկատարվի այստեղ: Կյանքի համար խելացնոր պայքարի հորձանուտը այս նեղ փողոցակում կճգվեր առաջ մղվող մարդկային զանգվածները:

Թունելի սկզբնամասում գետինը դեռ չոր էր. առաջ գնալով հանդիպեցինք փոքրիկ ջրափոսերի, որոնք հետզհետե մեծանալով՝ թունելի անցարանում կազմում էին իրար կապակցված ջրային ցանց: Երկու կողմում պատերի մոտ կային քարեր կամ փոքրիկ թմբեր, որտեղով կարելի էր առանց թրջվելու քայլել: Սա զբոսանք էր ջրի մեջ, իսկ թունելի երկարությունը 2,5 կմ էր:

Սկզբում իմ առջևում դեռ տեսնում էի ինժեների և մեր ուղեկիցների սպիտակ գլխարկները, քայլ առ քայլ, սակայն նրանք անհետացան հրմշտոցի մեջ, և ես մնացի մենակ: Մինչ սայթաքելով առաջ էի շարժվում, խոր ջրափոսերից խուսափելով սեղմվում պատերին, նկատեցի ալեխառն մորուքով, խելացի դիմագծերով տարեց մի պարոնի: Նա արագաքայլ գնում էր ամբողջի հետ՝ հաճախ ենթարկվելով հանդուզն պատանիների հրմշտոցին, որ ստեպստեպ վազքով գալիս էին թունելի մեջտեղով, ուր ջուրն հորդում էր՝ կեղտոտ ջրերը թոցնելով մինչև նրանց ականջները: Ես տեսա, թե ինչպես պարոնը մի քանի անգամ դիմեց նրանց, հավանաբար զգուշացնում էր, որ մի քիչ ուշադիր լինեն, և այդ բոլորը նա անում էր սիրալիր ներողամտությամբ ու համբերությամբ:

Մենք հանդիպեցինք զինվորների մի ջոկատի, որ գնում էր հակառակ ուղ-

ղությամբ: Նրանք ոչ պակաս անուշադիր էին, քան պատանիները, սակայն դա բնորոշ է զինվորականին ընդհանրապես՝ լինի նա ներկայիս «կարմիր», թե անցյալի «սպիտակ» բանակային: Իսկ մենք՝ առանց համազգեստի սովորական մահկանացուներս, որերորդ անգամ արդեն թաղվում ենք խոր ջրափոսերի մեջ՝ նրանց թողնելով ճանապարհի չոր եզրերը:

Վերջապես առջևում սկսեց ընդարձակվել ու լուսավորվել, և մենք հայտնվեցինք ցերեկվա լույսի մեջ: Այստեղ գտա կապիտան Բվիլինգին ու գյուղատնտեսության կոմիսար Երզնկյանին: Այստեղ էր նաև թունելում հանդիպած սպիտակամորուս, տարեց պարոնը: Երզնկյանը ներկայացրեց նրան. նա Վրաստանի Հանրապետության նախագահն էր:

Քիչ անց եկավ նաև Դափյուրը: Նա չէր հասցրել անցնել թունելով. ներքևում ճանապարհի մի կարճ հատվածից արդեն հոգնել էր: Իսկ Կարին և Լո Սավիոյին առավոտվանից այլևս չհանդիպեցինք:

Բարձրացանք սարահարթ, ուր ավտոմեքենաները մեզ էին սպասում, և վերադարձանք այնտեղ, ուր ամբարտակն էր ձորի մեջ: Սարալանջով ցած իջնելով՝ նորից անցանք կախովի կամրջով և ուղիվեցինք դեպի բարձր փայտամածով հռետորական բեմը, որ կառուցված էր գետի մյուս ափին, գառիթափ, քարքարոտ լեռնալանջի վրա: Մեզ ողջունեց հանրապետության նախագահ Սաքո Համբարձումյանը, որ բժիշկ էր մասնագիտությամբ: Նա նոր էր ընտրվել, Երևանում կառավարության հետ մեր բանակցությունների ընթացքում: Նախկին նախագահը՝ Լուկաշինը, այժմ Թիֆլիսում երեք հանրապետությունների դաշնակցային միասնական կառավարությունում Հայաստանի ներկայացուցիչն էր:

Գետի երկու կողմի սարալանջերին ժողովրդի հոծ բազմություն էր հավաքված: Թվում էր՝ փոքրիկ մրջյուններ են սողում ու վխտում գառիթափ սարալանջերի ստորոտների մեծ-մեծ քարերը՝ արանքում:

Տղամարդկանց մեծ մասը, սովորականի պես, կրում էր եվրոպական հագուստ, մոխրագույն, փափուկ կտորից կարած բուլշիկյան գլխարկներ, մի մասը սպիտակ վերնաշապիկներով էին, որ ի պատիվ օրվա շողում էին մաքրությունից: Բազմության մեջ երևում էին նաև ինժեներների սպիտակ գլխարկներ: Երբեմն-երբեմն աչքի էր ընկնում մի քուրյ կամ թաթար՝ մուգ դեմքով և իր անխուսափելի գառան մորթուց գլխարկով: Չկար միայն հայկական ժողովրդական տարազը, այն իսպառ անհետացել էր: Առկա էին դեմքերի ամենատարբեր տիպեր, մեծ մասը սակայն բարձր, կարճազանգ երկարավուն դեմքերն էին՝ հարթ այտուկներով, բարձրափամբ, կեռ քթերով և լայն, փոքրիկ չէր ընկած ճակատով: Այս ֆոնի վրա երբեմն երևացող լայն դեմքերն օտարոտի տպավորություն էին թողնում: Քիչ բացառությամբ բոլորը ողորկ սափրված էին կամ վերին շրթունքի վերևում, քթի տակ ունեին կարճ, սև մազեր, ոմանք էլ՝ կարճ մորուքներ: Տարեց տղամարդկանցից քչերն ունեին ալե-

հեր քեղ-մորուք:

Նկատելի էր, որ ընդհանուր առմամբ թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մեծ մասը երիտասարդ էին, ծերերի հազվադեպ կարելի էր հանդիպել:

Տիկնայք՝ իրենց վառ գույնի հագուստներով ու զխարկներով, կենդանություն էին տալիս միօրինակ, զանգվածային այս հավաքին, երևում էին նաև վառ կարմիր հովանոցներ: Կանացի գլուխները նույնպես գեղեցիկ էին՝ սև մազերով, երկարավուն, ձվաձև դեմքերով, փոքր քթերով ու նուրբ դիմագծերով, մեկումեջ աչքի էր ընկնում նաև վայրի տիպը՝ սև, զանգուր մազերով, կոպիտ դիմագծերով, ցցուն այտուկներով ու ծնոտով, արծվաքթով, սև, վառվռուն աչքերով:

Ժամը 11-ն էր: Ըստ հայտագրի ջուրը թունել էր բաց թողնվելու ժամը 12-ին: Մա մի քիչ շատ էր արևի տակ կանգնած սպասելու համար, սակայն չէ՞ որ համբերությունը հենց Արևելքի առաքինությունն է:

Վերջապես ամբարտակում և թունելում իջեցվեցին ջրարգելակի թևերն ու փակվեցին: Ջուրն ամբարտակի մյուս կողմում սկսեց անմիջապես բարձրանալ, և գետի ցածրադիր ափին կանգնածները ստիպված շտապեցին հետ քաշվել, քանի որ ջուրը լցվելով փոսորակները՝ առաջացնում էր կղզիներ: Վերջիններս և ս կամաց-կամաց անհետացան բարձրացող ջրի տակ: Ամբարտակից վեր գոյացավ մի մեծ լիճ, որ շարունակում էր դեռ բարձրանալ:

Հանկարծ կողքի ուղղաբերձ ժայռից ծանր շրմփոցով ջուրը նետվեցին մի քանի մերկ մարմիններ: Երիտասարդներ էին, որ խայտալով լողում էին նոր լճում: Նրանք լողում էին ձեռքերն իրենցից առաջ փոխանփոխ տարածելով ջրի վրա, այնինչ լողալիս պետք է ձեռքերն ու ոտքերը համաչափ շարժել, ինչպես ընդունված է մեզանում: Ընտրով նրանց հետևեցին և ուրիշները, ջրի ճողփյունների ու մարդկանց քրքիչների ուղեկցությամբ անընդհատ թրմփոցներ էին լսվում: Առաջինները հագներին լողազգեստ ունեին, հետո արդեն այդ հանգամանքը դուրս մնաց ուշադրությունից: Ջուրը շարունակում էր բարձրանալ, մինչև որ ամբարտակի վերին եզրից ջրվեժի տեսքով ցած թափվեց: Լողորդներից շատերն անցան պատնեշի մյուս կողմը, նստեցին և սկսեցին արևահարվել Ադամի իրենց զգեստներով: Նրանց մեծ մասը նիհարավուն էր, սակայն ամուր և գեղեցիկ կազմվածքով:

Ժամանակն էր սկսելու բացման արարողությունը: Հանրապետության նախագահը, գյուղատնտեսության կոմիսարը և մի քանի այլ անձինք, այդ թվում և Ջեռոուն՝ «Մերձարևելյան նպաստամատույցից», և ես անցանք կախովի կամրջով և գնացինք դեպի թունելի մուտքի ջրարգելակը:

Մի շարժումով նախագահը, մի քանի հոգու հետ բռնելով սարքի թափանիվը, պատնելով սկսեց բարձրացնել ջրարգելակի ծանր թևերը: Չորում փոթորկալից ցնծություն էր: Նրանք պատում ու պատում էին ամբողջ ուժով, հրավառության կրակոցները թնդացնում էին բարձրաբերձ ժայռերը, ծածանվում էին

դռոշները, մարդիկ ուռա էին գոռում, իսկ ցածում ջուրն ավելի ու ավելի մեծ հոսքով էր մղվում դեպի թունել: Ես իմ բարեկամ գյուղատնտեսության կոմիսարի, Ջեռոուն էլ մյուս հեղինակավոր անձանց հետ պատեցինք թափանիվը հավաքվածների ծափողջույնների ներքո: Ցածում բացվածքը աստիճանաբար մեծանալով՝ հնարավորություն տվեց ջրի ազատ հոսքին: Կարելի էր արդեն պատկերացնել, թե սարահարթում ինչպես էր ջրանցքն աստիճանաբար լցվում, որ ռոռգելով ծարավ հողը՝ կյանք էր պարգևելու նրան:

Մենք վերադարձանք մեր տեղը՝ քեմահարթակ: Ելույթ ունեցավ Հայաստանի նախագահը, նրան հաջորդեցին շատերը, ինձ էլ հերթ հասավ, Վրաստանի նախագահին նույնպես, որ փոխանցեց հարևան հանրապետության ողջույններն ու բարենախոսությունները: Իսկապես հիշարժան օր էր, ավարտին էր հասցվել մի կառույց, որը հնարավորություն էր ստեղծելու երջանիկ ընտանիքների համար կառուցել նոր բնակարաններ:

Բացման հանդիսավոր արարողությունն ավարտվեց: Ջրուսմնքի ելած բազմությունը շրջվեց հակառակ ուղղությամբ: Մենք նույնպես մեկնեցինք ավտոմեքենաներով և ընթանալով ջրանցքի երկարությամբ դեպի ցած՝ տեսանք, որ այնտեղ արդեն ջուրը հոսում է բավական արագությամբ: Այդ տեսարանն ամենուրեք հրճվանք էր պատճառում մարդկանց: Տղամարդիկ ու պատանիները լողանում էին, իսկ կանայք ափին նստած՝ ոտքերն էին դրել ջրի մեջ: Ջրանցքից խողովակաշարով ջուր պետք է տարվեր Արփաչայի հովիտ՝ այնտեղ մի նոր էլեկտրակայան աշխատեցնելու համար: Այսօր հանրապետության նախագահը դնելու էր էլեկտրակայանի հիմքերը:

Ամբարտակի, թունելի և ջրանցքի հետ կապված բոլոր աշխատանքները լավ տպավորություն էին թողել, փորձագետ Դափյուսը և ս ետ չէր մնում իր գնահատականների մեջ: Նա դրանք որակեց որպես լավ մտահղացում, խելացի նախագիծ և խնամքով գլուխ քերված կառույց: Ամեն ինչից երևում էր, որ արհեստական ռոռգման կուլտուրան այստեղ անցյալ է ունեցել: Գործն արված էր զարմանալի խնայողությամբ: Ամբողջ կառույցի վրա ծախսվել էր մոտ կես միլիոն աշխատանքային օր՝ երեք հեռքով, և 1300000 ռուբլի (մոտ 2800000 մարկ): Ինչպես նշել ենք, թունելի երկարությունը 2,5 կմ է, և նրա միայն 1 կմ արժեքը կազմել է 300000 ռուբլի (645000 մարկ):

Հուզիչ էր, երբ տունդարձի ճանապարհին ժողովրդին տեսանք այդպիսի տոնական տրամադրության մեջ: Մարդիկ խմբերով նստած գետնին՝ չոր խտտերով կամ նման մի բանով կրակ էին վառել ու եփում էին իրենց կերակուրը: Ամենուր տոն էր ու ցնծություն, սակայն զուսպ ու խաղաղ, առանց անկարգությունների:

Տղամարդկանց մի մեծ խումբ հավաքվել էր պարկապզուկով ու թմբուկով երկու երաժշտի շուրջ: Երջանի ներսում խրոխտ շարժումներով պարում էին թե՛ մենակ և թե՛ շուրջպարով՝ իրար ձեռք բռնած:

Վերադարձանք քաղաք, և Նապոլեոնն ուղեկցեց մեզ ռեստորան՝ ճաշի: Մուտքի մոտ հավաքված պատանհները կոշիկ մաքրելու իրենց ծառայությունն էին առաջարկում: Նրանք այստեղ շատ էին, սակայն չքավորությունը չէր նրանց ուղեկիցը, այլ լավ տրամադրությունն ու զվարճախոսությունը: Թունելով անցնելուց և այնտեղ ջրի մեջ թաթախվելուց հետո նրանց ծառայությունը ճիշտ տեղին էր: Արևն էլ արդեն հասցրել էր չորացնել կոշիկները:

Մենք իջանք գոլ, մաքուր, հրաշալի մի նկուղ, ուր և՛ ճաշը, և՛ զինին, և երաժշտությունը գերազանց էին: Երաժիշտների խումբը բաղկացած էր երկու ջութակից, որ նվագում էին մի տղամարդ և մի կին՝ գեղեցիկ, բարձր սանրվածքով, մի ֆլեյտայից, և մի տղամարդ էլ նստած էր դաշնամուրի առաջ: Սկզբում նվագեցին հայկական երաժշտություն, ինչպես արդեն ասել ենք, միօրինակ, կայտառ պարային մի ոճի: Ապա հնչեցին ռուսական լայնատարած, սահուն մեղեդիներ, ուր իշխում է ընդարձակ տափաստանների սունդորը՝ հագեցած խոր թախիծով, որը համբերատար, մերժված ժողովրդի ոգու արտահայտությունն էր: Ահա և Ստեֆան Ռազինի (ուկրաինացի հրոսակապետ և Մերձվոլգյան գյուղացիության առաջնորդ, որ այժմ Ռուսաստանում դարձել է սիրված ժողովրդական հերոս) գեղեցիկ երգը: Այնուհետև հնչեցին քրդական, պարսկական և թուրքական (թաթարական) եղանակներ: Դրանք գեղեցիկ էին և ավելի քաղցրալուր, քան հայկականը: Այդ բոլորի մեջ առավել դուրեկան քրդական մի մեղեդի կար Արարատի շրջանից: Մեզ հավաստիացնում էին, որ քրդական ու թուրքական երգերն էլ հայկական ծագում ունեն:

Ես ապշեցի, երբ հայերն սկսեցին նվագել իրենց անողոր թշնամիների երաժշտությունը, սակայն անկեղծ ծափահարությունները վկայությունն էին այն բանի, որ դրանք այստեղ լավում են հաճույքով: Ինձ ասացին, որ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այլևս վերացել է ատելությունը ժողովուրդների միջև: «Այժմ մենք բուրձու եղբայրներ ենք»,— ասում էին նրանք, բայց որ դա գալիս էր սրտի խորքից, կասկածելի էր: Երեխաները, օրինակ, սիրում են թատրոն խաղալ և դա անում են մեծ արվեստով: Նրանց խաղացած նյութի հիմնական խնդիրը թուրք սպանելն է:

Նկատելի էր նաև, որ մարդկային հարաբերություններն այստեղ զարգանում են դեմոկրատական ճանապարհով: Մեզմից ոչ հեռու նստած էին երիտասարդներ, նրանցից մեկը քարտուղար էր ժողովրդական կոմիսարիատում, այսինքն բարձր պաշտոնյա, սակայն նույն սեղանին նստած էր նաև նրա վարորդը, որն, ի դեպ, շրջապատում միակն էր՝ զլխարկը գլխին նստած: Նրա շարժումն էր նույնպես առանձնապես «բարձրաշխարհիկ» չէր, սակայն նա բարձրաձայն մասնակցում էր գրույցին և համարձակ կարծիք հայտնում:

Մեր կողքին մի երկար սեղանի շուրջ նստած էր երիտասարդների մի այլ խումբ՝ կիրթ տեսքով ու վարվեցողությամբ: Նրանցից մեկը բաժակը ձեռքին մոտեցավ մեր սեղանին և իր ընկերների անունից ողջունելով մեզ՝ խմեց մեր

բարի գալուստի կենացը: Ես ևս պետք է գնայի ու բաժակ խփեի նրանց հետ: Նրանք ինձ վրա լավ տպավորություն թողեցին:

Գնալով ավելի ու ավելի էի զարմանում, թե որքան տարբեր տեսակի դեմքեր կարելի էր հանդիպել այստեղ: Դրանց մեծագույն մասը բացառապես հայկական էր: Մնացածների մեջ կային նաև փոքր քթերով, բաց գույնի փոքր-ինչ ավելի լայն դեմքեր, որ ավելի շուտ հիշեցնում էին մեր հյուսիսային տիպը: Առանձնանում էր նաև զուտ հռոմեական կայսերական տիպը՝ գեր դեմքով ու լայն ծոծրակով:

Երկաթուղային մեր վագոնը գնալիս կայարանի առաջ քարե աստիճանին նստած մի մուրացկանի տեսա, որ հարմար տեղավորվել ու հանգիստ ընկնում էր: Սա արդեն մի այլ աշխարհ էր: Նա անշուշտ միակն էր, որ այսօր չէր մասնակցել տոնին, և ես աշխատեցի չխանգարել նրա քունը:

Երեկոյան խորհուրդների մեծ ժողով էր, որ վարում էր նախագահը: Այն սկսվեց Լենինականի քաղաքային խորհրդի երիտասարդ նախագահի կամ քաղաքագլխի երկար ճառով, որը հավանաբար ներկայացնում էր ջրանցքի ողջ պատմությունը, գուցե՛ և՛ ամբողջ Հայաստանի: Իհարկե, ես ոչ մի բան չհասկացա, սակայն նկատեցի, որ հայերենը այնքան էլ բարեհունչ չէ: Թերևս այն ուժեղ հնչողություն ունի, սակայն ավելի շատ թողնում է մի տեսակ կցկտուր տպավորություն, մանավանդ երբ համեմատում ենք սահուն ռուսերենի հետ: Բայց պետք է ասել, որ այստեղ, ինչպես և ամենուր, շատ բան կախված է հռետորից, լավ հռետորի բերանում ուզածդ լեզուն կարող է վերածվել երաժշտության:

Ի վերջո քաղաքագլուխն ավարտեց իր ճառը և վարձատրվեց բուռն ծափահարությամբ: Նրանից հետո շատերը խոսեցին, այդ թվում և իմ նոր բարեկամը՝ Վրաստանի նախագահը, որն իր հաճելի արտաքինով ու խոհեմ զսպարթյամբ լավ տպավորություն էր թողնում: Ելույթ ունեցավ նաև Ադրբեջանի նախագահը: Նա ազգությամբ թաթար էր ու մահմեդական: Սկզբում խոսեց ռուսերեն, ապա անցավ իր մայրենի լեզվին՝ թուրքերենին: Այնհայտ էր, որ նա լավ խոսեց, քանի որ արժանացավ ջերմ ծափահարության: Դարձյալ սնում էի զարմացած, որ թուրքերն այստեղ այդչափ լավ են ընդունվում: Չէ որ նախկինում Ադրբեջանի թաթարները նույնպես հայերի ոխակալ թշնամիներն էին, և դեռ շատ չի անցել այն ժամանակից, երբ նրանք Բաքվում կազմակերպեցին հայկական ջարդեր: Սակայն այժմ տիրում է եղբայրության, բարեկամության և խաղաղության մթնոլորտ:

Ես չեմ կարող ներկայացնել ճառերից գոնե մի քանիսի բովանդակությունը, որոնց մեծ մասը անշուշտ լավ էին, որովհետև, ցավոք, ոչինչ չեմ հասկացել: Այնուհետև նախագահն ինձ էլ ձայն տվեց: Ես խոսեցի գերմաներեն, իսկ երևանցի պրոֆեսորներից մեկը թարգմանեց: Ինչ պետք է ասել ես այս ամենից հետո, եթե ոչ այն, ինչի մասին, անշուշտ, արդեն խոսել էին նախորդները



նշանավոր այս օրվա մասին, որով նոր էջ էր բացվում հայ ժողովրդի տարեգրության մեջ, այն ընդարձակ հարթավայրի մասին, որ դարեր ի վեր ծարավ էր, իսկ այժմ խմելու ջուր ստանալուց հետո քայլ առ քայլ վերածվելու էր բերրի դաշտերով ու այգիներով հրաշալի գորգի: Պետք է խոսել նաև այն մասին, թե ինչ մեծ տպավորություն թողեց ինձ վրա այն աշխատանքը, որը կատարվել է ջանասեր ու խելամիտ այս ժողովրդի կողմից: Նա իր սուղ միջոցներով, սակայն նպատակասլաց կերպով, տառապանքների, պատերազմի գործած չարիքների ու ավերածությունների մի երկար ժամանակահատվածից հետո, կառուցում է երջանիկ ապագա: Եվ վերջապես տեսնելով այն ամենը, ինչ նա կարողացել էր ստեղծել խաղաղ պայմաններում, համոզվեցիք, որ աշխատասեր ու նպատակասլաց այս ժողովուրդն ի վիճակի է արագ զարգացնել իր երկրի հնարավորությունները և բազմաթիվ նոր բնակավայրեր կառուցել հազարավոր երջանիկ ընտանիքների համար: Քաղաքակիրթ ողջ աշխարհի համակրանքն է վայելում Հայաստանի ձեռնհասությունը՝ ստեղծելու ազգային հայրենիք, թեկուզ և ոչ բոլոր հայերի համար, այնուամենայնիվ դա կլինի մի հայրենիք, որ իրենը կհամարի հեռվում գտնվող ամեն հայ:

Հավաքից անմիջապես հետո տեղի էր ունենալու համերգ: Մենք դուրս եկանք հենց այն պահին, երբ նախագահին ինձ նվիրված ճառ էր արտասանում, որին ես տեղյակ չի: Քանի որ այստեղ դեռ այն երջանիկ հարաբերություններն են, երբ ժամանակը կարևոր դեր չի խաղում, համերգը սկսվեց ծրագրով նախատեսվածից մի քանի ժամ անց: Սակայն երգն ու երաժշտությունն արժանի էին, որ այդչափ սպասեինք: Մենք լսեցինք իտալական դպրոցն անցած մի հայ բարիտոնի, նաև այլ արվեստագետների:

Այնուհետև մեզ հրավիրեցին ընթրիքի: Սրահները զարդարված էին օրվա հանդիսությանը վայել, միջանցքներն ու աստիճանները պարուսիհի օգնությամբ փոխակերպվել էին առավոտյան մեր տեսած թունելի, միայն այստեղ ավելի լուսավոր էր, և ջրի մեջ չէինք չփչվացնում: Այս չոր թունելով գնացինք ճաշասրահ: Այնտեղ տոնական սեղանների շուրջ խմբվել էին մարդիկ: Ես ծանոթացա ջրանցքի շինարարության գլխավոր ինժեների հետ և շնորհավորեցի նրան կառույցի բարեհաջող ավարտի կապակցությամբ: Նա արտաքննապես համակրելի ու բանիմաց մարդու տպավորություն թողեց: Խնջույքը՝ բազմաթիվ ճառերով ու զվարճախոսություններով, տևեց մինչև վաղ առավոտ:

Սրանով տոնն ավարտվեց մեզ համար: Քանի որ Հայաստան էինք եկել խոսքի հողերի մշակման ու արհեստական ոռոգման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով, ապա մեզ համար անսպասելի բարենպաստ առիթ էր, որ հնարավորություն ունեցանք մասնակցելու նոր ջրանցքի բացմանը և տեսնելու, թե այդ ասպարեզում ինչ մեծ գործ էր արվել:

## «ՄԵՐԴԱՐԵԿԵԼՅԱՆ ՆՊԱՍՏԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այժմ արդեն արժեր տեսնել, թե «Մերձարևելյան նպաստամատույցի» ամերիկյան այս մեծ կազմակերպությունն ինչ էր արել Հայաստանում հազարավոր հայ որբերի դաստիարակման ու խոսքի հողերի մշակման ուղղությամբ: Բարեգործական այս կազմակերպությունն իր բազմաթիվ մասնաճյուղերն ունենր Լեռնիսկանի մտակայքում: Այդ, այսպես կոչված, «համայնքները» զբաղեցնում էին մի քանի մեծ շենք, մասամբ ռուսական կայազորի նախկին զորանոցներն ու բարաքները, որ գտնվում էին քաղաքից դուրս, սարահարթում:

Առավոտյան (երկուշաբթի, հունիսի 22) պարոն Բիչի ուղեկցությամբ մեքենաներով մեկնեցինք Կազաչի պոստ կայարանը, ուր մեզ տրամադրեցին մաքուր ու հարմարավետ սենյակ:

Առաջինը այցելեցինք հիվանդանոց, որ լավ կահավորված էր: Այնտեղ մենք ակնատես եղանք այն ամենին, ինչ արվում էր հիվանդ երեխաների, նրանց մերձավորների համար, նաև՝ շատ-շատերի, որ հաճախ զալիս էին հեռվից այստեղ օգնություն փնտրելու: Դռները հազվադեպ էին փակվում, ընդունում էին, քանի դեռ տեղ կար: Մեկնակներն օդատուն էին ու մաքուր, հիվանդները պառկած էին մաքուր սպիտակեղենով երկաթյա ամուր մահճակալներին: Շենքը նախկինում զորանոց էր եղել: Մեզ ուղեկցում էր ամերիկացի երկու երիտասարդ հմուտ բժիշկ: Նրանք մեզ տարան իրենց բաժանմունքը, մեկը՝ վիրաբուժական, մյուսը՝ ներքին հիվանդությունների:

Անչափ հուզիչ էր տեսնել հիվանդների երախտագիտության արտահայտությունները բժիշկների հանդեպ. նրանք համբուրում էին բժիշկների ձեռքերը, մինչ վերջիններս զբաղված էին լինում նրանց հետ: Կատարախոսի վիրահատություն տարած մի տղամարդ կար, որ երկար տարիներ զրկված էր տեսողությունից: Մի աչքն էլ կորցրել էր դժբախտ պատահարից: Այսօր վիրակապը հեռացնելու էին աչքից: Բոլորը լարված էին: Վիրակապը քանդվեց, բժիշկը ձեռքը պահել էր նրա աչքի առջև: Այո, այո, նա տեսնում է, հիվանդը բռնեց բժշկի ձեռքը և համբուրեց:

Մարդիկ տեսնելով բազմաթիվ այսպիսի հրաշալի վիրահատություններ, որոնցից առաջ վախենում էին, արդեն ցանկացած վիրահատություն կուրորեն վստահում էին բժշկին: Հետաքրքիր մի դեպքի ակնատես եղանք: Ընկնավոր մի տղայի հիվանդության նույնպես այնքան հաճախակի էին դարձել, որ կրկնվում էին երկու ժամը մեկ: Նա դատապարտված էր մահվան: Չեռնարկելով վերջին հուսահատ փորձը՝ «բժիշկ դուրսդ էլընսը ծակելով զանգուկը, անցք է բացում»՝ զանգի խոռոչում ճնշումը նվազեցնելու համար: Դրանից հե-

տո տղան դեռ նույն չէր ունեցել: Վիրահատությունից շատ ժամանակ չէր անցել, և հնարավոր չէր որոշակի ասել, թե միջամտությունն ինչ էլք կունենար, սակայն տղան առայժմ ազատված էր ցավերից, գոհ ու երջանիկ տեսք ուներ:

Հետմիջօրեին այցելեցինք «Հյուսիսային համայնք», ուր մեզ ջերմորեն ընդունեցին տոնական հագնված չորս հազար աղջիկներ: Նրանք կանգնած էին ըստ տարիքի, որ մի քանի տարվա տարբերություն էր: Հաճելի էր տեսնել այդ ուրախ ու ճառագայթող դեմքերը, դիտել, թե ինչպես էին աղջիկները խմբվել հաստատության տիրուհու՝ օրիորդ Մաք-Քեյի շուրջը և ինչ սիրով էին կապված նրա հետ: Մեզ ցույց տվեցին մեծ սրահները, ուր երկար շարքերով դրված էին երեխաների երկհարկ մահճակալները: Ներկա եղանք փոքրիկների ճաշի, պարապմունքի և աշխատանքի ժամերին: Ամենուրեք մաքրություն էր, թարմ օդ և խիստ կարգապահություն:

Այնուհետև շենքի առաջ, ընդարձակ հրապարակում, տեղի ունեցավ մարմնամարզական վարժությունների ու տարբեր մրցախաղերի մեծ ցուցադրում: Ազատ հրապարակում ուսուցիչ կանգնած սպիտակազգեստ փոքրիկների բազմությունը գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Ամեն ինչ կատարվում էր ճշտորեն, անշուշտ այստեղ շատ բան էր արվում երեխաների ֆիզիկական զարգացման ու առողջության համար, ընդ որում ամենօրյա դպրոցական պարապմունքներով ապահովվում էր նաև նրանց մտավոր կրթությունը:

Երեկոյան ամերիկյան ակումբում տրվեց մեծ ճաշկերույթ, որին մասնակցում էին հիմնականում «Մերձարևելյան նպաստամատույցի» և նրա մասնաճյուղերի աշխատակիցները: Բացի ամերիկյան գաղութի պարոններից և տիկիններից, հրավիրված էին նաև ջրանցքի բացմանը մասնակցած բարձրաստիճան հայեր: Պարոն Բիչը հրաշալիորեն բացեց բազմաթիվ հռետորների շուրջապարը: Նա համառոտ մի ակնարկով ներկայացրեց «Մերձարևելյան նպաստամատույցի» աշխատանքներն ու նպատակները: Ես ևս ելույթ ունեցա և խոսեցի այն մասին, թե երկու ինչ հիշարժան օր ապրեցինք մենք այստեղ: Երեկ ակնհաստես եղանք այն արարողությանը, թե ինչպես հազարամյակներ ծարավի հողը ջուր ստացավ, իսկ այսօր տեսանք, թե ինչ սիրատուն գործվանքով են շրջապատված հազարավոր մարդկային փոքրիկ, ծարավ, զգայուն հոգիներ, տեսանք մանկական հազարավոր ճառագայթող աչքեր:

Պատերազմի հասցրած վերքերից հետո մարդկայնության դրսևորման բնորոշ ձևերից են դրանք՝ աշխատանք՝ կենսամակարդակի բարձրացման, հավատի և հույսի ծարձակման համար:

Հաջորդ օրը (երեքշաբթի, հունիսի 23) կեսօրից առաջ այցելեցինք «Մերձարևելյան նպաստամատույցի» երրորդ բաժանմունքը՝ «Պոլիգոնի համայնք», ուր պատասպարված էին 3500 տղա ու 1500 աղջիկ: Այստեղ տղաները նախօրոք հարդարել էին փոքրիկ պարտեզներ ու պատրաստել ոռոգման սպասելիվ ջրանցքի բացման մեծ օրվան: Յուրաքանչյուր պատանի իր փոք-

րիկ հողակտորում ջանասիրաբար տնկումներ էր արել ու ցանել: Սակայն իրականում նրանք քիչ էին հավատում, թե իրոք հնարավոր է, որ ջուրը, անցնելով այս չոր անապատով, հասնել իրենց:

Ահա եկել էլ այդ մեծ օրը, և տղաներն իրենց հերթին ամաններով պատրաստ կանգնած էին ջուր վերցնելու, այգիները ջրելու համար, եթե, իհարկե, այն գար:

Եվ իսկապես ջուրը սկսեց հոսել նախօրոք փորված փոքրիկ առուններով՝ գնալով ավելի ու ավելի առատանալով: Ցնծությունն անսահման էր: Պատանիներն անմիջապես սկսեցին իրենց թիթեղյա ամանները ջուր լցնել: Այդ ընթացքում մի խելոք գտավ, որ հողով պատվարելով՝ կարելի է առունները ճյուղավորել, և բոլորն իսկույն սկսեցին իրագործել այդ հայտնագործությունը: Հողը ջրվեց, և շատ շուտով այդ փոքրիկ այգիները կծլարձակեն, իսկ երեխաների սրտերում, որ երբեք չեն մոռանա այս հիշարժան իրադարձությունը, կծլարձակի մի նոր ըմբռնում այն մասին, թե ինչի կարող է հասնել մարդը իր աշխատանքով:

Այստեղ կար նաև մանկապարտեզ փոքրիկների համար, իսկ մեծահասակ աղջիկների ու տղաների համար՝ աշխատանքային դպրոցներ, ուր ընդգրկված էին արհեստագործական տարբեր ճյուղեր՝ բազմաթիվ բաժիններով: Կային հյուսնի, ատաղձագործի, թիթեղագործի ու կոշկակարի արհեստանոցներ, կարի արհեստանոց աղջիկների համար, ուր սովորեցնում էին նաև հյուսել, ձեռքի աշխատանք ու ժանեկագործություն: Մենք եղանք նաև նրանց աշխատանքների ցուցահանդեսում: Տղաների պատրաստած գործիքներն ամենագեղեցիկներն էին: Ակնհայտ էր, որ երեխաներն արհեստների նկատմամբ հատուկ ընդունակություններ են ցուցաբերել և ստացել առաջնակարգ գիտելիքներ:

Հատկապես հուզիչ էր, երբ դիտում էինք կույրերի աշխատանքը: Նրանք նույնպես սովորել էին ձեռքի աշխատանք և պատրաստում էին խոզանակներ, սանրեր ու մանատիպ առարկաներ, որտեղ կարողանում էին օգտագործել շոշափելու իրենց եղանակը: Նրանք ինձ նվիրեցին երկու հրաշալի խոզանակ, մեկը՝ հագուստի, մյուսը՝ մագերի, որոնք մինչև այժմ օգտագործում եմ: Մեծահասակ տղաներից մեկն իր իսկ պատրաստած գործիքներով արտադրում էր արտակարգ նուրբ սանրեր: Դժվար է կույրերին, նրանց անսահման թախժոտ դեմքերին նայելը: Կուրությունն այստեղ հաճախ հանդիպող երևույթ է, այն մեծ մասամբ առաջանում է լայն տարածում գտած աչքերի մի տեսակ հիվանդությունից: Այստեղից էլ առավել կարևորվում է կույրերի սովորելու և օգտակար դառնալու հանգամանքը:

Շենք կարող չխոսել նաև այն դպրոցների մասին, որտեղ ամերիկացի հմուտ հիվանդապահուհիները մեծահասակ աղջիկներին սովորեցնում են հիվանդներին խնամելու գործը: Սա ևս չափազանց կարևոր խնդիր է երկրի հոգ-

սերը թեթևացնելու ուղղությամբ:

Ննջարաններում երեխաների մահճակալներն երկհարկ էին՝ մեկը մյուսի վրա դրված: Յուրաքանչյուր սրահում կար այդպիսի մի քանի հարյուր մահճակալ: Ննջարանները մաքուր էին, ընդարձակ ու լուսավոր, սակայն ձմռանը չէին տաքացվում, չնայած ջերմաստիճանը կարող էր լինել գոյից քսան աստիճան ցածր: Ճաշարանում միանգամից ճաշում էին 5000 երեխա՝ շարք-շարք նստած նեղ սեղանների շուրջ: Տեսանք, թե ինչպես նրանք զինվորական կարգապահությամբ, ջոկատ առ ջոկատ քայլելով մոտեցան իրենց սեղաններին: Ճաշարանը և կերակրման այս ձևը ղեկավարում էր մի նախկին հայ գեներալ՝ գեղեցկադեմ, սպիտակամորուս տարեց մի մարդ, որ ինքն էլ յոթ երեխայի տեր էր և սրտառուչ անձնագոհությամբ, հոգով ու մարմնով նվիրված իր աշխատանքին: Դրա համար էլ երեխաները նրան մեծարում էին որպես իրենց հոր:

Պարոն Բիշի սեփական տանը հաճելի նախաճաշից, մասնաճյուղի կլինիկա և կույրերի դպրոց կատարած այցից հետո մեկնեցինք քաղաք՝ զնայու բամբակի մասնաձագործարան, որը նոր-նոր գործող, մեկ ամսվա պատմություն ունեցող մի մեծ ֆաբրիկա էր: Նախատեսված էր ընդարձակել ֆաբրիկան, որպեսզի կարելի լիներ կտոր գործել այստեղ արտադրվող ամբողջ բամբակից: Մենք շրջեցինք ֆաբրիկայում, ծանոթացանք գործվածքների տարբեր տեսակների: Ըստ ներկայացված փորձամուշների կարելի է ասել, որ արտադրվում էր գերազանց որակի կտոր: Հաստոցների մոտ կանգնած գրեթե բոլոր աղջիկները եկել էին «Մերձարևելյան նպաստամատույցի» հաստատություններից: Չարմանալի էր, թե ինչ պրակտիկա էին ձեռք բերել նրանք մեքենաների հետ մեկամսյա աշխատանքից հետո և թե ինչ ճշգրտությամբ էին կատարում ամեն ինչ՝ առանց կանգ առնելու: Դա նրանց ստացած դաստիարակության լազավույն վկայությունն էր:

Ֆաբրիկայում շրջելուց հետո մեզ առաջնորդեցին մի տեսակ լսարան կամ ժողովարահ, որը հավանաբար ծառայում էր զեկուցումների, քատերական ներկայացումների և նմանօրինակ նպատակների համար: Այստեղ հավաքվել էին ֆաբրիկայի բոլոր բանվորները: Ինձ ողջունեցին ջերմ ճառով, որը թարգմանվեց: Պատասխանեցի մի քանի բառով՝ մաղթելով նրանց կարևոր գործին նորանոր հաջողություններ: Ելույթ ունեցող բանվորներից մեկն ասաց, որ ի հիշատակ այցելության ցանկանում եմ ինձ նվիրել իրենց աշխատանքի մի քանի նմուշներ: Չեքքի տակ եղածն, իհարկե, դեռ կոպիտ է, ասաց նա, սակայն հուսով եմք, որ շատ շուտով կկարողանանք արտադրել ավելի նուրբ գործվածքներ: Այդ խոսքի վրա դահլիճից առաջ եկան մի քանի տղամարդ՝ ծանրաբեռնված ֆաբրիկայի տարբեր տեսակի բամբակյա գործվածքների՝ սպիտակեղենի և երեսաբրդների մեծ հակերով: Առաջինը, որ մտածեցի սարսափահար ու դժկամ, այն էր, թե ինչպես պետք է ես այդ ամենը տուն տանեմ

այդքան երկար ճանապարհով: Սակայն նրանց բարի ցանկությունը խորապես հուզեց ինձ, և ես իմ շնորհակալությունը հայտնեցի՝ որքան որ կարողացա: Ինձ հաջողվեց նաև այդ հրաշալի գործվածքը տանել տուն՝ Նորվեգիա, և այստեղ, իմ տանը, դրանք ամեն օր գործածության մեջ եմ:

Հանդիպումից հետո մեքենաներով դուրս եկանք քաղաքից և ուղղվեցինք դեպի Արվաշայ: Գետի արևելյան ընդարձակ ավիին տեղավորված էր «Մերձարևելյան նպաստամատույցի» ամառային ճամբարը, ուր տղաները խումբ-խումբ հանգստանում էին մի քանի շաբաթ: Այստեղ նրանք ապրում էին վրաններում, կոփում մարմինը, լողանում գետում, զբաղվում մարմնամարզությամբ և տարբեր խաղերով: Ճամբարը բարեկարգ էր, յուրաքանչյուր վրանում տեղավորված էր 32 տղա: Ճամբարի պետը վայելչատես արտաքինով մի հայ էր, նախկին ռուսական բանակի գլխավոր շտաբի սպա, որ դաստիարակում էր տղաներին զինվորական կարգապահությամբ:

Պատանիների «ետճաշա թեյի» ժամն էր: Նրանք խաղահրապարակից ջոկատ առ ջոկատ քայլելով եկան ու նստեցին բացօթյա երկար սեղանների շուրջ: Բոլոր տղաներն առողջ ու ամրակազմ էին, և հաճելի էր դիտել նրանց քայլելիս՝ սպիտակ վերնաշապիկներ ու մինչև ծնկները հասնող տաքատներ հագած: Յուրաքանչյուրը ստացավ իր աման ապուրը և հացը: Մենք ևս մասնակցեցինք ճաշին՝ նստելով նրանց հետ երկար սեղանի շուրջ, կիսելով նրանց զվարճությունն ու ուրախությունը:

Իջավ երեկո, մենք հրաժեշտ տվեցինք ճամբարի կենսախիճը պետին, ճամբարում աշխատող տիկնանց ու պատանիների հրաժեշտի ուրախ բացականչությունների ներքո մեքենաներով ճանապարհ ընկանք դեպի ետ՝ սարահարթ:

Մրանով ավարտվեցին այս երկու օրվա իրադարձությունները: Մենք այցելել էինք Լենինականի մոտ տեղավորված «Մերձարևելյան նպաստամատույցի» հաստատությունների տարբեր մասնաճյուղեր, տեսել 11000 որբ երեխա պատասպարող այդ տներն ու դպրոցները, մի թիվ, որ վերաբերում է մեկ շրջանին միայն: Մեզ վրա մեծ տպավորություն էին թողել երեխաների հետ տարվող դաստիարակչական լայնամասշտաբ աշխատանքները, որոնք ուղղված էին (և շարունակվում են) հասարակության գործուն անդամ պատրաստելուն: Եվ չպետք է մոռանալ, որ այդ երեխաներից շատերը, որ այժմ առույզ, զվարթ ու օրինապահ մարդիկ են, տառացիորեն ճողոպրել են մահվան ճանկերից: Այդ թվում և Սարդարապատի մոտ գտնվող գաղութի հազարավոր այն երիտասարդները, որ նույնպես դաստիարակվելով այս տներում՝ այժմ զբաղված են նոր հողերի յուրացմամբ: Այստեղ իրոք շատ բան է արվել՝ բուժելու պատերազմի հասցրած վերքերը:

Երկրի հյուսիսային շրջաններից մեկում «Մերձարևելյան նպաստամատույցը» բացել էր երկրագործական դպրոց, իսկ փոքր-ինչ հյուսիս նրան կից



գործում էր գյուղատնտեսական մասնաճյուղ, որ զբաղված էին բազմաթիվ դեռահաս տղաներ, որոնք հիմնավորապես ծանոթանում էին գյուղատնտեսությանը: Հետաքրքիր կլիներ տեսնել նաև այդ հաստատությունները, սակայն ժամանակը սուղ էր: Մեծ էր մեր ցանկությունը լինել նաև երկրի հյուսիսային շրջաններում, որոնք շատ են տարբերվում մեր տեսած հարավի և արևմուտքի հարթություններից, ուստի ամերիկացիները սիրով գործն այնպես կարգավորեցին, որ հաջորդ օրը ամերիկյան և կառավարական մեքենաներով Երևան վերադառնանք հենց այդ ճանապարհով: Բանից պարզվեց, որ եթե ճանապարհին փոքր-ինչ շեղվենք հյուսիս գտնվող լեռները, դեպի Ստեփանավան, սպա կայցելենք նաև «Մերձարևելյան նպաստամատույցի» երկրագործական դպրոց և Երևան կիսանենք երեկոյան: Մենք հեռագրեցինք դպրոց՝ հայտնելով հաջորդ օրը նախաճաշին մեր տեղ հասնելու մասին: Վերջին ամսուց երեկոն էինք անցկացնում ամերիկացի մեր հյուրընկալների հետ:

VIII

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՏԱՆՈՎ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ**

Հաջորդ օրը (չորեքշաբթի, հունիսի 24) վաղ առավոտյան ճանապարհորդության մասնակիցները հավաքվեցին քաղաքի տարբեր վայրերից ու նրա շրջակայքից: Բացի մեր հանձնախմբի հինգ անդամից, մեզ հետ գալիս էին նաև օրիորդ Մաք-Քելը, որն իր արձակուրդը ցանկանում էր անցկացնել գյուղատնտեսության մասնաճյուղում, պարոն Ֆեդերջիլը, որ սիրով ստանձնել էր մեզ առաջնորդելու պարտականությունը, նաև կառավարության ներկայացուցիչ, մեր բարեկամ Նարինան Տեր-Ղազարյանը, որին Նապոլեոն էինք ասում, և վերջապես մամուլի պաշտոնական թղթակիցը: Երբ բոլորը հավաքվեցին, նստեցինք մեքենաներն ու մեկնեցինք՝ մեր հետևում թողնելով Լենինականը:

Բուն քաղաքից շատ բան չկարողացանք տեսնել, սակայն ինչքան որ հասցրել էի տեսնել, առանձնապես հետաքրքիր չէր: Այն համեմատաբար երիտասարդ, ռուսական զավառական մի քաղաք էր հայ բնակչությամբ: Հնում այստեղ հայկական Գյումրի փոքրիկ գյուղն էր, որն իր գավառով մտնում էր Վրաստանի թագավորության մեջ: Երբ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսաստանին, Գյումրին դարձավ ռուսական սահմանային ռազմական կարևոր հենակետ Թուրքիայի դեմ: Հետագայում այն ավելի ամրապնդվեց և վերածվեց անառիկ բերդի: 1836 թ. Նիկոլայ Առաջին ցարի այցելությունից հետո այս վայրը զարգացման նոր թափ է ստանում, դառնալով քաղաք՝ Ալեքսանդրապոլ անունով: Բոլշևիկներն այժմ վերանվանել են Լենինական: Հողն և աղյուսե պարիսպներով շրջապատված բերդը գտնվում է քաղաքի արևմտյան կողմում մի

սարավանջի վրա, Արփաչայի հովտի դիմաց: Քաղաքն այդ ժամանակ Երևանից զգալիորեն մեծ էր, ուներ մոտ 40000 բնակիչ<sup>1</sup>:

Քաղաքը գտնվում է մի ընդարձակ սարահարթի վրա, որ ունի 1500—1900 մ բարձրություն և տարածվում է քաղաքից արևելք և հյուսիս-արևելք մինչև Ալազյազի հյուսիսային փեշերը, մինչև Հայաստանի հյուսիսային սահմանը կազմող լեռնաշղթայի ստորոտները: Արևմուտքից այն տարածվում է նաև Արփաչայի մյուս կողմում: Գետը մասամբ հոսելով սարահարթով, այնտեղ ևս իր համար խոր կիրճ է փորել: Հարավ-արևելքում և հարավում սարահարթը եզերված է Ալազյազի լանջերով ու ստորոտներով: Ինչպես Արարատի հզոր զանգվածն է իշխում Արազի և Սարդարապատի հարթությունների վրա, այնպես էլ այստեղ Ալազյազ հսկա հրաբուխն է տեղանքի տիրակալը: Լեռն իր ընդարձակ, աստանաձև խառնարանով վեր է խոյանում ծովի մակերևույթից մինչև 4095 մ: Լեռան միջին և բարձր մասերը՝ իրենց զառիթափ լանջերով ու զագաթի ձյան ծածկով, շրջապատված են ավելի մեղմ թեքություն ունեցող լեռնաշղթաների մի գոտիով, որտեղ գերակշռում են ալիքաձև, մեղմաթեք լանջերն ու հրաբխային խառնարանները: Տեղանքն այստեղ ձևավորվել է հրահեղուկի զանգվածից, որ ժամանակին Ալազյազից կամ նրա երկրորդական փոքրիկ խառնարաններից հոսել է ցած, դեպի Արփաչայի ու Արազի հովիտները: Բնահողը մեծ մասամբ բաղկացած է խառնարաններից ժայթքած տուֆից ու մոխրից:

Սարահարթում բարձր դիրքի հետևանքով կլիման զգալիորեն ավելի ցուրտ է, քան Երևանի մոտ՝ հարթավայրում, այնքան ցուրտ, որ վտանգավոր է բամբակի մշակման համար: Բայց քանի որ տեղումների միջին քանակը, հատկապես գարնանը և ամռանը, այն էլ մայիս, հունիս ամիսներին, ավելին է, քան Արազի հարթությունում<sup>2</sup>, սպա այստեղ որոշ վայրերում կարելի է հացահատիկ մշակել նաև առանց արհեստական ոռոգման:

<sup>1</sup> Այս նախադասությունները գրելուց հետո Լենինականն ու նրա շրջակայքը կործանվել են 1926 թ. աշնանը տեղի ունեցած սուկալի երկրաշարժից: Քաղաքի տների չորս հինգերորդը և 30 գյուղ ավերվել են: Մոտ 80000 մարդ մնացել է անօթևան: 350 հոգի մահացել է, 400-ը՝ ծանր վնասվածքներ ստացել: Չոտերի թվի քիչ լինելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մինչև հիմնական հարվածը, նախնական թույլ ցնցումից մարդիկ դուրս են եկել տներից:

Թուրքահայաստանում նույնպես ընդարձակ տարածության վրաավերածություններ են եղել: Ինչքան գիտեն, Շիրակի ջրանցքը բարեբախտաբար չի վնասվել:

<sup>2</sup> Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է՝ Լենինականում՝ 408 մմ, Երևանում 318 մմ, Էջմիածնում 280 մմ: 1924 թ., երբ ամառը Արազի հարթությունում համեմատաբար չորային էր, արձանագրվել է տեղումների մոտավորապես այս քանակը.

	ապրիլ մմ	մայիս մմ	հունիս մմ	հուլիս մմ	օգոստոս մմ
Լենինական	39	72	83	7	6
Երևան	44	30	16	10	2
Էջմիածին	42	18	17	10	2

Հացահատիկը ցանում են ապրիլին և հնձում հուլիսին կամ օգոստոսին: Հաճախ, սակայն, չորությամբ պատճառով բերք չի ապահովվում: Եթե այստեղ էլ կիրառվի արհեստական ոռոգում, ապա փոփոխությունը զգալի կլինի, և բերրի հողն առատ բերք կտա: Մենք ընթացում էինք չոր ու այրված սարահարթով: Խոտի առանձին փոքրիկ խրճերից բացի ոչինչ չկար, ոչ մի ծառ, իսկ բավականին տարածության վրա նաև թարմ կանաչի ոչ մի հետք:

Քարաշեն, տափակ տանիքներով գյուղական փոքր խրճիթները կիսով չափ թաղված էին թեք հողի մեջ՝ այսկերպ պաշտպանվելով ձմռան խիստ ցրտերից: Գյուղերն անբարեխառն էին, տեղանքից քիչ բարձր և մանավանդ ծառազուրկ: Առավոտը թարմ էր ու արևոտ: Օդում գեղգեղում էր արտույտների դայլայլը: Մեր առջև բացվել էր մի գեղեցիկ բնաշխարհ՝ շագանակագույն մեղմաթեք սարահարթը, որ բոլոր կողմերից շրջապատված էր կապույտ լեռներով: Մեզանից արևելք և հյուսիս հյուսիս-արևմտյան հատվածով ձգվում էր այն լեռնաշղթան, որը Սևանա լճի այս կողմում պատնեշում է Արագի և Կուրի ավազանների սահմանը, բաժանում հյուսիսի խոնավ կլիմայով կանաչ հովիտները հարավի չոր, անապատանման հարթություններից: Հարավ-արևելքում և հարավում Ալազյազի հրաբխային հզոր զանգվածն է, իսկ դեպի արևմուտք ձգվող սարահարթը հասնում է Կարսի լեռներին ու Չլդրի լեռնաշղթային, որը հյուսիս-արևմուտքում շրջապատում է Չլդրգյոլ լիճը: Բոլորովին մերկ տեղանք, ուր որ նայում ես, ոչ մի ծառ չի երևում:

Ճանապարհը բավականին բարեկարգ էր, և մենք ընթացում էինք լրիվ արագությամբ: Շուտով սարահարթը թողեցինք մեր հետևում, ճանապարհը մտավ լեռների մեջ, և երկաթուղային ուղեմասը կտրեցինք անցանք ծովից 1952 մ բարձր մի լեռնանցքով: Այստեղից ճանապարհը դեպի արևելք գնում էր երկաթգծին զուգահեռ մի լայն հովտով, ապա՝ Չորոխյու կամ Բզովդալի լեռնաշղթայի հարավային կողմով: Գետը բավականին թեքությամբ շտապում էր դեպի Կուր:

Լեռնականից 50 կմ հեռու դուրս եկանք գլխավոր խճուղուց և մեկ այլ ճանապարհով ուղղվեցինք՝ հյուսիս՝ դեպի Բզովդալի լեռնաշղթան: Տեսարանը ճնշող էր, գնում էինք մեղ կիրճով, մեր առջևում ուղղահայաց լեռնալանջն էր, որով անցնող ժեռուտ ճանապարհը գնալով բարակում էր՝ գալարվելով ավելի ու ավելի բարձր ոլորապատույտներով, մինչև որ կորավ բարափի եզրին: Դժվար է հեռավորությունների ու բարձրությունների մեջ կողմնորոշվել մի վայրում, ուր մեծությունների հարաբերակցությունը գերմարդկային է, ինչպես դա տեսնում ենք այստեղ: Սակայն դատելով ձորի խորությունից, պետք է որ այս ժայռալանջը մի քանի հազար ոտնաչափ բարձրություն ունենա (մոտ 500 մ):

Ճանապարհը կառուցել էին ռուսները, որը տեխնիկապես գերազանց աշխատանք էր: Գլխապատույտ ընթացքով հանգույց առ հանգույց մագլցում էինք դեպի վեր, կեռամներից շատերը վտանգավոր մեղ էին, իսկ աջակողմյան պատն ուղղահայաց գահավիժում էր անդունդ: Սակայն ոլորանների մեղու-

թյունն այնքան էր, որ նույնիսկ մեր երկարուկ մեքենաները, փոքր-ինչ շեղվելով, կարողանում էին առանց կանգ առնելու անցնել:

Գնալով ավելի ու ավելի էինք բարձրանում, ցածում ամառի հովիտն էր, որտեղից սկիզբ էր առնում ճանապարհը՝ մերկ ժայռապատերով գալար առ գալար մագլցելով վեր: Հովիտը նույնպես ծառազուրկ էր, սակայն գոնե ծածկված էր կանաչ խոտով: Ավելի ցած, հովտի խորքում, փրփրում էր գետը՝ սպիտակ գծի նման ոլորվելով տեսադաշտից դուրս: Հեռվում, սարահարթի մյուս կողմում, բարձրանում էին Փամբակի լեռնաշղթայի կապույտ սապատներն ու գազաթները:

Վերջապես հասանք բարձունքին: Արդեն լեռան գագաթին էինք, ձորից բավական հեռու: Ինչպիսի տեսարան: Մեր ոտքերի տակ փռված էր մի նոր հովիտ՝ շրջապատված սաղարթախիտ հրաշալի անտառներով զարդարված գառիթափ լանջերով: Կանաչապատ բլուրների շարքերն աչք էին շոյում ամառի, միապաղաղ սարահարթից հետո: Հովտի խորքի փարթամ կանաչի մեջ փայլում էին բնակավայրերի կարմիր կղմինդրե տանիքները, որ կարծես կարմիր հետքեր լինեին ծառերի մեջ: Կարևն այնպես հրապուրվեց տեղանքով, որ որոշեց կանգ առնել՝ բուսաբանական հետազոտություններ կատարելու, մինչև մեր վերադարձը: Քանի որ մնան անակնկալ չէինք նախատեսել, ուտելիք չէինք վերցրել մեզ հետ, բայց դա նրան քիչ էր մտահոգում. մի քանի կեքսով բավարարվեց:

Ճանապարհը կտրուկ գալարներով ցած էր իջնում: Շուտով հայտնվեցինք սաղարթախիտ մի անտառում, ուր կային սաղարթավոր ծառերի բոլոր տեսակները՝ կաղնի, հաճարենի, լորենի, ընկուզենի: Մտանք հովիտ: Անցանք շատ գյուղերով, այնքան տարբեր մինչ այժմ մեր տեսածներից, որ կարծես մի այլ աշխարհ էինք ընկել: Տները բարեկարգ էին՝ կրով սպիտակեցված պատերով, փայտե պատուհաններով և ձեղնահարկի կղմինդրածածկ տանիքներով, որոնք իրենց կարմիր գույնով և արևի կենսախիճը ճառագայթներով ողողվելով՝ առանձնանում էին շրջապատի ծառերի կանաչի մեջ: Դրանք ռուսական գյուղեր էին, որոնց բնակիչները ռուս այլախոհներ՝ դոխորբորներ ու մոլոկաններ էին, որ իրենց հավատի պատճառով հալածվելով՝ հարյուր տարի առաջ ստիպված գաղթել էին Ռուսաստանից և բնակություն հաստատել հյուսիսային Հայաստանի լեռնահովիտներում: Բնակիչների մի մասը նաև ուղղափառ ռուսներ էին, որ ավելի ուշ շրջանում էին տեղափոխվել: Նրանք հայտնի էին որպես հմուտ ու աշխատասեր երկրագործներ, ունեին բարեկարգ տներ, որ բարեկեցիկ կյանքի վկայություն էր:

Ուղղափառ ռուսներով բնակեցված մի գյուղում կար փայտաշեն եկեղեցի, որն իր ձեղնահարկի սրածայր տանիքներով նման էր նորվեգական ստավկիրկաներին:

Ահա Ջիլգաչայ գետը, որը ցածում գառիթափ պատերով լավ ձև ավորված կիրճով, լայն հարթ հովտով գալարվում է դեպի արևելք: Գետահունն այստեղ

լեռնանցքի մյուս կողմի համեմատ աչքի զարնող հակադրություն էր: Այնտեղ կիրճի նվազագույն հետք անգամ չկար, գետը հոսում էր սովորական V-աձև մի հովտով: Չարմանալի է, թե այստեղ տեղումների քանակն անհամեմատ մեծ լինելով, ինչպես է առաջացել զառիթափ պատերով այս խոր կիրճը, քանի որ գետը երբեք չի հեղեղել իր ավերը: Այս երևույթը պետք է բացատրել այն բանով, որ վերևում լեռների վրա տեղացած հորը անձրևների շնորհիվ գետը որոշ ժամանակ վարարում է և օժտվում ծակող ավելի մեծ ուժով, քան հարևան հովիտներով հոսող գետերը:

Կիրճի մյուս կողմի հարթության վրա, ուր գետը մի մեծ պտույտ է անում, գտնվում են Լոռի հին քաղաքի ու բերդի ավերակները: Քաղաքը երեք կողմից շրջապատված է գրեթե ուղղահայաց պատեր ունեցող կիրճով, չորրորդ կողմից պաշտպանված էր ամուր պարիսպներով: Քաղաքի դիրքը շատ նման էր Անիին և պետք է որ միջնադարում անառիկ եղած լիներ: 10-րդ դ. վերջերին Բագրատունիների մի ճյուղն այստեղ հիմնում է թագավորություն, որն իր գոյությունը պահպանում է մինչև 13-րդ դարը: Վրաստանի Թամար թագուհին ընդարձակելով իր իշխանությունը՝ գրավում է քաղաքը:

Մեր ժամանումը Ստեփանավանի երկրագործական դպրոց անակնկալ եղավ, որովհետև մեր այցելությունը ծանուցող հեռագիրը տեղ հասավ, երբ մենք արդեն այնտեղ էինք: Մեծ սիրով մեզ իսկույն հյուրընկալեցին և հյուրասիրեցին այն ամենով, ինչ ունեին:

Հետաքրքիր էին նաև երկրագործության զարգացման ուղղությամբ այստեղ կատարվող աշխատանքները: Փորձեր էին արվում երեքնուկի, հացահատիկի, խոտաբույսերի տարբեր տեսակների, առվույտի և այլ բույսերի վրա՝ ընտրելու այն սերմերը, որոնք լավագույնս կարող էին հարմարվել բնաշխարհի կլիմային և հողին: Անշուշտ, այդ կարևոր հարցերում խորամուխ լինելը մեզ համար շատ օգտակար կլիներ, սակայն եթե ուզում էինք Երևան հասնել լույսով՝ ճանապարհին դիտելով շրջակայքը, ապա չպետք է ժամանակ կորցնեինք:

Մտերմիկ մի նախաճաշից հետո կրկին ճանապարհ ընկանք: Ափսոս որ չկարողացանք այցելել բավականին հեռու գտնվող գյուղատնտեսական այն մեծ հաստատությունը, որտեղ, ինչպես ասացին մեզ, զբաղված էին «Մեր-ձարևելյան նպաստամատույցի» պատահիները:

Վերդարձին կարճ ժամանակով կանգ առանք ռուսական գյուղերից մեկում: Տեսանք լավ հագնված տարեց ու երիտասարդ կանանց, որոնց մեջ նաև նրբակազմ, շիկահեր մի աղջկա: Այստեղ մարդաբանական տեսակները ընդհանուր առմամբ լրիվ տարբերվում են հայկականից: Նրանք ավելի խոշոր են, ծանր, ոչ այնքան գեղեցիկ, բարեկազմ ու նրբազեղ: Ակնհայտ է, որ գործ ունենք հյուսիսային առավել խիստ կլիմայի մի այլ ցեղատեսակի հետ: Տները բարեկարգ էին, տնտեսական շենքերը՝ լավ վիճակում: Գյուղից ոչ շատ հեռու, գետի վրա այնքան հին մի կամուրջ կար, որ չհամարձակվեցինք մեքենաներ

րով անցնել վրայով, այլ գետը կտրեցինք բավական ծանծաղ մի տեղով:

Մեծ արագությամբ բարձրանում էինք անտառապատ դժվարընթաց մի ճանապարհով: Այնտեղ վերստին գտանք մեր բարեկամին՝ Կարլին: Նա շատ գոհ էր, որ հետ էր մնացել, ժամանակը լրիվ օգտագործել էր բույսերը ուսումնասիրելով և հետաքրքիր հայտնագործություններ արել:

Բուսեցների ընթացքում հասանք լեռնանցքին: Գեղեցիկ անտառներին և Լոռվա թագավորությանը հրաժեշտ տալով՝ կրկին իջանք լեռնանցքի մյուս կողմի մերկ, անալի լեռնահովիտը, իսկ այնտեղից բազմաթիվ նեղ ոլորաններով ավելի ու ավելի ցած: Շուտով դուրս եկանք Երևան տանող խճուղի և, հովտով դեպի հարավ-արևմուտք մեծ արագությամբ ընթանալով, բավականին տարածություն անցանք երկաթգծին զուգահեռ, մինչև որ այն, ինչպես և գետը, Ղարաքիլիսա քաղաքի մոտ թեքվեց հյուսիս՝ շարունակելով Բորչալու գետի նեղ հովտով դեպի Կուրի հովիտ, դեպի Թիֆլիս, իսկ մենք ուղղվեցինք հարավ-արևելք՝ ընթանալով Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լեռնահովտով:

Այստեղ հողն ամենուրեք զարդարված էր փարթամ կանաչով, հովիտներն ու լեռնալանջերը անտառապատ էին, ամեն ինչ այլ էր, քան հարավի հարթավայրում: Ակնհայտ էր, որ այստեղ հարավի համեմատությամբ կլիման ավելի խոնավ էր, անձրևների քանակը՝ շատ: Ամբողջ շրջակայքը, ինչքան աչքդ կտրում էր, կանաչ էր, կանաչ ու թարմ:

Այստեղ նույնպես կային գյուղեր՝ ինչպես ռուսական, այնպես էլ հայկական, բոլորովին այլ կերպ կառուցված, քան հարավում: Պատերը հողածեփ էին կամ աղյուսից՝ դրսից կրով սպիտակեցված, իսկ ձեղնահարկերն առանց բացառության ծածկված էին կարմիր կղմինդրով: Հայկական տափակ կտուրներով տների ձևը հարմար չէ այստեղի խոնավ կլիմային, եթե նույնիսկ դրանք արևի տակ չորացված կավի փոխարեն կառուցվեին քարից: Շենքերի՝ փողոց նայող ճակատներն ունեին սյուններին հենված բաց պատշգամբներ:

Հետզհետե կուտակվում էին սպառնալից մութ ամպեր, տեղաց հորդ անձրև, որ ստիպեց մեզ կանգ առնել և քաշել մեքենաների ծածկոցները: Անձրևը գնալով սաստկանում էր, ճանապարհը դառնում էր լայրծուն, մեքենաները թաղվում էին խոր ջրափոսերի մեջ ու հաճախ սահում: Մենք առաջ էինք ընթանում, իսկ տամկությունը գնալով ավելանում էր: Անցանք Վոսկրեսենկա անունով մի գյուղի մոտով և 1600 մ բարձր մի լեռնանցքով: Այնուհետև ճանապարհը սկսեց կրկին իջնել դեպի Աղստաֆա գետի հովիտը: Գեղեցիկ ու բերրի մի աշխարհ, երկու կողմում անտառապատ լեռնալանջեր՝ զագաթները թաղված անձրևաքեր ամպերի մեջ:

Ճանապարհին սկսեցին հաճախ երևալ տներ, հավանաբար մոտենում էինք քաղաքի: Հանկարծ մեքենան շրջվեց և դուրս եկավ մի նեղ, կավապատ ճանապարհ: Քաղաքում պետք է մի փոքր հանգիստ առնեինք, իսկ քաղաքի իշխանությունը նպատակ ուներ ողջունել մեզ: Վտանգավոր քայլ էր դա մեր

կողմից. եթե ուզում էինք մութն ընկնելուց առաջ Երևան հասնել, ժամանակ չպետք է կորցնեինք: Ճանապարհը գեղեցիկ. կանաչ գրոսայգու միջով մեզ տարավ դեպի գվարթադեմ շենքերը, որոնք ավելի մեծ ու բարետես էին, քան այն ամենը, ինչ տեսել էինք մինչ այդ: Դրանք առողջարանային շենքեր էին: Մեզ ողջունեցին առողջարանի գլխավոր բժիշկն ու տնօրենը՝ մի հայ խորհրդրոյալին քաղաքացի, սալա՝ քաղաքագլուխն ու քաղաքի այլ երևելիներ:

Քաղաքը կոչվում էր Դիլիջան՝ Հայաստանի մեծ քաղաքներից մեկը, այս տարածաշրջանի կարևորագույն կենտրոնը: Գտնվում էր ծովից մոտ 1400 մ բարձրության վրա, անտառապատ լեռների ու բլուրների մեջ: Շրջակա լեռների բարձրությունը հասնում էր 3000 մ և ավելի: Հովտով հոսող գետը շտապում էր Կուր: Առողջարանը թրքախտավորների համար էր: Քաղաք նայող պատըշգամբներից մեկում բացված ճոխ սեղանը մեզ էր սպասում: Արդեն պարզ էր, որ մինչև մութն ընկնելը այստեղից չէինք կարող հեռանալ, այնպես որ քաղաքում մեզ համար գիշերելու տեղ պատվիրեցինք:

Անցումը կտրուկ էր, երբ երկար ու աղմկոտ ճաշկերույթից հետո՝ համեմված գերմաներեն ու անգլերեն արտասանած սրտառու ճառերով, գլխավոր բժիշկը սիրով մեզ առաջնորդեց առողջարան: Հուզիչ էր տեսնել այդքան թրքախտավորների, հատկապես հիվանդության վերջին փուլում: Նրանք գոհ ու շնորհակալ էին լավ խնամքի համար: Շատերն այնքան թույլ էին, որ հազիվ էին գլուխները բարձրացնում բարձից: Ահ, բայց և ինչ վերերկրային արտահայտություն կար նրանց հյուծված դեմքերին, կարծես կերտված լինեին ալեբաստրից, ինչպիսի՜ ժպիտ սպիտակած շուրթերին ու գեղեցիկ, մեծ աչքերում: Մի երխտասարդ սիրունիկ աղջիկ գվարթ կատակում էր մեզ հետ, այնքա՛ն խելացի ու գրավիչ էր: Նա ցանկանում էր մեծ ճանապարհորդությունից առաջ իր վերջին շաբաթները տխուր չանցկացնել. նա կյանքի փառաբանման մարմնացում էր: Հիվանդներին խնամում էին բարեհամբույր քույրերը, որ համեմատաբար թեթևացնում էին նրանց վիճակը: Գլխավոր բժշկին օգնում էին երկու խելացի, փորձառու բժիշկ և երեք հմուտ բժշկուհի:

Ի վերջո, հրաժեշտ տվեցինք հյուրընկալ տանտերերին ու իջանք քաղաք, մեր հյուրանոցը: Այն բոլորովին նոր շենք էր՝ դեռևս կիսակառույց: Մեզ տրամադրեցին նոր հարդարված, մաքուր սենյակ՝ հարմարավետ մահճակալներով: Առանց դադարի շարունակ անձրևում էր, որ տևեց ամբողջ գիշեր. առավոտյան կողմ (հինգշաբթի, հունիսի 25) միայն անձրևը դադարեց: Լեռներից իջած մառախուղը սկսեց կամաց-կամաց ցրվել՝ բանալով կապույտ երկինքը:

Դիլիջանը գեղեցիկ բնակավայր էր: Տները թաղված էին պարտեզների ու ծառերի մեջ. որոնց խիտ սաղարթածածկի միջից այս ու այնտեղ երևում էին տների վերնաճակատներն ու տանիքները: Շրջակայքում նույնպես փարթամ անտառներ էին կամ կանաչ բուսածածկ: Առատ անձրևը մտածել է տալիս, որ հովիտն այս հարուստ է տեղումներով, սակայն տեղումների տարեկան միջին քանակը ընդամենը 551 մմ է: Անձրևներ ամենաշատ գալիս են ամռանը և այն

էլ հունիսին, ճիշտ այն ժամանակ, որ անհրաժեշտ է բույսերի աճին: Տարեկան միջին ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի կազմում է 8—9 աստիճան, որն էլ հաճելի եղանակի մախապայման է: Չմոռան ամիսներին՝ դեկտեմբերից մինչև փետրվար, միջին ջերմաստիճանը զրո է կամ մի փոքր ցած:

Այստեղից Փամբակի լեռնաշղթայով ճանապարհ ընկանք դեպի Սևանա լիճ: Ճանապարհի սկզբնամասը գեղեցիկ էր: Ընթանալով դեպի հարավ անտառապատ մի լեռնահովտով, ուր աճում էին հաճարի, կաղնու և այլ սաղարթավոր ծառեր, այս ու այնտեղ նաև ընկուզենիներ, մազցում էինք վեր: Անցանք եզնասայլերի երկար շարասյան մոտով՝ բարձած խոշոր, երկարաբուն ծառերով, որ իբրև շինափայտ մեծ քանակությամբ անց էին կացնում լեռնաշղթայով և տանում հարավ՝ ծառագուրկ շրջաններ:

Լեռնալանջով բարձրանում էինք դեպի լեռնանցք: Վերելքն այստեղ առանձնապես կարուկ չէր, ճանապարհն էլ ոչ այնքան ոլորապտույտ, ինչպես երեկվա մեր անցած Ստեփանավան տանող լեռնանցքի ճանապարհը: Վերևում անտառը վերջացավ: Ճանապարհն այնուհետ անցնում էր ծառագուրկ, բայց խոտածածկ լեռնալանջով: Մրանք լավագույն ալպյան մարգագետիններ էին հարուստ և հյութեղ խոտով. ինչքան հիշում եմ, որևէ այլ տեղ, լեռներում, չեմ հանդիպել նման բանի: Այստեղ խփված էին կլոր տանիքներով վրաններ, որ նման էին յուրդերի: Դրանք Աղբրեջանի քոչվոր թաթարների օթևաններ էին, որ ամեն ամառ իրենց անասուններին արոտավայր էին բերում արածեցնելու, իսկ աշնանը՝ վերադառնում Աղբրեջան: Արոտավայրում կային կենդանիների բավականին մեծ հոտեր:

Ես հարցրի Դիլիջանի քաղաքագլխին, որ ուղեկցում էր մեզ, թե արդյո՞ք տեղացիների ու քոչվորների միջև գժտություններ չեն ծագում, քանի որ վերջիններս օգտագործում են նրանց ալպյան արոտավայրերը: Նա պատասխանեց, որ դեռևս այդպիսի բան չի պատահել. տեղացիներն այնքան անասուն չունեն, որ ամբողջ արոտավայրն օգտագործեն, այնպես որ դրանից օգտվում են նաև քոչվորները: Ինքս ինձ մտածեցի, որ տարիների ընթացքում անասնապահության ընդլայնման հետ միասին անպայման կծագեն գժտություններ, քանի որ քոչվորներն այս արոտավայրերը երկար ժամանակ օգտագործելուց հետո հազիվ թե առանց դիմադրության հրաժարվեն իրենց իրավունքից:

Հասանք լեռնանցքին, որ ծովից բարձր էր 2125 մ և շրջապատված էր թարմ, կանաչ խոտածածկ ունեցող լեռներով: Լեռնանցքի մյուս կողմում, ռուսական մի գյուղում, կառավարությունը կառուցում էր կաթնամանասնապահական նոր ֆերմա, ուր պետք է այցելեինք: Երկրում գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման նպատակով նախատեսված էր կառուցել կաթնամանասնապահական 15 նմանատիպ ֆերմա: Առաջին այստեղ գործում էր կաթնամանասնապահական գլխամասային ֆերման: Արտադրում էին ընտիր շվեյցարական պանիր, որ արագ սպառվում էր: Արտադրության այս ճյուղը զարգացման մեծ հեռանկար ունի, եթե իհարկե լեռնային հրաշալի մարգա-



գետիները՝ իրենց հյութալի արստավայրերով, լիովին օգտագործվեն: Դա հնարավորություն կտա ավելի շատ մարդ բնակեցնել այստեղ: Լեռնալանջերի խոտը հնձելով, ինչպես նաև առվույտ և սիգախոտ ցանելով կարելի է էլ ավելի մեծացնել եկամուտը: Գյուղի շրջակայքում կային կարտոֆիլի ընդարձակ դաշտեր: Այստեղ մշակվում էր նաև գարի: Հացահատիկի մյուս տեսակների համար տեղանքը չափազանց բարձր է:

Մի վայրում երկար կանգ առնել չէինք կարող, քանի որ շտապում էինք Սևանա լիճ, որ կոչվում է նաև Գյոկչա, և շուտով մեր առջև փովեց լճի ընդարձակ հայելին: Մեղմաթեք դեպի լիճն էին իջնում ծառագուրկ, սակայն կանաչ լեռնալանջեր: Մենք անցնում էինք ռուսական գյուղերով, որոնք ընդմիջվում էին մի քանի հայկական գյուղերով: Տարբերությունը մեծ էր. ռուսական բնակավայրերում տները խնամված էին, պատերը սպիտակեցված կրով, տանիքները կղմինդրածածկ, մինչդեռ հայկական գյուղերը՝ իրենց ցածր, գորշ քարե տներով ու տափակ կտուրներով, անբարետես էին:

Դիլիջանի քաղաքագլուխը պատմեց, որ ամռանն այստեղ այնքան ուժեղ կարկուտ է տեղացել, որ գարու ցանքսերը ջարդվել ու փչացել են: Կառավարությունը ջանում էր համոզել գյուղացիներին՝ ամբողջ հողն օգտագործել միմիայն անասնապահության համար որպես արոտավայրեր ու խոտհարք, բացառությամբ կարտոֆիլի դաշտերի: Գյուղ էին գալիս շրջիկ ուսուցիչներ և սովորեցնում գյուղացիներին՝ ինչպես խնամել անասուններին: Դրա շնորհիվ զգալիորեն բարձրացել էր կաթնատվությունը, իսկ գյուղացիներն աստիճանաբար ընթրում էին տնտեսության այդ ճյուղի շահավետությունը: Սակայն մենք տեսանք նաև լավ պահպանված գարու արտեր: Տեղումների քանակն այստեղ (Մեմյոնովկայի մոտ) համեմատաբար մեծ է՝ տարեկան 639 մմ:

Ճանապարհն իջնում էր դեպի լիճ: Այն տարածվում էր հարավ-արևելյան ուղղությամբ մինչև հորիզոն, ուներ մոտ 75 կմ երկարություն, ամենալայն մասը, որ հարավում է, 33 կմ էր: Լճի հայելին գտնվում է ծովից 1925 մ բարձրության վրա, ամենախոր տեղը 88 մ է: Լիճը եռանկյունաձև է, որի երկար կողմը հյուսիս-արևմուտքում է և այնտեղից ձգվում է դեպի հարավ-արևելք: Հյուսիս-արևմտյան ափից բարձրանում է Շահդաղ լեռնաշղթան՝ համեմատաբար սրածայր գագաթներով, ծովից ավելի քան 3000 և 3300 մ (Աղկայադաղ) բարձր:

Երեկվա մեր անցած լեռնաշղթան Փամբակի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան շարունակությունն է և Կուր ու Արազ գետերի ջրբաժանը: Լճի հարավ-արևելյան անկյունից ուղղվելով դեպի արևելք՝ նա հասնում է մինչև Մռավդաղ կոչվող համաձույլ լեռնազանգվածը, որ ծովից բարձր է ավելի քան 3000 մ: Այդտեղից սկիզբ է առնում Կուրի ընդարձակ հարթավայրը և հասնում մինչև Կասալից ծով: Լեռնազանգվածի առանձին գագաթներ ծովի մակարդակից բարձր են մինչև 3420 (Մռավդաղ) և 3740 մ (Գյամուշդաղ):

Լճի հարավային և արևմտյան ափամերձ լեռներն ունեն համեմատաբար

մեղմ քեթրություն, դրանք մասն են ավելի քան 3000 մ բարձրություն ունեցող մի ամբողջական լեռնաշղթայի, որի առանձին գագաթների բարձրությունը հասնում է հարավում մինչև 3500, արևմուտքում՝ 3600 մ (Աղդաղ): Այսպիսով, լիճը գտնվում է լեռնաշղթաներով շրջապատված մի գոգահովտում: Լեռնաշղթաների ջրբաժանը լճի հայելուց բարձր է ավելի քան 1100 մ և գտնվում է նրանից տարբեր հեռավորությունների վրա՝ հյուսիս-արևմուտքում մոտ 6—7 կմ, հարավում և արևմուտքում մոտ 20 կմ: Ավազանի ծայր հյուսիս-արևմուտքում, ուր գտնվում ենք մենք, լեռներն ավելի ցածր են, և այստեղ համեմատաբար հարթ մի իջվածքից սկիզբ է առնում լճի արտահոսքը:

Լիճն են թափվում 28 փոքր գետ և բազմաթիվ փոքրիկ առուներ: Գետակների մեծ մասը հոսում են հարավից և հարավ-արևմուտքից, ջրբաժանին մոտ լինելու հետևանքով դրանք շատ կարճ են, ջրի քանակությունն էլ հաճախ փոփոխական: Լճի մեջ և շրջակայքում բխում են բազմաթիվ աղբյուրներ: Չնայած ձմեռն այստեղ երկարատև է ու խիստ, սակայն լիճը սառցակալում է միայն փակ ծոցերում և ուժեղ սառնամանիքների դեպքում: Լճի շրջակայքը մերկ է, ափերը՝ աղքատ բուսականությունից: Հյուսիսային և հյուսիս-արևելյան ափերը շրջապատված են մերկ ժայռերով ու քարերով, իսկ հարավ-արևելքում, հարավում և հարավ-արևմուտքում դեպի լճի ընդարձակ հայելին իջնում են գեղեցկատես լեռնալանջեր: Լեռնագագաթներին սպիտակին են տալիս հավերժական ձյան շերտեր կամ դրանցից մնացած հետքեր:

Լիճը հարուստ է ձկներով: Հատկապես համեղ են խոշոր իշխանները, որ ամբողջ Հայաստանում հայտնի են որպես ընտիր ուտեստ և տոնական հարզի կերակուր: Իշխանը արտահանվում է, իսկ եթե լուծվի օդախտացված փաթեթավորման հարցը, ապա կարելի կլինի ավելի զարգացնել արտադրության այդ ճյուղը:

Լճավով ընթանում էինք հարավ, և շուտով ափին մոտ երևաց Սևանա փոքրիկ սուրբ կղզին: Այնտեղ կանգուն է հնում հայտնի վանքերից մեկը՝ իր եկեղեցիով, ուր կա քանգարան և բազմաթիվ ձեռագրերով մի գրադարան: Այժմ այնտեղ ապրում է միայն մեկ վանական: Կղզին հայերի համար թանկ է որպես ազգային սրբություն: Ամեն տարի օգոստոսին այստեղ տեղի է ունենում եկեղեցական մեծ տոն: Երկրի տարբեր ծայրերից խմբերով կղզի են գալիս գյուղացիներ և այստեղ անցկացնում մեկ շաբաթ՝ իրենց համար պատրաստելով գիշերելու օթևաններ: Ճիշտն ասած, մախօրոք որոշված էր այցելել նաև կղզին ու վանքը: Բայց քանի որ այդ պահին նավակ չկար, իսկ մենք էլ ժամանակ չունեինք սպասելու, ապա շարունակեցինք ճանապարհը և շուտով հասանք արտահոսքի ելքին:

Այստեղ մեծ աշխատանքներ էին տարվում: Կառուցվում էր ջրարգելակներով մի ամբարտակ, որը կարգավորելու էր ջրի արտահոսքը՝ գետի ջրերը ոռոգման ու էլեկտրաէներգիայի արտադրության համար առավել խնամքով օգտագործելու: Ամբարտակը բարձր չէր. լճի մակարդակը բարձրացնում էր մոտ

10 սմ՝ պատվարելով 140 միլիոն խորանարդ մ ջուր, տարվա սակավջուր ամիսներին՝ հուլիսին և օգոստոսին, ոռոգման նպատակներով օգտագործելու, երբ դրա պահանջն առավել անհրաժեշտ էր: Ջրի այդ քանակությունը բավարար էր մի մեծ տարածություն ոռոգելու: Ջրի հայելու բարձրացումից առավել կարևոր էր լճի ջրի մակարդակը արտահոսքի տեղում գետահունի խորացման միջոցով ցանկության դեպքում նաև իջեցնել՝ ամբարտակի ջրարգելակներով կանոնավորապես կարգավորելով ջրի հոսքը: Այսպիսով ստացվում էր կարգավորվող մի մեծ ջրավազան, որտեղից տարվա չոր ժամանակ կարելի էր ջուր բաց թողնել ոռոգման համար:

Ի դեպ զարմանալի է, թե Չանգու գետը սկիզբ առնելով այդ մեծ լճից, որքան փոքր է (մի մեծ առվից մի քիչ մեծ). դա հատկապես ցցուն է շրջակայքի ձյունապատ լեռների ֆոնի վրա: Տեղումների քանակն այստեղ ամենևին էլ քիչ չէ: Չափումները, որ կատարվում են վեց տարբեր կետերում 3—13, երեք վայրում նաև 11—13 տարիների ժամկետով, ցույց են տալիս, որ անձրևների միջին քանակը տեղումների ընդհանուր սահմանում հաշվվում է 417 մմ: Այս ցուցանիշն ինձ փոքր-ինչ ցածր թվաց, քանի որ լեռների վրա տեղումներն անշուշտ ավելի առատ են, քան հետազոտման այդ կետերում:

Սակավաջրությունը բացատրվում է այն բանով, որ մթնոլորտային տեղումների շրջանակը լճի հայելու համեմատ փոքր է, իսկ գոլորշիացման մակերեսը՝ մեծ: Զարտեզի տվյալներով լճի մակերեսը 1360 քառ կմ է<sup>3</sup>, մինչդեռ մթնոլորտային տեղումների շրջանակը, ներառյալ նաև լիճը, հազիվ 4592 քառ կմ, այսինքն 3,4 անգամ մեծ, քան լիճն ինքը: Եթե փոքրացվի լճի մակերեսը, ապա այն 2,5 անգամ կմեծանա լճից: Այսչափ մեծ գոլորշիացումը, որ կլիմայի մնան պայմաններում շարունակվում է ամբողջ տարի, ներառյալ նաև ձյունառնը<sup>4</sup>, ինչպես կարելի է ենթադրել, արտահոսքի համար շատ բան չէր կարող թողնել: Ջրի մի փոքր քանակություն կարող է, իհարկե, ներծծվել լճի ավազանի ծակոտկեն քարատեսակների միջով, սակայն դա որոշիչ լինել չի կարող:

Որ լճի մակերևույթի գոլորշիացումն այստեղ կարող է հակակշիռ լինել ներհոսող ջրին, հաստատվում է առանց արտահոսքի բազմաթիվ փոքր աղի լճերի գոյությանը: Այդպիսի լճեր կան երկրի տարբեր վայրերում: Այստեղից մի քանի կմ հարավ-արևմուտք և հարավ գտնվում են երկու մեծ աղի լիճ՝ Վա-

<sup>3</sup> Ըստ հայ և ռուս հետազոտողների հաշվարկների, լճի մակերեսը՝ ջրի ամենաբարձր մակարդակի դեպքում կազմում է մոտ 1445 քառ կմ, իսկ ամենացածրի դեպքում՝ շուրջ 1400 քառ կմ:

<sup>4</sup> Անշուշտ ձմռանը նույնպես այս շատցակալող լճի մակերեսի գոլորշիացումը բավական զգալի է: Չմտանք ջրի ջերմաստիճանը, որպես կանոն, ավելի բարձր է, քան օդի ջերմաստիճանը: Օդի ներքին շերտերը տաքանում են ջրից և ձգտում վեր իրենց հետ տանելով նաև ջրի գոլորշին: Այսպես շարունակ առաջանում են վեր բարձրացող օդի հոսանքներ, որ ուղեկցվում են լճի մակերևույթի ջրի գոլորշիացմամբ և զնալով ավելի շատ նոր օդ է կուտակվում լճի վրա: Դրա հետևանքով շարունակ մեծանում է լճի մակերևույթի գոլորշիացումը: Դրան ավելացրած նաև ձյունառնը համեմատաբար քիչ տեղումները, և լիճը իջնում է ամենացածր մակարդակի:

նը և Ուրմիան, ծովից 1718 և 1250 մ բարձր և ոչ այնքան խոր, ինչպես Սևանա լիճը:

Ըստ 1914—17 թթ. չափումների, այդ չորս տարվա ընթացքում լճից ջրի արտահոսքը Չանգվի միջոցով տատանվել է՝ 1917 թ. 29,4 միլիոն խոր. մ, 1915-ին՝ 11,8 միլիոն խոր. մ սահմաններում: Սա համապատասխանում է արտահոսքի միջին քանակին՝ վայրկյանում 0,94—3,75 խոր. մ: Երջակա մթնոլորտային տեղումների ջրի միայն մեկ քաներորդ կամ էլ ավելի քիչ մասն է դուրս գալիս լճից, եթե իհարկե անձրևների միջին քանակը ավելին չէ, քան տալիս են դիտման կայանների չափումները: Չանգվի միջոցով լճի ջրի միջին արտահոսքը կարելի է վայրկյանում 2 խոր. մետրով ավելացնել: Եթե լճում ջրի մակարդակը հատկապես ծնոռանը հասնի իր ամենացածր կետին, ջուր ընդհանրապես դուրս չի հոսի:

Ամբարտակի շինարարություն այցելելուց հետո շարունակեցինք ճանապարհը ալիքավոր, ծառագուրկ սարահարթով, որ տարածվում է դեպի արևմուտք և հարավ-արևմուտք: Մեզնից հարավ, Սևանա լճից արևմուտք, ձգվում է Ախմանգան լեռնաշղթան: Ճանապարհի հյուսիսային կողմում սարահարթը կտրող մի հարթ հովտով դեպի արևմուտք է հոսում Չանգու գետը: Դատելով հովտի հատկանիշներից՝ կարելի է ասել, որ գետը երբևէ ավելի շատ ջուր չի ունեցել, այլապես այն կարող էր մի ավելի խոր ու նեղ հուն ողողել: Գետաբերանից հեռու մի փոքրիկ հատվածով միայն այն հոսում է բազալտի շերտերի մեջ փորած, 35 մ խորություն ունեցող նեղ հունով, որը սակայն շուտով ընդարձակվում է հարթ հովտում:

Գետահովտի մյուս կողմում դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք էին ձրգվում Դարաչիչագի լեռները՝ մինչև 2832 մ (Ջինջիրիդաղ) գագաթներով: Գետահովտն ու լեռնալանջերն այստեղ ծառագուրկ են, սակայն կանաչ խոտածածկով: Ճանապարհին տեսանք բազմաթիվ բնակավայրեր, որոնցից մեկը գտնվում էր հովտի հյուսիս-արևմտյան կողմում, լեռնալանջի վրա՝ թաղված կանաչ ծառերի մեջ: Դա երևի Ծաղկածորն էր՝ երևանցիների ամառանոցավայրը:

Մի գյուղում կանգ առանք: Դիլիջանի քաղաքագլուխը հրաժեշտ տվեց մեզ: Նա վերադառնալու էր իր մեքենայով, որ մեզ հետ եկել էր նրան հետ տանելու համար: Երևում էր, որ գյուղում կյանքը աշխույժ էր, շատ գյուղացիներ հանդից գյուղ էին դառնում եզներ լծած փոխադրականներով: Մեծ ճանապարհի վրա մի քանի անգամ ավտոբուսներ տեսանք, որոնք շաբաթը երեք անգամ երթևեկում էին Երևանից Դիլիջան:

Չանգուն իր ճանապարհին ընդունում էր բազմաթիվ վտակներ՝ Գորսելչայ, Շողբուլաղ, Ալափարսչայ, որոնք շատացնում էին գետի ջուրը, այնուհետև գետը թեքվում էր հարավ, որտեղ գետահովտն ավելի լայն էր ու խոր: Այստեղ բաժանվեցինք գետից, որովհետև մեր ճանապարհը լեռների ստո-

րտաներով ձգվում էր վեր: Գնալով հողը դառնում էր ավելի չոր ու շագանակա-  
գույն, կանաչ խոտհարքները՝ ավելի քիչ:

Երբ ճանապարհը շրջվեց դեպի Երևան, կրկին փոխվեց բնապատկերը:  
Մեր առաջ լայնորեն բացվեց ընդարձակ մի բնաշխարհ. հարավ-արևմուտ-  
քում ալիքավոր, շագանակագույն սարահարթը իջնում էր դեպի Արագի լայ-  
նարձակ հարթությունը, արևմուտքում, Ջանգվից այն կողմ, բլրաշարքերի  
հետևում երևում էին Ալագյազի հարավային լանջերը: Հողը մասամբ շագա-  
նակագույն էր ու չոր:

Վայրէջքի ընթացքում գնալով ընդլայնվում էր տեսողաշտը. արևմուտ-  
քում ավելի պարզորոշ էր գծագրվում մեղմաթեք հարթավայրից վեր խոյացած  
Ալագյազ լեռնազանգվածը՝ խորքում դեպի հարավ-արևմուտք. ինչքան որ  
աչքդ կտրեր, շագանակագույն ծովի մման տարածվում էր Էջմիածնի լայնա-  
տարած հարթությունը, իսկ նրանից այն կողմ, մոտ 100 կմ հարավ, Արարա-  
տից սկիզբ առնող և արևմուտք ձգվող կապտավուն լեռնազագաթներն էին:

Անցանք զինվորական կայազորի դատարկ շենքերի մոտով: Հողն այս-  
տեղ կրկին բերրի էր, կային առանձին ծառեր ու այգիներ: Դա պայմանավոր-  
ված էր արևելյան կողմում գտնվող լեռներից հոսող մի գետակի գոյությամբ:

Ճանապարհը դարձյալ մտավ կատարյալ չոր ու շագանակագույն մի հո-  
ղատարածք, որն անշուշտ կարելի էր մշակել, եթե միայն ջուր լիներ: Այնուա-  
մենայնիվ այստեղ ինչ-որ բան մշակում էին առանց արհեստական ոռոգման,  
քանի որ տեսանք հացահատիկի հերկված արտեր, որոնք մեծ մասամբ խղ-  
ճուկ տեսք ունեին:

Հանկարծ կտրուկ մի շրջադարձով հայտնվեցինք սեպածև գառիթավի  
եզրին, որտեղից նայելով՝ մեր ոտքերի տակ տեսանք հարթավայրում փռված  
Երևանը: Հիասքանչ տեսարան էր: Ամենուրեք կանաչ ու փարթամ այգիներ,  
որոնց միջև սփռված սպիտակ տները փայլում էին ծառերի արանքից: Այն  
գմբուխտե շքեղ մի զարդ էր՝ երկու կողմից քաղաք իջնող ամալի, մերկ, դեղնա-  
շագանակագույն լեռնալանջերի միջև: Դրանց թիկունքում լճի հայելու պես  
հարթ դեպի հարավ ու արևմուտք տարածվում և Սարդարապատի դաշտի  
հետ էր ձուլվում Արագի հարթությունը: Հարավում, այս ամենի վերևում, Արա-  
րատի հզոր զանգվածն էր, որի լայն, կայծկլտացող ճյունապատ գագաթը  
թաղված էր ամպերի մեջ. նրա արևելյան լանջին Փոքր Արարատի մթամած  
գագաթն էր: Արևմուտքում այս բարձր լեռնաշղթան կապույտ պարսպի պես  
պատվարում էր բնաշխարհը: Հարթավայրի ու բարձր լեռնաշղթաների, մերկ  
անապատի ու փարթամ այգիների առեղի հակադրության մեջ է բնաշխարհի  
այս յուրահատուկ հրապույրը:

Մարալանջը, որի վրա կանգնած էինք, կատարյալ անապատ էր, առանց  
կանաչ մի ցողունի. սկիզբ էր առնում քաղաքի սահմանագծից և ավարտվում  
քարե պարսպի մոտ: Պարսպից ներս փարթամ այգում սաղարթախիտ ծառե-

րի ճյուղերը ճկվել էին ծիրանի, խակ դեղձի, թթու և քաղցր սալորի, խնձորի  
բերքի ծանրության տակ: Այստեղից արդեն այգիներն առանց ընդհատման,  
ինչպես համատարած մի գորգ, շրջապատելով տների շարքերը, հասնում էին  
Երևանի մյուս ծայրը: Այնտեղ նույնպես պարիսպներից դուրս անապատ էր:  
Նման կախարդանք այս երկրում հնարավոր է սույլ արհեստական ոռոգման  
շնորհիվ:

Մտանք քաղաք, հասանք մեր հյուրանոցը: Ավարտվեց տպավորություն-  
ներով հարուստ մեր ճանապարհորդությունը: Կտրել անցել էինք Հայաստանի  
ավելի քան կեսը, ծանոթացել երկրի հակասություններով լեցուն բնությանը և  
ստացել այն տպավորությունը, որ երկրի հյուսիսային՝ տեղումներով հարուստ  
հովիտներում ու լեռներում նույնպես կան առաջընթացի ու զարգացման մեծ  
հնարավորություններ:

## IX

### ՈՂՈՒՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ: ԷՋՄԻԱԾԻՆ

Կեսօրից հետո հանձնախմբի հինգ անդամներս հյուրանոցում քննար-  
կում էինք մեր հետազոտությունների մինչև այժմ ունեցած արդյունքները՝  
հաշվի առնելով նաև նոր հողերի մշակման հետագա հնարավորությունները:  
Կապիտան Քվիսլինգը, որ կանգնած էր պատուհանի մոտ, պատահաբար  
տեսնում է, թե ինչպես մի հուժկու պտտահողմ, բարձունքներից ցած իջնելով,  
քաղաք է խուժում կենտրոնական փողոցով, ճիշտ այն ճանապարհով, որով  
քիչ առաջ եկել էինք: Փոշին սյան տեսքով բարձրանում և ծուղակն ընկածի  
պես փշրվում էր հյուրանոցի առջևի հրապարակում: Մենք շարունակեցինք մեր  
խորհրդակցությունը՝ այլևս չհետաքրքրվելով դրսի եղանակով:

Սակայն հետզհետե ուժգնանում էր փողոցից եկող աղմուկը: Ի վերջո  
այնքան սաստկացավ, որ ստիպված դուրս նայեցինք և հանկարծակիի ե-  
կանք: Ջուրը հեղեղել էր հրապարակը և դեռ շարունակում էր խուժել փողոց-  
ներից: Անընդհատ բարձրանում էր, և շուտով հյուրանոցի դիմացի փողոցը վե-  
րածվեց սրընթաց գետի, հրապարակն ու զբոսայգին մնացին ջրի տակ, անհը-  
նար էր շենքից դուրս գալ և թաղվել ջրի մեջ: Մարդիկ տների պատերի տա-  
կով ու մայթով քայլում էին չմիացնելով, սայլերը մինչև անվակալները ջրի  
մեջ էին, ավտոմեքենաները սլանում էին ջրի հոսանքի ուղղությամբ, քանի դեռ  
այն չէր հասել շարժիչներին, հեծյալներն երկվարում էին՝ փրփուր ցայտեցնե-  
լով իրենց շուրջը: Քաղաքը ծայրից ծայր լցված էր աղաղակներով, դողդուլում  
և ականջ խլացնող աղմուկով:

Ի՞նչ էր պատահել: Նոր էինք սկսել խորհրդակցությունը, երբ հյուսիսում  
լեռների վրա կուտակված սև, փոթորկաբեր ամպեր տեսանք, բայց շուտով մո-

ռացանք այդ մասին: Նման փոթորիկն այս կողմերում ծանոթ երևույթ է, սակայն այն սովորաբար ցած չի իջնում: Այս փոթորիկը փաստորեն սովորակահից ուժեղ էր, նրան ուղեկցում էր հորդ տեղատարափը, որ լեռնալանջերի նեղ հովիտներով ցած իջնելով՝ քաղաք հասավ արդեն որպես փոթորիկ գետակ: Գետակն անընդհատ լցվելով՝ հորդանում էր և ցած իջնում սրընթաց հեղեղով՝ վերևում խորտակելով համալսարանի այգու ոռոգման ջրատարը, ողողելով քաղաքը: Քաղաքի հյուսիսային արվարձաններում պետք է որ կարկուտ տեղացած լինե՞ր՝ պատճառելով վնասներ:

Հետաքրքիր է, որ մենք նստած գլուխ էինք կուտրում, ինչպես ջուր բերել այստեղ, իսկ նա արդեն հեղեղում է մեր շենք իր առատ օրհնությամբ:

Կես ժամ անց հեղեղը սկսեց մեղմանալ: Ջուրն աննկատելիորեն իջավ, մեր պատուհանի տակ սալահատակը, ապա ամրողջ փողոցն աստիճանաբար ազատվեց լճից, իսկ ջրատար առուները դեռ լիքն էին: Տխուր տեսարան էր. ամենուրեք ցեխի ու կեղտի կույտեր: Ըստ պայմանավորվածության ճաշից հետո կառավարության հետ համատեղ միտ ունեինք, սակայն այս պարագայում կառավարությանը սպասում էին բազմաթիվ այլ հոգսեր:

Երեկոյան գնացինք ակումբ՝ ընթրելու: Կենտրոնական փողոցն ավերված էր, ջրհորդանները պոկված, անկյուններում ավազի ու քարի շեղջեր էին: Մայթերի սալաքարերը պոկված կամ տեղահան էին եղած, ավերածությունն ամենուրեք էր: Քաղաքի մի քանի փողոցներ նույնիսկ շատ ավելի վատ տեսք ունեին:

Լուրերն ընդհանրապես զարմանալիորեն արագ են աճում, նաև այսպիսի փոքր ու տեսանելի քաղաքում, ինչպիսին Երևանն է. լուր կարող է ուղտ դառնալ: Հաջորդ առավոտյան եկավ կառավարական մամուլի մեր թղթակիցը, դեմքի լուրջ ու մտահոգ արտահայտությամբ իր ֆրանսերենով սկսեց պատմել ջրհեղեղի մասին: Վնասը կազմում է մի քանի միլիոն, իսկ կայարանի մոտ գտնվել է 26 ջրահեղձ դիակ, մեծ մասը՝ երեխաներ: Հետո իմացանք, որ միայն մի երեխա է խեղդվել նկուղում, որ դարձյալ ասեկոս էր: Իսկ վնասը, այո՛, իսկապես փոքր չէր, բայց այնուամենայնիվ տանելի էր:

Չլսված բան է՝ մի տեղատարափից ջուրն այդքան հորդանա: Մա պարզ պատկերացում է տալիս այն մասին, թե հեղեղի արագության հետ ինչ ուժգնությամբ է աճում ջրի հզորությունը, որ կարողանում է առարկաներ տեղաշարժել: Հորդ անձրևներն այստեղ վատ հետևանքներ են թողնում, որովհետև անտառներից ու բուսածածկից զուրկ լեռնալանջերը ի վիճակի չեն ջուրը վերում պահել, չկան նաև գետերի ջրի մակարդակը կարգավորող լճակներ: Այդ պատճառով ջրի ամբողջ զանգվածը, որպես ավերիչ հեղեղ, միանգամից ու անարգել ցած է հոսում: Խելամիտ կարգավորման դեպքում ջուրը կծառայեր որպես կյանքի և առատության աղբյուր, իսկ այսպես դառնում է սոսկ մահվան և ավերածությունների պատճառ: Ջուրը շատ սիրված բարեկամ է հատկա-

պես այս տարածաշրջանում, սակայն նրան ևս իր հակուռնյա կրակի մման պետք է սանձած պահել: Չնայած այսպիսի դեպք 15 տարին մեկ է պատահում:

Ճաշից հետո կառավարական հանձնախմբի հետ միստի էինք հրավիրված, որ վարում էր կառավարության փոխնախագահ Մռավյանը: Ես հաղորդումով հանդես եկա և ներկայացրի մեր ուսումնասիրությունից արված եզրակացությունը Սարդարապատի նախագծի մասին, որ անշուշտ նրա իրագործումով ընդարձակ մի հողատարածք կվերածվեր բերրի դաշտի: Սակայն առաջմ խորհուրդ չենք տալիս ձեռնամուխ լինել նախագծի իրագործմանը, որովհետև անհրաժեշտ գումարի հայթայթումը ներկա դրությամբ անհետանկար է: Հարց է ծագում՝ կա՞ն այլ հողեր, որոնք ավելի պակաս ծախսով կարելի է յուրացնել: Կարծում ենք, որ Երևանի շրջակայքում կան այդպիսի ընդարձակ հողատարածություններ:

Կառավարությունն ու նրա հանձնախումբը, սակայն, առավել շահագրգռված էին, որ մենք մեր մասնակցությամբ նպաստեինք Սարդարապատի նախագծի իրագործմանը, քանի որ մեծ ծախսերի առկայության պայմաններում իրենք հագիվ թե կարողանային սեփական ուժերով գլուխ բերել: Այսուհանդերձ կառավարությունը ձգտում էր ամեն գնով երկրում տեղավորել հայ փախստականներին, ուստի մատնանշվեց երկու այլ հնարավորություն ևս: Երևանի մերձակայքում կային ընդարձակ անմշակ սարալանջեր, այսպես կոչված՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան դռեր, որոնց համար ըստ նախագծի ոռոգման ջուր կարելի էր հանել Չանգու գետից: Ապա անդրադարձանք նաև Արագի հարթավայրի ճահճուտներին: Ինչպես արդեն մշել են, դրանք կարելի է ջրազրկել և չորացնել:

Առաջարկը հավանության արժանացավ: Որոշեցինք հաջորդ օրն իսկ մեկնել՝ տեղում քննարկելու դռերի յուրացման նախագիծը և նույն օրն այցելելու նաև ճահճուտներ:

## ՂՈՒՐ

Առավոտյան ժամը 8-ին (ուրբաթ, հունիսի 27) երկու գլխավոր ինժեներների ուղեկցությամբ ավտոմեքենաներով մեկնեցինք լեռնոտ այն նույն ճանապարհով, որով նոր էինք վերադարձել Սևանա լճից: Քաղաքի վերևում բազմած գաղթափից բացվեց նույն տեսարանը, այս անգամ ավելի գեղեցիկ, քան մի քանի օր առաջ: Բարձրում մթամած ամպերի մի շերտ կախված էր հարթավայրի վրա՝ օղակելով Արարատի թևերը. ձյունե գագաթն էր միայն ազատ առկայծում ամպերից վեր արևի տակ:

Անցնելով մեզ արդեն ծանոթ հին գորանոցների մոտով հասանք Քանա-



քեռ բնակավայրը: Այստեղից դեպի արևմուտք, ինչքան աչքդ կտրեր փոկած էր ամայի մի տարածք՝ շագանակագույն սարալանջերով ու ընդարձակ հարթություններով: Չանգվից ջուր հասցնելով այստեղ՝ շրջանն ամբողջությամբ կվերածվեր այգիների ու կանաչ արտերի:

Անցնելով լեռան ստորոտով և մի փոքր էլ ընթանալով՝ դուրս եկանք հարթավայր: Այս ու այնտեղ քարքարոտ, այրված հողում, որը դեռ կատարելապես ուժասպառ չէր, ինչպես Մարդարապատի դաշտը, երևում էին բուսականության որոշ նմուշներ: Ամենից առաջ աչքի էր ընկնում վայրի փոքրիկ վարդի մի տեսակ, որ քարերի վրա փոկած բաց կարմիր հիասքանչ ծաղիկներով կարծես սերտաճած լիներ նրանց: Ուրեմն այստեղ այնքան էլ չոր չէ: Ամբողջ տարածքը, որ ձգվում էր դեպի արևմուտք, մինչև Չանգվի ձորի գառիթափները և դեռ դրանցից էլ այն կողմ, իր չոր ու դեղնաշագանակագույն հողաշերտով նույն վիճակում էր:

Այստեղ առավել քան որևէ այլ տեղ յուրատիպ մի հակադրությամբ հրստակ ընդգծվում էր սահմանը մշակված դաշտերի ու անապատի միջև: Ահա, այս կողմում դեղնաշագանակագույն, քարքարոտ հողեր են, իսկ մի քանի մետր հեռու, ճանապարհի եզրին սարալանջը պատած է փարթամ այգիներով: Ընդ որում երկու վայրում էլ հողատեսակը նույնն է, սակայն արևելյան լեռներից հոսող մի փոքրիկ գետակ ջուր է հասցնում սարալանջ: Ուրեմն որպեսզի ամբողջ տարածքը սարալանջի տեսքն ունենա, միայն ջուր է պետք:

Վերընթաց ճանապարհով վերադարձանք Քանաքեռ: Այստեղից էլ մեքենաներով ու ձիերով ուղղվեցինք հյուսիս, դեպի Չանգվի խոր ու նեղ հովիտը, ուր ճանապարհը տանում էր պտղատու այգիների միջով: Հասանք գահավեժ մի գառիթափի և այնտեղից ցած նայեցինք: Չորում միայն մեկ-երկու տեղ կային ծառեր, սովորականի պես լանջերը մերկ էին ու շագանակագույն: Ծանապարհը կտրուկ ցած էր իջնում, և քանի որ նրա որոշ հատվածներ փլվածքներ ունեին, ապա ոտքով շարժվեցինք դեպի հյուսիս՝ այն վայրը, ուր ըստ նախագծի պետք է լիներ ջրանցքի ելքը: Սա Քանաքեռից հեռու էր մոտ 7 կմ, ծովից բարձր էր 1200 մ:

Նախատեսված էր կառուցել միայն մեկ ջրատար, որ 10 կմ անցնելու էր գետի ձախափնյա գառիթափերով դեպի հարավ, մինչև նույն բարձրության մեկ այլ գառիթափ, ապա 30 կմ էլ հարթ տեղանքով, այնտեղից էլ ճյուղավորվելով հասնելու էր հարավ-արևելյան դռեր, որոնց հարավային սահմանով հոսում է Գառնիչայ գետը: Հիմնական ջրանցքի և նրա երակների ընդհանուր երկարությունը կազմելու էր 100 կմ: Ջրանցքից խողովակաշարով ջուր կտարվի նաև Չանգվի հովտի արևմտյան մասը, որտեղից կրկին կհոսի ջրատարով: Ջուրը խողովակաշարով ցած իջեցնելով և մյուս կողմում կրկին բարձրացնելով՝ խողովակաշարում կառաջանա ներքին մեծ ճնշում: Գնշումից խուսափելու համար Դափյուսն առաջարկեց խողովակաշարն անցկացնել կախովի

կամրջով, հովտի լայնքով: Իմ կարծիքով ավելի լավ կլիներ ընդհանրապես հրաժարվել խողովակաշարից: Հետագայում այդ նախագծից հրաժարվեցին, փոխարենը, բացի ամբարտակից, հովտի աջ գառիթափին ուզում էին կառուցել նաև ջրանցք, որն ունենալու էր 17 կմ երկարություն, հոսելու էր հովտով, ապա դուրս գալով ձորից, անցնելու էր հարթ տեղանքով: Ջրանցքը 1 կմ հեռանալով ելքից՝ թեքվելու էր արևմուտք, 20 կմ հոսելու էր դռերի հյուսիս-արևմտյան մասով մինչև Աբարանսու գետը՝ ճանապարհին ջուրը բաժանելով ճյուղավորված ջրատար ցանցին: Հիմնական ջրանցքի և նրա ճյուղերի ընդհանուր երկարությունը կազմելու էր մոտ 210 կմ:

Տարածքը թեքված էր հարավ-արևմտյան ուղղությամբ, այն իջնում էր դեպի Աբարանսու գետը, որը կազմում էր նրա արևմտյան սահմանը, իսկ հարավ-արևելյան դռերն իջնում էին դեպի Գառնիչայ և Չանգու գետերը: Այս հանգամանքը կյուրացներ փոսեր փորելու և ռոտզվող հողատարածքից ավելորդ ջուրը առուների մեջ հավաքելու գործը:

Շատ կարևոր է, որ ջուրը մշտապես հսկողության տակ լինի, այլապես կանգ առնելով՝ հողը կթթվացնի կամ գոլորշիանալով՝ կաղոտի այն:

Ըստ հաշվարկների արևմտյան աջակողմյան ջրատարով մեկ վայրկյանում հոսելու է 11 խոր. մ, իսկ արևելյանով՝ 5,5 խոր. մ ջուր: Մինչև այժմ կատարված չափումների հիման վրա ճշգրիտ հաշվված է Չանգվի և Սևանա լճի ջրի քանակը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Չանգվի ջրի միջին քանակը լիովին բավարարում է այդ երկու մեծ տարածքները, նաև ավելի խորքում ընկած շրջանը ռոտզելու համար, ինչպես և Երևանի էլեկտրակայանը աշխատեցնելու, որի համար պահանջվում է վայրկյանում 10 խոր. մ ջուր: Բացի այդ, Սևանա լճի ջրի կարգավորման շնորհիվ այդ մեծ ամբարներում կկուտակվի բավականին ջուր, որը կօգտագործվի երաշտի ժամանակ, երբ գետի ջրի սակավանալու հետևանքով մեծանում է ջրի պահանջը:

Ստացվում է, որ Չանգուն ունենում է առատաջուր մի վտակ, որտեղ հետագայում, հարկ եղած դեպքում, կարելի է ավելի շատացնել ջրի քանակությունը կիրճի մոտ ամբարտակ կառուցելու միջոցով՝ ստեղծելով ջրի ամբարան նոր ավազան, որն անհրաժեշտության դեպքում կարելի լինի նաև դատարկել:

Տարվա մեծ մասը, սակայն, գետով կհոսի ջրի շատ ավելի մեծ քանակություն, քան անհրաժեշտ է ռոտզման և էլեկտրակայանը գործարկելու համար: Հետևաբար, ջրի ավելցուկով կարելի է Երևանի մոտ աշխատեցնել մի նոր, ավելի մեծ էլեկտրակայան, որի համար ջուրը խողովակաշարով հանգիստ կբերվեր կառուցվելիք արևելյան ջրանցքից:

Նախագիծն ամբողջությամբ դուր եկավ մեզ, այն մտահղացված էր խրությամբ՝ չնայած մանրամասներն ու անհրաժեշտ հաշվարկները դեռ ավարտված չէին:

Վերադարձին գետափին տեսանք մի հոյակապ կամրջի մնացորդներ, որի կառուցումը, ինչպես պատմեցին, ըստ առասպելի վերագրվում է Կյուրոսին: Մակայն, ինչքան որ կարողացա տեսնել, այն կառուցված էր աղյուսից և հազիվ թե այդքան հին լիներ: Ավտոմեքենաները մեզ սպասում էին մի գյուղի մոտ, սաղարթախիտ ծառերի գով ստվերի տակ:

Վերադարձանք Երևան, այստեղից էլ Չանգվի հովտի արևելյան կողմով անցնող ճանապարհով ուղղվեցինք հարավ՝ այցելելու հարավ-արևելյան ամալի դռերը, որ տարածվում էին հարավ, մինչև Արամգալու բնակավայրը և այնտեղից էլ հարավ-արևելք: Խոպան այդ հողերից, որ ամբողջությամբ հազիվ 7470 դեկայտին (8200 հա) էր, կարելի էր ոռոգել 5000 դեկայտինը (5500 հա): Ոռոգման շնորհիվ հյուսիս-արևելյան սարավանջերը կվերածվեն խալոդի կամ պտղատու հրաշալի այգիների, ցորենի արտերի, ավելի խորքում՝ բամբակի դաշտերի, նաև կծառայեն ծխախոտագործությանը:

Այս չոր հողատարածքի հարավով հոսում է արևելյան լեռներից սկիզբ առնող Գառնիչայ գետը, որի ջրերը օգտագործվում են ոռոգման համար: Այստեղ կային ծառեր, փարթամ այգիներ, կանաչ արտեր, որ տեսնելով համոզվում էիր, թե ինչի կարող է վերածվել այս հողը ոռոգման շնորհիվ:

Այս գետի ավին է գտնվել Դվին քաղաքը, որը երկար ժամանակ, Անիի ծաղկումից շատ առաջ, Հայաստանի կարևորագույն քաղաքներից մեկն էր: Չորս դար շարունակ (մոտ 462—931) այն եղել է կաթողիկոսի աթոռանիստը, որի սկզբնական նստավայրը Աշտիշատն էր, այնուհետև՝ Վաղարշապատը: Մոտակայքում է գտնվել նաև Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատը (կամ Արտաքսատա): Ավելի հեռու, գետի վերին հոսանքի շրջանում է գտնվում Գառնիի ամուր բերդը, որի կառուցումը վերագրվում է Տրդատ Մեծ հզոր թագավորին: Բերդի մոտ կան հունական հիասքանչ, մարմարյա տաճարի ավերակներ, որի կառուցումը հայ պատմիչ Մովսես Խորենացու վկայությամբ վերագրվում է Տրդատ թագավորին (3-րդ դ. Ք. ծ. հ.)՝ ի պատիվ իր Խոսրովիդուխտ քրոջ: Մակայն տաճարը անկասկած ավելի վաղ շրջանի է<sup>1</sup>: Կից կան նաև ապարանքի ավերակներ: Ուրեմն հնում մույնպես և դրանից էլ ավելի վաղ հողը մշակվել է, իսկ գետի ջրերն օգտագործվել են ոռոգման համար:

Տունդարձին Երևանից հարավ մի մեծ քարավանատուն տեսանք՝ բարձր, քարե պարիսպներով շրջապատված, ընդարձակ, ուղղանկյուն բակով: Այստեղ իջևանել են Թավրիզից և Պարսկաստանից եկած քարավանները: Իսկ մենք ավտոմեքենաներով տեղից տեղ սլացանք, և ինչ օգուտ դրանից: Այնինչ քարավանները լուռ, երկար շարքերով քայլ առ քայլ կտրելով իրենց ճանապարհին անապատի միջով՝ իրենց վրա կրել են Արևելքում տարանցիկ առևտուրը:

Ճաշից հետո մեկնեցինք Չանգվի հովտից արևմուտք տարածված հյուսիս-արևմտյան դռեր: Բարձունքի վրա տեղախալված զինվորական փոքրիկ մի պահակախմբի աշտարակից դիտեցինք խուպան այդ տարածքը, որ հարավ-արևմտյան ուղղությամբ իջնում էր դեպի Աբարանաու գետը և Էջմիածնի հարթությունը: Նայում և պատկերացնում էինք այդ մերկ, շագանակագույն սարավանջերն ու մեղմաթեք բլուրները՝ ծածկված բողբոջած այգիներով ու ցորենի արտերով, երագուս հարթավայրում բամբակի կանաչ դաշտերի ու բանջարանոցների մասին, մտովի տեսնում իրար հաջորդող գյուղեր: Միայն թե ջրանցքը պետք է հասցնել այստեղ, այնուհետև համեմատաբար հեշտ կլինի ջուրը բաժանել մեղմաթեք այս ծարավ տարածքով մեկ:

Հյուսիս-արևմտյան դռերն ունեն 13780 դեկայտին (շուրջ 15200 հա) տարածք, որից կարելի է ոռոգել և բերրիացնել 11000 դեկայտին (12100 հա): Արևմտյան կողմում կային մշակված մի քանի համեմատաբար փոքր հողեր, որոնք ոռոգվում էին Աբարանաուի ջրով: Գետը հոսում էր Ալազյազից արևելք և հյուսիս-արևելք ընկած մի հովտով՝ իր մեջ առնելով լեռան արևելյան լանջերից բխող ջրերը: Ապա անցնում էր Էջմիածնից արևմուտք փոկած հարթությունով հարավ, դեպի Արագ և սովորաբար սակավաջուր էր:

Երկու դռերի հողերն էլ հրաբխային էին: Վերին շերտը, որ փխրում էր և 40 սմ հաստ, կազմված էր հողմնահարված տուֆից, լավայից և կավից, այսինքն՝ երկրագործության համար նպաստավոր խառնուրդից: Հավանաբար ընթերցողին կհետաքրքրեն հողի վրա տարվող աշխատանքները, ուստի ստորև բերում ենք Հայաստանի գյուղատնտեսության կոմիսարիատի կողմից մշակված նախահաշիվը, որն աղյուսակի վրա ցույց է տալիս երկու դռերից սպասվող բերքի համախառն արժեքը.

Բուստեսակ	Մշակելի մակերես		I հա-ից ստացվող բերքը կգ-ով	Ամրոց տարվա բերքը կգ-ով	I կգ-ի վաճառքի գինը ռուբլով	Տարեկան բերքի համախառն արժեքը ռուբլով
	դեկայտինով	հա-ով				
Աշնանացան	4800	5280	1340	7100000	0,17	1188000
Գարնանացան	1600	1760	1340	2330000	0,092	215000
Բամբակ	5600	6160	1040	6400000	0,31	1960000
Բանջարեղեն	800	880	17820	15700000	0,05	785000
Պտղատու այգիներ	400	440	9640	4300000	0,18	774000
Խաղողի այգիներ	1200	1320	5200	6800000	0,15	1020000
Առվույտ	1600	1760	5940	10500000	0,12	1260000
Ընդամենը	16000	17600				7202000

16000 դեկայտին հողատարածքը Չանգվի ջրով ոռոգելու նախագծի մասին մեր պատկերացումները հստակվեցին, տպավորությունը մեծացավ: Պարզ դարձավ նրա նշանակությունը Երևանի զարգացման համար: Զաղաքի մերձակա տարածքների մշակումը կապահովի բարեկեցություն և բարգա-

<sup>1</sup> Հմմտ. Մարտիգովսկի, նույն տեղը, էջ 342 և հաջորդները:

վաճում, էլ չենք խոսում այն գեղեցկության մասին, երբ շրջակա սարավանդերը ծածկվեն այգիներով ու կանաչ դաշտերով: Գաղթականներին տեղավորելու տեսանկյունից նախագիծը ուներ նաև այն առավելությունը, որ ջրանցքի շինարարության վրա աշխատողները, ի տարբերություն Սարդարապատի դաշտի, հանգիստ կարող էին ժամանակավորապես բնակվել քաղաքամերձ արվարձաններում, որ դրական ազդեցություն կունենար նաև աշխատանքների ընթացքի վրա: Օրվա աշխատանքից զոհ վերադարձանք հյուրանոց:

Երեկոյան ժամը 7-ի մոտ էր, նոր էի նստել աշխատելու, երբ հանկարծ փոթորիկ սկսվեց: Պատճառը հյուսիսից լեռների վրայով եկած մութ, սպառնալի ամպակույտերն էին: Փոթորիկի թափից գրոսայգու մեծ-մեծ ծառերը ցած էին թեքվում, փոշին պտտահողմի հետ վեր էր սլանում և շղարշում փողոցները, քամին քշում էր մարդկանց: Այս բոլորը տեսեց կես ժամ, ապա փոթորիկն աստիճանաբար թուլացավ, և երբ ժամը 8-ին փողոց դուրս եկանք, կրկին լավ եղանակ էր: Նման փոթորիկները հաճախակի են այստեղ, ինչպես նորերս եկած հորդառատ ամձրևը: Ինչպես արդեն նշել եմ, օրվա առաջին կեսն այստեղ սովորաբար հանդարտ է, կեսօրից հետո՝ քամոտ: Քամին կարող էր հանել, զովաբեր լինել, եթե իհարկե այդքան փոշի չհաներ վեր: Թեև փողոցները ջրվում էին զուգահեռ ընթացող առուների ջրով, սակայն ինչքան էլ ջանք էր թափվում, շատ արագ չորանում էին:

Ժամը 8-ին բուսաբան, դոկտոր, պրոֆեսոր Հ. Բեդեյանը թանգարանում զեկուցում էր կարդալու Նորվեգիայի մասին: Ինչպես գիտեք, նա երկու անգամ եղել է իմ հայրենիքում և հասել մինչև հյուսիսային հրվանդան: Հարգարժան բանախոսը սիրով ու ջերմորեն պատմեց մեր երկրի ու ժողովրդի մասին: Դահլիճը լեփ-լեցուն էր, մեծ ոգևորությամբ ընդունվեց զեկուցումը, որի ընթացքում ցուցադրվեցին նաև լուսանկարներ:

## ԽՈՆԱՎ ՀԱՐԹԱՎԱՅՐԸ

Մի պայծառ, ամառային առավոտ (կիրակի, հունիսի 28) ավտոմեքենաներով մեկնեցինք Չանգվի հովտով անցնող այն գեղեցիկ ճանապարհով, որով արդեն մեկ անգամ անցել էինք, ապա էջմիածնով դեպի արևմուտք՝ ընթանալով գեղեցիկ այգիների միջով, այնուհետև հարթավայրով հարավ, դեպի Արագի ճահճուտները, որ առաջին օրը թռուցիկ տեսել էինք կողքով անցնելիս:

Ճահճուտ հողերը տարածվում էին Կարասու գետի երկարությամբ: Գետը սնվում էր մի քանի աղբյուրներից, որոնք բխում էին Սարդարապատից արևելք, հարթավայրում ինչ-որ տեղ և իրենց գոյությամբ պարտական էին Ալազյազի լանջերից հոսող ստորերկրյա ջրերին: Աբարասու գետին միախառնվելուց հետո այն հոսում էր հարթավայրով հարավ-արևելյան ուղղու-

թյամբ, մինչև Արագի մեջ թափվելը՝ գրեթե նրան զուգահեռ: Ավելի ստույգ ճահճուտ էր Կարասու գետի աջ ափը և սրա ու Արագի միջև ընկած շրջանը:

Ինչպես Կարասուի, այնպես էլ Արագի ափամերձ տարածքն ունի մի քանի մետր թեքություն, որը նպաստավոր պայման է չորացման համար: Անհրաժեշտ է ամրոց տարածքը կառուցապատել ամբարտակների ու հորերի ցանցով, որոնք որպես բնական ջրատարներ կիջնեն դեպի այդ երկու գետերը: Դրան կհետևի այն, որ գետն ու նրա վտակը կմաքրվեն եղեգնից, որն արագ բազմանալով՝ փակում է ջրի հոսքը:

Առավել դժվար է ոռոգման համար անհրաժեշտ ջրի հայթայթումը: Դիշտ է, Կարասուն բերում է պահանջվածից ավելի ջուր, սակայն նրա հունը խորն է հարթավայրից, իսկ աղբյուրները՝ առավել ևս: Վերջինիս մեջ թափվող Աբարասուն սակավաջուր է, բացի այդ վերևում արդեն օգտագործվում է ոռոգման համար: Կարասուից ջուր կարելի է հանել միայն պոմպով 3—4 մ, որը կմեծացնի ոռոգման ծախսերը: Բացի այդ, ինչպես ասել ենք արդեն, աղբյուրի պարզ ջուրը ոռոգման համար նվազ օգտակար է, քան Արագի պղտոր, տղմոտ ջրերը:

Առավել դյուրին ու նախընտրելի է ջուր բերել այստեղ արևմուտքից՝ Արագի հովիտը ոռոգող Սարդարապատի փոքր ջրանցքից կամ կառուցվելիք՝ Չանգվի արևմտյան ջրանցքից՝ հյուսիսով, այստեղից ոչ շատ հեռու արևմտյան դեղրով: Անշուշտ այդ ջրանցքներից հանված ջուրը լիովին չի բավարարի ոռոգվող տարածքի ջրի պահանջը: Ջրի վրա խիստ հսկողություն սահմանելու և խնայողաբար օգտագործելու դեպքում թերևս զոհացնի երկու պահանջն էլ: Ժամանակի ընթացքում յուրաքանչյուրին կհասնի այնքան ջուր, որքան դրա կարիքն ունենա: Հարց է ծագում, հնարավո՞ր է առանց Թուրքիայի հետ հարաբերությունները վատացնելու փոքր-ինչ մեծացնել ջրի քանակը Սարդարապատի փոքր ջրանցքում: Ինչպիսին կլինի իրերի դասավորությունը, չզիտեն, վատթարագույն դեպքում մնում է ջրի անհրաժեշտ քանակության ապահովումը Կարասուից՝ պոմպով քաշելով:

Թթու հողերով մի փոքրիկ տարածք էլ աղիացել էր նատրիումական աղ պարունակող կանգնած ջրերի գոլորշիացման հետևանքով: Եթե այդ հողերը որոշ ժամանակ ոռոգվեն հոսող ջրով, ապա աղը հեշտությամբ կլուծվի: Հողի բերրիությունը կասկած չի հարուցում, պետք է միայն չորացնել, ջրատար անցկացնել ու ոռոգել. բերքն առատ կլինի:

Այս եղանակով կարելի է յուրացնել անօգտագործելի կամ մասամբ օգտագործելի հողեր, որ այս շրջանում կազմում են մոտ 10000 դեյսյատին (11000 հա): Ստորև տալիս ենք հողի հնարավոր իրացման հաշվարկը՝ սպասվող շահույթի ցուցանիշներով.

Բուսատեսակ	Մշակելի մակերես		Հա-ից ստացվող բերքը կգ-ով	Տարվա ամբողջ բերքը կգ-ով	Վաճառքի գինը 1կգ-ը ռուբլով	Տարեկան բերքի համախառն արժեքը ռուբլով
	Դեսյատինով	Հա-ով				
Աշնանացան	3000	3300	1340	4420000	0.17	742500
Գարնանացան	1000	1100	1340	1474000	0.09	135000
Բամբակ	4000	4400	1040	4576000	0.31	1400000
Բանջարեղեն	500	550	17820	9801000	0.05	480000
Պտղատու այգիներ	200	220	9640	2121000	0.18	390000
Խաղողի այգիներ	300	330	5200	1716000	0.15	262500
Առվույտ	1000	1100	5940	6534000	0.12	800000
Ընդամենը	10000	11000				4210000

Այստեղից հարավ-արևելք, Չանգվի երկու կողմում՝ մինչև Արագի հետ միախառնվելը, տարածված են գերխոնավ հողեր: Չանգուն դրանք բաժանում է երկու մասի, այսպես կոչված՝ արևելյան և արևմտյան Չանգիբասար, որ Կարասուի ճահճուտների շարունակությունն է: Երկու շրջանը միասին ունեն մոտ 3300 դեսյատին խոնավ և բացարձակապես անօգտագործելի հողեր, որոնք սակայն չորացման և ոռոգման միջոցով կարելի է մշակել ու բերրիացնել: Բացի այդ, այստեղ կան մեծ օգտագործվող հողեր, որոնց բերքատվության հնարավորությունը կարելի է շատ ավելի մեծացնել: Հողը չորացնելը մեծ դժվարությունների հետ չի կապված, քանի որ տարածքն ամբողջությամբ թեք է: Հողի ճահճացման պատճառը հիմնականում պայմանավորված է գյուղացիների կողմից դաշտերը ջրելու հետ, երբ շարունակ հաշվի չի առնվել հոսող ջրի անհրաժեշտ քանակությունը, որի հետևանքով ժամանակի ընթացքում առաջացել է ավելորդ ջրերի կանգ: Գետն ու գործող ջրատարներն էլ իրենց հերթին նպաստել են եղեգնի աճին, որով խցանվել է ջրի հոսքը: Եղեգնը արմատախիլ անելը շատ բանով կօգնի խնդրի լուծմանը:

Այս տարածքի համար ջրանցքով ջուր կարելի է բերել Չանգվի ստորին հոսանքից: Այս շրջանում Չանգուն առատաջուր է, որովհետև գետն են լցվում մեծ Երևանի մոտ գործող էլեկտրակայանից եկող ջուրը և վերևում ոռոգվող հողերի ջրի ավելցուկը:

Յուրազգված հողերն այստեղ կարելի է նույն կերպ օգտագործել, ինչպես Կարասուին հարող տարածքը: Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե նոր հերկված և բարեկարգված հողերին ավելանա արևելյան և արևմտյան Չանգիբասարի 4000 դեսյատինը, ապա տարեկան բերքի համախառն արժեքն

ընդհանուր առմամբ կավելանա 1684000 ռուբլով:

Խոնավ հողերը մեծ մի մեծ չարիքի՝ դողերոցի բուն են, որ այստեղ հատկապես հաճախ է հանդիպում: Այն տարածված է ամբողջ Հայաստանում: Երևանի և Էջմիածնի մերձակա հարթավայրի բնակչության 90—95 տոկոսը հիվանդացել է դողերոցով, լեռնային շրջաններում՝ 15—20 տոկոսը: Այսինքն կարելի է ասել, որ բնակչության մեկ երրորդը հիվանդացել է դողերոցով: Հյուծող այս տենդը երկրի համար մեծ չարիք է, քանի որ ժողովրդի աշխատուժն ու գործունեությունը շարունակ տուժում են նրա հասցրած վնասներից՝ տարին տարվա վրա զգալի կորուստներ կրելով: Այդ պատճառով Հայաստանի կառավարության խնդիրներից մեկը հիվանդության դեմ պայքարն է: 1923 թ. Երևանում հիմնվում է «Տրոպիկական հիգիենայի ինստիտուտ», երկրում կառուցվում են դողերոցի ուր հիվանդանոց և հիվանդության դեմ պայքարի 13 փոքր հաստատություն: Հետևապես խոնավ հողերի ոռոգումն ու մշակումը մեծ չափով կօգնի դողերոցի դեմ պայքարին, քանի որ այդ կանգնած ջրերում են բազմանում հիվանդությունը տարածող մոծակները: Հողը չորացնելով և հոսող ջրերը վերահսկելով՝ կմեծանա չնչին ծախսերի գնով համաճարակն արմատախիլ անելու հնարավորությունը, որն իր հերթին շնորհաշատ հայ ժողովրդին մի քայլ առաջ կմղի: Այստեղից էլ կարևորվում է Կարասուի մերձակա և Չանգիբասարի ճահճոտ հողերի յուրացման նշանակությունը: Այս գործին պետք է ձեռնամուխ լինել հնարավորին չափ շուտ, ավելի լավ է օգոստոսին: Նախագծերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք հղացված են խելամտորեն և կարելի է իրագործել առանց մեծ դժվարությունների ու ծախսերի:

### ԷԶՄԻԱԾԻՆ

Մեր հետազոտությունների արդյունքներից գոհ՝ կրկին ուղևորվեցինք դեպի տուն՝ ճանապարհին կանգ առնելով Էջմիածնում: Էջմիածինը մեծ վանք է՝ ընդարձակ շինություններով շրջապատված, հայերի ազգային սրբությունը հանդիսացող Մայր տաճարով: Տաճարը, որ Հայոց աշխարհի հոգևոր կենտրոնն է, կանգնած է մի ընդարձակ, ուղղանկյուն հրապարակի մեջտեղում՝ շրջապատված մնացած կառույցներով: Ամբողջ հաստատությունը գտնվում է բարձր պարիսպների մերսում:

Այստեղ, պարտեզով շրջապատված մի տան մեջ է ապրում Հայաստանի պատրիարքը կամ պապը՝ կաթողիկոսը: Այստեղ են մեծ եպիսկոպոսների, վանականների, քահանաների, ուխտավորների բնակարանները, այստեղ կան մեծ, արժեքավոր գրադարան, քանգարան, դպրոց կամ ճեմարան: Վանքը գտնվում է հին Վաղարշապատ քաղաքում, որը եղել է Տրդատ Մեծ թագա-



վորի մայրաքաղաքը:

Նախ մեզ առաջնորդեցին վանքի պարիսպներից դուրս գտնվող փոքրիկ, ուղղանկյունաձև մի լճակ: Այն կառուցվել է անցյալ դարի առաջին կեսին Ներսես Հինգերորդ կաթողիկոսի կողմից: Լճակն առաջներում շրջապատված է եղել մեծամեծ ծառերով ստվերախիտ մի զբոսայգով, որը ժամանակին ամառային այրող շոգից պատսպարվելու մի հրաշալի թաքստոց էր: Այժմ մերկ է լճակի շուրջը: Վերջին պատերազմի ժամանակ թուրքական հալածանքներից փախած հազարավոր գաղթականներ ապաստանելով այստեղ՝ ծմռան ցրտերին չսառչելու համար կտրեցին բոլոր ծառերը՝ օգտագործելով որպես վառելիք: Ինչպես նշել եմ արդեն, այլ վայրերում փախստականները վառել էին տների տանիքների ու ձեղնահարկերի փայտյա մասերը: Լճի շուրջը կրկին ծառեր են տնկել, պետք է երկար սպասել, մինչև վերադառնա երբեմնի գեղեկությունն ու սովորոտ զովությունը:

Լճից վերադառնալով՝ մասնակցեցինք վանք կատարած մեր այցելության պատվին գրադարանում տրված նախաճաշին: Տաճարի հրապարակին կից գրադարանի մոտ մեծ շենքը կառուցվել է մի քանի տարի առաջ: Վանքում մենք ջերմ ընդունելություն գտանք քաղաքի իշխանությունների կողմից, ուր նրանք հանդես էին գալիս տանտերերի իրավունքով: Երկրի հյուրասիրության համաձայն ճոխ սեղան էր զգված, մեզ հրամցրին ամեն տեսակի համեղ կերակուրներ:


Նախաճաշից հետո գնացինք դիտելու հայկական հին ձեռագրերի հարուստ հավաքածուն, որի մեջ կային նաև հին ավետարանական գրքեր: Ձեռագրերից շատերը զարդարված էին գեղեցիկ, գունավոր մանրանկարներով: Հատկապես նշանավոր են 13-րդ դ. նկարիչ Թորոս (այսինքն՝ Թեոդորոս) Ռոսլինի աշխատանքները, որ բերված են Մուշից (և Կիլիկիայից): Նրա նկարներից շատերը փոքրիկ գլուխգործոցներ են: Այդ թանկարժեք գանձարանն այցելելուց հետո դուրս եկանք գրադարանից, ուր հաճելի էր նաև լուսնային մեջ աշխատելը: Կտրեցինք ընդարձակ հրապարակը և մոտեցանք տաճարին: Մուտքի մոտ մեզ դիմավորեց բարձրաստիճան մի եպիսկոպոս՝ երկու այլ եպիսկոպոսների ուղեկցությամբ: Նրա արտաքինը՝ մինչև կոճերը հասնող սև սքեմ, գլխին սև, սրածայր վեղար, մոռուքով եզերված խելացի, լրջմիտ դեմք, թողնում էր վայելուչ տպավորություն: Եպիսկոպոսը հարգանքով մոտենալով մեզ՝ սահուս գերմաներենով սիրալիր ողջունեց: Նա մեզ ցույց էր տալու եկեղեցին:

Մինչ եկեղեցի մտնելը հարկ է մի քանի բառով անդրադառնալ նրա կառուցման հրաշապատումին: Ըստ ավանդության տաճարի հիմնադրումը կապված է 3-րդ դ. Տրդատ (Տիրիդատ) թագավորի օրոք սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեության տարածման հետ: Նրանք երկուսով Մայր տաճարը կառուցում են այն վայրում, ուր Գրիգորը երազում տեսել էր Աստծո Միածին

որդու իջնելը, այստեղից էլ Էջմիածին անունը, որ նշանակում է «ուր իջել է Միածինը»:

Հնարավոր է՝ եկեղեցականներն այս պատմությունն ավելի ուշ շրջանում են հորինել, որ հաստատեն Էջմիածնի Մայր տաճար լինելը, երբ այն դեռևս Աշտիշատում (Մուշի մոտ) էր: Վերջինս ավելի վաղ է կառուցվել (մինչև 402 թ. Վաղարշապատ տեղափոխվելը) և եղել է կաթողիկոսի նստավայրը:

Այնուամենայնիվ հավանական է, որ այս վայրում Գրիգորն ու Տրդատը թագավորական ապարանքին կից եկեղեցի են կառուցել, որը սակայն Վաղարշապատի եկեղեցական այլ շինությունների հետ մույն դարում ավերվել է պարսիկների կողմից: Պետք է ենթադրել, որ Ներսես Առաջին կաթողիկոսը՝ Պարթևը (353—373 թթ. Բ. ծ. հ.), վերականգնել է այն: Մայր տաճարի վերականգնման առաջին հավաստի տեղեկությունը վերաբերում է 484 թ. Բ. ծ. հ. Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանին: Ղազար Փարպեցին իր հայտնի «Պատմության» մեջ (գրված 505—510 թթ. Բ. ծ. հ.) գրում է, որ սպարապետը կրկին կանգնեցնում է սուրբ Մայր տաճարի եկեղեցին իր փայլուն շքեղությամբ, որ կառուցել էին նրա նախնիք և որ տարիների ծանրության տակ ավերվել էր: 461 թ. կաթողիկոսարանը տեղափոխվում է Դվին և միայն 15-րդ դ., բազմաթիվ տեղափոխություններից հետո, վերադառնում է Վաղարշապատ կամ Էջմիածին:



Էջմիածնի Մայր տաճարը (ըստ Գ. Յ. Բ. Լինչի):

618 թ. Բ. ծ. հ. Մայր տաճարը կրկին վերանորոգվում է Կոմիտաս կաթողիկոսի (611—628) կողմից: 7-րդ դ. պատմիչ Մերեսի վկայությամբ եկեղեցու փայտյա գմբեթը փոխարինվում է քարե գմբեթով, իսկ 20 տարի անց Ներսես Էրզրուր կաթողիկոսը («Շինարար») ընդարձակում է եկեղեցու ներքին տարածությունը արտաքին պատերը թողնելով ուղղանկյուն: Այդ ժամանակ արդեն Մայր տաճարն ուներ հիմնականում այսօրվա հատակագիծը, սակայն դարերի ընթացքում բազմաթիվ վերանորոգումներից հետո դժվար է որոշել, թե ինչ է մնացել նախնական կառույցի:

ցից: Բացի այդ, Մայր տաճարը հետագայում ևս համարվել է տարբեր շինություններով: Արևմտյան նախագավթի, որի վերևում բաց զանգակատունն է, շինարարությունն ավարտվել է 1658 թ., եկեղեցու կողմնային ելուստների վրա գտնվող բաց զանգակատունը կառուցվել է 1682 թ. Եղիազար կաթողիկոսի կողմից: Արևելյան մեծ մասնաշենքը, որ լիովին ծածկում է եկեղեցու արևելյան պատն ու արսիղը և ուր տեղավորված է զանձարանը, ինչպես նաև նվիրական սենյակները, կառուցել է Գևորգ Չորրորդ կաթողիկոսը (մահ. 1882 թ.):

Մտնում ենք եկեղեցի: Երեք եպիսկոպոսներն էլ կրում էին միևնույն մինչև կոճերը հասնող սև սքեմ, գլուխներին նույնպես սև վեղար, բոլոր երեքն ունեին սև կամ սպիտակ մորուք, ի՞նչ պատվավոր թափոք:

Մեծ սրահը, ներսում չորս հուժկու կամրջասյուներին հանգչող կամարակապ կենտրոնական զմբեթը, քարե հոծ պատերի պարզ չափերը դիտողի վրա թողնում են հանդիսավոր տպավորություն: Մտքով ակամա թռչում ես այն ժամանակները, երբ հայ ժողովուրդը, հարափոփոխ ճակատագրի հարվածներից ընկճված, ամեն անգամ իր մտահոգ և հուսավառ աչքերը հառել է այս սրբավայրին:

Եկեղեցու հիմնական ձևն ուղղանկյուն է, որի՝ արևմուտքից արևելք ձգվող երկարությունը մի փոքր գերազանցում է հյուսիսից հարավ ձգվող լայնությանը: Յուրաքանչյուր կողմի մեջտեղում, այսինքն երկրի ամեն կողմի ուղղությամբ խորանում է կիսաշրջանաձև մի արսիղ: Չորս կամրջասյուները եկեղեցու մեջտեղում ուրվագծում են մի երկրորդ քառակուսի: Կամրջասյուներից յուրաքանչյուրը մյուսից հեռու է մոտ 5,8 մ և մոտավորապես նույնքան էլ հեռու է հյուսիսային և հարավային քարաշար պատերից: Նույն լայնությունն ունեն նաև արսիղները: Վերևում կամրջասյուները բարձր պայտաձև կամարներով գույգ-գույգ միանում են քառակուսուն, որի չորս անկյունների որմնախորշերից վեր հանգչում է բարձր զմբեթը:

Լինչի չափումներով եկեղեցու հատակագծի ներքին երկարությունը արևելյան և արևմտյան արսիղների միջև կազմում է 33 մ, համապատասխանաբար՝ լայնությունը հյուսիսից հարավ 29,9 մ է: Յուրաքանչյուր արսիղ ունի 4,65 մ խորություն: Եկեղեցու ուղղանկյուն սրահի կողմերն ունեն մոտ 27, և 20,6 մ երկարություն:

Լույսն ընկնում է վերևից՝ զմբեթի 12 պատուհաններից: Կողային պատերը ևս այս ու այն տեղ ունեն մի քանի պատուհան, որոնք սակայն շատ քիչ լույս են ներս թողնում: Կենտրոնական մուտքը գտնվում է արևմտյան արսիղի մեջտեղում: Արևելյան վերնասրահում կենտրոնական մեծ բեմն է, ուր սովորաբար կատարվում է ժամերգությունը: Բացի այդ, մեկ այլ անպիտվանիով բեմ էլ գտնվում է եկեղեցու մեջտեղում, չորս մեծ սյուների միջև: Հենց այստեղ է Փրկիչն իր ոսկե մուրճով հարվածել գետնին, երբ երևացել է սուրբ Գրիգորին: Այդ բեմն օգտագործվում է եկեղեցական մեծ տոների ժամանակ: Հյուսիսային երկու սյուներից յուրաքանչյուրի մոտ, երկու բեմերի առաջ, այց կողմում կաթողիկոսի գահաթոռներն են: Սովորական ժամերգությունների ժամանակ կաթողիկոսը նստում է արևելյան վերին գահաթոռին, տոնական ժամերգությունների ժամանակ՝ մյուսի վրա: Երկու գահա-

թոռներն էլ նվեր են. առաջինը նվիրել են հայերը Աստվածատուր կաթողիկոսի օրոք (1715—1725), մյուսը՝ միջնաբեմի մոտինը, Հռոմի պապի նվերն է: Այն ունի հետևյալ արձանագրությունը. «Պետրոս կաթողիկոս» (Պետրոս Երկրորդ, 1748):

Հարավային արսիղում կա մի երրորդ բեմ ևս: Այստեղ պահարանում անոթի մեջ պահպանվում է սուրբ Գրիգորի սուրբ Մտռոնը: Այսօր այն մի չոր զանգված է, որը օգտագործվում է տոնական ծեսերին, օրինակ՝ նոր կաթողիկոսի օծման ժամանակ: Մի փոքրիկ կտոր խառնում են մեռոնին, մի քիչ էլ անուշություն են ավելացնում և դրանով եպիսկոպոսներն օծում են Նորին Սրբության գլուխը՝ բթամատերով խաչաձև քսելով մագերին: Յուրի պահպանակի մոտ մշտապես վառվում է փոքրիկ մի կանթեղ:

Եկեղեցու հյուսիսային արսիղի դիմաց կա մեկ այլ բեմ, այնպես որ ընդհանուր առմամբ գոյություն ունի չորս բեմ: Այստեղ սրբապատկերում հայ եկեղեցու հիմնադիր սուրբ Գրիգորն է իր որդիներ Արիստակեսի ու Վրթանեսի, ինչպես նաև Գրիգոր թոռան հետ, ապա գալիս են Հուսիկ կաթողիկոսը, Ներսես Առաջինը, Սահակ ու Մեսրոպը: Այս արսիղում օծվում են եպիսկոպոսները:

Արտառոց պայմաններում է գոյատևել հայ եկեղեցին ու զարգացրել հայ մտավոր կյանքը: Ասածիս վկայությունը վերնասրահի որմնախորշի առջև՝ ձեղնահարկի տակ տեղադրված մեծ տակառն է, որի մեջ ջուր էր ամբարվում վանքի պաշարման ժամանակ օգտագործելու համար:

Եկեղեցու ներքին հարդարանքը պարզ է. պատերը քարե հարթ սալեր են, մասամբ ծածկված աստվածաշնչային թեմաներ ներկայացնող պատկերներով՝ որմնանկարների ձևով կամ կտավների վրա, որոնք փակցված են պատերին: Նկարները, որ նոր շրջանի գործեր են՝ հավանաբար 18-րդ դարի, կատարված են մուգ գույներով և հազիվ թե արվեստի արժեքներ ներկայացնեն: Այդ շրջանին են վերաբերում նաև լուսկական ոճով գույնզգույն արաբանախշով պատած զմբեթի կամարները<sup>2</sup>: Ընդհանրապես եկեղեցու ներսում նկարների առկայությունը բավական զարմանալի է, քանի որ հայ գրիգորյանները հակված չեն կրոնական բովանդակության նկարների ցուցադրության, որի պատճառով էլ եկեղեցական նկարչությունը զարգացում չի ապրել:

Նախագավթից եկեղեցի տանող համեմատաբար ցածր, ուղղանկյուն դուռը բոլորված է ճոխ զարդաքանդակներով, անշուշտ այդ զարդարանքը նույնպես ուշ շրջանի է, ինչպես և նախագավթը (17-րդ դ): Քարե պատերը սովորաբար հարթ են, առանց բարձրաքանդակների: Հին եկեղեցու պատերը դրսից նույնպես շատ պարզ են ու հարթ, երևում են միայն կոփածո քարերը: Պատուհաններն ու դռներն ունեն հարուստ բոլորազարդեր: Հին եկեղեցուց միայն կենտրոնական զմբեթն է աչքի ընկնում զարդաքանդակներով: Նեղ կամարակապ պատուհանները եզերվում են որմնասյուներով, որոնցից վեր զարդանախշ խուլ պատուհաններ են: Յուրաքանչյուր պատուհանի վերևում շրջանի մեջ մի սրբի գլուխ է քանդակված: Ա-

<sup>2</sup> Հմմտ. Լինչ, նույն տեղը, հ. 2-րդ, էջ 267:

մեն երկու պատուհանի միջև կա ավելի բարձր մի որմնասյուն, որը վերևում աշտարակը բոլորող պսակը կապում է սրածայր կամարների հետ, որոնք հյուսվածքի ձևով խաչվում են քիվերին: Դրանցից վեր տանիքի քիվի տակով անցնում է որմնաքանդակ մի լայն եզրագարդ: Աշտարակի արտաքին այս զարդարանքը համեմատաբար ուշ շրջանի է:

Նախագավթի զանգակատանը կախված է տիրեթյան հայտնի մի զանգ, որի վրայի արձանագրությունն ունի բուդդայական մոզական հետևյալ բանաձևը. «Om a hum»:

Եկեղեցու արևելյան ճակատին կից շենքում պահպանվում են զանձեր ու մասունքներ: Կարևորագույն մասունքը սուրբ Գրիգորի աջն է, որն առանձնատեսակով նշանակություն ունի, քանի որ այն կաթողիկոսության գլխավոր հովանավորն ու պաշտպանն է: Այստեղ պահպանվում է նաև փայտի մի կտոր Նոյան տապանից, որն իջել է մոտակա Արարատ լեռան գագաթին, «որտեղ այն պահպանվել է մինչև վերջին ժամանակներս, այժմ սակայն անհետացել են նրա մնացորդները»: Պահպանվում է նաև սուրբ Գեղարդի ծայրը, որով Քրիստոսին հրել են դեպի խաչը, սրան վերագրում են համաճարակներ կասեցնելու գորություն: Այնուհետև մասունքների զանձարանը ներկայացնում է բազմաթիվ սրբերի բազուկներ կամ ձեռքեր, նաև սուրբ Թադևոսի գլուխը: Փայտե մի սալիկ՝ խաչված Քրիստոսի փորագիր պատկերով, համարվում է Հովհաննես առաքյալի ձեռքի գործը, որի հայտնաբերման պատիվը պատկանում է Աշոտ Պատրիկին:

Հռչակավոր այս եկեղեցու ներսը դիտելուց հետո մեզ հրավիրեցին Նորին Սրբություն կաթողիկոսի մոտ ընդունելության: Եպիսկոպոսների առաջնորդությամբ անցնելով հրապարակը՝ մոտեցանք կաթողիկոսի նստավայրին, որ մի շատ սովորական շինություն էր Մայր եկեղեցու ուղղանկյունաձև մեծ հրապարակի հարավ-արևմտյան անկյունում:

Սպասավորների ու հոգևորականների միջով մի քանի աստիճան բարձրանալով՝ մտանք այն սրահը, ուր Նորին Սրբությունը՝ շրջապատված եպիսկոպոսներով ու հոգևորականներով, ընդունեց մեզ: Կաթողիկոսը միջահասակ, սպիտակ մորուքով, բացառիկ խելացի, հաճելի ու լուրջ դեմքով մի անձնավորություն էր: Նա կատարյալ հանդերձի մեջ էր՝ սև սքեմ, գլխին սև վեղար, ճակատին սպիտակ խաչ: Կաթողիկոսը մեզ նստելու տեղ առաջարկեց սեղանի մոտ, որի մյուս կողմում գահավորակին նստած էր ինքը:

Ողջունելով շնորհակալություն հայտնեց ի նպատակ իր հայրենակիցների՝ հայ փախստականների մեր գործադրած ջանքերի համար: Կաթողիկոսը խոսում էր հայերեն, իսկ եկեղեցին ցույց տվող մեզ ժանոթ եպիսկոպոսը թարգմանում էր: Նա խոսում էր ինչպես, լիքը ձայնով և բնական մեծ արժանապատվությամբ, որ շատ ազդեցիկ էր: Չնայած ոչ մի բառ չէինք հասկանում, սակայն նրա ժպտուն աչքերի բարեհամբույր արտահայտությունը լավ տպավորու-


թյուն էր թողնում:

Ես շնորհակալություն հայտնեցի և մի քանի բառով ներկայացրի մեր այցելության նպատակը՝ հաղորդելով իմ ունեցած տեղեկությունները տարբեր երկրներում ծվարած հայ փախստականների ու նրանց ճակատագրի մասին: Եպիսկոպոսի միջնորդությամբ խոսեցի նաև Հայաստանի հետագա հնարավորությունների մասին, անդրադարձա մեր անելիքներին, պատմեցի հայ ժողովրդի դաժան ճակատագրի և այն ամենի մասին, ինչ մեր կարծիքով կարելի է անել փախստականների համար:

Կաթողիկոսը գրույցին աշխույժ մասնակցում էր: Մինչ այսպես դեմ-դիմաց նստած խոսում էի հասարակ, խելացի, հանդարտ հայացքով այս մարդու հետ, հասկացա, թե ինչպես նրանով մարմնավորված եկեղեցին բոլոր ժամանակներում կարողացել է միշտ մնալ կենտրոնում, որի շուրջ, ի հեճուկս ճակատագրի անողոք հարվածների, համախմբվել է հայ ժողովուրդը: Հրաժեշտին կաթողիկոսն օրհնեց մեզ և հաջողություն ցանկացավ փախստականների հետ տարվող մեր աշխատանքներին:

Այցելեցինք թանգարան, ուր պահպանվում էր երկրի տարբեր վայրերից գտնված սեպագիր արձանագրություններով հին քարերի մի հետաքրքիր հավաքածու: Դրանք վերաբերում էին նախահայկական շրջանին՝ խալդերին, այսինքն Բ. ծ. ա. մինչև 6-րդ դար: Մենք հատկապես հետաքրքրվեցինք այն արձանագրություններով, ուր խոսվում է ջրանցքների շինարարության մասին: Տեսանք նաև հին հայկական բազմաթիվ դրամներ՝ հայ թագավորների պատկերներով, որոնցից շատերն աչքի էին ընկնում ազնիվ դիմագծերով, ինչպես Տիգրան Մեծը (95—55 թթ. Բ. ծ. ա.) և ուրիշներ: Մեզ ցույց տվեցին թանգարանի հրատարակությունները՝ բազմաթիվ տետրեր հայերեն տեքստերով, եկեղեցիների, դրամների և այլ բարձրորակ նկարներով:

Ինչպես միշտ, մեր ժամանակը սուղ էր, և չհասցրեցինք լինել Հայաստանի հոգևոր այս կենտրոնի տեսարժան բոլոր վայրերում: Աճապարելով բռնեցինք տունդարձի ճանապարհը՝ փոքր-ինչ կանգ առնելով Հոփսիսիմեի գեղեցիկ եկեղեցում, որ գտնվում էր քաղաքից արևելք, ճանապարհի վրա: Ցավոք, չգիտեինք, որ ճանաչված եպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, տեղեկանալով մեր այցելության մասին, ամբողջ օրը սպասել էր մեզ: Նա սիրալիք դիմավորեց մեզ եկեղեցու մուտքի մոտ: Ամրակազմ, գեղեցիկ տղամարդ էր նա՝ մինչև կոճերը հասնող եպիսկոպոսական մուգ շագանակագույն մետաքսե սքեմով, վեղարի տակից երևացող ազնիվ, մտավորականի դիմագծերով, խելացի աչքերով և մինչև կուրծքն իջնող սպիտակ մորուքով. այս ամենով հանդերձ նա թողնում էր փառահեղ տպավորություն: Մեսրոպ Տեր-Մովսիսյանը հայտնի էր հայկական ճարտարապետության և եկեղեցական հին շինությունների մասին իր աշխատություններով, հատկապես մոտակա Զվարթնոց եկեղեցու մասին, որի պեղումներին անձամբ մասնակցել էր:



**Հռիփսիմն եկեղեցին (ըստ Թ. Թորամանյանի)**

որի պեղումներին անձամբ մասնակցել էր:

Նա մեզ ցույց էր տալիս Հռիփսիմնի եկեղեցին և գմբեթի կամարների ներքո արձագանքող ուժեղ, բարձր ձայնով, սահուն գերմաներենով ներկայացնում էր եկեղեցու պատմությունը: Եկեղեցին նվիրված է սուրբ կույս Հռիփսիմնին, որը մեծ մասնակցություն է ունեցել Հայաստանում քրիստոնեության տարածմանը: Հռիփսիմնն 3-րդ դ. վերջին միանձնուհի էր Հռոմում, սերում էր թագավորական ընտանիքից և ուներ զարմանահրաշ գեղեցկություն: Հայոց թագավորը, որ վկայված է որպես մեծ «կռապաշտ» և քրիստոնեապաշտ, հիվանդանում է նոդկալի մի հիվանդությամբ՝ իր մարդկանց հետ վերածվելով վայրի խոզի: Միայն երբ զոջում է իր կատարած ոճիրը Հռիփսիմնի և նրա միանձնուհիների նկատմամբ և դարձի գալիս դեպի ճշմարիտ Աստված, բժշկվում է սուրբ Գրիգորի կողմից, որին 13 տարի առաջ նետել էր վիրապի մեջ: Գրիգորն այնտեղ կենդանի մնալով՝ նորից դուրս է գալիս լույս աշխարհ: Քրիստոնեությունը հալածող թագավորը նույն ջերմեռանդությամբ արդեն սկսում է զբաղվել նրա տարածմամբ և սուրբ Գրիգորի հետ կառուցում է շատ եկեղեցիներ:

Հռիփսիմնի եկեղեցու ձևը ցայտուն քառակուսի է: Ինչպես նշել են արդեն,

քառակուսին հայկական հինավուրց եկեղեցիների հիմնական ձևն է՝ հավանաբար հեթանոսական տաճարներից մնացած: Այս տիպի տաճարներ եղել են նաև միջերկրածովյան երկրներում և էտրուսկների մոտ: Ստրժիգովսկու կարծիքով այս ոճն առաջացել է հնագույն փայտյա շինություններից: Մինչդեռ հայկական սովորական քարե տունն անգամ քառակուսի է՝ իր պարզագույն ձևի մեջ բաղկացած լինելով միայն մեկ սենյակից: Նշենք նաև, որ Հայաստանն առաջին երկիրն է, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն, ուրեմն և դեռևս չկային քրիստոնեական եկեղեցիների տարբեր ոճեր, հայերն ու վրացիներն էին, որ աստիճանաբար ձևավորեցին իրենց սեփական ոճը: Քառակուսին նրանք պարսկական ձևով կամարակապեցին զրմբեթով: Գմբեթը հենվում էր քառակուսու չորս կողմերից ելուստած և արսիդների կամ վերնասրահի որմնախորշերի վրա, որոնք իրենց կիսագմբեթներով կամարում էին կենտրոնական գմբեթի պատվանդանը՝ հենվելով վերջինիս վրա:

Այս ձևով ստեղծվում է միասեռ ներքին սրահ, որ հավասարապես ձգված է դեպի կենտրոնական բարձր գմբեթը:

Հայ-վրացական եկեղեցին իր առանց սյունաշարերի պարզ, հոծ պատերով ու կամրջապայուներով, ծանր զանգվածեղ, ներփակ ու համասեռ ներգործությամբ ճշտիվ վերաբաղում է երկրի բնույթը: Նրա մեջ ամփոփվում են անկրկնելի ու պարզ բնաշխարհի էական գծերը՝ Արարատ և Ալազյազ հրաբուխների վեհությունն ու ամբողջականությունը: Թե ճարտարապետական այս ոճը որքանով է ազդեցություն կրել Հայաստանի և Վրաստանի հեթանոսական տաճարներից, դժվար է ասել: Եկեղեցու այս հիմնածևր տեսնում ենք նաև Չվարթնոց մեծ ու բոլորակ եկեղեցուն:

Հռիփսիմնի եկեղեցու ներքին սրահն ամեն ինչով մնան է Մցխեթի մոտ, լեռան վրա գտնվող եկեղեցու ներսին: Ընդհանրապես երկու եկեղեցիների մասնությունն աչքի է զարնում. բացի նշվածից համընկնում են նաև հատակագծի չափերը, մի տարբերությամբ, որ Հռիփսիմնի եկեղեցու չորս անկյունների քառակուսի սրահները այնքան մեծ են, որ կառույցը դրսից ամբողջապես ուղղանկյունանաձև է: Երկու եկեղեցիներն էլ նույն ժամանակաշրջանի՝ 7-րդ դ. շինություն են, վրացականը հավանաբար մի քանի տարվա վաղեմություն ունի, վերջինիս տանիքները նույնպես գուրկ են վերնաճակատից, իսկ գմբեթի աշտարակն առավել պարզ, խողովակաձև հորինվածք է:

Եկեղեցին դրսից ունի արևելքից-արևմուտք 22,8 մ երկարություն, չափված 1653 թ. արևմտյան մուտքի առաջ կառուցված նախազավիթը՝ վրան 1790 թ. ավելացված զանգակատնով: Ներքին սրահում հեռավորությունը արսիդների խորության միջև 20,5 մ է, լայնությունը՝ 16 մ: Արսիդների միջև անկյուններում ձևավորված ներքին ուղղանկյուն ունի 9,9 մ երկարություն և 9,4 մ լայնություն: Յուրաքանչյուր անկյունում կա 2,5 մ տրամագծով երեք քառորդա-



նոց գլան: Դրսից դրանք ի հայտ են գալիս գմբեթի աշտարակի շուրջը տեղակայված չորս կլորավուն աշտարակների ձևով: Գմբեթի կամարի ներքին տրամագիծը 94 մ է: Դրսում գմբեթի աշտարակն ունի 16 կողմ և 12 պատուհան: Ներքին բարձրությունը գմբեթի տակ 23 մ է, որ բավականին ճշտությամբ համապատասխանում է եկեղեցու արտաքին երկարությանը: Պատերը ամբողջապես մերկ են, ներսից և դրսից առանց որևէ զարդարանքի, բացառությամբ պատուհանների վերևում մի քանի քարե կամարակապ ծովորների և գմբեթի տակ եղած պարզ զարդանախշերի: Այսպիսով, ներքին տարածությամբ՝ չորս արսիղներով և դրանց միջև կենտրոնական գմբեթի աշտարակը պահող կամարների ու կամրջասյունների տակ ավարտվող չորս բարձր գլանաձև որմնախորշերով վեր սլացող զծերի ամբողջությամբ եկեղեցին թողնում է ազդեցիկ տպավորություն: Լույսն ընկնում է հիմնականում գմբեթի աշտարակի պատուհաններից, քանի որ արսիղի արտաքին պատերի նեղ պատուհանները շատ քիչ լույս են ներս թողնում: Գլխավոր մուտքն արևմտյան արսիղում է, պարզ է՝ այնտեղ պատուհան չկա: Հռիփսիմեի աճյունը ամփոփված է արևելյան արսիղի տակ, մատուռում:

7-րդ դ. պատմիչ Սեբեոսի վկայությամբ եկեղեցին ներկայիս տեսքով կառուցվել է 618 թ. Կոմիտաս կաթողիկոսի կողմից: Սակայն Ազաթանգեղոսն (5-րդ դ.) այս վայրում եկեղեցի է հիշատակում: Մնում է հստակեցնել ի՞նչ է արել Կոմիտասը, հին եկեղեցի՞ն է նորոգել, թե՞ նոր է կառուցել: Ծարտարապետական այս ոճի եկեղեցիներ շատ կան Հայաստանում և Վրաստանում<sup>3</sup>: Սակայն Հռիփսիմեի եկեղեցին իր արտաքին ու ներքին չափերով ունի միաժույլ և ամփոփ այնպիսի ներգործություն, որ չունեն մյուսները: Ծարտարապետական այս հասուն մտահղացումը կարող է միայն երկար զարգացման արգասիք լինել:

Նույն ժամանակ եկեղեցուն մեզ հետ նոր ամուսնացած մի գույզ կար Երևանից: Երիտասարդ աղջիկն աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ: Ամուսինները եպիսկոպոսի մոտ կիրականօրյա այցելության էին եկել: Ալիքաձև, սպիտակ մորուրով պատվարժան այս ծերունին և դեռատի գեղեցկուհին մարմնավորում էին կյանքի խորիմաստությունն ու կենսասիրությունը իրենց հակադրության մեջ:

Հայ ժողովրդի պատմական անցյալով տպավորված՝ արևի մայր մտնելու հետ ճանապարհ ընկանք և անցնելով նախ մշակված դաշտերի ու անապատի սահմանագլխով, ապա Ջանգվի ձորի այգիներով՝ հասանք Երևան:

<sup>3</sup> Հմնտ. Մարտիրոսի, նույն տեղը, հ. 1-ին, էջ 84 և հաջորդները, էջ 93 և հաջորդները:

Մեր առաքելությունը Հայաստանում մոտեցավ ավարտին: Այս կարճատև այցի ժամանակ հնարավորին չափ ուսումնասիրեցինք նոր հողերի մշակման վերաբերյալ բոլոր նախագծերը՝ նախընտրելով առաջնահերթ իրագործելի ծրագրերը: Այս ընթացքում բազմաթիվ հանդիպումներ ունեցանք գյուղատնտեսության կոմիսար Երզնկյանի, կառավարության և կառավարական հանձնախմբի հետ: Մեր կատարած հետազոտությունների արդյունքներն ի մի բերելով՝ ներկայացրինք հետևյալ առաջարկը:

Խան ու խոպան հողերի ոռոգման, չորացման ու մշակման վերաբերյալ բոլոր նախագծերը մեր կարծիքով իրագործելի են և պետք է աստիճանաբար կյանքի կոչել: Սակայն գտնում ենք, որ առայժմ աննպատակահարմար է ձեռնամուխ լինել այսպես կոչված Սարդարապատի դաշտի ոռոգման ու մշակման ամենամեծ նախագծի իրագործմանը, չնայած այն հնարավորություն կտար յուրացնել շուրջ 43000 դեսյատին նոր հողեր: Ինչպես արդեն նշել ենք, դա շատ քանակ և շատ ժամանակ խլող ձեռնարկ է: Ամբողջ ծախսը կազմում է 15—20 միլիոն ռուբլի ոսկով, իսկ շինարարությունը կուսի ամենաքիչը երեք տարի: Հակառակ դրան, կարծում ենք, որ դրերի ոռոգման, Կարասուի մերձակա ու Ջանգիբասարի հողերի չորացման և ոռոգման նախագծերը համեմատաբար ավելի հեշտ ու արագ իրագործելի են, քանի որ առանձնապես շատ ծախս չեն պահանջում: Խորհուրդ ենք տալիս նախ ուսումնասիրել մեզնից նախագծի իրագործման որևէ փորձ: Ըստ մեր հաշվարկների այս եղանակով կարելի է առնվազն 30000 դեսյատին (33000 հա) բերրի հող յուրացնել, որով 2500 մարդ (նույնիսկ ավելի) իր հացը կվաստակի: Հուսով ենք, որ եթե մեզ հաջողվի այդ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութական միջոցները փոխառության ճանապարհով հայթայթել, ապա Հայաստանի կառավարությունը նոր հողերի վրա կարող է տեղավորել ամենաքիչը 15000 հայ փախստական, որ կբերենք Եվրոպայից:

Առավել շահավետ է հնարավորին չափ շուտ սկսել խոնավ հողերի չորացման աշխատանքները, որոնք ավելի հեշտ իրագործելի են և կնպաստեն դողերոցքի տարածման զգալի նվազմանը: Առաջարկում ենք նաև, որ ինչքան հնարավոր է մեծ թվով հայ փախստականներ Եվրոպայից ընդգրկվեն շինարարական աշխատանքների մեջ: Կարծում ենք՝ այս կերպ գործը ձեռնարկելով՝ ամենաքիչը 2000 փախստական իրենց ընտանիքներով անմիջապես կտեղավորվեն, իսկ կարճ ժամանակ անց նրանց թիվը կկրկնասպաստակվի:

Այս ամենը բավականին պարզ էր, և մենք լիովին համաձայնության եկանք Հայաստանի կառավարության հետ: Այժմ արդեն մեր առաջ ծանրացած էր ամենադժվար հարցը. որտեղի՞ց հայթայթել ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ միջոցներ: Ըստ մեր ձեռքի տակ եղած նախահաշիվների, խոնավ հողերի չորացման աշխատանքների, ջրանցքների, դրերի ու խոնավ հողերի ոռոգման ամբողջ ցանցի կառուցման համար պահանջվում է ամենաքիչը 6 միլիոն ռուբլի ոսկով: Դրան ավելացրած նաև նոր հողերի վրա փախստականներին տեղավորելու և նրանց գոյությունն ապահովելու համար առաջին օգնություն ցույց տալու նպատակով:

տակով կապահանջվի որոշ գումար, որը, կարծում ենք, կկազմի շուրջ 3 միլիոն ռուբլի: Ստացվեց ուրեմն 9 միլիոն ռուբլի ոսկով կամ կլոր 20 միլիոն մարկ: Այդ գումարը կարելի է ձեռք բերել երեք ճանապարհով. միջազգային հանրության մասնավոր նվիրատվությունների, եվրոպական և ամերիկյան կառավարությունների ավանդատու ծառայությունների և վերջապես փոխառության միջոցով: Ելնելով Եվրոպայի տնտեսական ներկա վիճակից՝ կարծում ենք, որ անհուսալի է մեծ գումարներ ձեռք բերել անհատ անձանց և կառավարությունների նվիրատվությունների միջոցով, ուրեմն միակ հավաստի աղբյուրը մնում է փոխառությունը:

Ես պատմեցի Հունաստանում հույն փախստականներին տեղավորելու համար փոխառություն վերցնելու նպատակով մեր գործադրած ջանքերի մասին, որ չնայած մեծ դժվարությամբ, սակայն գլուխ եկավ միայն Ազգերի ընկերակցության օժանդակությամբ: Իմ կարծիքով նմանօրինակ նպատակի համար փոխառություն ձեռք բերելու խնդիրը կլուծվի մույն ճանապարհով՝ այս դեպքում արդեն Հայաստանում հայ փախստականներ տեղավորելու համար: Սակայն այստեղ մենք կանգնած ենք կնճռու մի հարցի առաջ: Խորհրդային կառավարությունները մերժում են ամեն տեսակի կապ Ազգերի ընկերակցության հետ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ մենք հակառակ այդ կառավարությունների ցանկության չենք կարող նման առաջարկ անել Ազգերի ընկերակցությանը: Ի դեպ դժվար է գերազանահատել նաև փոխառություն վերցնելու հեռանկարները, քանի որ որոշո՞ղն այստեղ նախ և առաջ կլինի երաշխիքը, որ կտրվի փոխառության դիմաց:

Հայաստանի կառավարությունը միանգամայն համամիտ է մեզ հետ, որ փոխառությունն է հարցի ճիշտ լուծումը: Նա համաձայն է նաև փոխառություն ստանալ մեր առաջարկած եղանակով, եթե իհարկե պայմանները ձեռնտու լինեն, իսկ մարման ժամկետը՝ երկար, ամեն դեպքում 10 տարուց ոչ շուտ: Դա մեզ համար ճիշտ և հաղթահարելի ճանապարհ է: Փոխառությունը ծառայելու է բացառապես վերը նշված նպատակներին: Կառավարությունը հավաստիացնում էր, որ փոխառություն ստանալու բանակցություններում Ազգերի ընկերակցության անհրաժեշտ մասնակցության հարցը նույնպես լուծելի է՝ խոստանալով այդ մասին խոսել Մոսկվայի կառավարության հետ: Երաշխիքի հարցում կառավարությունը հանդես եկավ այն տեսակետով, որ նախագծով յուրացվող նոր հողերն այսուհետ կկազմեն փոխառության գումարի համարժեքը, և հողից ստացված եկամուտով կարելի է համեմատաբար կարճ ժամկետում մարել փոխառությունը: Կառավարությունը պատրաստ էր նաև ընդառաջել. նոր հողերի վրա բնակեցվող փախստականներից գանձվող հարկերն ու տուրքերը սահմանել միայն փոխառության տոկոսների ու մարման վճարում՝ մինչև պարտքի վերջնական ծածկումը: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր ժամանակին մարել փոխառությունը: Հարկ եղած դեպքում Մոսկվայի կառավարությունը նույնպես պատրաստ էր երաշխիք տալ և ավանդ դնել ռուսական պետբանկում:

Հայաստանի կառավարությունը այս միջոցներով Հայաստան տեղավորված փախստականներին խոստանում էր հետևյալ արտոնությունները. գույքի տեղավորում առանց մաքսի, խորհրդային հանրապետությունների սահմաններից երկաթուղով անվճար փոխադրում, հարկերից ազատում (բացառությամբ ի-

հարկե փոխառության մարման հարկից), այնուհետև նոր հողերի վրա բնակություն հաստատելուց հետո մեկ կամ երկու տարի ազատում ամեն տեսակի զինվորական ծառայությունից, որը կխանգարեր գյուղատնտեսական աշխատանքներին:

Մրանով Հայաստանի կառավարության և մեր միջև ձեռք բերվեց կատարյալ համաձայնություն նախագծի և նրա հետագա իրագործման վերաբերյալ:

Ենթադրենք, այստեղից ստացվող հասույթը համապատասխանում է դոերի համար հաշված օրինակին, որի նախահաշիվը, ի դեպ, շատ ցածր է կազմված, ապա ռոզգման և մշակման համար նախատեսված հողերից տարեկան կտացվի առնվազն հետևյալ համախառն եկամուտը.

Բուսատեսակ	Մշակելի մակերես		Հա-ից ստացվող բերքը կգ-ով	Տարվա ամբողջ բերքը կգ-ով	Վանառքի գինը 1կգ-ը ռուբլով	Տարեկան բերքի համախառն արժեքը ռուբլով
	Դեռայտիմով	Հա-ով				
Աշնանացան	9000	9900	1340	13266000	0.17	2227500
Գարնանացան	3000	3300	1340	4422000	0.09	405000
Բամբակ	11200	12320	1040	12813000	0.31	3920000
Բանջարեղեն	1500	1650	17870	29403000	0.05	144000
Պտղատու						
այգիներ	680	748	9680	7240000	0.18	1326000
Խաղողի այգիներ	1620	1782	5210	9300000	0.5	1417500
Առվույտ	3000	3300	5960	19670000	0.12	2400000
Ընդամենը	30000	33000				13136000

Այս նախահաշիվով տարեկան բերքի համախառն արժեքը յուրացվող հողի յուրաքանչյուր դեռայտինից կազմում է միջին հաշվով 440 ռուբլի (հա-ից 400 ռուբլի), սա դեռ նվազագույն հաշվարկներով: Եթե հաշվի առնենք նաև դաշտային աշխատանքների, գործիքների, լծկանների և այլ բաների համար պահանջվող ծախսերը, ինչպես նաև գյուղացու և նրա ընտանիքի անդամների աշխատուժը, որը կազմում է համախառն արժեքի մոտ կեսը, ապա դեռայտինից կստացվի 220 ռուբլի մաքուր եկամուտ: Եթե մեկ շնչին հասնի մեկ դեռայտին հող, և ենթադրենք՝ յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով բաղկացած է հինգ շնչից, ապա մեկ ընտանիքին հասնում է 2200 ռուբլու (կամ շուրջ 4800 մարկ) համախառն եկամուտ, ընտանիքի անդամների աշխատավարձը հանած՝ մնում է 1100 ռուբլի (2400 մարկ) մաքուր շահույթ: Հայաստանում սովորական, ոչ որակյալ բանվորը տարեկան վաստակում է հազիվ 300 ռուբլի: Նոր հողերի վրա հաստատվող գյուղացիները ըստ այդմ կարող են տարեկան համախառն եկամուտի

20 տոկոսը հանգիստ վճարել ոռոգման համար մինչև փոխառության մարումը: Դա ավելին է, քան անհրաժեշտ է պարտքը մարելու համար: Լիիրավ կարող ենք մեր առաջարկած 20 միլիոնի դիմաց պահանջել 30 միլիոն մարկ փոխառություն:

Անշուշտ, 5—6 տարի է պետք, որ նոր յուրացված հողերը ամբողջական արտադրանք տան: Առաջին երկու տարիները կանցնեն ջրանցքի շինարարության և այլ աշխատանքների վրա, իսկ ջուրը տեղ հասնելուն պես այլ բան չի պահանջվում, քան հողը վարելն ու ցանելը: Երրորդ տարվա մեջ կարելի է սպասել ավելի քան 8 միլիոն ուբլու համախառն եկամուտ, չորրորդ տարում՝ 10 միլիոն, հինգերորդ տարում՝ 12 միլիոն, վեցերորդ տարում՝ ավելի քան 13 միլիոն:

Սա խոսում է այն մասին, թե որքան շահավետ է նախագծի իրագործումը, և որ փոխառության մարումը՝ նոր հողերից ստացվող եկամուտների հաշվին 15-ամյա ժամկետում, հնարավոր է:

Եթե կարողանանք անհրաժեշտ միջոցներ հայթայթել այս ծրագիրը հնարավորին չափ արագ իրագործելու համար, ապա փախստականների մի մեծ խումբ, որ ներկայումս Հունաստանում և Կոստանդնուպոլսում անգործության են դատապարտված, կտեղափոխենք Հայաստան: Այստեղ նրանք կմասնակցեն հողի չորացման և ջրանցքի շինարարության աշխատանքներին: Այս ճանապարհով իրենց ազգականների հետ 4000 փախստական տեղավորելով՝ օգնած կլինեն շուտափույթ բնակեցման սպասող փախստականների մեծ մասին:

Հասկանալի է, որ նոր հողերի մշակումը ժամանակակից միջոցներով ու այս եղանակով ոռոգվող հողերի ընդլայնումը մեծ նշանակություն կունենան նաև երկրի ընդհանուր զարգացման համար, կաշխուժացնեն կյանքը՝ դառնալով նոր գործընթացների ու նվաճումների աղբյուր: Սա հողի հետ տարվող աշքատանքների սկիզբն է միայն. կզարգանա նաև արդյունաբերությունը, որը նորանոր մարդկանց կապահովի աշխատանքով: Սրանով առաջին քայլերը կարվեն ազգային հայրենիի հիմնադրման, որ հայ ժողովրդին շարունակ խոստանում էին արևմտյան տերությունները, և որի ստեղծումը նրանց պարտքն էր: Վերջապես, բերրի հողերի յուրացումով կապահովվի բազմաշարքար այս ժողովրդի գոյությունը՝ ստեղծելով կյանքի նպաստավոր պայմաններ: Հուսով ենք՝ մեծ տերությունների կառավարությունները սիրով կատարեն այս ծրագրերի իրագործման գործընթացին, որով ոչ մեծ զոհողության գնով կմարեն հայերի հանդեպ ունեցած իրենց պարտքի մի չնչին մասը:

### ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Շարունակ չէր հաջողվում այցելել Երևանից հյուսիս-արևելք՝ Չանգվի ձորում կառուցվող նոր էլեկտրակայանը: Հունիսի 30-ին կեսօրից առաջ ավտոմեքենաներով մեկնեցինք այնտեղ: Աշխատանքների ընթացքը հասել էր մինչև պատերի կանգնեցնելը: Զորով փոքր-ինչ վեր բարձրացանք՝ նոր ջրանցքը տեսնելու: Այն արդեն պատրաստ էր, և կարող էինք դիտել: Զրատարը տեխնիկա-

պես հոյակապ կառույց էր, ամբողջ շինությունն ինքնին թողնում էր լուրջ և լավ կատարված աշխատանքի տալավորություն: Չարմանալի էր, որ բետոնի շաղախի խիճն ու ավազը, պարկերով էշերին բարձրացնելով, բերել էին ձորով անցնող երկար ճանապարհով: Այս արահետում իրար էին հանդիպել անցյալն ու ապագան: Զորում գտնվող ավազահանքերի մոտակայքում, որտեղից խիճն ու ավազ էր հանվում, հանգիստ առանք մի գով ու պաղ աղբյուրի մոտ, որ հոսում էր ստվերախիտ ծառերի կողքով, քարերի միջով: Մարդկանց մի խումբ՝ վերնաշապիկներն ու գլխարկները ծիլաւնով ու թթով լիքը, որ քաղել էին մոտակա սարալանջերի ծառերից, մոտեցավ մեզ, և մենք հրաշալի ճաշկերույթ արեցինք:

Երևան տանող ճանապարհին կանգ առանք ֆաբրիկա հիշեցնող մի շենքի առաջ: Մտանք ընդարձակ բակը, ուր մեզ ողջունելով ընդունեց բարեհամբույր մի հաղթ տղամարդ՝ հավանաբար հիմնարկության տնօրենը: Լայն աստիճաններով ցած իջնելով՝ նա մեզ առաջնորդեց ընդարձակ մի մառան: Մենք գտնվում էինք գիմու «Արարատ» պետական գործարանում, ուր արտադրվում էր գինի և կոնյակ: Ծանոթանալով մենք պատկերացում կազմեցինք գործարանի արտադրողականության մասին: Վերջին տարվա (1924 թ.) արտադրանքը կազմել է 30000 հեկալիտր գինի և 7400 հեկալիտր օղի, որ արտահանվել է Ռուսաստան և Արևելքի հարևան երկրներ: Նոր-նոր էի գլխի ընկնում, թե ինչ էր սա, երբ հասկացա, որ ամուշադրությունն այս ծանոթության հանդեպ վտանգավոր ավարտ կունենա մեզ համար: Անցնում էինք արահներով, ուր շարված էին կոնյակի հսկա տակառներ, և ամեն տեղ մեզ առաջարկում էին համտես անել: Ես զգուշանալով խմում էի կում-կում. իսկապես հրաշալի խմիչք էր: Հետո հերթը հասավ ընտիր տեսակներին, սրանք էլ հրաշալի էին: Մեզ հրամցրին նաև բոլորովին այլ, հատուկ մի հին կոնյակ: Արդեն անհնար էր միայն կումով բավարարվել: Այնուհետև անցանք հսկա մառաններով, ուր գինին տակառների մեջ կամ եռում էր, կամ արդեն պահեստավորված էր: Դարձյալ համտեսումներ հայկական տարբեր տեսակի սպիտակ ու կարմիր գինիների: Բոլորն էլ ընտիր էին, հատկապես մի հին կարմիր գինի այնքան հոյակապ էր, որ դժվարացավ արդեն բաժակից կում անելը: Խմում էին մեր կենացը, մենք էլ պետք է պատասխանեինք և այսպես խմում էինք ու խմում: Հերթը հասավ հոյակապ մի գիմու՝ ընտրագույն մի մադերայի, որից հետո ճաշակեցինք պորտվեյն՝ լավագույն մուշկերից մեկը: Հայկական հյութեղ խաղողը մնան գինիների բարձրորակ հումք է: Վերջում մատուցեցին մուսկաթ, չնմ հիշում երբևէ խմած լինեմ մնան մի բան: Վերջնականապես տալավեցին կում-կում խմելու բոլոր ճիգերը:

Տրամադրություններս բարձր՝ թանկարժեք գանձերով լի գով մառաններից դուրս եկանք արտաքին աշխարհ և կրկին թաղվեցինք կեսօրվա այրող շոգի մեջ:

Երեկոյան կառավարությունը մեր պատվին մի գեղեցիկ խնջույք էր կազմակերպել Սարդարի այգում, Չանգվի ձորի մյուս կողմում, Երևանի բերրի դենդիմաց: Այգին հնում պատկանել է պարսից սարդարին, որը մինչև 1828 թ., պարսկական տիրապետության շրջանում Երևանի նահանգի փոխարքան կամ նա-

հանգապետն էր և բնակվում էր քերդում: Հրաշալի այգի էր: Պարսիկները հայտնի են պարտեզների և արհեստական ռոտոման կառուցապատման յուրովի հմտությամբ: Ռուսների տիրապետության շրջանում այգին ևս դառնում է մասնավոր սեփականություն: Խորհրդային Հանրապետության կառավարությունն ազգայնացնում է այն և մերձակա այգիների հետ վերածում հասարակական գրոսայգու, որ պահպանվում էր պետական միջոցներով: Խընջուլը կազմակերպված էր նախկին սեփականատիրոջ տանը: Նա հարուստ հայերից էր, որ սովորաբար ձմեռն իր ընտանիքի հետ անց էր կացնում Օդեսայում, ամռանը և լազնանը՝ այս տանը և այն շրջապատող հրաշալի այգում: Հեղափոխությունը զրկել էր նրան իր ողջ ունեցվածքից, սակայն նա չէր կարողացել բաժանվել իր ծառերից ու ծաղիկներից: Այժմ նա ամբողջ տարին ապրում է իր նախկին տան նկուղային հարկի երկու սենյակում և իր երբեմնի սեփականությունը հանդիսացող այգու այգեպանն է: Նա մույնպես ներկա էր խնջուլքին, և ես առիթ ունեցա խոսելու նրա հետ: Ոչ ոք չէր հիշում այլևս, որ նա տան և այգու տերն է եղել, աշխատում էր մյուս ծառայողներին հավասար:

Հաջորդ երեկոյան (հինգշաբթի, հուլիսի 1) տեղի ունեցավ հրաժեշտի հանդիսություն: Այն սկսվեց համերգով, հնչեց Գրիգի Սոլ-միմոր կոնցերտը, այնուհետև՝ հայ երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի մի քանի գործեր. հայկական ժողովրդական երգերի վայրիացիաներ լարային նվագախմբի կատարմամբ. դաշնամուրի մոտ էր կոմպոզիտորը, ապա «Առ Հայաստան» ստեղծագործությունը՝ հրաշալի թավջութակահար Այվազյանի կատարմամբ, դաշնամուրով նվագակցում էր կոմպոզիտորը: Վերջում հնչեցին մի նախերգ և մի պարեղանակ Սայաթ-Նովայից (1714--1794), ինչպես նաև Սպենդիարյանի կոնցերտներից մեկը երկու ջութակի և դաշնամուրի համար, որի մոտ էր կոմպոզիտորը: Հրաշալի ստեղծագործություններ էին, և ունեցան հոյակապ կատարում: Ինձ ասացին, որ Հայաստանում Գրիգը շատ է ընդունված և ազգակցական կապ կա նրա ու հայկական երաժշտության միջև: Նկատի ունենալով նոր հնչած հայկական երաժշտությունը՝ դա կարելի է մասամբ ընդունել: Համերգի վերջում ելույթ ունեցավ ժողովրդական պարերի տղամարդկանց խումբը, որի կատարման խրոխտ ռիթմն ու ճապուկ հմայքը գրավեց մեզ: Կովկասյան կրակոտ պարերը ժողովրդի կենսունակության արտահայտությունն են:

Համերգից անմիջապես հետո տրվեց ճոխ ընթրիք, որին մասնակցում էին «Հայաստանի օգնության կոմիտեն», համալսարանի պրոֆեսորներ, արվեստագետներ և շատ ուրիշներ: Հնչեցին ոգեշունչ ճառեր, մեղմ երաժշտություն՝ հայկական մի նվագախմբի կատարմամբ, շնորհաշատ մի տիկին և հաճելի մի բարիտոն երգեցին հայկական երգեր: Մասամբ հին հայկական ժողովրդական երգեր էին դրանք՝ մի տեսակ թախծով պարտրված, որ հիշեցնում էին պարսկական մեղեդիներ: Երգերից մեկը նվիրված էր մի հայ թագավորի, որ հաղթական մտնելով Վրաստան՝ անցնում է Կուր գետը, ափին հանդիպում է մի երիտասարդ աղջկա, որի եղբորը սպանել էր կովում: Աղջիկը կանգնեցնում է նրա ձին և ասում.

«Դու սրով հաղթեցիր եղբորս, ես աչքերով կհաղթեմ քեզ»: Աղջկա սև աչքերն ավելի զորեղ են լինում, քան թագավորի սուրը, և աղջիկը Հայաստան է գալիս որպես նրա թագուհին:

Տղամարդկանց պարի խմբի ղեկավարը ճկուն շարժումներով ներկայացրեց մի մենապար, որ շատ նման էր շուրանդակյան պարերին: Վերջում ազգային մի պարով հանդես եկավ փոխնախագահի գեղեցիկ կինը: Նա պարում էր հեքիաթների հիասքանչ արքայադաստեր մամն. վայրի կենդանիների ճկունությունն ունեցող նրա շարժումները, վեր պարզած քնքուշ, կլորավուն բազուկները, շորորուն սրունքները, ամուր, բարեձև ոտքերը, որ հագիվ էին հավվում հասակին. անհա Արևելքի ցնորքներից մեկը: Ուշ էր արդեն, երբ լուսնի հեքիաթային լուսի ուղեկցությամբ վերադարձանք հյուրանոց:

Ինձ շարունակ հանգիստ չէր տալիս այն միտքը, թե բոլորովին վերջերս այս ժողովուրդը ինչ արյունոտ ոճրի ենթարկվեց, որ բաժին հասավ ժողովրդի գրեթե յուրաքանչյուր անդամին: Դեռ երկար իմ ներսում հնչում էր հայկական ժողովրդողական երգերի մորմոքը: Հիշեցի բարեկամիս՝ Կուրդինյանի բառերը: Այսօր երեկոյան համերգում մի երգի ավարտից հետո նա ասաց. «Կարծում եք, թե մի ժողովուրդ, որ իր հոգում ունի այսպիսի երգեր, այսպիսի երաժշտություն, կարող է երբևէ մեռնել»: Այո, նա իրավացի է:

Հաջորդ երեկոյան արդեն գնացքը մեզ տանում էր հարթավայրով: Մեր ետևում մնացին Երևանը, Չանգվի ձորն ու գեղեցիկ այգիները: Հարավում Արարատն էր անամպ, իր ողջ վեհությամբ: Լայնանիստ, ձյունե գագաթը փայլվում էր մայր մտնող արևի շողերից: Տեղանքի վրա իշխող նրա պատկերն էր, որ առաջինը ողջունեց մեր գալուստը, և այսօր երեկոյան վերջինն է հրաժեշտ տալիս մեզ: Հրաժեշտի համար նա հանել էր իր ամպե հսկա գլխադիրը:

Արևը բոցավառ կարմիր ներկելով, թաքնվեց ալիքածև տեղանքի ետևում. հասանք Սարդարապատ: Մոթն ընկնում էր, աստղազարդ երկնքում փայլում էր լուսինը: Նրա արծաթափայլ լույսն ուղեկցում էր մեզ բերրի դաշտերի և անայի անապատների միջով: Բարձրում աղոտ նշմարվում էին լեռների ուրվագծերը: Լուսնաթաթախ ամպերի մի շարան նավում էր բարձրաբերձ լեռնաշղթաներից էլ վեր, անսահմանության մեջ: Շարունակ մեզ հետ էր այս ժողովրդի հարափոփոխ ճակատագիրը, որի անկանխատեսելի հետևանքներով լեցուն պատմության համար հնում որպես թատերաբեմ ծառայել է Արարատի և Ալազյազի ստորոտներին փոխված այս հարթավայրը:

Որքան պատերազմներ, որքան զրկանք, տառապանքի ու թշվառության անվերջանալի շարան, մեկը մյուսին հաջորդող հարվածներ և որքան քիչ հաղթանակի բերկրանք:

Անշուշտ, մարդը մաքրագործվում է տառապանքով, եթե իհարկե նա բավականին ուժեղ է այն կրելու համար: Կա՞ մեկ այլ ժողովուրդ այս ընդարձակ հողագնդի վրա, որ այսչափ տառապած լինի և չոչնչացված, ինչպես հայ ժողովուրդը, բայց համուն ինչի՞: Այս ժողովրդին վերջնականապես լքեցին և դավաճանե-



ցին բոլոր նրանք, ովքեր ճշմարիտ արդարադատության անունից թանկ ու սուրբ խոստումներ էին տալիս:

Չեզ են դիմում, քաղաքական ու պետական գործիչներ, դուք պետք է մի կողմ դնեիք բարձրագույն բառերը՝ մարդկանցից չխլելու հավատի վերջին կայծը, որ, հակառակ ամեն ինչի, որպես սրբություն առկա է յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ: Պատուհանից խաղաղ ու մտախոհ ժպտում է լուսինը: Խեղճ մարդ արարած, արդարությո՞ւն ես փնտրում դու, բայց որտեղ կգտնես:

## X

### ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայաստանի պատմությունը ներկայացված է հետևյալ աշխատություններում. H. F. B. Lynch: Armenia, Vol. I և II London 1901, «Armenia» Բրիտանական հանրագիտարան, 2-րդ հրատարակություն, 1910, J. de Morgan: Histoire du peuple Armenien, Paris 1919: Age Meyer Benedictsen: Armenien, Kopenhagen 1925, տե՛ս նաև Haik Hohannissian: Das literarische Portrait der Armenier, Jnaug — Dissert, Leipzig 1912:

H. F. Helmolt: Weltgeschichte, h. 5, H. Zimmerer: Armenien, 1905, և H. Winkler: Armenien, 1901, h. 3:

Հայաստանի պատմության նախահայկական ժամանակաշրջանի մասին տեղեկություններ կան Լինչի Armenia (Vol. II, 1901) և հատկապես Կ. Ֆ. Լեման-Հաուսիի Armenien einst und jetzt (h. 1, 1909, h. 2, մաս 1, 1926) աշխատություններում նաև 2-րդ հատորի 2-րդ մասում, որը դեռ անտիպ է: Տե՛ս նույն հեղինակների հետևյալ գործերը. E. G. Klauber և K. F. Lehmann-Haupt: Geschichte des alten Orients, 3-րդ հրատարակություն, 1925, L. M. Hartmann: Weltgeschichte, h. 1:

Հայաստանի պատմության հին շրջանի աղբյուրներից կարելի է նշել Ագաթանգեղոսի՝ նախ և առաջ որպես քրիստոնեության տարածման վավերագիր, գրված մոտ 452—456 թթ. Ք. ժ. հ., որոշ հատվածներ նաև ավելի վաղ, Փավստոս Բուզանդի՝ գրված 395—416 թթ. Ք. ժ. հ., Մովսես Խորենացու՝ գրված 5-րդ կամ 6-րդ դ. (ոմանց կարծիքով նաև ավելի ուշ), Տղիշեի՝ գրված 5-րդ դ. վերջին, Դավաթ Փարպեցու՝ գրված 505—510 թթ., Մերետսի՝ 7-րդ դ. և այլոց աշխատությունները:

Ուշ շրջանի պատմության մասին տե՛ս A. N. Mandelstam, La Societe des Nations et les Puissances devant le Probleme Armenien, Paris 1925, Johannes Lepsius: Deutschland und Armenien, 1914—1918, Դիվանագիտական վավերագրերի ժողովածու, Potsdam, 1919:

### ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՑՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցնում է երթը սերունդների  
թավալգոր, խմբերով հոծ,  
անվերադարձ, մահախուճապ  
ժամանակի ծույլ շարժման մեջ.

Ինչի՞ համար է ցավի ու տառապանքի խարույկն անշեջ:

### Յ. Պ. Յակոբսեն

Հայաստանում մարդու ամենահին բնակության հայտնի վկայությունը մի կմախք է, որ կայծքարի հետ հայտնաբերվել է 1925 թ. Չանգվի ձորում էլեկտրակայանի շինարարության ժամանակ 6 մ խորությունից<sup>1</sup>: Պրոֆեսոր Քալանթարի կարծիքով՝ Երևանում հայտնաբերված կմախքը վերաբերում է վերին հին քարի դարին և պատկանում է ցայտուն երկայնագանգերի Աուրիգնաս տեսակին, որ գտնվել է Բոլյունում (նաև՝ Գալի Գիլիում): Հայ հնագետները Ալազյա գետի հրաբխի (1924 թ.)<sup>2</sup> և Բայազետի շրջանում՝ Սևանա լճի մոտ (1926 թ.), հայտնաբերել են մշակութային մնացորդների մեծ քանակություն, որ վերաբերում է մի քանի հազարամյակ ավելի ուշ շրջանի, այսինքն միջին քարի դարին (մեզոլիթ): Այնտեղ գտնվել են քարե տներ, ամրոցներ, քարայրներ ու դամբարաններ: Դրանք պատկանել են ցայտուն արտահայտված երկայնագանգ մի ժողովրդի, որն ուշ քարի դարում (մոտ 3000 թ. Ք. ժ. ա.), գուցե և դրանից առաջ, բրոնզի դարի ամբողջ ընթացքում և հավանաբար դրանից հետո մինչև 2-րդ հազարամյակի կեսերը Ք. ժ. ա., բնակվել է այս տարածքում: Արդեն քարի դարում երկայնագանգ այդ ժողովուրդն ուներ համեմատաբար բարձր մշակույթ, զարգացած ոռոգման համակարգ և ջրի պաշտամունքի տարածման շրջա-

<sup>1</sup> Հայաստանում քարի և բրոնզի դարերին վերաբերող կարևոր հայտնագործությունների և հնագիտական հետազոտությունների նորագույն արդյունքների մասին իմ այս և հետագա հաղորդումների համար հիմնականում պարտական եմ իմ բարեկամ, Երևանի համալսարանի պրոֆեսոր Հ. Բեղեյանի՝ ինձ ուղարկած գրավոր նյութերին: Նյութերը նրան են տրամադրել իր գործընկերները՝ Էջմիածնի գիտական ինստիտուտի գրադարանի աշխատակից Ս. Տեր-Հակոբյանը, Երևանի պետական թանգարանի տնօրեն Ե. Լալայանը, Երևանի համալսարանի հնագիտության պրոֆեսոր Ա. Քալանթարյանը: Ընդհանրապես եմ այդ պարտքներին նշանակալի օժանդակության համար:

<sup>2</sup> Կմախքի չափումները կատարել է պրոֆեսոր Վիչնևսկին՝ Լենինգրադից: Շուտով կիրառարակվեն Բալանթարի հետ նրա կատարած աշխատանքի արդյունքները:

<sup>3</sup> Հմտ. Ա. Քալանթար, Քարի դարը Հայաստանում, «Նորք» ամսագիր, թիվ 5, 6 (շուտով կհրատարակվի անգլերեն թարգմանությամբ):

նում յուրովի երկրպագում էր «վիշապին»՝ ձկնակերպ հսկային, որ համարվում էր ջրի աստվածություն: Այդ ժողովուրդը թողել է նաև վիմագրություններ՝ դեռևս անձանոթ հիերոգլիֆներով: Հայ գիտնականներին հաջողվել է վերծանել համեմատաբար ուշ շրջանի արձանագրությունները<sup>4</sup>:

Երկայնագանգ ժողովուրդն այս բրոնզի դարում ունեցել է բարձր զարգացած և ըստ երևույթին ինքնատիպ մետաղագործություն, միայն հարավային սահմանամերձ տարածքներից գտնված այդ շրջանի առարկաները կրում են Միջագետքի ազդեցությունը:

Հյուսիսում Տիգրիսի վերին հոսանքից արևելք ընկած լեռնաշխարհը բաբելոնացիները կոչում էին Կուտի, որի բնակիչները 2500 թ. Ք. ծ. ա. արդեն քաղաքականապես միավորված էին մեկ թագավորի տիրապետության տակ: Դրան է վերաբերում թագավորներից մեկի թողած վավերագիրը այդ շրջանից<sup>5</sup>:

Բաբելոնացիներն այդ լեռնաշխարհում՝ Ատարխասիսում են իջեցրել Նոյին կամ ըստ Բերոսոսի՝ Քսիսուրթին, իր տապանով, երկիրը կոչելով Նիսիրյա, այնինչ ըստ հրեական առասպելի, որ շարադրված է Մովսեսի առաջին գրքում, տապանն իջել է Արարատի վրա<sup>6</sup>: Կուտիները նվաճեցին Բաբելոնը, որն այնուհետև 124 տարիների ընթացքում (2447—2323)<sup>7</sup> ունեցավ 21 կուտիական թագավոր: Կուտին տեղադրվում է հետագա Ուրարտուի և Հայաստանի հարավ-արևելյան մասում և նրա մերձակայքում:

Ավելի քան հազար տարի անց ասսուրական արձանագրություններում հիշատակվում է դեպի հյուսիս ընկած մի երկիր, որ տարածվում էր Ուրմիա լճից արևմուտք: Այնտեղ բնակվում էին նաիրյան ցեղեր, որոնց դեմ Ասորեստանի թագավորներ Սալմանասար Առաջինը և նրա որդի Թուկուլթինիուրտան Առաջինը 13-րդ դ. սկզբին Ք. ծ. ա. պատերազմներ են մղել: Թզլաթպալասար Առաջինը 1110 թ. Ք. ծ. ա. Մանազկերտի դաշտում, Վանա լճից հյուսիս, հաղթում է Նաիրի թագավորների միացյալ զորքին<sup>8</sup>: Հաջորդ դարերում կամ Նաիրի թագավորներից մեկն է իր տիրապետության տակ առել մյուսներից, կամ արևմուտքից ներս խուժած մեկ այլ նվաճող ժողովուրդ, քանի որ Ասորեստանի Ասուրնասիրպալ թագավորը (835—860 թթ. Ք. ծ. ա.) իր մի վավերագրում առաջին անգամ հիշատակում է Ուրարտուն (Աստվածաշնչի Արա-

<sup>4</sup> Ըստ պրոֆ. Քալանթարի գրավոր հաղորդումների:

<sup>5</sup> Հմմտ. Winkler in Helmolt: Weltgeschichte, h. 3, էջ 11, 126 և հաջորդները, 1901:

<sup>6</sup> Բաբելոնական ջրհեղեղի մասին հմմտ. E. Suez, Antlitz der Erde, h. 1, էջ 29 և հաջորդները, 1885: Հմմտ. Գաև Klauer և Lehmann-Haupt, Geschichte des alten Orients, էջ 86:

<sup>7</sup> Հմմտ. Klauer և Lehmann-Haupt: Geschichte des alten Orients, 3-րդ հրատարակություն, էջ 92, L. M. Hartmann: Weltgeschichte, h. 1, մաս 1, 1926:

<sup>8</sup> Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, h. II, էջ 13, 1910, h. II, էջ 115 և հաջորդները, 595:

րատը) որպես պետություն Վանա լճի շրջակայքում: Վերջինս արագ հզորանալով՝ աստիճանաբար տարածվում է հետագա Հայաստանի ողջ տարածքով մեկ: Ասսուրական շատ արձանագրություններ վկայում են, որ Սալմանասար Երրորդը (860—825 թթ. Ք. ծ. ա.) պատերազմել է Ուրարտուի Արամ թագավորի դեմ:

Մեզ հասած բազմաթիվ վավերագրերում Ուրարտուի ժողովուրդն իրեն կոչում է խալդ (խալդինի)<sup>9</sup>, անունը փոխառնելով իրենց Խալդ աստծո անունից: Ամբողջ երկիրը կոչվում էր Խալդիա, այսինքն «Աստծո երկիր», իսկ մայրաքաղաքը՝ Խալդինա, այսինքն «Աստծո քաղաք»: Ժողովուրդն ուներ լավ զարգացած աստվածապետական ուղղվածություն: Տուշպան (ասսուրերեն՝ Տուրուսպա), հետագայի Վան քաղաքը լճի ափին, որ հիմնադրվել է մոտ 830 թ., դառնում է պետության մայրաքաղաքը: Սարդուր Առաջին (գուցե Երկրորդ) թագավորը քաղաքը շրջապատող հարթությունից մեկուսի վեր խոյացած լեռան վրա կառուցում է բերդ: Նա և իր հաջորդները գառիթափ մի ժայռի վրա փորել են տվել երկարատող արձանագրություններ, որոնք հաղորդում են իրենց և իրենց գործերի մասին: Պետության տարբեր վայրերից և ս գտնվել են այլ թագավորների բազմաթիվ արձանագրություններ: Սարդուրը (Երկրորդ) ասսուրական մի արձանագրության մեջ կոչվում է «Նաիրի թագավոր», նրա հաջորդը՝ Իշպուինին, նույնպես այդպես է կոչվում մի (խալդյան) արձանագրությունում, միևնույն մեկ ուրիշում հորջորջվում է «Բիաինայի թագավոր»: «Բիաինա» այն երկրի անունն է, որ հետագայում աղճատվեց «Վան» անվան մեջ: Խալդերի հաջորդ տիրակալներն արդեն իրենց կոչում էին միայն Բիաինայի թագավորներ:

Արձանագրությունները գրված են ասսուրական սեպագրերով: Ավելի վաղ շրջանի՝ Սարդուր թագավորի ժամանակների արձանագրությունների լեզուն ասսուրերենն է, հետագայինը՝ խալդերենը, կան նաև երկլեզվյան արձանագրություններ: Խալդերենը, որ քիչ ուսումնասիրված լեզու է, սակայն որով վերջին տասնամյակներին վերծանվում են շատ արձանագրություններ, պատկանում է կա՛մ իրանական, կա՛մ սեմական լեզուներից<sup>10</sup>: Այն ազգակից է միտանիների լեզվին<sup>11</sup>: Վերջիններիս նման խալդերը, թերևս նաև նախահեթիթները, պատկանում են խուբարիների խմբին և եկել են Փոքր Ասիայից

<sup>9</sup> Այս անունը չպետք է շփոթել Բաբելոնի քաղաքի սեմական ժողովրդի անվան հետ, երկու ժողովուրդները ոչ մի աղերս չունեն միմյանց հետ:

<sup>10</sup> Խալդերենի վերծանման բնագավառում առաջինը արժանի է հիշատակել Ստանիսլաս Գուլյարդին, Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Ա. Հ. Սեյսին, դոկտոր պրոֆ. Մյուլլերին, դոկտոր Վալդենար Բեյքին և պրոֆ. Կ. Ֆ. Լեման-Հաուֆֆին: Վերջին երկուսն իրենց կարևոր հայտնագործություններով կրկնապատկեցին խալդյան հայտնի արձանագրությունների թիվը:

<sup>11</sup> Միտանի անունը բացատրվում է վրացերեն մրա+անի վերջածանցով, որ նշանակում է լեռնային ժողովուրդ: Հմմտ. O. G. von Wescendonk, Über georgisches Heidentum, Leipzig 1924, էջ 34:

(Կապադովկիայից): Հավանաբար միտանդիններն են հիմնել ասսորական պետությունը, Ասորեստանի առաջին և հայտնի թագավորները կրել են միտանական անուններ<sup>12</sup>: Ինչպես արդեն նշել են, հնարավոր է ազգակցական որոշ կապ խաղղերի և վրացիների միջև: Լեման-Հաուփֆի կարծիքով խաղղերի վերնախավում առկա էին հնդեվրոպական տարրեր:

Բիախնայի թագավորները հետզհետե հզորանալով՝ որոշ ժամանակ նույնիսկ ասորեստանցիների հետ վիճարկում են նրանց «աշխարհակալ տիրապետությունը»: Ասորեստանի թագավորները լարում են իրենց ողջ ուժերը՝ պետությունը պաշտպանելու: Խաղղերի հզոր թագավորներից մեկը՝ Մենուան, ընդարձակում է պետության սահմանները դեպի հյուսիս՝ նվաճելով Արարատ լեռան հյուսիսային փեշերին փոփած Արագի հովտի մեծ մասը: Նրա որդի Արգիշտի Առաջինը 8-րդ դ. սկզբին Ք.ծ. ա. բերրի այդ հովտից փոքրաթիվ ցեղերի առաջնորդներին վտարելուց հետո, հիմնում է Արմավիր քաղաքը՝ ներկայիս Թափաղիքի գյուղի մոտ, Արագից հյուսիս տարածվող հարթավայրում: Նրա որդի Սարգուր Երկրորդը (գուցե Երրորդ) ընդարձակում է քաղաքը՝ մեծացնելով նրա նշանակությունը, հավանաբար ռոռզման ցանցի ընդլայնման ու բարելավման, Արագից նոր ջրատարների կառուցման շնորհիվ:

Խաղղերը ջրաշինարարության և ռոռզման տեխնիկայի հմուտ վարպետներ էին, որ անշուշտ ժառանգել էին լեռնաշխարհի հնագույն երկայնագանգ բնակիչներից: Նրանք պատվարում էին լճերը, կարգավորում գետերի ջրերի հոսքը, ջրատարներով ջուր հասցնում հարթավայր՝ ռոռզելու հացահատիկի դաշտերն ու խաղողի այգիները, այսպիսով շենացնելով երկիրը: Նրանց կառույցներից շատերն այսօր գործում են՝ հանդիսանալով բնակչության ապրուստի կարևոր միջոցներից մեկը: Այսպես, Մենուա թագավորը կառուցում է 70 կմ երկարության մի ջրանցք, որով լեռնային մի գետակից ջուր է բերում Վան քաղաքի մերձակա հարթավայրը, ռոռզում հողը, հիմնում ծաղկած այգիներով քաղաք: Չարմանայի է, որ ջրանցքն այժմ կոչվում է Շամիրամսու (Մեմիրամիի գետ) և մինչ օրս՝ ավելի քան 2730 տարի շարունակ, այդ բարեբեր երկրամասի բնակչության կենսական երակն է: Ռուսա Առաջին թագավորը այն պատվարելով՝ ստեղծում է արհեստական լճակ, որի ջուրը ջրանցքով հասցնելով հարթավայր, բերրիացնում է Վանի հարթության մեկ այլ հատված: Այդ կառույցը ևս կանգուն է: Խաղղերը կառուցել են նաև ճանապարհներ ու կամուրջներ, նրանք վերերկրյա շինությունների գերազանց վարպետներ էին, հատկապես հմուտ քարգործներ: Նրանք տիրապետում էին երկաթի և այլ մետաղների ձուլման արհեստին, հմուտ մետաղագործներ ու դարբիններ էին: Հնարավոր է, որ խաղղերը նույնն են հետագա խալյուր<sup>13</sup> կոչվող ժողովրդի

<sup>12</sup> L. M. Hartmann, «Weltgeschichte», h. 1, մաս 1, էջ 104, 145, ըստ Լեման-Հաուփֆի:

<sup>13</sup> Խալյուրները Փոքր Ասիայում պարտություն կրեցին Չարեից (189-ից հետո, Ք. ծ. ա., Ստրաբոն XI, 14, 5) և թշվառեցին Տրապիզոնից արևմուտք՝ Մև ծովի ափամերձ շրջանները: Ստրաբոնի ժամանակ արդեն նրանք բնակվում էին այդտեղ:

հետ, որը հին աշխարհում մետաղամշակման բնագավառում հասել էր նշանակալի հաջողությունների, և նրանցից հույները փոխ առան «պողպատ» նշանակող բառը:

Խաղղ թագավորների պետությունը, դատելով երկրի չորս բոլորը սփռված արձանագրություններից, տարածվում էր Վանա լճից հյուսիս-արևելք՝ մինչև Սևանա լիճ, հյուսիս-արևմուտքում՝ մինչև Երզրում, արևմտյան կողմում սահմանն անցնում էր Մշո դաշտով, Տարոնով մինչև Եփրատ, այնտեղից էլ Մալաթիա, հարավ-արևմուտքում և հարավում՝ մինչև Սիրիա, հարավ-արևելքում՝ Ուրմիա լճից հարավ ընկած շրջանները: Սա համապատասխանում է հետագա հայկական պետության տարածքին:

Ք. ծ. ա. 8-րդ դ. վերջին Ուրարտուն ենթարկվում է հնդեվրոպական կիներների վտանգալից հարձակումներին. նրանք գալիս էին հյուսիսից Կովկասի վրայով և սպառնում էին նաև Ասորեստանին: Սակայն 670 թ. Ք. ծ. ա. կիներները իրենց հնդեվրոպական (իրանական) հարևանից՝ Աշկուզայի ժողովրդի (սկյուր) կողմից մղվում են դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա:

Սկյուրները եկել էին հյուսիսից Կասպից ծովի ափամերձ տարածքներով՝ Կովկասը շրջանցելով արևելքից: Այժմ արդեն Ուրարտունից նեղում էին ինչպես Աշկուզայի ժողովուրդը, այնպես էլ ուրիշներ: Ի վերջո խաղղերի Վանի թագավորությունը կործանվում է հնդեվրոպական մարերի և Կվաքսարեսի կողմից: Վանի մոտ, Թուփրակկալե կոչվող լեռան վրա գտնվող թագավորական բերդը հավանաբար Ք. ծ. ա. 585-ից հետո այրվել և հիմնովին ավերվել էր, իսկ վերջին խալղ թագավոր Ռուսա Երրորդի ժամանակ արդեն վերջնականապես կործանվել<sup>14</sup>: Ք. ծ. ա. մոտավորապես 612 թ. մարերը, սկյուրներն ու բարելոնացիները կործանում են նաև Նինվե:

Արմենիա (Արմինա) անունը որպես երկրանուն առաջին անգամ հիշատակվել է Պարսից թագավոր Դարեհ Վշտասայանի մի արձանագրության մեջ: Արձանագրությունը գտնվում է Բեհիսթունի (կամ Բիստուն) մոտ, ժայռի վրա և գրված է մոտ Ք. ծ. ա. 521 թ.: Այն եռալեզու է՝ հին պարսկերեն, էլամերեն և նոր բարելոներեն: Շատ այլ բաների թվում այն հաղորդում է նաև Ուրարտուն խոշորության ճնշման մասին: Այստեղ Ուրարտու աստուրներն անունը թարգմանված է Արմանիյա, Արմինա և Հարմինիուրա: Այս անվան, որ այդ ժամանակից սկսած գործածվում է բացառապես որպես երկրի և ժողովրդի անուն, հանկարծակի հայտնվելը վկայում է, որ Ուրարտուի և Խաղղերի երկրի (Բիախնա) վերջին հիշատակությունների հետ ասսորական և խալդյան արձանագրություններում խոսվում է մի նոր ժողովրդի՝ հայերի մասին, որ գաղթելով 6-րդ դ. Ք. ծ. ա. արդեն տիրում է երկրին: Մոտ 80 տարի անց Հեռոդոտը (484—424 թթ., Ք. ծ. ա.) օգտագործում է Արմենիա անունն Ասորես-

<sup>14</sup> Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, h. 2, էջ 462 և հաջորդները, 685 և հաջորդները:

տանից հյուսիս գտնվող երկրի համար: Նա պատմում է, որ Եփրատը հանդիսանում է Կիլիկիայի և Հայաստանի սահմանը, և որ Հայաստանը դեպի արևելք 15 օրվա ճանապարհ է (կայարան կամ հանգրվան), այլ կերպ ասած՝ դեպի արևելք, հավանաբար մինչև Ուրմիա լիճ, ձգվում է 56,5 փարսախ<sup>15</sup>: Ուրեմն Հերոդոտի ժամանակ արդեն հայերը բնակություն էին հաստատել այս երկրում:

Ըստ Հերոդոտի հայերը սերում են փոյուզիացիներից, վերջիններս էլ եկել էին Եփրոպայից, որտեղ նրանք «երբ դեռ մակեդոնացիների հարևաններն էին, կոչվում էին բրյուզներ<sup>16</sup>: Նրանք ինձ ծանոթ ժողովուրդների թվում ամենաշատ անասուններ ու գյուղատնտեսական մթերքներ ունեցողներն էին», հայերը «նույնպես ունեին շատ անասուններ»: Սա ամբողջապես հաստատում է մեր ենթադրությունը: Հայերենը հնդեվրոպական լեզու է և մոտ է կանգնած արևմտյան՝ սլավոնա-լատվիական լեզվախմբին: Փոյուզիացիների լեզուն նույնպես հնդեվրոպական է և ազգակից է քրակերենին: Այս երկու ժողովուրդների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր: Հավանաբար նրանք նախկինում բնակվել են Բալկաններում, հետագայում իրենց անասունների հոտերով անցել են Անտոյնը, գուցե հենց Բոսֆորը (անասունների անցահուն), և դուրս եկել Փոքր Ասիա: Սա տեղի է ունեցել հավանաբար Ք. ծ. ա. 3-րդ հազարամյակի վերջին և 2-րդ հազարամյակի սկզբին: Տրոյան, որ Ք. ծ. ա. 3-րդ հազարամյակում բնակեցված էր երկայնագանգ ցեղերով, մոտավորապես Ք. ծ. ա. 1900 թ. գրավվում է հավանաբար հնդեվրոպական կարճագանգ մի ժողովրդի՝ գուցե և փոյուզիացիների կողմից: Իլիականում տրոյացիները, որ կոչվում էին հույների դեմ, ըստ երևույթին մասամբ սերել էին այդ ժողովրդից: Պարիս և Պրիամոս անունները հավանաբար փոյուզիական են: Փոքր Ասիա ներթափանցած հնդեվրոպական այդ ցեղերը պատերազմում մեծ նշանակություն էին տալիս ձիերին ու կառքերին: Հետագայում Կապադովկիայում տեսնում ենք առաջավոր մի ժողովրդի՝ խեթերին, որ նույնպես ունեին լավ ձիեր: Հեթիթները հիմնում են մի մեծ պետություն՝ ընդարձակելով այն դեպի Սիրիա և նույնիսկ մինչև Բաբելոն, որը Ք. ծ. ա. 1926 (կամ 1750) թ. նվաճում և ավերում են: Նրանց լեզուն բաղկացած էր մեծ մասամբ հնդեվրոպական տարրերից, նրանց վերնախավը նույնպես կարճագանգ հնդեվրոպացիներ էին: Նույն շրջանում, Ք. ծ. ա. 3-րդ հազարամյակի վերջին, Թեսալիա և Հունաստան են ներթափանցում նաև ժողովուրդներ՝ նախ և առաջ կարճագանգ հնդեվրոպացիներ<sup>17</sup>: Այս ամենից հետևում է, որ այդ ժամանակ Բալկանյան թերակղզում

<sup>15</sup> Հմմտ. Herodot, h. 1, 194, h. 5, 52:

<sup>16</sup> Herodot, h. 7, 73, h. 5, 49:

<sup>17</sup> Հմմտ. Emil Smith, Hellas for Homer, Oslo, 1926, էջ 175 և հաջորդները («Նախահուներյան Հելադա»):

տիրում էր խառնակություն, հյուսիսից ներխուժել էին արիասիրտ բարբարոս ժողովուրդներ, որոնք հնդեվրոպական լեզուն քերեցին Հունաստան: Ք. ծ. ա. 14-րդ դ. կարճագանգ մի քանի ցեղեր հարավային Հունաստանից գնացին Կրետե: Նորագույն հետազոտությունների համաձայն մոտավորապես այդ նույն շրջանում, կամ մի փոքր ավելի վաղ, Հայաստանի հնագույն երկայնագանգ բնակիչները դուրս են մղվում կարճագանգ ցեղերից: Ավելի ուշ հայերը բնակություն են հաստատում նաև Կապադովկիայում, հավանաբար Խեթական պետության ավերակների վրա, և իրենց հարևան փոյուզիացիների հետ դաշնակցած՝ մոսխերին դուրս մղում այդտեղից:

Արմենիա անվան ծագումն անհայտ է, սակայն այն երկրներում, ուր ապրել են հայերը, կան Արմենիոն կամ Արմինիոն անուններով բազում վայրեր: Ստրաբոնը (9-րդ, 4, 7, և 14, 12) հիշատակում է Արմենիոն անունով քաղաք Թեսալիայում, Բոյրեիս լճի մոտ: Իլիականում (2-րդ, 2, 734) առկա է մի Օրմենիոն Թեսալիայում, որը Ստրաբոնը (9-րդ, 5, 18) անվանում է Օրմինիոն: Փոքրասիական Բուքանիա երկրում հիշատակվում է «Օրմինիոն օրոս» անունով բերդ, Սինոպի մոտ՝ «Արմենե» անունով մավահանգիստ, Հալիսի (այժմ՝ Կիզիլ Իրմակ) ակունքների շրջանում, Սվազի գավառում, «Արմենիոն օրոս» անունով բերդ: Խալդեերի թագավոր Մեմուան իր մի արձանագրության մեջ դեպի արևմուտք կատարած արշավանքների կապակցությամբ հիշատակում է Ուր-մե-նի (ու-հի-նի) տեղանունը, որը համապատասխանում է հունական Օրմինիոնին: Նրա որդի Արզիշտին խոսում է Ուրմամ (՞) քաղաքի մասին<sup>18</sup>: Այստեղից հետևում է, որ հայերն արդեն Ք. ծ. ա. 8-րդ դ. սկզբներից բնակվում էին Հալիսի ակունքների շրջանն ընդգրկող լեռնաշխարհում, Ուրարտուից (Խալդեերի երկրից) կամ հետագա Մեծ Հայքից արևմուտք: Եվ քանի որ խալդեերի պետությունը թուլացել էր հյուսիսից և արևմուտքից ներխուժող հնդեվրոպական ցեղերի հարձակումներից, հետևաբար հայերն էլ իրենց ցեղակից թրակիացիների մնացորդների (Թրակիայից) և կիմերների հետ գաղթում են Խալդեերի երկիր և բնակիչներին մասամբ քշում լեռները կամ ձուլում իրենց՝ տարածելով իրենց սեփական լեզուն: Երբ Քսենոփոնն իր տասը հազարով անցնում էր Հայաստանով (Ք. ծ. ա. 401 թ.), Հայաստանի սահմանամերձ տարածքներում դեռ բնակվում էին ռազմատենչ խալդեեր, որոնց նա սխալմամբ անվանում է խալդայներ (χαλδαται)<sup>19</sup>: Քսենոփոնը խալդեերին նկարագրում է որպես անկախ ու ըմբոստ ցեղ, շատ ավելի ռազմատենչ, քան հայերը: Նրանց մնացորդները հավանաբար երկար ժամանակ գոյատևել են սահմանամերձ տարրեր վայրերում<sup>20</sup>:

Երբ հայերը Ուրարտու եկան, հիմնականում զբաղվում էին անասնապա-

<sup>18</sup> Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, h. II, էջ 692:

<sup>19</sup> Anabasis IV, 3: Kyropaideia III, 1, 34, III, 2, 7—10, III, 2, 17—26:

<sup>20</sup> L-H, նույն տեղը, h. 2, էջ 710, 715 և հաջորդները, 722: Lynch, Armenia, 1901, h. 2, էջ 68 և հաջորդները:



հությամբ, իսկ խալդերը՝ երկրագործությամբ ու այգեգործությամբ և ունեին զարգացած ոռոգման համակարգ: Հայերի հետագա մշակույթը, անշուշտ, հանդիսանում է երկու տարրերի միաձուլում: Հերոդոտի ժամանակ հայերն անասնապահությանը զուգընթաց զբաղվում էին դաշտավարությամբ ու խաղողագործությամբ, ինչի մասին վկայում է պատմիչը (1-ին, 194):

Հայերը փոխադրականներ էին պատրաստում ուռու ճյուղերից՝ ծածկելով մորթիով: Սրանցով իրենց արտադրած խաղողը, «եղեզը» և այլ ապրանքներ գետն ի վար քշելով հասցնում էին Բաբելոն՝ վաճառելու: Այդ փոխադրամիջոցներից մեծերը «տանում էին նույնիսկ 5000 տաղանդ բեռ» (կամ 130 տոնն): Ստրաբոնը (11-րդ, 14, 4) գրում է, որ Հայաստանն ունի բերրի հովիտներ, ինչպիսին է Արագի հովիտը և այլն, ուր առատությամբ աճում են հացահատիկ և երկրագործական այլ մթերքներ: Հայերը զբաղվում են նաև ձիաբուծությամբ, երկիրն ունի ոսկու և այլ հանքեր, բնակչությունն ունևոր է (11-րդ, 14, 9—10):

Հայերն իրենք իրենց անվանում են հայ (հոգնակի՝ հայք), երկիրը՝ Հայոց երկիր, որ հետագայում իրանական ազդեցությամբ դարձավ Հայաստան (հայերի նստավայր կամ երկիր): Հայ բառը Վանա լճի շրջակա բնակավայրերի խոսվածքով արտաբերվում է խայ ձևով: Ծագումն անհայտ է: Յենսենն այն բխեցնում է հաթի անունից, որից առաջացել է խեթերի անունը՝ հիմնավորելով իր ենթադրությունն այն փաստով, որ «թ» հնչյունը երկու ձայնավորների միջև հայերենում անհայտանում է: Այս ենթադրությունը լեզվական առումով զուցե ճիշտ է, սակայն ստուգաբանությունն ինքնին համոզիչ չէ: Հայ անունը պահպանվել է շատ տեղանուններում, ինչպես Հայոց ձոր (հայերի հովիտ)՝ խալդերի հին Վան մայրաքաղաքի մոտ, Հայկաբերդ (հայերի բերդ), Հայկաձոր, Հայկավան, Հայկաշեն և այլն:

## ՄԱՐԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջավոր Ասիայի բոլոր ժողովուրդների մյան հայերը ևս կազմավորվել են բազմաթիվ ցեղերի միախառնումից, սակայն նրանք ավելի միասեռ են, քան Առաջավոր Ասիայի շատ այլ ժողովուրդներ: Հայերի գերակշռող մասի մեջ ցայտուն արտահայտված են բնորոշ գծերը մարդաբանական այն տեսակի, որ հայտնի է փոքրասրական, ինչպես նաև արմենոիդ կամ հայկական անուններով: Հասակը, ընդհանուր առմամբ, բարձր է ու բարեկազմ: Գլխի ձևը ցայտուն կարճագանգ է՝ ականջի և գլխի գագաթի միջև նկատելի բարձրությամբ: Գլխի հետին պատը թույլ է զարգացած, ծոծրակի գիծը շարունակվում է դեպի վեր: Գանգաձածկը լայն չէ, սակայն իր բարձրությամբ առաջացնում է ընդարձակ գանգախոռոչ: Դեմքը նեղ է ու երկար, քթամեջքը՝ բարձր ու սեղմ, հաճախ ոչ ցայտուն արտահայտված քթարմատը՝ սերտանած ճակատին: Քթա-

ծայրը մտտ է՝ թեթևակի ցած կախված, ճակատը միջին մեծության, բարձր ու փոքր-ինչ կոր: Կզակը թույլ է զարգացած, իսկ կիսադեմի գիծը վերին շրթունքից ցած մի քիչ ձգված է: Մաշկն ունի բաց թխագույն երանգ, կարծես արևահարված լինի: Փափուկ, մուգ սև մազերը հաճախ ալիքաձև են կաթ գանգուր: Մորուքի, գլխի ու մարմնի մազերն ամուր են, աչքերը՝ մուգ շագանակագույն: Մարդաբանական այս տեսակին, մասնավորապես հայ ժողովուրդին բնորոշ են տոկուն կենսունակությունն ու մեծ պտղաբերությունը: Այն լայն տարածում ունի Արևմտյան Ասիայում, հանդիսանում է Կովկասի, Միջագետքի, Սիրիայի, Պաղեստինի, Հյուսիսային Արաբիայի ժողովուրդներին բնորոշ տարր, միաժամանակ տարածվում է դեպի արևելք, էլ ավելի հեռուներ՝ հասնելով Պարսկաստան և Հնդկաստան:

Արմենոիդն այնքան մյան է եվրոպական այսպես կոչված դինարյան տեսակին, որ գրեթե տարբերություն չկա նրանց միջև: Դրանք միևնույն ցեղի երկու ճյուղերն են, դինարյանը մասամբ խառնված է եվրոպական այլ տեսակների հետ: Այն տարածված է նախ և առաջ Բալկանների (Դինարյան Ալպեր) լեռնային շրջաններում, այսինքն Ալբանիայում, Մոնտենեգրոյում, Հերցեգովինայում, Բոսնիայում, Սերբիայում, Խորվաթիայում: Հանդիսանում է հարավարևմտական այդ ժողովուրդների (բացառությամբ նախկին ֆինների ու հետագա բուլղարների) հիմնական կորիզը: Այս ցեղատեսակը հետագայում հանդես է գալիս Կարպատներում և Տրանսիլվանական Ալպերում, մասամբ Ավստրիայում, հարավային Գերմանիայում, Չեխոսլովակիայում, մասամբ նաև Եվրեյարիայում, հյուսիսային Իտալիայում, կենտրոնական ու հարավային Ֆրանսիայում և այլն: Ուկրաինայում ևս առկա է այդ ցեղատեսակը:

Ֆ. ֆոն Լուշանը<sup>21</sup> և բազմաթիվ այլ հետազոտողներ առաջավորասիական (հայկական) մարդաբանական այս տեսակը համարել են Փոքր Ասիայի բնիկներին բնորոշ աիպ, որն այստեղից է տարածվել տարբեր ուղղություններով: Հետագայում մուգ երկայնագանգերը հարավից և շեկ տարբերը հյուսիսից ներթափանցելով՝ այս կամ այն չափով խառնվել են հայ բնակչության հետ: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ուրեմն դինարյան տեսակը Փոքր Ասիայից է եկել Բալկանյան թերակղզի և այնտեղից տարածվել ամբողջ հարավային Եվրոպայով: Հետագայում տեղի են ունեցել հնդեվրոպական ժողովուրդների գաղթեր հակառակ ուղղությամբ: Փոյուզիացիները, հայերը, քրակացիները և քրակիական այլ ցեղեր Բալկանյան թերակղզուց շարժվել են դեպի Փոքր Ասիա: Որոշ ժամանակ իշխում էր այն հայեցակետը, որ հնդեվրոպական կամ «հնդգերմանական» գաղթող այդ ցեղերը հիմնականում պատ-

<sup>21</sup> F. v. Luschan, The early inhabitants of Western Asia, Journal of the Royal Anthropological Institute, XZJ, London 1911.

կանել են երկայնագանգ, հյուսիսային շեկ տեսակին, որոնց հյուսիսային դիմագծերն արմենոիդներին խառնվելով՝ իսպառ անհետացել են, իսկ լեզուն հաղթել է: Այս բուրբը, անշուշտ, համոզիչ չէ: Նախ, հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղերը պատկանում են եվրոպական մարդաբանական տարբեր տիպերի, բացի այդ, Եվրոպայում բնակչությունն այդ ժամանակ դեռևս խառն էր: Երկրորդ, անհավանական է, որ կարճագանգ դիմարների բնօրրանը հանդիսացող Բալկանյան թերակղզուց գաղթած ցեղերը, որ իրենց հետ բերել էին նաև իրենց լեզուն, ծագումով առավելապես պատկանեին հյուսիսային տեսակին: Ընդհակառակը, ծանրակշիռ փաստարկները խոսում են նրանց կարճագանգ լինելու օգտին, և որ նրանք Ք.ծ. ա. 3-րդից 2-րդ հազարամյակի շրջադարձին Բալկաններից գաղթել են Փոքր Ասիա և Հունաստան: Փոքր Ասիայում երկայնագանգ տրոյական բնակչությունը Ք. ծ. ա. 1900 թ. դուրս է մղվել կարճագանգ, հավանաբար, հնդեվրոպական ցեղերի կողմից:

Կասկածից վեր է, որ կարճագանգ արմենոիդները գաղթել են Հայաստան և հանդիսանում են այդ երկրի քարի և բրոնզի դարաշրջանների երկայնագանգ ժողովրդի հետնորդները: Երևանի թանգարանում կային այդ վաղնջական ժամանակներից մնացած գանգեր, որ բացահայտ երկայնագանգ էին: Դամբարաններում կարճագանգ կմախքներ հայտնաբերվել են երկաթյա գործիքների հետ միասին:

Երևանի պետական թանգարանի տնօրեն Ե. Լալայանը Նոր Բայազետի մոտ՝ Սևանա լճի ափին, բացել է ավելի քան 500 դամբարան, որոնց գերակշիռ մասը բրոնզեդարյան է: Դրանցում հայտնաբերվել են ցայտուն արտահայտված երկայնագանգ կմախքներ: Վրաստանում և կովկասյան երկրներում մինչև Կուրբան, այնտեղից էլ մինչև Փոքր Ասիայի արևելյան մասերը, ապա դեպի հարավ տարածված են եղել նույնատիպ երկայնագանգ ցեղեր և մինչև կարճագանգների գաղթը հանդիսացել այդ տարածաշրջանի միակ բնակիչները: Հայ հետազոտողների կարծիքով Հայաստանում երկայնագանգների գերիշխանությունը երբեք է Ք. ծ. ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսին, քանի որ այդ հազարամյակի կեսերին է, որ երկրում բնակություն են հաստատում նաև կարճագանգները<sup>22</sup>: Ամենայն հավանականությամբ այս հեղաշրջումը պայմանավորված է այդ ժամանակաշրջանում կամ գուցե ավելի վաղ (Ք. ծ. ա. 14-րդ դ.) Փոքր Ասիայում երկաթի արդյունահանման և երկաթյա զենքերի պատրաստման առաջընթացի հետ: Նոր զենքի շնորհիվ, անշուշտ, Փոքր Ասիայում կարճագանգ արմենոիդները Արևելքի բրոնզի դարի մշակույթի փոքրաքանակ երկայնագանգների նկատմամբ ձեռք են բերում զգալի առավելու-

<sup>22</sup> Այդ մասին է ձեռագիր մի աշխատություն, որ ինձ է ուղարկել Էջմիածնի գիտական ինստիտուտի գրադարանի աշխատակից դոկտոր Ս. Տեր-Հակոբյանը:

թյուն և կարողանում են հեշտությամբ հաղթահարել նրանց դիմադրությունը: Նկատենք նաև, որ ավելի ուշ Հայաստանում խալդիքը (նաև՝ խալդեեր) լավ համրավ ունեին որպես հմուտ դարբիններ, մետաղագործներ ու պողպատագործներ:

Հայաստանի և կովկասյան երկրների նախկին երկայնագանգ բնակչությունը պատկանել է մարդաբանական նույն տեսակին, որի թվում է միջերկրածովյան կամ այսպես կոչված աֆղանական տիպը<sup>23</sup>: Հնում այն տարածված էր միջերկրածովյան երկրներում՝ Եգիպտոս, Հյուսիսային Աֆրիկա, Կրետե կղզի, հունական շատ կղզիներ, հարավային Հունաստան, այնտեղից էլ դեպի արևմուտք: Ասիական հողում այն տարածված էր Արաբիայում և նրանից արևելք մինչև Պարսկաստան ու Աֆղանստան: Արաբներն ու սեմական հնագույն այլ ժողովուրդներ պատկանում են այդ ցեղատեսակին, ինչպես Պաղեստին գաղթած իսրայելացիները, նաև փյունիկեցիները: Հյուսիսային արաբախոս ցեղերը, դրուզները, մարոնիթները և ուրիշներ հստակ կյուր են նաև արմենոիդ հատկանիշներ: Ամենից առաջ դա վերաբերում է հրեաներին, այդտեղից են նրանց կեռ քթերը և այսպես ասած՝ սեմական արտաքինը, որն իրականում սեմական չէ: Փոքրասիական ավամերձ տարածքներում երկայնագանգ տեսակը հանդիպում է Տրոյայում Ք. ծ. ա. 3-րդ հազարամյակում: Փոքր Ասիայի մնացած մասերում նրանց ավելի վաղ տարածման մասին ոչինչ հայտնի չէ: Դատելով հնում դեպի արևելք, հարավ և արևմուտք նրանց տարածվածության չափից՝ կարելի է ասել, որ այդ ժամանակ երկայնագանգները Փոքր Ասիայում և Սիրիայում ևս զգացել են իրենց ինչպես տանը: Սակայն թերի է այդ երկրներում հայտնաբերված նախապատմական ժամանակաշրջանին վերբերող դամբարանների ու քարանձավների կանոնավոր ուսումնասիրությունը, որը կնպաստեր հարցի վերջնական լուծմանը:

Ք. ծ. ա. 2-րդ հազարամյակի հեթիթական հարթաքանդակների թագավորներն ու աստվածներն արմենոիդ են: Սակայն այդ փաստով չի կարելի ընդունել Լուշանի առաջ քաշած կովանը: Հեթիթների կազմավորման համեմատաբար վաղ շրջանում արդեն առկա էին կարճագանգ տեսակի տարրերը: Բացի այդ հարթաքանդակներում, անշուշտ, պատկերված են ռազմիկներ, որոնք, ինչպես գիտենք, հավաքագրվում էին գաղթած հնդեվրոպական ցեղերից: Այդ է պատճառը, որ բարձրաքանդակների պատկերները բացառապես արմենոիդներ են: Լուշանն իր ուսումնասիրություններում հանգում է Առաջավոր Ասիայում այսօրվա թուրքախոս բնակչության շրջանում մուգ երկայնագանգների զգալի տոկոսի առկայության: Այն հայեցակետը, որ նրանք առաջացել են միջերկրածովյան ցեղատեսակից, պակաս պարտադրող է, քան նրանց

<sup>23</sup> Հմնտ. **Helfdan Bryn**, Menneskarasene og deres utvikling, Oslo 1925, էջ 125 և հաջորդները «Մարդաբանական տիպերն ու նրանց զարգացումը»:

ավելի ուշ եկած լինելու վարկածը: Գիշտ հակառակը անդի է ունեցել հարևան մյուս երկրներում՝ Հայաստան, Վրաստան, Տրոյա, Կրետե կղզի և այլն: Չարմանալի է, որ Բ. ծ. ա. 3-րդ հազարամյակի սկզբների շումերական հարթաքանդակներում ու քանդակներում շումերները, ի հակադրություն սեմիտների, հաճախ պատկերված են արմենոիդ դիմագծերով՝ մեծ, կեռ թթերով, մասամբ նաև թեթևակի ներս ընկած կզակով<sup>24</sup>: Այդ հարթաքանդակներում գլխի ձևը շեղված է արմենոիդ բարձր կարճագանգից և գրեթե երկայնագանգ է: Դժվար է որևէ հետևություն անել այս ամենից: Ասել, որ ասուրական հարթաքանդակներում արմենոիդ տեսակն ավելի ուշ է հանդես եկել, քիչ հավանական է, քանի որ ասուրական պետությունը հիմնադրել են փոքրասիական միտանիները:

Չենք կարող ասել նաև, թե երկաթի դարաշրջանի սկզբներին Հայաստանի երկայնագանգերը կարճագանգ որ ժողովրդի կողմից են դուրս մղվել: Հավանական է, որ Բ. ծ. ա. 13-րդ դ. սկզբի ասուրական արձանագրություններում հիշատակվող հարավային Հայաստանի Ուրմիա ու Վանա լճերի շրջանում բնակվող մաիրցիները մասնակցել են այդ գործին: Ավելի ուշ նրանց հետ հիշատակվում են նաև խալդերը: Այդ ժողովուրդներն անպատճառ թափանցել են արևմուտքից: Ասորեստանի թագավոր Սալմանասար Երկրորդի (Բ. ծ. ա. 860—825 թթ.) խալդերի դեմ մղած ճակատամարտերից մեկին վերաբերող բրոնզե քիթոնների վրա դրոշմված հարթաքանդակներում Բալավաթի դարպասի մոտ խալդերի կողմում պատկերված են մարդկանց երկու տեսակ՝ բարձրահասակներ ու թզուկներ, վերջիններս միշտ առաջինների պաշտպանության ներքո<sup>25</sup>: Անշուշտ սա նշանակում է, որ մի դեպքում բարձրահասակ, կարճագանգ արմենոիդ ռազմիկներն են, մյուս դեպքում՝ փոքրամարմին, հինավուրց երկայնագանգ նվաճված մի ժողովուրդ, որի մնացորդներն այն ժամանակ դեռ առկա էին, հետագայում ձուլվեցին՝ աննշան հետք թողնելով հայ ժողովրդի կազմավորման ընթացքի վրա:

Խալդերից հետո եկան հայերը՝ դարձյալ գաղթելով արևմուտքից, 6-րդ դ. Բ. ծ. ա.: Նրանք ևս պատկանում էին մարդաբանական հայկական տիպին, լեզուն, սակայն, հնդեվրոպական էր: Հայերի հիմնական մասը Բալկանյան թերակղզուց էր եկել Փոքր Ասիա, Բալկաններում նրանք ապրում էին Թեսալիայի մոտակայքում, ուր մինչ օրս բնակվում են դինարներ: Հայերը փոքրասիական Կապադովկիա երկրամասում խառնվում են փոքրասիացիների, որ նույնպես կարճագանգ արմենոիդներ էին, ինչպես նաև թրակացիների, կիմեր-

ների և հնդեվրոպական այլ ցեղերի հետ: Դրանց մեջ եղել են հյուսիսային շեկ տեսակին բնորոշ տարրեր: Հայերը Եվրոպայից գաղթելուց առաջ փոյուզիացիների նման մարդաբանորեն արդեն խառն էին: Նրանք հիմնականում պատկանում էին հայկական (դինարյան) տեսակին՝ փոքր-ինչ հյուսիսային արյունով: Կարելի է ենթադրել, որ հայերի մեջ առկա հյուսիսային, նաև ալպիական տեսակի հետքերը մեծ մասամբ ուշ շրջանի ցեղային միախառնման հետևանք է: Պետք է նշել, որ Լուշանի հետազոտած Քրոստանի լեռներում բնակվող արևմտյան քրդերի կեսից ավելին (53 տոկոս) շեկ, կապուտաշյա և երկայնագանգ է<sup>26</sup>: Սակայն քրդերը, ամենայն հավանականությամբ, ավելի ուշ են գաղթել, հայկական ցեղերից շատ ու շատ ուշ:

Այսուհանդերձ ուշագրավ է, որ կովկասյան լեզուներով՝ ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային, խոսող շատ ցեղեր ու ժողովուրդներ այս կամ այն չափով կարճագանգ արմենոիդներ են: Նրանք գաղթել և դուրս են մղել տեղի երկայնագանգերին, որոնց լեզուն ցեղակից չէ ոչ միայն հնդեվրոպականին, այլև սեմականին: Այն որոշ աղերսներ ունենալով մի քանի հին լեզուների հետ՝ կազմում է հատուկ լեզվախումբ: Ըստ երևույթին կարճագանգ արմենոիդները հնուց հաստատվելով Առաջավոր Ասիայում՝ բնակվել են երկայնագանգ ժողովուրդների հարևանությամբ: Բացի այդ, Բալկանյան թերակղզուց գաղթել են նաև հնդեվրոպական լեզուներով խոսող հայ-դինարյան այլ ժողովուրդներ ևս:

## ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հայ ժողովուրդը հիմնականում կազմված էր ունևոր վերնախավից՝ ազնվականներից, որ հողի սեփականատերերն էին, տերերից (սեպուհ), գյուղացիների ու արհեստավորների ներքնախավից՝ հպատակներից (չինական), որ մշակում էին հողն ու զբաղվում էին արհեստներով: Գյուղացիները տուրք էին վճարում ազնվականներին ու ավատատերերին, զինվորական ծառայության մտնում նրանց մոտ: Սակայն նրանք ազատ էին և ունեին ինքնորոշման իրավունք, ճորտատիրական կարգն այնպես, ինչպես հայտնի է մեզ վրաց պատմությունից, Հայաստանում գոյություն չի ունեցել: Մի առանձին դաս է կազմել հոգևորականությունը, որը տնօրինել է եկեղեցու ընդարձակ կալվածքներն ու զբաղեցրել բարձր պաշտոնները: Հետագայում զարգացել է քաղաքային բուրժուազիան՝ ձևավորելով մի նոր դաս: Հասարակությունը հենվում էր «Մեծ ընտանիքի» վրա, որը, պարագլխի ղեկավարությամբ, որդիներով, հարսներով ու

<sup>24</sup> Հմմտ. նկարները՝ L. M. King, A History of Sumer and Akkad, London 1910, էջ 10 և հաջորդները: Տե՛ս նաև Eduard Meyer, Sumerier und Semiten in Babylonien Abhandlungen der Kgl. preussischen Akademie der Wissenschaft, 1906:

<sup>25</sup> Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, h. 1, էջ 306, h. 2, էջ 686 և հաջորդները:

<sup>26</sup> F. v. Luschan, նույն տեղը, էջ 229: Տե՛ս նաև նույն հեղինակի «Volker, Rassen und Sprachen», Berlin, 1922, էջ 91 և հաջորդները:

թոռներով կազմում էր փակ բնատնտեսական միավոր՝ շատ դեպքերում հաշվելով մինչև հարյուր անոթամ: Հարաբերությունները ճիշտ այնպիսին էին, ինչպես Վրաստանում էր: Հայերն այդ կարգը հավանաբար բերել էին Եվրոպայից, որտեղ այն մինչև վերջերս պահպանվել էր հարավսլավոնական ժողովուրդների՝ սերբերի ու մյուսների մոտ:

Հայաստանը երբևէ չի եղել սլեռական միասնական մի ամբողջություն, ավելի շուտ հանդիսացել է առանձին շրջանների միություն, որի բերրի հովիտներն ու հարթավայրերը միմյանցից բաժանված էին բարձր լեռնաշղթաներով: Իրարից առանձնացված այդ շրջաններում հնում բնակվել են ազգային տարբեր տարրերից բաղկացած ցեղեր: Որքան է եղել բուն հայերի թվաքանակը, դժվար է ասել: Յուրաքանչյուր ցեղ ունեցել է իր առաջնորդը, որն ընտրվել է ուժեղ տոհմից՝ ժառանգաբար իշխելու իրավունքով: Նա ունեցել է ընդարձակ կալվածքներ ու անսահմանափակ իշխանություն: Հատկանշական է, որ այդ ցեղապետներից շատերը հայկական ծագում չեն ունեցել: Ինչպես, օրինակ, Վանի Արծրունիների տոհմը, որ ունեցել է խալդյան, ավելի վաղ՝ ասսորական ծագում: Մամիկոնյանները, որ հայերին պարզևեցին բազում քաջարի, ազատատենչ հերոսներ, եկել էին արևելքից, հավանաբար ունեին արևելապարթևական ծագում, Արշակունի թագավորական տան ազգակից էին: Բագրատունի հզոր տոհմը սերել էր հրեական, իսկ ավելի վաղ՝ մեդապարսկական ցեղից:

Պետության գլուխը թագավորն էր՝ որպես երկրի գերագույն տեր ու գորահրամանատար, սակայն նա ևս այս կամ այն չափով կախված էր ցեղապետներից, որոնց իշխանությունը հավասարազոր էր թագավորի իշխանությանը, հատկապես երբ մի քանիսը միավորվում էին: Պարսիկների օրինակով աստիճանաբար զարգանում էր ֆեոդալական կամ ավատատիրական հասարակարգը: Ազդեցիկ ազնվականները (հայերեն՝ նախարար) դառնում են վասալ իշխաններ կամ ավատատերեր, նստում են իրենց ամուր բերդերում՝ ինքնուրույն կառավարելով իրենց կալվածքների ներքին գործերը, թագավորին տարեկան վճարելով իրենց կալվածքի տուրքը, պատերազմի ժամանակ հեծյալ ջոկատներով միանալով նրան:

Ցայտուն արտահայտված ավատատիրական համակարգն իր ակնհայտ թուլությունների կողքին ուներ նաև ուժեղ կողմեր: Այն վտանգում էր պետության ռազմական հզորությունն արտաքին թշնամու հանդեպ, քանի որ այդ համակարգի բնակիչները չէին միավորվում որպես քաղաքական մի ամբողջություն՝ դիմագրավելու արտաքին թշնամուն: Ավատատերերի միջև բռնկվում էին նաև ներքին գծություններ, որ ավելի սաստիկ էին, քան Վրաստանում: Քանի դեռ այդ հզոր նախարարները կարողանում էին պաշտպանել իրենց ամուր բերդերն ու ապահովել անկախությունը, օտար նվաճողները չէին հաստատվում երկրում: Հետագայում ևս, երբ պետությունը որպես այդպիսին

գտնվում էր արտաքին կախյալ վիճակում, ավատատեր իշխաններն իրենց ներքին ինքնուրույնության շնորհիվ երկար ժամանակ՝ մինչև կատարյալ անկումը, պահեցին երկիրն ու ժողովրդին: 13-րդ դարում, երբ աստիճանաբար ոչնչացան նախարարությունները, Հայաստանը կորցրեց իր քաղաքական ինքնուրույնությունը:

Երկրի բացառիկ դիրքը իր ազդեցությունն է ունեցել հայ ժողովրդի պատմության ընթացքի վրա: Հայկական բարձրավանդակը կարևորագույն հենակետ է եղել Արևելքի ու Արևմուտքի արտաքին հարձակումների՝ մշտապես լինելով երկրին տիրելու հարևան երկու աշխարհակալ պետությունների գծալարի խնկրտ առարկա: Սակայն եթե երկիրն իր դիրքի պատճառով քաղաքական փոթորկառույց վեճերի առիթ է հանդիսացել, տնտեսության զարգացման տեսանկյունից ունեցել է շատ առավելություններ: Պարսկաստանից, Հնդկաստանից և Բաբելոնից դեպի Սև ծովի կարևորագույն նավահանգիստ տանող քարավանային մեծ ճանապարհները մեծ մասամբ անցնում էին Հայաստանով: Հնուց ի վեր համաշխարհային ստրանցիկ առևտրի հետ մշտական շփումները հայերի շրջանում ձևավորում են հմուտ վաճառականներ, իսկ օտար ճանապարհորդների հաճախակի այցելությունները նպաստում են արհեստների ու արդյունաբերության աշխուժացմանը: Ի հավելումն ասածին նշենք, որ երկրի բերրիության շնորհիվ հայերն արտահանում էին մեծարժեք արտադրանք: Ինչպես վերև ասել ենք, Հերոդոտը վկայում է Բաբելոնի հետ հայերի առևտրական կապերի մասին:

Այս պայմաններում հայերը համեմատաբար հեշտությամբ էին հասնում բարեկեցության, նրանց արժանիքներից է այն մեծ տոկոսությունը, որի շնորհիվ հայ ժողովուրդն ամեն անգամ կարողանում է հաղթահարել երկրին բաժին հասած ավերածությունները: Նրանք թշնամուց պաստպարվում էին անանցանելի լեռներում և վերջիններիս քաշվելու հետ կրկին վերադառնում էին ազարակներն ու գյուղերը, նորից լծվում աշխատանքի, եթե իհարկե ավերված չէր այդպիսի անհրաժեշտ ռոզման համակարգը, որի վերականգնումն արդեն նրանց ուժերից վեր էր: Իսկ եթե ավերված էր ռոզման համակարգը, բնակիչները հեռանում էին, երկիրը վերածվում էր անապատի: Ստրաբոնը (11-րդ, 14, 10) նույնպես վկայում է ժողովրդի աշխատանքով ստեղծված առատության մասին, որի շնորհիվ Տիգրանը Պոմպեոսին կարողացավ վճարել խոշոր գումար՝ վեց հազար արծաթի տաղանդ (հմմտ. էջ 206 և հաջորդները): Անշուշտ, այս ունևորության շնորհիվ էր, որ շնայած մշտական պատերազմներին՝ ժողովուրդը, եկեղեցին ու տիրակալները ծավալում էին աշխույժ շինարարություն՝ զարգացման բարձր մակարդակի հասցնելով ճարտարապետությունը: Անընդհատ շփումներն օտարների հետ խթանում էին նոր ազդեցություններ ու մղումներ, որով արգասավորվում էր հոգևոր կյանքը:

Երկրի դիրքն իր ազդեցությունն է ունեցել նաև ժողովրդի բնավորության



հիմնական գծերի ձևավորման վրա: Մի կողմից՝ պատիժ դարձած հաճախակի պատերազմները վարժեցրել էին նրան շարունակ ավերակված տեսնել իր հովիտներն ու հարթավայրերը, սակայն չկորցնելով ապրելու իր տոկուն կամքն ու հույսը՝ նա կրկին անմնացորդ նվիրվում էր ավերակ երկրի վերականգնման աշխատանքին: Մյուս կողմից՝ իր աշխատասիրության ու ձեռներեցության շնորհիվ, հատկապես առևտրի ու արհեստների մեջ, նա ամենուրեք կարողանում էր իրեն դրսևորել, բնակավայրեր հիմնել օտար երկրներում, ուր տեղաբնակները միշտ չէ, որ հաճությամբ էին ընդունում այդ ջանասիրությունը: Մի ժողովուրդ, որ շարունակ ենթարկվել է բռնությունների ու հետապնդումների, կարող էր ձեռք բերել նաև հատկանիշներ, որոնք հեռու են համակրանքից: Հայերը չնայած հանգամանքների բերումով պատերազմներ են մղել, սակայն ռազմատենչ ժողովուրդ չեն, ինչպես իրենց հարևան վրացիները: Նրանք առավել հակված են խաղաղ գոյակցության և ստեղծագործ աշխատանքի: Քսենոփոնը Ք. ծ. ա. 401—400 թթ. բնութագրել է նրանց որպես խաղաղասեր, ունևոր և հյուրասեր ժողովուրդ, հակառակ որի, ինչպես Անաբազիսում, այնպես էլ Կյուրոպեդիայում (հմմտ. էջ 204), խալդերը ներկայացված են ռազմատենչ, ազատասեր և չունևոր: Նրանք չքավոր կյանք էին վարում իրենց լեռներում և ստիպված մասամբ ավազակությամբ էին ապրում:

## ԿՐՈՆԸ

Հայերի հավատքը զարգացել է բոլորովին այլ ազդեցությամբ: Հնում նրանց կարևորագույն աստվածությունը պտղաբերության աստվածուհին էր, որ կոչվում էր Անահիտ: Նա ժողովրդի մայրն էր, ոսկեմայր, երբեմն կերպավորված նաև որպես կուսական անաղարտ աստվածուհի: Անահիտը սկզբում հավանաբար եղել է երկրի պտղաբերության աստվածուհին, որ Ք. ծ. ա. 3-րդ հազարամյակից պաշտվում էր Փոքր Ասիայում և Միջերկրական ծովի արևելյան երկրներում: Նա նույնացվում է հունական առասպելի Ռեեսային, Կրետեի վիշապ աստվածուհուն, որ կոչվում է նաև Դա (հմմտ. Դա Մատեր--- հույների Դենետորը), Էգեյան ծովի Կյուրենեին, փոյուզիացիների ու մոսխերի Կյուրեյեին, Կապադովկիայի ու Պոնտոսի Մա աստվածուհուն: Պարսիկները նույնպես ունեին Անահիտա աստվածուհի, որ Ավեստայում (յաշտ 5) կոչվում է Արդվի Սուրա Անահիտա (այսինքն՝ Վեհ, Հգոր, Անբիծ) և կերպավորված է որպես ազնիվ ու գեղեցիկ կույս: Անահիտը գլխին կրում էր ոսկե աստղերով պսակ, ուսերին՝ 30 իծի կաշվից պատրաստված քիկնոց: Նա կենարար ջրի աստվածուհին էր, սկզբնաղբյուրի, աստղագարդ երկնքից հոսող բոլոր գետերի աստվածուհին: Անահիտը ջրի պտղավորող ուժի մարմնացումն էր, նաև որպես պատերազմի աստվածուհի պանում էր չորս սպիտակ ձի լծած իր ռազ-

մակառքով: Չորս ձիերը մարմնավորում էին քամին, անձրևը, ամպը և կարկուտը (հմմտ. նաև Միթրայի սպիտակ ձիերը): Աստվածությունը վերագրվող այս պատկերացումների հիմքում անշուշտ ընկած էր այն, որ Անահիտը փոխառնվելով արևմուտքից՝ խառնվել էր պարսկական Արդվի Գուրա՝ գետերի աստվածուհու հետ: Անահիտը (որպես Անահիտա) երկրպագվել է նաև Լիբիայում և Պոնտոսում, ուր ըստ Ստրաբոնի (XII, 3, 37) Չելայի մոտակայքում նրան նվիրված մի հողակապ սրբավայր է եղել: Նա թերևս համագոր է սեմական Անատ աստվածուհուն: Հետագայում հելլենական ազդեցությամբ Անահիտին բազմիցս նույնացրել են հույների կույս աստվածուհիներ Արտեմիսի ու Աթենեի հետ: Հավանաբար այստեղ և ս առկա է անաղարտ աստվածուհու մասին նույն պատկերացումը, որը քրիստոնեական աշխարհում կրկին հայտնվեց որպես Աստծո կույս մայր:

Անահիտը, որպես պտղաբերության աստվածուհի, աղերսներ ունի նաև բազմացման և այդ իմաստով աստորական Իշտար (Աստարտե) աստվածուհու հետ: Ստրաբոնը (XII, 14, 16) հաղորդում է, որ Անահիտին՝ որպես հեշտասեր կուտքի երկրպագում էին Ալիսիսենե գավառի Երեզ (Երզինջա) ավանում գտնվող իր մեծ տաճարում: Երևելի այրեր իրենց կույս դասերին տաճար էին ուղարկում, և նրանք հետագայում «ամուսնանում էին, և ոչ ոք չէր խորշում այդ աղջիկներին կին վերցնել»: Պաշտամունքային այս ձևը հավանաբար սեմական ծագում ունի (հմմտ. Հերոդոտ, I, 199):

Արական կարևորագույն աստվածությունները հայերն ավելի ուշ շրջանում փոխ են առել պարսիկներից: Գերագույն աստվածն Արամազդն էր, որ երկրպագվում էր և որպես Անահիտի հայր, և որպես նրա ամուսին: Արամազդի որդին Երիզն էր (այսինքն՝ Միթրաս, ուներ հնդկական ծագում), դուստրը՝ Նունեն կամ Նանան, որ գալիս էր աստորական պաշտամունքից: Ուժի, պատերազմի, հաղթանակի և որսորդության աստվածը Վիշապաբաղ Վահագն էր, որի կրկնակը պարսկական Վերեթրագանն էր (հուն. Արտագնես)՝ վիշապին հաղթողը: Այս կերպարը հետագայում նույնացվում է Հերակլեսի հետ: Աստղիկը (կամ Աստիկ) գեղեցկության և սիրո աստվածուհին էր, վարդը՝ նրա սրբազան ծաղիկը: Վահագնի հետ նա արարեց «կրակը»: Ըստ երևույթին Աստղիկը սերել է ասորեստանցիների Իշտար (Աստարտե)՝ զգայական սիրո և բազմացման աստվածուհուց (հուն. Մյուլիթա), որի մասին Ք. ծ. ա. 800 թ. հիշատակվում է Հայաստանում Մենուա թագավորի խալդյան արձանագրություններից մեկում: Մյուս աստվածներն են՝ դպրության աստված Տիրը և արևի աստված Բարշամինը, որն անկասկած աստորական ծագում ունի: Հայկական, թերևս նաև խալդյան ծագում ունեն Ամանորի աստված Վանատուրը, Արևի ու Լուսնի պաշտամունքը:

## ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայերը հեթանոսական շրջանում արդեն ունեին բանաստեղծական արվեստ, որ պահպանվել է երգերի ու ժողովրդական բանահյուսության միջոցով, նույնիսկ մի մեծ դյուցազներգությամբ, որից սակայն հասել են առանձին փոքրիկ պատարիկներ: Նախաքրիստոնեական շրջանում նրանք սեփական գիր չունեին: Հեթանոսական դարաշրջանի դրամների վրա գրված է հունարեն: Պալատականներն ու վերնախավը ստանում էին հելլենական կրթություն, հատկապես Արշակունի թագավորների օրոք:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԵՎ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայերի գաղթից շատ չանցած՝ Ք. ծ. ա. 6-րդ դ. վերջին երկիրն ընկնում է պարսկական տիրապետության տակ և կառավարվում սատրապների կողմից: Երբ Ալեքսանդր Մեծը նվաճում է պարսից պետությունը (Ք. ծ. ա. 331 թ.), Հայաստանը համեմատաբար անկախանում է, սակայն հետագայում կախման մեջ ընկնում Միրիայում իշխող Սելևկյաններից: Երբ վերջիններիս պետությունը Ք. ծ. ա. 189 թ. կործանում են հռոմեացիները՝ Անտիոք Մեծի գլխավորությամբ, Հայաստանում իշխող երկու փոխարքաներն իրենց հռչակում են անկախ: Նրանցից մեկը Ջարեհն էր, որի իշխանությունը տարածվում էր Եփրատի վերին հուսանքի շրջանում ընկած Փոքր Հայաստանի վրա, մյուսը՝ Արտաշեսը (Արտաքսիաս), որ իշխում էր Մեծ Հայաստանում՝ Արագի հովտով, Արարատ լեռան շրջակայքով: Նրանք հզորացնում ու ընդարձակում են իրենց թագավորությունները, Արտաշեսը Արագի հյուսիսային ափին, այսօրվա Երևանից հարավ-արևելք, կառուցում է Արտաշատ (Արտաքսատա) քաղաքը, որ կարճ ընդմիջումներով երեք ու կես դար եղավ երկրի մայրաքաղաքը: Նրանից սերած Արտաշեսյան տան հետագա թագավորների օրոք երկիրը վերելք է ապրում: Սակայն Արևելքում նրա վտանգավոր հարևանն էր Պարթևների պետությունը, որ նույնպես ազատագրվել էր Սելևկյանների տիրապետությունից: Ռազմատենչ թագավոր Տիգրան Երկրորդ Մեծի (Ք. ծ. ա. 95—55) օրոք Հայկական պետությունը հասնում է իր հզորության գագաթնակետին, նրա սահմաններն ընդարձակվում են շատ ավելի, քան հին Ուրարտուն էր իր ծաղկման շրջանում: Տիգրանը միավորում է Մեծ և Փոքր Հայաստանները և իր աներոջ՝ արկածախնդիր թագավոր Եվպատոր Պոնտացու հետ պայքարում Հռոմեական աշխարհակալ պետության դեմ: Նա պետության սահմանները դեպի արևելք ընդարձակում է մինչև Կասպից ծով, դեպի արևմուտք՝ մինչև Կասպադովկիա, հարավում անցնում է Տավրոս լեռնաշղթան, որի հարավային փեշե-

րին կառուցում է նոր հռչակերտ մայրաքաղաք՝ Տիգրանակերտ անունով՝ բնակեցնելով այնտեղ հունական 12 քաղաքներից բեղած ռազմագերիներ<sup>27</sup>: Տիգրանի տիրապետության տակ էին մինչև Եդեսիա (Ուրֆա) ընկած բոլոր երկրները, հարավ-արևմուտքում՝ մինչև Հրեաստան:

Ք. ծ. ա. 72 թ. Միհրդատը պարտություն է կրում Լուկուլլոսից: Նա փախչում է փեսայի մոտ: 69 թ. Լուկուլլոսը հարձակվում է Տիգրանի վրա, որը Տիգրանակերտի մոտ ջախջախիչ պարտություն է կրում, քաղաքը գրավվում է և ավերվում: 65 թ. Տիգրանը պարտվում է Պոմպեոսին: Նա կորցնում է իր նվաճած երկրները, սակայն Հայաստանը հռոմեական տիրապետության տակ հետագայում էլ պահպանվում է՝ հանդիսանալով բուֆերային հզոր պետություն պարթևների դեմ, որով վերջնականապես ներքաշվում է արևելքի և արևմուտքի երկու աշխարհակալ պետությունների՝ գերիշխանության համար մղած տևական պատերազմի մեջ, որը կործանարար է դառնում ժողովրդի համար:

## ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Հայաստանում մինչև մեր թվարկության սկիզբը իշխում էին Արտաշեսյան տոհմի թագավորները: Այսպես հետևում է խառն մի ժամանակաշրջան, երբ օտարագրի մի շարք արկածախնդիրներ փորձում են տիրանալ գահին: Ի վերջո Ք. ծ. հ. 52 թ. գահ է բարձրանում Տրդատ (Տիրիդատես) Առաջինը, որ սերում էր պարթևական Արշակունի տոհմից և պարսից Վաղարշ արքայի եղբայրն էր: Որոշ դիմադրությունից հետո հռոմեական զորագույն իշխանությունը բարեհա... մ է ճանաչել Տրդատին, և Հռոմում Ներոն կայսրն անձամբ թագադրում է նրան: Արշակունի թագավորական տունը մի քանի դար իշխում է Հայաստանում: Արշակունիների համակրանքն անշուշտ ուղղված էր Արևելք՝ դեպի Պարթևների պետությունը, թեպետ մշտապես գտնվում էին հռոմեացիների անբարեհույս հսկողության տակ: Երկիրը հաճախակի դարձած պատերազմներից ու արշավանքներից արյունաքամ էր լինում, մի կարճ ժամանակ նույնիսկ, Ք. ծ. հ. 115—116 թթ., վերածվում է հռոմեական մարզի: Ք. ծ. հ. 163 թ. հռոմեացի զորավար Պրիսկոսը ավերում է Արտաշատ մայրաքաղաքը: Արագի հովտում կառուցվում է մի նոր քաղաք՝ հետագայում Վաղարշապատ մայրաքաղաքը, որ այժմ հռչակավոր վանքի անունով կոչվում է Էջմիածին:

Երբ Ք. ծ. հ. 226 թ. Պարսկաստանում Սասանյանները կործանում են պարթևական Արշակունի թագավորական տունը, Հայաստանի Խոսրով Առաջին թագավորը ներխուժում է Պարսկաստան՝ իր ազգակիցների փրժել լուծե-

<sup>27</sup> Strabo, XI, 14, 15:

լու: Նրա բանակում կռվում էին նաև Կովկասի մյուս կողմում ապրող քոչվոր ցեղեր: Պարսից թագավորը պարտություն է կրում, իսկ Խոսրովը հռոմեացիների օգնությամբ հաղթանակներ են ասպատակում է Պարսկաստանը, բայց ի վերջո սպանվում է պարսից արքայի սաղրանքով: Դրանից հետո Հայաստանը որոշ ժամանակ ընկնում է պարսկական տիրապետության տակ, որի ընթացքում պարսիկները փորձում են Սասանյանների պետական կրոնը՝ Կրտսեր Ավեստայի ուսմունքն ու կրակապաշտությունը, բռնի տարածել Հայաստանում:

Խոսրովի պատանի որդին՝ Տրդատը (Տիրիդատ), փրկվում է, գնում Հռոմ և այնտեղ աչքի ընկնում որպես լավ ռազմիկ: Ավանդագրույցներում պատմվում է նրա զարմանահրաշ գործերի, ֆիզիկական մեծ ուժի մասին: Պարսիկների տարած հաղթանակից շատ չանցած՝ Տրդատը Ք. ծ. հ. 265 թ. Պավմիրայի իշխան Օղենատոսի օգնությամբ վերադառնում է և Հռոմի զինակցությամբ փորձում տեր դառնալ հայրական գահին: Նա պարսիկներին քշում է երկրից, հաջող վարած պատերազմների շնորհիվ ամրապնդում իր իշխանությունը՝ դառնալով Հայաստանի հայտնի խիզախ թագավորներից մեկը և հռչակվելով Տրդատ Երրորդ Մեծ անվամբ:

### ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏԵԸ

Ք. ծ. հ. 280 թ. Տրդատը քրիստոնեությունը ընդունում է որպես պետական կրոն: Քրիստոնեական ուսմունքն արդեն վաղուց էր թափանցել Հայաստան, հավանաբար Եդեսիայից սիրիացի միսիոներներն էին բերել, այնպես որ Ք. ծ. հ. 2-րդ դարում Հայաստանում արդեն շատ քրիստոնյաներ կային: Տրդատը երկրի հին աստվածների ջերմեռանդ երկրպագուն էր և կռվով պաշտպանում էր նրանց Սասանյանների կրակապաշտությունից, ինչպես նաև քրիստոնեական ուսմունքից: Սուկայն հայ նշանավոր առաքյալ Գրիգորի (որ կոչվում է «Լուսավորիչ») հայտնվելուց և տեղի ունեցած մի շարք զարմանահրաշ դեպքերից հետո Տրդատը դարձի է գալիս: Հետագայում հոգևորական մատենագիրների կողմից գրի առնված ավանդագրույցներն այդ դարձի և այն ամենի մասին, ինչ կապված է դրա հետ, պատմական քիչ ճշմարտություն են պարունակում: Ըստ դրանց Գրիգորը եղել է Տրդատի հորը սպանող պարթև Անակի որդին: Լինելով արքայասպանի որդի՝ նա ստիպված փախչում է, գնում Կապադոկիա՝ հայերի հին հայրենիքը, և Կեսարիայում քրիստոնեություն ընդունում: Հոր կատարած ոճրի մասին տեղեկանալով՝ որոշում է քափել նրա մեղքը, գտնում է աքտրված Տրդատին, ծառայում նրան հավատարմորեն՝ առանց հայտնելու իր ով լինելը, և վերջում ուղեկցում է նրան Հայաստան: Երբ թագավորը հրամայում է Գրիգորին Անահիտ աստվածուհու պատվին զոհ մատուցել

Երիզայի (Երզնիզան) տաճարում, նա հրաժարվում է ուրանալ քրիստոնյաների Աստծուն, և նրանք ընդհարվում են: Գրիգորին նետում են մի հորի մեջ (Արտաշատի մոտ), որտեղ նա քրիստոնյա մի այրի կնոջ օգնությամբ 13 տարի կենդանի է մնում: Ի վերջո, երբ թագավորը մի շարք պատահարներից ու ահավոր հիվանդությունից հետո տեղի է տալիս՝ ընդունելով նոր ուսմունքի հաղթանակող ուժը, Գրիգորին հանում են զնդանից, և նա դառնում է երկրի առաքյալը (հմմտ. Լք 177 և հաջորդներ):

Պատմական ճշմարտությունն այս ամենից այն է, որ Գրիգորը քրիստոնեությունը բերել է Կապադոկիայից: Ինչպես էլ որ տեղի ունեցած լինի թագավորի դարձի գալը, ամեն դեպքում քրիստոնեության ընդունման հիմքում առկա է եղել քաղաքական լուրջ խնդիր: Քրիստոնեությունը հզոր զենք էր այն ազդեցության դեմ, որ Սասանյաններն իրենց պետական կրոնը՝ Ավեստայի ուսմունքը, փորձում էին հաստատել երկրում: Բացի այդ, Հայաստանում արդեն կային շատ քրիստոնյաներ, որոնց համախառնվածությունը կարևոր նեցուկ կալոդ էր դառնալ թագավորական իշխանության համար: Ինքնիշխան ավատատերերի դեմ նման հենարան ունենալը անհրաժեշտ էր: Գրիգոր Լուսավորիչը թագավորի գորեղ աջակցությամբ ամենուրեք հիմնում է հայկական եկեղեցիներ, և Հայաստանը դառնում է Եռաջին երկիրը, որ քրիստոնեությունն ընդունում է որպես պետական կրոն:

Նախկին հեթանոսական և նոր քրիստոնեական կրոնների միջև հակադրությունն ու պայքարն այնպես անհաշտ ու անողոր չի եղել, ինչպես հետագայում նկարագրել են մատենագիրները: Այնհայտ է, որ քրիստոնեությունն այնքան տարածված էր, որ հին սրբավայրերը, զոհատեղիներն ու սրբազան պուրակներն արագ վերածվում են նոր աստծո պաշտամունքի վայրերի, իսկ կրոնական նախկին պատկերացումները հարմարեցվում են քրիստոնեական ուսմունքին: Անբիծ Անահիտ աստվածուհին միաձուլվում է սուրբ Կույս և Աստվածամայր հասկացություններին, իմաստության հայր Արամազդը՝ Հայր Աստծուն, քաջ Վահագնը՝ Աստծո Որդուն, իսկ սուրբ Կյակը՝ սուրբ Հոգուն, որ կրակե լեզուների տեսքով պատկերվում է առաքյալների գլխավերևում: Չոհաբերության հեթանոսական հին սովորության բազմաձև մնացորդները, որ մինչև օրս պահպանվել են Հայաստանում, բավարար վկայություն են տալիս այն մասին, թե ինչքան բնական է եղել անցումը հին կրոնից նորը: Ըստ ավանդության Գրիգորը հեթանոսական կրոնի քուրմերի որդիներին սիրով նոր եկեղեցու եպիսկոպոսներ էր օծում: Ավեստայի հետ քրիստոնեության հակասություններն ավելի անցան էին, քան հին աստվածությունների: Չէ որ Զրադաշտն էր, որ որոշ առումով նախապատրաստեց քրիստոնեությունը՝ տալով նրան շատ զաղափարներ: Բայց և այնպես Տրդատը նոր կրոնը մասամբ բռնի ընդունել տվեց՝ հեղելով նախարարական շատ հզոր տոհմերի արյուն: Երկար ժամանակ պահանջվեց, մինչև որ քրիստոնեությունը տարածվեց լեռնաշ-

խարհի բոլոր մասերում, որ Պարսկաստանը բարեհաճորեն քաջալերում էր հեթանոսական հավատքը:

Թագավորը սուրբ Գրիգորին կարգում է ամբողջ պետության պատրիարք կամ կաթողիկոս: Կապաղովկիայի Կեսարիա քաղաքում նա օծվում է արքեպիսկոպոսի կողմից: Այդ բարձր տիտղոսը ժառանգաբար անցնում է Գրիգորի ընտանիքին: Կաթողիկոսը ևս ուներ նույն անսահմանափակ իշխանությունը, ինչ իր ժամանակին հեթանոսների գերագույն քուրմը: Վերջինիս պաշտոնը նույնպես ժառանգաբար անցնում էր ընտանիքին, և նստավայրն էլ Տարոնի Աշտիշատ ավանում էր (Մուշի մոտակայքում): Գրիգորը Կեսարիայում օծվելուց հետո վերադառնում է Աշտիշատ և այնտեղ Անահիտ, Վահագն և Աստղիկ երրորդություն կազմող աստվածների<sup>28</sup> երեք հռչակավոր տաճարները կործանելով՝ տեղում կառուցում է երկրի Մայր եկեղեցին: Սկզբնական շրջանում՝ մինչև 402 թ., կաթողիկոսի նստավայրը հեթանոսական այդ հին զոհատեղիում էր, որտեղից տեղափոխվում է Վաղարշապատ: Ստրաբոնի (XII, 2, 3) հայերի հին հայրենիք Կապաղովկիայի, Կոմանա քաղաքի Մս կամ Արտեմիա Տավրիացու (Անահիտ) տաճարին վերաբերող պատմությունից պարզվում է, որ նախկին հեթանոսական կրոնի գերագույն քուրմի պաշտոնն ունեցել է նույն իշխանությունը: Այդ հոգևոր բարձրաստիճան այրը ըստ աստիճանի կանգնած էր թագավորից անմիջապես հետո և սովորաբար ընտրվում էր նույն տոհմից (հմմտ. էջ 78): Նա տերն էր տաճարի և նրա սպասավորների, որոնց թիվը Ստրաբոնի այցելության ժամանակ վեց հազար էր՝ կին և տղամարդ միասին հաշված: Տաճարն ուներ ընդարձակ հողեր, ստացված եկամուտը գերագույն քուրմին էր: Ստրաբոնը նույնը հաղորդում է նաև Պոնտոսի Կոմանա քաղաքի համանման տաճարի (XII, 3, 32 և 34—36) և Ջելայի Անահիտի տաճարի մասին (XII, 3, 37):

Բացի եկեղեցու և նրա գործերի վրա ունեցած անսահմանափակ իշխանությունից, կաթողիկոսը ուներ նաև աշխարհիկ իշխանություն: Նախկին տաճարների հսկայական հարստությունը՝ փողոն ու հողային կալվածքները, անցնում են եկեղեցուն և բազմապատկվում հողերի նոր նվիրաբերություններով: Գնալով մեծանում է եկեղեցու կարողությունը՝ հասնելով 12000 կալվածքի: Պատերազմի ժամանակ կաթողիկոսը հանում էր 5470 հեծյալ և 3807 հետևակ ռազմիկներից բաղկացած բանակ: Թագավորը սուրբ Գրիգորին և նրա ընտանիքին 15 տարբեր նահանգներում նվիրում է հողային ընդարձակ կալվածքներ և բազմաթիվ իշխանական բերդեր: Նախարարական ժողովներում նախագահում էր կաթողիկոսը: Մինչև Ջ. ժ. հ. 374 թ. ամեն նոր կաթողիկոս օծ-

<sup>28</sup> Այստեղ ևս, ինչպես հաճախ հանդիպում ենք Արևելքում, գործ ունենք եռաստվածության հետ (հմմտ. էջ 74), որն, անշուշտ, իր շարունակությունն է գտել քրիստոնեական երրորդության ուսմունքում:

վում էր Կեսարիայի եպիսկոպոսի կողմից և ձևականորեն ենթարկվում նրան: Այդ հանգամանքը, սակայն, Հայաստանում չէր սովորում կաթողիկոսի հեղինակությունն ու իշխանությունը: Հետագայում կաթողիկոսները ձեռք են բերում կատարյալ անկախություն՝ չենթարկվելով ոչ երկրի, ոչ էլ դրսի որևէ իշխանության: Միևնույն ժամանակ աճում է նրանց ազդեցությունը ժողովրդի վրա՝ մինչ օրս պահպանելով ժողովրդի հոգևոր պետի իրենց դիրքը: Կաթողիկոսի պաշտոնը, ինչպես նշեցինք, Գրիգորին շնորհվեց ժառանգության իրավունքով: Եթե պաշտոնը թափուր էր մնում ժառանգ շինելու կամ մեկ այլ պատճառով, ապա նոր կաթողիկոս սկզբնական շրջանում ընտրում էին ոչ թե հոգևորականները, այլ թագավորը, բանակն ու նախարարները: Սակայն Սահակ կաթողիկոսի մահից հետո առաջին անգամ նոր կաթողիկոսին ընտրում է եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին նաև աշխարհիկ սարդիկ. հետագայում ընտրության իրավունքն ամբողջապես անցնում է եպիսկոպոսներին:

Ավանդությունը պատմում է երկրի տարբեր վայրերում Գրիգորի և Տրդատի կողմից բազմաթիվ եկեղեցիներ կառուցելու մասին: Դրանք ավելի շուտ կառուցվում էին բերդերի նման. նախ շինության հրապարակը շրջապատում էին պարիսպներով և նոր միայն ձեռնամուխ լինում եկեղեցու շինարարությանը: Հետագա շրջանին վերաբերող մի վկայությամբ Գրիգորի որդի Վրթանես կաթողիկոսն Աշտիշատի եկեղեցուն պատարագելիս դրսից պարիսպները պաշարված են եղել 2000 մարդուց բաղկացած հեթանոսների բանակով:

Տրդատը մահացել է Ջ. ժ. հ. 314—320 թթ. միջև: Նա սպանվում է անմիաբան նախարարների դավադրությամբ, քանի որ քրիստոնեություն ընդունելու ընթացքում եղել էր անողոք:

## ԱՐՇԱԿՈՒՆԻ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Տրդատին օգնելու նպատակով պարսից Ներսես թագավորը հարձակվում է Հռոմեական կայսրության վրա: Սակայն Ներսեսը պարտվում է և Ջ. ժ. հ. 297 թ. ստիպված նվաստացուցիչ մի պայմանագրով Գիտկեթիանոս կայսրին է զիջում Հայաստանից հարավ ընկած մի մեծ երկրամաս: Իսկ Հայաստանն անցնում է հռոմեական գերիշխանության տակ: Հետագայում էլ պարսից թագավորները շարունակ փորձում էին Հայաստանում վերահաստատել իրենց ազդեցությունը: Հայկական գահի վրա Տրդատի հաջորդներից ոչ մեկն այնքան ուժեղ անհատականություն չեղավ, որ կարողանար գլուխ հանել երկրում տիրող դժվար կացությունից, որը ստեղծվում էր հարևան երկու հզոր պետությունների մշտական պատերազմներից: Նրանք իրենց անկայուն քաղաքականության և իրենց ապահովությունն ու շահն առավել պաշտպանողի կողմն անցնելու անվճռականության պատճառով նպաստեցին պետության և իրենց



թագավորական իշխանության աստիճանական թուլացմանը: Մնացածը լրացրին ներքին կոռուպցիոն ազդեցիկ նախարարական տներին ու եկեղեցու հետ: Թագավորական հզոր իշխանության, ինչպես նաև պետության ապահովության համար անհրաժեշտ էր խելամիտ ու միասնական համագործակցություն եկեղեցու հետ, ինչն արվեց Վրաստանում (հմմտ. էջ 78): Այնինչ թագավորների ու կաթողիկոսների միջև ծայր առած անհաշտ վեճերը երբեմն, դժբախտաբար, հասցնում էին բացահայտ բախումների: Թագավորների ձեռքով նույնիսկ սպանվեցին երկու կաթողիկոս: Այդուհանդերձ թագավորական իշխանությունը պարտություն կրեց, իսկ կաթողիկոսականը ուժեղացավ՝ մի շարք շրջահայաց կաթողիկոսների շնորհիվ:

Ներքին երկպառակությունները, որոնց մասնակցում էին նախարարական նշանավոր տներ, թուլացնում են պետության արտաքին դիմադրողականությունը: Հետագա շրջանի մատենագիրները, որոնք այդ անցքերի մեզ հասած միակ աղբյուրներն են, անշուշտ փառաբանում են եկեղեցու այրերին և ամբողջ մեղքը բարդում թագավորների գազրելի արարքների վրա: Սակայն ճշմարտությունն այն է, որ եկեղեցին՝ ունենալով հողային մեծ սեփականություն՝ պետության ներսում ձգտում էր բացարձակ իշխանության: Եկեղեցու և թագավորի միջև հոգևոր ու աշխարհիկ իշխանության սահմանները հեղինդուկ էին և վաղ թե ուշ ծնելու էին հակասություններ: Մեղքը, անշուշտ, Տրդատին էր, որ հենց սկզբից սուրբ Գրիգորին և նրա ընտանիքին շնորհեց աշխարհիկ մեծ իշխանություն:

Տրդատի որդի Խոսրով Երկրորդ Կողակի օրոք (մահ. 342 թ.) նախարարական շատ հզոր տներ թշնամանում են միմյանց հետ, նաև ընթուստանում թագավորի դեմ: Բանը վերջանում է այնպես, որ թագավորը նրանց լրիվ բնաջնջում է, իսկ ընդարձակ տիրույթները բռնագրավում: Այս անցքերին հետևում է Մանեսան թագավորի՝ իբերներով (վրացիներ) և աղվաններով (կովկասյան ցեղեր) համալրված բանակի հարձակումը երկրի վրա, որը մեծ ավերածություններ է գործում: Խոսրովն ու կաթողիկոսը ստիպված են լինում փախչել: Ի վերջո Խոսրովի գորահրամանատար Վաչե Մամիկոնյանն ու Վահան Ամատունին թշնամուն դուրս են քշում երկրից: Մանեսանը սպանվում է նրա գլուխը բերում են թագավորին: Թագավորը ողբում է Մանեսանին, քանի որ վերջինս թեպետ թշնամի, սակայն իր նման Արշակունի էր: Խոսրովը կառուցում է Գվին քաղաքը և դարձնում իր նոր նստավայրը՝ զարդարելով ապարանքներով, զվարճության և որսի վայրերով, շրջապատում արհեստական անտառով: Այնտեղ բնակվելու են գալիս նաև Արտաշատից:

Այդ շրջանում Պարսկաստանում իշխում էր հզոր մի թագավոր՝ Շապուհ Երկրորդ Մեծը (Ք. ծ. հ. 310—379 թթ.): Նա գահ էր բարձրացել մանկահասակ տարիքում և դեռ նոր հասունացած՝ փորձում էր հատուցել հռոմեացիներին՝ Ներսեսի կրած անոթալի պարտության դիմաց: Ինչպիսիք վկայվում է, Շապուհը

հարձակվում է Հայաստանի վրա, սակայն Խոսրովի բանակը Հռոմի կայսրի օգնությամբ պարտության է մատնում պարսիկներին Վանա լճի ափին: Խոսրովի որդու՝ Տիրան Երկրորդի (342—350) օրոք պետության և եկեղեցու պարզուխների միջև ծայր է առնում անողոր պայքար, որի ընթացքում թագավորը Հուսիկ կաթողիկոսին խարազանելով՝ սպանել է տալիս, քանի որ վերջինս թագավորին՝ մեղսալի վարքի պատճառով, արգելել էր եկեղեցի մտնել: Տիրանը Պարսկաստանի դեմ պատերազմ չի մղել, սակայն, ինչպես պատմում են, նա դավադրաբար ընկնում է պարսիկ մի իշխանավորի ձեռքը, որն էլ կուրացնել է տալիս թագավորին: Այնուհետև պարսիկները մեծ բանակով հարձակվում են Հայաստանի վրա, սակայն կայսերական զորքը պարտության է մատնում նրանց՝ գերելով պարսից թագավորի հարեմը:

Կույր Տիրանը հրաժարվում է իշխանությունից, և Հռոմի կայսրը հայկական գահին նստեցնում է Տիրանի որդուն՝ Արշակ Երկրորդին (350—367): Հոգևորական մատենագիրների քամահրանքն Արշակի հանդեպ անշուշտ կողմնակալ էր: Շատ առումներով նա նշանավոր անհատականություն էր. պարզ գիտակցելով պետության ներքին թուլության պատճառները նա ջանում էր ուժեղացնել թագավորական իշխանությունն ու պետությունը: Սակայն Հռոմեական կայսրության և Պարսկաստանի հանդեպ նրա վարած քաղաքականությունը նույնպես անկայուն էր: Եկեղեցական հարցերում տարածայնություններ ունենալով կայսրի և հունական եկեղեցու հետ միանում է պարսիկներին: Նրա բանակը սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ արշավում է Փոքր Ասիա, ամայացնում այն՝ ուժեղ հարված հասցնելով հռոմեական բանակին: Այնուհետև Արշակը լքում է պարսից Շապուհ արքային և կրկին շրջվում դեպի կայսրը: Այդ ընթացքում Արշակի և մեծ համբավ վայելող Ներսես կաթողիկոսի միջև ծագած հակասությունները երկրում թուլացնում են թագավորի դիրքերը՝ շատ նախարարներին թշնամաբար տրամադրելով նրա դեմ: Հուլիանոս Ուրացողի մահից հետո (363 թ.) հռոմեացիների Պարսկաստան կատարած արշավանքը ավարտվում է անոթալի հաշտությամբ, որով հռոմեացիները պարտավորվում են զրկել Արշակին իրենց աջակցությունից նրան դնելով դժվար կացության մեջ: Այս ամենից հետո Արշակը շարունակում է կասեցնել պարսիկների հարձակումները, մինչև որ խաբվելով Շապուհի երդումներով վավերացված հավաստիացումներից՝ գնում է նրա մոտ, այնտեղ շղթայվում արծաթե կապանքներով և բանտվում «Մոռացության ամրոցում» (Աճեռ): Թագավորի հավատարիմ ուղեկցին քաջասիրտ Վասակ Մամիկոնյանին Շապուհը ողջ-ողջ մորթագերծ է անել տալիս, մաշկը լցնում չոր խոտով և ուղարկում բանտ՝ Արշակին: Նրա գեղեցկուհի կինը Փառանձեմ Սյունեցին, Արտազես ամրոցում 14 ամիս հերոսաբար դիմակայելով պարսիկների պաշարմանը՝ ի վերջո հանձնվում է: Շապուհը թագուհուն հրապարակայնորեն, զորքի աչքի առաջ անարգանքի է ենթարկել տալիս, մինչև որ նա մա-

հանում է ամոթալի այդ բռնարարքներից: Մի քանի տարի անց Արշակը բանտում ինքնասպան է լինում:

Թագավորին և նրա խիզախ սպարապետին մեջտեղից վերացնելուց հետո պարսիկները անձամբ Շապուհի գլխավորությամբ Հայաստանում կազմակերպում են սոսկալի կոտորածներ: Հազարավոր հայեր՝ կին և տղամարդ, գոհվում են փղերի ոտքերի տակ: Վաղարշապատը շատ քաղաքների հետ կողոպտվում և ավերվում է, բազում բնակիչներ, որոնց թվում և հրեա գաղթականներ, գերեվարվում են: Հալածվում է քրիստոնեությունը, հիմնվում են կրակարաններ, և շատ նախարարներ, ինչպես Սերուժան Արծրունին Վանից, ընդունում են կրակապաշտությունն ու դառնում պարսկահպատակ: Այս անցքերը տեղի են ունեցել Ք. ծ. հ. 367 թ.: Հայաստանում և Պարսկաստանում քրիստոնեության դեմ Շապուհի հալածանքներն ավելի շուտ քաղաքական բնույթ ունեին, քան թե կրոնական մոլեռանդության արդյունք էին: Քրիստոնյաները ոչնչացվում էին, որովհետև նրանք բարեկամաբար էին տրամադրված Պարսկաստանի թշնամու՝ քրիստոնյա Հռոմեական պետության նկատմամբ:

Արշակի որդին՝ Պապը (368—374), գահ է բարձրանում կայսրի օգնությամբ, և կայսերական բանակի զորակցությամբ երկիրը մաքրում թշնամիներից: Վասակ Մամիկոնյանի որդին՝ քաջ սպարապետ Մուշեղը, ըստ ավանդության լուծում է իր հոր և իր ժողովրդի վրեժը. պարտության մատնելով պարսիկներին՝ նա կործանում է մոզերի կրակապաշտական տաճարները, ձեռքն ընկած քրմերին ողջ-ողջ այրում: Պարսիկ շատ զորապետների ու իշխանների մորթազերծ է անել տալիս և չոր խոտ լցնելով շարում բերդապարիսպների ատանների: Մուշեղը սակայն ասպետորեն է վարվում գերի ընկած Շապուհի առաջին տիկնոջ և հարեմի մյուս կանանց հետ: Պարսիկ ռազմագերիների մի խմբի ուղեկցությամբ նրանց ուղարկում է Շապուհին: Այս արարքով Մուշեղը ցանկանում է ընդգծել իր՝ Շապուհից բարձր լինելը, ձգտում տարբերվել այն անձնավորությունից, որի վայրագություններն ազնվական հայտիներին նկատմամբ եղել էին այնքան սոսկալի:

Պապ թագավորը հնազանդեցնելով իր հոր դեմ ելած նախարարներին՝ նրա նման ջանում է ամրապնդել թագավորությունը: Սակայն նա ևս հակասությունների մեջ է մտնում Ներսես Մեծ կաթողիկոսի հետ: Թագավորը կաթողիկոսի հետ միաբանության պատվին տված խնջույքի ժամանակ թունավորում է նրան՝ իր ձեռքով հրամցնելով հաշտության գավաթ: Պապը փակում է վանքերը՝ պատճառաբանելով, որ միանձնուհիներն ավելի օգտակար գործ կատարած կլինեն, եթե ամուսնանան: Բռնագրավում է եկեղեցու չափազանց ընդարձակ տիրույթների հինգ յոթերորդը՝ ասելով, որ մնացածն էլ բավարար է հոգևորականների ապրուստի համար: Կրճատում է հոգևորականների թիվը այն համոզմամբ, որ ամեն գյուղում մի քահանա և մի տիրացու բավական է: Շատ վճիռներ խելամիտ էին: Սակայն Պապը նույնպես չկարողացավ վարել

հստակ արտաքին քաղաքականություն: Կայսրի նկատմամբ ցուցաբերած անհնազանդությունից հետո նա հրավիրվում է հռոմեացի զորավար Տերենտիոսի մոտ խնջույքի և այնտեղ սպանվում թիկունքից՝ հարբած վիճակում (374 թ.):

Պապից հետո կայսրը թագավոր է կարգում Արշակ Երկրորդի եղբորորդուն՝ Վարազդատին (374—377): Նրան գահընկեց է անում քաջարի Մամուել Մամիկոնյանը՝ Մուշեղ սպարապետին սպանելու համար: Հետագա շրջանը ընթանում է կոիվներով, որ ծագել էր պետության ներսում գահին ձգտող թեկնածուների միջև, որոնց մի խմբի թիկունքին կանգնած էր կայսրը, մյուսի՝ պարսից թագավորը: Ի վերջո 387 թ. Թեոդոսիոս կայսրը և պարսից արքա Շապուհ Երրորդը կնքում են հաշտության պայմանագիր, որով Հայաստանը բաժանում են երկու մասի:

Հայաստանի արևմտյան փոքր մասը՝ Կարին (Էրզրում) մայրաքաղաքով, անցնում է հռոմեացիներին, Հայաստանի արևելյան, մեծագույն մասը՝ Արագի հովտով, Արարատ լեռն իր շրջակայքով, Տարոնով (Մուշ), Վանա լճի ավազանով, ընկնում է պարսկական տիրապետության տակ: Մեծ Հայաստանում մի որոշ ժամանակ դեռ գոյատևում է Արշակունիների թագավորությունը: 428 թ. երկիրը կառավարում են պարսիկ սատրապները, այսպես կոչված՝ մարգպանները: Փոքր Հայաստանը, Հռոմի կողմից նշանակված առաջին թագավորի մահից հետո, դառնում է հռոմեական մարգ: Հարցի մասն լուծումը նշանակալի ազդեցություն ունեցավ պատմության հետագա զարգացման վրա: Ուժեղ և միացյալ Հայաստանն արևելահռոմեական գերիշխանության տակ կարող էր ամուր պատնեջ հանդիսանալ մահմեդականների ներխուժումների դեմ: Այնինչ կարևորագույն այս դարպասն Արևելքի պետությունների ձեռքն անցնելով՝ ճանապարհ հարթվեց արևելքից եկող Մուսուլմանների հավատի համար:

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Մինչ կործանվում էր հայկական թագավորությունը, բազում շնորհալի կաթողիկոսների ջանքերով ամրապնդվում էր եկեղեցու իշխանությունը: Արժե հիշատակել Ներսես Առաջինին (353—373), որ կոչվում էր «Պարթև», նաև նրա որդուն՝ Սահակ (Իսակ) Առաջին Մեծին (390—438): Նրանք կառուցեցին եկեղեցիներ, հիմնեցին շատ վանքեր, որոնք դարձան հոգևոր կրթության և ազգային դաստիարակության կենտրոններ: Ժողովրդի մեջ գրագիտություն տարածելու նպատակով երկրի տարբեր գավառներում բացեցին դպրոցներ: Ազգային ինքնահաստատման և մշակույթի զարգացման համար հատկապես մեծ նշանակություն ունեցավ կարևոր մի իրադարձություն: Ք. ծ. հ. 404 թ., Սահակ կաթողիկոսի օրոք, հայերն ունեցան իրենց սեփական գիրը: Այն ստեղծեց

հոգևորական Մեսրոպը. 36 նշանից բաղկացած այբուբենը մեծ մասամբ հունական տառերի վերաստություն է: Անմիջապես սկսում է գործել թարգմանիչների մի ամբողջ դպրոց: Հունարենից և ասորերենից հայերեն են թարգմանվում Ավետարանը, Հին Կտակարանը և եկեղեցական այլ գրվածքներ: Հայաստանը սեփական գիր ունենալով՝ վերջնականապես առանձնանում է բյուզանդա-հունական եկեղեցուց և նրա հոգևոր կյանքից, որոնց հետ հարաբերություններն արդեն լարված էին: Այս ձևով հաղթահարվում է ձուլման վտանգը: Կոստանդնուպոլիս կատարած այցի ժամանակ Սահակին հաջողվում է կարևոր մի գիշում կորզել: Նա թույլտվություն է ստանում հայ գիրը տարածել նաև Հայաստանի բյուզանդական փոքր հատվածում, որով ապահովվում է երկրի՝ քաղաքականապես բաժանված երկու մասերի եկեղեցական և հոգևոր միասնությունը:

Հայ եկեղեցու դավանաբանության պատմությունը անչափ ինքնատիպ է: Ըստ Սիրիայից երկիր թափանցած նախնական ուսմունքի, Քրիստոսը, երբ նրան կնքեց Հովհաննեսը, նախ մեղքերից զերծ մարդ էր և նոր միայն Աստծո Որդի: Այս թեզը հետագայում Նեստոր պատրիարքի կողմից խեղաթյուրվեց՝ Սիրիայից և Միջագետքից տարածվելով Պարսկաստան, Չինաստան և Հնդկաստան: Հայ հին եկեղեցին մեծ նշանակություն էր տալիս Սկրտչին, նրա ոսկորներն առաջին մասունքներն էին, որ Գրիգորը Հայաստան էր բերել, և շատ եկեղեցիներ ու վանքեր կառուցվեցին նրա պատվին (Կարապետ): Նիկիայի եկեղեցական ժողովը (325 թ.) որպես դավանաբանական դրույթ սահմանում է Քրիստոսի միասնությունն Աստծո հետ: Այն ընդունվում է հայ եկեղեցու, անձամբ Գրիգորի կողմից, որ այդ ժամանակ դեռ կենդանի էր: Սա վրձնորոշ նշանակություն ունեցավ հետագա դարերի համար ևս: Թեպետ հայ եկեղեցին չի մասնակցել Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) եկեղեցական ժողովներին, սակայն ընդունել է դրանցում սահմանված դավանաբանական դրույթները, նաև այն, որ սուրբ Հոգին սկզբնավորվելով Հայր Աստծուց՝ մի բնություն է Հոր և Որդու հետ: Հայ եկեղեցին մերժելով Քրիստոսի երկակի բնույթը՝ հարում է նեստորականությանը:

Հայ եկեղեցին չկարողացավ մասնակցել նաև Քաղկեդոնի եկեղեցական ժողովին (451 թ.), քանի որ այդ ժամանակ երկրում սաստիկ մոլեզմում էին պարսից Հագլեթոս Երկրորդ թագավորի հալածանքները քրիստոնեության դեմ: Այդ ժողովում ընդունված հետևյալ բանաձևը ևս դարձյալ չի բացահայտում Քրիստոսի անձի խորհուրդը. «Քրիստոսն իր էության աստվածային բնույթով Հոր հետ է, իր էության մարդկային բնույթով՝ մեզ հետ, միայն թե նա զերծ է մեղքերից: Քրիստոսի մեկ անձի մեջ մենք ճանաչում ենք երկու անքակտելիորեն միավորված, սակայն առանձին բնություններ»:

Երբ տարաբախտ հայերի վիճակը փոքր-ինչ թեթևանում է պարսիկ կռապաշտների սոսկալի հալածանքներից, 491 թ. Վաղարշապատում նրանք հրա-

վիրում են իրենց սեփական եկեղեցական ժողովը: Այնտեղ հրապարակայնորեն դատապարտվում են Քաղկեդոնի ժողովի դավանաբանական դրույթները: Սրանով, ցավոք, վերջնականապես կտրվում է կապը Բյուզանդիայի և Հռոմի եկեղեցիների հետ: Ամեն տեսակի արհավիրքների միջոց անցնելիս, հայերն ամուր պահեցին իրենց միաբնակ դավանանքը՝ պնդելով Քրիստոսի անձի միասնությունն ու աստվածային բնույթը: Նրանք ոչ մի դեպքում չընդունեցին երկաբնակ ուսմունքը: Միաժամանակ հայերն անգիջում դիրք էին բռնել եվտիքյանների՝ նեստորականների անհաշտ հակառակորդների դեմ: Նրանք ժխտում էին Քրիստոսի մարմինը մարդկային մարմնի հետ նույնացնելու տեսակետը: Հայերի համոզմունքն այն է, որ Քրիստոսը մարդ է բառի կատարյալ իմաստով:

Աստվածաբանական պատրանքների շուրջ վիճարկությունները բաժան-բաժան արեցին քրիստոնեական աշխարհը՝ կորզելով մարդկային հարյուր հազարավոր անմեղ կյանքեր, որոնք աստվածաբանական բանաձևերի համար ոչ այլ ինչ էին, քան դատարկ հնչյուններ: Սա հետագայում կարևոր խթան հանդիսացավ Արևելքում իսլամի հաղթարշավի համար: Հայաստանը ընկնելով դավանաբանական մանր խնդիրների հետևից՝ հեռացավ բյուզանդական և արևմտահռոմեական պետություններից, ինչպես նաև Պարսկաստանի բազմաթիվ քրիստոնեական համայնքներից: Բյուզանդիայի հունական եկեղեցին շարունակ գործադրում էր բոլոր միջոցները՝ սիրաշահելով կամ բռնությամբ հայ եկեղեցին իր ուսմունքին դարձնելու՝ ստիպելով նրան ընդունել քաղկեդոնական դավանանքի դրույթները: Սակայն հայերը միշտ զգուշանում էին անվերջանալի այդ ջանքերից: Չարմանալի է, որ ներքին մասնատվածության հետևանքով քաղաքականապես թուլացած հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում անասան էր, երբ խաղաքարտի վրա էին նրա հավատն ու եկեղեցու անկախությունը:

## ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՈՒ ԱՐԱԲՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Երբ պարսից թագավոր Հագլեթոս Երկրորդը մագդեսականությունը (Ավեստայի ուսմունքը), որպես միակ ճշմարիտ կրոն. փորձում է բռնի տարածել Հայաստանում, ժողովուրդը 449 թ. Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբում է: Պարսիկների դեմ պայքարում հաջողությունը որոշ ժամանակ հայերի կողմն էր: Այնուհետև 452 թ. Ավարայրում պետության արևելյան սահմանի մոտ, հայերը մեծ ճակատամարտ են տալիս պարսկական զերագանց բանակի դեմ: Հերոսական մարտում, ուր պարսիկները ևս ծանր կորուստներ կրեցին, ընկնում են Վարդանն ու նրա համակիր նախարարներից շատերը: Պարսից բանակի շահած ոչ սովորական հաղթանակը նրան խիստ:

թուլացրեց: Հետագա մի շարք փոքր մարտերից հետո, որոնց ընթացքում նորանոր նախարարներ էին գոհվում, Հայաստանին շնորհվում է կրոնական ազատություն, փրկվում են եկեղեցին ու հավատը՝ չնայած կաթողիկոսն ու եկեղեցական մի շարք բարձրաստիճան այրեր գերեվարվելով Պարսկաստան՝ այնտեղ մահապատժի են ենթարկվում:

Խաղաղ մի կարճ ժամանակամիջոց և նորից ծայր են առնում հալածանքներն ու բռնությունները: Կրկին ժողովորդն ապստամբում է, այս անգամ Վարդանի եղբորորդու՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: 484 թ. նա հաջող մարտեր է մղում պարսիկների դեմ՝ շահելով հաղթանակ հաղթանակի հետևից: Պարսիկները ստիպված փոխզիջման են գնում՝ Վահանին ճանաչելով մարզպան, որը 25 տարի (485—510) խաղաղ կառավարում է երկիրը: Անշուշտ Վարդանն ու Վահանը Հայաստանում ազգային հերոսներ են:

## ԱՐԱՔՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Բյուզանդիայի և Պարսկաստանի տևական կռիվները՝ Առաջավոր Ասիայում գերիշխանության հասնելու համար ավարտվում են 627 թ. Հերակլեսու կայսրի կողմից Սասանյաններին պարտության մատնելով: Այդ ժամանակ սկսվում են արաբական արշավանքները: Արաբները 642 թ. նվաճելով Պարսկաստանը՝ հարձակվում են Հայաստանի վրա: Թեպետ Բյուզանդիան աջակցում էր հայերին, սակայն միաժամանակ օգտվելով առիթից ցանկանում էր երկրի և եկեղեցու վրա տարածել իր գերիշխանությունը, որին հայերը հակազդում էին ուժեղ դիմադրությամբ: Քայքայիչ պատերազմներից հետո (654—661) Հայաստանն ի վերջո ընկնում է արաբների տիրապետության տակ՝ դառնալով խալիֆայության մարզերից մեկը, որը կառավարվում էր փոխարքայի կողմից: Պարսկաստանում արաբները կարճ ժամանակում ճնշում են մագդեզականությունը և բռնի իսլամ մտցնում: Մինչդեռ Հայաստանում նրանց ջանքերն այդ ուղղությամբ զուր են անցնում: Անշուշտ, վայրագություններին ու բռնություններին տեղի տալով՝ եղել են մասնավոր զիջումներ, սակայն ընդհանուր առմամբ հայերին հաջողվում է պահպանել իրենց կրոնական ազատությունը:

Հետաքրքիր է, որ 7-րդ դ. արաբական արշավանքների ժամանակաշրջանում վերելք է ապրում հայկական ճարտարապետությունը, հատկապես Ներսես Երրորդ Շինող կաթողիկոսի օրոք (641—661, հմմտ. էջ 121 և հաջորդներ): Չնայած արաբների արշավանքներին՝ Ներսեսը շատ եկեղեցիների թվում կառուցում է նաև Չվարթնոց եկեղեցին (հմմտ. էջ 120 և հաջորդներ), ուր իր կատարելությանն է հասցվել հայկական գմբեթաշինությունը:

Արաբ կուսակալները կամ էմիրները նստում էին Դվինում, որը նաև հայ

կաթողիկոսների նստավայրն էր: Արաբները հիմնականում շահագրգռված էին ժողովրդի վրա ծանր հարկեր դնելով, նրանք ջանում էին Հայաստանից քանել նրա վերջին միջոցները և սակավ էին խառնվում երկրի կառավարմանն ու ներքին գործերին, նրանց չէին անհագստացնում ոչ եկեղեցիները և ոչ էլ վանքերը: Այնուամենայնիվ օտար մահմեդական լուծը հայերի համար նվաստացուցիչ էր: Այդ ժամանակներից սկսած տեղի են ունենում կամավոր, նաև բռնի մեծ գաղթեր դեպի միջերկրածովյան երկրներ, Մերձավոր Արևելք և Պարսկաստան: Այս շարժումը շարունակվում է նաև հետագայում: Արաբների դեմ ևս բռնկվում են բազմաթիվ ապստամբություններ, հատկապես այն ժամանակ, երբ Բյուզանդիան հաջող մարտեր էր մղում խալիֆայության դեմ: Ապստամբությունները ղեկավարում էին հայ նախարարները, որ ապրում էին իրենց բերդերում: Քանի դեռ նրանց միջև չկար անհրաժեշտ միասնություն, խռովությունները ճնշվում էին: Ի վերջո նախարարական հզոր տները համախմբվելով՝ լրջորեն ապստամբվում են: Ապստամբության հաջող ընթացքը որոշ ժամանակ ապահովվում է արաբների դեմ բյուզանդական բանակների տարած հաղթանակների շնորհիվ: Սակայն դարձյալ բախտը երես է թեքում հայերից, քանի որ Բյուզանդիան ստիպված է լինում կնքել հաշտության նվաստացուցիչ մի պայմանագիր, որով Հայաստանը չարաչար պատժվում է:

## ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում կրկին բռնկվում է ժողովրդական ապստամբություն, որին առաջնորդում է Մմբատ Բագրատունին: Նա արաբների դեմ կռվում է այնքան ժամանակ, մինչև գերի է ընկնում և, մերժելով հավատափոխությունը, Բաղդատում տանջամահ է լինում (մոտ 856 թ.): Խալիֆայությունը, սակայն, աստիճանաբար կորցնում է իր երբեմնի հզորությունը, քանի որ արևելքից սպառնում էին թուրքերը, իսկ Բյուզանդիան շնորհիվ մի շարք խելամիտ, մեծ մասամբ հայկական ծագում ունեցող կայսրերի, վերելք է ապրում: 859 թ. խալիֆը Մմբատի որդուն՝ Աշոտ Բագրատունուն կարգում է Հայաստանի իշխան: 885 թ. Աշոտը ստանում է թագավորական տիտղոս՝ ընդունելով խալիֆի ուղարկած թագը: Մի թագ էլ նվիրում է հայագոհ Բարսեղ Առաջին կայսրը:

Բագրատունի թագավորական տունը Հայաստանը կառավարում է 200 տարի: Սկզբնական շրջանում անվանապես խալիֆայության գերիշխանության տակ էր, սակայն իրականում գրեթե կատարյալ անկախ: Բագրատունիները փոփոխական հաջողությամբ ծանր պատերազմներ են մղում բջնամի մահմեդականների, ինչպես նաև Բյուզանդիայի դեմ: Նրանք՝ չնայած նախարարական հզոր տների հետ ունեցած ներքին գծություններին, այլ անհաջողություններին, և ծանր իրավիճակներին, կարողանում են հաստատել իրենց:



Բագրատունիներն իրենց իշխանության տակ են առնում Հայաստանի մեծ մասը, այդ թվում Վանա լճի շրջակայքը՝ Վասպուրական աշխարհը: Այստեղ իշխում էր Արծրունի նախարարական տունը, որը հաճախ ընդվզելով Բագրատունիների դեմ՝ ի վերջո իր երկրում հաստատում է ինքնուրույն թագավորություն: Ծանր ժամանակներ էին, և հակառակորդները՝ թեև քրիստոնյա, միշտ չէ որ միմյանց նկատմամբ ներողամիտ էին: Քաջակորով Սմբատ Առաջինը (890—914) ճնշելով խոտվությունը՝ գերի ընկած նախարարներին կուրացնում և ուղարկում է բյուզանդական կայսրին ու «Կողբիս» (Իմերեթ) թագավորին: Ժամանակի առումով գուցե դա ավելի մեղմ պատիժ էր, քան կյանքից զրկելը:

Բագրատունիների պետությունն իր հզորության գագաթնակետին է հասնում Աշոտ Երկրորդ (951—977), Սմբատ Երկրորդ (977—989) և Գագիկ Առաջին (989—1020) թագավորների օրոք: Անի ամրոցը (հմմտ. էջ 94) դառնում է մայրաքաղաք, ամրացվում են պաշտպանական շինությունները. հյուսիսարևելյան կողմը, որ պաշտպանված չլիներով խոր ձորերով՝ առավել մատչելի էր, դրա համար շրջապատվում է բազում աշտարակներ ունեցող ամուր պարիսպներով: Կառուցվում են եկեղեցիներ, վանքեր, սպարանքներ ու բերդեր ինչպես քաղաքում և նրա շրջակայքում, այնպես էլ պետության այլ վայրերում: Հայաստանում կրկին բախվում ենք զարմանալի այն երևույթին, որ չնայած մշտական ու ավերիչ պատերազմներին, երկրում թափ է առնում ճարտարապետությունը, հասնելով զարգացման նոր աստիճանի, ծավալվում է համընդհանուր շինարարություն: Շինությունների պատվիրատուները անշուշտ թագավորները, հոգևորականներն ու ավատատերերն էին: Նրանք օգտագործում էին ժողովրդին, պատերազմների ավարն ու գերիներին: Մշակույթով զբաղվում էր վերին խավը. երկրի մնացած բնակչության ու քաղաքականաց դասի դերը դրանում շատ չնչին էր կամ առհասարակ բացակայում էր: Մովորական բնակելի տներից շատ քիչ բան է պահպանվել, մինչդեռ կանգուն են բազմաթիվ շքեղ շինություններ, որոնք ժողովրդի կենսական ու ստեղծագործ ուժի վառ վկաներն են:

Այդ շրջանում կաթողիկոսության վիճակը Հայաստանում անապահով էր: 931 թ. Գվինից այն տեղափոխվում է Աղթամար (դա մի կողմ է Վանա լճում): 959 թ. այնտեղից տեղափոխվում է Արգինա, որ գտնվում էր Անիից հյուսիս, իսկ 992 թ.՝ Անի, ուր մնում է մինչև 1072 թ.:

1020 թ., Գագիկի մահից հետո, Բագրատունիների թագավորությունը բաժանվում է նրա երկու որդիների՝ Հովհաննես Սմբատի (1020—1041) և Աշոտ Չորրորդի (1021—1040) միջև: Անմիաբանությունն ու գծությունները երկպառակում են նախարարներին և փոքր թագավորություններին, որոնք այն ժամանակ չորսն էին՝ Վասպուրականը, Աղվանքը, Կարսը և Լոռին: Ջլատվում էին երկրի դիմադիր ուժերը, իսկ նոր վտանգը՝ սելջուկ թուրքերը հեռու չէին: Արևելքում նրանք վերցրել էին իշխանությունը և գնալով դառնում էին սպառ-

նալի: Նոր, սուկալի թշնամու վայրի հորդանների երկար, ծայրը չերևացող բանակները ներխուժում էին լեռներով ու հարթություններով: Նրանց անթիվ, անհամար նետերը թռչում էին դեպի սրով ու վահանով զինված քրիստոնյա ռազմիկները: Առաջինը հարձակման է ենթարկվում շքեղ Վասպուրականը: Սենեքերիմ Արծրունի թագավորը՝ հուսահատված և փհատված հարձակումներից, լքում է իր երկիրը՝ 72 բերդով, 8 քաղաքով և 4000 զյուղով, և Բյուզանդիայի թագավորից Փոքր Ասիայում ստանում Սեբաստիա (Սվազ) քաղաքն իր շրջակայքով, ուր իրեն ապահով էր կարծում: 1021 թ. Սենեքերիմը տեղափոխվում է՝ իր հետ տանելով 14000 մարդ՝ կանանցով ու երեխաներով:

Վրաստանի և Աբխազիայի Բագրատունի թագավորները հարձակվում են Անիի վրա, գրավում և թալանում են քաղաքը: Այդ ընթացքում սելջուկ թուրքերը իրենց իշխանապետ Սելջուկի թոռ Տուրքի բեկի գլխավորությամբ ներխուժում են Արագի հովիտ ու ամայացնում այն: Հայ նախարարները չեն կարողանում համախմբվել ու դիմադրություն ցույց տալ, իսկ Անիի Գագիկ Երկրորդ թագավորը (1042—1045) պատերազմի մեջ էր Բյուզանդիայի հետ՝ փոխանակ հանձին նրա հուսալի դաշնակից ունենալու թուրքերի դեմ: Պատերազմի հաջող ընթացքի շնորհիվ որոշ ժամանակ հայերին հաջողվում է կասեցնել ինչպես սելջուկ թուրքերի, այնպես էլ կայսերական բանակի առաջխաղացումը: Այնուհետև Գագիկ թագավորը, խաբվելով կայսրի հրապարակայնորեն տված խոստումներից, գնում է Կոստանդնուպոլիս, իսկ այդ ընթացքում կայսերական բանակը հարձակվում է Անիի վրա և գրավում այն: Բագրատունիների երկիրը Վասպուրականի հետ միասին դառնում է արևելահռոմեական մարզ բյուզանդացի կուսակալով: Խաբված թագավորին շնորհում են մի երկրամաս Կապադովկիայում և մի ապարանք Կոստանդնուպոլսում: Սրանով Հայաստանում կործանվում է Բագրատունիների հռչակավոր պետությունը: Լոռիում Բագրատունիները գոյատևում են մինչև 13-րդ դարը:

Բյուզանդիան ևս չի կարողանում դիմադրել սելջուկ թուրքերի հորդանեին, որոնք Տուրքի բեկի գլխավորությամբ շարունակում էին առաջանալ: Ելուզակային արշավանքները հետևում էին մեկը մյուսին, մինչև որ թուրքերը հասան Եփրատի վերին հոսանքի հովիտները, մինչև Արգն (Էրզրումի մոտ), պոնտական անտառները, նույնիսկ մինչև Սեբաստիա, ուր Սենեքերիմ Արծրունի թագավորը իրեն ապահով էր կարծում: Այժմ արդեն փախչում են նրա որդիները՝ փրկելով իրենց կյանքը: Թուրքերը մի պահ միայն վարանում են՝ տեսնելով սպիտակ եկեղեցիների գմբեթները, որոնց թշնամու վրանների տեղ էին դրել, ապա հաջորդում է թալանը, իսկ քաղաքի փողոցներն ու ամբողջ երկիրը հեղեղում են արյան գետերը: Բյուզանդական եկեղեցին դեռ շարունակում էր հայ եկեղեցին կուլ տալու իր ճիգերը, ստիպում նրան հրաժարվել Քրիստոսի էության մասին իր միաբնակ դավանանքից: Հայերը երբեք տեղի չտվեցին, որի համար էլ ավելի կոտորվեցին:

Սելջուկ թուրքերը Վրաստան կատրած ավազակային արշավանքից հետո, մի օր՝ իրենց նոր հանդուգն սուլթան Ալի Արսլանի գլխավորությամբ, կանգնում են Անիի դարպասների առաջ: Քսանհինգօրյա պաշարումից հետո նրանք խուժում են հազար ու մեկ եկեղեցի ունեցող հրաշակերտ քաղաքը: Բնակիչները հնձվում են խոտի պես, քանի որ թուրքերը ամեն ձեռքին մի-մի դանակ ունեին, երրորդն էլ՝ ատամների արանքում: Դիմադրությունն այլևս ջախջախված էր: Հայաստանի համար վճռորոշ եղավ նաև Ռոմանոս կայսրի՝ 1071 թ. Մանազկերտի (Մելազկերտ) մոտ, Վանա լճից հյուսիս, ճակատամարտում Ալի Արսլանից պարտություն կրելը և գերի ընկնելը: Երկիրը անցնում է թուրքերի և Ղարաբաղի քուրդ էմիրի ձեռքը: 12-րդ դ. Հայաստանը մի կարճ ժամանակով մտնում է վրաց թագավորներ Դավիթ Շինարարի և Գեորգ Չորրորդի հովանավորության տակ: Նրանք մի քանի անգամ գրավում են Անին, կրկին տանուլ տալիս քրդերին: Թամարի օրոք քաղաքի վրա հարձակվում է Ագերթայջանի էմիր Արդաբիլը, բնակիչները դարձյալ կոտորվում են: Կարծես, մեկ անգամ էլ է հաջողվում հետ վերցնել Անին, ապա հետևում է ամենասուկային. 1239 թ. մոնղոլ Չինգիզ խանի վայրի հորդաները թալանում և ավերում են քաղաքը: 1319 թ. այն կործանվում է երկրաշարժից, հոյակերտ շատ շինություններ քանդվում են: Շատ չանցած՝ քաղաքը լրիվ ամայանում է:

Այժմ անապատի մեծության ու խաղաղության մեջ փոշիանում են Անիի գեղեցիկ ավերակները՝ պարուրված Հայաստանի պատմության մի փառահեղ ժամանակահատվածի հիշողությամբ: Դրանք խորհրդանշին են մարդկային ստեղծագործ ուժի և կործանելու մոլուցքի, ավերակված վկաները ստեղծագործ մի ժողովրդի, որ մոռացության է մատնվել Արևմուտքի աղմկարար աշխարհի կողմից:

### **ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԹԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՄԻՆՉԵՎ 18-ԲԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԸ**

Բռնատիրության երկար ժամանակաշրջանի ընթացքում՝ 5-րդ դարի վերջերից սկսած, հայերը սկսեցին խմբերով գաղթել դեպի Փոքր Ասիայի տարբեր վայրերը, այնտեղից էլ Միջերկրական ծովի ափամերձ քաղաքներն ու դեպի Եվրոպա՝ ամենուրեք հիմնելով բնակավայրեր: 11-րդ դ. սելջուկ թուրքերի ելուզակային արշավանքների հետևանքով այդ շարժումը մեծանում է: Արդեն նշեցինք Սվազում և Կապադովկիայում հայկական փոքր պետությունների ստեղծման մասին: Կարսի թագավորը նույնպես իր հպատակների հետ տեղափոխվում է հյուսիս՝ Ամասիայի մոտակայքում գտնվող Ծամնդավ բերդը:

### **ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շատ ազնվականներ գաղթում են Տավրոս լեռնաշղթայից արևմուտք և հարավ-արևմուտք, ինչպես նաև Եփրատից արևմուտք ընկած երկիրը՝ Կիլիկիա, հարուստ մի երկրամաս, որ արաբների ավերածություններից հետո մասամբ անբնակ էր: 1080 թ. հայ ազնվականները Ռուբեն իշխանի գլխավորությամբ Կիլիկիայում հիմնում են սեփական պետություն և հաջողությամբ դիմադրում Բյուզանդիային, որ փորձում էր ընկճել հերձվածողների այդ պետությունը՝ նրանց եկեղեցին ենթարկելով իր իշխանությանը: Ստեղծագործ հայ ժողովրդի այս նոր պետությունը, համարվելով հայերի հետագա հոսքով և դաշնակցելով 1097 թ. Կիլիկիա եկած խաչակիրների հետ, աճում և բարգավաճում է: Կիլիկիայի ազնվականությունը երեք հարյուրամյակ շարունակ, շրջապատված թշնամիներով, կարողանում է պահպանել իր անկախությունը թուրքերի աճող ուժերի և Բյուզանդիայի ոտնձգությունից: Հունաբյուզանդական և հռոմեական եկեղեցիների սիրաշահումներն ու սպառնալիքներն անհետևանք են մնում նաև Կիլիկիայի հայերի համար: Նրանք ևս հավատարիմ մնացին իրենց միաբնակ դավանանքին և պահպանեցին սեփական եկեղեցին:

Կիլիկյան պետության պատմությունը ժամանակի և արկածներով լի դեպքերի անվերջանալի շղթա է: Մա չէ՞ արդյոք կենսունակ գոյատևության ճշմարիտ վկան. մի ժողովուրդ, որ ճակատագրի սուսկալի հարվածներից ստիպված գաղթելով, օտար հողի վրա, թշնամիներով շրջապատված՝ ստեղծում և ծաղկեցնում է մի նոր պետություն՝ հարատևելով երեք հարյուրամյակ: Այստեղ ևս ներքին կռիվներից ջլատվում են պետության դիմադիր ուժերը: 1375 թ. Եգիպտոսի մամլուքները գրավում են Միս մայրաքաղաքը՝ հակառակ Լևոն Վեցերորդ վերջին թագավորի առասպելական հերոսական դիմադրության: Կիլիկյան թագավորության հետնորդ հանդիսացող Չեթյունը՝ Տավրոս լեռնաշղթայի շրջանում, մինչև վերջերս շարունակում էր պահպանել իր անկախությունն ու ազատ եկեղեցին:

### **ՄՈՆԳՈԼՆԵՐԻ ԱՐԵՎԱՆԹԵՆԵՐԸ. ՊԱՐՍԻԿՆԵՐՆ ՈՒ ԹՈՒՐԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

1223 թ. մոնղոլները Չինգիզ խանի գլխավորությամբ կապուտ-կողոպուտով ներխուժում են Հայաստանի սահմանները և մոտ հարյուր տարի մնում երկրի բացարձակ տերերը: 14-րդ դարի կեսերին պարսիկները նվաճում են Արևելյան Հայաստանը, իսկ Արևմտյան Հայաստանը ընկնում է թուրք «բեկերի» տիրապետության տակ: 1387 թ. գալիս են մոնղոլ Լենկթեմուրի վայրի հոր-

դաները և ամայացնում երկիրը, քաղաքներն ու գյուղերը կրակի մատնում, բնակչությանը սրախողխող անում, մինչև 1403 թ., երբ կրկին քաշվում են Թուրքեստան: Հայաստանի հնագույն պատմության մեջ հիշատակված բոլոր ոճրագործությունների համեմատությամբ Լենկթեմուրի հորդաների արարքները ամենագագնեղն են:

Հայաստանը կրկին դառնում է վիճելի տարածք և պատերազմական քատերաբեմ երկու մեծ տերությունների համար, որ արդեն մահմեդական հզոր պետություններ էին՝ արևելքում Պարսկաստանը, իսկ արևմուտքում՝ Բյուզանդիայի տեղը գրաված թուրքական պետությունը: Արևելյան Հայաստանը կրկին անցնում է պարսիկների տիրապետության տակ, իսկ Արևմտյան Հայաստանը՝ թուրքերի: Սելիմ Առաջին սուլթանը իր իշխանությունն ամրապնդելու նպատակով 1514 թ. քոչվոր քրդերին իրենց հուտերով բերում և բնակեցնում է երկրի տարբեր վայրերում՝ Վանա լճի շրջանում, Արարատից հարավ և Էրզրումի շրջանում: Քրդերը մահմեդական էին, բայց սուննիներ, որով էլ թշնամի էին շիիթ պարսիկներին: Ենթարկվելով միմիայն իրենց խաներին՝ նրանք ժամանակի ընթացքում դառնում են երկրի լիիրավ տերերը՝ առավել զարկ տալով ավագակությանը: Սահմանելով կամայական հարկեր՝ կեղեքում էին քրիստոնյաներին, ցանկացած դեպքում սպանում կամ վտարում երկրից, քանի որ քրիստոնյաներին արգելված էր զենք կրել:

Պարսկաստանը և թուրքական պետությունը փոփոխակի հաջողությամբ ընթացող պատերազմներից հետո, 1639 թ., Հայաստանը բաժանելու համաձայնություն են ձեռք բերում: Արագի հովիտը՝ կաթողիկոսի նստավայր Էջմիածնով, և երկրի հյուսիսային շրջանները, մոտավորապես այսօրվա Հայկական Հանրապետության տարածքը, անցնում են Պարսկաստանին, պատմական Հայաստանի մնացած մասը՝ թուրքերին: Այս բաժանումը ուժի մեջ մնաց մոտ 200 տարի, չնայած թուրքերն ու պարսիկները չէին դադարում պատերազմել, որից երկիրը սաստիկ տուժում էր:

## ԹՈՒՐԶԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Հայ ժողովրդի արհավիրքներով լի պատմության մեջ թուրքական տիրապետության շրջանն ամենատաժանելին էր: Քրիստոնյաները կամազուրկ սեփականություն էին, մահմեդական «տերերի» ստրուկներ: Ալլահը նրանց նվիրել էր իր հավատացյալ որդիներին: Նրանք կատարյալ իրավազուրկ էին, դատարանում անհավատի և քրիստոնյայի վկայությունը մահմեդականի դեմ համարվում էր անվավեր: Բռնությունների ու քաղաքի դեմ ամեն ըմբոստություն անհույս էր, որովհետև քրիստոնյաներին արգելված էր զենք օգտագործել: Հակառակը, բավականին ազատ էին արձակված քրդերի և այլ ավագա-

կախյալների ձեռքերը: Քանի որ քրիստոնյաներին պատիվ չէր վերապահվում այլախի համար պատերազմի զնալ, ուստի 8—60 տարեկան արական սեռի յուրաքանչյուր բնակիչ, այլ հարկերի և տուրքերի հետ, պարտավոր էր վճարել մեկ այլ ծանր հարկ ևս՝ զինվորական հարկ: Ավելացրած նաև «մանկահարկը», որ սուլթանը դրել էր անհավատների վրա, ըստ որի քրիստոնյաներից տարեկան հավաքում էին 4—8 տարեկան 1000 տղա երեխա: Նրանք թլպատվում էին, դատարարակվում իսլամի ոգով և համալրում ենիչերիների գործող բանակը, որը քրիստոնյաների դեմ թուրքական պետության ամենաստակալի զենքն էր:

Ժողովուրդը, ապրելով մման պայմաններում, ժամանակի հետ ձեռք է բերում նաև ոչ լավ հատկանիշներ: Ազատամիտ, հուպարտ ու պատվասեր անհատները սպանվում կամ արտաքսվում էին երկրից: Միայն հնագանդության ու ստորաքարշության ճանապարհով կարելի էր առաջ զնալ կամ կաշառքով ապահովել փոքրիշատե խաղաղ կեցություն: Արտառոց իրավիճակ էր. հպատակներն իրենց «իշխող ժողովրդից» շատ ավելի բարձր էին իմացությամբ, ճարտարությամբ ու գիտելիքներով, բացառությամբ միայն պատերազմական արվեստի: Խոշոր առևտուրն ու փողի գործը հայերի կամ հույների ձեռքն էր: Գրագիրներ, հարկահաններ, թարգմանիչներ և պետական այլ ծառայողներ հայեր էին: Նրանք օժտված էին բազմապիսի հմտությամբ, նրանք ճարտարապետներ ու ինժեներներ էին: Հայերն են կառուցել մահմեդականների բոլոր լավագույն տներն ու կամուրջները, բոլոր մեծ մզկիթները:

Հայ ժողովրդի ազգային ինքնահաստատման ճանապարհին ճակատագրական դեր խաղաց այն, որ բարձր ազնվականությունը դարեր շարունակ լիներ ժողովրդի նվիրյալ առաջնորդն ու ողնաշարը՝ պատմության ընթացքում պատերազմների հետևանքով մասամբ ոչնչացավ կամ գաղթեց: Միայն եկեղեցին մնաց ժողովրդի քիկուրքին կանգնած: Թուրքական տիրապետությունը, պարսկականի հետ համեմատած, ուներ միայն մեկ առավելություն. այն չէր խառնվում ժողովրդի կրոնական ու մշակութային կյանքին: Էջմիածնում նրստած կաթողիկոսը ժողովրդի գերագույն առաջնորդն էր: Բայց քանի որ Էջմիածինը պարսկական տիրապետության տակ էր, ուստի թուրքահայերի ճակատագիրը տնօրինում էր Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը, որը ենթակա էր սուլթանին: Պատրիարքությունը հիմնադրել էր Կոստանդնուպոլսը նվաճող Մուհամեդ Երկրորդը 1461 թ.:

Հայ մշակույթը զարգանում էր Պարսկահայաստանի և Թուրքահայաստանի խոշոր վանքերում: Դրանց խաղաղ պարիսպների պաշտպանությանն էին հանձնում հայերը իրենց հանճարեղ ստեղծագործությունները, այնտեղ գրվում և ընդօրինակվում էին աշխատություններ, որոնց էջերում արտացոլվում էին ժողովրդի հավատքը, նրա իմաստությունն ու բանաստեղծական արվեստը: Վանքերում էին գործում երկրի միակ դպրոցները, այնտեղ էին

կրթվում հոգևորականները: Վանքերն էին ժողովրդի սփոփանքը, այնտեղ նա գործում էր հոգեպետ, հաճախ նաև ապաստան գտնում ամուր պարիսպների ներսում, երբ մոլեգնում էին հալածանքներն ու թալանը:

Նոր վերելք էր ապրում հին հայկական ժողովրդական քնարերգությունը: Հայ գուսանները շրջում էին գյուղից գյուղ, ջութակի, որ «սագ» էր կոչվում, նվագակցությամբ երգում էին իրենց երգերը, որոնք մասամբ կրոնական բովանդակություն ունեին. կամ էլ պատկերում էին ժողովրդի կյանքը՝ ողբերգական էջերի, պայքարի ու մահվան, բնության ու սիրո նկարագրությամբ: Երաժշտական կյանքի կենտրոնը սուրբ Կարապետ վանքն էր (Մուշի մոտ), ուր ամեն տարի գուսանները հավաքվում էին մրցության: Հնում այստեղ եղել էր գոհատեղի՝ հեթանոսական երեք հայտնի մեհյաններով, այստեղ՝ Աշտիշատում, Գրիգորը կառուցում է առաջին եկեղեցին: Անշուշտ, գուսանների մրցության սովորույթը գալիս էր հեթանոսական շրջանից, իսկ գուսաններին հովանավորող սուրբը՝ Հովհաննես Սկրտիչը (Կարապետ), նույնպես իր պաշտոնը ժառանգել էր հեթանոսական աստվածներից:

Ժողովրդական քնարերգությունը տվել է նշանավոր բանաստեղծներ: 12-րդ դ. Ներսես կաթողիկոս Կլայեցին, որ կոչվում է Ընորհալի (այսինքն՝ շնորհքով օժտված), բացի շարականներից ու կրոնական երգերից, ժողովրդի լեզվով գրել է հրաշալի բանաստեղծություններ: 13-րդ դարում՝ մոնղոլների տիրապետության շրջանում, «Ֆրիկ» կեղծանունով հանդես է գալիս մեծ իմաստությամբ օժտված ինքնատիպ մի բանաստեղծ, որ երգում է ուրախություն, վիշտ ու տառապանք՝ ծաղրելով կյանքի ունայնությունը: Նշանավոր բանաստեղծներից է նաև Նահապետ Քուչակը, որն ապրել է 15-րդ դարում: Խոր թախիծ ու տառապանք արտահայտող նրա երգերից ճառագում է լուսավոր կենսասիրություն: Ընդհանուր առմամբ ամբողջ հայ քնարերգությունը հագեցած է մելամաղձոտ թախծի երանգներով:

Այլ ասպարեզներում և ս, ինչպես ճարտարապետության և արվեստների մեջ, հայ հոգևոր կյանքն առատ հունձք է տվել: Մի թուրք գրողի վկայությամբ Անատոլիայի հոյակապ մզկիթներն ու եվրոպական թուրքիան կրում են հայ մշակույթի գաղափարական ու գեղարվեստական կնիքը: Դրանց մեծագույն մասը, ուր առավել ինքնատիպ է ներկայացված հասարակական, մշակութային և հոգևոր կյանքը, ստեղծել են հայերը: Նրանք թուրքական թատրոնի դերասաններ ու կատակերգակներ էին, թուրքիայում հայտնի երգիչներ ու երաժիշտներ, բուն իմաստով՝ թուրքական երաժշտություն արարողներ:

Հայոց հոգևոր վերելքի բնագավառում իրենց հատուկ ավանդն ունեն այսպես կոչված Մխիթարյանները՝ սվագի Մանուկ Մխիթար (այսինքն՝ «սփոփող») վանականի հիմնած միաբանությունը: Սկզբում Մխիթարն իր համախոհների հետ գործում էր Կոստանդնուպոլսում, ապա Մոռայում: 1715 թ. նրանք գնում են Վենետիկ, հաստատվում Սուրբ Ղազար կղզում և կառուցում այնտեղ փառահեղ մի վանք: 1712 թ. Մխիթարյանները ընդունում են հռոմեական եկեղեցու հովանավորությունը, որը սակայն չի խանգարում նրանց պահպանել կապը հայ ժողովրդի հետ: Մխիթարյանները հիմնում են սեփական հայկական տպարան, 1811-ին Վիեննայում և ս հիմնում են տպարան և վանք, որ նախապես (1773-ից) Թրիեստում էր գործում: Մխիթարն ու նրա հետևորդները ծավալում են հայերեն բազմապիսի գրքերի ու աշխատությունների (սկզբնաղբյուրներ և թարգմանություններ) հրատարակման ու տպագրման զարմանալի բեղուն գործունեություն, որը խթանեց հայ մշակույթի, ազգային մտածելակերպի ու ինքնաճանաչման վերածնունդը: Չարթոնք է ապրում նաև հայ նոր գրականությունը՝ ժողովրդի հոգևոր անդաստանը հեղեղելով թարմ ու ժերով: Եվ վերջապես, նրանց կատարած բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ ժողովուրդը հաւսու է դառնում նաև արևմտաեվրոպական քնարերգությանը, զիտությանն ու մեթոդներին: Մխիթար Մանուկն իր տառապած ժողովրդի զարթոնքն ապահովող մեծ գործիչ էր:

### ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայ ժողովրդի ողբերգությունը օտարին անմնացորդ նվիրումով ծառայելու մեջ է: Սակայն բախտի քմահաճույքով նա չի կարողացել իր սեփական երկիրը մշտապես պահել ամուր ձեռքերում: Բյուզանդիայում գործել են հայագրի շատ նշանավոր այրեր, զարմանալի է՝ նաև հմուտ հրամանատարներ ու զորավարներ, ինչպես, օրինակ, Հուստինիանոս կայսրի զորավար Ներսեսը, որն իր բանակներով նվաճեց Իտալիան և այնուհետև դրա համար կենդանի այրվեց խարույկի վրա, կամ Հովհաննես Ղուկասը (920—942)՝ արաբների դեմ պատերազմում փառաբանված զորավարը: Տարբեր ժամանակներում բյուզանդական պետական նավը շատ փորձությունների միջով վարել են հայագրի հմուտ կայսրեր, պաշտպանել ու ամրացրել կայսրության հզորությունը: Այդ կայսրերից կայելի է հիշատակել Մոյսիկին, Հերակլիոսին (որի հայրն էր հայ), Վարդանին (Փիլիպպիկոս), Արտավազդին, Լեոն Հինգերորդին, Վասիլ Առաջինին, Ռոմանոս Լակապենոսին, Հովհան Չմշկիկին, Վասիլ Երկրորդին (Բուլղարասպան) և ուրիշների: Թագուհիների մի ամբողջ շարք և ս ուներ հայկական ծագում: Այսպիսով, երկար ժամանակ համաշխարհային նշանակու-



թյուն ունեցող կայսրության ճակատագիրը կախված էր հայազգի տիրակալների վճռներից ու գործելակերպից:

Սեփական երկրին սակայն, հակառակ ամեն ջանքի, հայերը չէին կարողանում օգնել: Թերևս նրանք տոգորված էին ժողովրդի հոգևոր միասնության գաղափարով: Այդ է վկայում այն տոկուն համատությունը, որով հայերը բոլոր ժամանակներում համախմբված մնացին իրենց եկեղեցու և նրա ուսմունքի շուրջ՝ պաշտպանելով այն հույն ուղղափառ և հռոմեական կաթոլիկ եկեղեցու ճնշումից: Սակայն նրանք երբեք չկարողացան հասնել այն ճշմարիտ, համընդհանուր հայրենասիրությանը, որի դիմաց կրկնվեին բոլոր մնացած գործունեները, և որը կլիներ ազատության և քաղաքական միասնության նախապայման: Սեկ այլ տեղ (էջ 203) արդեն նշել են, որ դա նախ և առաջ պայմանավորված էր երկրի բնության առանձնահատկությամբ, որն ինքնին ժողովրդին մասնատել էր առանձին շրջանների ու գավառների մեջ, որոնց առաջնորդները շատ թե քիչ չափով ինքնուրույն էին, իսկ նրանց միջև ներքին գծությունները թուլացնում էին դիմադրությունը արտաքին թշնամուն:

Ժողովրդի հավաքական ուժի նվազման մյուս կարևոր պատճառներից է, ինչպես արդեն նշել ենք (էջ 222), բնակչության մեծ քանակությամբ արտագաղթը, որի հետևանքով երկիրը շարունակ կորցնում էր իր լավագույն ուժերը: Տաղանդավոր այլ ժողովուրդների նման հայերի շրջագայելու և աշխարհ տեսնելու մղումը, ըստ երևույթին արյան մեջ է: Ճակատագրի գոյությունը շատ ավելի էր այդ կիրքը մեղմելու համար: Հին ժամանակներից ի վեր թշնամու թափառող հորդաները հեղեղի պես թշում էին ժողովրդին մաս առ մաս երկրի սահմաններից դուրս՝ սփռելով աշխարհով մեկ: Բյուզանդական կայսրերը, ինչպես Մորիկը (582—602), Փոկասը (602—610), Վասիլ Երկրորդը (976—1025), նվաճված հայկական տարածքներից բնակչությանը գաղթեցնում էին Թրակիա և Մակեդոնիա՝ դրանով ամրացնելով այդ երկրները Դանուբի մյուս կողմից եկող թշնամու կամ բուլղարների հարձակումների դեմ: Այսպես Փոկաս կայսրը գաղթեցրեց 30 հազար ընտանիք: Հայերը շատ երկրներում հիմնեցին մեծ ու փոքր բնակավայրեր և ուր որ գնացին, աչքի ընկան բանիմացությամբ, ձեռներեցությամբ և ջանասիրությամբ: Արևելքում նրանք հասան մինչև Պարսկաստան, Հնդկաստան, Չոնդյան կղզիներ և Չինաստան, արևմուտքում՝ Սիրիա, Եգիպտոս և Միջերկրական ծովի երկրներ, որի առափնյա գրեթե բոլոր քաղաքներում հայերն ունեին իրենց քաղամասերը: Նրանք հասան նույնիսկ Լեհաստան՝ թվով 10000 մարդ, Գալիցիա, Մոլդովա, Բուկովինա, Տրանսիլվանիա, Իտալիա և այլուր: 11-րդ դ. սելջուկ թուրքերի, իսկ ավելի ուշ մոնղոլների արշավանքներից հետո տեղի ունեցան զանգվածային արտագաղթեր: Այս բազմամարդ արտագաղթերի հետևանքով հայրենիքում նոսրանում էր հայ բնակչությունը: Բերրի երկրամասեր անբողջապես մարդաթափ էին լինում կամ կոխկրտվում ձիու սմբակների տակ, մինչ քոչվոր քրդերը թա-

փառում էին լեռներում: Թուրքերը, քաթարներն ու քրդերը ազատ տեղավորվում էին հովիտներում և դաշտերում, որոնք նախկինում միայն հայերով էին բնակեցված կամ նրանք ջախջախիչ մեծամասնություն էին կազմում: Այսպես առաջացավ խառը բնակչություն:

Ինչպես արդեն նշել ենք, թեև հայերի մշտական շփումներն օտար քաղաքացուների վաճառականների հետ զգալիորեն խթանում էին հոգևոր կյանքի զարգացումը, այդուհանդերձ Հայաստանում առկա պայմանները նպաստավոր չէին բարձրարժեք համապարփակ մշակույթ ստեղծելու: Բնակչության մեծ մասը գյուղացիներ էին, որոնք չէին կարող լինել բարձր հոգևոր մշակույթի անմիջական կրողներ: Մշակույթի զարգացման համար անհրաժեշտ էին գործունեության լայն ասպարեզ և ազատ ժամանակ ունեցող անհատներ, և ոչ թե մարդիկ, որոնք ստիպված էին առավտից երեկո գնալ արդիի հետևից: Դրա համար պետք էին քաղաքներ, որոնք կդառնային մշակութային կյանքի մեծ կամ փոքր կենտրոններ, որտեղ կաշխուժանար հոգևոր կյանքը և մտքերի փոխանակությունը, և որտեղ հնարավոր կլիներ իրականացնել մտահղացումներ: Նման քաղաքային կենտրոններ չկային Հայաստանում. այնտեղ գերիշխում էին վանքերը, որտեղ և ընթանում էր հոգևոր կյանքը: Երկիրը ելք չուներ դեպի ծով, ուրեմն և ոչ մի նավահանգստային քաղաք: Անշուշտ, սա էր պատճառը, որ ժողովրդի ծոցից դուրս եկած շատ տաղանդավոր մարդիկ Բյուզանդիայում կամ Արևմուտքի այլ քաղաքներում, ինչպես նաև Արևելքում Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող խոշոր քաղաքներում էին փնտրում իրենց ստեղծագործական կարողություններին համապատասխան մշակութային մեծ կենտրոններ: Այնտեղ նրանք կարող էին ազատորեն ծավալել իրենց՝ ոգևոր ունակությունները և օգտակար լինել օտարներին. հայրենիքի համար, սակայն, նրանք կորած էին:

Մյուս կողմից՝ հայ ժողովուրդն իր լեռնաշխարհի ներփակության մեջ շարունակաբար ստեղծում էր ինքնատիպ ազգային մշակույթ և ամուր պահում իր ստեղծածը՝ հաճախ մինչև մոլեռանդության աստիճան: Դրա ապացույցն են կրոնը և եկեղեցին, որոնք բոլոր ժամանակներում պահպանեցին իրենց անկախությունը: Ամեն դեպքում տաղանդավոր այս ժողովրդի ինքնատիպ զարգացման ընթացքն իր էական ազդեցությունն է թողել ոչ միայն բյուզանդական, այլև արևմտաեվրոպական մշակույթի վրա: Վաղ շրջանում հայ ժողովուրդն առաջինն էր, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն և իր սեփական սահմաններից դուրս սկսեց ծավալել եկեղեցական մշակութային գործունեություն: 6-րդ դարից առաջ, կարծիք կա նույնիսկ 4-րդ դարում, Երուսաղեմում և Պաղեստինի այլ վայրերում հայերը կառուցել են 70 վանք, չհաշված այն բազմաթիվ վանքերը, որ կառուցվել են Եգիպտոսում, Սինայի ափին, Ալեքսանդրիայում և Թերախնում<sup>29</sup>: 11—12-րդ դդ. Եգիպտոսում շատ

հայեր էին ապրում: Իսկ թե ինչ նշանակալի դեր են խաղացել նրանք Բյուզանդիայի պատմության մեջ, արդեն վերը խոսվեց:

Մեր՝ հյուսիսի գերմանների շփումը Հայաստանի հետ նույնպես ամանց ազդեցության չի եղել: Արժանահիշատակ է այն փաստը, որ գոթերը քրիստոնեության մասին ունեցած իրենց առաջին տեղեկությունների համար մասամբ պարտական են հայերին: Սոֆոս Բուզգեն հիշատակում է, որ Ուլֆիլաս եպիսկոպոսի կողմից Աստվածաշնչի գոթերեն թարգմանությունը պարունակում է բազմաթիվ հայկաբանություններ: Դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ գոթերը 257 թ. Ուլֆիլասի<sup>29</sup> տատին և պապին որպես ռազմագերի բերել էին հարավ-արևմտյան Ռուսաստան Կապադովկիայից՝ հայերի նախկին հայրենիքից, ուր միշտ էլ շատ հայեր են ապրել: Այդ ժամանակ Կապադովկիայում էր ուսանում հետազայում հայտնի Գրիգոր Լուսավորիչը: Գոթերը Սև ծովի ափերին եղած ժամանակ նույնպես շփվել են հայերի հետ՝ ամենից առաջ վաճառականների և քարոզիչների միջոցով: Գոթական ճարտարապետության շատ գծեր, որ գոթերը հետազայում իրենց հետ տարան Բուլղարիա և Արևմտյան Եվրոպա, իրենց վրա կրում են հայկական ճարտարապետության ազդեցությունը: Հետաքրքիր է այն փաստը, որ արևմտյան գոթերը Իսպանիայում ունեին հայկական անուններով իշխաններ, ինչպես Արտավազդը (Ք. ծ. ա. 710 թ.)<sup>31</sup>:

Հայկական այդ ազդեցությունները հասել էին նույնիսկ մինչև Սկանդինավիա և, անշուշտ, դրանով կարելի է բացատրել, օրինակ, Շվեդիայում Բոհուսլենի և Բլեքինգեի դամբարանադաշտերի և գերեզմանաքարերի այդչափ նմանությունը հայկական գերեզմանատների և տապանաքարերի հետ: Հետազայում էլ այդ կապը չի խզվել: Պրոֆեսոր Մագնուս Օլսեն իմ ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Արե Ֆրոդեն «Իսլանդացիներ» գրքում (գլուխ 8) խոսում է երեք «երմսքի»-ների (այսինքն՝ հայերի)՝ Պետրոսի, Աբրահամի և Ստեփանի մասին, որոնք Իսլանդիայում ներկայացել էին որպես հայ եպիսկոպոսներ: Նրանց պատվիրանները «շատ տեսակետից ավելի մեղմ էին, քան Իսլայվ եպիսկոպոսի (1056—1080 Ք. ծ. հ.) պատվիրանները, այդ պատճառով հասարակ մարդիկ նրանց նկատմամբ լավ էին տրամադրված: Արքեպիսկոպոս Ադալբերտը նամակ է ուղարկում Իսլանդիա և արգելում է մարդկանց ընդունել նրանցից խոսքը (աստծո), և նա ասում է, որ նգովված են նրանք և եկել են հակառակ իր կամքի»<sup>32</sup>: Այդ «երմսքի»-ները անշուշտ Իսլանդիա եկած հայ քարոզիչներ էին: Դա այն ժամանակ էր, երբ սելջուկ թուրքերի Հայաստան կատարած բազմաթիվ ներխուժումների հետևանքով տեղի էր ունենում հայ բնակչության զանգվածային արտագաղթ դեպի աշխարհի տարբեր երկրներ: Այդ երեք «երմսքի»-ները քարոզում էին իրենց Գրիգորյան ուսմունքը, որ, անշուշտ, կաթոլիկ արքեպիսկոպոսի կողմից որպես հերետիկոսություն պետք է բանադրանքի

ենթարկված լիներ:

Միջնադարում ճարտարապետության զարգացման բնագավառում հայերն ունեն իրենց որոշակի նախաձեռնությունն ու կարևոր ներդրումը: 3-րդ դ. վերջերին և հատկապես 4-րդ և 5-րդ դդ. Հայաստանում կառուցվել են շատ եկեղեցիներ, իսկ ավելի վաղ՝ 2-րդ դ., եկեղեցիներ են կառուցվել Սիրիայում (Եդեսիա) և Տիգրիսից արևելք Արբելայում: Դրանք մեծ մասամբ երկարավուն կաթողիկե եկեղեցիներ էին, և կարելի է ենթադրել, որ այդպիսիք ավելի վաղ կառուցվել էին նաև Հայաստանում ու Վրաստանում: Նեկրեսիի ավերակները հավանաբար 4-րդ դարի մի կաթողիկե եկեղեցու մնացորդներ են: Ամենայն հավանականությամբ այդ վայրերում շատ արագ զարգանում է եկեղեցաշինության սեփական ոճ, որ բնորոշվում է քառանկյուն կենտրոնազմբեթ կառույցով (հմմտ. էջ 178 և հաջորդներ): Այս ոճը սերտ կապի մեջ է արևելյան ձևերի հետ: Հայերը վաղ անցյալում գտնվում էին մարերի, ապա պարսից գերիշխանության տակ, ավելի ուշ նրանք սերտ շփման մեջ էին Պարթևական պետության հետ, որտեղից էլ ծագում է նրանց Արշակունի թագավորական տունը: Այստեղից էր բխում իշխանների պարթևամետությունը, և ո՛չ Մասանյանները, ո՛չ էլ Հռոմը կամ Բյուզանդիան չկարողացան շահել նրանց համակրանքը: Քաղաքական այդ հարաբերությունները անշուշտ իրենց կնիքը դրեցին նաև ճարտարապետության վրա: Ենթադրվում է, որ քառանկյուն կենտրոնազմբեթ կառույցը զարգացել է՝ իր հիմքում ունենալով հեթանոսական տաճարը (հմմտ. էջ 178): Այլ բաների թվում այդ կապն արտահայտված է նաև աստիճաններ ունեցող գետնախարիսխի մեջ, որը հայկական եկեղեցիներում պարսպապատ է (հմմտ. էջ 66, 121, տե՛ս նաև 173 և 177 էջերի նկարները): Դրանք շատ լավ են հին զոհարաններում և տաճարներում վեր ձգվող գետնախարիսխներին: Հարավում՝ Սիրիայի եկեղեցիներում, և արևմուտքում՝ Փոքր Ասիայում կամ Եվրոպայում չի հանդիպում այս ոճը:

Հայկական ճարտարապետությանը բնորոշ կենտրոնական զմբեթը, անկասկած, արևելյան ծագում ունի և գալիս է հավանաբար Պարսկաստանից:

Եկեղեցական ճարտարապետությունն Արևմուտքում սկսեց զարգանալ մի քանի հարյուրամյակ ավելի ուշ և իր վրա կրեց արևելյան ճարտարապետության ուժեղ ազդեցությունը: Այդ ազդեցությունը գալիս էր ոչ թե Բյուզանդիայից, այլ անմիջապես զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող Առաջավոր Ասիայից՝ Սիրիայից, Միջագետքից, Հայաստանից և Վրաստանից: Անկասկած արևմուտք գաղթած ասորիներն ու հայերն էին այդ ազդեցության տարածողները: Ռոմանական ճարտարապետության շատ գծեր դեռ վաղ ժամանակներում գոյություն են ունեցել Արևելքում, ամեն դեպքում ավելի վաղ, քան դրանք հանդիպում են Եվրոպայում: Դրանք են. ծանր կամրջապույների առկայությունը սյուների կողքին, կամարածև ծոփորը, խորանարդածև խոյակը, սնամեջ կամարները և արտաքին բարեձև կիսասյուները, ծագարածև ճա-

<sup>29</sup> Սարժիզովսկի, նույն տեղը, հ. II, էջ 73 և հաջորդներ:

<sup>30</sup> Ուլֆիլասը ծնվել է Ք. ծ. հ. 311 թ.:

<sup>31</sup> Հմմտ. Սարժիզովսկի, նույն տեղը, հ. II, էջ 728 և հաջորդներ:

<sup>32</sup> Հմմտ. *Hungryvaka*, Kap. 2, Biskura sogur. I: St u nalu Konrad Maurer: Die Bekehrung des norwegischen Stammes zum Christentum, h. II, էջ 586 և հաջորդներ:

կատանուտքը, որը դեպի ներս նեղացող իր շարակցված կամարներով և կիսասյուններով այնքան բնորոշ է միջնադարի եվրոպական ճարտարապետությանը: Ահա ճարտարապետական այս բոլոր գծերը վաղուց ի վեր կիրառվում էին Հայաստանում: Շինությունները քարերի մուգ և բաց երանգներով, ժայպեմանած և շերտերով զարդարելու արվեստը հայերը սովորել էին խալդեոսից, որ ավելի ուշ գործածության մեջ մտավ Իտալիայում, հատկապես Մենոփայում և Ֆլորենցիայում: Կաթողիկե եկեղեցու փայտածածկին փոխարինող հովհարածև կամարը վերցված է Միջագետքից, իսկ քառանկյուն եկեղեցու կամարակապ գմբեթը հայկական և վրացական ճարտարապետության նվաճումն է: Դեռ վաղ միջնադարում վերջինս, որպես հին հռոմեական գմբեթաշինությունից տարբեր մի ոճ, կիրառություն գտավ Եվրոպայում: Այն իր դրոշմը դրեց Սոֆիայի տաճարի ճարտարապետական մտահղացումների վրա, և այնուհետև հայերի և Հայաստանի հետ առնչվող գոթերի միջոցով տարածվեց Արևմուտքում: Հայկական ճարտարապետական ոճով կառուցված եկեղեցիների և բապտիստական աղոթատեղիների մի ամբողջ շարք կա Աբենքում, հյուսիսային Իտալիայում (Միլան), Ֆրանսիայում (ժերմին դե Բրե, Օրլանոյի մոտ) և այլ վայրերում, ինչպես Աթոսի<sup>33</sup> եկեղեցիներից շատերը նույնպես իրենց վրա կրում են այդ ազդեցությունը: Կենտրոնագմբեթ կառույցը հետագայում՝ 15—16-րդ դդ., բարձր զարգացման հասավ Արևմտյան Եվրոպայում այնպիսի վարպետների կողմից, ինչպիսիք էին՝ Բրունելլեսկին, Ալբերտին, Լեոնարդոն, Բրամանտեն և Վիզոլան (Հոմբի եկեղեցին), և իր ծաղկմանը հասավ Ֆլորենցիայի Մայր տաճարի և Պետրոսի եկեղեցու գմբեթների ճարտարապետության մեջ: Շատերի թվում մեզ ծանոթ են նաև Լեոնարդոյի գծագրերը և էսքիզները, որոնք այնքան հարազատ են հայկական գմբեթակիր քառանկյուն եկեղեցիներին և մատուռներին, և տարակույս չկա, որ դրանք ստեղծվել են բնօրինակների հետ վարպետի անմիջական ծանոթությունից<sup>34</sup>:

Ընդամին տիրապետող է այն կարծիքը, որ Բյուզանդիան է ազդեցություն գործել հայկական ճարտարապետության վրա, այլ ոչ հակառակը: Վերջինիս պետք է հակադրել այն, որ հայկական եկեղեցին հիմնադրվել է բյուզանդականից ավելի վաղ, և որ այն Քաղբեղոնի եկեղեցական ժողովից ի վեր բյուզանդական եկեղեցու կատաղի հակառակորդն էր: Հայկական եկեղեցու ճարտարապետությունը տարբերվում է բյուզանդականից խստությամբ, զարդածևերի օգտագործման նրբությամբ և խնայողությամբ, հատկապես՝ քանդակների և որմնանկարների կրոնական բովանդակությունից խուսափելով: Այստեղ այն հակադրվում է հելլենական արվեստ և մշակույթ հասկացությանը և ավելի շուտ ազգակից է այն կրոնին, որն իր արտահայտությունն է գտել Ջրաղաշտի ուս-

մունքում, ըստ որի աստվածությունը, աստվածային էակները գերբնական, վերացական հասկացություններ են, որոնց չի կարելի ոչ միայն մարմնավորել, այլև տալ մարդկային կերպարանք: Այս աշխարհայացքն առաջացել է ժողովրդի ամենախոր և ամենալուրջ կրոնական պատկերացումներից, ժողովուրդ, որի համար կրոնը հոգևոր էր, պակաս շոշափելի, մինչդեռ այն բոլորովին այլ էր մշակութային մեծ քաղաքների անհոգ բնակչության համար: Հրեական Յահվեի պաշտամունքը, իսկ ավելի ուշ իսլամը չեն ճանաչում պատկերազարդությունը: Պատկերամարտ ուղղությունը Բյուզանդիայի պատմության մեջ թողել է իր որոշակի հետքը: Անշուշտ, 726—843 թթ. պատկերամարտությունը մասամբ մաքրագործող փոթորիկի դեր կատարեց տգետ սնտիապաշտության դեմ: Շարժումը սնվում էր հայկական ազդեցությունից և մղվում էր հատկապես փոքրասիական և հայկական ծագում ունեցող կայսրերի կողմից: Եկեղեցական այս շարժումը ընդգրկեց անգամ լուսերականությանը և պորիտաններին:

Միջին դարերի մեծագույն նվաճումը՝ գոթական ոճը, իր հիմնադրույթներով մեծապես պարտական է հայ ժողովրդի նախածեղություններին: Չի կարելի այլևս անտեսել, որ գոթական ճարտարապետությանը բնորոշ շատ գծեր, Եվրոպայում գոթական ոճի ձև ավորումից շատ հարյուրամյակներ առաջ, առկա էին Հայաստանի եկեղեցիներում և ճարտարապետական այլ կառույցներում: Սա վերաբերում է հատկապես Անիի Մայր տաճարին<sup>35</sup>: Այն եռանավ երկարավուն եկեղեցի է, որի պատերը և տանիքը կանգուն են մինչև օրս, եթե վերջին երկրաշարժից չեն ավերվել: Մայր տաճարը կառուցվել է Ք. ծ. հ. 1001 թվականին, Գագիկ թագավորի օրոք, ճարտարապետ Տրդատի կողմից, որը նույն ոճով կառուցել է նաև Արգինայի Մայր տաճարը՝ Կարս գետից հյուսիս<sup>36</sup>: 989 թ. Վասիլ կայսրը Տրդատին հրավիրում է Կոստանդնուպոլիս՝ երկրաշարժից տուժած Սոֆիայի տաճարը վերանորոգելու: Արդեն խոսվել է Քութայիսի Մայր տաճարի և Եվրոպայում ավելի ուշ կառուցված գոթական ոճի եկեղեցիների նմանության մասին (էջ 82): Դա առավել վերաբերում է ավելի վաղ կառուցված Անիի Մայր տաճարին: Վերջինիս ճարտարապետական ոճը կարծես անցում լինի տիպիկ հայկականից դեպի ռոմանագոթական՝ ցուցադրելով գոթական ոճի առավել բնորոշ գծերը, ինչպիսիք սրականաբները և սյունաշարերն են: Նմանությունն այնքան ակնհայտ է, որ գոթական ոճի զուտ եվրոպական ծագման կողմնակից որոշ արվեստաբաններ կարծում են, որ Անիի Մայր տաճարը պետք է վերանորոգված լինի 13-րդ դ. արևմտաեվրոպական ճարտարապետների կողմից: Սակայն բոլոր վեճերն անհիմն են: Եթե նույնիսկ եկեղեցու կառուցման ժամանակն իր վերջնական ձևի մեջ բավարար ճշգրտու-

<sup>33</sup> Ստրոֆոպոլսկի, նույն տեղը, հ. II, էջ 766 և հաջորդներ:

<sup>34</sup> Հմմտ. Ստրոֆոպոլսկի, նույն տեղը, հ. II, էջ 863 և հաջորդներ:

<sup>35</sup> Տես Lynch: Armenia, h. II, էջ 371 և հաջորդները: Ստրոֆոպոլսկի, նույն տեղը, հ. II, էջ 184 և հաջորդները:

<sup>36</sup> Հմմտ. Ստրոֆոպոլսկի, նույն տեղը, հ. II, էջ 590 և հաջորդները:

թյամբ հնարավոր չէ որոշել միևնույն է՝ նման «գոթական» գծեր ավել կամ պակաս ցայտունությամբ հանդիպում են նույն կամ ավելի վաղ շրջանի պատկանող հայկական ուրիշ շատ եկեղեցիներում:

Եկեղեցու այս տիպը առաջացել է Միջագետքի՝ հարավից մուտք գործած հովհարածև կամարներով երկարավուն եկեղեցիների և տեղի քառանկյուն գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետական ոճերի միախառնումից: Այստեղից է սկզբնավորվել եռանավ երկարավուն եկեղեցու ճարտարապետական ոճը: Այս տիպի հնագույն կառույցը Դ-վիճի Գրիգորի եկեղեցին է, որ կառուցվել է 7-րդ դ. սկզբին և ավերվել 9-րդ դ. երկրաշարժի<sup>37</sup>:

Անիի Մայր տաճարում և ճարտարապետական այս ձևի եկեղեցիներում որպես գոթական ոճի բնորոշ գիծ կարելի է թվարկել ծանր սրակամարները, որոնք ծառայում են հիմնական կամարները չորս կամրջասյունների կապակցելու և կենտրոնական գմբեթը կրելու համար: Աշխարհիկ շինությունների մեջ ևս, ինչպիսին Անիի բերդն է, հանդիպում է սրակամարը: Սյուները, որոնց վրա հանգչում է գմբեթը, նախնական քառանկյուն կամրջասյունների տրամաքանական զարգացումն են: Կամրջասյունները կապակցված են կամարածև պատերի սյունաշարի հետ: Կողագմբեթը հայկական եկեղեցիներում և վանքերում բավական ցայտուն է: Վերջապես կարելի է հիշատակել կենտրոնական գմբեթը կրող որմնախորշերով պատերի արտաքին պատվարը: Այստեղ տեսնում ենք ճարտարապետական նույն մտահղացումը, որն իր արտահայտությունն է գտել գոթական կամարներում և կիրառվում է վաղուց ի վեր:

Գոթական ոճի սկզբնավորումն Արևմտյան Եվրոպայում կապված է հայերի հետ, որոնք 11—12-րդ դդ. ցրված էին ամենուրեք: Այստեղ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայկական պետությունը 11-րդ դարից ի վեր սերտ շփումներ է ունեցել խաչակիրների և այս ճանապարհով նաև Արևմտյան Եվրոպայի հետ: Այսպիսով, գոթական ոճը, որ միջնադարի համաշխարհային մշակույթի մշանակալի նվաճումներից է, իր սկզբնավորման շրջանում որոշակի ազդեցություն է կրել փոքր ու տաղանդավոր մի ժողովրդի մշակույթից մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ այդ ժողովուրդը օրհասական պայքար էր մղում անեղ թշնամու բանակների դեմ:

<sup>37</sup> Տե՛ս Մարտիկոսյան, նույն տեղը, հ. 1, էջ 163 և հաջորդները:

## XI.

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ 19-ԲԴ ԴԱՐ

Չարիքն ու բռնությունները չկարողացան ընկճել հայ ժողովրդին, ամեն անգամ որևէ տեղից ծագած լույսի նվազագույն նշույն անգամ շարունակում էր սնել ազատության նրա երազանքը: Գնալով զարթնում էր այն հույսը, որ հյուսիսից առաջացող քրիստոնյա ռուսական կայսրությունը երկիրը կփրկի իսլամից: Մակայն սկզբնական շրջանում Մոսկվա (ցարերին) ուղղված օգնության կանչերն ավարտվում էին հիասթափությամբ: Պետրոս Մեծի պատերազմը պարսիկների դեմ հայերին բերեց միայն նոր տառապանքներ: Ռուսաստանից ակնկալվող օգնությամբ հուսադրված՝ 18-րդ դ. Պարսկահայաստանի բնակչությունը բազմիցս ապստամբում է: Բայց ամեն անգամ Ռուսաստանը հայերին թողնում էր բախտի քմահաճույքին, իսկ ապստամբությունները խեղդվում էին արյան մեջ: Վերջապես անցյալ դարի սկզբին Ռուսաստանը լրջորեն միջամտեց: Հայ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցի ռոքի հանեց Արագի հովտի բնակչությանը, անձամբ զինեց հայ պարտիզանական մի ջոկատ, հայթայթեց հացի պաշար՝ տեսնելով այլ պատրաստություններ ևս: Հայ-վրացական միացյալ բանակը հայագոյի Մադաթովի հրամանատարությամբ հարձակվեց պարսիկների վրա. Ներսեսն անձամբ խաչով և սրով արշավում էր գորամասերի գլուխ անցած: 1827 թ. ռուսները գրավում են Երևանի «անմատչելի» բերդը, պարսիկները ստիպված հաշտություն են կնքում, և Արագից հյուսիս ընկած երկիրը միանում է Ռուսաստանին:

Անցնելով քրիստոնյա պետության տիրապետության տակ, սակայն, հայերի ուրախությունը երկար չտևեց: Ինչպես ընդունված է ամբողջ աշխարհում, ռուսները նույնպես հաղթանակից հետո այլևս չէին հիշում երկրին ինքնակառավարման իրավունք տալու իրենց խոստումները: Ռուսական կառավարության համար բնավ հաճելի չէր կայսրության նոր սահմաններին հայ ազգային ազատագրական շարժման գոյությունը: Հայ «խստաբարո և հանդուգն» եկեղեցին ևս հույն-ռուսական ուղղափառ եկեղեցու և նրա սուրբ Մինդոյի աչքի փուշն էր: Շատ չանցած գործի է դրվում ճնշման քաղաքականություն՝ փորձելով Հայաստանն աստիճանաբար ռուսականացնել: Այսպես 1836 թ. հրամանով փակվեցին ազգային դպրոցները, արգելվեց հայերենի գործածությունը հասարակական հիմնարկություններում և սահմանվեց հայերի ծառայություն ռուսական բանակում: Ռուսները գնալով սկսեցին ավելի շատ խառնվել եկեղեցու կառավարման գործերին: Ազատամարտիկ Ներսեսը, որ արդեն կաթողիկոս էր (1843—1857), մինչև իր մահը չդադարեց բողոքել այդ իրավախախտումների և տված հավաստիացումների անամոթ զանցառումների դեմ: Սակայն ապարդյուն, գնալով վիճակն ավելի էր վատանում:

Ճիշտ է՝ Ռուսաստանը Հայաստանն ազատագրել էր մահմեդականների



շահագործումից ու բռնություններից, ավազակաբարո թաթար խաների ավա-  
րառություններից, հաստատվել էր խաղաղություն և կառավարելի վիճակ, ո-  
րոշակի իրավական ապահովություն և հավասարություն օրենքի առաջ: Ժո-  
ղովուպղը հնարավորություն էր ստացել առավել լավ պայմաններում աշխա-  
տելու և ստեղծելու նյութական բարեկեցություն: Սակայն նախկին տերերը  
սակավ էին մասնակցություն ունեցել եկեղեցու գործերին և ժողովրդի հոգևոր  
կյանքին, որովհետև նրանք դրանցից գլուխ չէին հանում: Ռուսական կառա-  
վարությունն այս պարագայում կպել էր հայերի ինքնուրույնության ձգտման  
դյուրագգաց լարին և, չնայած առկա ակնհայտ բոլոր առավելություններին,  
շատ շուտով ռուսական տիրապետությունը դարձավ ատելի:

Թուրքահայաստանում վիճակն անհամեմատ վատ էր: Երբ Հունաստա-  
նը, Չեռնոգորիան, Սերբիան և այլ երկրներ անջատվեցին արդեն թուլացած,  
ատելի թուրքական կայսրությունից, երիցս կողուպտված ու ստրկացված հայ  
ժողովուրդը նոր հույսերով լիցքավորվեց: Այս իրադարձություններն էլ ավելի  
աստկացրին թուրքերի ատելությունը քրիստոնյաների նկատմամբ: Անչափ  
էին շահագործումը, թալանն ու վայրագությունները, որ արդեն բաժին էին  
հասնում միայն հայերին: Բռնակալ ու մահակալ թուրք պաշտոնյաներն իրենց  
արարքներով մրցում էին քուրդ ցեղապետների ու ավազակախմբերի հետ և  
խրախուսվում կառավարության կողմից:

Այդ ընթացքում, նաև դեսպանատների ու քարոզիչների միջոցով, սերտա-  
նում էին կապելը Եվրոպայի հետ, և Հայաստանի լեռնահովիտներում տիրող  
վիճակն այլևս երկար չէր կարող ծածուկ մնալ աշխարհից: Եվրոպայում ա-  
նում էր դժգոհությունը թուրքերի նկատմամբ. պահանջում էին օգնել քրիստո-  
նյա եղբայրներին: Այսպես, Գլադստոնը Անգլիայում (1876 թ.) գրեց իր ցա-  
սումնալի կոչը թուրքական բռնությունների դեմ: Միայն Ռուսաստանն էր  
պատրաստակամ օգնելու քրիստոնյա երկրներին թուրքական լծից ազա-  
տագրվելու: Նա այդ կարող էր անել: Սակայն մյուս պետություններին այն-  
քան էլ ձեռնտու չէր Ռուսաստանի աճող ազդեցությունը, ամենից առաջ Բրի-  
տանական կառավարության վարած քաղաքականությանը, որն Արևելքում  
Ռուսաստանին համարում էր իր վտանգավոր թշնամին: Անշուշտ վաղուց հա-  
ստունացել էր Թուրքիայի քայքայումը, իսկ նրա փտած տնտեսությունը բացա-  
հայտ խայտառակություն էր աշխարհի համար: Մեծ տերությունները, սա-  
կայն, ավարը բաժանելու հարցում համաձայնության չէին կարողանում գալ և  
այդ պատճառով էլ պահպանում էին հիվանդի կյանքը, յուրաքանչյուրը  
սպասելով բարենպաստ պահի՝ ձեռք գցելու առյուծի բաժինը: Հայաստանում  
կատարվող բռնությունների համար Թուրքիային պատասխանատվության  
կանչելու եվրոպական հասարակության գնալով ավելի զայրացկոտ կոչերը  
քաղաքական գործիչների համար բարենպաստ պայման էին ստեղծում ա-  
ռանձին-առանձին Թուրքիայից իրենց կառավարությունների օգտին նոր

խոստումներ կորզելու: Իսկ արյան մեջ խեղդված ժողովրդին օգնելու հար-  
ցում, որի տառապանքները սրտառուչ մեկնությւրւնների նյութ էին դարձնում,  
ամենաքիչը նրանք էին շահագրգռված:

Թուրք ճարպիկ դիվանագետները իրենց ապականվածությամբ հանդերձ,  
բավականին լավ էին ըմբռնում կացությունը և կարողանում էին տեղին օգտա-  
գործել այդ առավելությունը: Առերես ճնշվածներին հավասարություն և ազա-  
տություն տալու հրապարակային երդումներով նրանք մարդկության աչքերին  
թող էին փչում, երդումներ, որոնց կատարման մասին երագում անգամ չէին հի-  
շում, իսկ իրականում մեծ տերություններին հանում էին միմյանց դեմ: Նրանք  
խսպառ հերքում էին անլուր դաժանությունների վերաբերյալ բոլոր բողոքները  
և խորապես վիրավորվում անամոթ զրպարտանքների համար: Դիվանագի-  
տության այս գուտ թուրքական բնագավառում նրանք հասել էին կատարյալ  
վարպետության:

Ես չեմ ուզում այստեղ հիշատակել այն հրովարտակները, որոնք 1839-ին,  
Ղրիմի պատերազմից հետո՝ 1856-ին և 1878-ին, արձակեցին սուլթանները, որ-  
տեղ բոլոր հպատակներին՝ առանց ցեղային և կրոնական խտրականության,  
խոստանում էին հավասար իրավունքներ, հավասարություն օրենքի առաջ,  
կրոնական ծիսակատարությունների ազատություն՝ «առանց հանդուրժելու  
նվազագույն բռնություն», և շատ այլ բաներ: Ես չեմ ուզում հիշատակել նաև  
1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ ռուսների հաղթանակը որոշ  
հույսեր ներշնչեց Թուրքիայի հայ բնակչությանը, Բեռլինի (1878 թ.) խաղա-  
ղության վեհաժողովը, որտեղ գործադրվեցին դիվանագիտական բանակցու-  
թյունների բազմազան հնարքներ, հիմք ընդունվեցին սուլթանի ի նպաստ հա-  
յերի տված Չոր խոստումները: Արևմտաեվրոպական քաղաքագիտության,  
եվրոպական արդարամտության ու մարդասիրության հաղթանակն այդ մեծ և  
փոքր խոստումներով գրոտված թղթերն էին միայն, հաղթանակ, որով դիվա-  
նագետները հպարտանում էին աշխարհի առաջ՝ լավ իմանալով, որ թուրքերը  
չեն էլ մտածում կատարել իրենց խոստումները:

Թուրքական կայսրությունում այդ ամենը շատ ավելի վատ էր անդրա-  
դառնում հայերի վրա: Նրանք գուր հույսեր էին փայփայում, և իրականում վի-  
ճակը վատթարանում էր: Դառը ճշմարտությունն այն է, որ հայերն իրենք ա-  
վելի շատ բանի կարող էին հասնել, եթե եվրոպական ժողովուրդները իրենց  
կառավարություններն ու դիվանագետները ընդհանրապես չխառնվեին  
նրանց գործին: Եվրոպական պետություններն իրենց ուղերձներում և հուշագ-  
րերում համակրանք արտահայտելով հայ ժողովրդի նկատմամբ՝ պահանջում  
էին մարդկային վերաբերմունք նրա հանդեպ: Իրենք սակայն յղջորեն չմտե-  
նալով այդ խնդրին՝ հասան նրան, որ կատարեցին թուրքերին, միաժամա-  
նակ հանդուրժողականություն ցուցաբերեցին նրանց նկատմամբ: Թուրքերին  
հնարավորություն էր տրվել անարգել արյունոտ վրեժ լուծել իրենց հայ հպա-

տակներին, որոնց պատճառով շարունակ բանադրանքի էին ենթարկվում և ստիպված էին այդքան նվաստացուցիչ խոստումներ տալ: Ահա այն ամենը, ինչ Եվրոպայի պետական գործիչներն ու դիվանագետները արեցին հայ ժողովրդի համար:

Մինչ Բեռլինում մեծ տերությունները հաշտության բանակցություններ էին վարում, Բրիտանական կառավարությունը Թուրքիայի հետ ստորագրեց գաղտնի համաձայնագիր, որով պարտավորվում էր Թուրքիային զինված օգնություն ցույց տալ, եթե Ռուսաստանը փորձեր իրեն պահել ավելի շատ հայկական մարզեր, քան հասնում էր նրան հաշտության պայմանագրով: Որպես փոխհատուցում Թուրքիան խոստացավ բարեփոխումներ կատարել հայերի օգտին, իսկ Մեծ Բրիտանիան որպես վստահության գրավական ստացավ Կիպրոս կղզին: Այս կապակցությամբ հերցոգ Արջիլը այսպես արտահայտվեց Լորդերի պալատում. «Ոչ մի աշխարհամասում մեր քաղաքականությունն այսքան անբարոյական ու անհմաստ շարժառիթներով չի առաջնորդվել»: Այս ասությամբ անվերապահ կարելի է որակել ամբողջ Արևմտյան Եվրոպայի քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ:

1875 թ. Աբդուլ Համիդն իր համախոհների աջակցությամբ, երիտթուրքերի ռեֆորմիստական կուսակցության ջանքերով գահ բարձրացավ: Վերջինիս օգնությամբ նրա հորեղբայրը՝ Աբդուլ Ազիզը, 1876 թ. մայիսին սպանվեց, եղբայրը՝ Մուրադը, որ թագաժառանգ էր, 1876 թ. օգոստոսին որպես հոգեկան հիվանդ մեկուսացվեց: Այժմ արդեն սուլթանը Աբդուլ Համիդն էր, որը կարճ ժամանակում դարձավ Թուրքիայի ամենափորձված, ամենախելոք և ամենադաժան տիրակալը: Այդ խորամանկ քաղաքագետը եվրոպացի դիվանագետների քթից բռնած խաղացնում էր և հանում իր շահի մեծ պետություններին հանում էր միմյանց դեմ: Ընդ որում լինելով հայուհու գավակ, դաժան ատելություն էր տածում հայերի նկատմամբ, որոնց մեղադրում էր այն բանում, որ նրանք են այն ամենահիմնական պատճառը, որ առիթ է տվել մեծ տերություններին խառնվելու Թուրքիայի գործերին:

Բրիտանական զինվորական դեսպանները, որոնք Բեռլինի հաշտության պայմանագրից հետո Անատոլիա էին ուղարկվել, սարսափելի լուրեր էին հաղորդում Հայաստանում թուրքերի անօրինակ գործողությունների մասին: Երբ Գլադստոնը 1880 թ. կրկին իշխանության հասավ, սկսեց աշխատել այդ ուղղությամբ: Մակայն նրա ձեռնարկումները ոչ այլ ինչ էին, քան մեծ տերությունների՝ Բարձր դռանը հղած մի քանի խիստ հուշագրեր, որոնցում պահանջվում էր Բեռլինի պայմանագրում նշված բարեփոխումների «շուտափույթ կատարում»: Պատասխան հուշագրերում Բարձր դռնը նոր խորամանկություններով ժխտում էր ճշմարտությունը: Իսկ հետո՝ ոչինչ: Աբդուլ Համիդը շատ լավ գիտեր, որ ոչ մի պետություն թղթից առավել հզոր զենք գործի չի դնի և շարունակում էր բռնությունները հայերի նկատմամբ:

Երբ 1882 թ. Մեծ Բրիտանիան Գլադստոնի գլխավորությամբ գրավեց Եգիպտոսը, փոխեց իր վերաբերմունքը Թուրքիայի, ինչպես նաև Ֆրանսիայի և Ռուսաստանի նկատմամբ, որոնց զայրացրել էր այս ոտնձգությունը: Այժմ առավել կարևոր խնդիրներ կային, քան հայերի հարցն էր: Շարունակվում էր ցնցող լուրերի հոսքը Թուրքահայաստանում տիրող խայտառակ իրավիճակի մասին, բայց այլևս դրանք չէին հրապարակվում, Եվրոպան լռության էր մատնել իր կողմից դավաճանված ժողովրդի ճակատագիրը: Բրիտանական կառավարությունը գտնում էր, որ ամեն անգամ պատշաճ չէ հարկադրել և դրանով իսկ զրգոել Բարձր դռանը՝ հիշեցնելով նրան խոստումներ, որ տրվել են փոքր, բազմաչարչար մի ժողովրդի:

1881 թ. Ռուսաստանում Ալեքսանդր Երկրորդի սպանությունից հետո տապալվեց լիբերալ կառավարությունը, որի քաղաքական ակնառու գործիչներից էր հայազգի Լորիս Մելիքովը: Իշխանության գլուխ անցած հետադեմ ուժերը զարշույմ էին հայ ազգային-ազատագրական շարժումից: Նրանք ճրգտում էին Ռուսահայաստանը նույնպես ստրկացնել, պարտադրել նրան ռուսերեն լեզուն և ռուսական եկեղեցին: Թուրքահայերի սիրտ պատռող ողբը լսելի չէր պետական այդ գործիչներին:

Բեռլինի վեհաժողովում մեծ տերությունների հովանավորությունը հայերի նկատմամբ, գեղեցիկ բառերի առատությունը և հետագա տարիների լավ հղկված դիվանագիտական հուշագրերը, Թուրքիայի կողմից հարկադրաբար սսված հրապարակային հավաստիացումները, այս ամենն անշուշտ հուսադրում էր հայ ժողովրդին, որ վերջապես մոտենում է ազատագրման օրը: Հասարակ, պարզամիտ մարդիկ պատկերացում չունեին վերևներում կատարվող քաղաքական շարժումների մասին և հավատում էին տված խոսքին, հատկապես մեծ պետության խոսքին:

Եվրոպայի հայկական շրջաններում ևս աստիճանաբար շարժում սկսվեց: Տարբեր միություններ եռանդուն գործունեություն էին ծավալում՝ իրենց հայրենակիցներին պայքարի դուրս բերելու ստրկության դեմ և ուժեղացնելու թիկունքը: Այս շարժումը նոր թափ ստացավ շնորհիվ այն նվիրական պայքարի, որ Չեյթունի հայկական փոքրիկ ինքնավարությունը Կիլիկյան Տավրոս լեռներում մղում էր թուրքական լծի դեմ: Ազգային-ազատագրական այս շարժումը նպատակ չունեի Հայաստանի անջատումը Թուրքիայից: Օտար տարրն այնտեղ արդեն շատ էր, և հայերը այլևս ջախջախիչ մեծամասնություն չէին կազմում: Միակ նպատակը կյանքի մարդավայել պայմաններ և ներքին գործերում ինքնակառավարման որոշ իրավունքներ ունենալն էր: Բայց սուլթանը վճռել էր բնաջնջել հայերին: Խոռվությունները, որոնք Անատոլիայում այս ու այնտեղ բռնկվում էին ազատագրական այդ շարժման ազդեցության տակ, ցանկալի առիթ էին նոր հետապնդումների ու բռնությունների, բանտարկությունների ու բանտերում տանջանքների, կողոպուտի, բռնա-

դատման ու դաժանությունների համար: Եվրոպացիների բողոքներին հակառակ՝ թուրքական կառավարությունը, կարծես ձեռք առնելով նրանց, ցինիկաբար բերում էր այն փաստարկը, որ կարեկցության արժանի, հալածված մահմեդական ժողովրդի ապահովության համար, ցավոք, անհրաժեշտ են կտրուկ միջոցառումներ:

Իր՝ հեռուն զննող ծրագրերը իրագործող պատրաստակամ գործիք ունենալու նպատակով Աբդուլ Համիդը 1891 թ. ամռանը Անատոլիայում ստեղծեց սահմանային հեծելագործ՝ համիդիե, որ հիմնականում համալրված էր քրդական քոչվոր ցեղերով: Հրամանատարներ նշանակվեցին քուրդ ցեղապետները: Սահմանային այդ խմբերը զինված էին ժամանակակից զենքերով, ընդհանրապես ազատ էին իրավական պատասխանատվությունից և ենթարկվում էին միայն Երզնկայի գերագույն հրամանատարությանը: Հայտնի էր, որ այդ քրդերն իրենց ցեղապետների գլխավորությամբ ընդհանուր առմամբ զբաղված էին մեծածավալ ավազակությամբ, այնպես որ հասկանալի էր, թե ինչ արժեք ուներ այս զենքը սուլթանի համար: Սշահով ավարտվեցին վերջին նախապատրաստությունները վճռական հարվածի համար:

Հայերի հանդեպ ունեցած վարվելաձևի բնորոշ օրինակ է հեռևյալ դեպքը: Անմատչելի Տավրոս լեռնաշղթայի հովիտներում, Մշո արգավանդ դաշտից հարավ, այնտեղ, ուր հարավում լեռնաշղթան կազմում է Միջագետքի մեծ հարթության սահմանը, հնուց ի վեր բնակվում էին հայեր: Աստիճանաբար այնտեղ թափանցում են նաև քրդական ցեղեր, որոնց ավարառություններից հայերն ազատվում էին հարկ վճարելով: 1893 թ. ամռանը բանտարկվում է մի հայ ազգային գործիչ, որը հակաթուրքական քարոզչություն էր անում լեռնաշղթայի հարավային լանջերին տարածված Մասունի Տավրոսի գավառակի գյուղերում: Այդ դեպքից շատ չանցած՝ քրդական մի քանի ավազակախումբեր՝ խրախուսված թուրքերից, հարձակվում են Տավրոսի գյուղերի վրա: Նրանք հետ են շարվում և իշխանություններին բողոքում «ապստամբների» դեմ: Ի պատասխան բողոքի թուրքական զորամասերը հարկերի գանձման պատրվակի տակ օգնության են շտապում նրանց: Բնակիչները հեռանում են և ապաստանում շրջակա լեռներում, իսկ նրանց գյուղերը թալանվում են: Մահմեդականների վրա զենք բարձրացնելու համար որպես պատիժ հայերի վրա դրվում են ծանր տուգանքներ և նոր հարկեր: Սակայն հայ շինականները հրաժարվում են կրկնակի հարկերից՝ ասելով, որ թուրքերին էլ ոչինչ չեն տա, մինչև չազատվեն քրդերի անօրինակ շահագործումից: Այդ ժամանակ հայերի դեմ ուղարկվում են մեծաքանակ զորամասեր՝ զինված հրետանիներով: Նրանք հարձակվում են գյուղերի վրա, և նորից սկսվում է սպանող, այս անգամ արդեն սուլթանի անմիջական հրամանով: Երեք շաբաթ շարունակվում է փախստականների հետապնդումը, զոհվում է մոտ 900--1500 մարդ, իսկ քրիստոնյա երիտասարդ աղջիկները տարվում են որպես ավար:

Այս ոճրագործությունն անհանգստացրեց հատկապես Անգլիային: Բրիտանական կառավարությունը ցանկանում էր միջամտել, սակայն Ֆրանսիան ու Ռուսաստանը, որ նոր էլն դաշինք կնքել, հրաժարվեցին: Դրա փոխարեն 1895 թ. հունվարին պետությունների պահանջով ստեղծվեց թուրքական (!) «Հայ ավազակների ոճրագործությունների քննության հանձնախումբ»: Վերջապես լիազոր դեսպանները հնարավորություն ունեցան մեկնել Մասուն և ապացուցել հայ բնակչության անմեղությունը:

Երբ 1895 թ. մայիսի 11-ին Մեծ Բրիտանիան և մյուս պետությունները Թուրքիայից պահանջեցին երաշխիք, որ նման չարագործություններ չեն կրկնվի, և առաջադրեցին որոշակի բարեփոխումների անցկացում ի պաշտպանություն քրիստոնյա բնակչության, սուլթանը հանդես եկավ առարկությունների մի երկար շարանով՝ ժխտելով բոլոր հանցանշունները, ներկայացրեց վեց կետից բաղկացած պատասխան առաջարկ և մեծահոգաբար ներում շնորհեց վստահությունը կորցրած բոլոր հայերին (sic!): Միևնույն ժամանակ, սակայն, ծածուկ վարձատրեց ջարդերի քուրդ և թուրք հրահրիչներին ու կազմակերպիչներին:

Սա արդեն չափազանց էր ազատության հին մարտիկ Գլադստոնի համար: Չնայած իր 86-ամյա տարիքին՝ նա Չեստրում մի հանդիպման ժամանակ վեր կացավ և կրակոտ ճառ արտասանեց «պալատի մեծ ոճրագործի», գահին նստած մարդասպանի մասին: Նա ասաց, եթե Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, որ իրենց ազդեցությամբ և հզորությամբ 50 անգամ գերազանցում են Թուրքիային և պարտավորություններ ունեն այս հարցում, այժմ տեղի տան սուլթանի դիմադրությանը, կխայտառակվեն ամբողջ աշխարհի աչքին: Ինչպես շատ այլ խորհրդածողովներ, սա էլ ավարտվեց... որոշումով:

Աբդուլ Համիդը սրել էր ականջները, բայց շուտով համոզվեց, որ այս անգամ էլ բանն ավարտվեց ճառերով ու գրուած թղթերով: Ուրեմն նա կարող էր աներկյուղ իր ծրագրերն իրականացնել: Անմեղ հալածվածի կեցվածքով նա բողոք հղեց Հռոմի պապին անգլիացիների դեմ: Եվ մինչ սուրբ հայրը ջանում էր Անգլիային հանդարտեցնել, Անատոլիայում իշխանությունները ցուցում ստացան պատրաստ լինել պաշտպանելու մահմեդական բնակչությանը քրիստոնյաների կողմից նախապատրաստվող ապստամբության ժամանակ:

Հայերը կռահում էին, թե ինչ է իրենց սպասում և վախից հարկադրված հանձնեցին իրենց չնչին զենքը, որը իշխանությունները բաժանեցին մահմեդականներին, որպեսզի վերջիններս քրիստոնյաներին ավելի լավ ջարդեն: Շուտերը բարբարոսաբար խոշտանգվեցին, նրանցից պահանջում էին հայտնել թաքցրած զենքի տեղը կամ էլ ասել, թե հեղափոխական որ միությանն են պատկանում: Այս ձևով շահեկան փաստեր էին հավաքում կառավարության այն պնդման համար, որ ապստամբություն է նախապատրաստվում: Վերջա-

պես պատեհ առիթը ներկայացավ: 1895 թ. սեպտեմբերի 30-ին հայերը մի քանի հազար մարդուց բաղկացած երթով շարժվեցին դեպի «Բարձր դուռ»՝ մեծ վեզիրին հանձնելու հայ ժողովրդի բողոքներն ու պահանջները: Մի խումբ քուրք ուսանողներ, օգտագործելով հարմար առիթը, ընդհարվեցին ցուցարարների հետ, սկսվեց փոխհրաձգություն, և հայտնվեց ոստիկանությունը: Շատ հայեր սպանվեցին այդ օրը, ձերբակալվածները ոստիկանատներում սրախողխող արվեցին, իսկ զիշերը հարձակվեցին հայկական թաղամասերի վրա. փրկվեցին միայն եկեղեցում ապաստանած մարդիկ, այն էլ օտարերկրյա դեսպանորդների միջամտությամբ:

Ահա և ապատամբությունը: Սուլթանը ազդանշան տվեց, և փոթորիկը սուրաց հայկական բոլոր քաղաքների ու գյուղերի վրայով: Ջինված խաժամուժ ամբոխը՝ ոստիկանության գլխավորությամբ, քրդերը՝ սուլթանի նորաստեղծ համիդեական հեծելազորի հետ, և թուրքերը կոտորում էին անգեմ հայերին: Կանոնավոր զորամասերը պահպանում էին կարգը, հոգ տանում «աշխատանքի» կանոնավոր ընթացքին և միջամտում էին միայն այն դեպքում, երբ հայերն իրենց թաղամասերում փորձում էին պաշտպանվել՝ ցրելով նրանց սովորական թնդանոթային կրակոցներով: Սուլթանի կազմակերպած ավագակախմբերի «աշխատանքը» զոհացուցիչ էր, ամենուրեք գետի պես հոսում էր հայերի արյունը՝ Ադիսարում, Տրապիզոնում, Երզնկայում, Բաբերդում, Բիթլիսում, Էրզրումում, Արաբկիրում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Խարբերդում, Սվազում, Ամասիայում, Այնթապում, Մարզվանում, Սարաշում, Կեսարիայում և այլուր: Վերջին գործողությունը 1895 թ. Ծննդյան տոնի օրը 200 հայի ողջակիզելն էր Ուրֆայի Մայր տաճարում: Առանձին ջարդեր տեղի ունեցան նաև 1896 թ., ինչպես Վանում, Կոստանդնուպոլսում և այլ քաղաքներում, ուր տեղական հանգամանքները մինչ այդ կասեցրել էին ջարդերի իրականացումը:

Ահա Արաբկիրի իշխանությունների կոչը, որտեղ ասվում էր. «Մուհամեդի զավակներն այժմ պետք է կատարեն իրենց պարտքը՝ կոտորեն բոլոր հայերին, բալանեն նրանց տներն ու այրեն: Ոչ մի հայի չպետք է խնայել: Մա սուլթանի հրամանն է: Ով չկատարի հրամանը, կհամարվի հայ և կսպանվի որպես այդպիսին: Որպեսզի յուրաքանչյուր մուսուլման ցույց տա իր հնազանդությունը կառավարությանը, նախ և առաջ պետք է սպանի այն քրիստոնյային, որի հետ բարեկամություն է արել»:

Ամեն ինչ կատարվում էր գոհացուցիչ ճշգրտությամբ: Հրամանները գալիս էին Երզնկայի զինվորական գերագույն հրամանատարությունից: Ջարդերը սկսվեցին շեփորի պայմանական ազդանշանով և պայմանական ազդանշանով էլ դադարեցին: Կարգապահությունն այնքան բարձր էր, որ ջարդարները արյունով հարբած ամենավայրենի վիճակում անգամ օտարերկրացիներից խնամքով թաքցնում էին կոտորածը: Սուլթանը լավ գիտեր, որ որևէ

վրիպում այդ հարցում լուրջ հետևանքներ կունենար, և պետությունների միջամտությունն անխուսափելի կլիներ: Ըստ այն տեղեկությունների, որ հավաքել էին Կոստանդնուպոլսի դեսպանորդները և 1896 թ. փետրվարի 4-ին ներկայացրել սուլթանին, 1895 թ. օգոստոսից մինչև 1896 թ. փետրվարը զոհվել էր մոտավորապես 70—90 հազար մարդ, շատ շատերն էլ մեռան քաղցից ու կարիքից: Ջարդերից հետո շատ քրիստոնյաներ բռնի իսլամ ընդունեցին: Կատարվում էին հրապարակային թլպատումներ, թեպետ հազարավոր մարդիկ նախընտրում էին մահը, քան հավատարացությունը: Ամբողջական գյուղեր, որոնց տրված մտածելու ժամանակը սպառվել էր, իրենց քահանաների առաջնորդությամբ գնում էին մահվան: Հազարավոր փախստականներ սահմանն անցան դեպի Պարսկաստան և Կովկաս: Շատերն ապաստան էին գտնում Էջմիածնի մերձակա ճամբարներում, որտեղ վեհափառ կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանը հոգում էր նրանց կարիքները քաղաքարևակների և շինականների օգնությամբ: Նրա և Ներսես պատրիարքի ներկայացմամբ 1878 թ. Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի վերաբերյալ ընդունվել էր ճակատագրական 61-րդ հոդվածը: Այժմ նա տեսնում էր իր ժողովրդին մորթված ու հալածված, դավաճանաված եվրոպական պետությունների կողմից, որոնց հետ նա և իր հայրենակիցները հույսեր էին կապել:

Մինչ Եվրոպայի՝ հայ ժողովրդի անկեղծ բարեկամները օգնություն էին ուղարկում՝ նրանց կարիքները փոքր-ինչ մեղմելու, եվրոպական կառավարությունները ոչինչ չէին ձեռնարկում: Մեծ Բրիտանիան ցանկանում էր օգնել, սակայն մնացել էր մեռակ: Ֆրանսիայի հետ գծով էր Աֆրիկայում գերիշխանություն ձեռք բերելու հարցում, Ֆրանսիան էլ իր հերթին դաշնագրով կապված էր Ռուսաստանի հետ: Այն ժամանակ, երբ հայերի արյունը հոսում էր գետի պես, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Ռոստոփսկին հայտարարեց, որ Ռուսաստանը մտադիր չէ ուժի դիրքերից խոսել Թուրքիայի հետ, և ցարը հավանություն չի տալիս մյուս պետությունների հնարավոր հարկադիր միջամտություններին: Կոտորածներից ու բռնություններից երեք ամիս անց նույն ինքը, այդ մշտապես անզիջում պետական գործիչը 1896 թ. հունվարի 16-ին հայտարարեց, որ չկա ոչինչ, որ կարողանա ստվեր գցել սուլթանի բարի կամքի մասին իր ունեցած վստահության վրա: Ավելի լավ կլիներ օգնել սուլթանին պարտավորված բարենորոգումների դժվարին խնդրի իրականացման գործում՝ տալով նրան որոշակի ժամկետ: Ավստրիան համաձայն էր այդ տեսակետին, որովհետև վախենում էր Արևելյան հարցի բարձրացումից և իր սեփական շահերի շփոթից: Ահա Եվրոպան, այն կույսը, որին ըստ հունական առասպելի առևանգել էր ցուրը: Միշտ չէ, որ կարելի է հպարտանալ եվրոպացի լինելու համար:

Սուլթանին թույլատրվեց հանգիստ շարունակել կոտորածները, առարկել բոլոր ուղերձներին, ասելով, որ տարածված այդ լուրերը ստահող են, և եթե



ինչ-որ տեղ եղել են արյունոտ ընդհարումներ, ապա դրանք տեղի են ունեցել բացառապես պաշտպանության նպատակով հայերի հարձակումներից (որոնք զինաթափ էին): Մտահոգված իր սիրելի հայ հպատակների բարօրությամբ՝ սուլթանը խնդրում էր Անգլիային, որ օգնի իրեն հանդարտեցնելու հայերի ապստամբ ձգտումները՝ խելքի բերելով նրանց: Նա խորապես վիրավորված էր և Լոնդոնում իր դեսպանի միջոցով դառնացած բողոքում էր Գլադստոնի դեմ, որովհետև նա իրեն «արյունոտ սուլթան» էր անվանել:

Ահա և ցանկալի առիթ սուլթանի համար. 1896 թ. օգոստոսի 26-ին կովկասցի 26 հայ երիտասարդներ անապատելի հարձակվելով Կոստանդնուպոլսի Օտոմանյան բանկի վրա՝ գրավում են այն և սպառնում պայթեցնել շենքը, եթե սուլթանը չկատարի իրենց պահանջները: Նրանց նպատակն էր այդ միջոցով ստիպել քնած Եվրոպային բացել աչքերը Հայաստանում կատարվող ողբերգության վրա: Ռուսական դեսպանատան քարգմանչի միջնորդությամբ համոզում են նրանց՝ ազատ երթի երաշխիքով հրաժարվել իրենց մտադրությունից և հեռանալ: Սակայն փաստերը խոսում էին այն մասին, որ հարձակումը բանկի վրա կատարվել էր «Բարձր դաս» ցանկությամբ և զիտությամբ: Այսուհետ Բարձր դուռը կարող էր մատնանշել այդ մանուկ հեղափոխականներին՝ հաստատելու իր տեսակետը, որ հայերը խռովարար են և պետք է պատժվեն դիվանագիտության աչքի առաջ: Հաջորդ օրը քրդերից ու լազերից կազմված ջոկատներ քաղաքի տարբեր մասերում միաժամանակ հարձակվեցին հայերի խանութների և տների վրա: Մայրերը պատրաստ շարված էին՝ դիակներ տանելու համար: Ջարդը տևեց երկու օր: Չինվորները տեղ-տեղ էին մասնակցում քաղանին և կոտորածին, նրանք պաշտպանում էին հույների և եվրոպացիների քաղամասերը: Հանկարծակի, ինչպես սկսվել էր ջարդը, այնպես էլ դադարեց: Սպանվեց մոտ 7000 հայ:

Պետությունների դեսպանորդների օգոստոսի 31-ի համատեղ հուշագրում ասված էր, որ այստեղ խոսք չի կարող լինել մոլեռանդ ամբոխի պատահական հարձակման մասին, այլ դատելով նշաններից՝ կարելի է ասել, որ այդ գործողությունների հետևում կանգնած է հատուկ կազմակերպություն, որի գոյության մասին տեղյակ են որոշ իշխանավորներ, եթե վերջիններս իրենք չեն կազմակերպել այդ կոտորածները: Սա էր այն ամենը, ինչ եկավ պետությունների ձեռքից: Ինչպես միշտ նրանք սահմանափակվեցին թղթե հուշագրերով՝ շարունակելով պնդել բարեփոխումների իրենց պահանջը այնքան ժամանակ, մինչև դիվանագիտությունն ի վերջո գեղեցիկ հաղթանակ տարավ: Սուլթանը, որ նոր էր վերջացրել կոտորածները, կարծելով, թե վերջնականապես ոչնչացրել է հայերին, 1896 թ. հոկտեմբերի 17-ին ընդունեց բարենորոգումների առաջարկը՝ հրաժարվելով հրապարակել փոխզիջումները: Սրանով բավարարվեցին մեծ տերությունները. նրանք հայ ժողովրդին ցույց էին տվել այն օգնությունը, որն իրենք էին կարողացել, և դա պայմանավորված էր «մի քաղաքա-

կանությամբ, որը համապատասխանում է մեր սեփական բարօրության իրավացի նկատառումներին»: Այսպես է արտահայտվել Կոստանդնուպոլսում Բրիտանիայի դեսպանը մի առիթով:

Կարելի էր մտածել, որ Հայաստանի ողջ տարածքում և Թուրքիայում տեղի ունեցած կոտորածներից հետո հայ բնակչությունը, որ տարիներ շարունակ զրկված էր իր բողոքը հայտնելու, դատարանի կամ պաշտպանի դիմելու իրավունքներից, արդեն վերջնականապես ոչնչացված ու ջարդված էր: Բայց այդ զարմանալի կենսունակ ժողովուրդն իր հազարամյա պատմության ճակատագրի բերումով վարժվել էր նման արհավիրքներին և ամեն անգամ համբերատար կրկին ձեռնամուխ էր լինում երկրի վերաշինմանը: Այդպես և այս անգամ: Վերապրողները վերադարձան լեռներում իրենց թաքստոցներից, հարևան երկրներից, անվճար մնացած վանքերից իրենց թալանված ու ավերված բնակավայրերը և սկսեցին նորից: Բայց այս անգամ նրանց կորուստները մեծ էին, աշխատունակ տղամարդիկ սպանված էին, անասունները ջշված, գործիքները թալանված կամ ջարդված: Երաշտն էլ մի կողմից վրա հասավ՝ բերելով իր հետ սով և աղքատություն: Հայերին օգնելու նպատակով Եվրոպայում և Ամերիկայում սկսեցին դրամ հավաքել, ստեղծվեցին բազմաթիվ միություններ՝ «Հայերի բարեկամներ» վերտառությամբ: Եվրոպայում ծավալված այդ շարժումը հաճո չէր սուլթանին: Նա հայտարարեց, որ ինքը կօգնի իր տառապյալ հպատակներին: Շահելով բարոյական իրավունք՝ նա փակեց երկրի սահմանները, կասեցրեց դրսից եկող օգնությունը՝ հնարավորին չափ իրենից հեռացնելով ավելորդ ուշադրությունը: Սուլթանի օգնությունը պարզապես ծիծաղելի էր. այն հնարավորություն տվեց իշխանավորներին նոր շորթումների ու բռնությունների, իսկ ժանդարները հացահատիկը փոխանակում էին քրիստոնյա երիտասարդ աղջիկների հետ:

Իբրև թե փախստականները իրավունք ունեին հետ ստանալու իրենց բռնագրավված սեփականությունը, սակայն այդ հավաստիացումները չիրականացան, քանի որ ռուսական սահմանն անցած կամ այլ վայրեր փախած հազարավոր հայերի արգելվեց վերադառնալ: «Չէ որ նրանք Թուրքիայից հեռացել էին առանց թույլատրության և անձնագրի»: Նրանց սեփականությունը տեղական իշխանությունների կողմից բռնագրավվել էր «ըստ օրենքի»՝ հօգուտ սուլթանի: Մահմեդականներին թույլատրվել էր բնակվել հայերի տներում: Սա բացառապես թուրքական գործելաձև է, որովհետև ճիշտ նույն կերպ վարվեցին նաև վերջին տարիների փախստականների հետ (հմմտ. էջ 25):

Հայերը տեսան, որ չնայած եվրոպական պետությունների բոլոր հավաստիացումներին ու հուսադրումներին, իրենց գործը լրիվ ձախողվեց: Եվ զարմանալի չէր, որ նրանք հուսահատության մեջ անգամ սեփական սակավ ուժերի ճիգով փորձեցին դառնալ իրենց ճակատագրի տերը: Նրիտասարդները կազմելով փոքրիկ, զինված պարտիզանական ջոկատներ ամրացան անան-

ցանելի լեռնային շրջաններում: Նրանք փորձում էին վրեժ լուծել թուրք և քուրդ ոճրագործներից՝ հնարավորին չափ օգնելով հայ բնակչությանը: Այդ խմբերից մի քանիսի ղեկավարները նույնիսկ դաշնակցում էին թուրքական բռնապետությունից դժգոհ քուրդ խաների և նրանց հրուսակախմբերի հետ: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նրանք այնքան էլ ներողամիտ չգտնվեցին թուրքերի նկատմամբ: Դա մարդկայնորեն հասկանալի է. նրանց արածը ոչինչ էր այն ամենի դիմաց, որ արյունարբու թուրքերը հասցրել էին իրենց հայրենակիցներին: Անշուշտ սա էլ իր հերթին թուրքերի համար բռնությունների նոր առիթ էր հանդիսանում: Ինչպես ասացինք, այն ժամանակ, երբ Եվրոպայից ու Ամերիկայից մասնավոր անձիք օգնություն էին ուղարկում հայերին, երբ սուլթանի հետապնդումներից խույս տալով միսիոներական տարբեր կազմակերպություններ հազարավոր հայ որբեր էին հավաքում և փրկում, մեծ տերությունների կառավարությունները շարունակում էին չեզոք մնալ Հայկական հարցի նկատմամբ: Եվրոպական պետական գործիչները հոգնել էին ծայրը չերևացող, հոգեմաշ այդ խնդրից: Մեծ Բրիտանիան հուսախաբված և պարտված էր: Ռուսաստանը, ինչպես հայտնի է, անբարյացակամ էր տրամադրված Անդրկովկասում հայերի ազատագրական շարժման հանդեպ, Ֆրանսիան՝ հետևելով Ռուսաստանի օրինակին, ամեն կերպ խուսափում էր Հայկական հարցից: Այնուամենայնիվ ահավոր կոտորածների հետևանքով որոշ սառնություն էր առաջացել Թուրքիայի և մեծ տերությունների կառավարությունների միջև: Այժմ արդեն բարեկամություն խաղալու հերթը Գերմանիայինն էր: Մեծ Բրիտանիայի փոխարեն Թուրքիայի ազդեցիկ խորհրդատուն դառնալու, թերևս նաև հետին մտքով թուրքական կայսրությունը Գերմանիայի պրոտեկտորատ դարձնելու մտադրությամբ նախատեսվում է կառուցել երկաթուղի, որը պողպատյա կապերով կմիացներ Բեռլինը Բաղդադի հետ: Սրանք էին ապագայի գայթակղիչ ծրագրերը: Ճիշտ է, Արդուլ Համիդի ձեռքերն արյունոտ էին, բայց նա գործունյա և փորձված դիվանագետ էր, որ կարողանում էր հանուն իր շահերի եվրոպական պետական գործիչների քթից բռնած ման ածել: Նա գորեղ բռնապետ էր, նա ճնշեց ապստամբությունը Մակեդոնիայում և Հունաստանում և գերմանական գլխավոր շտաբի մի հրամանատարի օգնությամբ հետ մղեց հույներին (1897 թ.): Նրա ձեռքում էին կենտրոնացված ամբողջ մահմեդական աշխարհն իրար հետ կապող ցանցի թելերը, նա կարողանում էր պանիսլամական քարոզչությամբ լուրջ խռովություններ հրահրել Բրիտանիայում, Ռուսաստանում և Ֆրանսիայում: Կոտորածը վատ երևույթ է, սակայն Գերմանիան պատրաստ է գործուն և անձնագոհ օժանդակությամբ դիմակայել Թուրքիայի բոլոր կարիքները:

Անկասկած, Արդուլ Համիդը կարող էր շահավետ դաշնակից լինել, և Վիլհելմ Երկրորդ կայսրը 1898 թ. այցելեց նրան Կոստանդնուպոլսում՝ այնտեղ հայտարարելով իրեն իսլամի ճշմարիտ բարեկամ: Կայսրին ուղեկցող գերմա-

նացիներից մեկը գրեց այդ ժամանակ. «Թեև հայկական ջարդերի մասին հիշողությունները դեռ թարմ են, սակայն ի՞նչն էր, որ նենգափոխեց ներհակ ողջ քաղաքականությունը, եթե ոչ այն, որ դրանք գոգոտում են մահմեդականների մոլեռանդությունը: Ինչի՞ հասավ Գլադստոնը սուլթանի հասցեին վիրավորանքներով: Մեր կայսրը... ընտրել է քրիստոնեական ճանապարհ. նա չարին հատուցում է բարով»: Այդ այցի անկեղծությանը որոշ չափով խանգարում էր այն հանգամանքը, որ կայսրը այնուհետև Երուսաղեմ ուխտագնացություն կատարելու նպատակ ուներ:

Այնքան էլ դյուրին չէր հանգստացնել եվրոպական ժողովուրդների խիղճը: Մի շարք վեհաժողովներում, ինչպես 1900 թ. Փարիզի խաղաղության, 1902 թ. սոցիալիստների և այլն, ընդունվեցին որոշումներ, որոնք արտահայտում էին քաղաքակիրթ աշխարհի դժգոհությունն ու բողոքը եվրոպական պետությունների դեմ՝ տարաբախտ հայ ժողովրդի հանդեպ ստանձնած իրենց պարտականությունների կատարման մեջ թերանալու համար: Սակայն ոչինչ չփոխվեց: Իսկ ռուսական կառավարությունն ավելի քան երբևէ շարունակում էր վարել Ռուսահայաստանի բնակչության ռուսականացման ու ճնշման քաղաքականություն:

## ՀԱՅԵՐԸ 20-ԻՂ ԴԱՐՈՒՄ

Թուրքիայում աստիճանաբար ուժեղանում էր երիտթուրքական «ազատամիտ» «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը, որը դաշնակցում էր հայերի հետ: Հայերը կուսակցությանը ուժ և եռանդ էին ներարկում և աջակցում նրա վերջնական հաղթանակին: Եթե հայ առաջնորդների պայքարը մարդու իրավունքների և ազատության իդեալների հաղթանակի համար էր, ապա երիտթուրքերինը՝ խորքում իշխանության հասնելու: Իսկ մարդու իրավունքների և ազատության համար պայքարը, որով քողարկվում էին նրանք, վերջին հաշվով խորթ հասկացություն էր Արևելքում թուրք ռազմաճյուղների համար:

Խռովությունը բռնկվեց 1908 թ. հուլիսին: Երիտթուրքերի առաջնորդները Մակեդոնիայում անցան բանակի գլուխ՝ իրենց հետևից տանելով սպաներին, զինվորներին և բնակչությանը: Սուլթանին հեռագիր ուղարկեցին: Նա հանդուգն խռովարարներին շտապ ձերբակալելու հրաման արձակեց, Անատոլիայից ռազմական օգնություն կանչեց, սակայն ոչ ոք չենթարկվեց հրամանին: Կատաղությունից փրփրած փոքրոգի տիրակալը վերջապես ծնկի իջավ: Այդ ամենը կատարվեց 24 ժամվա ընթացքում: Նրան թույլատրեցին մնալ գահին՝ որպես պատանդ երկրում իր համախոհների փոխարեն, իսկ ազատամիտ նոր սահմանադրությամբ բոլոր ազգություններն ու դավանանքները դարձան

իրավահավասար: Ցնծում էր ողջ կայսրությունը: Կոստանդնուպոլիսը թաղված էր լույսերի մեջ: Բացվեցին բանտերը, ժողովուրդը հարգանքի տուրք մատուցեց 1896 թ. հայկական կոտորածների զոհերի գերեզմաններին: Մահմեդական առաջնորդները նրանց դրվատեցին որպես ազատության արյունոտ վկաներ: Ժողովուրդը շունչ քաշեց՝ ազատագրվելով ծանր լծից:

Սակայն հայերի ուրախությունը երկար չտևեց: Չնայած երիտթուրքական իշխանավորները գերծ էին կրոնական նախապաշարումներից, ավելի ճիշտ է ասել՝ անհավատ էին, սակայն շատ շուտով եկան այն համոզման, որ կայսրությունում պետք է հաստատվի թուրքական գերիշխանություն, իսկ բնակչության ոչ թուրքական մասը՝ անկախ նրա կրոնական դավանանքից և ազգությունից, լինի արաբ, քուրդ, հայ կամ հույն, կօգտվի միայն հնարավոր նվազագույն իրավունքներից: Թուրքերենը պետք է դառնա կայսրության ընդհանուր լեզուն: Երիտթուրքերը որոշ ժամանակ դեռ պահպանում էին հայերի հանդեպ ունեցած երախտագիտությունը՝ իրենց ազատագրական պայքարում ցուցաբերած օժանդակության համար, նաև մարդասիրական այս վերաբերմունքով ցանկանում էին շահել մեծ տերությունների համակրանքը: Սակայն արդարամտությունը քրիստոնյաների հանդեպ զայրացնում էր նախկին տիրող խավին, որ վարժված էր հատկապես հայերին դիտելու շահագործման օբյեկտ: Դրան գումարվում էր մահմեդական հոգևորականության դժգոհությունը:

1909 թ. ապրիլին Աբդուլ Համիդը զինվորական խռովությամբ կրկին գրավեց իշխանությունը: Մի քանի օր ամեն ինչ լավ էր ընթանում, երիտթուրքերի արյունը հոսում էր գետի պես: Իսկ երբ մակեդոնյան բանակը՝ Մահմուդ Շեֆքեթ փաշայի գլխավորությամբ Կոստանդնուպոլիսից ընդամենը 4 մղոն էր հեռու և երբ սուլթանը իրեն տրված ժամկետում չհանձնվեց, Ստամբուլը շրջափակվեց: Տեղի ունեցավ արյունոտ կռիվ, որի ժամանակ հայ կանայք և երեխաները օգնում էին երիտթուրքական զինվորներին՝ դիրքավորելու թնդանոթները: Հաջողությամբ պսակվեց գրոհը սուլթանի ամրոցի վրա: Նրան դուրս բերեցին ամրոցի ներքին սենյակներից, որոնք գտնվում էին հարեմի կանանց սենյակների հետևում: Վախից գրեթե ուշակորույս՝ նա լսում էր իրովարտակի ընթերցումը, որով զրկվում էր խալիֆաների գահից: «Իսկ իմ կյանքը»՝ հարցրել էր նա: Ահա միակ մտածումները այն մարդու, որը հազարավորների էր զրկել կյանքից: Մուլթանին չսպանեցին, նա մահացավ մի քանի տարի անց Փոքր Ասիայում որպես բանտարկյալ: Նրա եղբայրը՝ կամակատար Ռեշադը, գահ բարձրացավ որպես Մեհմեդ Հինգերորդ:

Այսքան կարճ տևեց պահպանողական քրիստոնեատյացների ուրախությունը, սակայն այդ կարճ ժամանակում նրանք հասցրին Կիլիկիայում հարձակվել հայերի վրա: Այնտեղ հայերն անցած կոտորածներից անմասն էին մնացել: Անշուշտ նրասք չափազանց ցնծացել էին իրենց ազատությամբ, երբ

երիտթուրքերն էին անցել իշխանության գլուխ, իսկ դա կատաղեցրել էր պահպանողական թուրք մահմեդականներին: Երբ զինվորական խռովության լուրը սուլթանի հեռագրով տեղ հասավ, նրանք իսկույն հարձակվեցին Կիլիկիայի քաղաքների ու գյուղերի հայ բնակչության վրա: Թալանեցին ու այրեցին, կրկին արյունը հոսեց գետի պես, և կրկին վայրագությունները ստացան աներևակայելի ձևեր: Սպանվեց մոտ 2000 հայ: Տեղական կառավարությունը համագործակցում էր մարդասպանների հետ, զինվորներ էր ուղարկում այն բոլոր վայրերը, որտեղ քրիստոնյաները պաշտպանության էին դիմում: Կոստանդնուպոլիս հեռագիր ուղարկվեց, թե հայերն են հարձակվողները: Չնայած երիտթուրքական կառավարությունը հրաման տվեց դադարեցնել ջարդերը, սակայն չբացահայտեց իր վերաբերմունքը կոտորածի նկատմամբ: Ոչ միայն հենց նույն այդ երիտթուրքական սպաներն ու զինվորներն էին կողոպուտի մասնակիցները, այլև իրադարձությունների հետագա դատական քննությունն ինքնին խայտառակություն էր: Կոտորածների հայտնի կազմակերպիչներն ազատ շրջում էին, իսկ նրանց փոխարեն կախվեցին ամբոխից պատահականորեն բռնված մի քանի ոճրագործներ: Նրանց հետ կախեցին նաև հայերի, որոնք ինքնապաշտպանության մղումով գեներ էին վերցրել: Երիտթուրքերի իշխանությունը ամբապնդվել էր և այլևս պայքարի իր նախկին ընկերների կարիքը չուներ: Այժմ առավել քան կարևոր էր մեղմել պահպանողական թուրքերի մահմեդական կրքերը:

Շուտով պարզ դարձավ, որ երիտթուրքերի ծրագիրը՝ թուրքերեն լեզվի և գուտ թուրքական վարչակարգի գերակայությամբ, համաթուրքական կայսրության ստեղծումն է: Արաբները ևս պետք է հեռացվեին դեկավար աշխատանքներից: Քրիստոնյաները՝ ամենից առաջ հայերը, պետք է ենթարկվեին ճնշման: Ազգերի հավասարությունը անսքող մերժվում էր որպես անհնարին մի բան, այլապես քրիստոնյաներն իրենց բարձր մշակույթով և մեծ ընդունակությամբ, եռանդով ու ճարտարությամբ արագ կալող էին իշխանության հասնել կայսրության մեջ: Իսկ դա պետք է վերապահված մնար տիրող թուրք ժողովրդին, որն իր այդ իրավունքը նվաճել էր սրով, և որը ցածր մշակույթ ունեցող ժողովրդի ծույլ անտարբերությամբ չէր կարող հավասար պայմաններում մրցակցության մեջ մտնել մի այլ ժողովրդի հետ:

Սկսվեց մահմեդականների պլանաչափ վերաբնակեցում քրիստոնյաներով բնակեցված երկրամասերում, հատկապես Մակեդոնիայում և Հայաստանում, նորից խրախուսվում էին քրդերի հարձակումները, դադարեցվեց հայ փախստականներից բռնագրաված հողերի վերադարձը: Բալկանյան պատերազմում թուրքերի պարտությունը առավել ևս ծանրացրեց քրիստոնյա հայերի վիճակը: Եվրոպական Թուրքիայի կորստից հետո ամբողջ ուժերը միավորվեցին ասիական Թուրքիայի իշխանության ամրապնդման համար: Մակեդոնիայից և Թրակիայից Անատոլիա եկան հազարավոր թուրք գաղթականներ՝

ատելությամբ լցված բոլոր քրիստոնյաների հանդեպ, իսկ կառավարությունը ընդառաջում էր նրանց: Հայերի ճնշումը երիտթուրքերի կողմից տարբերվում էր Աբդուլ Համիդի և հին վարչակարգի գործելակերպից նրանով, որ երիտթուրքերը ղեկավարվում էին լավ մտածված հետևողական մի ծրագրով, որը շատ ավելի վտանգավոր էր: Նոր իշխանավորներից շատերն ունեին եվրոպական կրթություն: Հայտնի շատ փաստաթղթերում կան ապացույցներ, որ դեռ համաշխարհային պատերազմից առաջ էր որոշված Հայաստանի քրիստոնյա բնակչության «նոսրացումը»:

Հայ առաջնորդները, կռահելով մոտալուտ վտանգը, դիմեցին մեծ տերությունների կառավարություններին: Հայերի շահերը պաշտպանելու և անհրաժեշտ բացատրություններ տալու նպատակով կաթողիկոսը Էջմիածնից Եվրոպա է ուղարկում պատվիրակություն, որի ղեկավարն էր վաստակաշատ Պողոս Նուբար փաշան: Երիտթուրքերը մեծ աղմուկ բարձրացրին այդ միջամտության առիթով, սպառնացին հայերի կյանքի անվտանգությանը, իսկ Նուբար փաշան կանչվեց զինվորական դատարան, չնայած նա թրքահպատակ չէր, այլ եզրիպատահապատակ: Նրա բացակայությամբ դատարանը վճիռ կայացրեց՝ որպես պետական դավաճանի, զրկել նրան պատվից, սեփականությունից և կյանքից, մի դատավճիռ, որը հավասարապես տարածվում էր ողջ հայ ժողովրդի վրա:

Մեծ տերությունները, որոնց համբերությունը երիտթուրքերը մասամբ չարաշահել էին իրենց վարած երկդիմի քաղաքականությամբ, անմիջապես օգտագործելով առիթը՝ անցան բանակցությունների: Ռուսաստանը հայերի նկատմամբ իր սերը հանկարծ հայտնագործած լինելով՝ պահանջում էր եվրոպական վերահսկողություն թուրքահայաստանում: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան միացան այդ պահանջին: Գերմանիան, որ արդեն թուրքիայի բարեակամն էր, արեց միջին մի առաջարկություն, այն է՝ հայկական նահանգներ որպես գլխավոր տեսուչ ուղարկել երկու սպա եվրոպական ոչ շահագրգիռ երկրներից՝ հսկելու այնտեղ օրենքի կատարման և անվտանգության գործընթացը: Առաջարկն ընդունվեց 1914 թ. փետրվարին, Վանի նահանգում տեսուչ նշանակվեց նորվեգացի գնդապետ Ն. Հոֆը, իսկ Սվազում՝ հոլանդացի գնդապետ Վեսթենենը: Նրանք դեռ նոր էին հասել իրենց նշանակման վայրերը, երբ բռնկվեց համաշխարհային պատերազմը, և թուրքիան 1914 թ. նոյեմբերին անցավ միջին պետությունների կողմը: Եվրոպացի սպաները հարկադրված էին վերադառնալ:

1914 թ. հուլիսի վերջին, համաշխարհային պատերազմի բռնկման օրերին հայերը Էրզրումում համաժողով հրավիրեցին, ուր քննարկեցին իրենց դիրքորոշումը ռուս-թուրքական պատերազմի դեպքում՝ ելնելով այն հանգամանքից, որ սահմանի երկու կողմում էլ հայեր էին ապրում: Համաժողովում երիտթուրքերի պատվիրակները հայտարարեցին, որ իրենց կառավարությունը որոշել է պատերազմել Ռուսաստանի դեմ, և փորձեցին ապագա ինքնավարության մասին սուրբ երդումներով հայերին ապստամբեցնել Ռուսաստանի դեմ: Հայերը մերժեցին այդ անպատշաճ պահանջը և, չնայած համառորեն դեմ էին պատերազմին թուրքիայի մասնակցությանը, այնուամենայնիվ հավաստիացրին, որ պատերազմի դեպքում կկատարեն իրենց պարտքը:

Հայերի այդ որոշումը կատաղեցրեց երիտթուրքերի առաջնորդներին, և նրանք սկսեցին քայլ առ քայլ հասունացնել զահլատար այդ ճիճուներին արմատախիլ անելու ծրագիրը: Միլիայի զինվորական պետ Ջեմալ բեյին 1915 թ. փետրվարի 18-ին Ադանա հղած մի նամակում, որ «պատասխանատու գերատեսչության հանձնարարությամբ» գրել էր երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի մի անդամ, ասված էր. կենտրոնական կոմիտեն որոշել է հայրենիքը ազատագրել այդ անիծված ցեղի իշխանատենչությունից, իսկ դրա հետևանքով օսմանյան պատմությանը պարտադրված խայտառակության պատասխանատվության ողջ ծանրությունը վերցնում է հայրենասերի իր ուսերին: «Կոմիտեն... որոշել է թուրքիայում բնակվող բոլոր հայերին բնաջնջել, ոչ ոք չպետք է կենդանի դուրս պրծնի, այդ առումով կոմիտեն կառավարությանը մեծ լիազորություններ է տվել: Կառավարությունը վալիներին ու զորապետներին անհրաժեշտ հրահանգներ կտա կոտորածների կազմակերպման վերաբերյալ»<sup>1</sup>:

Ծրագրի իրականացման նախապատրաստությունը նպատակասլաց էր: Արևելյան Անատոլիա ուղարկվեցին բացառապես հակաքրիստոնեական տրամադրություններով համարված ոստիկանական ջոկատներ, որոնց առաջադրանքն էր՝ զենք փնտրելու պատրվակով խուզարկել բոլոր քրիստոնյաների տները: Չերբակավեցին շատ նշանավոր հայեր, որոնց տանջանքների ենթարկելով հարցաքննում էին զենքի թաքստոցների ու լրտեսության խոստովանության ակնկալիքներով: Երիտթուրքերն ամեն կարգի ավազակաբարո տականքներից, որոնց հավաքագրել էին բանտերից և Աստված գիտե որտեղից, կազմեցին ջոկատներ, որ հետագայում հայտնի դարձան տխրահռչակ չեթե անվամբ: Չինվորական ծառայության չկանչված մահմեդական բնակչությունը համարեց աշխարհագրները և զինվեց, այն դեպքում, երբ քրիստոնյաները զինաթափ էին եղել: Զրդերը, որ սկզբնական շրջանում դժգոհ էին երիտթուրքերի կարգ ու օրինական իրավական հարաբերություններ հաստատելու

<sup>1</sup> Տե՛ս **A. M. Benedictsens**: Armenia, Կոպենհագեն, 1925, էջ 246 և հաջորդները:



ջանքերից, քանի որ դա խանգարում էր զբաղվելու իրենց համար սովորական դարձած ավազակությամբ, այժմ արդեն հաշտվել էին՝ հասկանալով, որ այսուհետ նոր սուլթանը իր բարերար աջը այլևս չի պահելու անհավատների գրվախին: 1914 թ. նոյեմբերի 21-ին անհավատ երիտթուրքերը հանդիսավորապես սրբազան պատերազմ՝ ջիհադ, հայտարարեցին և պարտավորվեցին սպանել այն բոլոր անհավատներին, ովքեր չեն հնազանդվի իսլամին: Մրանով նրանք ցանկանում էին Հնդկաստանի և Աֆրիկայի մահմեդական բնակչությանը հանել քրիստոնեական աշխարհի դեմ: Անատոլիայում շարունակ բորբոքվում էր ատելությունը քրիստոնյաների հանդեպ: Քրիստոնյա բոլոր տղամարդիկ՝ սկզբում 20—43, ապա 18—48 տարեկան, կանչվեցին ծառայության, չնայած ըստ օրենքի զինապարտության տարիքը 27-ն էր: Անաշխատունակներին օգտագործեցին որպես բեռնակիր անասուններ. միայն Մուշի և Էրզրումի միջև գոհվեց երեք հազար մարդ:

Պատերազմի ժամանակ Փոքր Ասիայում, Սիրիայում և Միջագետքում բուրքերի կողմից հայերին հալածելու և բնաջնջելու մասին ունենք շատ ականատեսների հաղորդումներ: Նրանք Ամերիկայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Դանիայի տարբեր ներկայացուցչությունների ու կազմակերպությունների անդամներ են, որոնք այդ երկրներում ունեին իրենց բաժանմունքները, հատկապես գերմանացի հյուպատոսներն ու սպաները Փոքր Ասիայում և Գերմանիայի դեսպանները: Այդ հաղորդումներն ու փաստաթղթերը հավաքել է հայ ժողովրդի նշանավոր բարեկամ, գերմանացի դոկտոր Յոհանես Լեփսիուսը և Պոցդամում հրատարակել «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թթ., դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու» խորագրով: Մեր հետագա շարադրանքը գլխավորապես հիմնվում է այդ վավերագրերի վրա, որոնց իսկությունը կասկածի տեղիք չի տալիս: Չկարծեք, թե գերմանացի պաշտոնյաները ցանկացել են իրենց թուրք դաշնակիցներին վարկաբեկել պետք եղածից ավելի, պարզապես առիթն այնպիսին էր, որ հայերը ներկայացվեցին ըստ արժանվույն<sup>2</sup>:

Հալածանքը հայ ժողովրդի դեմ սկսվեց Կիլիկիայից, Չեթումից, որը դեռ պահպանում էր իր անկախությունը և գերծ էր մնացել Աբդուլ Համիդի կոտորածներից: 1915 թ. մարտին 4000 մարդ ուղարկվեց Չեթում՝ մոտակայքում գործող մի ավազակախմբի (որի մեջ կային նաև մի քանի դասալիքներ) վնասագերծելու պատրվակով: Արդյունքում Չեթումի ողջ հայ բնակչությունը՝ 10—20 հազար մարդ, տեղահանվեց և քշվեց Կոնիայի նահանգի ճահճուտներն ու Եփրատի արարական անապատները՝ Դեր-Ջոր: Կիլիկիայի ավա-

մերծ Դորտյոլ գյուղի տղամարդկանց, որ 1909 թ. կոտորածների ժամանակ ինքնապաշտպանության էին դիմել, հավաքեցին և ուղարկեցին Հալեպ՝ ճանապարհաշինության վրա աշխատելու: Գյուղերում լրտեսներ բացահայտելու և ձերբակալելու պատրվակը միշտ ածանցյալ նպատակ ուներ: Սվեդիա գյուղի բնակչությունը, որ նույնպես գերծ էր մնացել 1909 թ. կոտորածից, տեղահանման հրաման էր ստացել, բայց նրանք հեռացան և ապաստանեցին ավաներձ մի լեռան վրա ու այնտեղ իրենց չնչին զինամթերքով մի քանի շաբաթ ինքնապաշտպանական կռիվ մղեցին թուրքերի գերազանցող ուժերի դեմ, մինչև որ նրանց՝ 4053 տղամարդ, կին և երեխա, փրկեցին ֆրանսիական ռազմանավերը:

Արևելյան Անատոլիայում հայերը ենթարկվեցին ամենադաժան տանջանքների: Կանանց և երեխաներին տեղահանեցին, երբ տղամարդիկ զինվորական ծառայության մեջ էին: Բռնագաղթվածները կրեցին սոսկալի տառապանքներ:

Այսպես կոչված Վանի «ապստամբությունը» թուրքերը շահարկեցին որպես հայերի դավաճանության իրական ապացույց: Մենք երախտապարտ ենք այդ դեպքերի ականատեսներ ամերիկացի և գերմանացի միսիոներներին իրենց իրական և հավաստի վկայությունների համար<sup>3</sup>: 1915 թ. փետրվարին Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը՝ Էնվեր բեյի ազգականը, թուրքերի մի հավաքում ասել էր. «Մենք Ազերբայջանում հայերի և սիրիացիների վերջը տվեցինք, նույնը պետք է անենք նաև Վանում»: Բանակի համար բռնագրավման պատրվակով հայերը ամենավերջին ձևով կողոպտվեցին: Գյուղերում շինականները ենթարկվում էին քրդերի ու ոստիկանների թալանին և բռնություններին: Ապրիլի 14-ին Շատախում ընդհարում տեղի ունեցավ ոստիկանների հետ: Ջևդեթ բեյը իրը հայերին խաղաղեցնելու համար այնտեղ է ուղարկում ճանաչված հայ գործիչներից մեկին՝ երեք ուրիշ հայերի հետ: Սակայն ճանապարհին քնած ժամանակ նենգաբար սպանել է տալիս նրանց: Նույն ժամանակ (ապրիլի 16-ին) խարբուխամբ իր մոտ է կանչում մի այլ հայ գործիչ, ձերբակալում է և նույնպես նենգաբար սպանում: Հաջորդ օրը Վան քաղաքի հայաբնակ թաղերի վրա հարձակման տեսարան է սարքում, իսկ Արճեշում և Հայոց ձորի գյուղերում սկսում ջարդերը: Վանում հայերը ամբացրել էին իրենց տները՝ կանանց և երեխաներին պաշտպանելու համար: Նահանգապետը հրամայել էր բանակի համար հավաքագրել 3000 մարդ: Հայերը լավ գիտենալով, թե ինչ է սպասում գորակոչիկներին՝ պատասխանեցին, որ իրենք չեն կարող պահանջը կատարել, քանի որ միայն 400 մարդ կարող են հավաքել, իսկ մնացածի փոխարեն պարտավորվում են մաս-մաս վճարել: Նահանգապետը մերժեց առաջարկը:

<sup>3</sup> Հմմտ. Յ. Լեփսիուս, էջ XIII, 471:

<sup>2</sup> Համաշխարհային պատերազմի սկզբում հայերի եղեռնի իրական նկարագրությունը քրիստոնեական կողմից ամփոփված է Բրայսի «Treatment of Armenians in the Ottoman Empire» խորագիրը կրող կապույտ գրքում, որ լույս տեսավ 1916 թ.:

Ապրիլի 20-ի առավոտյան մի քանի թուրք զինվոր փորձում են առևանգել մի հայուհու: Վրա են հասնում հայ զինվորները, «թուրք զինվորը կրակում և սպանում է կնոջը»: Դեպքի ակնանատեսն է գերմանացի միսիոներ Շայտոին: Սկսվում է հրաձգություն: Թուրքերը կրակի տակ են առնում քաղաքի ամբողջ հայաբնակ մասը, նրանք կրակում են հրացաններից և թնդանոթներից: Հայերը պաշտպանվում են: Նրանց հրացաններն ու ատրճանակները քիչ էին, սակայն իրենց չնչին ռազմամթերքով կարողանում են ոչ միայն դիմադրել, այլև հարկադրել թուրքերին՝ սպառելու իրենց պաշարը: Պաշտպանության ընթացքում հայերը կարողացան գնդակ ձուլել և օրական պատրաստում էին 3000 փամփուշտ: Նրանք ստացան մաև վառող և սարքեցին երեք հրասանդ: Այդ ընթացքում թուրք զինվորները և քրդերը հասցրել էին ամայացնել Վանի շրջակա գյուղերը, տղամարդկանց, կանանց ու երեխաներին մորթել կամ խեղդել, տները վառել: Գյուղեր կային, որ պատրաստ չէին ինքնապաշտպանության, կային, որ պաշտպանվեցին մինչև միջոցների լրիվ սպառում: Քաղաքից և շրջակա բնակավայրերից հազարավոր փախստականներ, վիրավորներ գալիս և լցվում էին Վանի միսիոներությունները:

Քաղաքի պաշարումը և գնդակոծումը տևեց չորս շաբաթ: Կիրակի օրը, մայիսի 16-ին, այն հանկարծ դադարեց, իսկ Ջելվեթ բեյը իր թուրքերի հետ փախուստի դիմեց: Պարզվեց, որ ռուսական մի բանակ է մոտենում քաղաքին, բայց հայերը չգիտեին: Մայիսի 18-ին քաղաք մտավ առաջապահ ջոկատը: Ռուսները կապի մեջ չլինելով հայերի հետ՝ տեղյակ չէին քաղաքի վերջին իրադարձություններին:

Հայերի տվյալներով քաղաքի վրա նետվել էր 12 հազար արկ, սակայն ավերածությունը չնչին էր: Հայերի կողմից հաշվվում էր 18 սպանված, վիրավորների թիվը մեծ էր: Թուրքերի կորուստները հազիվ ավելի լինեին: Շատ չանցած՝ (հուլիսի 31-ին) ռուսական զորքերը կրկին հյուսիս նահանջեցին, իսկ Վանի նահանգի ողջ բնակչությունը՝ մոտ 200000 մարդ, գաղթեց Ռուսահայաստան:

Վանում հայերի ինքնապաշտպանության լուրը Էնվեր բեյն ու այլք տարածեցին աշխարհով մեկ: Թուրքական կառավարության՝ Բեռլին ուղարկած հաղորդագրության մեջ ասված էր, որ հայ խռովարարների հրոսակախմբերը թուրքական բանակի թիկունքում հարձակվել են մահմեդական բնակչության վրա, որ Վանի նահանգի 180000 մահմեդականներից միայն 30000-ն են կարողացել փրկվել: Բեռլինի թուրքական դեսպանության մեկ այլ՝ 1915 թ. հոկտեմբերի հաղորդագրության մեջ ասված էր. «Սպանված է 180000-ից ոչ պակաս մահմեդական: Ջարմանալի չէ, որ մահմեդականները վրեժ լուծեն»: Սպանված 18 թուրքը (հազիվ ավելին լինեք) դարձել էր 180000: Իր լկտիոնային մեջ եզակի այդ սուտն ուներ որոշակի ենթատեքստ: Ըստ վիճակագրության Վանի նահանգում ապրում էր 180000 մուսուլման, մոտավորապես 30000 թուրք և

150000 քուրդ: Ռուսական բանակի մոտենալու հետ թուրքերը փախան արևմուտք, իսկ 150000 քրդերը մնացին տեղում, նրանց չանհանգստացրին ինչպես ռուսները, այնպես էլ հայերը:

Վանի դեպքը հայերի նկատմամբ թուրքերի բռնած դիրքի բնորոշ օրինակ է. գործն իրենց ուզածով այնպես շրջել, որ հայերը ներկայանան որպես խռովարարներ ու դավաճաններ: Երիտթուրքական կառավարության հայերին մեղադրելու և իրենց արդարացնելու մյուս «ապացույցները» մույն կարգի էին: Գերմանական միացյալ կայսրության հյուպատոսների հաղորդումները բնավ չէին ակնարկում ժողովրդական ապստամբության կամ խռովության նախապատրաստման մասին<sup>4</sup>: Դա անհնար էր, քանի որ հայերը, որպես կանոն, անգեղ էին, իսկ տղամարդկանց մեծ մասը տարբեր վայրերում զինվորական ծառայության մեջ էր:

Վանում բռնություններին հայերի զինված դիմակայելուց մի քանի օր անց, ապրիլի 22-ի գիշերը, արտաքին գործերի մինիստր Թալեաթ բեյը Կոստանդնուպոլսում ձեռքակալում է նշանավոր հայերի՝ պատգամավորների, ուսուցիչների, գրողների, բժիշկների, իրավաբանների, խմբագիրների, հոգևորականների: Հաջորդ գիշեր ձեռքակալվում է մի նոր խումբ, ընդհանուր թվով 600 մարդ, որոնց առանց դատ ու դատաստան քշում են Փոքր Ասիա: Թալեաթ բեյը այդ գործունեությունը բնութագրեց որպես սոսկ անվտանգությունն ապահովելու միջոցառում, քանի որ հնարավոր էր նրանց մեջ լինեին վտանգավոր անձնավորություններ: Նա խոստացավ ձեռքակալվածներին շուտով ազատել: Սակայն նրանցից միայն ութը վերադարձան անասելի տանջանքներ կրելուց հետո, իսկ մյուսներն անհետ կորան: Այսպիսով, հաջողությամբ ճանապարհից հեռացվեցին նրանք, ովքեր կարող էին ժողովրդի դատը պաշտպանել:

Այնուհետև թուրքերը ձեռնամուխ եղան իրենց կարծիքով հրաշալի գաղափարի՝ հայերի տեղահանման ծրագրի՝ որպես «ռազմական անհրաժեշտ միջոցառման», իրագործմանը: Բռնագաղթի միջոցով անհուսալի տարրերից մաքրվելու էր պատերազմի թատերաբեմը, ինչպես այդ տեղի էր ունեցել Բելգիայում և Ֆրանսիայում: Էնվեր փաշան Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան կոմս Վանզենհայմին բացատրում էր իր ծրագիրը, որ անհրաժեշտ է «ապստամբած հայկական կենտրոններից բոլոր ոչ այնքան էլ անբասիր ընտանիքները Միջագետք տեղափոխել»: Վանզենհայմը այդ մասին 1915 թ. մայիսի 31-ին հեռագրով հաղորդում է Բեռլին՝ ասելով. Էնվերը «թախանձագին խնդրում է, որ այդ հարցում մենք նրան թևաքափ չանենք: Անշուշտ, միջոցառումը ծանր կնստի հայ բնակչության վրա: Այնուամենայնիվ ես այն կարծիքին եմ, որ մենք կմեղմենք այն իր ձևի մեջ, բայց սկզբունքորեն խամգարե-

<sup>4</sup> Ըստ **Լեպիտասի**, նույն տեղում, էջ LXX և հաջորդները:

լու իրավունք չունենք»:

Դեսպանը շարունակում էր հավատալ թուրքական կառավարության այն հավաստիացմանը, որ Ռուսաստանը սադրիչ աշխատանք է տանում Հայաստանում և սպառնում է «Թուրքիայի հետագա գոյությանը»: Հետո միայն նրան պարզ դարձավ այդ մեղադրանքների կատարյալ անհիմնությունը:

1915 թ. հունիսից ծայր առավ մի ոճրագործություն, որի նմանը պատմությունը չէր տեսել: Կիլիկիայի, Անատոլիայի և Միջագետքի բոլոր գյուղերից ու քաղաքներից հայերը բռնեցին իրենց մահվան ճանապարհը: Ինչպես ծրագրված էր, մաքրվում էր շրջան առ շրջան: Նշանակություն չունեին այն մոտ էր պատերազմական գործողությունների վայրին, թե հարյուրավոր կիլոմետրերով հեռու էր: Վերջապես սրբվում էր այն ամենը, ինչ կյանքի աղբյուր էր հայերի համար: Քանի որ տղամարդկանց մեծ մասը կանչված էր աշխատանքային զինծառայության, տներից քվեցին հիմնականում կանայք, երեխաներ, ծերեր և հաշմանդամներ: Նրանց ժամանակ էին տալիս միայն մի քանի օր կամ ժամ: Ամբողջ սեփականությունը՝ տունը, հողը, հացահատիկը, անասունները, ունեցվածքը, գործիքները պետք է թողնեին. այն բռնագրավվում էր թուրքական իշխանությունների կողմից: Ինչ վերաբերում էր փողին, զարդերին կամ այլ արժեքավոր իրերի, որոնք հագուստեղենի հետ կալող էին իրենց հետ վերցնել, հետագայում խլվում էին ոստիկանների կողմից: Եթե մեկը թույլտվություն էր ստանում հետը սայլ և լծկան վերցնել, դրանք նույնպես խլվում էին ճանապարհին: Տարաբախտներին վիճակված էր թողնել իրենց գյուղերն ու տները և քվել լեռներով դեպի արաբական անապատները, որտեղ ոչինչ չէր նախատեսված ընդունելու և կերակրելու սովահար ու փհատված մարդկանց այդ խմբերը: Ճանապարհին պարենավորման հարցը նույնքան քիչ հոգս էր պատճառել կառավարությանը, քանի որ նախատեսված էր՝ ով չէր ընկնի կամ սպանվի ճանապարհին, պետք է մահանար քաղցից:

Հազիվ էին քարավանները տեղավորվել Մարաշում, երբ նրանց վրա հարձակվեցին ոստիկանական և պահակային ջոկատները՝ գործադրելով իրենց դաժան և անպատկառ բռնությունները: Տղամարդկանց և դեռահաս տղաներին առանձնացրին և սպանեցին, իսկ կանանց, երեխաներին և ծերերին կըրկին քշեցին՝ ճանապարհին ենթարկելով քաղցի և ծարավի անասելի տանջանքների: Ուտելիքը, եթե իհարկե կար, քիչ էր ու վատորակ: Ով դժվարանում էր հետևել խմբին, քվում էր խարազանի հարվածներով, մինչև ընկնելը կամ տեղում մահանալը: Այսպես քարավաններն աստիճանաբար հալվում էին քաղցից, հիվանդություններից, ծարավից և սպանոցից: Երիտասարդ կանանց և աղջիկներին գողանում էին կամ տեղում կազմակերպում կանանց վաճառքի շուկաներ, որտեղ հավաքվում էր մահմեդական բնակչություն: 20 պիաստր (մոտ 3 մարկ) արժեք դեռահաս աղջիկը, 5 պիաստր (80 պֆենիգ)<sup>5</sup> կինը, հաճախ երեխաների հետ միասին: Ժամանակ առ ժամանակ քարավանների

վրա էին հարձակվում «աշխարհագորայինները», չեթեները կամ քրդերը, թալանում էին, սպանում, բռնաբարում կանանց:

Օտարերկրացի մի ակնմատես աքսորյալների այդ քարավանների մասին ասել է, որ դրանք ոչ այլ ինչ են, քան «կոտորածի քաղաքավարի ձև»: Իրականում դա մի քանի անգամ ավելի սհավոր ու զազրելի էր: Չոհեբին անմիջապես սպանելու փոխարեն նախ և առաջ կիրառում էին անմարդկային տանջանքների բոլոր միջոցները, և գործողության այս եղանակն իշխանավորները ներկայացնում էին որպես «ռազմական անհրաժեշտ միջոցառում»: 1915 թ. հունիսից մինչ օգոստոս, տարվա ամենաշոգ ժամանակը, որ ենթադրում էր մարդկային զոհերի ամենամեծ քանակ, ձգվում էին մահվան քարավանների անվերջանալի շարքերը հայաբնակ բոլոր նահանգներից ու քաղաքներից դեպի հարավ, դեպի անապատներ: Փոքր-ինչ այլ էր դեպքերի ընթացքը Կոստանդնուպոլսում, Չմյուռնիայում և Հալեպում, հավանաբար այնտեղ զգուշանում էին եվրոպացիների ներկայությունից: Չմյուռնիայում տեղահանումը կասեցվել էր գերմանացի սպաների կողմից:

Աքսորյալների քարավանների իրական վիճակը պատկերացնելու համար բերենք գերմանացի մի ակնմատեսի վկայությունը, ըստ որի Խարբերդից և Սվազից տեղահանված 18000 բռնագաղթածներից Հալեպ էին հասել ընդամենը 35-ը, Էրզրումից 19000 բռնագաղթածներից կենդանի մնացել 11-ը<sup>5</sup>: Ըստ Լեփսիուսի՝ մահվան քարավաններում մարդկանց միջին հաշվով երկու երրորդը ճանապարհին մահանում կամ անհետանում էր, իսկ կենդանի մնացածները, որոնք Սիրիա և Միջագետք էին հասել հյուծված, կմախքացած և գրեթե մերկ, քվեցին անապատներ և այնտեղ մահացան՝ կրելով սհավոր տանջանքներ: Սովորաբար երթը տևում էր ամիսներ: Մահվան ճանապարհի վերջում անգամ դժբախտներին հանգիստ չէին տալիս, շաբաթներով քշում էին նրանց այս ու այն կողմ, լցնում և դատարկում համակենտրոնացման ճամբարները, անգթորեն թողնում, որ մարդիկ մեռնեն քաղցից և համաճարակներից կամ գոհ գնան պարբերաբար կազմակերպվող ջարդերին: Մոլեզնում էր բժավոր տիֆը, ճանապարհներին թափված դիակները ապականում էին օդը:

Շատ վայրերում նահանգապետներն ու թուրքական իշխանություններն ավելորդ էին համարում քողարկվել աքսորի պատրվակի տակ, ջարդերը կազմակերպում էին հենց տեղում, ինչպես Մծբինում (հուլիսի 1-ին), Բիթլիսում (հուլիսի 1-ին), Մուշում (հուլիսի 10-ին), Մալաթիայում (հուլիսի 15-ին), Ջեզիրեում (սեպտեմբերի 2-ին), Դիարբեքիրում, Սրդիաթում և այլուր: Դա ավելի տանելի էր, քան անմարդկային տանջանքները: 1915 թ. հուլիսի 10-ին Մոսուլի Գերմանիայի հյուպատոսը հեռագրում է, որ Տիգրիս գետն ի վար լաստերով

<sup>5</sup> Հմմտ. A. N. Mandelstam: La Societe des Nations et les Puissances devant le Probleme Armenien. Փարիզ 1925, էջ 44, ծանոթ. 1:

Դիարքեքիից Մոսու տեղափոխվող 614 հայ արքայականներ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, սպանվել են ճանապարհին: Լաստերը Մոսու են հասել դատարկ, իսկ գետում լողում էին դիակներ և հագուստներ: Նման փոխադրումների թիվը շատ էր: 1915 թ. հունիսի 18-ին Էրզրումի Գերմանիայի հյուպատոսը հաղորդում է կայագոր ունեցող Երզնկա քաղաքի մոտակա բնակավայրերի ջարդերի մասին: Կանոնավոր բանակի 86-րդ հեծելազորային գնդի ջոկատներն իրենց հրամանատարներով քրդերի հետ միասին 1915 թ. հունիսի 14-ին Կամախի կիրճում սպանեցին 20000—25000 կին և երեխա: Բիթլիսում մոթավեց քաղաքի հայ բնակչության մեծ մասը, 900 կին և երեխա դուրս բերեցին և խեղդեցին Տիգրիս գետում: Այսպես շարունակում էր ծավալվել սահմըռկելի վայրագությունների անվերջունալի շղթան: Կային վայրեր, ուր վառում էին քրիստոնյաներին: Թուրքական բանակում քաջաբար կռվող հայ զինվորները, որոնց արիությունն ու հավատարմությունը հրապարակորեն փառաբանել էր մույնիսկ Էնվեր փաշան, զինաթափ էին արվում և թիկունքում ծանր աշխատանք կատարելուց հետո, սպաների հրամանով, իրենց մարտական ընկերների կողմից գնդակահարվում:

Գերմանացի հյուպատոսների զեկույցների հիման վրա, որոնք բացահայտում էին «աքսորի» իրական պատկերը, Գերմանիայի դեսպանները Բարձր դուռ են հղում մի շարք բողոքագրեր, սակայն բոլորն էլ ապարդյուն: Թուրք կառավարողները մասամբ պարզապես ժխտում էին իրողությունը կամ էլ բացահայտ արտահայտվում, որ իրենց դաշնակիցների խնդիրը մարդկություն սովորեցնելը չէ: 1915 թ. դեկտեմբերի 18-ին Թալեաթ բեյը, ի պատասխան Գերմանիայի դեսպան կոմս Մեթերնիխի, անամոթաբար հայտարարեց, որ նման պարագայում գերմանացիները կանեին նույնը: Բացի այդ, Բարձր դուռը բողոք է ներկայացնում Գերմանիայի կառավարությանը, Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար: Գերմանիայի կառավարության փորձերն անգոր էին կասեցնել եղեռնը: Եթե այս պարագայում գերմանացի դեսպաններն ու հյուպատոսները քիչ կամ ոչինչ կարողացան անել, ապա վկայություններով մերկացրին իրենց դաշնակցի ոճրագործությունները: Տագնապալի այդ վավերագրերը ոչ միայն հաստատում են անմարդկային ոճրի գոյությունը, այլև բացահայտում, որ այն իրագործվել է երիտթուրքերի առաջնորդների և նրանց կոմիտեի կողմից նախօրոք մշակված ծրագրով: Հետագայում թուրքերի՝ եղեռնը և նրա ծրագրված, պլանաչափ անցկացման ժխտման երկչուտ փորձերը չփրկեցին նրանց:

1915 թ. հունիսի 17-ին Գերմանիայի դեսպան կոմս Վանզենհայնը գրում է Բեռլին. «Թալեաթ բեյը... առանց թաքցնելու ասում է, որ Բարձր դուռը համաշխարհային պատերազմը պետք է օգտագործի իր ներքին թշնամիներից (քրիստոնյա բնիկներից) ազատվելու համար, թույլ չտալով օտարերկրացի դիվանագետներին իրենց միջամտությամբ խանգարելու»: Հուլիսի 7-ին դեսպա-

նը գրում է. այն, որ տեղահանում կատարվում է նաև թշնամու հարձակումներից հետո վայրերից և այն ձևը, ինչպես կատարվում է տեղահանումը, վկայում են, «որ կառավարությունը փաստորեն իրականացնում է հայերի ցեղասպանություն թուրքական կայսրությունում»: 1916 թ. հուլիսի 10-ին դեսպան կոմս Մեթերնիխը հեռագրում է Գերմանիայի ուսխականցիներին. թուրքական կառավարությունը «իր ծրագրի՝ հայկական հարցը ցեղասպանությամբ լուծելու իրագործման ժամանակ» հաշվի չառավ ոչ Գերմանիայի, ոչ էլ Ամերիկայի դեսպանների կամ Հռոմի պապի առարկությունները և այլ ազդեցիկ միջոցների գոյությունը:

1915 թ. սեպտեմբերի 15-ի մի ծածկագրում ասված էր.

«Ինչպես նախօրոք տեղեկացված է, կառավարությունը կոմիտեի հրամանով որոշել է բնաջնջել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Ով կհակառակվի այդ հրամանին, նա չի կարող դիմել որպես կառավարության բարեկամ: Ինչքան էլ դաժան լինեն ոչնչացման միջոցները, չպետք է խնայել կանանց, երեխաներին և հիվանդներին, առանց զգացմունքի և խղճի ձայնը լսելու, պետք է սպանել նրանց:

Կայսրության ներքին գործերի մինիստր Թալեաթ»<sup>6</sup>:

Նույն այդ ներքին գործերի մինիստրի հրամանով կենդանի կարող էին մնալ միայն մինչև հինգ տարեկան երեխաները, որոնց կարելի էր թուրքացնել:

1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթ բեյը Գերմանիայի դեսպանին հայտարարում է. «La question armenienne n'existe plus»<sup>7</sup>: Նա կարող էր երաշխավորել իր ասածի ճշմարտացիությունը, քանի որ այդ ժամանակ իրականացված էր արքայների մեծ մասը: Մնում էր միայն վերացնել մահվան ճանապարհն անցած զոհերին: Նրանց հավաքեցին համակենտրոնացման ճամբարներում արաբական անապատների հարևանությամբ: Ուտելիք չէր տրվում, ինչպես նաև հնարավորություն՝ հոգալու իրենց ապրուստը:

1916 թ. հունվարին 5000—6000 հայեր Այնթապից քվեցին անապատ, ապրիլին 14000 արքայականներ սպանվեցին Ռաս ուլ Այնի ճամբարում: Քաղաքի գայմագամի հրամանով չեչենների վարձու հրոսակախմբերը ամեն օր ճամբարից 300—500 հոգի տանում էին 10 կմ մինչ գետը և այնտեղ սպանում: Դիակները նետվում էին ջուրը<sup>8</sup>: Հալեպից արևելք. Եփրատի ափին, Մեզբենի մոտ հայերը համակենտրոնացման մի մեծ ճամբարում սովի էին մատնված, ըստ թուրքական վկայությունների այնտեղ թաղված է 50000 մարդ: 1915 թ. Եփրատի ափամերձ շրջան Դեր Զորի օազիսները քվեցին 60000 արքայական, որոնց մեծ մասը անհետացավ: 1916 թ. ապրիլի 15-ին 19000 մարդ չորս

<sup>6</sup> Ծածկագրի լուսապատճենը հրատարակված է, տես **A. M. Benedictson**: *Armenien, Kopenhagen* 1925, էջ 259:

<sup>7</sup> «Հայկական հարց այլևս գոյություն չունի» (ֆրանս.):

<sup>8</sup> Հմմտ. **Լեխիմու**, էջ 256:



փոխադրումով պետք է հասցվեր Մոսու: Ճանապարհը 300 կմ անցնում էր անապատի միջով: Մայիսի 22-ին տեղ հասավ ընդամենը 2500 հոգի, ճանապարհին կանանց և աղջիկների մեծ մասը վաճառվեց բեղվիներին, մնացածը մահացավ քաղցից և ծարավից: 1916 թ. հուլիսին Գեր Չորում կար 20000 արտրական, ութ շարք անց գերմանացի մի սպա այնտեղ հանդիպում է ընդամենը մի քանի հարյուր արհեստավորների, մյուսներն անհետացել էին. նույն չեչեն հրոսակախմբերի կողմից խումբ առ խումբ տարվել էին ճամբարներ և ոչնչացվել: Ամենադաժանը սովամահությունն էր: Մի ականատեսի վկայությամբ Բարում երկուսուկես օրվա ընթացքում մահացել էր 1029 հայ:

Այդ սովահար ու մահացող մարդկանց վիճակը, որոնց տանջանքները մղձավանջի էին նման, նկարագրվում է շատ ականատեսների վկայություններում: Երբեմնի մարդկային էակների այդ դժբախտ ուրվականները, որոնց թվում կային շատ կրթված մարդիկ, ուտում էին, ինչ ձեռք էին բերում: Ուտիկանները կատարյալ անտարբերությամբ էին նայում տանջանքներին, հսկում մինչև նրանց մեռնելը: Կատարյալ դժոխք: Թուրքական իշխանությունները տապալում էին օգնության յուրաքանչյուր փորձ, անգամ Գերմանիայի կողմից: Երբ 1915 թ. օգոստոսին Լեմսիուսը Կոստանդնուպոլսում էնվեր փաշայից թույլտվություն է հայցում կարիքավոր արտրականներին օգնելու, ստանում է հետևյալ պատասխանը. թուրքերն իրենք կհոգան այդ մասին, իսկ եթե գերմանացիները ցանկանում են մասնակցել, նրանք կարող են իրենց նվիրատվություններն ու դրամը դնել թուրքական կառավարության տրամադրության տակ, վերջինս հոգ կտանի ճիշտ բախշման համար: Ինչ էր հասկացվում «ճիշտ բախշում» ասելով, կասկածելի էր: Ամերիկացիներին, որոնք օգնություն էին բերել, մերժվեց ամի դուրս գալը:

Կենդանի մնացած հայերը կանգնած էին երկընտրանքի առաջ՝ իսլամ ընդունել կամ մեռնել: Չինապարտ տղամարդիկ պարտավոր էին մահմեդական դառնալ և թլպատվել: Բոլոր հայերը պետք է կրեին թուրքական անուններ: Իսլամ ընդունողների և թլպատվողների թիվը մեծ էր, հատկապես երեխաների, որոնց ձեռք էին գցում իշխանությունները: Ծրագրի համաձայն ամբողջ Փոքր Ասիայից, Սև ծովից մինչև Միդիա պետք է անհետանար քրիստոնեության հետքը, քրիստոնեական բոլոր անունները պետք է ոչնչացվեին և փոխարինվեին մահմեդականով:

Հայերի թշնամիներն արհամարհանքով էին խոսում, որ հայերը զանգվածաբար, առանց դիմադրության թույլ էին տալիս իրենց քշելու կործանարար թշվառության գիրկը կամ մորթվելու, մի պնդում, որն ի դեպ ամենամեծ առարկությունն է թուրքերի ստահող այն մեղադրանքների, որ հայերը վտանգավոր խռովարարներ են: Սակայն նրանք մոռանում էին, որ զենուցակ տղամարդկանց մեծագույն մասը նախօրոք կանչվել էր զինծառայության, իսկ ժողովրդից հավաքվել էր զենքը: Այսբանից հետո հայերն ինչպե՞ս կարող էին պաշտ-

պանվել զինված ոստիկաններից, ավարառու ջոկատներից և «աշխարհագրայիններից»: Այնուամենայնիվ, մի քանի վայրերում, ուր քիչ թե շատ զենք կար կամ հնարավորություն այն ձեռք բերելու, ինչպես Վանում, Կիլիկիայի լեռներում, Սվեդիայում, նրանք քաջաբար պաշտպանվեցին և որոշակի հաջողություն ունեցան: Հայերի զենքը հիմնականում հին որսորդական հրացաններն էին: Ուրֆայում հայերը քաջաբար զոհվեցին անհավասար պայքարում: Այսուհանդերձ վախկոտության մեջ չի կարելի մեղադրել մի ժողովրդի, որն իր համոզմունքների համար արդար պայքարում քաջության այնպիսի օրինակներ է տվել, ինչպիսիք հազարավոր հայ կամավորներն էին կովկասյան և սիրիական ճակատներում:

Երբ եվրոպական հասարակայնության ականջին հասավ 1915 թ. ամռանը Հայաստանում կատարվող ոճրագործությունների լուրը, մեծ աղմուկ բարձրացավ Թուրքիայի, ինչպես նաև Գերմանիայի դեմ, որին մեղադրում էին թողտվության մեջ, հակառակ համաշխարհային պատերազմի բոլոր արհավիրքների<sup>9</sup>: Հասարակական այդ կարծիքն իր ամպագոռոք բառերով և հրապարակային հավաստիացումներով քամի էր անում: Եթե միայն «Իրավունք և ազատությունը» հարթի, ապա հայ ժողովուրդը շատ շուտով կտեսնի իր անկախության և ազատության վերականգնումն ամբողջ ծավալով: Հարկավոր է միայն միանալ Անտանտին և ռազմունակ տղամարդկանց պատերազմ ուղարկել: Եվ տարբեր վայրերից գալիս էին հայ կամավորներ, սիրիական բանակում կազմավորվում էին հայկական զնդեր, նրանք կոչված էին ծառայելու անկախ Հայաստանի պաշտպանությանը: Ռուս-թուրքական ճակատում հայ երիտասարդները համախմբվում էին թուրքական եղեռնագործությունների դեմ պայքարի դրոշմները: Բացի ռուսական կանոնավոր բանակում կովող 150000 հայերից, ստեղծվեցին նաև հայկական կամավորական ջոկատներ, որոնք իրենց հրամանատարների գլխավորությամբ, ամենից առաջ՝ քաջարի Անդրանիկի, հերոսաբար կռվում էին: Անատոլիայի ջարդերից հետո կամավորական ջոկատները մեծ թվով համալրվեցին թուրքահայերով, և դա բավական էր, որ թուրքերը անամոթաբար նրանց «դավաճան ապստամբներ» կոչեն, քանի որ նրանք համարձակվել էին զենք բարձրացնել իրենց դահճի վրա: Ավելի քան 200000 հայ զինվոր իր կյանքը տվեց Անտանտի գործի համար:

Պատերազմը շարունակվում էր: Ռուսական բանակն առաջ էր շարժվում, և երբ մեկը մյուսի հետևից վերցրեց Վանը, Բիթլիսը, Մուշը, 1916 թ. հունվարին՝ Էրզրումը, Երզնկան, 1916 թ. մարտին՝ Տրապիզոնը, փախչելու հերթը

<sup>9</sup> Երբ հայտնի դարձավ երիտթուրքերի մտադրությունը, Գերմանիայի կառավարությունը եղեռնը կանխելու համար արեց այն ամենը, ինչ կարելի էր անել պատերազմի պայմաններում, որ ցավոք անցավ ապարդյուն: Այդ տեսակետից գուր անցան նաև Ամերիկայի դեսպան Մորգենթաուի եռանդուն ջանքերը ուղղված երիտթուրքական կառավարության դեմ, չնայած դեսպերի նրա լավատեղյակությանը:

թուրքերին էր: Նրանք վախենում էին հայերի վրեժխնդրությունից: Վայրի խուճապով թուրքերը փախչում էին ձմռան ցրտի և բքի միջով դեպի արևմուտք: Շատերը մահացան անանցանելի լեռներում՝ կրելով անասելի զրկանքներ ու տանջանքներ: Դիշտ է, որոշ տեղերում հայ կամավորները լուծում էին իրենց հայրենակիցների վրեժը, բայց դա այն չափերի չհասավ, որ կարելի լիներ համենասելի թուրքական կողմի կոտորածների հետ: Փախած հազարավոր հայեր վերադառնում էին լեռներում իրենց բաքստոցներից, ռուսական սահմանի մյուս կողմից, Սիջազետքից իրենց ավերված հայրենիքը և իսկույն ձեռնամուխ լինում շինարարության:

1917 թ. մարտին տեղի ունեցավ ռուսական հեղափոխությունը: Չորրորդ գլխում գետնեղված՝ Անդրկովկասի հետագա իրադարձությունների մանրամասն նկարագրությանը այստեղ կարելի է ավելացնել Հայաստանի համար կարևոր մի քանի կետ: 1918 թ. սկզբին թուրքերը կրկին առաջացան դեպի Թուրքահայաստան: Ռուսների կողմից լքված հայկական շոկատները հուսահատ դիմադրություն էին ցույց տալիս: Վրացիները նահանջեցին իրենց երկիրը՝ իրենց արյունը պահելով այն պաշտպանելու համար: 1918 թ. մարտի 11-ին թուրքերը գրավում են Էրզրումը, ապա ամբողջ Թուրքահայաստանը և շարժվում դեպի Կարս: Այդ ընթացքում Անդրկովկասյան հանրապետությունը հրոշակում է իր անկախությունը, այսինքն անջատվում է Ռուսաստանից (1918 թ. ապրիլի 22-ին) և հավանություն է տալիս Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրին, ըստ որի Թուրքիային էր հասնում Կարսի մարզը: Ապրիլի 27-ին թուրքերը գրավում են Կարսը և կողոպտում այն: 1918 թ. մայիսի 11-ին Բաթումում սկսվում են հաշտության նոր բանակցություններ: Այժմ արդեն թուրքերին չեն բավարարում իրենց իսկ ընդունած Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմանները: Նրանք ավելին են պահանջում: Թուրքերը հարձակվում են Ալեքսանդրապոլի վրա և 1918 թ. մայիսի 15-ին գրավում այն: Ուր որ նրանք գալիս են, կազմակերպում են հայերի նոր ջարդեր: Գերմանիայի կառավարությունը և զինվորական բարձրագույն հրամանատարությունը համառորեն պահանջում էին, որ թուրքերը պարտադիր կարգով կատարեն ընդունած դաշնագրի պայմանները և վերադառնան նրանով հաստատված սահմանները: Սակայն թուրքերը հապշտապ առաջ էին շարժվում, թալանում էին ու կոտորում, գնալով ավելի քիչ քան ձև էր էին ընդունում վայրագությունները՝ հայերին ենթարկելով սուսկալի տանջանքների ու սովի: Երկիրը հեղեղված էր հարյուր-հազարավոր գաղթականներով: Հացահատիկի ամբողջ քերթը կողոպտված էր կամ ոչնչացված, անշարժ գույքն ավերված, շարժականը՝ խլված: Ակնհայտ էր, որ թուրք առաջնորդները մտադրված էին հայ ժողովրդի ցեղասպանությունը շարունակել նաև Ռուսահայաստանում<sup>10</sup>:

Անդրկովկասյան հանրապետության մասնատումից հետո (1918 թ. մայիսի 26) Հայաստանը իրեն հռչակեց անկախ հանրապետություն: Եթե մինչ այդ

Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների պատասխանատվության հիմնական ծանրությունը հայերի վրա էր, ապա թուրքերի հետ Ադրբեջանի թաքարների միավորվելուց հետո նրանք բոլորովին մենակ մնացին և 1918 թ. հունիսի 4-ին թուրքերի հետ հաշտության պայմանագիր ստորագրեցին:

Հայերին մնաց Նոր Բայազետի գավառը և Ալեքսանդրապոլի, Էջմիածնի ու Երևանի գավառների մի մասը (9000 քառ կմ, 350000 բնակչությամբ): Սակայն չնայած հաշտության պայմանագրին, թուրքերը շարունակում էին երկրում իրենց ավարառությունները:

Նրանք Ադրբեջանի թաքարների հետ շարժվում են Բաքու և 1918 թ. սեպտեմբերի 15-ին գրավում այն: Գլխավոր հրամանատար Նուրի փաշան՝ Էմվեր փաշայի կրտսեր եղբայրը, հանգիստ դիտում էր թաքարների կողմից երեք օր շարունակվող քաղաքի թալանը և քրիստոնյաների, հատկապես հայ բնակչության ջարդը: Այն ժամանակ, երբ քաղաքի փողոցներում արձագանքում էին կրակոցները և զոհերի ճիչերը, Նուրի փաշան քաղաքի առջև շքերթ անցկացրեց, որից հետո իր հրամանատարների հետ Մետրոպոլի հյուրանոցում մեծ ճաշկերույթ տվեց: Երեք օրվա ընթացքում Բաքվում զոհվեց 20000—30000 հայ: Դա վրեժն էր այն մի քանի հարյուր թաքարների, որոնք սպանվել էին, երբ հայերն ու ռուս բոլշևիկները Բաքվում կարճ ժամանակով իշխանության գլուխ էին անցել: Դա էլ իր հերթին եղել էր այն բանի վրեժը, որ Անդրկովկասյան հանրապետության լուծարումից հետո (1918 թ. մայիսի 26) թաքար միլիցիոներները կողոպտել էին Երևանի գավառի հայկական գյուղերը:

Երբ Գերմանիան և Թուրքիան պարտվեցին, 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարով թուրքերը պարտավորվեցին նահանջել պատերազմից առաջ զբաղեցրած սահմանները: Հայերը կրկին տեղ դարձան Ալեքսանդրապոլին, Կարսին և Արդանուշին: Դաշնակիցների՝ շարունակ խոստացված երկրի անկախությունն ու թուրքական երկարատև լծից ազատագրումն ապահովելու համար անհրաժեշտ էր Թուրքահայաստանի գրավումը դաշնակից զորքերի օժանդակությամբ: Սակայն կառավարությունները չէին ցանկանում իրենց վրա վերցնել այդ ծանր բեռը: Չէր որ Հայաստանում չկային նավթահանքեր: Այսպես թուրքերը մնացին երկրի տերը, իսկ Հայկական հարցը ձախողվեց: Այսպես թուրքերը մնացին երկրի տերը, իսկ Հայկական հարցը ձախողվեց: Շուտով մի նոր լուրջ վտանգ առաջացավ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ թուրք ազգայնականների շարժման բարձրագույնով Թուրքահայաստանում: Այստեղ երկար-բարակ բացատրության կարիք չկա, թե որտեղից «փտած» Թուրքիան, որին դաշնակիցները հաղթության ցնծության մեջ լիովին պարտված էին համարում, ուժ գտավ դիմադրելու հաղթողներին՝ նորից դառնալով պատերազմող պետություն, որի հետ բանակցություններ էին վարում:

Մինչդեռ Երևանում հայ ժողովուրդն իրեն բնորոշ աշխատասիրությամբ

<sup>10</sup> Հմմտ. Կովկասում Գերմանիայի պատվիրակ Ֆրայդեր ֆոն Քրեցի 1918 թ. օգոստոսի 4-ի և օգոստոսի 5-ի նամակը Գերմանիայի ռայսականցիերին: **Լեփսիզուս**, էջ XLVIII, 420, 424:

ձեռնամուխ էր եղել իր ավերված տխուր երկրի վերականգնմանը, որը դեռ պատերազմից առաջ հեղեղված էր անօթևան գաղթականներով: Եռանդուն մի կառավարության ղեկավարությամբ, որի նախագահն էր Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ բժիշկ Խատիսյանը, փութաջան աշխատանք էր տարվում երկրում կայուն վիճակ ստեղծելու, հողը մշակելու, գաղթականներին տեղավորելու և կրկին արհեսաների տարբեր ճյուղերի զարգացումը խթանելու: Կառավարությունը 20 միլիոն դոլարի փոխառություն ստացավ, դրսից նաև օգնություն եկավ, հատկապես «Մերձարևելյան նպաստամատույցի» միջոցով, որն իր նախագահ Վիքրեյի գլխավորությամբ հազարավոր հայ երեխաներ էր փրկել:

1919 թ. մայիսի 28-ին Երևանում կառավարությունը հայտարարեց նախկին ռուսական Անդրկովկասում և օտոմանյան կայսրությունում գտնվող իր հողերի անկախությունն ու միասնությունը, ներկայացավ այդ միացյալ հանրապետության կառավարություն: 1919 թ. հուլիսին և օգոստոսին Էրզրումում և Սվազում Մուստաֆա Քեմալի կողմից հրավիրված թուրք ազգայնականների համաժողովներում հայտարարվեց. «Մեր նահանգներից և ոչ մի դյույնաչափ հող չի տրվի Հայաստանին կամ որևէ այլ պետության»: Իսկ Փարիզում շարունակ ձգձգվում էին հաշտության բանակցությունները: Բազմաթիվ հայ գործիչներ տարբեր երկրներից Փարիզ էին եկել համահայկական վեհաժողովի: Նախագահներն էին բանաստեղծ և ազգային գործիչ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան, որը պատերազմի տարիներին Անտանտի պետություններում անձնագրի նվիրումով հայերի դատն էր պաշտպանում: 1910 թ. փետրվարի 12-ին խաղաղության խորհրդաժողովին հղած ուղերձում երկու նախագահներն էլ նշում էին, որ դաշնակից պետությունները պարտավոր են սատար կանգնել հայ ժողովրդի անկախ պետականությանը: 1920 թ. հունվարի 19-ին խաղաղության խորհրդաժողովի բարձրագույն խորհուրդը որոշում է ընդունում de facto ճանաչել հայկական պետության կառավարությունը և առաջարկում է Ազգերի ընկերակցությանը վերցնել այդ անկախ պետության պաշտպանության մանդատը: 1920 թ. ապրիլի 11-ին Ազգերի ընկերակցության խորհուրդը պատասխանում է, որ Ազգերի ընկերակցությունը այդպիսի մի պարտականություն վերցնելու համար իր տրամադրության տակ չունի անհրաժեշտ միջոցներ (բանակ և ֆինանս), բացի այդ՝ նաև իրավասու չէ: Հայ ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար պետք էր կոնկրետ որևէ պետություն, որն Ազգերի ընկերակցության հսկողությամբ և բարոյական օժանդակությամբ համաձայնեք վերցնել այդ մանդատը: 1920 թ. ապրիլի 25-ին բարձրագույն խորհուրդը նախագահ Վիլսոնի միջոցով առաջարկեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին ստանձնել հանձնարարագիրը: 1920 թ. մայիսի 31-ին Միացյալ Նահանգների սենատը մերժեց մանդատը, իսկ նախագահ Վիլսոնն, այնուամենայնիվ, ստանձնեց Հայաստանի սահմանների որոշման

միջնորդ դատավորի պաշտոնը: Կոչերը մյուս պետություններին՝ ստանձնելու Հայաստանի մանդատը, նույն անհաջողությունն ունեցան:

1920 թ. օգոստոսի 10-ին Թուրքիայի և դաշնակից պետությունների, ինչպես նաև Հայաստանի նախագահի կողմից ստորագրված Սևրի պայմանագրով Հայաստանը ճանաչվում է (de jure) ազատ, անկախ, ինքնիշխան պետություն: Հանձնարարվում է «Միացյալ Նահանգների նախագահին հաստատելու Թուրքիայի և Հայաստանի սահմանները Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներով»: Մյուս պետությունները պետք է հավանություն տալին պայմանագրի «որոշումներին, ինչպես նաև այն թուր կարգադրություններին, որոնք կարվեին հայերին դեպի ծով ելք տալու, նշված սահմաններում օտոմանյան կողմի լրիվ զինաթափման համար» և այլն: Սա հնչում է ինչպես ծաղր, քանի որ հայերին տրվելիք վերոհիշյալ շրջանները երբևէ հնարավոր չէր զինաթափել: Երեք ամիս անց նախագահ Վիլսոնը գծեց Հայաստանի սահմանները (այն հրապարակվեց 1921 թ. նոյեմբերի 22-ին), և հայերը քարտեզի վրա ստացան մոտ 87000 քառ կմ տարածությամբ մի երկիր: Դա, իհարկե, շատ ավելի քիչ էր, քան կենդակվում էր, սակայն կրավարարներ հայ ժողովրդին: Բայց և այնպես քարտեզում նշված Թուրքահայաստանից հայերին անցնող շրջանները շարունակում էին մնալ թուրքերի ձեռքին, իսկ դաշնակիցները դրանք վերցնելու որևէ ճանապարհ չէին նշում: Նրանք դույզն-ինչ մտառողոված չէին կատարելու իրենց իսկ ընդունած որոշումները հայերին տալ այն երկիրը, որ ճանաչել էին թղթի վրա: Այս ամենը տխուր գրոտեսկի տպավորություն էր թողնում: Թվում էր, թե այդ պետությունների քաղաքական գործիչները նախապես գիտեին, որ բնական հանածոներով առանձնապես ոչ հարուստ փոքրիկ մի ժողովրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունները բովանդակազրկվելու էին խոսքից գործի անցնելիս: Այս գարձանալի անտարբերությունից քաջալերված Մուստաֆա Քեմալը հրաժարվեց Հանաչեկ թուրքական օրինական կառավարության կողմից ստորագրված Սևրի պայմանագրից և հարձակվեց Հայաստանի վրա: Դաշնակից պետությունները մի կողմ էին քաշվել, նրանք բավարարված էին, ոչ իրենց համար արյուն թափած հայերի ծառայությունների դիմաց հատուցել են արժեքավորել թողով:

1920 թ. սկզբին Դենիլիսի «կամավորական բանակը» սպարտություն կրեց, և Անդրկովկասում փոխվեց լրավիճակը: 1920 թ. ապրիլի 27 ին իսրայիլյանները վերցրին Բաքուն: 1920 թ. հուլիսի 6 ին անգլիացիները, ռուսացան Բաթումից վրացիներին և հայերին թողնելով մենակ անկախության համար իրենց պայքարում: Նույն թվականի սեպտեմբերին թուրքերը արևմուտքից կրկին հարձակվեցին: Հայերը չունեին բավարարող ռազմամթերք, սպորտ և հասցույթ, ոչ ոք չէր օգնում նրանց: Վրացիները գրավեցին ին իրենց իրենցով իսկ սեպտեմբերությունները անգործությամբ: Կարսը գրավվեց օտոմանց կրակոցի: Նույն հետևեցրն անավոր նոր գրոտածներ: Այլևսանոյրապես նույնպես եզ մեզեց

երկիրը մատնվեց թալանի, բնակիչները՝ ջարդի: Երևանին սպասում էր նույն ճակատագիրը, սակայն այնտեղ հաստատվեց խորհրդային իշխանություն, և դաշինք կնքվեց Մոսկվայի կառավարության հետ, իսկ Խատիսյանի գլխավորած նախկին կառավարությունը հեռացավ լեռները:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց հաշտության պայմանագիր Երևանի և Անկարայի կառավարությունների միջև, Հայաստանի 60000 քառ կմ տարածքից, որը արդեն լեփ-լեցուն էր գաղթականներով, թողնվեց կեսից էլ պակաս: Սա տեղի ունեցավ ընդամենը մի քանի օր անց այն բանից, երբ Միացյալ Նահանգների նախագահը մեծ հանդիսավորությամբ հաստատեց հայկական անկախ պետության սահմանները: Այս ընթացքում Ազգերի ընկերակցությունը Ժնևում գումարած նստաշրջանում քննարկում էր Հայաստանի Հանրապետությանը Ազգերի ընկերակցություն ընդունելու հնարավորությունները: Նստաշրջանում նաև հարց է բարձրացվում սատար կանգնելու ծանր վիճակում գտնվող հայ ժողովրդին Մուստաֆա Քեմալի և թուրքերի դեմ անհավասար պայքարում: Արդյունքը եղավ այն, որ Ազգերի ընկերակցության երկու անդամ պետություններ՝ Իսպանիան և Բրազիլիան, և նրանց հետ նաև Վիլսոնը, պատրաստակամություն հայտնեցին զինված միջամտություն ցույց տալու ի նպաստ հայերի: Ճակատագրի ծաղրն էր, որ Ժնևում Ազգերի ընկերակցության նիստերի որոշումների հրապարակման օրը Ալեքսանդրապոլում հաշտության պայմանագիր ստորագրվեց:

Երևանում կոմունիստ Կասյանի գլխավորած բոլշևիկյան նոր կառավարության վիճակն աննպաստ էր: Մի քանի ամիս անց Կասյանի կառավարությունը հեռացվեց և հետ կանչվեց հին կառավարությունը: Սակայն 1921 թ. ապրիլին Կարմիր բանակը մտավ Երևան և իշխանության գլուխ դրեց հայագի Մյասնիկյանին, որը վարում էր զուսպ քաղաքականություն: Հայտարարվեց ընդհանուր ներում, բնակչության կրթված խավին կոչ արվեց մասնակցելու երկրի այնքան կարևոր ու հրատապ վերականգնման աշխատանքներին: Անընդհատ շարունակվող պատերազմը աղքատացրել էր երկիրը և լցրել գաղթականներով: Աշնանը սպասվում էր սով, հարյուրավոր դիակներ էին թափված քաղաքների, ինչպես նաև Երևանի և Ալեքսանդրապոլի փողոցներում: Կառավարությունը բնակչության հետ համագործակցված՝ եռանդուն աշխատանքի լծվեց և մի քանի տարի անց շատ համեստ միջոցներով անհավատալի արդյունքների հասավ: Քոսը, աղքատությունը և սովը հաղթահարված էին: Բանիմաց մի կառավարության նախաձեռնությամբ զարգանում ու վեր էին խոյանում հասարակական կյանքի բոլոր ճյուղերը:

1921 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կարսի խորհրդածողովում Անկարայի և Անդրկովկասի բոլշևիկյան հանրապետությունների կառավարությունները որոշում ընդունեցին Կարսը և Արդահանը թողնել Թուրքիային: Մոսկվայի խորհրդային կառավարության հրամանագրով ստեղծվում է Ան-

դրկովկասի երեք հանրապետությունների դաշնակցային միություն, որն էլ իր հերթին միանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների ռուսական մեծ Միությանը՝ Մոսկվա մայրաքաղաքով:

Խնդրի նման լուծումը, ինչպես ասել են վերևում (էջ 91 և հաջորդները) հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումից փրկվելու միակ հնարավոր ճանապարհն էր: Սակայն զարմանալի է, որ նրանք, ովքեր ժամանակին անտեսել կամ մոռացել էին իրենց պարտավորությունները կամ խոստումները և ոչինչ չէին արել իրենց օգնության կարիքն այնքան զգացող հայերի համար, այժմ հանդիմանում էին նրանց, ովքեր երկիրն ու ժողովրդին փրկելու նպատակով ընդունեցին խորհրդային սահմանադրությունը: Եվ այդ հանդիմանությունը ներողություն էր հետագա չանելիքների համար: Հետաքրքրությունն այդ ժողովրդի հանդեպ մարեց ճիշտ այնպես, ինչպես իրենց սեփական հավաստիացումների հիշողությունը:

Ամատոլիայի հայաբնակ շրջաններն էին վերադառնում արսոր ու կոտորած ապրած բազմաթիվ հայեր: Դաշնակից պետությունների հաջողություններից քաջալերված՝ 200000 բռնագաղթածներ վերադարձան Կիլիկիա՝ իրենց նախկին բնակավայրերը, ուր նրանց պաշտպանության տակ առան ֆրանսիական զորքերը: Սակայն վերջիններս 1920 թ. փետրվարին ենթարկվեցին Քեմալ փաշայի հարձակմանը, և Հաճնում և Մարաշում սպանվեց 30000 հայ: Երբ 1921 թ. հոկտեմբերին ֆրանսիացիները համաձայնագրով պարտավորվեցին ազատել Կիլիկիան, չնայած մինչ այդ դաշնակից պետությունները տեղի հայերին հավաստել էին իրենց պաշտպանությունը, ուստի նրանց մնալն այլևս անհնար էր, և նորից տեղի ունեցավ հայերի զանգվածային արտագաղթ դեպի Սիրիա և այլ երկրներ:

Ապա հաջորդեց հայկական եղեռնի վերջին զարհուրելի արարը, երբ 1922 թ. աշնանը Մուստաֆա Քեմալը հույներին քշեց Փոքր Ասիայից: Կրկին հարյուր հազարավոր հայեր հալածական, նորանոր տանջանքներով քշվեցին երկրից: Թալանված ու կողոպտված՝ նրանք փախան Հունաստան, Բուլղարիա, Կոստանդնուպոլիս, Սիրիա և մեծ քանակությամբ դարձյալ Ռուսահայաստան: Նրանց թողած ամբողջ անշարժ ու շարժական գույքը թուրքերն ու նրանց իշխանությունները սեփականացրին:

\* \* \*

Դժվար է ճշգրիտ հաշվել 1915 - 16 թթ. կրիտթուրքերի կողմից տևախանված հայերի զոհերի քանակը: Սակայն Լեփսիուսը հիմք ունենալով վիճակագրությունը, ըստ որի պատերազմից առաջ Թուրքիայում ապրում էր 1845450



հայ, 1919 թ. գալիս է այն եզրակացության, որ այդ երկու տարիների ընթացքում սպանվել կամ մահացել է մոտ մեկ միլիոն, քանի որ կենդանի մնացածների թիվը հազիվ 845000 լիներ: Նրանցից 200000-ը դեռևս Թուրքիայում իրենց բնակավայրերում էին, մոտ 200000-ը՝ մեծ մասամբ կանայք, աղջիկներ և երեխաներ, բռնի դավանափոխ էին եղել և վաճառվել, 250 հազարը փախել էին Անդրկովկաս և Եգիպտոս, իսկ 200000-ը, անհույս ու սովյալ մուրացիկներ, դեռևս Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում էին: Այդ տարիներին թուրքերին հաջողվեց բնաջնջել հայ ժողովրդի մեկ երրորդին:

Թուրքական իշխանությունները ոչ միայն տեղահանեցին և կոտորեցին հուսահատ մարդկանց հոծ բազմություններ, այլև սեփականացրին նրանց ամբողջ ունեցվածքը, որի արժեքը հասնում է միլիարդների: Թուրքերի անմարդկային դաժանությունը չէր բխում նրանց առաջնորդների կամ ժողովրդի կրոնական մոլեռանդությունից: Երիտթուրքերը կրոնամոլ չէին, և ի պաշտպանություն թուրքախոս բնակչության պետք է ասել, որ նա այնքան էլ արագ չնախապատրաստվեց թալանին ու կոտորածին, ինչքան պահանջում էին իշխանությունները: Մի քանի վայրերում նույնիսկ դիմադրեցին հայերին «երկրից արտաքսելու» հրամանին, դեպքեր եղան, երբ թուրք պաշտոնյաները՝ անտեսելով հրամանը, փրկում էին հայերին: Կառավարությունը սակայն շատ արագ հարթում էր նման դժվարությունը՝ բարեեռու պաշտոնյաներին հեռացնելով կամ սպանելով: Հայերի ցեղասպանության ամբողջ ծրագիրը ելնում էր սուկ քաղաքական ստոր հաշվարկից՝ բնաջնջել բնակչության գերակշռող այն մասը, որն ի վիճակի է վաղ թե ուշ կառավարությանը դնել դժվար կացության առաջ: Ընթացքում դրան գումարվեց նաև ընչաքաղցությունը:

Գաժանության այդ բոլոր դրսևորումներն իրենց ծավալով և ահավորությանը գերազանցեցին այն ամենը, ինչ գիտեինք պատմությունից: Հազիվ թե հնարավոր էր այլ բան սպասել մի ժողովրդից, որի հասարակական բարոյականությունը դեռևս գտնվում է միջին դարերի աստիճանին, և նրան վերագրել նոր ժամանակների վարվեցողություն և գթասրտություն՝ սխալ կլիներ: Վերը (էջ 251) մեր բերած նամակից հայտնի է դառնում, որ հայերի, այսինքն թուրքահայատակների ցեղասպանության համար «օսմանյան պատմության խայտառակության» պատասխանատվությունը երիտթուրքերի ղեկավար կոմիտեն վերցնում էր իր վրա: Էնվեր փաշան Գերմանիայի ղեկավար անարկություններին պատասխանել էր, որ ինքը կրում է այն ամենի պատասխանատվությունը, ինչ կատարվում է Անատոլիայում: Նրա և երիտթուրքերի մյուս առաջնորդների վրա է հայերի ցեղասպանության մեղքը, և նրանք էին, որ թուրքերի արյունոտ պատմությանը մի նոր գլուխ ավելացրին, որն իր սահմանեցնող բովանդակությամբ մյուսները ստվերի տակ առավ: Արդուլ Համիդի կոտորածները մանկական խաղ էին այս «ժամանակակից» թուրքերի արարքների կողքին:

1916 թ. հունիսի 30-ին Գերմանիայի դեսպան կոմս Մեթերնիխը գրում է

ռայխսկանցներին. «Կոմիտեն պահանջում է ոչնչացնել հայերի վերջին մնացորդները... Նրանց մոտ այլևս թալանելու բան չի մնացել: Շների ոնմակն անհամբեր սպասում է, թե երբ Հունաստանը՝ լինելով Անտանտի անդամ, ստիպված պատերազմ կհայտարարի Թուրքիային կամ նրա դաշնակիցներին, որպեսզի հարձակվի հույների և նրանց ունեցվածքի վրա: Թուրքացնել նշանակում է այն, ինչ թուրքական չէ, արտաքսել կամ սպանել, ոչնչացնել կամ բռնի սեփականացնել ուրիշների ունեցվածքը: Այստեղ և ֆրանսիական ապատագրական ֆրագների ժխորի մեջ է առայժմ Թուրքիայի նշանավոր վերածնունդը»: Ահա դաշնակցի և բարեկամի կարծիքը: Պատկերը կատարյալ դարձնելու համար հիշենք, որ այդ նույն հայերը, որոնց երիտթուրքերը դաժանորեն մորթեցին, ժամանակին նրանց բարեկամներն ու դաշնակից եղբայրներն էին, որ իրար հետ ձեռք ձեռքի տված պայքարեցին մինչև իշխանության հասնելը: Երիտթուրքերը սպանեցին նաև վաստակ ունեցող բազմաթիվ հայ գործիչների, որոնք 1909 թվականին, երբ Արդուլ Համիդը կրկին իշխանության գլուխ անցնելով սկսեց երիտթուրքերին սրախողխող անել, վտանգելով իրենց կյանքը՝ փրկեցին նրանց առաջնորդներին: Բարեբախտաբար պատմության մեջ հազվադեպ է հանդիպում նման ուխտադրություն և ստորություն:

Այսուհանդերձ երիտթուրքերը հասան իրենց նպատակին, մաքրեցին Անատոլիան հայ բնակչությունից և արդեն կարող էին Թալեսթ փաշայի պես ասել, որ հայկական հարց այլևս գոյություն չունի: Եվրոպացի կամ ամերիկացի պետական գործիչներին այլևս չէր հետաքրքրում այնտեղ տեղի ունեցածը, նրանց համար մշտնջենական Հայկական հարցը վերջապես հիմնովին խեղդվել էր արյան մեջ: Տեսանք, թե ինչպես Արևմտյան Եվրոպայի պետություններն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները փոխանակ հատուցելու հայ ժողովրդի հանդեպ իրենց պարտավորությունները, որ այնքան հանդիսավոր ստանձնել էին այն ժամանակ, երբ պատերազմում հայերի օգնության կարիքն ունեին, հանդես եկան սուկ դատարկաբանությամբ: Իսկ Ազգերի ընկերակցությունը: 1920 թ. Ազգերի ընկերակցության առաջին գումարումը միաձայն որոշում ընդունեց, որ պետությունները պետք է անեն ամեն ինչ՝ «հնարավորին չափ արագ վերջ դնելու հայկական ահավոր ողբերգությանը» և տալով այդ ժողովրդի հետագա անվտանգության երաշխիք: 1921 թ. սեպտեմբերին Ազգերի ընկերակցության երկրորդ գումարմանը լորդ Իքիզը միաձայն բանաձև ընդունել տվեց, որտեղ բարձրացված էր այն հարցը, որ «վերագույն խորհուրդը պետք է պարտադրի պետություններին երաշխավորելու Հայաստանի ապագան՝ ամենից առաջ հատկացնելով հայերին ազգային հայրենիք (,a National Home', 'Foyer National'), օտոմանյան տիրապետությունից լրիվ անկախ»: 1922 թ. սեպտեմբերին Ազգերի ընկերակցության երրորդ գումարումը կրկին միաձայն որոշում ընդունեց, որ «Թուրքիայի հետ հաշտության բանակցու-

թյունների ժամանակ չպետք է աչքաթող անել հայերի համար ազգային հայրենիք ստեղծելու անհրաժեշտությունը: Ժողովը դիմեց խորհրդին՝ ձեռնարկել այդ հարցի լուծման բոլոր անհրաժեշտ միջոցառումները»:

Լոզանի հաշտության բանակցությունները ձգձգվեցին 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հունիսը: Պետությունների ներկայացուցիչները խուսափում էին Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող որոշումներից: Նրանց անումից լորդ Բերգոնը առաջ քաշեց հայերի ազգային հայրենիքի կամ երկրի պահանջը, իսկ Հայկական հարցը որակեց որպես «աշխարհի մեծագույն խայտառակությունը»: Թուրքերը կտրականապես բացարկեցին առաջարկը: Քայլ առ քայլ առաջարկն այնքան սեղմվեց, որ ձևակերպվեց՝ հայերին հայրենիք հատկացնել «Թուրքիայում», այն էլ ոչ ինքնավար կառավարմամբ: Իրականում կազմավորվելու էր մի մարզ՝ «թուրքական օրենքներով և թուրքական կառավարմամբ. այստեղ հավաքված հայերը կարող էին պահպանել իրենց ցեղը, լեզուն և մշակույթը»: Թուրքիայի միջնորդները մերժում էին անգամ այս պահանջը, իսկ մյուս պետությունների ներկայացուցիչները կարծում էին, թե այս առաջարկով մեծ բան են անում հայ ժողովրդին, որն իր արյունը չէր խնայել նրանց համար: Իսկ երբ 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, այնտեղ խոսք անգամ չկար հայերի հայրենիքի որևէ ձևի մասին: Պայմանագիրը կնքվեց այնպես, որ «կարծես հայերը ընդհանրապես գոյություն չեն ունեցել», այսինքն տեղի էր ունեցել հայերի իրավունքների լրիվ ոտնահարում:

Մրանով ավարտվեցին Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի փորձերը՝ կատարելու հայ ժողովրդին բազմիցս տված ազատության և անկախության մասին խոստումները, որոնք շոյալվել էին՝ հայերին Անտանտի կողմից պատերազմին ներգրավվելու նպատակով:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Ազգերի ընկերակցության կոմիտեն՝ քրեմլյան դնելով Հայկական հարցը, գուցե՞ ինչ-որ բան էր ուզում անել անտուն հայ գաղթականների համար: Այն միայն լռեցրեց խղճի ձայնը, եթե իհարկե կար մեկը, որ խիղճ ունենար: Ինչի՞ համար էր այդ ամենը, քանի որ բարեխիղճ հետազոտությունների հիման վրա տրված առաջարկությունները ջերմ ընդունելություն գտնելով փորձագետների շրջանում՝ սառնասրտորեն մերժվում էին պետությունների կառավարությունների կողմից: Նրանք նույնիսկ զլացան իրենց համեստ գոհաբերությամբ թեթևացնել գաղթականների կարիքները, մարդիկ, որոնց պարտք էին իրենք: Պատասխանը այս էր. ներկա պայմաններում, երբ ինքը էլ արդեն բավականին կարիքի մեջ էս, դժվար է ուրիշին գոհություն անել: Լավ կլիներ այդպես մտածել նաև այն ժամանակ, երբ քանկ երդումներով ու պատվո հավաստիացումներով կոչ էիք անում ծայր աստիճան կարիքի մեջ գտնվող այդ դժբախտներին հանուն Անտանտի գոհաբերել ոչ

միայն դրան և ունեցվածք, այլև կյանք:

Մեծ Բրիտանիայի պահպանողական կուսակցության առաջնորդ Սթենլի Բոլդուինը՝ ներկայիս պրեմյեր մինիստր, և ազատական կուսակցության առաջնորդ Ասքվիթը 1924 թ. սեպտեմբերին մի սրտառուչ ուղերձով դիմեցին այն ժամանակվա պրեմյեր մինիստրին և աշխատանքային կուսակցության առաջնորդ Ռամզեյ Մաքդոնալդին: Նրանք պնդում էին, որ Մեծ Բրիտանիան պետք է մի զգալի գումար հավաքի Հունաստանում, Բալկանյան թերակղզում և այլ վայրերում գտնվող հայ գաղթականների համար: Որպես հիմնավորում առաջադրեցին հետևյալ կետերը.

1. «Քանի որ հայերը, քաջալերված ազատության խոստումներով, պատերազմի ժամանակ օգնեցին դաշնակիցներին, և քանի որ այդ գործի համար նրանք այդքան տառապանք կրեցին»:

Հիշեցնենք, որ հայերն արդեն 1914 թ. աշնանը իրենց ազգային ժողովում մերժեցին թուրքերի գայթակղիչ առաջարկը՝ հրաժարվելով անցնել Թուրքիայի և նրա դաշնակիցների կողմը՝ չնայած հանձն առան պատերազմի դեպքում կատարել իրենց պարտքը: Մասամբ այս խիզախ մերժման պատճառով նրանք 1915 թ. սրի քաշվեցին թուրքական կառավարության կողմից: Հայերի կամավորական ջոկատները՝ քաջարի գորավար Անդրանիկի գլխավորությամբ, վճռական նշանակություն ունեցան կովկասյան ռազմաճակատի դժվարագույն մարտերում: 1917 թ. վերջին, երբ կազմալուծվեց ռուսական բանակը, հայերն իրենց վրա վերցրին կովկասյան ճակատը, հինգ ամիս շարունակ կասեցրին թուրքերի առաջխաղացումը, որով կարևոր ծառայություն մատուցեցին բրիտանական բանակին Միջագետքում: Լորդ Բրայսի «Treatment of Armenians in the Ottoman Empire» կապույտ գիրքը 1916—17 թթ. լայնորեն օգտագործվում էր դաշնակցային քարոզչության համար և զգալի ազդեցություն է թողել Ամերիկայի հասարակական կարծիքի ձևավորման և նախագահ Վիլսոնի՝ պատերազմին մասնակցելու վերջնական որոշման վրա:

2. «Քանի որ դաշնակից և շահագրգիռ պետությունների գործիչները պատերազմի ընթացքում և զինադադարից հետո շարունակ պարտավորվում էին երաշխավորել հայ ազգի ազատությունն ու անկախությունը»:

Նման պարտավորությունները տրվել են 1916 թ. նոյեմբերի 8-ին պրեմյեր մինիստր Ասքվիթի, 1918 թ. հունվարի 8-ին պրեմյեր մինիստր Լլոյդ Ջորջի, 1918 թ. հունվարի 8-ին Կլեմանտյի, 1920 թ. մարտի 11-ին արտաքին գործոց մինիստր լորդ Բերգոնի կողմից:

3. «Քանի որ Մեծ Բրիտանիան պատասխանատու է Չմյուռնիայի ավերումից հետո օտոմանյան հայերի հիմնովին տեղահանման և արտաքսման համար»:

Հույների պատերազմը Թուրքիայի հետ, որը հանգեցրեց Փոքր Ասիայի բրիտանոյա փոքրամասնության լրիվ տեղահանմանը և արտաքսմանը,



սկսվել և շարունակվել է բրիտանական կառավարության անմիջական քաջալերմամբ:

4. «Քանի որ 1916 թ. թուրքական կառավարության կողմից Բեռլինում ավանդ դրված հինգ միլիոն ֆունտ ստեռլինգը (թուրքական ոսկով), որ զինադադարից հետո անցավ դաշնակիցներին, մեծ մասամբ (գուցե և ամբողջությամբ) հայերի փողն էր»:

5. «Քանի որ փախստականների ներկա վիճակը անկայուն ու վիատեցուցիչ է և արևմտյան տերությունների կշտամբանքը»:

Այնուհետև հարց է տրվում. «Ի՞նչ կարելի է անել»:

«Խոր ափսոսանքով ընդունում ենք, որ հայերին տված մեր խոստումները առայժմ անհնար է կատարել... Սակայն կա մեկ այլ ճանապարհ մեր զգացմունքներն ու պատասխանատվությունը ի ցույց դնելու և մեղմելու թուրքահայերի սփռված բեկորների հուսահատ վիճակը: Նրանց բնակեցման ամենահարմար երկիրը, անկասկած, Ռուսահայաստանն է: Տեղի կառավարությունը խոստանում է արտոնյալ պայմաններ...»:

Այա քննության դրվեց վաղուց առաջարկված մի ծրագիր: Վերջինս այնքան հիմնավոր չէր, որքան ճանապարհորդությունից հետո մեր ծրագիրը, և իրականացումն էլ կապված էր մեծ դժվարությունների հետ: Վերջում ասված էր. «Կարծում ենք՝ Մեծ Բրիտանիան պարտավոր է պաշտպանել այս ծրագիրը, և հույս ունենք, որ բրիտանական կառավարությունը ի նկատի ունենալով հայերի բարոյական իրավունքները՝ առանց հապաղելու մի զգալի գումար կներդնի ի հատուցումն չկատարած պարտավորությունների...»

(Մտորագրված է) Հ. Հ. Ասքվիթ, Սթենլի Բոլդուին»:

Կասկածից վեր էր, որ Մեծ Բրիտանիայի երկու ղեկավար պետական գործիչների այս պարզ և հաստատակամ առաջարկությունները կանտեսվեն: Անհնար էր մտածել, որ Ռամզեյ Մաքրոնալդը և աշխատանքային կուսակցությունը գոհունակությամբ չէին ընդունի այդ առաջարկությունները: Սակայն Մաքրոնալդը տապալվեց, իշխանության գլուխ անցավ պահպանողական կուսակցությունը՝ Բոլդուինի ղեկավարությամբ: Թվում էր՝ ամեն ինչ կարգին է: Այնինչ Բոլդուինի կառավարությունը մերժեց որևէ օգնություն հայ ժողովրդի կամ փախստականների համար, որոնք այդքան «բարոյական իրավունք» ունեին:

Չարմանալի էր, թե իսկապես ի՞նչ նպատակ էր դա հետապնդում: Իրապե՞ս բոլորը դատարկ բառեր էին: Դատարկ բառեր առանց լուրջ հետևությունների՞:

Իսկ Ազգերի ընկերակցությունը: Նա նույնպե՞ս չունեի պատասխանատվության զգացում: Մի կողմից՝ Ազգերի ընկերակցությունը ստիպում է փախըստականների գծով իր գլխավոր հանձնակատարին, չնայած նրա անդադար հրաժարականներին, վերցնել հայ գաղթականների գործը, մյուս կողմից՝



Հայաստանի Հանրապետություն





Հայաստանի Հանրապետություն



Հայաստանի Հանրապետության քաղաքացիական տարածքի քարտեզ



խանգարում էր գործի դնել հայերի համար օգնություն հավաքելու ազդեցիկ միջոցներ: Պետք էր ենթադրել, որ Ազգերի ընկերակցությունը ի գորու չէր ձեռնարկած որևէ գործ մինչև վերջ հասցնելու, հատկապես եթե դա վերաբերում էր պետությունների ստանձնած պարտավորություններին: Մի՞թե Ազգերի ընկերակցությունը կարծում է, թե կատարել է իր պարտքը և հարցը լուծել, առանց իր հեղինակությունը հատկապես Արևելքում վտանգելու:

Եվրոպական ժողովուրդներն ու պետական գործիչները հոգնել են մշտնջենական Հայկական հարցից: Դա ինքնին հասկանալի է: Չէ որ այդ հարցը նրանք ձախողեցին: Հայաստան անունը նրանց նիրհած խղճերում արթնացնում է սոսկ ուրացած կամ չկատարած խոստումների տհաճ հիշողություններ: Նրանք մատը մատի չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տրվել էին թեև փոքր, արնաքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որ չուներ նավթի ու ոսկու հանքավայրեր:

Կարեկցում են հայ ժողովրդին, որ խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից: Սակայն հայ ժողովուրդը բնավ չի կորցնում իր հույսը: Նա համառ, անխոնջ աշխատում և սպասում է, շարունակ սպասում:

Նա սպասում է մինչև օրս:

# ԱՆՎԱՆԱՑԱԿ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

Արդուկ Ազիզ 238  
Արիդոս 26  
Աբրահամ եպիսկոպոս 230  
Աբրահամ, նահապետ, 40  
Ազաթանգեղոս 180  
Աղադնիրար 14  
Աղալբերտ արքեպ. 230  
Աղան 138  
Աղրներսեհ Առաջին 65  
Աթայան Ա. 95  
Աթենաս, աստվածուհի, 18  
Աթենե 205  
Ալբերտի 232  
Ալեմյան Մարգիս 10  
Ալեն Վ. Ռ. 71  
Ալեքսանդր Առաջին 83  
Ալեքսանդր Երկրորդ 239  
Ալեքսանդր թագավոր 70, 88  
Ալեքսանդր Մակեդոնացի 19, 57, 74, 206  
Ալեքսիոս Կոմնենոս 44, 80  
Ալփ Արսլան 35, 79, 122, 222  
Ահարոնյան Ավետիս 264  
Ահուրա-Մազդա 75  
Աղա-Մուհամեդ խան 88  
Ամերիկա 93  
Այնիմա (Անահիտ) 75  
Այվազյան, ջութակահար, 186  
Անակ 208  
Անահիտ աստվածուհի 72, 75, 204, 205, 209, 210  
Անահիտ- Անահիտա 205  
Անահիտա - Անահիտ 204, 205  
Անատ աստվածուհի 205  
Անթեմիոս Տրալացի 31, 32  
Անտիոք Մեծ 206  
Անտոն կաթողիկոս 86, 87  
Աշոտ Բագրատունի 219  
Աշոտ Երկրորդ 220  
Աշոտ Չորրորդ 220  
Աշոտ Պատրիկ 176  
Աստղիկ աստվածուհի 205, 210  
Աստծո Միածին որդի, տես Քրիստոս  
Աստվածամայր 44, 55  
Աստվածատուր կաթողիկոս 175  
Ասուրնասիրպալ թագավոր 190  
Ասքվիթ Գ. Գ. 271, 272  
Արա Գեղեցիկ 14

Արամ թագավոր 191  
Արմազ 75  
Արամազդ 205, 209  
Արգիշտի Առաջին 115, 192, 195  
Արդաբիլ էմիր 222  
Արդվի Գուրա աստվածուհի 205  
Արզունամյան Մ. 10  
Արիստակես 175  
Արծրունիներ, նախարարական տուն, 202, 220  
Արշակ Երկրորդ 213, 214, 215  
Արշակունիներ, թագավորական տուն, 202, 206, 207, 215, 231  
Արջիլ, հերցոգ, 238  
Արտաշես (Արտաքսիա) փոխարքա 206  
Արտաշեսյան հարստություն 206, 207  
Արտավազդ 227  
Արտավազդ իշխան 230  
Արտեմիս աստվածուհի 75, 205  
Արքեմեդ 32  
Ափրոդիտե 16, 18, 27, 75  
Աքիլլես 25

Բագրատ Երրորդ 79, 82  
Բագրատ Չորրորդ 79  
Բագրատունի թագավորներ 86, 94, 202, 221  
Բագրատունի նախարարներ 78  
Բագրատունիներ 83, 152, 219, 220, 221  
Բահրամ 95  
Բայրն Ֆ. 73  
Բայրոն Ջ. Գ. 16, 27  
Բարշամին 205  
Բարսեղ Առաջին 219  
Բեդեյան Գ. 127, 168, 189  
Բեդեքեր 48  
Բելլե Վ. 70, 191  
Բենեդիկչեն Ա. Մ. 251, 259  
Բերոսոս 190  
Բինդ 71  
Բիչ 93, 143, 144, 146  
Բողենշտեդ Ֆ. 63  
Բոլդուին Սթենլի 271, 272  
Բորեսոս 38  
Բրամենտե 32, 232  
Բրայս 252, 271  
Բրյուն Գ. 199

Բրոսսե Մ. Ֆ. 71  
Բրունելլեսկի 232  
Բրուքներ Էդ. 109

Գա, աստված, 75  
Գազիկ Առաջին 220  
Գազիկ Երկրորդ 221  
Գազիկ թագավոր 122, 233  
Գասի, աստված, 75  
Գեզեչկորի 90  
Գեորգ Երրորդ 70  
Գեորգ Գինգերորդ 83  
Գեորգ Չորրորդ 70, 174, 222  
Գեորգ Տասներեքերորդ 88  
Գրիգ 186  
Գլադստոն 236, 238, 239, 241, 244, 247  
Գրիգոր, Գրիգոր Լուսավորչի թոռը, 175  
Գրիգոր Լուսավորչի 123, 172-176, 178, 208-212, 216, 226, 230  
Գուլարդի Ստանիսլաս 191  
Գուրամ Առաջին 68  
Գևորգ կաթողիկոս 292

Դա (Դա Մատեր-Դեմետր) 204  
Դադյան Խաչիկ 119  
Դանանա (Եանե) 75  
Դավիթ Գուրամիչվիլի 86  
Դավիթ Երրորդ Եհնարար 79, 222  
Դավիթ թագավոր 57  
Դավիթ Սուլան 80  
Դարեհ Վշտասայան 72, 74, 193  
Դարիա 88  
Դավիդոս Չ. Է. 11, 43, 64, 65, 131, 137, 139, 164  
Դենիկին 91, 265  
Դիոկղետիանոս կայսր 211  
Դոն ժուան 15  
Դոն Քիշոտ 15

Եսփունճյան Ավ. 10  
Եկատերինա թագուհի 88  
Եհովա 75  
Եղիշե 188  
Եվա 37  
Եվպատոր Պոնտացի 206  
Եվտիքյաններ (Եստորականներ) 217  
Երզնկյան Ա. 93, 96, 97, 137, 181

Չարեհ թագավոր 192, 206  
Չելա 205  
Չոնտագ Վոլֆգանգ 8

Չվերներ 17  
Չուլեյկա 27  
Չուպ Ե. 190  
Չևա 75

Էյեթոս 54  
Էնվեր 253, 254, 255, 258, 260, 263, 268  
Էրիքսեն Քր. 31

Թադևոս սուրբ 176  
Թալեսթ 255, 258, 259, 269  
Թամար թագուհի 44, 55, 58, 63, 79-83, 152, 222  
Թալթալասար Առաջին 190  
Թեյնուրագ Առաջին 86  
Թեյնուրագ Երկրորդ 87  
Թեոդոսիոս կայսր 215  
Թեոդորոս Ոչտունի 124  
Թետիս 25  
Թեքլե 70  
Թինաթին 81  
Թիֆուս 38  
Թորամանյան Թորոս 119, 178  
Թորոս (Թեոդորոս) Ռուլին 172  
Թուկուլթինիսուրտան Առաջին 190

ժողովանա Ե. 91

Իշպուրին թագավոր 191  
Իշտար (Աստարտե) 205  
Իսահակ 40  
Իսիդորոս Սիլետացի 31  
Իսլավ եպիսկոպոս 230  
Իքիլ 269

Լալայան Երվանդ 189, 198  
Լայսթ Արթուր 71, 82  
Լանգ Դեյվիդ Սարչալ 9  
Լեանդո 26  
Լեման-Յաուֆ Կ. Ֆ. 15, 57, 58, 70, 73, 188, 190-193, 195, 200  
Լենկթեմուր (Թամբուլան) 56, 83, 224  
Լեո 149  
Լեոնարդո 32, 232  
Լեփորուս Յոհանես 188, 252, 253, 255, 257, 259, 260, 262, 268  
Լինչ Գ. Ֆ. Բ. 44, 108, 173, 174, 175, 188, 233  
Լյուդ Ջորջ 271  
Լինքուլ Աբրահամ 93

Լիպարիտ Օրբուլքի (Օրբելիանի) 79  
Լոյկոթեա 72, 75  
Լորիս Մելիքով 239  
Լուկաշին Ա. 137  
Լուկուլլոս 74, 207  
Լուչան Ֆ. 199, 201  
Լևոն Հինգերորդ 227  
Լևոն Վեցերորդ 223

Խալդ աստված 191  
Խատիսյան Ա. 266  
Խոսրով Առաջին թագավոր 207, 208  
Խոսրով երկրորդ (Կողակ) 212, 213  
Խրիմյան Սկրտիչ (Հայրիկ) կաթողիկոս 243

Կասյան Ա. 266  
Կարայան Հովհաննես 82  
Կարլ ժ. 11, 47, 131, 132, 137, 151, 153  
Կերենսկի 90  
Կլեմանտ 271  
Կյուբելե 72, 204  
Կյուրենե 204  
Կյուրոս 166  
Կոմիտաս կաթողիկոս 173, 180  
Կոստանդ երրորդ կայսր 123  
Կոստանդին երկրորդ 36  
Կուրդինյան 99, 187

Հագկերտ երկրորդ 216, 217  
Համբարձումյան Սաքո 137  
Համիդ Աբդուլ 37, 238, 240, 241, 246, 248, 250, 252, 268, 269  
Հանթինգթոն Էլսուորթ 106  
Հարթման Լ. Մ. 188, 190, 192  
Հաուլենդ 20, 21  
Հեկատե 33, 75  
Հելմոթ Հ. Ֆ. 188  
Հերա 27  
Հերակլ երկրորդ (Էրեկլի) 70, 87, 88  
Հերակլ կայսր 78, 123  
Հերակլիոս կայսր 218, 227  
Հերակլես 205  
Հերոդոտ 67, 72, 193-194, 196, 205  
Հերոդենդ Հերալդ 35  
Հիպոկրատ 54  
Հոմերոս 16, 26  
Հովհան Զմշկիկ 227  
Հովհաննես առաքյալ 176  
Հովհաննես Դուկաս 227  
Հովհաննես Սկրտիչ (Կարապետ) 216, 226

Հովհաննես Սմբատ թագավոր 220  
Հովհաննիսյան Հայկ 188  
Հոֆ Լ. 250  
Հոփսսիմե միանմունի 178, 180  
Հուդա 70  
Հուլիանոս Ուրացոլ 213  
Հուսիկ կաթողիկոս 175, 213  
Հուստինիանոս կայսր 31, 36, 227

Ղազար Փարպեցի 173, 188

Սա աստվածուհի 75, 204  
Մադաթով, գեներալ, 235  
Մախսա, ճարտարապետ, 82  
Մահմուդ Շեֆքեթ 248  
Մամիկոնյան Մանվել 215  
Մամիկոնյան Մուշեղ 214, 215  
Մամիկոնյան Վահան 173, 213, 218  
Մամիկոնյան Վաչե 212  
Մամիկոնյան Վասակ 213, 214, 218  
Մամիկոնյան Վարդան 217  
Մամիկոնյաններ 202  
Մայեր Էդուարդ 200  
Մանդելշտամ Ա. Ն. 188, 257  
Մարդանյան Ֆլորա 97  
Մարթա (Մարիա) կայսրուհի 79  
Մարիամ 18  
Մարկո Պոլո 81  
Մաուրեր Կոմրադ 230  
Մաք-Քեյ 144, 148  
Մաքդոնալդ Ռամզեյ 271, 272  
Մեդեա 54  
Մեթերնիխ, կոմս, 258, 259, 269  
Մեհմեդ Հինգերորդ 248  
Մենուա 192, 195  
Մեսրոպ Մաշտոց 175, 216  
Մերուժան Արծրունի 214  
Մեֆիստոֆել 93  
Միթրա 42, 205  
Միխել Ամնա 29  
Միհր (Միթրաս) 205  
Միհրդատ Պոնտացի 74, 207  
Միրզա Շաֆի 63  
Միրհան (Միրհան) թագավոր 66, 70, 77  
Մխիթար Սեբաստացի 227  
Մխիթարյաններ 227  
Մյասնիկյան Ա. 266  
Մյուլլեր 191  
Մյուլիթա, տես Իշտար  
Մովսես 190

Մովսես Խորենացի 166  
Մորգան Յ. 188  
Մորգենթաու 20, 261  
Մորիկ կայսր 227, 228  
Մռավիա 124  
Մռավյան Ա. 99, 163  
Մուհամեդ 40, 215  
Մուհամեդ երկրորդ 32, 36, 45, 225  
Մուստաֆա Քեմալ 22, 263-267  
Մուրադ 238  
Մուրադ երկրորդ 35

Յակիմով, ինժեներ, 135, 283  
Յակոբսեն Յ. Պ. 189  
Յահվե 233  
Յասոն 54, 103  
Յարով 59  
Յենսեն 196

Նադիր շահ 128  
Նահապետ Քուչակ 226  
Նայթ 43  
Նանսեն-Չեյներ Լիվ 7  
Նանսեն Ֆրիտյոֆ 4-12, 42, 51, 109, 123  
Նապոլեոն, տես Տեր-Ղազարյան Լ.  
Նապոլեոն երրորդ 46  
Նեստոր պատրիարք 216  
Ներոն կայսր 207  
Ներսեհ թագավոր 211, 213  
Ներսես Աշտարակեցի 235  
Ներսես Առաջին (Պարթև) 173, 175, 214, 215  
Ներսես երրորդ Շինող 120, 123, 124, 173, 218  
Ներսես զորավար 227  
Ներսես կաթողիկոս 123, 124, 213  
Ներսես Կլայեցի (Շնորհալի) կաթողիկոս 226  
Ներսես Հինգերորդ 172  
Ներսես պատրիարք 243  
Նիկոլայ Առաջին 148  
Նինո 70, 77, 83  
Նոյ Նահապետ 102, 190  
Նունե (Նանա) 205  
Նուրի փաշա 263

Շահ Աբաս 86  
Շամիրամ 14, 15  
Շապուհ արքա 213, 214  
Շապուհ երկրորդ 212, 213

Շապուհ երրորդ 215  
Շարդեն Շ. 67, 85  
Շմիթ Էմիլ 194  
Շոթա Ռուսթավելի 63, 81  
Շայրոհ 254

Ռդիսևս 15  
Ռրմիզդ 75

Չինգիզ խան 222, 223  
Չիչերին 12, 95

Պապ թագավոր 214, 215  
Պասկևիչ 128  
Պավել ցար 88  
Պարիս 194  
Պարթևներ 206  
Պետրոս եպիսկոպոս 230  
Պետրոս երրորդ կաթողիկոս 175  
Պետրոս Մեծ 235  
Պողոս Նուբար փաշա 250, 264  
Պոմպեոս զորավար 74, 203, 207  
Պոսեյդոն 25  
Պրիամոս 194  
Պրիսկոս զորավար 207

Ջեմալ 251  
Ջեռուլ 138, 139  
Ջեվդեթ 253, 254

Ռա աստվածուհի 75  
Ռադև 30  
Ռազին Ստենկա 140  
Ռեշադ 248  
Ռինա աստվածուհի 204  
Ռոմանոս Լակապենոս 227  
Ռոմանոս կայսր 222  
Ռոմանոս Չորրորդ 35  
Ռուստովսկի 243  
Ռուբեն իշխան 223  
Ռուսա Առաջին 192  
Ռուսա երրորդ 193  
Ռուսուդան թագուհի 83

Սալմանասար Առաջին 190  
Սալմանասար երրորդ 191, 200  
Սահակ Պարթև 175, 211, 215, 216  
Սամսի-Աղադ, թագավոր, 14  
Սայաթ-Նովա 186  
Սանեսան թագավոր 212

Սառա 40  
 Սասանյաններ 78, 207, 208, 209, 218, 231  
 Սավիո Պիո Ln 11, 137, 274  
 Սարգիս Երկայնաբազուկ 80  
 Սարդուր Առաջին 191  
 Սարդուր Երկրորդ 191, 192  
 Սարդուր Երրորդ 115  
 Սաֆի շահ 128  
 Սեբեոս 123, 173, 180  
 Սելիմ Առաջին 224  
 Սելջուկ, իշխանապետ, 221  
 Սելեկյաններ 206  
 Սեմիրամիս (Շահնուրամատ, Շամիրամ) 14  
 Սեյլան (Ա. Մադոյան) 9  
 Սեյս Ա. Գ. 191  
 Սենեքերիմ Արծրունի թագավոր 221  
 Սեսիլ Ռոբերտ 7  
 Սմբատ Առաջին 220  
 Սմբատ Բագրատունի 219  
 Սմբատ Երկրորդ 220  
 Սմիթ Էմիլ 36  
 Սոկրատես 18  
 Սոֆուս Բուզգե 230  
 Սպենդիարյան Ալեքսանդր 186  
 Սվերդրուպ 6  
 Ստեփան Առաջին 65  
 Ստեփան եպիսկոպոս 230  
 Ստեփան Երկրորդ 65  
 Ստրաբոն 72, 75, 76, 78, 103, 192, 195, 196, 203, 205, 207, 210  
 Ստրոմբոլսկի 3. 32, 65, 66, 67, 122, 124, 166, 179, 180, 230, 232, 233, 234  
 Վախթանգ Գորգասյան 77, 78  
 Վահագն Վիշապաքաղ 205, 209, 210  
 Վահան Ամատունի 212  
 Վաղարշ արքա 207  
 Վանատուր 205  
 Վանգենհայն 255, 258  
 Վասիլ Առաջին 227  
 Վասիլ Երկրորդ 227, 228  
 Վասիլ կայսր 233  
 Վարազդատ թագավոր 215  
 Վարդան (Փիլիպպիկոս) 227  
 Վենիցիելոս 22  
 Վեգենդոնց Օ. Գ. 65, 71, 191  
 Վեսթենենք, զնդապետ, 250  
 Վերթրագնա (Արտագնես), աստված, 205  
 Վերլին Ֆ. 59  
 Վիզոնուա 232

Վիլիելմ Երկրորդ 246-247  
 Վիլսոն Վ. 264, 265, 266, 271  
 Վինցլեր Գ. 188, 190  
 Վիշնևակի, պրոֆեսոր, 189  
 Վիքրեյ 264  
 Վրանգել 28, 33  
 Վրթանես կաթողիկոս 175, 211  
 Տեր-Յակոբյան Ա. 189, 198  
 Տեր-Ղազարյան Նարինան 46, 63, 140, 148  
 Տեր-Սովսիսյան Մեսրոպ եպիսկոպոս 119  
 Տերենտիոս 215  
 Տիր աստված 205  
 Տիգրան Երկրորդ (Մեծ) 177, 203, 206, 207, 213  
 Տոսլեբեն, գեներալ, 87  
 Տրդատ (Տիրիդատես) Առաջին 207, 208  
 Տրդատ ճարտարապետ 233  
 Տրդատ Մեծ, արքա, 123, 166, 171, 172, 173, 208, 209, 211, 212  
 Տուրդիլ բեկ 221  
 Ցաղեն, աստված, 75  
 Ցելսիոս 155  
 Ուլֆիլա եպիսկոպոս 230  
 Ուրջըր Ջեյմս Քրիստոֆեր 9  
 Փառանձնեմ Սյունեցի 213  
 Փառնավազ 74  
 Փավստոս Բուզանդ 188  
 Փենք Ա. 109  
 Փիննս թագավոր 38  
 Փոկաս կայսր 228  
 Փրոքթոր, զնդապետ, 20  
 Քալանթար Ա. 189, 190  
 Քալանթարյան Ա. 189  
 Քաջարենց Դրաշ 10  
 Քերզոն Ջորջ 10, 270, 271  
 Քինգ L. U. 200  
 Քլաուբեր 190  
 Քոթրինգտոն, ծովակալ, 16  
 Քոյ 52  
 Քսենոփոն 73, 121, 195, 204  
 Քսենրքսես 74  
 Քսիսուֆր, տե՛ս Նոյ  
 Քվիսլինգ Վ. 12, 30, 47, 65, 132, 137, 161  
 Քրեց ֆոն Ֆրայլիեր 262  
 Քրիստոֆոլոս 32  
 Քրիստոս 32, 70, 74, 82, 94, 106, 120, 121,

123, 124, 172, 173, 176, 177, 189-195, 198, 199, 200, 204, 206, 207, 208, 211, 212, 216, 217, 221  
 Օդեմատոս, իշխան, 208  
 Օգանյան Անդրանիկ 261, 271  
 Օմար Խայամ 95  
 Օլսեն Սագնուս 230

Ֆեդերիկ 148  
 Ֆրիդրիխ Մեծ 70  
 Ֆրիկ 226  
 Ֆրոդեն Արե 230  
 Ֆունդ Մայրս, լորդ, 52  
 Աբարան գետ 165, 167, 168, 169

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբարանու, տե՛ս Աբարան գետ  
 Աբիդոս 27  
 Աբխազիա 60, 71, 79, 83, 84, 221  
 Աբխազ 242  
 Ադանա 251  
 Ադելբլադ 108  
 Ադրբեջան 55, 60, 71, 90, 91, 101, 141, 155, 263  
 Ադրիատիկ ծով 13  
 Աերոպազ 57  
 Ագերբայջան 222, 253  
 Ագոլի ծով 74  
 Աթենք 17, 18, 19, 25, 57, 232  
 Աթոս 232  
 Ալազյազ, տե՛ս Արագած լեռ  
 Ալազյազ կայարան 130, 132  
 Ալանաց դուռ (Իբերական դարպաս), տե՛ս Դարիալի կիրճ  
 Ալաքա լեռնաշղթա (Ալաքադաղ) 94, 103  
 Ալաքաչայ 95  
 Ալափարս գետ 159  
 Ալափարսչայ, տե՛ս Ալափարս գետ  
 Ալբանիա 197  
 Ալեքսանդրապոլ, տե՛ս Գյումրի  
 Ալեքսանդրապոլի գավառ 263  
 Ալեքսանդրիա 230  
 Ալվեր, լեռներ, 13  
 Ախալցխա 82, 84, 85  
 Ախալքալաք 82  
 Ախենի Մայր տաճար 121  
 Ախլաթ 108  
 Ախմանջան լեռնաշղթա 102, 159  
 Ախուրյան գետ 94, 95, 101, 103, 130, 131, 132, 135, 147, 149  
 Ախուրյանի կիրճ 283  
 Ախուրյանի հովիտ 135, 139, 149  
 Ակիլիսենե գավառ 205  
 Ակրոպոլիս (Ակրոպոլ) 17, 57

Ադրաղ լեռ 102, 157  
 Ադրամար կղզի 220  
 Ադատաֆա գետ, տե՛ս Ադատն գետ  
 Ադատն գետ 153  
 Ադվանք 76, 220  
 Ադրիպաղի լեռներ 102  
 Ամասիա 222, 242  
 Ամերիկա 12, 52, 39, 245, 246, 252, 259, 261, 270, 271  
 Ամերիկայի Միացյալ Նահանգներ 11, 245, 246, 252, 264, 265, 266, 269  
 Ամուրի մարզ 135  
 Այնթափ 242, 259  
 Անանուր 88  
 Անատոլիա 9, 21, 22-25, 38, 226, 238-241, 247, 250, 252, 256, 261, 267, 268, 269  
 Անգլիա 52, 135, 236, 241, 244  
 Անդրկովկաս 46, 49, 59, 60, 89, 90, 246, 262, 264-268  
 Անդրկովկասի Դաշնային Հանրապետություն 46, 60  
 Անդրոս կղզի 25  
 Անի 94, 103, 122, 152, 166, 220, 221, 222  
 Անի ամրոց (բերդ) 220, 234  
 Անիի Մայր տաճար 82, 94, 233, 234  
 Անկարա 23, 266  
 Անհուշ ամրոց 213  
 Աշտիշատ 123, 166, 173, 193, 210, 211, 226  
 Աջարիայի Հանրապետություն 46  
 Առաքավոր Ասիա 196, 199, 201, 218, 231  
 Ասիա 54, 36, 106  
 Ասորեստան 190, 192, 193, 194, 200  
 Աստարխասիս 180, 190  
 Ավարայրի դաշտ 217  
 Ավատրիա 197, 243  
 Ատլանտյան օվկիանոս 34  
 Ատտիկա թերակղզի 17, 25  
 Ատտիկայի դաշտավայր 17



Ատտիկայի հանրապետություն 18  
Արաբիա 199  
Արաբկիր 242  
Արագած լեռ (Ալազյազ) 95, 96, 101, 103, 104, 105, 117, 132, 134, 149, 150, 160, 167, 168, 179, 187, 189,  
Արագվա 84, 88  
Արագվա գետ 58, 64, 65, 68, 69, 71, 72, 74  
Արագ գետ, տես Արաքս գետ  
Արագի ավազան, տես Արաքսի ավազան  
Արագ կայարան 96  
Արագի հովիտ, տես Արաքսի հովիտ  
Արալեզք 15  
Արամզալու 166  
Արարատ լեռ 95, 99, 101, 102, 103, 105, 113, 129, 134, 149, 160, 163, 176, 179, 187, 190, 192, 215, 224  
Արարատի շրջան 140  
Արաքս գետ 55, 95, 96, 101, 102, 105, 107, 109, 113-119, 130, 149, 150, 156, 160, 168, 169, 170, 192, 206, 235, 278  
Արաքսի ավազան 92  
Արաքսի հովիտ (հարթավայր) 100, 101, 102, 103, 106, 112, 117, 149, 160, 163, 192, 196, 215, 221, 224, 235  
Արբելա 231  
Արգինա 220  
Արգինայի Մայր տաճար 233  
Արգոլի լեռնաշղթա 18  
Արդահան 84, 267  
Արդանուշ (Արտանուջ) 84, 263  
Արդոնի հովիտ 77  
Արզն (Երզրուն) 221  
Արկադիա 16  
Արմանիյա (Արմինա, Չարմինիուարա) 193  
Արմավիր 106, 115, 192  
Արմենե, նավահանգիստ, 195  
Արմենիա 193, 194, 195  
Արտագերտ ամրոց 213  
Արտաշատ 206, 207, 209, 212  
Արտաքսատա, տես Արտաշատ  
Արփաչայ, տես Ախուրյան գետ  
Արևելյան Անատոլիա 251, 253  
Արևելյան Թրակիա 20, 22, 23, 24  
Արևելյան Չայաստան 223, 224  
Արևելյան Սիբիր 135  
Արևելյան Վրաստան 58, 74, 77, 78, 79, 86, 87  
Արևելք 13, 14, 15, 26, 31-35, 41, 50, 51, 58, 60, 72, 75, 102, 113, 122, 138, 166, 185, 187, 198, 203, 206, 207, 210, 215, 217, 229, 236, 247

Արևմտյան Ասիա 197  
Արևմտյան Եվրոպա 11, 230, 232, 234, 238, 269, 270  
Արևմտյան Թրակիա 20, 23  
Արևմտյան Չայաստան 223, 224  
Արևմտյան Վրաստան 78  
Արևմուտք 17, 32, 34, 36, 203, 222, 229, 231, 232  
Ափրոդիտեի կղզի 16  
Աֆղանստան 199  
Աֆրիկա 243, 252

Բաբ 260  
Բաբելոն 14, 190, 191, 194, 196, 203  
Բաբելոնի աշտարակ 102  
Բաբերդ 242  
Բաբուն 33, 42, 45, 47, 48, 49, 50, 52, 53, 58, 90, 91, 262, 265, 276  
Բալավաթի դարպաս 200  
Բալկանյան թերակղզի 194, 197, 198, 200, 201, 271  
Բալկաններ 194, 197, 198, 200  
Բաղդադ 219, 246  
Բաղեշ 242, 257, 258, 262  
Բայազետի շրջան 189  
Բասեն 102  
Բաքու 47, 48, 89, 141, 263, 265  
Բելգիա 255  
Բեհիսթուն (Բիսուրուն) 193  
Բեռլին 201, 237, 238, 239, 243, 246, 254, 255, 258, 272  
Բերա, թաղ, 27  
Բերզեն 5  
Բզովդալի լեռնանցք 289  
Բզովդալի լեռնաշղթա 150, 289  
Բիսինա 191, 192, 193  
Բիթլիս, տես Բաղեշ  
Բլեքինգեի դամբարանադաշտ 230  
Բյուզանդական կայսրություն 35, 36  
Բյուզանդիա 32, 35, 36, 78, 79, 83, 94, 123, 124, 217, 218, 219, 221, 223, 224, 227, 229, 230, 231, 232  
Բոզ թեփե, տես Միթրիոս  
Բոհուլենի դամբարանադաշտ 230  
Բոյբեիս լիճ 195  
Բոսնիա 197  
Բոսֆորի նեղուց 27, 29, 33, 34, 36, 37, 38, 194  
Բոսֆոր թերակղզի 35  
Բոսֆորոս, տես Բոսֆորի նեղուց  
Բորչալու գետ 153

Բրազիլիա 266  
Բրեստ-Լիտովսկ 262  
Բրիտնիզի (Բրունդիզիում) 13  
Բրիտանիա 43, 127, 245, 246  
Բրյուն 189  
Բուբանիա 195  
Բուլղարիա 28-31, 230, 267  
Բուկովինա 228

Գալի Գիլի 189  
Գալլիոպոլ թերակղզի 26  
Գալիցիա 228  
Գահիրե 10  
Գառնի, բերդ, 166  
Գառնի գետ 164, 165, 166  
Գառնիչայ, տես Գառնի գետ  
Գելաթիի Մայր տաճար 79  
Գերմանիա 59, 90, 197, 246, 250, 252, 255, 258-263, 268, 269  
Գյամուշդաղ լեռ 156  
Գյոկչա, տես Սևանա լիճ  
Գյունըրի 93, 134, 135, 143, 148, 262, 263, 266  
Գողգոթա 70  
Գորի 57, 64, 77  
Գրենլանդիա 5, 37  
Գրոզնի 89  
Գրուբելչայ գետ 159  
Գուրբա 71, 83, 84, 85

Դադստան 71  
Դանիա 252  
Դանուբ գետ 228  
Դարաչիչազի լեռներ 103, 159  
Դարդանելի նեղուց 25, 26, 37  
Դարիալի կիրճ 76, 87, 88  
Դափնի լեռ 18  
Դեր-Չոր 253, 260  
Դիարբեքիր 242, 257, 258  
Դիլիջան 104, 154, 155, 156, 159  
Դինարյան Ալպեր 197  
Դոնի մարզ 132, 133  
Դորտյոլ գյուղ 253  
Դվին 166, 173, 212, 219, 220  
Դվինի Ս. Գրիգոր եկեղեցի (Մայր տաճար) 82, 124, 234  
Դրեզդեն 71

Եգիպտոս 199, 223, 228, 229, 230, 268  
Եդեսիա (Ուրֆա) 207, 231  
Եկատերինոդար 91  
Եվբեա կղզի 25

Եվրոպա 7, 12, 26, 31, 34, 36, 37, 45, 47, 51, 54, 60, 65, 85, 116, 121, 122, 124, 128, 181, 182, 194, 197, 198, 201, 202, 222, 231, 232, 233, 236, 238, 239, 243, 244, 245, 246, 250  
Երեզ (Երզնիցա) ավան 205  
Երիզայի տաճար 209  
Երզնկա 100, 102, 240, 242, 258, 262  
Երուսաղեմ 70, 79, 229, 247  
Եփեսոս 216  
Եփրատ գետ 100, 102, 106, 193, 194, 206, 223, 253, 259, 260  
Եփրատի հովիտ 221  
Երևան 10, 12, 52, 92, 93, 97, 98, 99, 101, 102, 104, 109, 112, 113, 119, 125, 127, 128, 129, 137, 148, 149, 152, 153, 154, 160-163, 165, 166, 170, 170, 178, 179, 180, 181, 184, 185, 187, 189, 198, 206, 235, 263, 264  
Երևանի բերդ 282

Չակինթոս (Չանթե) կղզի 16  
Չանգիբասար 170, 171, 180  
Չանգլի ծոր, տես Չրազդանի ծոր  
Չանգլի հովիտ, տես Չրազդանի հովիտ  
Չանգու գետ, տես Չրազդան գետ  
Չանգուղակ 38  
Չելայի Անահիտի տաճար 210  
Չեյթուն 223, 239, 252  
Չինցիրլիդաղ 159  
Չնյունիա 257, 271  
Չոնդյան կղզիներ 228  
Չվարթնոց, եկեղեցի, 119, 120, 124, 177, 178, 218  
Չվարթնոց, տես Չվարթնոց  
Չունդ 18

Էգեյան ծով 204  
Էգինա կղզի 17  
Էգինայի լեռներ 18  
Էլլադա 27  
Էքմիածին 67, 104, 105, 113, 119, 123, 124, 149, 160, 161, 167, 168, 171, 173, 189, 198, 207, 243, 250  
Էքմիածնի գավառ 263  
Էքմիածնի Մայր տաճար 171, 173, 174, 225  
Էրզրուն, տես Կարին

Թաթարական Ինքնավար Չանրապետություն 101  
Թախթալու (Թաքլաթուդաղ) 102  
Թամարի բերդ 49

Թավրիզ 85, 166  
Թասուս կղզի 35  
Թափաղիբի, գյուղ, 115, 192  
Թեբահն 230  
Թելավ 88  
Թեսալիա 35, 194, 195, 200  
Թիֆլիս 45, 46, 52, 55, 56, 58, 59, 61, 63, 65, 68, 71, 77, 79, 83, 87, 88, 90, 91, 92, 98, 132, 137, 153, 264, 275  
Թոփրակկալե լեռ 193  
Թրակիա 33, 135, 195, 228, 250  
Թրիեստ 227  
Թուրքահայաստան 149, 225, 236, 239, 250, 262, 263, 265  
Թուրքեստան 83, 224  
Թուրքիա 20, 22, 23, 29, 33, 59, 85, 90, 94, 113, 148, 169, 226, 236-239, 241, 243, 245, 246, 247, 249, 250, 251, 256, 258-263, 265, 267-271  
  
Ժերմինե դե Բրե, եկեղեցի, 232  
ժնն 266  
  
Իբերիա 76  
Իթաքե կղզի 15  
Իմերեթ 54, 69, 71, 79, 83, 84, 88, 220  
Իսլանդիա 230  
Իսպանիա 230, 266  
Իտալիա 5, 12, 59, 197, 227, 228, 232  
  
Լայպցիգ 7, 10, 71, 188, 191  
Լակոնիկոս, ծոց, 16  
Լեհաստան 91, 228  
Լեմնոս կղզի 26, 35  
Լեոնիական 52, 93, 101, 103, 104, 132, 135, 141, 147, 148, 149  
Լեոնիցրադ 7, 189  
Լեպանտո 15  
Լեոնային Ղարաբաղ 101  
Լիբիա 205  
Լիդո 13  
Լյախվայի հովիտ 77  
Լյուկաբետոս լեռ 17  
Լյուկաբետոս լեռնաշղթա 18  
Լյուսակեր 12  
Լոզան 23, 270  
Լոնդոն 44, 71, 108, 188, 197, 200, 244  
Լոռի 221  
Լոռի քաղաք 152  
Լոռվա թագավորություն 153, 220

Խազարի կիրճ 77  
Խաղթերի երկիր (Ուրարտու) 195  
Խալդինա 191  
Խանաղաղ 102  
Խարբերդ 242, 257  
Խեթական պետություն 195  
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն 45, 46, 267  
Խորվաթիա 197  
  
Շաղկածոր 159  
Շամնդավ բերդ 222  
  
Կազաչի պոստ, կայարան, 143  
Կազբեկ (Սղիմվարի) լեռ 55, 77  
Կախեթ 71, 74, 76, 84, 86, 87, 88  
Կախեթի թագավորություն 83  
Կամախի կիրճ 258  
Կապադոկիա 75, 192, 194, 195, 200, 204, 206, 207, 208, 209, 210, 221, 222, 230, Կասպից ծով 48, 55, 69, 74, 76, 80, 102, 103, 109, 156, 193, 206  
Կարակալա ամրոց 117  
Կարասու գետ, տես Սև ջուր  
Կարին 41, 80, 102, 193, 215, 232, 252, 257, 258, 262, 264  
Կարինի (Էրզրումի) նահանգ 265  
Կարպատներ 197  
Կարս 43, 55, 80, 91, 222, 262, 263, 266, 267  
Կարս գետ 94, 233  
Կարսի բերդ 94  
Կարսի թագավորություն 22  
Կարսի մարզ 49, 55, 71, 262  
Կեսարիա 208, 210, 211, 242  
Կեփալենիա կղզի 15  
Կեփիսոս գետ 19  
Կեփիսոսի հովիտ 17  
Կիլիկյան Տավրոս, լեռներ, 239  
Կիլիկիա 172, 194, 223, 248, 249, 252, 253, 256, 261, 267  
Կիլիկիայի հայկական պետություն 223, 234  
Կիպրոս կղզի 238  
Կյուբերա 16  
Կյուրոս (Կուր) գետ 55  
Կոթի 92  
Կոլոնա (Սունիոն) հրվանդան 25  
Կոդք 117  
Կոդքիս 38, 45, 54, 69, 75, 220  
Կոմանա, քաղաք, 210  
Կոմենենյան կայսրություն 44

Կոնիայի նահանգ 253  
Կոպենհագեն 127, 188, 251, 254  
Կոնստանդնուպոլիս 13, 15, 20, 22, 23, 25, 26, 28, 30-35, 39, 44, 45, 93, 124, 184, 216, 221, 225, 227, 233, 242, 243, 244, 245, 247, 248, 249, 255, 257, 260, 267  
Կովկաս 9, 53, 55, 58, 63, 71, 72, 74, 76, 77, 78, 80, 129, 193, 197, 208, 243, 262  
Կովկասյան լեռնաշղթա 54, 69, 71, 76, 87  
Կրետե կղզի 57, 195, 199, 200, 204  
Կուբան 198  
Կուտի 190  
Կուր գետ 54-59, 61-65, 68, 69, 71, 72, 74, 75, 77, 92, 94, 102, 109, 150, 154, 156, 186, 275  
Կուրի հարթավայր 156  
Կուրի հովիտ 54, 56, 64, 77, 153  
  
Հալեպ 253, 257  
Հալիս (Կիզիլ Իրմակ) գետ 195  
Հաճն 267  
Հայաստան 4, 6-12, 14, 15, 28, 32, 35, 41, 46, 52, 55, 67, 71, 73-77, 80, 82, 83, 91-94, 97, 99, 100, 104, 108, 111, 113, 115, 116, 120, 121, 123-126, 137, 139, 141, 142, 143, 148, 149, 151, 154, 157, 161, 166, 167, 171, 177 181-184, 186-190, 191, 194, 195, 196, 198-203, 206-209, 211, 213-224, 229-233, 235, 236, 238, 239, 244, 245, 249, 250, 252, 261-265, 269, 270  
Հայաստանի Հանրապետություն 11, 266  
Հայկական բարձրավանդակ 41, 55, 71, 92, 203  
Հայկական Հանրապետություն 99, 206, 224  
Հայկաբերդ 196  
Հայկաշեն 196  
Հայկավան 196  
Հայոց ծոր 196, 253  
Հարավային Ամերիկա 37  
Հելլենսպոնտոս 26, 27  
Հեռավոր Արևելք 6  
Հերակլեա (Էրեզլի) 38  
Հերցեգովինա 197  
Հյունետոս լեռնաշղթա 18  
Հյուսիսային Ամերիկա 37  
Հյուսիսային Արաբիա 197  
Հյուսիսային Աֆրիկա 199  
Հյուսիսային հրվանդան 127  
Հյուսիսային Միջագետք 122  
Հյուսիսային սառուցյալ օվկիանոս 5, 6  
Հնդկաստան 34, 74, 197, 203, 216, 228

Հոլանդիա 7  
Հոնիական կղզիներ 15  
Հոփսիսների եկեղեցի 67, 177-180, 290  
Հոռն 31, 32, 121, 175, 178, 207, 208, 213, 215, 217, 231, 232, 241, 259  
Հռոմեական կայսրություն 211, 213, 214  
Հրազդան գետ 97, 98, 102, 127, 128, 158, 159, 160, 164, 165, 167, 170  
Հրազդանի հովիտ 164, 166, 168  
Հրազդանի ծոր 112, 129, 164, 184, 187, 189  
Հրեաստան 207  
Հունական կայսրություն 44, 45  
Հունաստան 4, 9, 13, 16, 17, 19-23, 25, 32, 182, 184, 194, 195, 198, 199, 236, 246, 252, 267, 269, 271  
  
Ղալաթիա, թաղ, 27, 33  
Ղարաբաղ 222  
Ղարաքիլիսա 153  
Ղարդաղ 94  
Ղրիմ 91, 237  
  
Ճենովա 232  
Ճորոխի հովիտ 84  
  
Մա (Արտեմիս) Տավրիացու տաճար 210  
Մալաթիա 193, 242, 257  
Մալեա, հրվանդան, 17  
Մակարիա 16  
Մակեդոնիա 20, 228, 246, 247, 249, 250  
Մայկոպ 89  
Մանազկերտ 35, 222  
Մանազկերտի դաշտ 190  
Մատապաս, հրվանդան, 16  
Մարաշ 242, 256, 267  
Մարգարա գյուղ 113  
Մարզվան 242  
Մարմարա ծով 27, 34  
Մեգրելիա 71, 79, 83, 84, 85  
Մեզբենե 259  
Մեծ Արարատ 282  
Մեծ Բրիտանիա 238, 239, 241, 243, 245, 250, 271, 272  
Մեծ Կովկաս 71  
Մեծ Հայաստան 206, 215  
Մեծ Հայք 195  
Մեսեմբրիա 35  
Մեսենիա ծովածոց 16  
Մեսիսթ 71, 72, 79  
Մեսիսթի լեռնաշղթա 72

Մետալուրգիան 15  
 Մետալի ամրոց 275  
 Մերձավոր Արևելք 7, 10, 23, 219  
 Մեքքա 32, 40, 50  
 Միդիաք 257  
 Միթրիոս 42  
 Միլան 232  
 Միջագետք 106, 121, 190, 197, 216, 231, 232, 234, 240, 252, 255, 256, 257, 262, 268, 271  
 Մեջերկրական ծով 14, 15, 37, 204, 222, 228  
 Միջին Ասիա 52  
 Միսթրա, գավառ, 35  
 Միջլեգարդ 35  
 Մծրին 257  
 Մշո դաշտ 193, 240  
 Մոլդովա 228  
 Մուլլա-Քայագետ 118, 281  
 Մոնտենեգրո 197  
 Մոմբլան 6, 95  
 Մոռա 227  
 Մոսկվա 12, 29, 31, 33, 46, 49, 59, 91, 110, 182, 235, 266, 267  
 Մոսուլ 258, 260  
 Մոռավ լեռ 156  
 Մոսավդադ, տես Մոռավ լեռ  
 Մոսկվայի (Մոսկուայի) 55  
 Մցխեթ 56, 58, 63, 64, 66, 68, 70, 72-75, 77, 120, 132, 179  
 Մցխեթի Սայր տաճար 66, 67, 69, 78  
 Մուշ 123, 172, 173, 210, 215, 252, 257, 262  
 Մուշի Ա. Կարապետի վանք 226  
  
 Յաղուջարաղ 103  
  
 Նաիրի 190, 191  
 Նախիջևան քաղաք 101  
 Նավարինո ծովածոց 16  
 Նեկրեսի եկեղեցի 231  
 Նիկիա 216  
 Նինվե 14, 78, 193  
 Նիսիդյա, երկիր, 190  
 Նյու Յորք 7  
 Նյունփեն, բլուրներ, 18  
 Նոր Քայագետ 104, 198  
 Նոր Քայագետի գավառ 263  
 Նորթուսթերլանդ 67  
 Նորվեգիա 5, 6, 7, 25, 50, 56, 116, 127, 147, 168  
  
 Շահդադ լեռնաշղթա 156  
 Շամիրամի գետ 192

Շամիրամու (Սեմիրամիի գետ) տես Շամիրամի գետ  
 Շայխորա խառնարան 108  
 Շատախ 253  
 Շիրակի ջրանցք 134  
 Շողքուլաղ 159  
 Շորագյալի սարահարթ 103  
 Շվեդիա 230  
 Շվեյցարիա 56, 197  
  
 Ոսկեդջուր 27, 33, 34  
  
 Չլորգյուլ լիճ, 94, 150  
 Չլորի լեռնաշղթա 150  
 Չընգլդադ, լեռնագագաթ, 102  
 Չեխոսլովակիա 197  
 Չեռնոգորիա 236  
 Չեստր 241  
 Չինաստան 216, 228  
  
 Պալմիրա 208  
 Պաղեստին 197, 199, 229  
 Պամիսոս 16  
 Պանոնա, լեռ, 18  
 Պարթենոն 17, 18  
 Պարթևական պետություն 207, 231  
 Պարսկահայաստան 225  
 Պարսկաստան 41, 59, 69, 73, 74, 77, 78, 83, 102, 121, 122, 166, 197, 199, 203, 207, 208, 210, 212, 213, 214, 216-219, 224, 228, 229, 231, 235, 243  
 Պելոպոնես 35  
 Պենտելիկոն լեռ 18  
 Պետերբուրգ 71, 90  
 Պետրոսի եկեղեցի (Վատիկանի) 32, 123, 232  
 Պիլոս 16  
 Պիրեա 17, 25  
 Պլոսկայա լեռ 61  
 Պո գետ 13  
 Պոդոլան 188  
 Պոլիգոն 144  
 Պոնտոս 204, 205, 210  
 Պոդոլան 252  
  
 Ջեզիրե 257  
 Ջիլգաչայ 151  
  
 Ռաս ուլ Այն 259  
 Ռավենա 121  
 Ռիոն գետ 54, 71, 74, 75, 81

Ռիոնի հովիտ 54, 77  
 Ռոքի լեռնանցք 77  
 Ռուբիլի խաչ 67  
 Ռուսահայաստան 22, 24, 52, 90, 239, 247, 254, 262, 267, 272  
 Ռուսաստան 28-31, 33, 43, 49, 59, 85-91, 111, 115, 127, 140, 148, 151, 185, 230, 235, 236, 238, 239, 241, 243, 246, 250, 251, 256, 262  
  
 Սագուրամո, հովիտ, 58, 69  
 Սալամիա 17, 18  
 Սամթավրո վանք 70, 73  
 Սամսուն 40, 43, 275  
 Սամցխե (Մեսիսիա) 71, 83  
 Սասուն 240, 241  
 Սարդարապատ 11, 60, 106, 147, 163, 168, 279  
 Սարդարապատ, գյուղ, 187  
 Սարդարապատ, կայարան, 96  
 Սարդարապատ քաղաք (հին) 116  
 Սարդարապատի դաշտ (հարություն, անպատ) 95, 99, 116, 117, 118, 126, 130, 131, 132, 149, 160, 164, 168, 181  
 Սարդարապատի ջրանցք 116, 117, 169, 178  
 Սարդարի այգի 185  
 Սարակինոս ծովածոց 17, 18  
 Ս. Դավթի վանք 61  
 Ս. Խաչ եկեղեցի 65  
 Սեբաստիա 40, 195, 221, 222, 242, 250, 257, 264  
 Սեմյոնովկա 156  
 Սենաար 102  
 Սեստոս 27  
 Սերբիա 197, 236  
 Սինա 229  
 Սինոպ 195  
 Սիս, մայրաքաղաք, 223  
 Սիրիա 52, 193, 194, 197, 199, 206, 216, 228, 231, 251, 252, 257, 260, 267, 268  
 Սկանդինավիա 230  
 Սկարամանգա լեռնաշղթա 18  
 Սկիրոս կղզի 25  
 Սկյութիա 38  
 Սկյուտար 27  
 Սոֆիայի տաճար 31, 32, 36, 67, 233  
 Սպախան 85  
 Սպարտա 16  
 Սվազ, տես Սեբաստիա  
 Սվանեթիա 71, 83, 84  
 Սվեդիա 253, 261

Ստամբուլ 27, 33, 34, 248  
 Ստեփանավան 152, 155  
 Ստուրե-Ֆրոյնե, արվարձան, 5  
 Սուրամ 64  
 Սուրամի լեռնաշղթա 54, 71, 72  
 Սուրբ Դազար կղզի 227  
 Սև ծով 28, 29, 37, 38, 41, 45, 47, 48, 53, 60, 69, 71, 74, 75, 76, 77, 80, 192, 203, 230, 260, 275  
 Սև ջուր 105, 168, 169, 170, 171, 181  
 Սևանա լիճ 100, 101, 102, 104, 108, 150, 155, 156, 157, 159, 163, 165, 189, 193, 198  
 Սևր 265, 270  
  
 Վաղարշապատ 123, 124, 166, 171, 173, 207, 210, 214, 217  
 Վան 15, 115, 191, 192, 193, 196, 202, 214, 242, 253, 254, 261, 262  
 Վանա լիճ 57, 70, 73, 100, 107, 108, 158-159, 190, 191, 193, 196, 200, 213, 215, 220, 222, 224  
 Վանի թագավորություն 193  
 Վանի հարթություն 192  
 Վանի նահանգ 250, 254, 255, 265  
 Վառնա 28, 35  
 Վասպուրական 220, 221  
 Վատիկան 123  
 Վարձիա 55, 57, 58  
 Վենետիկ 13, 227  
 Վերոնա 13  
 Վիա Ալիա, ճանապարհ, 13  
 Վիեննա 65, 227  
 Վիրջինիա 41  
 Վլադիկավկազ 63  
 Վոսթրեսենկա, գյուղ, 153  
 Վրաստան 4, 32, 44, 49, 53, 55, 56, 58, 59, 60, 66, 67, 69-72, 76, 77-83, 85, 86, 88, 90, 91, 100, 101, 127, 129, 139, 141, 148, 152, 179, 180, 186, 198, 200, 202, 212, 221, 222, 231  
 Վրաստանի Հանրապետություն 46, 60, 137  
  
 Տավրիկ, գավառակ, 240  
 Տայտեգոս լեռնաշղթա 16  
 Տայք 124  
 Տավրոս լեռնաշղթա 100, 207, 223, 240  
 Տարոն 193, 210, 215  
 Տիգրանակերտ 207  
 Տիգրիս, գետ, 57, 73, 100, 102, 106, 190, 231, 258  
 Տրանսիլվանական Ալպեր 197

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տրանսիլվանիա 228  
Տրակիզոն 39, 41, 42, 43, 44, 85, 102, 192, 242, 262

Տրակիզոնի կայսրություն 45, 80, 83  
Տրակիզոնի նահանգ 265  
Տրոյա 26, 194, 199, 200  
Տուշպա (Տուրուսպա) 191

Ցեյլոն 47  
Ցյուրիխ 25

Ուկրաինա 197  
Ուրարտու 15, 190, 191, 193, 195, 196, 206  
Ուրմամ, քաղաք, 195  
Ուր-մե-նի 195  
Ուրմիա լիճ 100, 107, 108, 159, 190, 193, 194, 200  
Ուրֆա 261  
Ուրֆայի Մայր տաճար 242  
Ուփլիսցիխե 57, 58

Փալերոն, ծովածոց, 17, 18  
Փամբակի լեռներ 103, 151, 153, 155  
Փասիս գետ, տես Ռիոն գետ  
Փարիզ 7, 188, 257, 264  
Փերլիդաղ 102  
Փոքր Ասիա 9, 20, 22-25, 38, 52, 72, 75, 102, 121, 191, 192, 193, 194, 197-200, 204, 213, 221, 222, 231, 248, 252, 255, 260, 267, 271

Փոքր Արարատ 102, 160,  
Փոքր Կովկաս 55, 56, 71  
Փոքր Հայաստան 206, 215  
Փռուզիա 72

Քաղկեդոն 216, 217, 232  
Քանաքեռ 163, 164  
Քարթլի 54, 56, 71, 73, 76, 83, 84, 86, 87  
Քրդստան 201  
Քրիստիանիա 5, 6  
Քուբայիս 54, 58, 71, 77, 79  
Քուբայիսի Մայր տաճար 82, 233

Օդեսա 29, 186  
Օլիմպոս 54  
Օսլո 50, 109  
Օրիա կղզի 15  
Օրլեան 232  
Օրմինիոն օրոս, բերդ, 195  
Օրմենիոն (Օրմինիոն) 195  
Օքսվորդ 191

Ֆլորենցիա 70, 232  
Ֆլորենցիայի Մայր տաճար 232  
Ֆրանսիա 11, 31, 126, 232, 239, 241, 243, 246, 250, 252, 255

Թարգմանչի կողմից.....	5
Նախաբան .....	11
I. Դեպի Կոստանդնուպոլիս .....	13
Արենք .....	17
Հունաստանում. աշխատանք փախստականների համար .....	19
Արենքից Կոստանդնուպոլիս .....	25
Կոստանդնուպոլիսը և փախստականները .....	28
II. Կոստանդնուպոլսից դեպի Բաթում .....	33
III. Բաթումից դեպի Թիֆլիս .....	45
Վրաստանում .....	53
Թիֆլիս .....	59
Դեպի Մցխեթ .....	63
IV. Համառոտ ակնարկ վրաց պատմության .....	71
V. Դեպի Երևան. Հայաստանի բնական հնարավորությունները .....	92
Հայաստանը և Արագի հովիտը .....	100
VI. Արագի հովտում և Երևանում .....	112
Զվարթնոց .....	119
Երևանում .....	125
VII. Դեպի Արփաշայ և Լենինական.....	130
Նոր ջրանցք Լենինականի մոտ .....	134
«Մերձարևելյան նպաստամատույցի» աշխատանքները Հայաստանում .....	143
VIII. Հյուսիսային Հայաստանով դեպի Երևան .....	148
IX. Ոռոգման նոր ծրագրեր. Էջմիածին .....	161
Ղտեր.....	163
Խոնավ հարթավայրը .....	168
Էջմիածին .....	171
Մեր առաջարկը .....	181
Վերջին օրը Երևանում .....	184
X. Համառոտ ակնարկ Հայոց պատմության .....	188
Հնագիտական ու պատմական տեղեկություններ Հայաստանի հնագույն բնակիչների մասին .....	189
Մարդաբանություն և ծագումնաբանություն .....	196
Հասարակական կարգը .....	201
Կրոնը .....	204
Հնագույն շրջանի քնարերգությունը .....	206
Հայաստանը Արտաշեսյան և Արշակունի հարստությունների տիրապետության շրջանում .....	206
Արշակունի թագավորական տունը .....	207
Քրիստոնեության մուտքը .....	208
Արշակունի վերջին թագավորները .....	211
Հայ եկեղեցին .....	215



Պարսիկների ու արաբների տիրապետության տակ .....	217
Արաբների նվաճումները .....	218
Բագրատունիների թագավորությունը .....	219
Հայաստանը թուրքերի ու պարսիկների տիրապետության տակ մինչև 18-րդ դարի վերջը .....	222
Կիլիկիայի թագավորությունը .....	223
Մոնղոլների արշավանքները. պարսիկներն ու թուրքերը Հայաստանում .....	223
Թուրքական տիրապետության տակ .....	224
Մխիթարյաններ .....	227
Հայերը և համաշխարհային մշակույթը .....	227
XI. Հայաստանը 6րդ շրջանում. 19-րդ դար .....	235
Հայերը 20-րդ դարում .....	247
Հայերը համաշխարհային պատերազմի ժամանակ .....	251
Անվանացանկ .....	
Անձնանուններ .....	274
Տեղանուններ .....	279

**ՆՐԻՏՑՈՅ ՆԱՄԵՆ**

**ԽԱՔՎԱՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ**

Հրատարակության է ներկայացրել  
ԵՊՀ հայագիտական կենտրոնը

Հրատ. խմբագիր՝ Հ. Բ. Պետրոսյան  
Տեխն. խմբագիր՝ Վ. Չ. Բրդյան  
Համակարգչային շարվածքը՝ Թ. Շ. Վարդանյան  
Համակարգչային ծևավորումը՝ Ռ. Լ. Օհանյան

Հանձնված է շարվածքի՝ 10. 07. 2000 թ.:  
Ստորագրված է տպագրության՝ 13.10.2000 թ.  
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրության եղանակը՝ օֆսեթ:  
Հրատ. 17.6 մամ. տպագր. 18.0 մամ.,  
պայմ. 16.74 մամ. + 13.5 թերթ. ներդիր:  
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 73:

Երևանի համալսարանի հրատարակչություն,  
Երևան, Ալեք Մանուկյան փող. N 1:

Երևանի համալսարանի պապարան  
Երեվան, Աբովյան փող. N 52: